

ՕՏԱՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

20

FOREIGN SOURCES ABOUT ARMENIA
AND ARMENIANS

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում
Մաֆֆի Մոհամադ Մոհամադ Շահրազադին (Սիրիա)
սույն գրքի տպագրությունը հովանավորելու համար:

Matenadaran

Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts and
“Friends of the Matenadaran” Benevolent Fund
express their gratitude to
Makki Mohamad Mohamud Shahrazad (Syria)
for sponsoring the publication of this book.



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

ARABIC SOURCES

IV

MAMLUK SOURCES OF THE
HISTORY OF CILICIAN ARMENIA (I)

IBN 'ABD AL-ZĀHIR

TRANSLATIONS FROM THE ARABIC ORIGINALS,
THE PREFACE AND NOTES BY

GAGIK DANIELYAN

YEREVAN-2021

902.9
ՉԿ-82
1/2

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ԶԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԱՐԱԿԱՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐ

Դ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ՄԱՄԼՈՒԹՅԱՆ ՍԿԶԲԵԱՂՔՅՈՒՐՆԵՐԸ (I)

ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ԶԱՀԻՐ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԲՆԱԳՐԵՐԻՑ,
ԱՌԱՋԱԲԱՆԸ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

ԳԱԳԻԿ ԳԱՆԻԵԼՅԱՆԻ

6383

ԵՐԵՎԱՆ-2021



Հրատարակվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Մատենաշարի խմբագրական խորհուրդ՝

Ա. Մելքոնյան (խորհրդի նախագահ), Վ. Տեր-Ղևոնդյան (խորհրդի նախագահի տեղակալ), Ռ. Ղազարյան, Ռ. Սաֆրաստյան, Է.-Մ. Շիրինյան, Գ. Մուրադյան, Ա. Շահնազարյան, Ա. Բողոջյան (խորհրդի քարտուղար), Բ. Կաստիկյան

Հատորի խմբագիրներ՝

պ.գ.դ. Ազատ Բողոջյան և պ.գ.դ. Վահան Տեր-Ղևոնդյան

Արաբական աղբյուրներ Գ: Կիլիկյան Հայաստանի պատմության մամլոյւմյան
Ա 821 սկզբնաղբյուրները (I) / Իբն Աբդ ալ-Ջանիբ; Թարգ. բնագրերից, առաջաբանը և
ժանրագրությունները՝ պ.գ.դ. Գագիկ Գանիկյանի.- Եր.: Մատենադարան,
2021.- 340 էջ:

Գիրքը նվիրված է հայ-մամլոյւմյան ֆաղափական և դիվանագիտական հարա-
բերությունների ուսումնասիրության համար կարևորություն ներկայացնող մամ-
լոյւմյան պատմագրության արարալեզու սկզբնաղբյուրներին: Հետազոտության
հիմնական մասում ներկայացված են բարգմանական ֆաղվածքներ Մամլոյւմյան
պետության զանհն նստած երեւ սուլթանների օրոք արժուին դիվանապետի պաշ-
տոնը զբաղեցրած Մուհի ալ-Դին իբն Աբդ ալ-Ջանիբի երկերից, որոնք արժեւա-
վոր տեղեկություններ են սարունակում Կիլիկյան Հայաստանի 1260-1292 թվա-
կանների պատմության բազմաթիվ դրվագների վերաբերյալ: Հեղինակն իր հա-
ղորդումների մեծ մասը շարադրել է որպես իրադարձությունների անմիջական
մասնակից և ակնանակ:

Գիրքը նախատեսված է հայագետների, միջնադարագետների, աղբյուրա-
գետների և Կիլիկյան Հայաստանի պատմությամբ նետաւրհիվողների համար:

ՀՏԳ 93/94
ԳՄԳ 63.3

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ	7
ԹՎԱԳՐՈՒԹՅԱՆ, ՏԱՌԱԳԱՐՁՄԱՆ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ	10
ԱՌԱՋԱԲԱՆ	14
ՄԱՍ Ա	
ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՋԱՀԻՐԻ ՏԵՂԸ ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԳՈՒՅԹՈՒՄ	44
1.1 ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՇՐՋԱՆԸ: ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ	44
1.2 ԻԲՆ ԱԲԴ ԱԼ-ՋԱՀԻՐԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ	103
ՄԱՍ Բ	
ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԽՃԱՆԿԱՐՈՒՄ ԺԳ ԳԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ	113
2.1 ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒՄ ՈՒ ՀԱՅ-ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ	113
2.2 ՄՈՆՂՈՒՆԵՐԸ, ԻԼԽԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ	135
ՄԱՍ Գ	
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆԱԳՐԵՐԻՑ ԵՎ ԵԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ...	159
3.1 AL-RAWḌ AL-ZĀHIR FĪ SĪRAT AL-MALIK AL-ZĀHIR «ԵՄԱԿԱՌԻ ՊԱՐՏԵԶ ԱԼ-ՄԱԼԻՔ ԱԼ-ՋԱՀԻՐԻ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ» ...	159
3.2 TAŠRĪF AL-AYYĀM WA-L-‘USŪR FĪ SĪRAT AL-MALIK AL-MANŠŪR «[ԳԻՐՔ] ԱԼ-ՄԱԼԻՔ ԱԼ-ՄԱՆՍՈՒՐԻ ԿՅԱՆՔԻ ՓԱՌԱՎՈՐ ՕՐԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ»	196
3.3 AL-ALṬĀF AL-ĤAFIYYA MIN AL-SĪRA AL-ŠARĪFA AL-SULṬĀNIYYA AL-MALIKIYYA AL-AŠRAFIYYA «[ԳԻՐՔ] ՍՈՒԼԹԱՆ ԱԼ-ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇՐԱՅԻ ԱԶՆՎԱՋԱՐՄ ԿՅԱՆՔԻ ԹԱՔՆՎԱՇ ԲԱՐԵՀԱՃՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»	216
ԵԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	218

ԳԱՀԱՑԱՆԿԵՐ	271
ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ	272
ՎԿԱՅԱԿՈԶՎԱԾ ՍԿԶԲՆԱՂՐՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ	
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	277
ԱՆՎԱՆԱՑԱՆԿԵՐ	315
Ա. ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ	315
Բ. ԺՈՂՈՎՈՒՐԳՆԵՐ, ՏՈՀՄԵՐ, ՑԵՂԵՐ, ԿՐՈՆԱԿԱՆ ԽՄԲԵՐ	325
Գ. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԱՆՈՒՆՆԵՐ	326
SUMMARY	331

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն հատորը շարադրվել է 2016-2020 թվականներին՝ Մ. Մաշտոցի անվան Հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ Մատենադարանում, բայց նման մի աշխատանքի գաղափարն իրականում հղացվել է ավելի վաղ՝ 2012-2015 թվականներին, երբ գրվել է իմ թեկնածուական ատենախոսությունը՝ «Ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk երկը Կիրիկյան Հայաստանի 1250-1310 թթ. պատմության սկզբնաղբյուր (աղբյուրագիտական ֆենոլոգիա)» թեմայով: Ատենախոսությունը պաշտպանվել է 2015 թ. ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում: Հիմնական արդյունքները խտացվել են եզրակացություններում, որոնցից մեկում արձանագրվել է. «Այնուամենայնիվ, 1260-1270 թթ. հայ-մամլուկյան հարաբերությունների վերաբերյալ արարագիր մատենագիրների հայտնած տեղեկությունների համեմատական և զուգադիր ֆենոլոգիաները ցույց է տալիս, որ գոնե Բայբարսի կառավարման ժամանակաշրջանի համար ալ-Մակրիզիի համար անմիջականորեն թե միջնորդարար (խոսքը մասնավորապես Իբն ալ-Ֆուրաքի Tārīḥ al-duwal wa-l-mulūk-ի մասին է) աղբյուր է ծառայել Բայբարս ալ-Բունդուկյարիի կենսագիր Իբն Արդ ալ-Ջահիրի Al-Rawḍ al-zāhir երկը»:

Հատկանշական է, որ ալ-Մակրիզիին ժե գարի պատմիչ է՝ մամլուկյան պատմագրության կոչվող ավանգույթի խոշորագույն դեմքերից մեկը: Վերջինս իր պատմագրական աշխատությունները գրելիս բազմաթիվ աղբյուրներ է ունեցել ձեռքի տակ, թեև հաճախ «անբարեխղճորեն» թաքցրել է դրանք՝ հարկ չհամարելով հիշատակել: Կարող է հարց ծագել, որ եթե աշխատանքի ժամանակագրական սահմանները տեղավորվել են 1260-1310 թվականների միջակայքում, ինչու՞ է այդ հետազոտության համար առաջնային աղբյուր վերցվել ուշ շրջանի հեղինակի գործ: Սա այն ժամանակ նույնպես պարզարանելի ենք.

«Ճիշտ է այ-Մակրիդին ու շրջանի հեղինակ է, բայց նրանից առաջ ապրած ոչ մի արաբագիր պատմիչի երկում Կիլիկիայի պատմությունն այնքան ընդհանրական տեսնով չի արտացոլվել, որքան նրա Kitāb al-sulūk-ում: Հետևաբար, Կիլիկյան Հայաստանին վերաբերող որքան հնարավոր է ավելի շատ հաղորդումների անդրադառնալու համար մեզ անհրաժեշտ է եղել հենց ուշ շրջանի աղբյուր, և մեր բնութագրումը կանգ է առել հենց այ-Մակրիդիի վրա՝ որպես Կիլիկյան Հայաստանի մասին բերևս ամենաշատ վկայություններ պահպանած հեղինակի: Բացի այդ, ուշ շրջանի աղբյուր վերցնելը մեզ հնարավորություն է տվել տեսնել պատմական գիտելիքի զարգացման «Եվոլյուցիան»՝ միևնույն վկայությունը փոխառած տարբեր մատենագիրների հաղորդումների համեմատական նկատմամբ»: Հետևաբար, այ-Մակրիդիի երկը մեզ մեծապես օգնել է՝ հասկանալու Իբն Աբդ ալ-Չահիրի պատմագրական ժառանգության անգնահատելի նշանակությունը Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրության համար: Կասկած չկա, որ վերջինիս երկերը Հայ-մամլուքյան 1260-1290-ական թվականներն ընդգրկող ժամանանակաշրջանի քաղաքական-դիվանագիտական հարաբերությունների մասին հաղորդող կարևորագույն և առաջնային աղբյուրներն են: Մամլուքյան Հարուստ պատմագրական ավանդույթի մյուս բոլոր հուշարձանները սույն աշխատանքում դիտարկված են Իբն Աբդ ալ-Չահիրի երկերին զուգահեռ՝ դրանց հաղորդած տեղեկությունները ճշտելու և լրացնելու նպատակով:

Սույն հետազոտությունը համարում ենք մեր ատենախոսության թեմայի վերամշակումն ու լրամշակումը, չնայած որ այս ուսումնասիրության մեջ շեշտադրումը կատարված է բոլորովին այլ հեղինակի և նրա մատենագրական ժառանգության վրա:

Ատենախոսության և այս աշխատանքի կայացման գործում իրենց անգնահատելի ներդրումն են ունեցել բազմաթիվ գիտնականներ և պարզապես մտահոգ մարդիկ՝ ոմանք իրենց դիտողություններով, մասնագիտական խորհուրդներով, ոմանք էլ պարզապես արտերկրի զբաղարաններից անհրաժեշտ մասնագիտական գրականության ձեռքբերման հարցում ցուցաբերած սիրալիք օժանդակությամբ: Երախտագիտության ամենամեծ խոսքերն անշուշտ ուղղում են պ.գ.դ. Ազատ Բողոյանին, ով 2012-2015 թվականներին ղեկավարել է վերո-

հիշյալ ատենախոսության կատարումը: Նրա խորհուրդները, անգնահատելի դիտողություններն անփոխարինելի նշանակություն են ունեցել ինձ համար՝ ուղղորդելով բարդագույն խնդիրների համար լուծումներ որոնելիս: Նրա հետ շփումը, նրա մշտական ուշադրությունն աշխատանքի ընթացքի նկատմամբ, նորանոր հանձնարարությունների առաջադրմամբ հետագա անելիքներիս ուղղորդումը գործը հաջողությամբ ավարտելու վստահությունն ու կորով են տվել ինձ:

Շնորհակալության խոսքեր եմ ուղղում նաև արտերկրի մի շարք գիտնականներին, որոնց տարբեր առիթներով դիմել եմ՝ առանձին սկզբնաղբյուրների օգտագործման վերաբերյալ մասնագիտական խորհուրդներ ստանալու, ոմանց էլ՝ ինձ անհասանելի գիտական գրականություն ձեռքբերման հարցում օժանդակելու խնդրանքով: Հարկ եմ համարում առանձին հիշատակել Բելգիայի Լեոփեն-լա-Նեով համալսարանի պրոֆեսոր Յոհաննես դեն Հեյերին, Կիպրոսի Հետազոտական կենտրոնի պրոֆեսոր Նիկոլաս Կուռեասին, Մեծ Բրիտանիայի Սենթ Էնդրյուսի համալսարանի պրոֆեսոր Էնդրյու Փիքոքին, Մոսկվայի պետական համալսարանի պրոֆեսոր Թուստամ Շուքուրովին, Բեռլինի պետական գրադարանի՝ Աֆրիկայի, ժամանակակից Թուրքիայի, Հայագիտության և եթովպագիտության բաժնի վարիչ Մելինե Փեհլիվանյանին, Երուսաղեմի հերայական համալսարանի պրոֆեսոր Բ. Ամիրային, Օքսֆորդի համալսարանի «Խալիլի հետազոտական կենտրոնի» գիտաշխատող Կայլա Ջեքսոնին, Մասսաչուսեթսի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Էնն Բրոդբերիջին, Լիեժի (Բելգիա) համալսարանի պրոֆեսոր Ֆրեդերիկ Բոդենին, Նոտր-Դամի համալսարանի (ԱՄՆ) պրոֆեսոր Լի Գուոյին:

Երախտագիտության ամենաջերմ խոսքերն ուղղում եմ մորս և կնոջս, որոնց քաջալերանքը որոշիչ նշանակություն է ունեցել այս աշխատությունը լրման հասցնելիս:

ԹՎԱԳՐՈՒԹՅԱՆ, ՏԱՌԱԴԱՐՁՄԱՆ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Աշխատանքի բուն շարադրանքում և ծանոթագրություններում տարեթվերի մի մասը (Հատկապես արաբական աղբյուրներից մեջբերումներ կատարելիս) ներկայացված է ըստ իսլամական (կամ «եիջրայի») լուսնային օրացույցի, որոնց զուգահեռ տրված են նաև Գրիգորյան օրացույցի համարժեքները՝ անջատված աջ թեքաղծով կամ փակաղծերով: Իսլամական տարեթվերն ու ամսաթվերը փոխարկելիս օգտագործել ենք Զ. Ֆրիման-Գրենվիլի աղյուսակները¹:

Աշխատանքում օգտագործված սկզբնաղբյուրների և Հարակից աղբյուրների մեծ մասի լեզուն արաբերենն է (և պարսկերենը): Այս լեզուների գրի առանձնահատկությունները հաշվի առնելով նպատակահարմար է համարվել աղբյուրների և ուսումնասիրությունների վերնագրերը, հեղինակների անունները, մատենագիտական մյուս տվյալները, ինչպես նաև առանձին բառեր, եզրույթ-տերմիններ, արտահայտություններ, հատկանուններ, տեղանուններ ներկայացնել բնօրինակի լեզվով, բայց տառադարձությամբ: Արաբերենի տառադարձման առավել տարածված այբուբեններից գերապատվությունը տրվել է *Deutsche Morgenländische Gesellschaft*-ի («Գերմանական արևելյան ընկերության») կողմից մշակված տառադարձության համակարգին²: Այնուամենայնիվ, այսպես կոչված «արևային հարֆերով» սկսվող

արաբերեն բառերը, ինչպես որ «լուսնային հարֆերով» սկսվողները, տառադարձված են առանց առնմանման կամ կրկնավորման (օրինակ, al-šams, այլ ոչ թե՛ aš-šams)՝ այդ թվում լծորդական (al-idāfa-ի) կառույցներում (օրինակ՝ Al-Muqtafi li-tārīḥ al-šayḥ...): Li և bi նախդիրներից բաղկացած կառույցներում գրանք անվանական միավորներից անջատել ենք գծիկով (օրինակ՝ bi-tahqīq): Այսպիսի կապակցություններում նախդրային մասնիկներին հաջորդող որոշյալ հոդը ներկայացրել ենք alif al-waṣl-ի («կապակցող ալիֆ») ընկած վիճակում (օրինակ՝ Al-Wāfi bi-l-wafāyāt և bi-l-Rūm): Հիշյալ երկու կանոնները պահանջ ենք նաև շաղկապների դեպքում (օրինակ՝ A'yān al-'aṣr wa-a'wān al-naṣr և mubīd al-franġ wa-l-arman wa-l-tatar):

Որոշյալ al հոդն անձնանունների տառադարձություններում փոքրատառ է ներկայացված՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրանով է սկսվում մատենագիտական տվյալների սողը (օրինակ՝ Al-'Umārī, Kitāb al-Ta'rīf bi-l-muṣṭalah al-šarīf..., բայց «Šb'ū al-'Umārī, Kitāb al-Ta'rīf bi-l-muṣṭalah al-šarīf...») կամ նախադասությունը: Երկերի և ուսումնասիրությունների վերնագրերի տառադարձություններում սկզբնային դիրքում գտնվող որոշյալ հոդը մշտապես մեծատառ է ներկայացված (օրինակ, «Al-A'lāq al-ḥaṣīra-ի Ասորիքին նվիրված մասը...», ինչպես նաև՝ «Ցավոք, Al-Nahġ al-sadīd-ը չի արդարացնում այդ ակնկալիքները»):

Ինչ վերաբերում է պարսկերեն անուններին և անվանումներին, ապա գրանք բոլոր հնարավոր դեպքերում տառադարձել ենք արաբերենի տառադարձման վերոհիշյալ կանոններով, իհարկե եթե այդ տառադարձումը չի հակասել պարսկերենի հնչյունային առանձնահատկություններին:

Աշխատանքի ծանոթագրություններում և գրականության ցանկում օգտագործված են հետևյալ հապավումները.

ԲՀ	Բանբեր հայագիտության
ԲՄ	Բանբեր Մատենադարանի
ԼՀԳ	Լրաբեր հասարակական գիտությունների

¹ G.S.P. Freeman-Grenville, *The Muslim and Christian calendars; being tables for the conversion of Muslim and Christian dates from the Hijra to the year A.D. 2000*, 2nd edition, Rex Collings Ltd., London, 1977.

² *Die Transliteration der arabischen Schrift in ihrer Anwendung auf die Hauptliteratursprachen der islamischen Welt*, Denkschrift dem 19. internationalen Orientalistenkongress in Rom, Franz Steiner, Wiesbaden, 1969.

ԿՀ (2016)	Ա.Ա. Բոգոյան (խմբագիր), Ռ.Մ. Շումուրով, Վ.Ա. Տեր-Ղևոնդյան, Գ.Գ. Գանիբեյան, <i>Կիլիկյան Հայաստանը սաֆամանակից պետական միավորների ընդլայնմաներում (պատմաբանասիրական ակնարկներ)</i> , «Գիտություն» հրատ., 2016
ՀԱ	Հանդես ամսօրեայ
ՀՀՀ	Հայկազեան հայագիտական հանդես
ՊՔՀ	Պատմա-բանասիրական հանդես
ANES	Ancient Near Eastern Studies
AOL	Archives de l'Orient Latin
AP	Archeion Pontou
AR	Armenian Review
AS	Anatolian Studies
AWM	Aramco World Magazine
BASOR	Bulletin of the American Schools of Oriental Research
BÉO	Bulletin d'études orientales
BSOAS	Bulletin of the School of Oriental and African Studies
CA (2019)	<i>Cilician Armenia in the Perceptions of Adjacent Political Entities (Historical-Philological Essays)</i> , A.A. Bozoyan (Editor), V.A. Ter-Ghevondian, G.G. Danielyan, tr. from Armenian by A. Martirosyan, "Gitut'yun", Yerevan, 2019
CAJ	Central Asiatic Journal
DOP	Dumbarton Oaks Papers
EHR	English Historical Review
EI¹	Encyclopaedia of Islam. A Dictionary of Geography, Ethnography and Biography of Muhammadan Peoples, E.J. Brill, Leiden, 4 vols., 1913-1938
EI²	Encyclopaedia of Islam, Second Edition, 12 vols. with indexes, etc., Leiden: E.J. Brill, 1960-2005
EI³	Encyclopaedia of Islam - Three, ed. by Fleet K., Krämer G., Matringe D., Nawas J. and Rowson E., 2007 - մինչ օրս
EIr	Encyclopædia Iranica

HIE	The Historiography of Islamic Egypt, c. 950-1800, ed. by H. Kennedy, Brill, Leiden, 2000
HJAS	Harvard Journal of Asiatic Studies
JA	Journal Asiatique
JAIS	Journal of Arabic and Islamic Studies
JAL	Journal of Arabic Literature
JAOS	Journal of the American Oriental Society
JESHO	Journal of the Economic and Social History of the Orient
JIA	Journal of Islamic Archaeology
JRAS	Journal of the Royal Asiatic Society
JSAI	Jerusalem Studies in Arabic and Islam
JSAS	Journal of the Society for Armenian Studies
JSS	Journal of Semitic Studies
Al-Masāq	Al-Masāq: Journal of the Medieval Mediterranean
ME	Medieval Encounters
MMA	Mağallat al-mu'arriḥ al-'arabī
MMIA	Mağallat al-mağma' al-'ilmī al-'arabī
MMM	Mağallat al-mu'arriḥ al-miṣrī
MSR	Mamluk Studies Review
MTQ	Mongolian & Tibetan Quarterly
OL	Orientalistische Literaturzeitung
QSA	Quaderni di Studi Arabi
RÉA	Revue des Études Arméniennes
RÉB	Revue des Études Byzantines
ROC	Revue de l'Orient Chrétien
RoMES	Review of Middle East Studies
SI	Studia Islamica
BB	Византийский временник

ԱՌԱՋԱԲԱՆ

ԺԲ դարի վերջին տասնամյակը ճակատագրական էր Հայոց պետականության համար: Լևոն Բ իշխանապետի (1187-1198 թթ.) ղեկավարած շրջահայացությունը թույլ տվեց ոչ միայն Կիլիկյան Հայաստանն առավելագույնս անվնաս ու անցնցում դուրս բերել խաչակիրների և Սալահ ալ-Ղինի հակամարտության պայթյունավտանգ ոլորտից, այլև պաշտոնապես ճանաչվել ինչպես Հռոմեական սրբազան կայսրության և Հռոմի պապության, այնպես էլ Բյուզանդական կայսրության կողմից: Լևոնի թագադրությունը (Լևոն Ա արքա, 1198-1219 թթ.) բաղձալի հանգրվանի հասցրեց ազգային կորուսյալ թագավորությունը նորոգելու հայ ժողովրդի ավելի քան մեկուկես դարյա պայքարը: Այդ իրադարձությամբ Կիլիկիայի Հայոց պետությունը, ստանալով միջազգային նոր կարգավիճակ ու հեղինակություն, թևակոխեց պատմաքաղաքական նոր շրջափուլ: Լևոնի իշխանության տարիներին Կիլիկյան Հայաստանը վերածվեց բավական կենսունակ քաղաքական միավորի, որի զորությունը բավարար էր ոչ միայն թշնամական պետություններին (Ռումի Սելջուկյան սուլթանություն, Հալեպի Այյուբյան սուլթանություն) ղեմադրավելու, այլև հարևան պետությունների (մասնավորապես Անտիոքի իշխանապետության) ներքաղաքական գործերին քանիցս միջամտելու համար: Թեև Լևոն արքայի մահից հետո Հայոց թագավորությունն ապրեց գահաժառանգության խնդրով հարուցված ներքաղաքական լարվածության և անիշխանության խառնակ ժամանակաշրջան, այնուամենայնիվ, պետության բարգավաճումը շարունակություն ստացավ Հեթում Ա-ի (1226-1269 թթ.) երկարամյա գահակալության ընթացքում, երբ Հայկական պետությունը վերջնականապես ամրագրեց իր հաստատուն դերը տարածաշրջանի քաղաքական թատերաբեմում և առևտրա-

անտեսական հարաբերություններում: Թագավորության հիմնադրումը նոր շունդալից փուլի սկիզբ էր նաև հայկական հոգևոր և նյութական մշակույթի զարգացման համար:

Մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական, մշակութային, առևտրա-անտեսական հարաբերությունների համայնապատկերում Հայոց պետության և առհասարակ հայկական գործոնի ունեցած կարևորության բազում օրինակներ կարելի է բերել: Այս աշխատանքի հետագա շարադրանքի տրամաբանությունը հարկ ենք համարում մատնանշել Հայագիտությանը քիչ Հայտնի մի փաստ միջնադարի Հայ-արաբական առնչություններից: Խոսքը ԺԳ դարի կեսերին եմենի Ռասուլյան հարստության տիրակալ ալ-Մալիք ալ-Աֆղալ Դիրդամ ալ-Ղին ալ-Աբբասի (1363-1377 թթ.) պատվերով (կամ գուցե հենց նրա ձեռքով) զրված վեցալեզու մի բառարանի մասին է³: Բառարանը

³ Բառարանն ուսումնասիրված էր ուշագրությամբ գրավել է դեռ 1960-ական թվականներին: Կիբանանցի գիտնական Մամուդ ալ-Ղուլի հորդորով նրա հետազոտության գործին առաջինը ձեռնամուխ է եղել Կոլոմբիայի համալսարանի պրոֆեսոր քյոտհագետ Տ. Հալասի-Կունը: 1970-ական թվականներին նրան են միացել Պ. Գոլդենը, Լ. Լիգետին և էդ. Շյուքը ուսումնասիրելու բառարանի համապատասխան բունարևն, մոնոգրաֆիկ ու պարսկերեն և հայերեն նյութը: Տե՛ս **B. Hoberman**, "The King's Dictionary", *Aramco World Magazine*, 1982, March-April, pp. 26-29; Արդեն 1985 թ. Պ. Գոլդենն առանձին հոդվածով հրատարակեց բառարանի հունարեն նյութի իր մեկնությունը: Տե՛ս **P.B. Golden**, "The Byzantine Greek Elements in the Rasulid Hexaglot", *Archivum Eurasiae Medii Aevi* 5, Otto Harrassowitz, Wiesbaden, 1985 [1987], pp. 41-166: Բառարանի խմբագրության և հրատարակման դժվարին աշխատանքը, սակայն, շուշ երկուսուկես տասնամյակ ձգվեց՝ ընդմիջվելով ծագրի անդամներ Լիգետիի և Հալասի-Կունի վախճանով: 1998 թ. երկու այլ հետազոտողներ՝ Գ. Վարիսկոն և Ջ. Սմիթը նմանափանությամբ հրատարակեցին բառարանի նեոագիրը: Տե՛ս *The Manuscript of al-Malik al-Afḡal al-'Abbās b. 'Alī b. Dā'ūd b. Yūsuf b. 'Umar b. 'Alī Ibn Rasūl (d. 778/1377): A Medieval Arabic Anthology from the Yemen*, ed. by M. Varisco and G. R. Smith, Warminster, Aris & Phillips for the E.J.W. Gibb Memorial Trust, 1998: Այս ընթացքում մյուս աշխատանքային խումբը շարունակեց բառարանի հրատարակության գործը: Բայց 1999 թ. անսպասելիորեն կյանքից հեռացավ նաև բառարանի հայկական նյութի խմբագրության պատասխանատու էդ. Շյուքը: Այնուամենայնիվ, մեկ տարի անց բառարանը վերջապես հրատարակվեց Պ. Գոլդենի և մոնոգրագետ Ք. Օլսենի ներածական ակնարկներով: Տե՛ս *The King's dictionary: The Rasulid Hexaglot: Fourteenth century vocabularies in Arabic, Persian, Turkic, Greek, Armenian and Mongol*, tr. by T. Halasi-Kun, P.B. Golden, L. Ligeti and Ed. Schütz, with introductory essays by P.B. Golden and Th. Allsen, notes and commentary by P.B. Golden, Brill, Leiden, 2000: «Արքայի բառարան» մոնոգրական նյութի

կազմված է շուրջ 1800 արարերեն բառեր և արտահայտություններ ունեցող բառաշարքերից, որոնց զուգադիր սյունակներում ներկայացված են զրանց պարսկերեն, թյուրքերեն, հունարեն, հայերեն («կիրիկյան հայերեն» / «միջին հայերեն») և մոնղոլերեն համարժեքները՝ արարերեն տառադարձությամբ (օրինակ, արար.՝ Allāh, պարսկ.՝ ħudāy, թյուրք.՝ tenkrī, հուն.՝ αἰγιῶς, հայերեն՝ asfād⁴, այն է՝ «Աստված» կամ արար.՝ ğahannam, պարսկ.՝ dūzah, թյուրք.՝ tamuq, հուն.՝ γῆϊνᾱ, հայերեն՝ tūzahk⁵, այն է՝ «ղոժխ» կամ արար.՝ iš'al al-sirāġ, պարսկ.՝ ğirāġ bar kun, թյուրք.՝ ğirāġ yandır, հուն.՝ absī lihnanārin, հայերեն՝ ğirāk fārī, այն է՝ «նրա՛գ վառիր»⁶ կամ արար.՝ al-rūh, պարսկ.՝ ğān, թյուրք.՝ dīn, հուն.՝ bsīyī, հայերեն՝ hūki⁷, այն է՝ «հոգի», արար.՝ al-sikkīn, պարսկ.՝ kārd, թյուրք.՝ biġāq, հուն.՝ māyīrīn, հայերեն՝ tanāk⁸, այն է՝ «ղանակ», արար.՝ al-naħl, պարսկ.՝ zanbūr, թյուրք.՝ arī, հուն.՝ mīlisa, հայերեն՝ miġū⁹, այն է՝ «վեղու» և այլն)¹⁰: Ճիշտ է՝ եմենում ալ-Աֆղալ ալ-Աբբասի իշխանության տարիներին Կիրիկյան Հայաստան պետությունն ապրեց իր մայրամուտը և արդեն 1375 թ. վերջնականապես ընկավ իր անհաշտ ոստիներին՝ Եգիպտոսի մամլուքների և թուրքմենների հարվածների տակ, այնուամենայնիվ, Հայոց թագավորության և Հայերի թողած քաղաքական և պատմական հետքն այնքան ցայտուն է եղել Ազենի տիրակալի համար, որ նա, հայերենը «դարաշրջանի կարևորագույն լեզու-

մասին տե՛ս Ho Kai-Lung, "An initial study for Mongolian factors inside the Rasūlid Hexaglot", *CAJ*, vol. 52.1, Harrassowitz Verlag, 2008, pp. 36-54: Ռուսիայի կլիներ մոտ ապագայում տեսնել բառարանի նաև հայերեն նյութի լեզվաբանական ուսումնասիրություն:

⁴ *The King's dictionary*, p. 61.

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս Անդ, p. 78:

⁷ Տե՛ս Անդ, p. 107:

⁸ Տե՛ս Անդ, p. 146:

⁹ Տե՛ս Անդ, p. 171:


¹⁰ Պետք է նշել, որ բառերի ընդհանուր քվից միայն մոտ 700-ի համար են տրված հայերեն և հունարեն համարժեքներ:

ներից» համարելով, դարձրել է իր բառարանի լեզուներից մեկը¹¹: Այս բառարանն առանձին օրինակ է Հայ-արաբական միջնադարյան առնչությունների պատմությունից, բայց այն լավագույնս է արտահայտում Հայագիտական ուսումնասիրությունների համար օտար սկզբնաղբյուրների ներկայացրած կարևորությունը և զրանց ուսումնասիրության անհրաժեշտությունը: Այս աշխատանքն էլ փորձ է շեշտելու այն նշանակալի արժեքը, որ ունի ժԳ-ԺԶ դարերի արաբալեզու պատմագրությունը Կիրիկյան Հայաստանի թագավորության պատմության ուսումնասիրության համար¹²:

¹¹ Ռասուլյան եմենի պատմիչ ալ-Խազրաջի (մահ. 1410 թ.) մոտ վկայություն կա հետազոտելու հայերի հայանկար ուղիներից մեկի մասին: Խաուբ սուրկավաճառույցյան մասին է: Նա մասնավորապես գրում է. «[Հիջրայի 500 թվականի] Մաֆար ամսին (1397 թ. հոկտեմբեր / նոյեմբեր) ալ-Հադդայի (al-Ḥarda) ափ նվեր ստացվեց եգիպտոսից: Երբ այդ մասին լուրը սուլթանին հասավ, նա շարժվեց դեպի Զարիդ... Նվերը Զարիդ հասավ հիշյալ Մաֆար ամսի 24-ին (նոյեմբերի 15)՝ հինգշաբթի օրը: Դա հրաքանչ նվեր էր, ու ընդգրկում էր մոտ երեսուց մյուսք մամլուքներ, տասներկու գլուխ ընտիր նեղագներ՝ զարգարուն թամբերով և [այլ] գեղեցիկ հարմարանքներով, ինչպես նաև մի խուճր հույն և հայ սարկուհիներ և մի արժեքավոր թիչի եգիպտոսի հրաններից»: Տե՛ս 'Alī ibn al-Ḥasan al-Ḥazraġī, *Kitāb al-'uqūd al-'u'yya fi tāriḥ al-dawla al-rasūliyya*, թ. 2, bi-tahqīq Muḥammad Basyūnī 'Asal, Dār al-Hilāl, al-Qāhira, 1914, p. 294:

6383

¹² Թ-ԺԳ դարերի արաբական պատմաաշխարհագրական երկերն անհամեմատ ավելի լավ են ուսումնասիրված ընդհանրված մեծավաստակ արևելագետ Աբու Տեր-Ղևոնդյանի: Արաբական աղբյուրների հայտնած արժեքավոր տեղեկությունների հետևի վրա են գրված նրա «Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում» (ՀՍՀՄ ԳԱ հրատ., Երևան, 1965) և «Հայաստանը և արաբական խաղիֆայությունը» աշխատությունները (*Armenia u Arabckii Xalīfatam*, изд. АН АССР, Ереван, 1977): Հետագայում հայագետ-արևելագետը հանդես եկավ ևս մի խոշոր ձեռնարկով՝ հայագիտությանը նվիրելով ժԳ-ԺԶ դարի ակամավոր արաբալեզու պատմիչ Իբն ալ-Ասիրի երկու կարևորագույն երկերի՝ հայերեն և Հայաստանի պատմությանը վերաբերող հատվածների ծաղկաբաղ թարգմանությունը (*Իբն ալ-Ասիր*, թարգ. քննադրից, առաջաբան և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, ՀՍՀՄ ԳԱ հրատ., Երևան, 1981): Ա. Տեր-Ղևոնդյանը ծագել է ձեռնամուխ լինել Թ-ԺԳ դարերի բոլոր այն արաբական սկզբնաղբյուրների ուսումնասիրությանը և հատկապես թարգմանությանը, որոնցում որևէ կերպարանություն կա պահպանված Հայաստանի և հայերի մասին: Գիտնականի անժամանակ մահը (1988 թ.), սակայն, կիսատ բաղեց նրա գործը: 2005 թ. անվանի արևելագետի որդու՝ Վահան Տեր-Ղևոնդյանի ջանքերով իրականություն դարձավ նրա մյուս հիմնաբառ աշխատանքը՝ «Արաբ մատենագիրները: Թ-Ժ դարեր» վերնագրով (ԵՊՀ հրատ., 2005), որն ամփոփում է 18 մասնագիրների (պատմագիրների և աշխարհագրագետների) երկերից բաղված հատվածների թարգմանություններ: Հառնակալից է, որ այս երկու աշխատություններն էլ հրատա-



Սուլյն աշխատանքի ժամանակագրական սահմանները տեղավորվում են 1260-1292 թթ. միջև: 1250 թ. Եգիպտոսում տեղի ունեցած դինաստիական հեղաշրջումը և Մամլուքյան սուլթանության հիմնադրումը նոր շրջափուլ բացեցին Մերձավոր Արևելքի պատմության մեջ: Մամլուքներին շուրջ մեկ տասնամյակ պահանջվեց իրենց պետությունը հաստատուն հիմքի վրա դնելու համար: Այս գործում խոշորագույն ներդրումն ունեցավ սուլթան Բայբարս ալ-Բուենդուկդարին (կառ. 1260-1277 թթ.), ում տասնյոթամյա իշխանության տարիներին Մամլուքյան սուլթանությունը դարձավ Մերձավոր Արևելքի քաղաքական թատերաբեմի հզորագույն խաղացողներից մեկը՝ արժանի հակառակորդ Լևանտի խաչակրաց պետությունների և մոնղոլների համար: Մուհի ալ-Դին Իբն Աբդ ալ-Չահիրը հեղինակել է երեք վարքագրական երկ, որոնցից առաջինը նվիրված է հենց սուլթան Բայբարսին:

ԺԳ դարակեսից մի քանի տարի անց (1256 թ.) տարածաշրջանի քաղաքական ասպարեզ ելավ ևս մի խոշոր ուժ՝ Մոնղոլական Իլխանությունը: Արդեն ԺԳ դարի 50-ական թվականների վերջին և 60-ականների սկզբին այս երկու պետությունների ռազմաքաղաքական բախումը դարձավ անխուսափելի: Մոնղոլների հետ զբաղվելու հաստատած և նրանց գերակայությունն ընդունած Հայոց թագավորությունն ակամա հայտնվեց երկու տերությունների աշխարհաքաղաքական ներհակ շահերի բախման առաջնագծում՝ հարկադրված լինելով ժամանակ առ ժամանակ իր վրա ընդունել Սուլթանության պատժիչ գործողությունների ծանր հարվածները: Եգիպտոսի սուլթանության և Իլխանության հարաբերությունները, ուղեկցվելով ռազմական առճակատման լայնածավալ գործողությունների և «սառը պատերազմի» հաջորդական փուլերով, տարածաշրջանի քաղաքական եղանակը պայմանավորող գերակա գործոն մնացին առնվազն 60 տարի¹³:

Բակվել են «Ստոր աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշարի յոթանակներում: Մատենաշարի արաբական աղբյուրներին նվիրված ամրաբնիկ հատոր լույս է տեսել դեռ 1965 թ. Հակոբ Նալբանդյանի հեղինակությամբ: Այդ աշխատությանը փչ ալվելի համագամայից կանոնադրամակ ստորև:

¹³ R. Amitai, "In the aftermath of 'Ayn Jalūt: The beginnings of the Mamlūk-Ilkhānid cold war", *al-Masāq*, vol. 3.1, 1990, p. 2.

Իբն Աբդ ալ-Չահիրի վարքագրական երրորդ երկը նվիրված է սուլթան ալ-Աշրաֆ Խալիլին (կառ. 1290-1293 թթ.), որից պահպանվել է 1291 թվականի վերջին և 1292-ի առաջին մի քանի ամիսների շարագրանքը (Կիլիկյան Հայաստանին և հայերին վերաբերող նրանում առկա եզակի հաղորդումը թվադրելի է 1292-ով):

Պետք է նշել, սակայն, որ այս աշխատանքն իր բնույթով և ուղղվածությամբ աղբյուրագիտական լինելով՝ բնավ հայտ չի ներկայացնում տալ 1260-1292 թթ. Հայ-մամլուքյան հարաբերությունների լիարժեք և բազմակողմանի պատկերը: Կիլիկյան Հայաստանի և Մամլուքյան սուլթանության առնչությունների համար կարևորություն ներկայացնող աղբյուրները, ինչպես ստորև ենք տեսնելու, այնքան շատ են և տարբերությամբ, որ դրանց հաղորդած տեղեկությունները դիտական մեկ հետազոտության սահմաններում ոչ մի կերպ տեղավորել հնարավոր չէ: Այսպիսով, արձանագրենք, որ սուլյն աշխատանքի գերագույն նպատակն ենք համարել ոչ թե Կիլիկյան Հայաստանի՝ Հիշյալ ժամանակաշրջանի քաղաքական ամբողջական պատմությունը շարադրելը, այլ հայագիտությանը Կիլիկիայի պատմության ցայտման հրաժեշտ ուշադրության չարժանացած և նույնիսկ անձանոթ մամլուքյան սկզբնաղբյուրներին ծանոթացնելը, Կիլիկիայի պատմության հետազոտողների և Հայ արաբագետների հետաքրքրությունը շարժելը՝ ճանապարհ հարթելով ոլորտի զարգացման և նորանոր ուսումնասիրությունների համար:

Կիլիկյան Հայաստանի պատմության դիտական հետազոտությունն ավելի քան երկարայա վաղեմություն ունի: Գիտական հետազոտության բեղուն ավանդույթներ ունենալով՝ Կիլիկյան Հայաստանի պատմության բազմաթիվ ծալքեր գեռես շարունակում են անմշակ մնալ, շատուշատ հարցեր՝ անպատասխան: Այս աշխատանքը նպատակ ունի ուսումնասիրողների ուշադրությունը վերստին հրավիրել այնպիսի մի ոլորտի վրա, ինչպիսին է Հայ-մամլուքյան քաղաքական առնչությունների պատմությունը: Թեմայի արդիականության և հրատապության համար կուվան է այն դիտակցումը, որ երկու պետությունների քաղաքական հարաբերությունների բազմաթիվ մանրամասներ մինչ այժմ խորությամբ բացահայտված չեն: Դրա հիմնա-

պատճառն այն խիստ անբավարար ուշադրութիւնն է, որ մինչ այժմ հայկական Կիլիկիայի պատմութեան մասնագետները ցուցաբերել են Մամլուքյան սուլթանութեան և առհասարակ մուսուլմանական պատմադրական ժառանգութեան նկատմամբ: Մինչդեռ մեր խորին համոզմամբ ԺԳ-ԺԶ դարերի արաբագիր (և պարսկագիր) հեղինակների երկերի ուսումնասիրութիւնը պարտագիր է արևելամիջերկրածովյան և մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական ուժերի թատերաբեմում Կիլիկիան Հայաստանի ունեցած դերն ու միջազգային կշիռն ինչպես հարկն է սահմանելու և ոչ քրիստոնեական ուժերի (ի մասնավոր՝ Մամլուքյան սուլթանութեան և մոնղոլական Իլխանութեան) հետ նրա փոխհարաբերութիւնների թաքնված նրբերանգներն ընկալելու առումով: Ընդամին, աշխատանքի գիտական նորույթը Հայոց պատմութեան համար կարևորութիւն ներկայացնող արաբական (և պարսկական) պատմական սկզբնաղբյուրների ուսումնասիրութեան մեջ է, որոնց մեծ մասն առհասարակ ծանոթ է Հայագիտութեանը և առաջին անգամ է ներդրումովում որպես հայկական Կիլիկիայի պատմութեան սկզբնաղբյուր:

Հատկանշական է, որ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում Հայոց պատմութեան համար կարևորութիւն ներկայացնող մամլուքյան սկզբնաղբյուրների հետազոտման ուղղութեամբ արտերկրի ուսումնասիրողների կողմից դործադրված ջանքերն ավելին են եղել, քան Հայրենական մասնագետներին: Այնուամենայնիվ, օտարերկրյա և Հայաստանի հետազոտողների միջև գիտական համագործակցութեան անբավարարութեան պատճառով չի ձևավորվել ոլորտի մշակման միասնական «նախադաս»: Հետևաբար այս աշխատանքի նպատակներից մեկն է Հայագիտութեանը ծանոթացնել այդ աշխատութիւնների հետ, հանդուցել Կիլիկիան Հայաստանի պատմութեան արաբական սկզբնաղբյուրների հետազոտութեան ոլորտում Հայ և օտար մասնագետների ունեցած ներդրումը:

Ճիշտ է, մամլուքյան պատմագրութեան որոշ աղբյուրների օգտագործման փորձերը դեռ Ղ. Ալիշանի, Վ. Լանգլուայի, Ֆ. Տուրնբրիգի, Ժ. դը Մորգանի և վաղ շրջանի այլ ուսումնասիրողների աշխատութիւններում են ձեռնարկվել, բայց դրանք խիստ կցկտուր կամ դիպվածային

ընույթ են կրել, խարսխվել են ոչ թե բուն արաբերեն ընագրերի, այլ եվրոպական լեզուներով կատարված վաղ թարգմանութիւնների վրա, ինչը շատ հաճախ շփոթմունքների և գիտական շրջանառութիւն սպրդած անճշտութիւնների պատճառ է դարձել¹⁴:

Թեմայի ուսումնասիրութեան դործում առաջին լուրջ քայլերը կատարվել են միայն նախորդ դարի 60-ական թվականներից սկսած: Մեկնարկն արվարարել է 1965 թ. *Revue des Études Arméniennes* հայագիտական Հանդեսի էջերում Ֆրանսիացի արևելագետ և պատմաբան Մարիուս Կանարի հրատարակած «Կիլիկիայի նայոց թագավորությունը և մամլուքները մինչև 1285 թ. պայմանագիրը» վերնագրով հոդվածը¹⁵: Հայ մատենագիրների հաղորդումները համագրելով իրեն հասանելի մամլուքյան պատմագրական մի շարք երկերի վկայութիւնների հետ՝ Կանարը Հայ-մամլուքյան փոխհարաբերութիւնների սովյալ շրջանի, ճիշտ է, շատ համառոտ, բայց բավական տրամաբանված պատկեր է ստացել: Հեղինակը ԺԳ-ԺԶ դարերի արաբագիր պատմիչներից մասնավորապես հղում է Աբու Շամային, Իզզ ալ-Դին իբն Շահադային, Իբն Աբդ ալ-Ջահիրին, ալ-Մակրիդիին, Մուֆադդալ իբն Աբի ալ-Ճադաիին (Իբն ալ-Ասսալ), Իբն Շիհնային, ինչպես նաև Բար Հեբրեսոսի արաբերեն ժամանակագրութիւնը: Կանարն իր հոդվածն ավարտում է մեկ այլ ուսումնասիրութեամբ Հայ-մամլուքյան հարաբերութիւնների նաև 1285-1375 թթ. շրջանին անդրադառնալու իր մտադրութեամբ, որը, ցավոք, այդպես էլ իրականութիւն չի դարձել:

¹⁴ Արաբական սկզբնաղբյուրներից Կիլիկիայի պատմութեան վերաբերյալ անգլոլեզուները ֆաղած եվրոպացի ուսումնասիրողների (Ժ. դը Մորգանի, Ֆ. Տուրնբրիգի, Ս. Տեր-Ներսեսյանի, Թ. Բուգի, Ռ. Էլվարդսի և այլոց) աշխատանքներին հետախույս անդրադարձ է կատարել և նրանց թույլ տված սխալները մատնանշել է Սայուարտը: Տե՛ս A. D. Stewart, *The Armenian Kingdom and the Mamluks: War and Diplomacy during the Reigns of He'tum II (1289-1307)*, Brill, Leiden, 2001, pp. 3-14: Նա խոսել է նաև Արմեն-Կող Մուրաֆյանի *La Royaume Arménien de Cilicie et La Cilicie au carrefour des empires* գրքի մասին: Կիլիկիան Հայաստանի պատմութեան բեմադրվ Կ. Մուրաֆյանի վերջին հրատարակվածը (2012 թ.) դեռ կանգուղադրուման է: Սայուարտի աշխատանքի մասին նույնպես տե՛ս ստորև:

¹⁵ M. Canard, "Le Royaume d'Arménie-Cilicie et de Mamelouks jusq'au traité de 1285", *REA*, 1967, pp. 217-259.

Որքան էլ զարմանալի կարող է թվալ, թեմայի ուսումնասիրության ուղղութիւնը կատարված հաջորդ նշանակալի քայլը Ռիչարդ Մոնթի 1981 թ. գրած մագիստրոսական թեզն է՝ «Մամլուֆ-հայկական հարաբերությունները Բահրի շրջանում մինչև Սսի անկումը (1250-1375 թթ.)» վերնագրով (անտիպ)¹⁶: Գիտական ղեկավար ունենալով մամլուքյան պատմագրության խորագիտակ մասնագետներից մեկին՝ Դոնալդ Լիթթլին՝ Աքոթը բավական տպավորիչ աշխատանք է շարադրել¹⁷: Չնայած մագիստրոսական աշխատանք լինելուն՝ այն առաջին հերթին զարմացնում է ներգրավված մամլուքյան սկզբնաղբյուրների քանակով: Հեղինակն իր օգտագործած արաբալեզու աղբյուրների շարքում նշում է Աբու ալ-Ֆարաջի (Բար Հերրեոսի կամ Իբն ալ-Իբրիի) արաբերեն ժամանակագրությունը, Իբն Արզ ալ-Ջահրիի, Բայրաբ ալ-Մանսուրիի, ալ-Յունիսիի, Շաֆի Իբն Ալիի, Աբու ալ-Ֆիդայի, ալ-Նուվայրիի, ալ-Ջազարիի, Իբն ալ-Դավադարիի, Անանուն մամլուք ժամանակագրի, ալ-Շուլջաիի, Մուֆադդալ Իբն Աբի ալ-Ֆադալիի, Իբն Քասիրի, Իբն ալ-Ֆուրակի, ալ-Մակրիզիի, Իբն Թադրի Բիրզիի, ալ-Կալիաշանդիի, Իբն Շադադի, Իբն ալ-Շիհնայի երկերը: Այնուամենայնիվ, աշխատանքի ժամանակագրական ընդարձակ սահմանները թույլ չեն տվել հեղինակին մանրամասնորեն անդրադառնալ այդ աղբյուրների հայտնած բոլոր տեղեկություններին: Այլ կերպ ասած՝ նա շատ դեպքերում պարզապես սահմանափակվում է արաբալիք պատմիչների՝ Հայ-մամլուքյան առնչությունների համար կարևորություն ներկայացնող հաղորդումները դուրս հանելով խորամուտ չլինելով դրանց աղբյուրագիտական քննությանն ու միմյանց և այլալեզու աղբյուրների հետ ունեցած հակասությունները երևան բերելուն¹⁸:

¹⁶ St. J. Scott, *Mamlūk-Armenian relations during the Bahrī period to the fall of Sis (1250-1375)*, McGill University, Montreal, 1981 (unpublished MA thesis): 1250-1517 pp. եղիպտոսում և Ասորիում կառավարած մամլուքյան երկու դինաստիաների «Բահրի» և «Քուրդի» հուշոչումների մասին կիսունմ 2.1 ենթաբաժանում:

¹⁷ Հմմտ. այս աշխատանքի մասին Սայրասի հայտնած կարծիքի հետ: St. J. A. D. Stewart, *The Armenian Kingdom*, p. 17:

¹⁸ Ամեն զեպում Մոնթի իր նախաբանում քննարկում է, որ իր աշխատանքը ոչ քե հավակնում է անդրադառնալ հայերի և մամլուքների 1250-1375 թթ. հարաբերությունների բոլոր ասպեկտ-

Հայ-մամլուքյան հարաբերությունների շատ դրվագներում պարզություն մտցնելու գործում իր կարևոր նպատակ է բերել Երուսաղեմի Երրայական համալսարանի պրոֆեսոր Ռեուվեն Ամիտայը՝ մամլուքյան պատմության արդի փորձառու մասնագետներից մեկը: Մամլուքյան սուլթանության և մոնղոլական իլխանության հակամարտության և ռազմական առճակատման 60-ամյա ընթացքին նվիրված նրա բազմաթիվ հոդվածներում և մենագրություններում մոնղոլների դաշնակից Կիլիկյան Հայաստանի գործոնը երբեք չի անտեսվել¹⁹: Սույն աշխատանքի ժամանակագրական սահմանների հետ առավել համարելի է նրա «Մոնղոլները և մամլուքները: Մամլուֆ-իլխանյան պատերազմը 1260-1280 թթ.» մենագրությունը, որում ներկայացված է հակամարտության պատմության առաջին քսանամյա ժամանակաշրջանը: Այստեղ նրա ուշադրության կենտրոնում են եղել ոչ միայն մոնղոլ-մամլուքյան քաղաքական-դիվանագիտական հարաբերությունները և բուն ռազմական գործողությունների ընթացքը, այլև հակամարտության թաքնված քաղաքիչները՝ մարտավարության և ռազմավարության, մարտական գործողությունների նախապատրաստման և վարման, փոստային համակարգի, լրտեսության և հետախուզության հետ կապված հարցերը: Մենագրությունը սկզբնաղբյուրային ամբողջիք ունի: Մամլուքյան և իլխանական սկզբնաղբյուրներն օգտագործված են շատ հետևողականորեն: Լատին, ասորական աղբյուրների հետ մեկտեղ բալիական հաջող օգտագործված են նաև եվրոպական թարգմանություններով հասանելի հայկական աղբյուրները (Սմբատ Սպարապետ, Կիրակոս Գանձակեցի, Գրիգոր Ակնեցի, Վարդան Արևելցի, Հեթում Կոստիկոսցի, Ստեփանոս Օրբելյան), որոնք ըստ հեղինակի հատկապես կարևոր են «Փոքր Հայաստանի դեռի բննաբանման համար: Չնայած երբեմն դրանք հաղորդում են տեղեկություններ ավելի լայն հարցերի վերաբերյալ»²⁰: Այս գրքի հրատարակումից 23 տարի է անցել,

ներին, այլ միայն ուղիղ լեզույն հակամարտության զարգացման հիմնական ուղղությունները: St. J. Scott, *Mamlūk-Armenian relations*, p. 4:

¹⁹ R. Amitai-Preiss, *Mongols and Mamluks: The Mamluk-İlkhānid war, 1260-1281*, Cambridge University Press, Cambridge, 1995.

²⁰ Անդ, p. 7:

և այդ ընթացքում մի շարք նորահայտ աղբյուրներ են գիտական շրջանառություն մեջ գրվել, որոնց պարունակած տեղեկություններով վերաքննման են ենթակա արդեն հայտնի բազմաթիվ տվյալներ, լրացնելի կամ վերանայելի են մի շարք փաստեր: Մեր աշխատանքը Ռ. Ամիրայի մենագրության հետ բազմաթիվ հատվող կետեր ունի, որոնց վերաբերյալ մեր տեսակետները կձևակերպենք հետագա շարադրանքում՝ յուրաքանչյուրի համար իր տեղում: Նրա գիրքն այն ուսումնասիրություններից է, որոնք մշտապես գրասեղանին ենք ունեցել սույն աշխատանքը շարադրելիս²¹:

Հայ-մամլուքյան հարաբերությունների պատմության ուսումնասիրության հաջորդ առաջնության քայլը կատարել է Անգուս Ստյուարտը 2001 թ. հրատարակած իր «Հայոց թագավորությունն ու մամլուքները: Պատերազմը և դիվանագիտությունը Հերոս Բ-ի թագավորության ընթացքում (1289-1307 թթ.)» մենագրությամբ: Աշխատանքի ներածությունից, աղբյուրների տեսությունից և թեմայի ուսումնասիրության պատմության շարադրանքից պարզ է դառնում, որ հեղինակը բավական լուրջ է մտածել իր առջև դրված խնդրին: Նա կիլիկիայի պատմության ժամանակակից ուսումնասիրողներից առաջինն էր, որ բարձրաձայնեց ոլորտի կարևորագույն «բացերից» մեկը՝ շեշտելով, որ «արարական աղբյուրներ, որոնք շատ հաճախ անտեսվել են թագավորության պատմության հետազոտողների կողմից, իրականում կարող են օգտակար լինել նրաներին գործերի [բազմաթիվ] մանրամասները հայտնաբերելու կամ դրանց վրա լույս սփռելու տեսանկյունից»²²: Չնայած վերնադրում նշած ժամանակագրական սահմաններին՝ Ա. Ստյուարտն իր մենագրությունն

²¹ Հարկ ենք համարում ճիշտակից Թայբարսի կառավարման շրջանին նվիրված ևս մի արժեքավոր ուսումնասիրություն՝ Պ. Թորաուի հեղինակությամբ: Գիտք գրվել է գերմաներեն (P. Thorau, *Sultan Baibars I. von Ägypten: ein Beitrag zur Geschichte des Vorderen Orients im 13. Jahrhundert*, Wiesbaden, 1987), որից հետո թարգմանվել է նաև անգլերեն (P. Thorau, *The Lion of Egypt: Sultan Baybars I and the Near East in the thirteenth century*, transl. by P.M. Holt, London and New York, Longman, 1992) և արաբերեն (Bîtir Tawrâû, *Al-Zâhir Baybars. Ishâm fi târîh al-Şarq al-adnâ fi al-qarn al-tâlî' 'aşara, tarğamat Muḥammad Ğudayd, murâğā'a wa-taqdîm Aḥmad Huṭayt, Qadmîus, Dimaşq, 2002*): Ցավով, սույն աշխատանքը գրելիս ոչ Պ. Թորաուի գրքի բնօրինակը և ոչ էլ թարգմանություններն օգտագործելու նկատմամբ չենք ունեցել:

²² A.D. Stewart, *The Armenian Kingdom*, p. 2.

սկսում է Հեթում Բ-ի իշխանությունը նախորդած ժամանակաշրջանում հայ-մամլուքյան հարաբերությունների ընդհանրական անդրադարձով: Այս հատվածում ուսումնասիրողը գերադասեցապես հենվում է Մ. Կանարի վերն ակնարկված հոդվածի վրա, որը, ինչպես ինքն է պնդում, իր աշխատանքի համար որպես «մոդել և ներշնչանք» է ծառայել²³: Ստյուարտը մերթընդմերթ մեջբերումներ է անում նրանից, ամփոփում նրա փաստաթղթերը: Նա միայն հազվադեպ է փորձում էական լրացումներ ու հավելումներ կատարել Կանարի շարադրանքին և անգամ որոշ աղբյուրներ հղում այնպես, ինչպես Կանարն իր ծանոթագրություններում²⁴: Մենագրության ուրույն արժեքը նրա երրորդ գլուխն է, որում մամլուքյան սկզբնաղբյուրների լույսի ներքո լուսարանված է Հեթում Բ-ի կառավարման ժամանակաշրջանը:

Օգտագործված աղբյուրների հետ ծանոթությունը Ստյուարտն սկսում է այն պնդմամբ, թե ինքն ամեն կերպ ջանացել է «ի ցույց դնել Մամլուքյան սուլթանության արարական աղբյուրների ներումակ նկատվորությունները (պատենցիալը)» թեմայի լուսարանման գործում, բայց հետո ավելացնում է, թե սահմանափակվել է միայն «սպազիր հրատարակություններով լայնորեն հասանելի աղբյուրներով»²⁵: Մամլուքյան պատմագրության իր օգտագործած աղբյուրների շարքում Ստյուարտն առանձնացնում է հատկապես ալ-Այնիին և ալ-Մակրիդիին, որոնք համեմատաբար ուշ շրջանի պատմիչներ լինելով, այնուամենայնիվ, հարուստ տեղեկություններ են պահպանել իրենցից առաջ ապրած պատմիչների երկերից: Արաբագիր մյուս հեղինակներից ուսումնասիրողն առանձնացնում է Աբու ալ-Ֆիդային: Վերջինս, որ Այյուբյան էմիր էր և հետագայում նաև Համայի կառավարիչ ու սուլթան է եղել, իր երկում բազմաթիվ իրադարձություններ ներկայացրել է ականատեսի և անմիջական մասնակցի աչքերով՝ հաճախ զարմացնելով «Հայոց թագավորության ներքին գործերի մասին իր տեղեկացվածության աստիճանով»²⁶: Տարօրինակ է, որ արաբերենին տիրապետելով Ա. Ստյուարտն իր աշ-

²³ Անդ, p. 16:

²⁴ Տե՛ս օրինակ, Անդ, p. 44, n. 4, 6 կամ p. 55, n. 47:

²⁵ Անդ, p. 18:

²⁶ Անդ, p. 19:

խատանքում, այնուամենայնիվ, մի շարք արաբալիզու սկզբնաղբյուրների «լայնորեն հասանելի» բնագրերի փոխարեն, օգտվել է միայն եվրոպական լեզուներով առկա թարգմանություններից: Արու ալ-Ֆիդան այդ հեղինակներից մեկն է²⁷: Օգտագործված են նաև ալ-Ջազարիի և ալ-Յուսուբիի՝ Սովածեի և Լի Գուռի մասնակի հրատարակությունները²⁸, ինչպես նաև Իզդ ալ-Դին իբն Շադդադի, Մուֆֆադդալ իբն Աբի ալ-Յադալիի, Իբն ալ-Դավադարիի և Իբն ալ-Սուկայիի երկերը: Առաջնային կարևորության երկու աղբյուրներ՝ ալ-Նուվայրին և Բայբարս ալ-Մանսուրին, օգտագործված են Շ.Մ. Էլհամի 1293-1298 թթ. ընդգրկող մասնակի հրատարակությամբ: Հատվածական թարգմանություններից և մասնակի հրատարակություններից օգտվելու պատճառով Սոյուարտի աչքից վրիպել են խիստ կարևոր հաղորդումներ, ինչպես, օրինակ, 1292 թ. Հոսմկլայի զրավման ակնաստես եղած Բայբարս ալ-Մանսուրիի բացատրիկ նկարագրությունը: Հետևապես աշխատությունը մեր օրերում հրատարակությունից շուրջ երկու տասնամյակ անց, նորահայտ աղբյուրների լույսի ներքո նոր աշխատությամբ լրացվելու անհրաժեշտություն ունի:

Անկախ վերոգրյալից՝ Սոյուարտի գիրքը հույժ կարևոր նպաստ էր հայոց պատմության համար մամուլային աղբյուրների ներկայացրած արժեքը գնահատելու առումով՝ Կիլիկյան Հայաստանի հետազոտությունները հարստացնելով Հեթում Բ-ի իշխանության տարիներին հայ-մամուլային հարաբերությունների քիչ հայտնի կամ տակավին անհայտ բազմաթիվ մանրամասներով:

Կիլիկյան Հայաստանին նվիրված իր աշխատություններում (*“La Cilicie au carrefour des empires”, “Le Royaume Arménien de Cilicie”*) արարական աղբյուրներին մշտապես մեծ կարևորություն է տվել Փրանսահայ պատմաբան և Կիլիկիայի պատմության ամենահմուտ մասնագետներից մեկը՝ Արմեն Կլոդ Մուրաֆյանը: 2012 թ. նա պատմա-

²⁷ Խոսել Փ. Հորի հատվածական անգլերեն թարգմանության մասին է, որ մեզ անհասանելի է եղել այս աշխատանքի փոփոխ: Տե՛ս *The Memoirs of a Syrian Prince: Abū'l-Fidā', Sultan of Hamāh (672-732/1273-1331)*, translated with an introduction by P. M. Holt, Franz Steiner, Wiesbaden, 1983:

²⁸ Այս հեղինակների երկերի հրատարակությունների մասին կխոսենք ստորև:

բանների գառին հանձնեց երկար սպասված *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)* երկհատոր աշխատությունը, որը նրա շուրջ քառորդարյա պրպտումների ամբողջացումը լինելով՝ իրավամբ վերջին տարիների խոշորագույն ներգրումներից մեկն է Կիլիկիայի պատմության հետազոտության ասպարեզում²⁹:

Մուրաֆյանը, միջնադարյան սկզբնաղբյուրների փայլուն դիտակ լինելով, իր «հանրագիտաբանային» աշխատությունը կառուցել է աղբյուրագիտական լայն հենքի վրա: Ի շարս հայկական, բյուզանդական, լատին և ասորական (ինչպես նաև որոշ պարսկական) բազմաթիվ և բազմազան աղբյուրներ՝ «Ալեանայան Հայաստանում»-ում նշանակալի տեղ է տրված նաև արաբալիզու պատմագրությունը: Հեղինակը ջանք չի խնայել օգտագործելու նաև ԺԲ-ԺԶ դարերի արաբական պատմագրության՝ եվրոպալիզու թարգմանություններով (որոնց մեծ մասը հատվածական են) հասանելի երկերը: Մեզ հետաքրքրող մամուլային շրջանի պատմագիրներից նա օգտագործել է Իզդ ալ-Դին իբն Շադդադի, Աբու ալ-Ֆիդայի, ալ-Ջահաբիի, ալ-Յուսուբիի, ալ-Ջազարիի, Իբն ալ-Յուսուբիի, Իբն ալ-Սուկայիի, «Բայբարսի և հետո նաև Կալավունի ֆառտուղար ալ-Ջահիթի» (պետք է լինի՝ «Իբն Աբդ ալ-Ջահիթ»)՝ ալ-Մակրիզիի, ալ-Այնիի և ալ-Ումարիի, Իբն ալ-Շիհնայի երկերի անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն մասնակի թարգմանությունները:

Ինչևէ, արաբական աղբյուրների հետ իր ծանոթության մեջ Մուրաֆյանը որոշ վրիպումներ է թույլ տալիս³¹: ԺԳ-ԺԶ դարերի արա-

²⁹ Հասկանալի է, որ մեծագույնը բովանդակում է շատ ավելին, քան Կիլիկիայի պատմությունը: Նույնու մեկայացված է նաև բուն Հայաստանի և ընդհանրապես հայաշխարհի ԺԱ-ԺԳ դարերի ֆազական, եկեղեցական և մշակութային պատմությունը: Աշխատության մասին տե՛ս Բողոյան Ա., «Կլոդ Մուրաֆյան, Մերձավոր Արևելի Հայաստանը (ԺԱ-ԺԳ դարեր)», *ԲՄ*, № 20, 2014, էջ 447-467 (գրախոսություն); ինչպես նաև Գույնի և Վ. Տեռ-Ղեծոյանի՝ «Մերձավոր Արևելի Հայաստանը (ԺԱ-ԺԳ դարեր)», *ԲՀ*, № 1, Երևան, 2013, էջ 145-158 (գրախոսություն):

³⁰ Cl. Mutafian, *L'Arménie du Levant (XIe-XIVe siècle)*, Les Belles Lettres, Paris, 2012, t. 1, p. 46.

³¹ Նա գրում է, որ Մուրաֆյանը 1260-1340 թթ. ընդգրկող պատմությունը ֆրանսերեն թարգմանությամբ հրատարակել է Բյուզեն: Միևնույն Բյուզեն թարգմանել է միայն 1260-1317 թթ. պարփակող մասը: Բացի այդ նա ալ-Մակրիզիի «Քիթաբ ալ-սուլուբ»-ի ժամանակագրական սահ-

բական մատենագրության երկերի միայն մի մասին տիրապետելով և ձևաքի տակ ունենալով՝ բնական է, որ Հեղինակը զժխարանալու էր Համակարգված ձևով և պատմական զիտելիքի սերնդափոխության ամբողջական ավանդույթի լույսի ներքո զիտել ու քննարկել այս կամ այն արաբազիր Հեղինակի՝ Կիլիկիայի պատմությանը վերաբերող վկայությունները, ինչը, որ շատ դեպքերում Հաջողություններ կատարել է, օրինակ, Հայկական, լատին կամ բյուզանդական աղբյուրների դեպքում: Մի դեպքում, օրինակ, Մութաֆյանը, Յակուտ ալ-Համավիի մոտ Հանդիսող wald Dāwud («Դավթի սերունդ») և Āl Dāwud՝ («Դավթի զարմ») արտահայտությունները, հակառակ Նալբանդյանի տեսակետի, կապել է Դավիթ Արքակաղնեցու անվան հետ³²: Մինչդեռ արաբազիր այլ պատմիչների (Իբն ալ-Յուրթե և ալ-Մակրիզի) մոտ այս արտահայտության մյուս կիրառությունները ցույց են տալիս, որ այստեղ իրականում «Պահլավունիների տոհմն» է նկատի առնված³³: Մեկ ուրիշ դեպքում Հայագետը պարսիկ մատենագիր Ջուվայնիի մոտ եղած sulṭān-e Tākavor («Պահլավորի սուլթան») արտահայտությունը կապում է Ավագ Ջաբարյան իշխանի անվան հետ, մինչդեռ Բար Հեբրեոսի արաբերեն ժամանակագրությունն օգնում է պարզություն մտցնել այս հարցում:

Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրություններում ցայսօր անբավարար ուշադրություն է դարձվել երկրի տեղագրական և պատմաաշխարհագրական նկարագրությունը, ճարտարապետական կառույցների հետազոտությունը: Կիլիկյան Հայաստանի պատմական սահմաններում եղած բերդերի և քաղաքների մեծամասնությունն այժմ հարևան Թուրքիայի Հանրապետության տարածքում է, և այն-

տեղ պեղումներ կատարելու հնարավորությունից հասկանալի պատճառներով զրկված ենք: Արդի հետազոտողի առջև կանգնած մյուս բարդությունը պատմական աղբյուրներից Հայտնի բերդերի նույնականացման հարցն է, քանի որ Կիլիկյան Հայաստանի այժմյան տարածքում գտնվող ամրոցների մի մասը կիսավեր է, մյուս՝ զգալի մասը, հիմնովին ավերված: Բացի այդ դրանցից շատերը կրում են թուրքական անուններ, որոնք ոչ մի աղբյուր չունեն դրանց պատմական անվանումների հետ: Այնուհանդերձ, հատկանշական է, որ այս ուղղությամբ կարևոր քայլեր են կատարվել, թեև հիմնականում արտերկրի մասնագետների կողմից: Հայկական պետության ճարտարապետության՝ ի մասնավորի ուսումնական ամրոցաշինություն ուսումնասիրության մեջ առաջընթաց քայլ էր Դավիթի Վանդեկերհովի *Medieval Fortifications in Cilicia: The Armenian Contribution to Military Architecture in the Middle Ages* («Կիլիկիայի միջնադարյան ամրությունները: Հայերի ներդրումը միջնադարյան ռազմական ճարտարապետության մեջ»)՝ բոլորովին վերջերս հրատարակված աշխատությունը: Սա, թերևս, Ռոբերտ Էդվարդսի Հայտնի աշխատություններից³⁴ հետո Կիլիկիայի հայկական ամրությունների ուսումնասիրության երկրորդ Հաջողված և երկար սպասված փորձն է: Վանդեկերհովն իր այս գրքով փորձել է ինչ-որ չափով լրացնել ոլորտում եղած բացերը՝ քննության ենթարկելով Կիլիկիայի տարածքի շուրջ 104 ամրություններ: Դրանց մեծամասնությունը, չնայած մշակութային վանդալիզմի դրսևորումներին, Հայկական միջնադարյան ամրոցաշինության և ճարտարապետության դեռևս չլինջված հետքեր ունեն: Հատկանշական է, որ Հեղինակը մի քանի անգամ անձամբ այցելել է Կիլիկիա և հիշյալ բերդերի մոտ կեսն իր աչքով տեսել է, նկարագրել դրանք սեփական զիտարկումների

մաներ է նշում 1181 և 1436 թվականները՝ 1171-1441 թվականների փոխառեն: Հիշյալ երկերի հրատարակությունները կամոնթագրեմի ստորև:

³² Cf. Mutafian, *L'Arménie*, p. 513.

³³ St' u Ibn al-Furāt, *Tārīḥ al-duwal wa-l-mulūk*, ց. 2, bi-taḥqīq Muḥammad Farīd al-Ṣayyāl (*A critical edition of Volume II of Tārīḥ al-duwal wa'l mulūk by Muḥammad B. 'Alī ibn al-Furāt*, University of Edinburgh, 1986, unpublished), ց. 153-154 [pp. 253-254]: Աեփնս իրականում մեքերում է Յակուտի ժամանակակից նախնի պատմիչ Իբն Աբի Տայի (մահ. 1229-1233 թթ. միջակայքում) երկից, որը յի հասել մեզ: Հմմտ. al-Maqrīzī, *Kitāb al-Muqaffā al-Kabīr*, ց. 2, bi-taḥqīq Muḥammad al-Ya'lāwī, Dār al-Ġarb al-Islāmī, Bayrūt, 1991, ց. 512-513:

³⁴ D. Vandekerckhove, *Medieval Fortifications in Cilicia: The Armenian Contribution to Military Architecture in the Middle Ages*, Brill, Leiden, 2019.

³⁵ St' u R.W. Edwards, *The fortifications of Armenian Cilicia*, Dumbarton Oaks, Washington, 1987, ինչպես նաև սույն թվայով նետազոտողի բազմաթիվ հրատարակումներ: St' u հույնի՝ «Two New Byzantine Churches in Cilicia», *AS*, vol. 32, 1982, pp. 23-32; հույնի՝ «Ecclesiastical Architecture in the Fortifications of Armenian Cilicia (part 1)», *DOP*, vol. 36, 1982, pp. 155-176 և «Ecclesiastical Architecture in the Fortifications of Armenian Cilicia (part 2)», *DOP*, vol. 37, 1983, pp. 123-146:

Հիման վրա, չափազանց, քարտեզագրել և տեղորոշել: Նա նաև մինչ օրս անհայտ մի շարք ամրություններ է հայտնաբերել Տավրոսյան լեռներում, ինչպես նաև դրանց հարող բնակավայրերի հետքեր: Այդ տվյալները կիլիկյան բերդամրոցների իր ձևաբով արված լուսանկարների հետ մեկտեղ նա գետեղել է իր գրքի վերջնամասում՝ աշխարհագրական տեղեկատուում (gazetteer):

Հնագիտական տվյալները պատմական գիտելիքի հետ համագրելու անհրաժեշտությունը դիտակցելով՝ Դ. Վանդեկերքհովն իր ուսումնասիրության մեջ օգտագործել է միջնադարյան հայկական և օտարալեզու սկզբնաղբյուրների վկայությունները: Սկզբնաղբյուրային տվյալները (խոսքը մասնավորապես արաբական պատմական և աշխարհագրական սկզբնաղբյուրների մասին է-Գ.Դ.) աշխատանքում նույնքան հմտորեն չեն օգտագործված սրբան Հնագիտական տվյալները: Օգտագործած սկզբնաղբյուրների և գրականության տեսությունից արդեն ենթադրում ենք, որ հետազոտողը Հիմնականում եվրոպական թարգմանություններով (Հիմնականում մասնակի) հասանելի արաբական աղբյուրներ է օգտագործել (Իմադ ալ-Դին ալ-Իսֆահահանի Al-Fath al-qussī-ն, Իբն ալ-Ասիրի Al-Kāmil fī tāriḥ-ը, Իբն ալ-Ադիմի Zubdat al-ḥalab-ը, Աբու Շամայի Kitāb al-Rawḍatayn-ը, Աբու ալ-Ֆիդայի Al-Muḥtaṣar-ը, Ղալտի Մուֆաղղալի Al-Nahḡ al-sadīd-ը, ալ-Մակրիզի Kitāb al-sulūk-ը, Իբն ալ-Շիհնայի Al-Durr al-muntaḥab-ը), որոնց մասին խորը գիտելիքներ չի ունեցել: Նա, օրինակ, Սալահ ալ-Դինի կենսագիր Բահա ալ-Դին իբն Շահադի մասին խոսելիս, որպես նրա աշխատություն, սխալմամբ ծանոթագրում է Իզզ ալ-Դին իբն Շահադի Al-A'laq al-ḥaṭīra երկի բնագրի հրատարակությունը, իսկ հաջորդ էջում որպես վերջինիս երկ՝ Ա.Մ. Էդդեի ֆրանսերեն մասնակի թարգմանությունը³⁶: Ուսումնասիրողը Մուֆաղղալին սխալմամբ մուսուլման հեղինակ է անվանում³⁷:

Պետք է նշել, սակայն, որ Կիլիկիայի բերդերի մասին հաղորդող արաբական աղբյուրներն անհամեմատ ավելի շատ ու բազմաթիվ են, և դրանց բովանդակած տեղեկությունները շատ ավելի հարուստ են, քան

³⁶ D. Vandekerckhove, *Medieval Fortifications*, pp. 10-11.

³⁷ Տե՛ս նույն տեղում, p 10:

կարելի է պատկերացում կազմել Վանդեկերքհովի գրքից: Դրանց պարունակած նյութը, դուցե և ավելին է, քան հայկական և այլ օտարալեզու աղբյուրների պարունակած տեղեկությունները միասին վերցրած:

Մեր հետազոտություններում մենք մեկ անգամ չէ, որ չեշտադրել ենք այն կարևորությունը, որ ունեն արաբական՝ այդ թվում մամլուքյան պատմական և աշխարհագրական երկերը հայկական Կիլիկիայի տեղադրական նկարագրության համար: Այս թեմայով վերջերս մեր հեղինակած երկու հոդվածները՝ նվիրված Կիլիկյան Հայաստանի երկու քիչ հայտնի բերդերի (ալ-Թինիին կամ Կանամելային և Քայնուքին), գրա վառ վկայությունն են³⁸:

Հայ-մամլուքյան հարաբերությունների լուսաբանման ուղղությամբ նշանակալի քայլեր են կատարվել նաև արաբական աշխարհի հետազոտողների կողմից ինչպես Մամլուքյան սուլթանության ընդհանուր պատմությանը, Իլխանության հետ նրա հարաբերություններին, այնպես էլ առանձնապես Կիլիկիայի պատմությանը նվիրված ուսումնասիրություններում: Իրենց աշխատություններում Կիլիկյան Հայաստանին և մամլուքների հետ վերջինիս հարաբերություններին անդրադարձ կատարած արաբ ժամանակակից հետազոտողներից հիշատակության են արժանի Հատկապես Ֆայիդ Համմադ Մուհամմադ Աշուրը և Սաիդ Արդ ալ-Ֆարքան Աշուրը: Նրանցից առաջինն իր «Մամլուք-մոնղոլական ֆաղափական հարաբերությունները մամլուքյան առաջին հարստության օրոք» և «Իսլամական ջիհադն ընդդեմ խաչակիրների և մոնղոլների մամլուքյան դարաշրջանում» մենագրություններում³⁹ ընդհանուր գծերով մի քանի էջի սահմաններում, ներկայացրել է նաև հայ-մամլուքյան ռազմաքաղաքական հակամարտության և գաղափարախոսական առճակատման ահուլենքներն ու զարգացման պատմությունը: Մամլուք-հայկական քաղաքական հարաբերությունների քննությունը

³⁸ Գ. Գանեկյան, «Կիլիկյան Հայաստանի բերդերն ու ֆաղափներն ըստ մուսուլմանական աղբյուրների (հոդվածաշար): Ա. ալ-Թինի», *JSAS*, v. 27, Issue 2, Brill, Leiden, 2021, էջ 151-182 և նույնի՝ «Կիլիկյան Հայաստանի բերդերն ու ֆաղափներն ըստ մուսուլմանական աղբյուրների (հոդվածաշար): Բ. Քայնուք», 222, 2021 (հանձնված է հրատարակության):

³⁹ Fāyid Ḥammād Muḥammad 'Āṣūr, *Al-Ġihād al-Islāmī fīdda al-ṣalībīyyīn wa-l-muḡāl fī al-ʿaṣr al-mamlūkī*, Ṭarābulus, 1995, ք. 229-236.

տեղ է գտել նաև խաչակրությունների և եվրոպական միջնադարյան պատմության մասնագետ Սաիդ Աշուրի աշխատություններում: Վերջինս բացի այն, որ հայոց թագավորության և եգիպտոսի սուլթանության փոխհարաբերություններն արծարծել է (թեև ուղղակի և հարևանցի-Գ.Դ.) իր «Մամլուխյան դարաշրջանը եգիպտոսում և Ասորիում» և «եգիպտոսն ու Ասորին Այյուբյանների և Մամլուխյանների օրոք» մենագրությունների⁴⁰ էջերում, թեև այն նաև մի առանձին հոդված է նվիրել «Մամլուխյան սուլթանությունն ու Փոֆր (այն է՝ Կիլիկյան-Գ.Դ.) Հայաստանի թագավորությունը» վերնագրով⁴¹:

Հայերն ու հայոց պատմությունը դեռ նախորդ դարի 80-ականներից մշտապես կենտրոնական տեղ են զբաղեցրել նաև մեկ այլ եգիպտացի հետազոտողի՝ անվանի հայագետ, Բենհայի համալսարանի պրոֆեսոր Ֆայիզ Եաջիր Իսկանդարի պատմագիտական հետաքրքրություններում: Ծիշտ է՝ նրա աշխատանքները (օրինակ՝ «Հայաստանը բյուզանդացիների և «բարեպաշտ» խալիֆաների միջև հայոց Ասանդ պատմիչի գրվածքների լույսի ներքո» (1982 թ.), «Հայաստանը բյուզանդացիների և սելջուկ բյուրեքների միջև» (1983 թ.), «Հայաստանի իսլամական նվաճումները» (1983 թ.), «Հայաստանի մայրաքաղաք Անիի գրավումը սելջուկների կողմից հիջրայի 456 / 1064 թ.» (1987 թ.), «Տնտեսական կյանքը Հայաստանում իսլամական նվաճման ժամանակ» (1988 թ.), «Հայաստանի գրավումը Բյուզանդական կայսրության կողմից» (1988 թ.), «Les richesses de l'Arménie au temps des Bagratides (885-1045)» (1988 թ.), «Մուսուլմանները, բյուզանդացիները և հայերը հայ ժամանակակից պատմիչ Սեբեոսի գրվածքների լույսի ներքո» (1993 թ.)⁴² և բազմաթիվ այլ գրքեր) հիմնա-

⁴⁰ Sa'īd 'Abd al-Fattāh 'Āšūr, *Miṣr wa-l-Šām fī 'aṣr al-Ayyūbiyyīn wa-l-Mamālīk*, Dār al-Nahḍa al-'Arabiyya, Bayrūt (առանց տարեթվի), ինչպես նաև **Տայնի**՝ Al-'Aṣr al-Mamālīkī fī Miṣr wa-l-Šām, Dār al-Nahḍa al-'arabiyya, al-Qāhira, 1976:

⁴¹ Stū' **Տայնի**՝ *Salḡanat al-Mamālīk wa-mamlakat Armīniyat al-Šuġrā*, Buḥāt wa-dirāsāt fī tāriḡ al-'uṣūr al-wuṣṭā, al-Qāhira, 1977, ք. 225-278:

⁴² Fāyiz Naġīb Iskandar, *Armīniya bayna al-bizantiyyīn wa-l-ḡulafā' al-rāšidīn fī ḡu' kitābāt al-mu'arriḡ al-armanī Ġiḡfūd*, al-Iskandariyya, 1982; **Տայնի**՝ *Armīniya bayna al-Bizantiyyīn wa-l-Atrāk al-salāḡiqa*, al-Iskandariyya, 1983; **Տայնի**՝ *Al-Futūḡāt al-islāmiyya li-Armīniya* (11-40 h. / 632-661 m.), al-Iskandariyya, 1983; **Տայնի**՝ *Istīlā' al-salāḡiqa 'alā 'āṣimat Armīniya Anī, sanata 456 h. / 1064 m.*, al-Iskandariyya, 1987; **Տայնի**՝ *Al-Ḥayāt al-iqtisādiyya fī Armīniya ibāna al-faḡh al-islāmī*, al-Iskandariyya, 1988; **Տայնի**՝ *Ġazw al-Imbrātūriyya al-Bizantiyya li-Armīniya 437 h. /*

կանոն նվիրված են բուն Հայաստանի պատմությանը՝ արաբական արշավանքներին, Հայաստանում իսլամական գերիշխանության շրջանին, տնտեսական կյանքին, հայ-բյուզանդական հարաբերություններին, սելջուկ-թյուրքական արշավանքներին, Բագրատունիների հայոց թագավորությանը, խաչակրաց արշավանքներին, որոնք մեզ քաջ հայտնի են: Հայագետը վերջին տասնամյակում սկսել է հետաքրքրություն ցուցաբերել նաև Կիլիկյան Հայաստանի պատմության նկատմամբ՝ հրատարակելով մի քանի փոքրածավալ ուսումնասիրություններ, որոնց մասին վերջերս ենք իմացել: Մասնավորապես՝ 2008 թ.՝ «Հոմսի դիմակայությունը մոնղոլների և հայերի դաշնակցությանը», 2010 թ.՝ «Փոֆր Հայաստանի թագավորության առևտուրն իտալական ֆաղաֆների և Բահրի Մամլուխյան սուլթանության միջև», 2012 թ.՝ «Փոֆր Հայաստանի թագավորությունը մուսուլմանների և խաչակիրների միջև՝ պատմիչ Մաբաթի գրվածքներում» հոդված-գրքույկներին, որոնք տակավին հասանելի չեն մեզ: Հետևաբար հեղինակի՝ այս հոդվածներում արտահայտած դիտարկումներին կանգնադրանք մեր հետագա հետազոտություններում, մեզ հասու դառնալուս պես: Վերջերս, օրինակ, ձեռք ենք բերել Ֆայիզ Իսքանդարի 1999 թ. հեղինակած մի հոդված-գրքույկը՝ «Մամլուխյան սուլթան ալ-Աշուրի Խալիլ իբն Կալվաունը և «Մուսուլմանների բերդի» գրավումը» վերնագրով: Այն նվիրված է 1292 թ. մամլուքների կողմից Հռոմկլա բերդի գրավմանը: Այս հոդվածի մասին նույնպես իմացել ենք Հռոմկլայի կաթողիկոսական աթոռի պատմությանը նվիրված մեր աշխատության հրատարակությունից հետո, ուստի և այն չենք օգտագործել այդ հետազոտությունը գրելիս:

Անշուշտ, Ֆայիզ, Սաիդ Աշուրներից և Ֆայիզ Իսքանդարից բացի մամլուք-հայկական հակամարտության առանցքային դրվազներն իրենց ընդհանրական, ոչ մանրաբնին անգրադարձն են գտել արաբական աշխարհի նաև այլ հետազոտողների մոտ: Առանձին հիշատակության են արժանի, օրինակ, Զամալ ալ-Գին Սարուրը⁴³, Մուհամմադ

1045 m., al-Iskandariyya, 1988; **Տայնի**՝ *Les richesses de l'Arménie au temps des Bagratides (885-1045)*, Alexandrie, 1988; **Տայնի**՝ *Al-Muslimūn, al-Bizantiyyūn wa-l-Arman fī ḡu' kitābāt al-mu'arriḡ al-armanī Sībīyūs* (11-40 h. / 632-661 m.), Dār al-ḡikma al-Yamāniyya, Ṣan'ā', 1993:

⁴³ Muḡammad Ġamāl al-Dīn Sarūr, *Dawlat banī Qalāwūn fī Miṣr*, Dār al-fikr al-'arabī, al-Qāhira, 1947, ք. 224-231.

Սուհայլ Տակկուզը⁴⁴ և Ադիլ Աբդ ալ-Հաֆիզ Համզան⁴⁵: Նրանցից առաջին երկուսը Հայ-մամլուքյան քաղաքական ավելի քան հարյուրամյա հարաբերություններին ընդամենը յոթից տաս էջ են հատկացրել, իսկ վերջինը Հայոց թագավորության և Մամլուքյան սուլթանության հակամարտությունը քննել է Հալեպի «Կոնստանդուպոլսյան» հետ հարաբերությունների լույսի ներքո:

Արաբական աշխարհում Հայ-մոնղոլական և նաև Հայ-մամլուքյան հարաբերությունների ուսումնասիրության մեջ առաջընթաց քայլ էր Աբդ ալ-Ալլան Ջասիմ Ալի Ալ Սանիի 2007 թ. լույս տեսած «Մոնղոլների և Փոքր Հայաստանի քաղաքացիության փառաբանական հարաբերությունները 1236-1277 թթ. և դրանց հետևի իսլամական պատմության մեջ» վերնազրույց մենագրությունը⁴⁶, որը հեղինակի 2006 թ. Կահիրեի Համալսարանում պաշտպանած ատենախոսության հրատարակությունն է: Սա, թերևս, առանձնապես Կիլիկյան Հայաստանի պատմությանը նվիրված առաջին մենագրությունն է արաբական պատմագիտության մեջ: Աշխատանքը դրված է ժ-Ժե դարերի մեծածիփ արաբական սկզբնաղբյուրների լայն հիմքի վրա (Իբն ալ-Դավադարի, Իբն Աբդ ալ-Ջահիլ, Իբն Վասիլ, Իբն Քասիր, Աբու ալ-Ֆիդա, Իբն Դուլմակ, Իբն Թադրի Բիրդի, Բայբարս ալ-Մանսուրի, ալ-Ջահաբի, ալ-Ումարի, ալ-Քուլթուբի, ալ-Նուվայրի, ալ-Յունիսի, Իզդ ալ-Դին Իբն Շադդադ, ալ-Մակրիզի, ալ-Այնի, ալ-Կալկաշանդի և այլք): Պետք է նշել, սակայն, որ ուսումնասիրողը երբեմն արաբագիր այս կամ այն հեղինակի հազորդուժը վերցնում է զուտ որպես արժանահիշատակ տեղեկություն և չի փորձում դանել ու մատնանշել վկայության իրական սկզբնաղբյուրը: Զորորինակ, Հոսմկլայի մասին ծանոթագրության մեջ նա մեջբերում է ալ-Քուլթուբիի հազորդուժը հայրապետանիստ գրչակի անառիկու-

թյան մասին⁴⁷, որն ընդամենը վերաշարադրանքն է բերդի 1292 թ. պաշարմանն ակնհատես եղած Բայբարս ալ-Մանսուրիի վկայության⁴⁸:

Բացի տպագիր հրատարակություններ ունեցող աղբյուրներից Ալ Սանին Հայոց թագավորության մասին որոշ տեղեկություններ է քաղել նաև ձեռագիր մանր ժամանակագրությունների ձեռագրերից՝ հիմնականում Կահիրեի եգիպտական և Փարիզի ազգային գրադարանների հավաքածուներից: Իր աղբյուրների տեսության մեջ Ալ Սանին գրում է, թե թեմայի ուսումնասիրության համար ամենամեծ հետաքրքրությունն ու կարևորությունը ներկայացնում են Հայկական աղբյուրները՝ առավել քան իսլամական աղբյուրները: Աշխատանքում Հայագիր պատմիչներից օգտագործված են հատկապես Սմբատ Գունդուստարի⁴⁹ «Տարեգրի», Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն հայոց», Վարդան Արևելցու «Հաաֆումն պատմութեան», Գրիգոր Ակներցուն (կամ Ականցին) վերագրված «Պատմութիւն քաթարաց» և Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» երկերի՝ եվրոպական լեզուներով (հիմնականում ֆրանսերեն) թարգմանությունները, ինչպես նաև Հեթում Կոռիկոսցու երկի լատիներեն և հին ֆրանսերեն տարբերակների հրատարակությունները: Ինչպես երևում է, հեղինակը զժվարությունների է հանդիպել Հայկական անձնանունները և

⁴⁷ Տե՛ս Անդ, §. 71, և. 1:

⁴⁸ Հմմտ. Baybars al-Manṣūrī, Zubdat al-fikra fī tāriḥ al-ḥiḡra, bi-taḥqīq Dunāld Riṯšārdz (D.S. Richards), Berlin-Bayrūt, 1998, §. 288:

⁴⁹ Ալ Սանին գրում է, թե «գունդուսարի» տիտղոսի միակ հիշատակությունն արաբալեզու պատմագրության մեջ Բար Հերեթոսի (Իբն ալ-Իրբի) արաբերեն ժամանակագրության մեջ է: Պե՛տք է նշել, որ հայոց սպարապետին («գունդուսարի» տիտղոսի հայերեն համարժեքն է) արաբ պատմիչներից kundāsṭabī է անվանում նաև Իբն Աբդ ալ-Ջահիլը: Տե՛ս Ibn 'Abd al-Zāhir, Al-Rawḍ al-zāhir fī sirat al-Malik al-Zāhir, bi-taḥqīq 'Abd al-'Azīz al-Ḥuwaytīr, al-Riyāḍ, 1976, §. 270: Եզրույթի այլ կիբառություններ կան նաև Իբն ալ-Կալանիսիի և Իբն Քասիրի մոտ: Յ. Ապամովիչի ենթադրությամբ kundāsṭabī տիտղոսն Իկոնիայի սելջուկներ հավանաբար փոխակ է կիլիկյան-հայկական (գունդուսարի) կամ լատինական (comes stabuli) արդեն գոյություն ունեցող համարժեքներից: Տե՛ս Օ.Ս. Апанович, «К вопросу о должности кундестабла у сельджукидов Рума в XIII в.»: Кундестаби Румы и Михаил Палеолог», ВВ, Том 66 (91), 2007, стр. 183-184, прим. 74: Հմմտ. С. Cahen, La Turquie pré-ottomane (Varia Turcica VII), Institut Français d'Études Anatoliennes, Istanbul, 1988, p. 183, 192-193, ինչպես նաև D. Korobeinikov, Byzantium and the Turks in the thirteenth century, Oxford University Press, Oxford, 2014, pp. 92-94:

⁴⁴ Muḥammad Suhayl Ṭaqqūš, Tāriḥ al-mamālīk fī Miṣr wa-bilād al-Šām, Dār al-Nafā'is, al-Qāhira, 1997, §. 281-286, 319-321.

⁴⁵ 'Ādil 'Abd al-Ḥāfiṣ Ḥamza, Niyābat Ḥalab fī 'aṣr salāṭim al-mamālīk, al-Hay'a al-Miṣriyya al-āmma li-l-kitāb, al-Qāhira, 2000, §. 144-166.

⁴⁶ 'Abd Allāh Ġasim 'Alī Āl Ṭāni, Al-'Ālāqāt al-siyāsiyya bayna al-Muḡūl wa-Mamlakat Armīniya al-Ṣuḡrā 1236-1277m. wa-aḡaruhā fī al-tāriḥ al-Islāmī, Dār al-'ulūm al-'arabiyya, Bayrūt, 2007.

այլևայլ անվանումներն արաբերեն տառադարձելիս: Հայ մատենագիրների անունները, օրինակ, տառադարձված են այնպես, ինչպես Ֆրանսերեն հրատարակություններում: Գրիգոր Ակներցուն ըստ այդմ հեղինակը կոչում է Գրիգոր Դեկոնր (Ֆրանսերեն Grigor d'Akner-ի համանմանությունը), Վահրամ Եղեսայուն (Բարունուն)՝ Fahrām Dides⁵⁰ և այլն: Վերոբերյալ զիտարկումները բնավ նպատակ չունեն թերագնահատելու հեղինակի կատարած աշխատանքը: Միայն այն հանգամանքը, որ սա հայ-մոնղոլական հարաբերություններին և Կիլիկյան Հայաստանի պատմությանը նվիրված առաջին արաբալեզու մենագրությունն է, արդեն իսկ շատ ոգևորիչ է:

Դրանում համոզվելու ևս մի առիթ է տվել **Շառֆաթ Ռամադան Հուջան** 2011 թ. իր հրատարակած «Մամլուքյան աուսիմ պետության և Իրանի իլխամական պետության հարաբերությունները (648-732/1250-1335 թթ.)» գրքով⁵¹: Մենագրությունը գրված է աղբյուրագիտական լայն հենքի վրա. հետազոտության ոլորտ են ներգրավված ինչպես Եգիպտոսի սուլթանություն, այնպես էլ Իլխանության պաշտոնական պատմագրության արաբալեզու և պարսկալեզու գրեթե բոլոր կարևոր սկզբնաղբյուրները: Սակայն օտարալեզու գրականությունը սույն աշխատանքում օգտագործված է ոչ նույնքան հետևողականորեն, ինչպես արաբալեզու գրականությունը: Մենագրության մատենագիտության մեջ և ծանոթագրություններում, օրինակ, Ռ. Ամիրտայի գիրքը, չգիտես ինչու, վերագրված է Դ. Մորգանին⁵², աչքի են զարնում եվրոպական լեզուներով ուսումնասիրությունների վերնագրերում եղած սխալները:

Ըմբռնելով Եգիպտոսի սուլթանության և Իլխանության ու մյուս կողմից Սուլթանության և Հայոց թագավորության հակամարտությունների փոխկապակցվածությունը՝ Շառֆաթ Հուջան իր գրքում բավական տեղ է հատկացրել նաև Հայ-մամլուքյան քաղաքական հարաբերությունների լուսաբանմանը: Գրքի առաջին չորս գլուխները

⁵⁰ Եվ ընդհանրապես աշխատանքը պատշաճ կերպով արագոված չէ Մենագրության բուն տեխնիկական և ծանոթագրություններում շատ են շարվածային-տպագրական վրիպակները և անհամապատասխանությունները:

⁵¹ *Šawkat Ramadān Ḥuǧǧa, Al-Ālāqāt bayna dawlat al-Mamālīk al-ūlā wa-dawlat ilḥāniyya Fāris, 648-736 h. / 1250-1335 m., Amān, 2011.*

⁵² Տե՛ս Ա.Ար, §. 66 (հ. 6), 67 (հ. 4), §. 555:

նվիրված են մամլուք-մոնղոլական քաղաքական փոխհարաբերություններին և ազգական բախումներին լուսաբանմանը: Երկրորդից չորրորդ գլուխներում առանձին անդրադարձ է կատարված նաև Հայ-մամլուքյան հակամարտության սկզբնավորմանն ու զարգացմանը: Մամլուքների և մոնղոլների առճակատման շրջանկարում հեղինակը փորձել է վեր հանել ու մատնանշել Հայ-մամլուքյան քաղաքական-գիվանագիտական հարաբերությունների կարևորագույն դրվագները՝ հազվագյուտ դեպքերում միայն խորանայով մանրամասնությունների մեջ: Մի դեպքում, երբ հեղինակը խոսում է Հայոց թագավորությունից մամլուքների իսլամ ալ-թիհի (al-Tiḥī) ամրոցի մասին, գրում է, թե ղժվարացել է Հայտնի աշխարհագրական երկերում տեղեկություններ գտնել այս ամրոցի մասին: Մինչդեռ արաբ պատմիչների կողմից Qal'at al-Tiḥī, al-Tiḥāt կամ al-Tiḥāt անուններով կոչվող բերդն ամենայն հավանականությամբ տաճարականներին պատկանած Կանամելլան (*Canamella*) է, որ գրավվել ու ավերվել է նաև սուլթան Բայբարսի 1266 թ. արշավանքի ժամանակ⁵³:

Վերջերս իրաքցի հետազոտող **Ֆաթհի Սալիմ ալ-Լահիբի** հեղինակությամբ լույս է տեսել Կիլիկյան Հայաստանին նվիրված ևս մի աշխատանք՝ «Փոքր Հայաստանի թագավորությունը (հարևան ուժերի հետ Կաղաքական հարաբերությունների հետազոտություն) (հիջրայի 463-776 / 1071-1374 թթ.)» խորագրով⁵⁴: Ընդհանուր է՝ նշված թվականները (1071-1374 թթ.)

⁵³ Տե՛ս Ա.Ար, §. 263: Հմմտ. Ibn 'Abd al-Zāhir, *Al-Rawd*, §. 270-271 և al-Maqrīzī, *Kitāb al-sulūk li-ma'rifat durwal al-mulūk*, §. 1.2, bi-tahqīq Muḥammad Muṣṭafā Ziyāda, Maṭba'at al-ta'līf wa-l-tarǧama wa-l-naṣr, al-Qāhira, 1957, §. 552: Օրինակ, Իբն ալ-Ադիմի (մահ. 1262 թ.) Buǧyat al-talab երկում կարգում են. «[Ալ-Քինաթը] բերդ է ծովի ափին՝ Բայասի և Մոսիսի միջև: Տե՛ս Ibn al-'Adīm, *Buǧyat al-talab fi tāriḥ Ḥalab*, bi-tahqīq Suhayl Zakkār, Bayrūt, 1988, §. 1, §. 223: Ալ-Քինին Կանամելլայի հետ նույնացնելու մասին տե՛ս **Molin K.**, *Unknown Crusader castles*, Cambridge University Press, 2001, p. 180, 186, ինչպես նաև **R. Amitai-Preiss**, *Mongols*, p. 118, n. 50 և **Մ.Ա. Շևալիև**, Կիլիկյան Հայաստանի և հոգևորասպետական միաբանությունների փոխհարաբերությունների պատմություն (քարո. ֆրանսերենից Վ. Պողոսյանի), Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 82-83 (հետադարձ՝ Մ.Ա. Շևալիև, Կիլիկյան Հայաստան): Հմմտ. Վ. Ալիջան, *Միտուն (Համագրություն Հայկական Կիլիկիոս եւ Լեւոն Մեծագործ)*, Վենետիկ, 1885, էջ 396: Տե՛ս նաև հետևում 3.1 մասում:

⁵⁴ **Faḥḥī Sālim Ḥamidī al-Lahībī**, *Mamlakat Arminiya al-ṣuǧrā (Dirāsa fi-l-'alāqāt al-siyāsiyya ma'a-l-qiwa al-muǧāwira li-l-fatra (463-776 h. / 1071-1374 m.), Dār al-ǧaydā*, 'Ammān, 2019. Ընդ որում, սա ամենից և այս հեղինակի «հայերեն լեզու» առաջին գիրքը չէ՝ նրա

միանգամից աչքի են զարնում և տարակուսանք առաջացնում, այնուամենայնիվ, ձեռնպահ պիտի մնանք որևէ մեկնաբանությունից, քանի դեռ չենք ծանոթացել բովանդակությանը:

Ինչևէ, բոլոր այս ուսումնասիրությունների գոյությունն արդեն իսկ ապացուցում է, որ «Մերձավոր Արևելքի հայոց պետության» նկատմամբ հետաքրքրությունը վաղուց արդեն սովորական երևույթ է նաև արդի արաբական պատմագիտության մեջ:

Այսպիսով, Հայ-մամլուքյան Հարաբերությունների արաբական սկզբնաղբյուրների բացահայտման ուղղությամբ օտար հետազոտողների կողմից կարևոր քայլեր են կատարվել: Ցավալի է, որ այդ փորձերը գերազանցապես անտեսված են մնացել Հայաստանյան արևելագիտության և Հայագիտության կողմից, և ոչորտու՜մ Հայրենական մասնագետների կատարած աշխատանքը գերազանցապես հիշյալ ուսումնասիրություններից անջրպետված է զարգացել:

Բա՛ջ գիտակցելով Կիլիկյան Հայաստանի և ընդհանրապես Հայոց պատմության համար միջնադարյան արաբական աղբյուրների ներկայացրած կարևորությունը՝ Խորհրդային Հայաստանի արաբագիտական դպրոցի ներկայացուցիչներից Հակոբ Նալբանդյանը ձեռնարկել է արաբագիր երեք Հեղինակների՝ աշխարհագրագիր Յակուտ ալ-Համավիի, Համայի Այյուբյան կառավարիչ Աբու ալ-Ֆիդայի և Սալահ ալ-Դինի կենսագիր Բահա ալ-Դին Իբն Շադդադի երկերի՝ Հայերի և Հարակից երկրների պատմության մասին տեղեկություններ պարունակող հատվածների թարգմանություն⁵⁶: Հեղինակն իր աշխատությունն օժտել է հարուստ ծանոթագրություններով՝ մեծ տեղ հատկացնելով իրեն Հայտնի այլ արաբական սկզբնաղբյուրներից քաղված վկայությունների համեմատական քննությունը: Մեր ուսումնասիրության համար հետաքրքրություն ներկայացնող մամլուքյան շրջանի Հեղինակներից

Նալբանդյանը ժամանակ առ ժամանակ վկայակոչում է Իբն ալ-Վարդիին, ալ-Ումարիին, Մուֆադդալ Իբն Աբի ալ-Ֆադալիին, ալ-Մակրիզիին, Իբն Թադրի Բիրդիին, ալ-Կալկալանդիին, ալ-Սախավիին, Իբն Իյասին և ալ-Սուլուտիին: Նալբանդյանի գիրքը՝ արաբական աղբյուրներից քաղված նյութով ու հայագիտական շրջանառություն մուծած նորություններով, մեր օրերում էլ՝ տպագրությունից (1965 թ.)⁵⁶ տարի անց, դիտական լուրջ արժեք ունի և լայնորեն օգտագործվում է Հայագիտական և Կիլիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրություններում: Պետք է նշել, սակայն, որ աշխատությունը գերծ չէ թերություններից ու սխալներից, որոնցից քչերն են շտկվել ժամանակի ընթացքում, ընդհակառակը փոխիփոխ օգտագործվելով՝ ամրագրվել են հետագա հետազոտողների մոտ: Մենք մտադիր չենք այստեղ ընդարձակ զրախոսության ենթարկել աշխատությունը, այլ կսահմանափակվենք միայն մեկ-երկու դիտարկումներով, իսկ մամլուքյան աղբյուրների հետ կապված մյուս անճշտություններին անհրաժեշտության դեպքում կանգնադրապես հետագա շարադրանքում՝ այսպես ասած՝ «իրենց տեղում»: Մի դեպքում, օրինակ, Նալբանդյանը 1250 թ. Եդիպտոսի սուլթան դարձած Շաջար ալ-Դուրրի մասին գրում է. «Աս-Սոյուբին, Մակրիզին, Իբն ալ-Վարդին նրան ծագումով թրեուսի են համարում: Սախավի պատմիչը նրա մասին ասում է, թե ծագումով թրեուսի էր, թեև ոմանի կարծում են, թե հայունի էր: Նույնը կրկնում է և Աբու-Ֆիդան»⁵⁷: Մինչդեռ Նալբանդյանի հիշատակած աղբյուրներից Շաջար ալ-Դուրրի ազգության մասին Իբն ալ-Վարդին և ալ-Սուլուտին կարծես թե չեն հիշել⁵⁷, իսկ մյուս երեքի մոտ իրար Հար և նման ձևակերպումներ են՝ «ազգությամբ թրեուսի էր, բայց ոմանի ասում էին, թե հայունի էր» (kānat turkiyyat al-ğins, wa-qīla bal (կամ kānat) armaniyyatan), հետևաբար այս աղբյուրների հաղորդումներն իրար հակադրելու կարիք այստեղ առհասարակ չկար⁵⁸:

գրչին է պատկանում նաև «Հայերի և վրացիների հարաբերություններն իսլամական ուժերի նեո Աբրաայան դարաշրջանում» վերնագրով մի աշխատանք: Št'u Fatḥī Sālim Ḥamidī al-Lahībī, Dirāsāt fi 'alāqat al-Arman wa-l-Kurğ bi-l-qiwā al-Islāmiyya fi-l-'aṣr al-'Abbāsī, Dār al-kutub al-'ilmiyya, Bayrūt, 2013:

⁵⁶ Հ.Թ. Նալբանդյան, Բարաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին (Յակուտ ալ-Համավի, Աբու-Ֆիդա, Իբն Շադդադ), ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1965:

⁵⁶ Št'u Uṣṣ, էջ 271:

⁵⁷ Ibn al-Wardī, Tatimmat al-Muḥtaṣar fi aḥbār al-baṣār, ց. 2, al-Qāhira, 1868, ց. 193-194; al-Suyūfī, Tārīḥ al-ḥulafā', Dār ibn Ḥazm, Bayrūt, 2003, ց. 365.

⁵⁸ Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 1.2, ց. 361; al-Saḥāwī, Tuḥfat al-aḥbāb wa-buḡyat al-ḥullāb, Maktabat al-kulliyāt al-Azhariyya, al-Qāhira, 1986, ց. 95; Abū al-Fidā', Tārīḥ Abī al-Fidā' al-

Նալբանդյանի աշխատությունում տեղ գտած շատ վրիպումներ կապված են Աբու ալ-Ֆիդա և Իբն ալ-Վարդի պատմիչների երկերի հետ: Վերջինիս երկն իրականում Աբու ալ-Ֆիդայի պատմության համառոտագրությունն է (հաղվադեպ շեղումներով և հաճելումներով), որին նա կցել է 1329 / 1330-1348 թթ. ընդգրկող իր «ըրունակությունը»: Չնչելով երկու պատմիչների երկերի այս առնչության մասին⁵⁹, Նալբանդյանն Աբու ալ-Ֆիդայի իր թարգմանության մեջ երբեմն բաց է թողնում որոշ դրվագներ, ինչպես, օրինակ, Հիջրայի 531 թ. (1136/1137 թ.) Վահրամ Պահլավունու՝ Եգիպտոսի սուլթանի վեպիրության պաշտոնից հեռացվելու մասին վկայությունը, փոխարենը մի այլ տեղում նույն հաղորդումը բերում է Իբն ալ-Վարդիից, չնայած նրան, որ առաջինի մոտ հաղորդումն ավելի հանդամանալից է և հիշատակության արժանի մանրամասներ է պարունակում⁶⁰: Նալբանդյանի աշխատության մյուս ակնբախ թերությունն օգտադործած աղբյուրը (խոսքը մասնավորապես արաբայեզու երկերի մասին է) շատ հաճախ պատշաճ կերպով չհղելն է (երկի վերնագիր, հրատարակություն), անգամ երբ դրանից ընդարձակ թարգմանություն է մեջբերում:

Ահա այսպես, հայագիտական շրջանակներում ԺԳ-ԺԶ դարերի արաբագիր հեղինակների և հատկապես մամլուքյան սկզբնաղբյուրների մասին եղած սահմանափակ դիտելիքները, հայերեն թարգմա-

նությունների բացակայությունը շատ հաճախ զիտական ուսումնասիրություններ սպրդած շփոթմունքների և սխալների պատճառ են դարձել: Տարիներ առաջ այս խնդրի առջև է կանգնել, օրինակ, Արամ Հովհաննիսյանն իր «Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ.» գրքով: Մա համլուքյան հարաբերությունների ամբողջ պատմության ուսումնասիրությանը նվիրված առաջին համապարփակ աշխատանքն է Հայագիտության մեջ, ինչն արդեն իսկ շատ ոգևորիչ է: Մեծ կարևորություն տալով թեմայի ուսումնասիրության համար արաբ հեղինակների երկերի ներկայացրած արժեքին՝ ուսումնասիրողն իր օգտագործած աղբյուրների շարքում առաջին հերթին նշում է ալ-Մակրիզիին, ով հեղինակի բնութագրմամբ լինելով «Եգիպտոսի սուլթանի արժանի պատմիչը, գրել է մամլուք սուլթանների 1250-1308 թթ. պատմությունը»⁶¹: Պատմիչի մասին իր այս փոքրիկ ծանոթության մեջ Հովհաննիսյանը միանգամից մի քանի վրիպում է թույլ տալիս: Նախ, ալ-Մակրիզին ձեռնամուխ է եղել իր Kitāb al-sulūk երկը գրելուն և առհասարակ նվիրվել է պատմագրությանը, երբ արդեն թողել էր հասարակական-քաղաքական կյանքը և անգամ մեկուսացել հասարակությունից: Ավելին, իր այդ երկում նա անհնա քննադատության է ենթարկել իր ժամանակի մամլուքներին: Երկրորդ, Kitāb al-sulūk-ը ոչ թե մամլուք սուլթանների 1250-1308 թթ. պատմությունն է, այլ, իրականում, ինչպես ինքը՝ մատենագիրն է գրում իր երկի նախաբանում, «*բնույթ Այյուբյան արժանների և քյուտբ ու չեբեգ Մամլուքյան սուլթանների*»⁶² պատմություն: Այն իրականում ներառում է 1171-ից մինչև 1441 թվականն ընկած ժամանակաշրջանը: Հովհաննիսյանին ամենայն հավանականությամբ շփոթության մեջ է գցել ալ-Մակրիզիի երկի Մ. Բատրմերի կատարած 1250-1309 թթ. պարփակող ֆրանսերեն թարգմանությունը⁶³:

musammā al-Muḥtaṣar fī aḥbār al-baṣar, ց. 2, bi-taḥqīq Maḥmūd Dayyūb, Dār al-kutub al-‘ilmiyya, Bayrūt, 1997, ց. 300.

⁵⁹ Աբու ալ-Ֆիդայի երկի հետ իր փոքրիկ ծանոթության մեջ Նալբանդյանը գրում է. «Այդ ընդարձակ աշխատությունը նախորդ պատմագիրների գործերի մի կոմպիլյացիա է, և շատ դժվար է ճշտել, թե այստեղ որն է իրական հեղինակի բաժինը»: Տե՛ս Ա.Ս. Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 211: Մի այլ տեղում էլ գրում է, թե Իբն ալ-Վարդին օգտվել է Աբու ալ-Ֆիդայից, բայց այդպես էլ չի խոսում այս երկու երկերի կապի մասին: Տե՛ս Անդ, էջ 280.

⁶⁰ Տե՛ս Անդ, էջ 261. Ինչպես նաև Ibn al-Wardī, Tatimmat al-Muḥtaṣar, ց. 2, ց. 40-41: Հմմտ. «Այդ թվականին ալ-Հաֆիզը պաշտոնից ազատեց իր վեպիր քրիստոնյա հայ Բահրամին այն պատճառով, որ նա մուսուլմանների պաշտոններում հայերին էր նշանակում և [այդպես] ստորացնում նրանց: Այդ բանից դժգոհեց Աբդուլան իբն ալ-Վալախշի (բնագրում՝ al-Wakhaṣṣī) անունով մեկը, որ մեծաքանակ զորք հավաքեց և գնաց Բահրամի դեմ: Բահրամը փախավ ալ-Մաիդ, բայց հետո հետ դարձավ: Ալ-Հաֆիզը բանեց նրան և կալանեց պալատում: Հետո, սակայն, հիշյալ Բահրամը կրոնավոր դարձավ, և ալ-Հաֆիզը նրան ազատություն շնորհեց»: Տե՛ս Abū al-Fidā, Al-Muḥtaṣar, ց. 2, ց. 77:

⁶¹ Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Կիլիկիայի հայկական թագավորության և Եգիպտոսի սուլթանության հարաբերությունները 1250-1375 թթ., Երևան, 2008, էջ 15 (հետայսու՝ Ա. Հովհաննիսյան, Կիլիկիա):

⁶² Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 1.1, al-Qāhira, 1934, ց. 9.

⁶³ Histoire des Sultans Mamlouks, de l’Égypte écrite en Arabe par Taki-Eddin-Ahmed-Makrizi, traduite en Français par M. Quatremère, 2 t., Paris, 1837, 1845.

Հետագա շարադրանքում ալ-Մակրիզիից մեջբերումներ անելիս նա մերթ հղում է Քատրմերի հիշյալ թարգմանությունը, մերթ էլ նախանդանի ծանոթագրություններում ալ-Մակրիզիից կատարված հատվածական թարգմանությունները: Մի դեպքում, օրինակ, երբ գրում է 1292 թ. սուլթանի կողմից Հոռոմկլայում գերեզմանների թվի մասին, նա կրկնում է Նալբանդյանի թույլ տված սխալը (12.000)⁶⁴ և չի համեմատում Քատրմերի տված թվի հետ (1.200)⁶⁵: Մյուս արարագիր պատմիչներից Հոմհաննիսյանն օգտագործել է Աբու ալ-Ֆիդայի՝ Նալբանդյանի կատարած հայերեն հատվածական և դպտի Մուֆադդայի՝ էդ-Բլոշեի կատարած ֆրանսերեն թարգմանությունները: Հակառակ ուսումնասիրողի պնդման, թե Մուֆադդայի երկը «սկսվում է Մամուլյան սուլթանության հիմնադրումով և շարունակվում մինչև XIV դարի երկրորդ տասնամյակը»՝ այն իրականում ընդգրկում է 1260-1341 թթ. իրադարձությունների նկարագրությունը, որի միայն 1260-1317 թթ. ընդգրկող մասն է հրատարակել Բլոշեն: Երկի մնացած մասը գերմաներեն թարգմանությամբ հետագայում հրատարակել է Ս. Կորտանտամբերը⁶⁶: Իր օգտագործած արաբագիր հեղինակների հետ ծանոթությունը Հոմհաննիսյանը եզրափակում է իրն ալ-Վարդիին և «Իբն ալ-Ֆուրիին» նշելով: Այնինչ «Իբն ալ-Ֆուրի» անունով պատմագիր մեզ հայտնի չէ: Գտնում ենք նաև այս սխալի ակունքը: Պարզվում է՝ խոսքը բաղդադցի մատենագիր Իբն ալ-Ֆուլատիի մասին է: Նրա գրչին վերագրվող Al-Hawādīt al-ğāmi'a երկից մեջբերում կատարելով հեղինակի անունը նախ տարբերակել են Գ. Մսրլյանը և Ա. Ալպոյաճյանը⁶⁷: Նրանց սխալը, փաստորեն, արմատացել է պատմիչի այդ հազորումը փոխառած հետագա հայագիտ-ուսումնասիրողների մասնավորապես Նալբանդյանի, իսկ վերջինիս հետևելով՝ նաև Հոմհաննիսյանի մոտ:

⁶⁴ Տե՛ս Հ.Ք. Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 278 և Ա. Հովհաննիսյան, Կրիկիա, էջ 114:
⁶⁵ M. Quatremere, Histoire des Sultans Mamlouks, de l'Égypte écrite en Arabe par Taki-Eddin-Ahmed-Makrizi, t. 2.3, Paris, 1845, p. 141.
⁶⁶ Այս հրատարակությունները կծանոթագրեմք ներքևում:
⁶⁷ Հմմտ. Հ.Ք. Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 276-277 և Ա. Հովհաննիսյան, Կրիկիա, էջ 16:

Իր «Կրիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320-1424 թթ.» մենագրության մեջ, Նալբանդյանի կատարած թարգմանության վրա հենվելով, արաբագիր հեղինակներից Աբու ալ-Ֆիդայի վկայություններն է օգտագործել նաև Դավիթ Թինոյանը: Ըստ նրա՝ «այս չափազանց ուշագրավ աշխատությունն ավարտվում է 1347 թ. մամուլյան առշավանի նկարագրությամբ»⁶⁸: Շարունակելով վերևում սկսած քննարկումը՝ նշենք, որ Աբու ալ-Ֆիդայի երկն իրականում ավարտվում է 1329 թ. իրադարձությունների նկարագրությամբ, իսկ ինքը հեղինակը մահացել է 1331 թ.: Թինոյանը 1329 թվականից հետո ընկած զեպքերի շարադրանքում իբն ալ-Վարդիի վկայությունները հեղինակ մերթ դրանց հեղինակին «Աբու ալ-Ֆիդայի շարունակող» է անվանում, մերթ նրա մահվան թվականի մասին մոռանալով՝ «Աբու ալ-Ֆիդա»⁶⁹:

Վերոնշյալից եզրակացնում ենք, որ Հայաստանում մամուլյան պատմագրության ուսումնասիրությունը և մամուլյան պատմագրական երկերի ներգրավումը որպես Կրիկիայան Հայաստանի պատմության սկզբնաղբյուրներ դեռևս ձևավորված ավանդույթ չունի: Այս ուսումնասիրությամբ մենք մտադիր ենք մեր կարողության սահմաններում լրացնել այս բացը՝ Հայագիտությանը և մասնավորապես Կրիկիայան Հայաստանի պատմության ուսումնասիրողներին տրամադրելով մատենադրական թարմ նյութ, ծանոթացնել ԺԳ-ԺԶ դարերի արաբագիր մատենագիրների մի մեծ խմբի, որոնց ավանդած պատմագրական գրականության ուսումնասիրությունը բավական է՝ պատասխանելու համար հայագիտությանը հետաքրքրող մեծ թվով հարցերի, ճշտումներ և լրացումներ մտցնելու Կրիկիայի պատմության մեզ հայտնի բազմաթիվ զրգազներում, պարզաբանելու մամուլյան պաշտոնական պատմագրության գիրքորոշումը Կրիկիայի Հայոց թագավորության նկատմամբ: Հետևապես, աշխատանքի առաջին մասը նվիրված է ԺԳ-ԺԶ դարերի մամուլյան պատմագրության և առանձնապես իբն Աբդ ալ-Ջահիրի մատենագրական ժառանգության հետ ծանոթությանը:

⁶⁸ Գ. Թինոյան, Կրիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320-1424 թթ., Երևան, 2011, էջ 10-11:
⁶⁹ Տե՛ս Անդ, էջ 93, 95:
⁷⁰ Տե՛ս Անդ, էջ 75, 78:

ՄԱՍ Ա

ԻՔՆ ԱՔԴ ԱԼ-ՉԱՀԻՐԻ ՏԵՂԸ

ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՊԱՏՄԱԳՐԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՈՒՄ

1.1 ԱՐԱԲԱՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ

ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՇՐՋԱՆԸ: ՍԿՋԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

«Իմացի՛ր, որ պատմագրությունը (*fann al-tārīḥ*) բազմաթիվ գիտակարգեր, մեծաթիվ օգուտներ, գանազան նպատակներ ունեցող գիտություն է: Այն մեզ ծանոթացնում է անցած ժողովուրդների բարեերին (կամ բնավորությանը՝ *aḥlāq*), մարգարեների վարքին (կենսագրությանը՝ *fi siyarihim*), աբսաների դիմաստիաներին և նրանց ֆաղափականությանը: Եւ, ով ուզում է այդ ամենն իմանալ, կարող է ցանկալի արդյունքի հասնել [անցյալի] կրոնական ու աշխարհիկ իրողություններին (այն է՝ պատմական փորձին) հետևելով: Այն (պատմագրությունը), սակայն, պահանջում է բազմաթիվ աղբյուրներ (*māḥid muta'addida*), տարատեսակ գիտելիքներ, բնական միտք (*ḥusn al-nazar*) և վստահություն, որոնք կուղղորդեն դեպի նշմարտություն և հետ կպահեն սայթափումներից և սխալներից: Քանզի եթե հաղորդումները (*aḥbār*) վերցնենք այն տեսով, ինչպես որ դրանք փոխանցվել են, ինչպես օրինակ չ'եննվեն ավանդույթի հիմնարար սկզբունքները (*uṣūl al-'āda*), ֆաղափականության կանոնները, ֆաղափակրության բնույթը, հասարակական պայմանները, և եթե ակներև փաստերը չհամեմատվեն թափված փաստերի, իսկ ներկայի փաստերն անցյալի փաստերի հետ, դա հավանաբար կտանի գայթակման և սայթափումների (*al-'uṭūr wa-mazillat al-qadam*) շեղելով նշմարտության ուղուց (*ḡāddat al-ṣidq*)»:

Իբն Խալդուն, «*Քիթաբ ալ-Իբրար*»⁷¹

⁷¹ Ibn Ḥaldūn, *Al-'Ibar wa-diwān al-mubtada' wa-l-ḥabar fi ayyām al-'Arab wa-l-Barbar Diwān al-mubtada' wa-l-ḥabar fi tāriḥ al-'Arab wa-l-Barbar* (հետալյուն՝ *Al-'Ibar*), Զ. 1, bi-taḥqīq Ḥafīl Ṣiḥāda wa-Suhayl Zakkār, Dār al-Fikr, Bayrūt, 2001, ք. 13.

1250 թ. Մամլուքյան սուլթանության հիմնադրումով նոր շրջափուլ բացվեց Մերձավոր Արևելքի ոչ միայն քաղաքական, այլև մշակութային պատմության մեջ: Գրավոր մշակույթի ու մատենագրության աննախադեպ զարգացման առումով սա նոր շունդալից սկիզբ էր նաև արաբական պատմագրական ավանդույթում: Եվ ամենևին էլ չափազանցված չեն այն պնդումները, թե «մամլուքյան շրջանն իսլամական պատմության առավել վկայագրված դարաշրջանն է»⁷²: Հատկանշական է, որ Այյուբյան տիրապետության ողջ ընթացքում և Մամլուքյան սուլթանության սկզբնական շրջանում մատենագրության ծաղկուն կենտրոններ էին համարվում Դամասկոսը, Հայեպն ու Ասորիքի մյուս քաղաքները, սակայն ԺԴ դարի կեսերից սկսած պատմական գիտելիքի զարգացման առաջնությունն աստիճանաբար անցավ եգիպտացի Հեղինակներին⁷³:

Մամլուքյան մատենագրությունը, ըստ էության, Այյուբյան պատմագրության օրդանական շարունակությունն էր ու հասունացումը: Նոր դարաշրջանի պատմիչներն ընդհանուր առմամբ պահպանեցին ու զարգացրին Այյուբյան պատմագրության մեթոդաբանական ու ժանրային (ժամանակագրություններ, անհատների «վարձագրություններ» և կենսագրական բառարաններ, արքունական զրազրության ձեռնարկներ և այլն) հիմնական առանձնահատկությունները⁷⁴: Սա բնական և տրամաբանական է թվում այն առումով, որ երկու ավանդույթներն էլ մեծ հաշվով, թեև տարբեր ժամանակների, այնուամենայնիվ, համանման պատմական միջավայրերի ու ազդեցությունների ծնունդ ու արձագանք էին: Մամլուքյան դարաշրջանը,

⁷² Li Guo, "History Writing", in *The New Cambridge History of Islam*, vol. 4 (*Islamic cultures and societies to the end of eighteenth century*), ed. by R. Irwin, Cambridge University Press, Cambridge, 2010, p. 449; N. Rabbat, "Representing the Mamluks in Mamluk Historical Writing", in *The Historiography of Islamic Egypt. c. 950-1800*, ed. by H. Kennedy, E.J. Brill, Leiden, 2000 (հետալյուն՝ *HIE*), p. 59.

⁷³ D. Little, "Historiography of the Ayyūbid and Mamlūk epochs", in *The Cambridge History of Egypt. Vol. 1: Islamic Egypt 640-1517*, ed. by C. F. Petry, Cambridge University Press, Cambridge, 1998, p. 412; K. Hirschler, "Studying Mamluk Historiography - From source-criticism to the cultural turn", in *Ubi Sumus? Quo Vademus? Mamluk Studies - State of the Art*, ed. by S. Conermann, Bonn University Press, Gottingen, 2013, p. 169.

⁷⁴ D. Little, "Historiography", p. 412.

սակայն, մի քանի քայլ առաջ էր նախորդից ոչ միայն նորանոր ժանրերի առաջացման, այլև հասարակական-քաղաքական կյանքում պատմագրության դերի աճի, նրա նշանակությունից դիտարկման տեսանկյունից: Ծիշտ է, արաբախալամական քաղաքակրթական էվոլյուցիայի գրեթե բոլոր փուլերում՝ այդ թվում Այյուբյանների օրոք, պետական իշխանությունն ու պատմական գիտելիքը «թեևանցուկ» են զարգացել⁷⁵, այնուհանդերձ մամլուքյան դարաշրջանում այդ կապն էլ ավելի է սերտացել: Քաջ գիտակցելով իրենց իշխանությունից օրինականության շեշտման, պրոպագանդման ու իդեալականացման համար պատմագրության ունեցած լուրջ դերակատարությունը՝ մամլուքյան կառավարող վերնախավն սկսեց հովանավորել ու ղեկավարել մտավորականության ('ulamā') իրեն առավել մոտ կանգնած հատվածին՝ մեծ դրամաշնորհների արժանացնելով և այդ կերպ պատմագրությունը բարձրացնելով պետական քաղաքականության մակարդակի⁷⁶: Ըստ այդմ, մամլուքյան մատենագրության ամենատարածված ուղղություններից մեկն է դասնում այսպես կոչված «խալաֆական (ṣiyāsa) ուղղվածության պատմագրությունը»⁷⁷: Պատահական չէ, որ ժամանակի խոշորագույն արաբագիր պատմիչների մեծամասնությունը մամլուքյան վարչական համակարգի ներկայացուցիչներ, արքունի քարտուղար-գրագիրներ, մամլուքյան կրոնաքաղաքական պաշտոնական զաղափարախոսության կրողներ ու արտահայտողներ էին: Սուլթանի ու արքունական շրջանակների վստահությունն ու հովանավորությունը շահելու մղումը հենց իրենց՝ մտավորականների շրջանում շատ հաճախ «ակադեմիական» սուր ու անհանդուրժող մրցակցության երանգներ էր ստանում⁷⁸: Այն պատմիչները, ովքեր կորցնում էին ռազմաքաղաքա-

⁷⁵ A. Mallett, "Islamic Historians of the Ayyūbid Era and Muslim Rulers from the Early Crusading Period: A Study in the Use of History", *Al-Masaq*, vol. 24, № 3, 2012 (December), pp. 241-252.

⁷⁶ D. Little, "Historiography", pp. 413-414.

⁷⁷ T. Khalidi, *Arabic Historical thought in the classical period*, Cambridge University Press, Cambridge, 1994, pp. 183-184.

⁷⁸ Երևայրջ հասակ տեսանելի է եւեմ ժամանակակիցների՝ ալ-Այնի, ալ-Ասկալանի և ալ-Մակրիզիի դեպքում: Տե՛ս A. Broadbridge, "Academic Rivalry and the Patronage System in Fifteenth-Century Egypt: al-'Aynī, al-Maqrīzī, and Ibn Hajar al-'Asqalānī", *MSR*, vol. 3, 1999, pp. 85-107:

կան վեներաբլի բարեհաճությունը, հեռացվում էին իշխանական օղակներից: Այս երևույթի փայլուն օրինակն ալ-Մակրիզին է (մահ. 1442 թ.), ով, չկարողանալով վերականգնել իր երբեմնի փառքն ու արքունական շրջանակներում վայելած հեղինակությունը, մեկուսանում է հասարակությունից՝ իրեն նվիրելով զրական-գիտական գործունեությանը՝ գրելով իր հիմնական երկերը, որոնցում շատ հաճախ սուր քննադատության է արժանացնում մամլուքյան հասարակական-քաղաքական կյանքի իրողությունները⁷⁹:

Մամլուքյան պատմագրական ավանդույթում պայմանականորեն առանձնացվում են երկու «դպրոցներ»՝ «ասորիական» և «եգիպտական»⁸⁰: Նման տարանջատման համար հիմք են դարձել ասորիքյան ([Սիրտ իբն ալ-Ջաուզի], ալ-Յունիսի, ալ-Ջադարի, ալ-Բիրզալի, ալ-Ջահարի, ալ-Քուլթուբի, Իբն Քասիր և այլն) և եգիպտացի (Իբն Աբդ ալ-Ջահիր, Բայբարս ալ-Մանսուրի, Իբն ալ-Դավադարի, Իբն Դուկմակ, Իբն ալ-Ֆուրաթ, ալ-Մակրիզի, ալ-Այնի, Իբն Թադրի Բիրզի և այլն) հեղինակների երկերում պատմական գիտելիքի շարադրման նախ և առաջ ձևաբովանդակային նշմարելի տարբերությունները: Օրինակ, ասորիքյան պատմիչները, ովքեր գերազանցապես կրոնական դասի ներկայացուցիչներ (բացառությամբ, թերևս, Համայի Այյուբյան կառավարիչ Աբու ալ-Ֆիդայի)՝ կրոնագետներ և հադիսագետներ (muḥaddith) էին, իրենց երկերում առանձնահատուկ ուշադրություն են հատկացրել այն հաղորդումների արձանագրմանը, որոնք ուղղակիորեն թեանուղղակիորեն կապ ունեին կրոնագիտությանը և կրոնախրավագիտությանը, այս ոլորտի մարզկանց (riḡāl) կյանքին ու կենսագրությանը՝ ընդհանուր առմամբ խուսափելով արտաքին քաղաքական իրադարձությունների մանրամասն ներկայացումից: Եգիպտացի ժամանակագիրները, ովքեր մեծամասամբ մամլուքյան ռազմաքաղաքական վեր-

⁷⁹ Տե՛ս K. Hirschler, "The 'Pharaoh' Anecdote in Pre-Modern Arabic Historiography", *JASIS*, vol. 10, 2010, p. 71, ինչպես նաև նույնի՝ "Islam: The Arabic and Persian traditions, eleventh-fifteenth centuries", in *Oxford history of historical writing*, vol. 2, 400-1400, ed. by S. Foot and C. Robinson, Oxford University Press, Oxford, 2012, p. 277:

⁸⁰ D. Little, *An introduction to Mamlūk historiography: an analysis of Arabic annalistic and biographical sources for the reign of al-Malik an-Nāṣir Muḥammad ibn Qalā'ūn (Freiburger Islamstudien, Bd. II.)*, Franz Steiner Verlag, Wiesbaden, 1970, p. 46, 95.

նախափի ներկայացուցիչներ էին, ընդհանրապես, հարկ են համարել զրի առնել այն իրադարձությունները, որոնք ուղիղ աղբյուրներ ունենին Մուլթանուլթյան ներքաղաքական կյանքին, մամուլային կենտրոնական իշխանությունները, արտաքին քաղաքական հարաբերություններին⁸¹: «Ընդարձակ ձևակերպմամբ՝ մամուլային պատմագրության եգիպտական նյութը բաղաձայն պատմությունների ավանդույթ է, ասորիյանը՝ ինտելեկտուալ պատմությունների», - մի առիթով գրում է Դ. Իեյզմանը⁸²: Մյուս կողմից, գիտական համագործակցության և պատմական գիտելիքի սերնդափոխության տեսանկյունից «ղպրոց» կոչվելու ավելի մեծ նախադրյալներ ունի ասորիքյան պատմագրական ավանդույթը: Օրինակ, հայտնի է, որ ալ-Յունիսին և ալ-Ջազարին փոխանակել են իրենց սեփականությունները, խմբագրել են մեկը մյուսի երկերը: Ալ-Ջազարին իր հերթին մասնագիտական սերտ կապեր է ունեցել ալ-Յունիսիի աշակերտ ալ-Բիրզալիի հետ, ում աշակերտել է ալ-Ջահաբին: Դրան հակառակ, եգիպտացի պատմագիրները մեծամասամբ միմյանցից անկախ հեղինակներ են⁸³:

Մամուլային տիրապետության սկզբնական շրջանում Այյուբյան մատենագիրները շարունակեցին զրի առնել Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունները՝ շատ հաճախ չթաքցնելով իրենց ընդգծված անհանդուրժողական վերաբերմունքն իշխանությունները զավթած մամուլների կառավարող վերնախավի նկատմամբ: Խոսքը մասնավորապես Աբու Շամայի (մահ. 1268 թ.) մասին է: Ղուբանին, դուբանյան ընթերցումներին, մեկնություններին, հազիսներին (իսլամի մարգարե Մուհամմադի վերաբերյալ գրույցներ) նվիրված կրոնագիտական երկերի⁸⁴ հետ մեկտեղ Աբու Շաման նաև պատմագիտական

⁸¹ Տե՛ս Անթ, p. 95:

⁸² D.C. Reisman, "A Holograph MS of Ibn Qāḍī Shuhbah's "Dhayl'", MSR, vol. II, 1998, p. 24.

⁸³ Մամուլային պատմագրության մեջ երկու զպրոցների տարանջատման, որանց փաստական գոյության հարցին ամենամիմալոր անդրադարձը կատարել է Կի Գուոն: Տե՛ս Li Guo, "Mamluk historiographic studies: the state of the art", MSR, vol. I, 1997, pp. 29-43:

⁸⁴ K. Hirschler, *Medieval Arabic Historiography: Authors as actors*, Routledge, London and New York, 2006, pp. 44-62. Այս ուսումնասիրության հեղինակը երկու ժամանակակից հեղինակների՝ Աբու Շամայի *Kitāb al-Rawḍatayn* և Իբն Կասիլի *Mufarrīḡ al-kurūb* երկերի համեմատությամբ ֆենոլոգիան է ենթակում պատմական գիտելիքի գեներացման առանձնա-

արժեքավոր ժառանգություն է թողել: Նրա ամենահայտնի երկը՝ *Kitāb al-Rawḍatayn fī aḥbār al-dawlatayn al-Nūriyya wa-l-Ṣalāhiyya*-ն («Ձույզ պարտեզների զիրք՝ ալ-Նուրիյյա և ալ-Սալահիյյա հարստությունների մասին հաղորդումների») ⁸⁵, որը Նուբ ալ-Դինի և Սալահ ալ-Դինի կառավարման տարիների պատմությունն է, մեծամասամբ հիմնված է նախորդ սերնդի հեղինակների հաղորդումների վրա, որոնցից մի քանիսի (Իբն Աբի Տայյ, Իմադ ալ-Քաթիբ ալ-Իսֆահանի) երկերը մասամբ են մեզ հասել կամ առհասարակ կորսված են⁸⁶: Այս հանգամանքն, անշուշտ, բարձրացնում է դամասկոսցի մատենագրի թողած պատմագրական ժառանգության արժեքը: Դրան հակառակ, մամուլային տիրապետության մի քանի տարիները, որ նույնպես ներառված են երկում, չափազանց հպանցիկ են ներկայացված: Աբու Շամայից մեզ են հասել ևս երկու երկեր. մեկը՝ *ʿUyūn al-Rawḍatayn*-ն է («Ձույզ պարտեզների աղբյուրներ») ⁸⁷, որը վերոնկարագրյալ երկի համառոտագրությունն է, մյուսը՝ *Al-Dayl ʿalā al-Rawḍatayn* («Ձույզ պարտեզների շարունակություն») վերնագրով ⁸⁸, զբված է որպես նույն երկի «Շարունակություն», բայց ավելի շատ ինքնուրույն դործ է, որում շեշտը դրված է հատկապես Դամասկոսի պատմության և նրա ականավոր մարդկանց կենսագրությունների ներկայացման վրա:

հատկություններ և սերտ կապը նրա ստեղծողի կյանքի և գործունեության սոցիալական, մշակութային-ինտելեկտուալ և բաղաձայն միջավայրի հետ: Տե՛ս նաև Եռյնի՝ *Social contexts of Medieval Arabic historical writing: Court scholars versus ideal / withdrawn scholars – Ibn Wāṣil and Abū Šāma, in Egypt and Syria in the Fatimid, Ayyubid and Mamluk Eras IV*, ed. by U. Vermeulen and J. Van Steenberghe, Leuven, 2005, pp. 311-331: Աբու Շամայի կյանքին և մատենագրական ժառանգությանը նվիրված առանձին աշխատություն կա: Տե՛ս *Ibrāhīm al-Zaybaq, Abū Šāma, muʿarriḡ Dimašq fī ʿaṣr al-Ayyūbiyya (599-665 h. / 1203-1267 m.)*, Muʿassasat al-Risāla, Bayrūt, 2010:

⁸⁵ *Abū Šāma, Kitāb al-Rawḍatayn fī aḥbār al-dawlatayn al-Nūriyya wa-l-Ṣalāhiyya*, 5 ք., bi-taḥqīq Ibrāhīm Šams al-Dīn, Dār al-Kutub al-ʿIlmiyya, Bayrūt, 2002.

⁸⁶ **Ahmad H.**, "Abū Shāma", in *EF*, vol. 1 (A-B), E.J. Brill, Leiden, 1986, p. 150; **K. Hirschler**, *Medieval Arabic Historiography*, p. 12.

⁸⁷ *Abū Šāma, ʿUyūn al-Rawḍatayn fī aḥbār al-dawlatayn al-Nūriyya wa-l-Ṣalāhiyya*, 2 ք., bi-taḥqīq Aḥmad al-Baysūmī, Dimašq, 1991-1992.

⁸⁸ **Յույնի՝ Tarāḡim riḡāl al-qarnayn al-sādīs wa-l-sābīʿ al-maʿrūf bi-l-Dayl ʿalā al-Rawḍatayn**, bi-taḥqīq Muḥammad al-Kawṭarī, Dār al-ḡīl, Bayrūt, 1974:

Այյուբյան պատմագրության մյուս ահանավոր դեմքը՝ Իբն Վասիլն է (մահ. 1298 թ.): Երկար տարիներ Ասորիքի (Քարաք, Համա, Դամասկոս) մի շարք տիրակալների ծառայելով նա 1244 թ. տեղափոխվել է Եգիպտոս և ծառայության անցել սուլթան ալ-Մալիք ալ-Սալիհի (կառ. 1240-1249 թթ.) մոտ, ում նվիրել է ժամանակագրությունը Al-Tārīḥ al-ṣāliḥī («Սալիհյան պատմություն») վերնագրով⁸⁹:

Այյուբյան դինաստիայի անկումից հետո նա, պետական պաշտոնավարման երկարամյա փորձառություն և հմտություններ ունենալով, հաջողությամբ ինտեգրվեց նաև մամլուբյան կառավարող վերնախավի միջավայր⁹⁰: 1260 թվականին նա կադիի (դատավորի) պաշտոն է ստացել, իսկ 1260-1261 թթ., արդեն որպես մամլուբյան սուլթան ալ-Ջահիր Բայբարսի դեսպան, ուղարկվեց Սիցիլիայի արքա Մանֆրեդի (1258-1266 թթ.) հետ բանակցելու: Նրա հիմնական երկը՝ Mufarriḡ al-kurūb fī aḥbār banī Ayyūb-ը («Այյուբյանների վերաբերյալ հաղորդումների ազնապներ վանող [գիրք]»), նույնպես Այյուբյան դինաստիայի իդեալականացված պատմություն է⁹¹: Այս դեսպանագնա-

⁸⁹ Ibn Wāṣil, Kitāb al-Tārīḥ al-ṣāliḥī, bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, 2 ǧ., al-Makāba al-‘Aṣriyya, Ṣaydā-Bayrūt, 2010.

⁹⁰ Իբն Վասիլի կյանքի, գործունեության և պատմագրական ժառանգության մասին տե՛ս Կ. Հիլլենբրանդի վերջված գիրքն ու հոդվածը, ինչպես նաև հոդվածը՝ Ibn Wasil: An Ayyubid Perspective on Frankish Lordships and Crusades, in: Medieval Muslim Historians and the Franks in the Levant, ed. by Alex Mallett, Brill, Leiden-Boston, 2014, pp. 136-160, ինչպես նաև D.S. Richards, “Ibn Wasil, Historian of the Ayyubids”, in Ayyubid Jerusalem: The Holy City in Context 1187-1250, ed. by R. Hillenbrand and S. Auld, Altajir Trust, London, 2009, pp. 456-459 և Ibn Wāṣil, Al-Tārīḥ al-ṣāliḥī, ǧ. 5-38:

⁹¹ Ibn Wāṣil, Mufarriḡ al-kurūb fī aḥbār banī Ayyūb, 5 ǧ., bi-taḥqīq Ḥamāl al-Dīn al-Šayyāl, Ḥusayn Muḥammad Rabī, Sa‘īd ‘Abd al-Fattāḥ ‘Āšūr, al-Qāhira, 1953-1977: Երկի վերջին 1248-1261 րր. պարփակող քերես կարևորագույն մասը երկար ժամանակ է ինչ ձևագրում էր: Այդ հատորը Քաղվաթի խմբագրությամբ վերջապես լույս տեսավ 2004 թ. (Ibn Wāṣil, Mufarriḡ al-kurūb, ǧ. 6, bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, al-Maktaba al-‘Aṣriyya, Ṣaydā-Bayrūt, 2004): 2010 թ. բնագրի առավել հետադարձ մի հրատարակություն նախաձեռնեց Մոսամմադ Ռահիմը՝ բնության առնելով այդ մասն ընդգրկող բոլոր հայտնի ձևագրերը: Տե՛ս Mohamed Rahim, Die Chronik des Ḥamāl ad-Dīn Muḥammad ibn Wāṣil, Mufarriḡ al-Kurūb fī Aḥbār Banī Ayyūb, Kritische Edition des letzten Teils (646/1248-659/1261) mit Kommentar: Untergang der Ayyubiden und Beginn der Mamlukenherrschaft, Harrassowitz Verlag, Wiesbaden, 2010: Երկու հրատարակությունների գրախոսությունը տե՛ս K. Hirschler, “Mohamed Rahim, Die Chronik des ibn Wāṣil (review)”, OL, Band 107 / 4-5, 2012, S. 285-286:

ցումը յուրեք հետո նրա պատմագրական երկը շարունակել է աշակերտներից մեկը՝ Նուր ալ-Դին Ալի իբն Աբդ ալ-Ռահիմը՝ ավելի հայտնի Իբն ալ-Մուղայջիլի (մահ. 1302 թ.) անունով, ով եղել է Համայն Այյուբյան էմիր ալ-Մալիք ալ-Մուզաֆֆար Մահմուդի (կառ. 1284-1299 թթ.) արքունի գրագիրը: Նա ղեկավարի շարագրանքը հասցրել է մինչև 1296 թ.: շատ իրադարձություններ՝ այդ թվում Կիլիկիո հայոց թագավորության դեմ ուղղված արշավանքների նկարագրություններ, ներկայացնելով ահանատեսի աչքերով⁹²:

Այյուբյան պատմիչ է նաև ղպտի քրիստոնյա ալ-Մահմուդ Զիրզիս իբն ալ-Ամիրը (մահ. 1273 թ.), ով kātib al-ḡayṣ-ի («բանակի գրագիր») բարձր պաշտոն էր զբաղեցնում Դամասկոսում: Ժամանակակիցներից իբն ալ-Վասիտիի վկայությամբ՝ նա մեղադրվել է մոնղոլների օգտին լրտեսելու մեջ, ինչի համար սուլթան Բայբարսի հրամանով դատապարտվել է տասնմեկամյա բանտարկության⁹³: Ազատ արձակվելուց հետո կյանքի մնացյալ մասն անցկացրել է Դամասկոսում՝ գրելով իր պատմագրական երկը՝ Al-Maḡmū‘ al-mubārak-ը («Մեհմուդ ժողովածու»)՝ որ համընդհանուր պատմություն է՝ հասցված մինչև 1260 թ.⁹⁴:

⁹² Այս երկը նույնպես հրատարակվել է Քաղվաթի շահմուդի: Տե՛ս Ibn al-Muḡayzil, Dayl Mufarriḡ al-kurūb fī aḥbār Banī Ayyūb, bi-taḥqīq ‘Umar ‘Abd al-Salām Tadmūrī, al-Makāba al-‘Aṣriyya, Ṣaydā-Bayrūt, 2004: Հեղինակի և նրա երկի մասին տե՛ս Ա.Ն. Բ. Amitai-Preiss, Mongols, p. 4; L.S. Northrup, From slave to sultan: The career of al-Mansūr Qalāwūn and the consolidation of Mamluk rule in Egypt and Syria (678-689 A. H. / 1279-1290 A. D.), Franz Steiner Verlag, Stuttgart, 1998, p. 35, 44:

⁹³ Ibn al-Wāsiṭī, Radd ‘alā ahl al-ḡimma wa-man tabī‘ahum, bi-taḥqīq Turkī ibn Fahad Āl Sa‘ūd, al-Riyāḍ, 2010, ǧ. 76. Իբն ալ-Ամիրի բանտարկության հանգամանքների մասին այլ վկայություններ է կան: Տե՛ս R. Amitai-Preiss, Mongols, p. 154: Տե՛ս նաև S. Moawad, “Al-Makīn Jirjis ibn al-‘Amīd (the elder)”, in Christian-Muslim Relations. A Bibliographical History, Volume 4 (1200-1350), ed. by D. Thomas and A. Mallett, E.J. Brill, Leiden-Boston, 2012, pp. 566-571:

⁹⁴ Տե՛ս Ibn al-‘Amīd, Kitāb al-maḡmū‘ al-mubārak / “La Chronique Ayyoubides” d’al-Makīn ibn al-‘Amīd”, ed. Cl. Cahen, BEO, tome XV, 1955-1957, pp. 109-184, որ վերահրատարակվել է նաև որպես Aḥbār al-‘Ayyūbiyyīn, Maktabat al-ṭaqāfa al-dīniyya, Bār Sa‘ūd (առանց տարբերվել): Կ. Կահենի հրատարակած հատվածը նաև ֆրանսերեն թարգմանություն է ունեցել: Տե՛ս al-Makīn ibn al-‘Amīd, Chronique des Ayyoubides (602-658/1205-6-1259-60), traduction française annotée par Anne-Marie Edde et Françoise Micheau, Académie des inscriptions et belles-lettres, Paris, 1994:

⁹⁵ J. Den Heijer, “Coptic Historiography in the Fātimid, Ayyubid and Early Mamluk Periods”, Medieval Encounters, vol. 2, Issue 1, 1996, pp. 88-95.

Այյուբյանների և մամլուքների իշխանության սահմանագծին ստեղծագործած Հեղինակներից է Իբն Խալլիֆանը (մահ. 1282 թ.), ում *Wafāyat al-a'yān wa-anbā' abnā' al-zamān* («Երեկիների մահախոսականներ և հաղորդումներ ժամանակի [ականավոր] մարդկանց մասին») մեծարժեք կենսագրական բառարանը պարունակում է ականավոր մուսուլմանների՝ այդ թվում իր ժամանակակիցների մասին ավելի քան 3500 կենսագրական հոդվածներ⁹⁶։ Իբն Խալլիֆանը *qāḍī-ī* («դատավոր») օգնականի և ապա *qāḍī-ī* բարձր պաշտոններ է զբաղեցրել Կահիրեում և Դամասկոսում, իսկ 1261 թ. սուլթան Բայբարսի կարգադրությամբ նշանակվել է Դամասկոսի դիւխավոր *qāḍī* (*qāḍī al-quḍāt*): Նույն պաշտոնում Իբն Խալլիֆանը վերանշանակվել է նաև սուլթան Կալավունի (1279-1290 թթ.) կողմից⁹⁷։

Մամլուքները, սակայն, շուտով «գտան» իրենց պատմիչներին, ովքեր լոյալ գերքորոշում որդեգրելով իրենց նկատմամբ, բարենպաստ գուլյներով և լեգիտիմության գիրքերից կներկայացնեին Սուլթանության պատմությունը⁹⁸։ Խոսքը Հատկապես այսպես կոչված պալատական կենսագրիչների մասին է, ովքեր բարձր պաշտոններ էին զբաղեցնում արքունիքում։ Բահրի մամլուքյան վաղ շրջանի բյուրոկրատ պատմիչներից Հիշատակություն են արժանի երեքը՝ Իզզ ալ-Դին իբն Շադդադը (մահ. 1285 թ.), Իբն Աբդ ալ-Չահիրը (մահ. 1292 թ.) և Շաֆի իբն Ալին (մահ. 1330 թ.)։ Իբն Աբդ ալ-Չահիրին և

նրա մատենագրական ժառանգությանը ներքևում առանձին կանդրադառնանք, իսկ մյուս երկուսի մասին այստեղ կհիտենք։

Իզզ ալ-Դին իբն Շադդադը ծնվել է Հալեպում։ Այյուբյան տիրակալ ալ-Մալիք ալ-Նասիրի օրոք (կառ. 1236-1260 թթ.) նա գրագիր-քարտուղարի պաշտոն է զբաղեցրել Հալեպում։ Ալ-Նասիրը, բարձր գնահատելով նրա դիվանագիտական հմտությունները, քանիցս ուղարկել է դեսպանագնացությունների։ 1259 թ., օրինակ, Հենց նրան է վստահվել Մայյաֆարիկին քաղաքը մոնղոլների պաշարումից ազատելու դիվանագիտական առաքելությունը, որը, սակայն, Հաջողություն չէր ունեցել։ Երբ մոնղոլները զբաղեցրին Հալեպը, Իբն Շադդադը ստիպված եղավ թողնել Ասորիքն ու փախչել Եգիպտոս⁹⁹։ Լավագույնս գնահատելով ստեղծված նոր քաղաքական իրադրությունը և գործի գնելով իր դիվանագիտական ունակությունները՝ նա կարճ ժամանակ անց արդեն սուլթան Բայբարսի արքունիքում էր։ Վերջինիս մահից հետո՝ ալ-Մալիք ալ-Մալի Բերքե խանի (1277-1279 թթ.) և ալ-Մանսուր Կալավունի օրոք, նա շարունակել է մեծ Հարզանք և Հեղինակություն վայելել արքունական շրջանակներում¹⁰⁰։ Իբն Շադդադը Հեղինակ է երկու մեծարժեք պատմագրական երկերի, որոնցից առաջինը՝ *Tārīḥ al-Malik al-Zāhir*-ը («Ալ-Մալիք ալ-Չահիրի պատմությունը») ¹⁰¹, սուլթան Բայբարսի կենսագրությունն է, և մասամբ է մեղ հասել։ Մյուս երկը՝ *Al-A'lāq al-Ḥaṭira fī ḍikr umarā' al-Šām wa-l-Ğazira*-ն ¹⁰² («Քան-

⁹⁶ *St' u Ibn Ḥallikān, Wafāyat al-a'yān wa-anbā' abnā' al-zamān*, 8 ց. bi-tahqīq Ihsān 'Abbās, Dār Šādīr, Bayrūt, 1977: *Wafāyat al-a'yān* երկի՝ հայոց պատմության հետ առնչվող պետական և հաղապահ գործիչների կենսագրություններից հատվածներ է թարգմանել Գ. Մարյանը։ *St' u Իբն Խալլիֆան, Վէֆայատ էլ-Աանան։ Անհետացած երեկիներ*, քաղ. Գ. Մարյան, Երևան, Գրապատկեր, 1935։

⁹⁷ Իբն Խալլիֆանի կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս նրա կենսագրական բառարանի Մ. Գ. դե Սլեյնի անգլերեն թարգմանության IV հատորի առաջաբանում։ *St' u Ibn Khallikān's Biographical Dictionary*, tr. by William MacGuckin de Slane, vol. 4, Oriental Translation Fund of Great Britain and Ireland, London, 1871, pp. v-xix, ինչպես նաև *J.W. Fück, "Ibn Khallikān"*, in *EF*, vol. 3, pp. 832-833։

⁹⁸ *D. Little, "Historiography"*, p. 420.

⁹⁹ *St' u D. Sourdel, "Ibn Shaddād"*, in *EF*, vol. 3, p. 933; *Muḥammad Sa'īd Riḍā, "Ibn Šaddād fī kitābīhi al-A'lāq al-Ḥaṭira"*, *MMA*, ց. 14, Bagdād, 1980, ց. 127-138։

¹⁰⁰ *D. Little, "Historiography"*, p. 422.

¹⁰¹ *'Izz al-Dīn ibn Šaddād, Tārīḥ al-Malik al-Zāhir*, bi-tahqīq Aḥmad Ḥuṭayṭ (Die Geschichte des Sultans Baibars von 'Izz ad-dīn Muḥammad b. 'Alī b. Ibrāhīm b. Šaddād (st. 684/1285), Franz Steiner Verlag, Wiesbaden, 1983)։

¹⁰² Տարբեր մատերի ֆուտուրալոգիաներից տե՛ս *Šarī Lūḍī, "Al-A'lāq al-Ḥaṭira li-'Izz al-Dīn ibn Šaddād"*, *al-Mašriq*, ց. 33, 1935, ց. 161-223; *Al-A'lāq al-Ḥaṭira fī ḍikr umarā' al-Šām wa-l-Ğazira* (Dominique Sourdel, La description d'Alep d'Ibn Šaddād), ց. 1.1, bi-tahqīq Dūmīnīk Sūrdīl, Dimašq, 1953; *'Izz al-Dīn ibn Šaddād, Al-A'lāq al-Ḥaṭira fī ḍikr umarā' al-Šām wa-l-Ğazira*, ց. 1.1, 1.2, 3.1, bi-tahqīq Yahyā Zakaryā 'Abbāra, Dimašq, 1978-1991; *Anne-Marie Eddé, "La description de la Syrie du Nord de 'Izz al-Dīn ibn Shaddād"*, *BEO*, t. 32-33, 1980-1981, pp. 265-402 և *Description de la Syrie du Nord*, trad. Anne-Marie Eddé-Terrasse, Institut français de Damas, 1984 (նախորդի ֆրանսերեն թարգմանությունը)։

կազին և մեծարժեք վկայություններ Ասորիի և ալ-Ջազիրայի իշխանների մասին»), պատմատեղագրական բացատրիկ կարեւորութեան աշխատութեան է, որում հեղինակը, ինչպես որ վերնագիրն է հուշում, ներկայացրել է Ասորիքի, Ջազիրայի և հարակից շրջանների մասին իր պատմաաշխարհագրական գիտելիքները¹⁰³: *Al-A'lāq al-ḥaṭīra-ի Ասորիքին նվիրված մասը հարուստ տեղեկություններ է պարունակում նաև Կիլիկյան Հայաստանի բերդերի և քաղաքների մասին, և նրա թարգմանությունը կարեւոր ներդրում կլինի հայագիտական ուսումնասիրություններում:*

*Բայբարս (Husn al-manāqib al-sirriyya al-muntaz'a min al-sīra al-Zāhiriyya – «Ալ-Ջահիրի կենսագրության լավագույն բաժնված արժանիքների մասին») և Կալավուն (Al-Faḍl al-Ma'tūr min sīrat al-sultān al-Malik al-Manṣūr – «Սուլթան ալ-Մալիկ ալ-Մանսուրի կյանքից պատմված արժանիքների մասին»)»¹⁰⁴ սուլթանների կենսագրությունների հեղինակ է նաև Շաֆի իբն Ալի (մահ. 1330 թ.), ով Մուհի ալ-Դին իբն Աբդ ալ-Ջահիրի քրոջ որդին էր և նույնպես կահիրյան դիվանատան գրագիրներից մեկը: Թեև Husn al-manāqib-ը հիմնված է ընդհանուր առմամբ իբն Աբդ ալ-Ջահիրի *Al-Rawḍ al-zāhir-ի վրա, այլ կերպ ասած՝ վերջինիս համառոտագրությունն է, Շաֆի իբն Ալի, այնուամենայնիվ, փորձել է տեղատեղ լրացումներ կատարել և կամ ուղղումներ մտցնել իբն Աբդ ալ-Ջահիրի հաղորդումներում*¹⁰⁵: *Կալավունի կենսագրությունը՝ Al-Faḍl al-Ma'tūr-ը, կարծես թե իբն Աբդ ալ-Ջահիրի համապատասխան երկից**

¹⁰³ Եկի մասին տե՛ս նաև **Z. Antrim**, "Making Syria Mamluk: Ibn Shaddād's *Al-A'lāq al-Khaṭīrah*", *MJR*, vol. 11.1, 2007, pp. 1-18; **И.Ю. Крачковский**, *Избранные сочинения*, т. 4 (*Арабская географическая литература*), Издательство Академии Наук СССР, Москва-Ленинград, 1957, стр. 369-372:

¹⁰⁴ **Ṣāfi' ibn 'Alī**, *Husn al-manāqib al-sirriyya al-muntaz'a min al-sīra al-zāhiriyya*, bi-taḥqīq 'Abd al-'Azīz ibn 'Abd Allāh al-Ḥuwayṭir, al-Riyāḍ, 1989; **նույնի՝** *Al-Faḍl al-Ma'tūr min sīrat al-sultān al-Malik al-Manṣūr*, bi-taḥqīq 'Umar 'Abd al-Salām Tadmurī, Al-Maktaba al-'Aṣriyya, Ṣaydā-Bayrūt, 1998.

¹⁰⁵ **A.-A. Khowaiter**, *Baibars the First*, pp. 175-179; **L.S. Northrup**, *From slave to sultan*, pp. 28-33.

*անկախ գործ է*¹⁰⁶: *Ըստ ալ-Սաֆադիի կենսագրական բառարանի՝ Շաֆի իբն Ալին հեղինակել է նաև սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրին նվիրված երկ (ընդ որում՝ մի քանի մասից բաղկացած)՝ Nazm al-ḡawāhir fi sīrat mawlānā al-sultān al-Malik al-Nāṣir («Մեր տեր սուլթան ալ-Մալիկ ալ-Նասիրի կյանքի ականաշար») վերնագրով*¹⁰⁷: *Ինչպես Գ. Վան դեն Բոշեն է գրում իր ատենախոսության մեջ, ինքն ու Ֆ. Բոդենը պարզել են, որ Ֆրանսիայի ազգային զրադարանի թիվ *Arabe 1705* ձեռագիրը պարփակում է հիշյալ վարքագրության մասերից մեկը, որն իրենք պատրաստվում են մոտ ապագայում հրատարակել*¹⁰⁸: *Շաֆի իբն Ալիի այս երկերը պարունակում են Կիլիկյան Հայաստանին վերաբերող մի շարք եզակի հաղորդումներ, որոնք իբն Աբդ ալ-Ջահիրի և մյուս պատմիչների մոտ չեն գտնվում:*

*Մամլուքյան ռազմավարչական համակարգի օգակներում հիշյալ երեք բյուրոկրատ պատմիչներից էլ ավելի բարձր պաշտոնեական դիրք ունեցող պատմագիրներ էին Բայբարս ալ-Մանսուրին (մահ. 1325 թ.), Աբու ալ-Ֆիդան (մահ. 1331 թ.) և Բաբթաշ ալ-Ֆախիրին (մահ. 1344 թ.)*¹⁰⁹: *Նրանցից երկրորդը, ինչպես վերևում արդեն նշել ենք, Համայի կառավարիչն էր և հետո նաև սուլթանը, իսկ մյուս երկուսը բարձր պաշտոններ են զբաղեցրել մամլուքյան բանակում ու դիվանատանը:*

Բայբարս ալ-Մանսուրին սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուր Կալավունի ստրուկներից էր (այստեղից էլ «ալ-Մանսուրի» անունը), ուժ

¹⁰⁶ Այս երկու հեղինակների երկերի միջև եղած կապին հանգամանորեն անդրադառնել է Լ. Նորթրափը: **St' u L.S. Northrup**, *From slave to sultan*, pp. 28-33; **St' u նաև D. Little**, "Historiography", p. 422:

¹⁰⁷ **Al-Ṣafādī**, *Kitāb al-wāfi bi-l-wafayāt*, ց. 16, bi-taḥqīq Aḥmad al-Arnā'ūt wa-Turkī Muṣṭafā, Dār iḥyā' al-turāt al-'arabī, Bayrūt, 2000, ց. 46.

¹⁰⁸ **St' u Van Den Bossche G.**, *The Past, Panegyric, and the Performance of Penmanship: Sultanate Biography and Social Practice in Late Medieval Egypt and Syria*, PhD dissertation, Ghent University, 2018, p. 17, 180-188: Առեմախոսությունը նետաճիբ մտեցումներ է առաջարկում սուլթանական վարձագրությունների ձևաբովանդակային և բնութագրական հատկանիշների, ժամանակի բազմակի անցառածների և սոցիալական խողովակների վերաբերյալ նույն պարունակած ուղեծների վերաբերյալ: Աշխատանքում նույնպես կան վերջված Մուսի ալ-Դիմի իբն Աբդ ալ-Ջահիրի և Շաֆի իբն Ալիի գրած սուլթանական *sīra*-ները:

¹⁰⁹ **St' u Անդ**, p. 423:

վերջինս գնել էր Մոսուլից դեռ իր էմիրություն տարիներին: 1266 թ. Կալափունի գլխավորությունը նա մասնակցել է Ասորիքի և Կիլիկիայի արշավանքներին, Անտիոքի 1268 թ. պաշարմանը, Կիլիկյան Հայաստանի դեմ ուղղված մեկ այլ՝ 1275 թվականի արշավանքին: 1286 թ. Բայբարս ալ-Մանսուրին նշանակվել է Քարաք բերդամրոցի կառավարիչ: 1292 թ. նա մասնակցել է Հոռոմկայի դեմ ուղղված մամլուքյան արշավանքին, 1305/1306 թ. Կիլիկիայի Հայոց թագավորության դեմ ուղղված մեկ այլ արշավանքի: Սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրի օրոք Բայբարս ալ-Մանսուրին շնորհվել է մամլուքյան բանակի Հազարապետի կոչում (amīr alf), մի կարճ ժամանակ էլ զբաղեցրել է նաև «դավադար»-ի (dawādār՝ բառացի՝ «սուլթանական») քանաֆանանը պահող») պաշտոնը: Իր բարձրագույն վարչական դիրքին Բայբարս ալ-Մանսուրին հասել է 1311 թ., երբ նշանակվել է Եգիպտոսի «փոխարխա» (nā'ib al-saltāna), ով ստորադաս էր միայն սուլթանին: Մեկ տարի անց, սակայն, ազատվել է զբաղեցրած պաշտոնից և շուրջ հինգ տարի անցկացրել բանտում¹¹⁰:

Բայբարս ալ-Մանսուրին երկու պատմազրական երկերի հեղինակ է՝ Zubdat al-fikra fi tāriḥ al-ḥiğra («Ընտրված մտեր հիշրայի պատմության մասին») և Al-Tuḥfa al-mulūkiyya fi al-dawla al-turkiyya («Արխայական պարզև բյուրական հարստության մասին»)՝¹¹¹: Սրանցից առաջինը համընդհանուր պատմություն է, որի մեղ հասած տարբերակում իրազարձությունների շարազրանքը հասնում է մինչև 1309 / 1310 թ.: Հատկապես արժեքավոր են երկի՝ մամլուքների պատմությանը նվիրված մասերը, որովհետև գրանցում են երկայացված են քաղաքական իրա-

¹¹⁰ Բայբարս ալ-Մանսուրի կյանքի և գործունեության մասին առանձին ուսումնասիրություն կա: St' u Wā'il 'Abd al-Ḥaqq al-Ḍamūr, Al-Amīr Baybars al-Manṣūrī, Nā'ib al-saltāna fi al-Karak wa-Miṣr wa-dawruhu fi-l-tāriḥ li-dawlat al-mamālīk al-Baḥrīyya, Maṭba'at al-safir, 'Ammān, 2009, ինչպես նաև E. Ashtor, "Baybars al-Manṣūrī", in *EP*, vol. 1, pp. 1127-1128; D. Little, "Historiography", pp. 4-5; L.S. Northrup, *From slave to sultan*, p. 38; D.S. Richards, "A Mamluk amir's Mamluk history: Baybars al-Manṣūrī and the Zubdat al-Fikra", *HIE*, pp. 37-38:

¹¹¹ St' u Baybars al-Manṣūrī, *Zubdat al-fikra fi tāriḥ al-ḥiğra*, bi-taḥqīq Dunāld Rītšārdz (D.S. Richards), Berlin-Bayrūt, 1998; Եսոյքի՝ *Kitāb al-Tuḥfa al-mulūkiyya fi al-dawla al-turkiyya*, bi-taḥqīq 'Abd al-Ḥamīd Ṣāliḥ Ḥamdān, al-Dār al-Miṣriyya al-Lubnāniyya, al-Qāhira, 1987:

զարձություններ, որոնց անձամբ ականատես ու մասնակից է եղել Բայբարս ալ-Մանսուրի ռազմաքաղաքական գործիչն ու պատմագիրը: Մյուսը՝ Al-Tuḥfa-ն, Մամլուքյան Հարստության Համառոտ պատմությունն է, որում իրազարձությունների շարազրանքն սկսվում է Այյուբյան դինաստիայի կործանումից՝ հասնելով մինչև 1311 / 1312 թվականը: Ճիշտ է, այս երկը մեծամասամբ հիմնված է նախորդի վրա, բայց դրա համառոտադրությունը էլ, քանզի պարունակում է այնպիսի Հաղորդումներ ու մանրամասներ, որ բացակայում են Zubda-ում¹¹²: Բայբարս ալ-Մանսուրիի երկերը Հայ-մամլուքյան հակոտնյա Հարբերությունների վերաբերյալ արժեքավոր Հաղորդումներ են պարունակում, որոնց մեծ մասն իրազարձությունների անմիջական մասնակցի և ականատեսի վկայություններ են¹¹³:

Բայբարս ալ-Մանսուրիի գրչին է վերադրվում նաև Muḥtār al-aḥbār¹¹⁴ վերնագիրը կրող երկը, որի մասին տեսակետ կա, թե Zubda-ի՝ մամլուքների պատմությանը նվիրված մասի Համառոտ վերաշարադրանքն է՝ չնայած բովանդակային բազմաթիվ տարբերություններին¹¹⁵:

Արու ալ-Ֆիդան, ով սերում էր Այյուբյան դինաստիայից (նա Համայի Այյուբյան էմիր ալ-Մուզաֆֆար Մահմուդ Բ-ի զարմիկն էր), նույնպես հաջողությամբ ինտեգրվեց նոր իշխանական շրջանակներ: Մամլուքներին մատուցած ծառայությունների և դրսևորած հավատարմության համար նա սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրի կողմից նշանակվել է Համայի կառավարիչ (1311 թ.) և հետո նաև անդամ արժանացել սուլթան (1321 թ.) տիտղոսի: Արու ալ-Ֆիդան ակտիվ մասնակցություն է ունեցել եգիպտական և ասորիքյան գործերի՝ Փրանկների, Կիլիկյան Հայաստանի և մոնղոլների դեմ ուղղված արշավանքներին՝ զրանք իր պատմության մեջ՝ Al-Muḥtaṣar fi tāriḥ al-baṣar-ում («Մարդկության համառոտ պատմություն») ներկայացնելով ականատեսի

¹¹² D. Little, *An Introduction*, p. 6.

¹¹³ Al-Ḍamūr, Al-Amīr Baybars al-Manṣūrī, §. 142-150.

¹¹⁴ Baybars al-Manṣūrī, Muḥtār al-aḥbār, bi-taḥqīq 'Abd al-Ḥamīd Ṣāliḥ Ḥamdān, al-Dār al-Miṣriyya al-Lubnāniyya, al-Qāhira, 1993.

¹¹⁵ D.S. Richards, "A Mamluk amir's Mamluk history", p. 38.

աչքերով¹¹⁶: Ձնայած դրան, ինչպես արդի հետազոտողների ուսումնասիրություններն են ցույց տալիս, Սուլթանություն գործերին վերաբերող նրա հաղորդումների մի մասը հիմնված են ժամանակակից պատմիչների՝ ի մասնավորի Բայբարս ալ-Մանսուրիի Zubda-ի և Իբն Վասիլի շարահարող Իբն ալ-Մուղայզիլի վկայությունների վրա¹¹⁷: Ինչպես արդեն վերևում առիթ ենք ունեցել նշելու, Աբու ալ-Ֆիդայի այս երկի համառոտագրություն-շարունակություն է գրել Իբն ալ-Վարգին (մահ. 1349 թ.) *Tatimmat al-Muhtasar fi tāriḥ al-bašar* («Մարդկության նամատտ պատմության շարունակություն») վերնագրով: Նա ընդամենը տասնութ տարի է ավելացրել իրադարձությունների շարադրանքին¹¹⁸:

Աբու ալ-Ֆիդայից մեզ է հասել նաև *Taqwīm al-buldān* («Երկրների տեղագրություն») վերնագրով աշխարհագրական երկ, որում Ասորիքի, Պաղեստինի և Հարակից շրջանների մասին բառահոգվածները մեծամասամբ հիմնված են հեղինակի անձնական դիտարկումների վրա¹¹⁹:

Բազր ալ-Դին Բաբթաշ ալ-Ֆախրիին սուլթան ալ-Մալիք ալ-Նասիրի օրոք գրադեցրել է *naqīb al-ḡuyūš*-ի կամ այսպես սուսած՝ գլխավոր ռազմական համհարդի ազգեցիկ պաշտոնը¹²⁰: Կենսագրական բառարաններում և պատմական երկերում (ալ-Շուջլաֆ, ալ-Մաֆադի,

ալ-Մակրիզի, Իբն Հաշար ալ-Ասկալանի)¹²¹ Բաբթաշի մասին պահպանված խիստ սուղ կենսագրական տեղեկություններից հայտնի է, որ ռազմական այր լինելուց զատ՝ նա նաև մուհադդիս (հաղթագետ) է եղել: Մինչդեռ ժամանակակիցները ոչինչ չեն հաղորդում նրա ժամանակագրության մասին, որը մեզ է հասել երկու ձեռագրով: Ձեռագրերից մեկը գտնվում է Բեռլինի պետական գրադարանի արաբական հավաքածուում՝ 9835 համարի ներքո: Այն խմբագրվել և պատմաբանների տեղանին է դրվել Ումար Աբդ ալ-Սալամ Թադմուրիի կողմից 2010 թ.¹²²: Բավարիայի ազգային գրադարանում *Cod.arab 37* համարի ներքո գտնվող մեկ ուրիշ ձեռագիր բազմապատ է երկու մասից: Առաջին մասն Անանուն հեղինակի գրչին պատկանող մի ժամանակագրություն է, որը հրատարակվել է 1919 թվականին Ղվեզ արևելագետ Կառլ Վիլհելմ Ջետտերշտայնի կողմից¹²³: Ձեռագրի երկրորդ մասը Բաբթաշ ալ-Ֆախրիին վերագրվող ժամանակագրությունն է, որից խմբագիրը լրացրել է բեռլինյան ձեռագրում եղած բացատները և կորած էջերը: Հատկանշական է, որ Թադմուրիի կարծիքով մյուսինսնյան ձեռագրում պահպանված և Ջետտերշտայնի կողմից հրատարակված բնագիրը նույնպես ամենայն հավանականությամբ պատկանում է Բաբթաշ ալ-Ֆախրիի գրչին:

Եգիպտացի անանուն հեղինակի վերոբերյալ տարեգրությունն ընդգրկում է 1291-1340 թթ. իրադարձությունները: Մամլուքյան պատմագրության ուսումնասիրողների շրջանում այս սկզբնաղբյուրը հայտնի է հրատարակչի անունով՝ «Ջետտերշտայնի ժամանակագրություն»: Երկում առկա ինքնակենսագրական բնույթի ակնարկումներից պարզ է դառնում, որ ժամանակագրության հեղինակը մամլուքյան

¹¹⁶ Հեղինակն իր պատմությունն սկսում է մարդկության նախահայր Ադամից՝ հասցնելով մինչև 1329 թ.: *St' u Abū al-Fidā', Kitāb al-Muhtasar fi aḥbār al-bašar*, 4 ց., al-Maṭba'a al-Husayniyya al-Miṣriyya, al-Qāhira, 1907: Այս աշխատանքը գրելիս օգտագործել ենք մի արդի հրատարակություն, որը վերևում արդեն Բաբթաշի անվամբ ծանոթագրել ենք: *St' u Abū al-Fidā', in EF, vol. 1, pp. 118-119*:

¹¹⁷ L.S. Northrup, *From slave to sultan*, p. 45.

¹¹⁸ *St' u D. Little, An Introduction*, pp. 66-67: Հմտ. H.A.R. Gibb, "Abu l-Fidā'", p. 119:

¹¹⁹ *Abū al-Fidā', Taqwīm al-buldān* (Géographie d'Aboulféda, ed. M. Reinaud et W. Mac Guckin de Slane, Paris, 1840): И.Ю. Крачковский, *Избранные сочинения*, т. 4, стр. 386-394.

¹²⁰ Ըստ ալ-Կալիզալանիի՝ այս պաշտոնը գրադեցնող անձի պատականությունն էր արժանիք հրավիրված էմիրներին ուղեկցել սուլթանի մոտ, հսկել սուլթանին պաշտոնական արարողությունների և արշավանքների ժամանակ, կալանի դատապարտված բարձրաստիճան պաշտոնյաներին տեղափոխել քանոն և կալանավայրից դատարան, մահվան դատապարտվածներին՝ պատժի իրականացման վայր, բանակին իրազեկել շերքի կամ արշավանքի պատրաստվելու մասին: *St' u D. Ayalon, "Studies on the Structure of the Mamluk Army- III (Holders of Offices Connected with the Army)", BSQAS, vol. 16, 1954, p. 64*:

¹²¹ *Šams al-Dīn al-Šuḡgā'ī, Tārīḥ al-Malik al-Nāṣir Muḥammad ibn Qalāwūn al-Šāliḥ wa-awlādihī* (Die Chronik aš-Šuḡā'īs, hrsg. Barbara Schäfer, Franz Steiner Verlag, Wiesbaden, 1977), §. 276; *Al-Safadī, A'yān al-'ašr wa-a'wān al-našr*, ց. 1, Dār al-Fikr, Dimašq, 1998, §. 699; *Al-Maqrīzī, Al-Sulūk*, ց. 2.3, §. 274; *Ibn Haḡar, Al-Durar al-kāmina*, ց. 1, §. 482.

¹²² *Badr al-Dīn Bektāš al-Fāḡirī, Tārīḥ al-Fāḡirī, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmurī, Al-Maktaba al-'Ašriyya, Šaydā-Bayrūt, 2008*.

¹²³ *K.V. Zetterstéen, Beiträge zur Geschichte der Mamlukensultane in den Jahren 690-741 der Hira nach arabischen Handschriften*, E.J. Brill, Leiden, 1919 (Նետայլու պայմանականորեն կանվանեմք *al-Mu'allif al-Maḡhūl*, այն է՝ *Անանուն հեղինակ*):

բանակի ոչ այնքան բարձր դիրքի գինավորական է եղել, ով մասնակցություն է ունեցել, օրինակ, Աքրայի և Հայոց կաթողիկոսանիստ Հռոմկլայի 1292 թ. գրավմանը¹²⁴: Լիթթլի կարծիքով որոշակի կապ կա այս Հեղինակի և Իբն ալ-Դավադարիի միջև. բացառված չէ, որ երկու Հեղինակներն էլ օգտագործած լինեն միևնույն աղբյուրը¹²⁵:

Բահրի մամուլքյան շրջանի նշանավոր պատմիչներից է նաև Իբն ալ-Դավադարին (մահ. 1335 թ. հետո): Նա սերում էր թյուրքական ծագման բարձրաստիճան ուղղմական գործիչների ընտանիքից. նրա պապը Սարխաղի տերն էր, Հայրը՝ Ջամալ ալ-Դին ալ-Դավադարին, նույնպես պատասխանատու պաշտոններ է գրադեցրել ալ-Աշրաֆ Խալիլ և ալ-Մալիք ալ-Նասիր սուլթանների օրոք¹²⁶: Նա, հետևաբար, ուղղմական արիստոկրատիայի առաջին սերնդի այսպես կոչված *awlād al-nās* (այն է՝ «ժողովրդի (մամուլքների) որդիներ») կոչված դասի ներկայացուցիչ էր, ովքեր, ի տարբերություն իրենց Հայրերի՝ ի ծնն ազատ մուսուլմաններ լինելով՝ մամուլքներ չէին Համարվում և գործնականում զրկված էին ուղղմական գործով զբաղվելու հնարավորությունից, ուստի ստիպված էին Համարել մտավորական դասի շարքերը և եթե հասնում էին բարձր պաշտոնների, ապա գերազանցապես կրոնական և վարչական ոլորտներում¹²⁷:

Իբն ալ-Դավադարիի երկն ինը մասից բաղկացած Համբնդհանուր պատմություն է՝ *Kanz al-durar wa-ğāmi' al-ğurar*-ը («Մարգարիտների գանձարան և քանկագին իրերի պահոց»)՝¹²⁸ վերնազրով, որից հատկապես

¹²⁴ D. Little, *An Introduction*, p. 18.

¹²⁵ St'u Անդ, p. 19, 23-24:

¹²⁶ St'u B. Lewis, "Ibn al-Dawādārī", in *EF*, vol. 3, p. 744; D. Little, *An Introduction*, pp. 10-12, ինչպես նաև Անդի "Historiography", p. 424; U. Haarmann, *Quellenstudien zur frühen mamlukenzeit (Islamkundliche Untersuchungen, Band 1)*, Klaus Schwarz Verlag, Freiburg, 1970, S. 61-70:

¹²⁷ D. Ayalon, "Awlād al-nās", in *EF*, vol. 1, p. 765; N. Rabbat, "Representing the Mamluks", pp. 66-67. Հմմտ. A. Levanoni, *A turning point in mamluk history: The third reign of al-Nāṣir Muḥammad ibn Qalāwūn (1310-1341)*, E.J. Brill, Leiden, 1995, pp. 42-52.

¹²⁸ Ibn al-Dawādārī, *Kanz al-durar wa-ğāmi' al-ğurar*, 9 ք., al-Qāhira-Bayrūt, 1960-1994 (տարբեր խմբագրվել՝ Bernd Radke, Edward Badeen, Muḥammad al-Sa'īd Ġamāl al-Dīn, Gunhild Graf և Erika Glassen, Dorothea Krawulsky, Ṣalāh al-Dīn al-Munağğid, Sa'īd 'Abd al-Fattāh 'Āšūr, Ulrich Haarmann, Robert Roemer).

արժեքավոր են վերջին երկու մասերը, որ նվիրված են Բահրիների պատմությանը: Մամուլքների իշխանության վաղ պատմությունը շարադրելիս Իբն ալ-Դավադարին օգտվել է իրենից առաջ ապրած Հեղինակներից: Ինչևէ, իր ժամանակի շատ իրադարձություններ ներկայացնելիս նա օգտագործել է հոր և նրան ծանոթ ուղղմական գործիչների վկայությունները: Ավելին, իր երկին բացառիկություն հաղորդելու համար երբեմն միտումնաբար թաքցրել է իր իրական աղբյուրները՝ դրանց վկայությունները վերագրելով իր հորը¹²⁹: Այնուհանդերձ, հոր միջոցով նրան հասու են եղել ժամանակի մյուս ժամանակագիրների համար անհասանելի մի շարք փաստաթղթեր, որոնք նա ներառել է իր պատմության մեջ¹³⁰: Իբն ալ-Դավադարիի պատմության մյուս առանձնահատկությունն էլ այն է, որ այն իր ընդհանուր գծերով շեղվում է ժամանակի տարեգրությունների խիստ պատմական կազմավորված ոճից, քանզի համեմատված է հարուստ բանահյուսական նյութով, վավարձախոսություններով, բանաստեղծական մեջբերումներով¹³¹:

Այս Հեղինակների ժամանակակիցն է Կիրտայ ալ-Իզզի ալ-Խազինդարին, ում մասին կենսագրական տեղեկությունները նույնպես չափազանց սուղ են: Համենայն դեպս, նրա անունը հուշում է, որ եղել է մամուլք գանձապահ (ḡāzindār): Կիրտայի Tārīḡ al-nawādir mim mā ḡarā li-l-awā'il wa-l-awā'hir («Ձվարձախոսությունների պատմություն՝ սկզբում և վերջում տեղի ունեցածի մասին») երկից պահպանվել են երկու մասեր, որոնցից առաջինն ընդգրկում է իսլամի պատմության առաջին դարերը, երկրորդ առավել արժեքավորը՝ 1229-1290 թթ. պատմությունը¹³²: Մասենազիրն օգտվել է այլ Հեղինակների պատմագրական երկերից՝ մասնավորապես Իբն ալ-Վահիդից, ում պատմությունը, ցավոք, մեղ չի հասել¹³³: Tārīḡ al-nawādir-ում շատ են ժամանակագրական անճշտությունները, կան անգամ հորինածին իրադարձությունների նկա-

¹²⁹ U. Haarmann, *Quellenstudien*, S. 110-111; D. Little, "Historiography", p. 425.

¹³⁰ L.S. Northrup, *From slave to sultan*, p. 48; D. Little, *An Introduction*, p. 11.

¹³¹ St'u Անդի "Historiography", p. 425:

¹³² Qirtāy al-Izzī al-Ḥazīndārī, *Tārīḡ mağmū' al-nawādir mim mā ḡarā li-l-awā'il wa-l-awā'hir, bi-taḡāqīq Ḥūst Hayn wa-Muḥammad al-Ḥuḡayrī*, Bayrūt, 2005 (Berlin, Klaus Schwarz Verlag, 2005).

¹³³ Cl. Cahen, "La chronique de Qirtāy et les Francs de Syrie", *JA*, 1937, pp. 140-145.

բազրություններ, ինչպիսին է, օրինակ, սուլթան Բայբարսի կողմից Անգլիա դեսպանութիւն ուղարկելու մասին անհեթեթ հազորգումը: Այս հանդամանքը ստիպում է «սառն աչով նայել երկում առկա մյուս բացառիկ տեղեկություններին, որ տալիս է ճեղիմակը»¹³⁴: Սա չի նշանակում, որ պետք է ամբողջ երկը կասկածելի համարել և դեն նետել, այլ անհրաժեշտ է այն զգուշութեամբ օգտագործել¹³⁵: Երկը նաև որոշ ուշազրպ մանրամասներ է պարունակում այլ աղբյուրներից հայտնի իրադարձութիւնների վերաբերյալ:

Մամլուքյան եգիպտոսի և Ասորիքի պատմութեան ուսումնասիրութեան կարեւորագույն աղբյուրներից է Շիհար ալ-Դին Ահմադ իբն Աբդ ալ-Վահհաբ ալ-Նուվայրիի (մահ. 1332 թ.) հսկայածավալ հանրազիտարանային աշխատութիւնը՝ *Nihāyat al-arab fi funūn al-adab*-ը («Գրագրության համար խիստ ցանկալի գիտությունների մասին»)¹³⁶: Արքունական դրագրի որդի լինելով՝ ալ-Նուվայրիին ալ-Մալիք ալ-Նասիրի օրոք ռազմական և վարչական բարձր պաշտոններ (*sāhib diwān al-hāss*՝ սուլթանական ունեցվածքի վերատեսուչ, *sāhib diwān al-insā*՝ դիվանապետ, գլխավոր գրագիր, *nāzir al-ḡuyūṣ*՝ բանակի [ֆինանսական] վերատեսուչ և այլն) է զբաղեցրել ինչպես Կահիրեում, այնպես էլ Դամասկոսում, Տրիպոլիում և Սուլթանութեան այլ նահանգներում¹³⁷:

Պետական ծառայողի իր բուռն գործունեութեան մայրամուտին ալ-Նուվայրին սկսել է գրել իր *Nihāyat al-arab*-ը, որով իր առջև նպատակ է դրել հանրազումարի բերել այն հիմնարար հումանիտար դիտելիքները, որոնք անհրաժեշտ էին իր ժամանակի արքունական դրագրին և ընդհանրապես ինտելեկտուալին՝ *adīb*-ին: Հեղինակն իր

¹³⁴ R. Irwin, *The Image of the Byzantium and the Frank in Arab Popular Literature of the late Middle Ages*, in: *Latins and Greeks in the Eastern Mediterranean after 1204*, ed. by B. Arbel, B. Hamilton and D. Jacoby, London, 1989, p. 240.

¹³⁵ L.S. Northrup, *From slave to sultan*, p. 47.

¹³⁶ Al-Nuwayrī, *Nihāyat al-arab fi funūn al-adab*, 33 ǧ., Dār al-Kutub al-‘Ilmiyya, Bayrūt, 2004.

¹³⁷ Տե՛ս M. Chapoutot-Remadi, “Al-Nuwayrī”, in *IEJ*, vol. 8, pp. 156-158; И.Ю. Крачковский, *Избранные сочинения*, т. 4, стр. 402-403; D. Little, *An Introduction*, p. 24, ինչպես նաև նույնի “Historiography”, p. 430; E. Muhanna, *The World in a Book: Al-Nuwayrī and the Islamic Encyclopedic Tradition*, Princeton University Press, Princeton and Oxford, 2018, pp. 13-15:

երկը բաժանել է Հինգ գլուխների (կոսմոգրաֆիա կամ տիեզերագրութիւն, մարդ, բուսական աշխարհ, կենդանական աշխարհ, պատմութիւն), որոնցից յուրաքանչյուրն ընդգրկում է *adāb*-ի մեկ գիտութիւն, որ նա *ḡann* է անվանում: Յուրաքանչյուր գիտութիւն իր հերթին ստորաբաժանվում է Հինգ մասերի (*qism*): Վերջին գիտութիւնը, որ զբաղեցնում է հանրազիտարանի կեսից ավելին, նվիրված է պատմութեանը: Սա, սակայն, ոչ թե համընդհանուր պատմութիւն է, այլ բաժանված է առանձին զինաստիանների նվիրված մասերի (օրինակ, անջուկներ, Զանգիներ, մոնղոլներ¹³⁸, մամլուքներ և այլն)¹³⁹: Մամլուքների պատմութեանը նվիրված հատվածում ալ-Նուվայրին օգտագործել է ինչպես եգիպտացի (Բայբարս ալ-Մանսուրի), այնպես էլ ասորիքցի հեղինակների՝ ալ-Յունիսիի, ալ-Ջադարիի, ալ-Բիրգալիի երկերը, որոնցից նա հաճախակի մեջբերումներ է կատարում: Չնայած դրան՝ ալ-Նուվայրին իր ժամանակի շատ իրադարձութիւններ էլ ներկայացնում է ահանատեսի աչքերով: Բացի այդ, նա, ինչպես որ Բայբարս ալ-Մանսուրին, բարձր պաշտոններ գրադեցնելով և չափազանց մոտ կանգնած լինելով մամլուքյան բարձրագույն կենտրոնական իշխանութեանը, հնարավորութիւն է ունեցել օգտվելու պաշտոնական փաստաթղթերից և արխիվային նյութերից¹⁴⁰:

Մամլուքյան մատենագրութեան մյուս ոչ պակաս հայտնի հանրազիտարանագիրը Շիհար ալ-Դին Ահմադ իբն Փադլ Ալլահ ալ-Ումարին (մահ. 1349 թ.) է: Նա ծնվել է Դամասկոսում՝ տեղի և հետո նաև Կահիրեի արքունի դպրատան գլխավոր գրագիր (*kātib al-sirr*) Յահյա իբն Փադլ Ալլահի ընտանիքում: 1329 թ., երբ Յահյան կանչ-

¹³⁸ R. Amitai-Preiss, “Al-Nuwayrī as a Historian of the Mongols”, *HIE*, pp. 23-36; L. Armstrong, “The Making of a Sufi: al-Nuwayrī’s Account of the Origin of Genghis Khan”, *MSR*, vol. 10.2, 2006, pp. 153-160.

¹³⁹ Մամլուքյան հանրազիտարանային գրականության և առանձնապես ալ-նուվայրիի *Nihāyat al-arab* աշխատության մասին հանգամանալից տե՛ս է. Մուհաննայի վերջ մեջբերված ուսումնասիրությունը:

¹⁴⁰ D. Little, *An Introduction*, p. 24, ինչպես նաև նույնի “Historiography”, p. 430; L.S. Northrup, *From slave to sultan*, p. 46. Տե՛ս նաև Sh. M. Elham, *Kitbugā und Lāǧīn: Studien zur Mamluken-Geschichte nach Baibars al-Mansūrī und al-Nuwayrī*, Klaus Schwarz, Freiburg, 1977:

վել է Եգիպտոս և նշանակվել Կահիրեի սուլթանական դիվանատան գլխավոր գրագիր, Շիհաբ ալ-Դինն ուղեկցել է հորը՝ նշանակվելով գլխավոր գրագրի տեղակալի պաշտոնում: Հոր՝ ծեր և հիվանդ լինելու պատճառով Շիհաբ ալ-Դինը փաստացիորեն ինքն է ղեկավարել դիվանատան աշխատանքը՝ մեծ դիրք և հարգանք ձեռք բերելով արքունիքում: Սակայն շատ չանցած՝ սուլթան ալ-Մալիք ալ-Նասիր Մուհամմադի հետ վիճելու և Ասորիքի փոխարքայի կողմից Դամասկոսի գլխավոր գրագրի պաշտոնում զպտիի նշանակումը հաստատելու նրա որոշումը վիճարկելու համար նա հեռացվել է զբաղեցրած պաշտոնից և բանտարկվել: 1337 թ. Յահյա իբն Ֆադլ Ալլահի մահից հետո նրա զբաղեցրած պաշտոնում նշանակվել է մյուս որդին՝ Ալա ալ-Դին Ալին: Ինչ վերաբերում է Շիհաբ ալ-Դինին, ապա վերջինս ազատ արձակվելուց հետո՝ մի կարճ ժամանակով, գլխավոր գրագրի պաշտոն է զբաղեցրել Դամասկոսում: Կյանքի վերջին տարիները նվիրել է իր երկու հիմնարար աշխատությունները գրելուն¹⁴¹: Ալ-Ումարիի առաջին երկը նրա բազմահատոր *Masālik al-absār fi mamālik al-amṣār* («Երկրների թագավորությունները քանաչելու ուղիներ») հանրագիտարանային աշխատությունն է¹⁴²: Այն, ինչպես որ *Nihāyat al-arab*-ը, ունի պատմությունը նվիրված գլուխ, որն ընդգրկում է հիջրայից մինչև 1342 / 1343 թ. պատմությունը: Երկը գերազանցապես հիմնված է նախորդ սերնդի և ժամանակակից այլ պատմիչների երկերի վրա: Հատկանշական է, որ անգամ իր ապրած ժամանակի պատմությունը շարագրելիս հեղինակը պարզապես պատճենել է, օրինակ, ալ-Ջահաբիի *Kitāb duwal al-Islām* երկից¹⁴³:

¹⁴¹ K.S. Salibi, "Ibn Faḍl Allāh al-'Umārī", in *IEJ*, vol. 3, p. 758; И.Ю. Крачковский, *Избранные сочинения*, т. 4, стр. 405-411; D.S. Richards, *Egypt and Syria in the Early Mamluk Period an extract from Ibn Faḍl Allāh al-'Umarī's Masālik al-absār fi Mamālik al-Amṣār*, Routledge, London and New York, 2017, pp. 1-8.

¹⁴² Al-'Umārī, *Masālik al-absār fi mamālik al-amṣār*, 27 ց., bi-taḥqīq Kāmil Salmān al-Ḍubūrī, Dār al-kutub al-'ilmīyya, Bayrūt, 2010. Գոնալդ Ռիչարդսը վերջերս բաղվածներ է բարգմանել այս երկից: Տե՛ս նախորդ ծանոթագրությունը:

¹⁴³ D. Little, *An Introduction*, p. 40, ինչպես նաև նույնի՝ "Historiography", p. 431.

Ալ-Ումարիի մյուս երկը՝ *Al-Ta'rif bi-l-muṣṭalah al-šarīf*-ը («Ծանոթացում բարձր տեղմիմարանության (ոճի) հետ») ¹⁴⁴, արքունական գրագրությանն ու քարտուղարությանը նվիրված բացառիկ կարևորություն ձեռնարկ է՝ իր ժանրի ու տեսակի մեջ առաջիններից մեկը մամլուքյան մատենագրության մեջ¹⁴⁵: Նրանում հեղինակը ներկայացնում է Սուլթանության վարչական կառուցվածքի և կառավարման առանձնահատկությունները, բացատրում է պաշտոնական գրագրության բնույթը, տալիս է սուլթանության տեղական կառավարիչների, ցեղապետների, դանազան կրոնախնամիկական խմբերի ղեկավարների, հարևան երկրների տիրակալների (այդ թվում՝ Հայոց արքաների) հետ պաշտոնական նամակագրության բանաձև-կաղապարների օրինակներ: Ալ-Ումարիի երկու երկերը լայնորեն օգտագործվել են Հաջորդ սերնդի հեղինակների՝ մասնավորապես ալ-Կալիլաշանդիի (մահ. 1418 թ.) կողմից, ում շնորհիվ արքունի քարտուղարության ձեռնարկներ գրելու ավանդույթը հասել է իր բարձրակետին: Ալ-Ումարիի գրագրության ձեռնարկի լրամշակում (*Tatqīf*) է հեղինակել Թակի ալ-Դին Աբդ ալ-Ռահման իբն Մուհամմադ ալ-Թայմին՝ ավելի շատ Հայաստանի Իրն

¹⁴⁴ Տե՛ս al-'Umārī, *Kitāb al-Ta'rif bi-l-muṣṭalah al-šarīf*, Maṭba'at al-'Āšima, al-Qāhira, 1894, ինչպես նաև երկի՝ Սամիր ալ-Դուրուբիի կատարած հետազոտությունը, որը ձեռքի տակ չեմք ունեցել: Տե՛ս Samīr Maḥmūd al-Durūbī, *A Critical Edition of and Study on Ibn Faḍl Allāh's Manual of Secretaryship "al-Ta'rif bi'l-Muṣṭalah al-Sharīf"*, Mu'tah University, Karak, 1992:

¹⁴⁵ Ընդունված է Մամլուքյան դարաշրջանի արևելի գրագրության ձեռնարկների ժանրի առաջին հեղինակ համարել Շիհաբ ալ-Դին Մամնուդ ալ-Հալաբիին (մահ. 1325 թ.): Նա 1317 թվականից մինչև իր մահը գլխավոր փարտուղարի (*kātib al-sirr*) պաշտոն է զբաղեցրել Գամասկոսի դիվանատանը: Ալ-Հալաբիի գլխավոր երկը *Husn al-tawassul ilā šinā'at al-tawassul* («Նամակագրության արվեստին լավագույնս տիրապետելու մասին») ձեռնարկն է (al-Maṭba'a al-Wahabiyya, al-Qāhira, 1880), որում, այնուամենայնիվ, ընտան ավելի շատ դրված է գրագրի հետադարձական ձևերի վրա, այլ ոչ թե գործնական ուսակությունների: Այնուամենայնիվ, երկի վերջին մասում ընդգրկված են մի քանի փաստաթղթեր կամ գուցե որանց սևագրություններ, ինչպես օրինակ Հայոց արևային ուղղված մի այսպես կոչված «Նեազանգուսթյան հորդոր» և մի «Նշանակման կարգադրություն» (*taqlīd li-mutamallik Sīs*), որոնք ուսումնասիրվել են մեր կողմից առանձին հոդվածով: Տե՛ս Գ. Գանիկյան, «Եգիպտոսի և Ասորիի սուլթանից Կիլիկիա Հայոց արևային ուղղված երկու վավերագիր»՝ ըստ Շիհաբ ալ-Դին ալ-Հալաբիի *Husn al-tawassul* երկի և նորահայտ սկզբնաղբյուրային փաստերի», 2021 (անտիպ): Ալ-Հալաբիի մասին տե՛ս A.F. Broadbridge, "Diplomatic conventions in the Mamluk Sultanate", *Annales Islamiques*, 41, 2007, p. 99:

նագիր ալ-Ջալլ (մահ. 1384 թ.)¹⁴⁶ անունով: Այն Կիլիկիայի Հայոց արքաների Հեռ նամակագրության կազմակերպչների վերաբերյալ որոշ նյութ է պարունակում, որը բացակայում է ալ-Ումարիի մոտ¹⁴⁷:

Չ՞ դարի արարագիր պատմիչներից Հիշատակության է արժանի նաև ազգությունը դպտի Իբն ալ-Ասալ Մուֆաղդալ իբն Աբի ալ-Ֆաղդալը: Ժամանակի կենսագրական բառարանները նրա մասին տեղեկություններ չեն հաղորդում: Հայտնի է միայն, որ նա իր երկը՝ *Al-Nahğ al-sadid wa-l-durr al-farid fimā ba'd tārīh ibn al-'Amīd*-ը («Ճիշտ ուղի և եզակի մարգարիտ՝ ի լուսն Իբն ալ-Ամիդի պատմության»)՝¹⁴⁸, ավարտին է հասցրել 1358 թ.: Ինչպես վերնագրից է երևում, Մուֆաղդալի պատմությունն ալ-Մաքին իբն ալ-Ամիդի երկի շարունակությունն է, որին հարևանցի անդրադարձել ենք վերևում: Ժամանակակից ուսում-

նասիրողին առաջին հայացքից կարող է թվալ, թե նա գործ ունի մի եզակի պատմության Հեռ, որը, դպտի ձեռքով գրված լինելով, արժեքավոր տեղեկություններ պիտի պարունակի ժամանակի անցքերի մասին՝ դրանք ներկայացնելով քրիստոնյայի աչքերով: Ցավոք, *Al-Nahğ al-sadid*-ը չի արդարացում այդ ակնկալները: Այն չնչին տեղեկություններ է հաղորդում անգամ Եգիպտոսի դպտիական համայնքի և դպտիական եկեղեցու մասին: Մուֆաղդալը գերադանցապես հիմնվել է մուսուլման հեղինակների երկերի վրա (Բայբարս ալ-Մանսուրի, ալ-Ջազարի, Իբն ալ-Դավադարի, ալ-Նուվայրի և այլն)՝ նույնությամբ արտադրելով անգամ այդ աղբյուրների տեքստերում առկա մուսուլմանական կրոնական բանաձևերը, կրկնելով նույնիսկ նրանցում առկա սխալները¹⁴⁹:

Բահրի մամլուքյան շրջանի պատմության ուսումնասիրության համար նշանակալի կարևորություն ունեն հալիլ իբն Այբակ ալ-Սաֆադիի (մահ. 1363 թ.)¹⁵⁰ կենսագրական բառարանները: Ինչպես

¹⁴⁶ *St' u Ibn Nāzīr al-Ġayṣ, Taṭqīf al-Ta'rif bi-l-muṣṭalah al-šarīf, bi-tahqīq Rūḍulf Fasālī, al-Ma'had al-Ilmī al-Faransī li-l-aṭār al-šarqīyya, al-Qāhira, 1987: Ալ-Ումարիի և Իբն Նագիր ալ-Ջալլի ձեռնարկների մասին տե՛ս նաև A.F. Broadbridge, Diplomatic conventions, pp. 100-104: Մամլուքյան պատմության բազմակողմանի ուսումնասիրության համար վավերագրական նյութի օգտագործման կարևորության մասին Եռաշալի հոդված ունի Ֆրեդերիկ Բոդենը, որը, բերես, արդեն լրացման կարիք ունի վերջին երկու տասնամյակների քննարկում գիտական շրջանառության մեջ դրված նորանայտ վավերագրական նյութի հաշվառմամբ: St' u F. Bauden, "Mamluk Era Documentary Studies: The State of the Art", *MSR*, vol. IX/1, 2005, pp. 15-60:*

¹⁴⁷ Ալ-Ումարիի, Իբն Նագիր ալ-Ջալլի և ալ-Կալիաշանդիի երկերում մամլուքյան սուլթանների և Կիլիկիա հայոց բազմաթիվների դիվանագիտական նամակագրությանը վերաբերող նյութն ուսումնասիրել ենք առանձին հոդվածով: St' u Գ. Գանիլեան, «Հայ-մամլուքյան դիվանագիտական նամակագրությունն քառ ալ-Ումարիի, Իբն Նագիր ալ-Ջալլի և ալ-Կալիաշանդիի ձեռնարկների», *Բազմալեզ սոցիոլոգիական հանդես*, Մուսր Ազգաբ, Վենետիկ, 2016, № 2, էջ 44-98:

¹⁴⁸ Երկում շարադրված է Եգիպտոսի և Ասորիի 1260-1341 թթ. պատմությունը: 1260-1317 թթ. իրադարձություններն քննարկող հատվածը հրատարակել և ֆրանսերեն է թարգմանել Է. Բլոշեն, մնացած մասը՝ Ս. Կորասնտամերը (գերմաներեն թարգմանությամբ): St' u *Mufaḍḍal ibn Abī al-Faḍā'il, Al-Nahğ al-sadid wa-durr al-farid fimā ba'd tārīh ibn al-'Amīd (Mufaḍḍal ibn Abī-Faza'il, Histoire des sultans mamlouks, Texte Arabe publié et traduit en Français par E. Blochet, Patrologia Orientalis (հետալյուս) PO, t. 12, 14, 20, Paris, 1919-1929; Ägypten und Syrien zwischen 1317 und 1341 in der Chronik des Mufaḍḍal b. Abī l-Faḍā'il von Samira Kortantamer, Klaus Verlag, Freiburg, 1973: Վերջևս լույս է տեսել երկի քննարկ նախադր երկու հրատարակությունները մեկտեղող հատարը: St' u *Ibn al-'Assāl Mufaḍḍal ibn Abī al-Faḍā'il, Al-Nahğ al-sadid wa-durr al-farid fimā ba'd tārīh ibn al-'Amīd, bi-tahqīq Muḥammad Kamāl al-Dīn 'Izz al-Dīn 'Alī al-Sayyid, ǧ. 1-2, Dimašq, Dār sa'd al-dīn, 2017:**

¹⁴⁹ St' u D. Little, *An Introduction*, pp. 32-38, ինչպես նաև նույնի "Historiography", p. 427; L.S. Northrup, *From slave to sultan*, p. 49; U. Haarmann, *Quellenstudien*, S. 107-113; St' u նաև S. Moawad, "Mufaḍḍal ibn Abī al-Faḍā'il", in *Christian-Muslim Relations. A Bibliographical History*, vol. 5, pp. 119-122; J. Den Heijer, "Coptic Historiography", pp. 89-95:

¹⁵⁰ Հիշյալ ալ-Սաֆադիին չպետք է շփոթել ալ-Հասան իբն Աբդ Ալլահ ալ-Սաֆադիի հետ (մահ. մոտ 1317 թ.), ով նույնպես մամլուքյան շրջանի պատմիչ էր, դիվանատան ծառայող: Նրա ժամանակագրական երկը՝ փոքրածավալ *Nuzhat al-mālik wa-l-mamlūk*-ը, Եգիպտոսի պատմությունն է մինչև 1316 թ.: Հեղինակի ու նրա այս երկի մասին ավելի մանրամասն տե՛ս Šakir Muṣṭafā, *Al-Tārīh al-'Arabī wa-l-mu'arriḥūn: Dirāsa fi taṭawwur 'ilm al-tārīh wa-ma'rīfat riḡālihi fi al-Islām*, ǧ. 3, Dār al-'ilm li-l-malāyīn, Bayrūt, 1990, ǧ. 210-211; D. Little, *An Introduction*, pp. 38-39 և հատկապես՝ *al-Šafadī, Nuzhat al-mālik wa-l-mamlūk fi muḥtaṣar sīrat man waliya Miṣr min al-mulūk, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, al-Maṭba'a al-'Aṣriyya, Bayrūt, 2003, ǧ. 7-16: Հասականշական է, որ այս ալ-Սաֆադիին նաև Aṭār al-uwwal fi tartīb al-duwal վերնագրից կողմ երկի հեղինակ է: Այն այսպես կոչված «արքայազների հայի-լինք» (*specula principum*) ժանրի աշխատությունն է՝ պետական արդյունավետ կառավարման ուղեցույց բարձրաստիճան իշխանավորների համար: St' u al-Ḥasan [i]bn 'Abd Allāh al-'Abbāsī al-Šafadī, *Aṭār al-uwwal fi tartīb al-duwal, bi-tahqīq 'Abd al-Raḥman 'Umayra, Dār al-ǧayl, Bayrūt, 1989: Aṭār al-uwwal*-ի հրատարակիչ Աբդ ալ-Իսահման Ումայրան այդ երկը ներկայացրել է որպես հեղինակի միակ աշխատություն: Նրա բացթողումը լրացրել է *Nuzhat al-mālik* երկի հրատարակիչ Ումար Աբդ ալ-Սալամ Փաղմուրի՝ հրատարակությունն օժտելով հեղինակի կյանքի գործունեության և մատենագրական ժառանգության մասին ներածական ակնարկով (տե՛ս վերևում նշված էջեր):*

որ Իբն ալ-Պաֆադարին, նա նույնպես մամլուք պաշտոնյայի որդի էր՝ awlād al-nās կոչված դասի ներկայացուցիչ: Նա գրագրի և դիվանատան ղլխավոր քարտուղարի (kātib al-širr) պաշտոններ է գրադեցրել նախ Հայրենի Սաֆադում, Հետո նաև Պամասկոսում, Կահիրեում և Հայեպում¹⁵¹:

Ալ-Սաֆադին Հայտնի է իր երկու երկերով՝ Al-Wāfi bi-l-wafāyāt («Լրացում մահախոսականներին») վերնագիրը կրող ստվարահատոր և A'yān al-'ašr wa-a'wān al-našr («Պարաշրջանի երևելիներ և հաղթանակի շատագույներ») շատ ավելի կարճառոտ կենսագրական բառարաններով¹⁵²: Առաջինն ընդգրկում է ականավոր մուսուլմանների մասին հազարավոր կենսագրություններ՝ սկսած Մուհամմադ մարգարեի ժամանակներից, իսկ երկրորդում ժողոված են սուսկ Հեղինակի ապրած ժամանակի մարդկանց շուրջ 1900 կենսագրություններ¹⁵³:

Դժվար է պատկերացնել մամլուքյան պատմությունն առանց ասորիքյան պատմիչների թողած պատմագրական ժառանգության: Եգիպտացի Հեղինակների պաշտոնական և կիսապաշտոնական տարեգրություններին այստեղ փոխարինում էին «իմտելեկաուալ պատմությունները», որոնցում, ինչպես վերևում ենք առիթ ունեցել նշելու, կենտրոնական տեղ է զբաղեցնում մուսուլմանական համայնքի հոգևոր-մշակութային և կրոնական կյանքը: Կարծում ենք՝ սխալ չի լինի ենթադրել, որ լինելով մեծամասամբ կրոնական գործիչներ (ulamā') և «ստեղծագործելով» մամլուքյան կենտրոնական իշխանությունից «վերահսկողությունից» հեռու՝ ասորիքյան պատմիչները գուցե և իրենց ժամանակի իրազարժությունների օրյեկտիվ և վստահելի աղբյուրներ համարվելու շատ ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան

եգիպտացի Հեղինակները: Ասորիքյան պատմագրության բնորոշ գծերից մեկը ժամանակաշրջանների և կենսագրական-մահախոսական բառահոգեվածների (wafāyāt) միահյուսումն է: Այս վերջինները հիմնականում ներկայացվում են յուրաքանչյուր տարվա կարևորագույն իրադարձությունների շարադրանքից հետո, բայց երբեմն էլ հենց բուն շարադրանքում, ինչպես որ ալ-Բիրգալիի (մահ. 1339 թ.) մոտ է, ում հարկ ենք համարում առաջինն անդրագառնալ:

Ալամ ալ-Դին ալ-Կասիմ իբն Մուհամմադ իբն Յուսուֆ ալ-Բիրգալին Բահրի մամլուքյան շրջանի արարագիր պատմագիր է և Հայտնի Հադիսագետ (muḥaddiṭ): Մնվել և կյանքի մեծ մասն անցկացրել է Պամասկոսում, թեև ուսանելու տարիներին բավականին շատ ճանապարհորդել է Միջագետքում, Արաբիայում, Եգիպտոսում: Հոր հետևողությամբ հիմնավոր կրոնական կրթություն է ստացել իր ժամանակի նշանավոր դիտնականների մոտ (օրինակ, աշակերտել է Հայտնի կրոնաիրավագետ Իբն Թալմիյային): Նրա աշակերտներից է եղել ալ-Ջահաբին, ում մասին դեռ կիսոսենք¹⁵⁴:

Ալ-Բիրգալիի ամենահայտնի երկը նրա Al-Muqtafi li-tārīḥ al-šayḥ Šihāb al-Dīn Abī Šāma-ն («Շեյխ Շիհաբ ալ-Դին Աբու Շամայի պատմության շարունակություն») է, որը, ինչպես վերնագրին է հուշում Աբու Շամայի Kitāb al-Rawḍatayn-ի շարունակությունն է: Այն ընդգրկում է ալ-Բիրգալիի ծննդյան թվականից՝ հիջրայի 665 թվականից (1267 թ.) մինչև իր մահվանը նախորդած տարվա՝ հիջրայի 738 թվականի (1338 թ.) իրադարձությունները: Al-Muqtafi-ում Դոնալդ Լիթթլի կարծիքով հեղինակը փորձել է հանրագումարի բերել Ասորիքի մասին իրենից առաջ ապրած և իր ժամանակակից մատենագիրների հաղորդումները¹⁵⁵: Համենայն դեպս, այն, որ հստակ կապ կա այս երկի և Հատ-

¹⁵¹ F. Rosenthal, "Al-Šafadī", in *EF*, vol. 8, p. 759; D. Little, "Al-Šafadī as a biographer of his contemporaries", in *Essays on Islamic Civilization Presented to Niyazi Berkes*, E.J. Brill, Leiden, 1976, pp. 190-211.

¹⁵² Al-Šafadī, Kitāb al-Wāfi bi-l-wafāyāt, 29 ց., bi-taḥqīq Aḥmad al-Arnā'ūt wa-Turkī Muṣṭafā, Dār iḥyā' al-turāṭ al-'arabī, Bayrūt, 2000; Գույնի՝ A'yān al-'ašr, 6 ց., Dimašq, 1998 (մի քանի խմբագրություն՝ Alī Abū Zayd և այլք: Վերևում հատարներից մեկն ազգեն օգտագործել եմ):

¹⁵³ Տե՛ս D. Little, *An Introduction*, pp. 102-106, ինչպես նաև Գույնի՝ "Historiography", pp. 431-432:

¹⁵⁴ Ալ-Բիրգալիի կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս F. Rosenthal, "Al-Birzālī", in *EF*, vol. 1, pp. 1238-1239; D. Little, *An Introduction*, p. 46; 'Abbās al-'Azzāwī, "Mu'arriḥ al-Šām aw al-Birzālī wa-Tārīḥuhu", *MMA*, ց. 20.11-12, Dimašq, 1945, ց. 519-527; L. Northrup, *From slave to sultan*, p. 41 և հատկապես՝ Al-Birzālī, *Al-Muqtafi li-tārīḥ al-šayḥ Šihāb al-Dīn Abī Šāma al-ma'rūf bi-tārīḥ al-Birzālī*, ց. 1.1, bi-taḥqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, al-Maṭba'a al-'Ašriyya, Šaydā-Bayrūt, 2006, ց. 7-29:

¹⁵⁵ D. Little, *An Introduction*, p. 46.

կապես ալ-Ջազարիի, ինչպես նաև ալ-Յուլիսիի երկերի միջև, անվիճելի է: Երկը երկար ժամանակ Հասանելի է եղել միայն ձեռագրերով, ինչը դժվարացրել է նրա ուսումնասիրությունը: Տարիներ առաջ, սակայն, Ումար Արզ ալ-Սալամ Թադմուրին ձեռնամուխ եղավ բնագրի պահպանված մասերի հրատարակությանը՝ մամլուքյան պատմության հետազոտողներին նվիրելով մի աղբյուր, որի կարևորությունը և փոխկապակցվածությունը ժամանակի մյուս մամլուքյան սկզբնաղբյուրների հետ գեռ պետք է ըստ պատշաճի գնահատել¹⁵⁶:

Ալ-Ջազարին (մահ. 1338 թ.) արդեն բավական ժամանակ է, ինչ վաստակել է մամլուքյան դարաշրջանի պատմագրության սկզբունքային կարևորություն ունեցող հեղինակներից մեկի համբավը: Նա ծնվել է Դամասկոսում, բայց ուսման տարիներին եղել է նաև Եգիպտոսում աշակերտելով Հայտնի Հադիսագետների¹⁵⁷: Ալ-Ջազարիի համբավը կապված է նրա *Hawādīt al-zamān wa-anbā'uhu wa-wafayāt al-akābir wa-l-a'yān min abna'ihī* («Ժամանակի անցերն ու նորությունները և նրա մեծ ու երևելի մարդկանց մահախոսականները») պատմագրական երկի հետ, որը, ջավաք, ամբողջական տեսքով մեզ չի հասել¹⁵⁸: Իր երկը գրելիս նա ունեցել է մեծաթիվ ինֆորմանտներ (տեղեկատուներ):

¹⁵⁶ St'ū Al-Birzālī, *Al-Muqtafi*, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, ց. 1-4, Şaydā-Bayrūt, 2006: Թարգմանի քննարկում է այն աղբյուրները, որոնք ալ-Բիրզալին հղում է իր պատմության մեջ, ինչպես նաև նշում է այն սկզբնաղբյուրները, որոնք մեջբերումներ են կատարում ալ-Բիրզալիի պատմությունից: St'ū al-Birzālī, *Al-Muqtafi*, ց. 1.1, ց. 92-103:

¹⁵⁷ Ալ-Ջազարիի մասին կենսագրական տեղեկությունները սուղ են: St'ū D. Little, *An Introduction*, p. 53, ինչպես նաև Խոյնի՝ "Historiography", p. 428; U. Haarmann, *Quellenstudien*, S. 12-13; A.S. Bazmee Ansari, *Al-Djazari*, in *EF*, vol. 2, p. 522; 'Abbās al-'Azzāwī, "Šams al-Dīn ibn al-Ġazarī wa-Tārīḫuhu", *MMIA*, ց. 19. 11-12, ց. 524-526; Nu'mān Ġubrān, *Šams al-Dīn al-Ġazarī wa-kitābuhu Hawādīt al-zamān, Abḥāth al-Yarmūk: Silsilat al-'ulām al-insāniyah wa-l-iğtimā'īya*, ց. 23.1, 2007, ց. 135-138:

¹⁵⁸ Երկի պահպանված հատվածների հրատարակության առաջին փորձը ձեռնարկել է Ջ. Սալամեն: St'ū La Chronique de Damas d'Al-Jazari (années 689-698 H.) par J. Sauvaget, Paris, Librairie ancienne H. Champion, 1949: Ժամանակագրության մեզ հասած 689 (մասամբ) - 699 քք. և 725-738 քք. (1290-1300 և 1324 / 1325-1337 / 1338 քք.) ընդգրկող հատվածները հասանելի են մեզ Խոյնի պես շնորհիվ Ումար Արզ ալ-Սալամ Թադմուրիի: St'ū Tārīḫ Hawādīt al-zamān wa-anbā'uhu wa-wafayāt al-akābir wa-l-a'yān min abna'ihī al-ma'rūf bi-tārīḫ Ibn al-Ġazarī, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, al-Maṭba'a al-'Aşriyya, 3 ց., Şaydā-Bayrūt, 1999:

Օրինակ, «եգիպտական գործերի» մասին խոսելիս նա հաճախ իր տեղեկությունների աղբյուր է նշում ոմն էմիր Սայֆ ալ-Դին Միհաֆֆան-դարին: Այս հանգամանքն, անշուշտ, խոսում է ալ-Ջազարիի երկի արժանահավատության օգտին: Վերևում արդեն արձանագրել ենք, որ հստակ կապ կա ալ-Բիրզալի և ալ-Ջազարիի երկերի միջև: Հավանական է, որ անձամբ ծանոթ լինելով միմյանց հետ՝ այս երկու դասակարգի հեղինակները համագործակցել են, խորհրդակցել, փոխանակել տեղեկություններ¹⁵⁹: Եթե նույնիսկ ընդունենք, որ ալ-Ջազարիի համար ալ-Բիրզալիի պատմությունը որպես աղբյուր է ծառայել, այնուամենայնիվ, պետք է նշենք, որ առաջինի հաղորդումները երկրորդի վկայությունների հետ համեմատած որպես կանոն ավելի հանգամանալից են, հաղորդած պատմական նյութի բացառիկության և եզակիության առումով ավելի նշանակալի¹⁶⁰: Ալ-Ջազարին իր հերթին ժամանակակից և հաջորդ սերնդի մամլուքյան՝ ինչպես ասորիքյան, այնպես էլ եգիպտական պատմագիրների (ալ-Յուլիսի, ալ-Ջազարի, Իբն ալ-Դավազարի, ալ-Նուվայրի և այլն) կարևոր սկզբնաղբյուրներից է¹⁶¹: Ալ-Ջազարիի պատմության համառոտագրություն է կատարել ալ-Ջահարին (*Al-Muhtār min tāriḫ al-Ġazarī* – «Ալ-Ջազարիի պատմության ծաղիկաբույլ»), որ հասել է մեզ¹⁶²:

Մամլուքյան պատմիչների ասորիքյան «գլորոցի» մյուս խոշոր հեղինակությունն ալ-Յուլիսին է (մահ. 1326 թ.): Ինչպես ալ-Բիրզալիի *Al-Muqtafi*-ն, նրա պատմագրական երկը ևս, գրվել է Այյուբյան շրջանի պատմիչի երկը շարունակելու մտադրությամբ: Վերջինիս *Dayl mir'āt al-zamān fī tāriḫ al-a'yān* («Երևելիների պատմության ժամանակի հայելու շարունակություն») վերնագրից պարզ է դառնում, որ խոսքը Սիրտ իբն ալ-Ջաուզիի (մահ. 1256 թ.) մասին է: Իր երկի նախաբանում հեղինակը պարզաբանում է, որ ինքը նախ գրել է Սիրտ իբն

¹⁵⁹ U. Haarmann, *Quellenstudien*, S. 95.

¹⁶⁰ D. Little, *An Introduction*, p. 54; L. Northrup, *From slave to sultan*, p. 42.

¹⁶¹ U. Haarmann, "L'édition de la chronique mamelouke syrienne de Shams ad-Dīn Muḥammad al-Jazari", *BEO*, t. 27, 1974, pp. 198-200.

¹⁶² Al-Dahabī, *Al-Muhtār min tāriḫ ibn al-Ġazarī*, bi-tahqīq Ḥaḍīf 'Abbās Muḥammad Ḥalīfat al-Munšadāwī, Dār al-Kitāb al-'Arabī, Bayrūt, 1988.

կապես ալ-Ջազարիի, ինչպես նաև ալ-Յունիսիի երկերի միջև, անվի-
ճելի է: Երկը երկար ժամանակ Հասանելի է եղել միայն ձեռագրերով,
ինչը դժգոհարացրել է նրա ուսումնասիրությունը: Տարիներ առաջ, սա-
կայն, Ռեմար Աբդ ալ-Սալամ Թադմուրին ձեռնամուխ եղավ բնագրի
պահպանված մասերի Հրատարակությունը՝ մամլուքյան պատմության
Հետազոտողներին նվիրելով մի աղբյուր, որի կարևորությունը և
փոխկապակցվածությունը ժամանակի մյուս մամլուքյան սկզբնաղբ-
յուրների հետ դեռ պետք է ըստ պատշաճի գնահատել¹⁵⁶:

Ալ-Ջազարին (մահ. 1338 թ.) արդեն բավական ժամանակ է, ինչ
վաստակել է մամլուքյան դարաշրջանի պատմագրության սկզբուն-
քային կարևորություն ունեցող հեղինակներից մեկի համբավը: Նա
ծնվել է Դամասկոսում, բայց ուսման տարիներին եղել է նաև Եգիպ-
տոսում՝ աշակերտելով Հալոսի Հադիսագետներին¹⁵⁷: Ալ-Ջազարիի
համբավը կապված է նրա *Hawādīt al-zamān wa-anbā' uhu wa-wafayāt al-*
akābir wa-l-a'yān min abnā' ihī («ժամանակի անցներն ու նորությունները և
նրա մեծ ու երևելի մարդկանց մահախոսականները») պատմագրական եր-
կի հետ, որը, ցավոք, ամբողջական տեսքով մեզ չի հասել¹⁵⁸: Իր երկը
գրելիս նա ունեցել է մեծաթիվ ինֆորմանտներ (տեղեկատուներ):

¹⁵⁶ St' u Al-Birzālī, *Al-Muqtafi*, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, ց. 1-4, Şaydā-
Bayrūt, 2006: Թադմուրին բլատկում է այն աղբյուրներ, որոնք ալ-Բիրզալին հղում է իր պատ-
մության մեջ, ինչպես նաև նշում է այն սկզբնաղբյուրներ, որոնք մեջբերումներ են կատարում
ալ-Բիրզալիի պատմությունից: St' u al-Birzālī, *Al-Muqtafi*, ց. 1.1, ց. 92-103:

¹⁵⁷ Ալ-Ջազարիի մասին կենսագրական տեղեկությունները սուղ են: St' u D. Little, *An
Introduction*, p. 53, ինչպես նաև Եսյնի՝ «Historiography», p. 428; U. Haarmann, *Quellenstudien*, S. 12-13; A.S. Bazmee Ansari, Al-Djazari, in *Et*, vol. 2, p. 522; 'Abbās
al-'Azzāwī, «Šams al-Dīn ibn al-Ğazarī wa-Tārīhuhu», *MMIA*, ց. 19. 11-12, ց. 524-526; Nu'mān Ğubrān, Šams al-Dīn al-Ğazarī wa-kitābuhu *Hawādīt al-zamān*, *Abhāth al-Yarmūk*:
Silsilat al-'ulūm al-insāniyah wa-l-iğtimā'iyah, ց. 23.1, 2007, ց. 135-138:

¹⁵⁸ Երկի պահպանված հատվածների հրատարակության առաջին փորձը ձեռնարկել է Ջ.
Սովաժեն: St' u La Chronique de Damas d'Al-Jazari (années 689-698 H.) par J. Sauvaget,
Paris, Librairie ancienne H. Champion, 1949: Ժամանակագրության մեզ հասած 689
(մասամբ)–699 քք. և 725-738 քք. (1290-1300 և 1324 / 1325-1337 / 1338 քք.) ընդգրկող հատ-
վածները հասանելի են մեզ ճույնպես շնորհիվ Ռաբա Աբդ ալ-Սալամ Թադմուրիի: St' u Tārīh
Hawādīt al-zamān wa-anbā' uhu wa-wafayāt al-akābir wa-l-a'yān min abnā' ihī al-ma'rūf bi-
tārīh Ibn al-Ğazarī, bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, al-Maṭba'a al-'Aşriyya, 3 ց.,
Şaydā-Bayrūt, 1999:

Օրինակ, «Եգիպտական գործերի» մասին խոսելիս նա հաճախ իր տեղե-
կությունների աղբյուր է նշում ոմն էմիր Սայֆ ալ-Դին Միհաֆֆան-
զարին: Այս հանգամանքն, անշուշտ, խոսում է ալ-Ջազարիի երկի
արժանահավատության օգտին: Վերևում արդեն արձանագրել ենք,
որ հստակ կապ կա ալ-Բիրզալի և ալ-Ջազարիի երկերի միջև: Հավա-
նական է, որ անձամբ ծանոթ լինելով միմյանց հետ՝ այս երկու դա-
ժասկոսցի հեղինակները համագործակցել են, խորհրդակցել, փոխա-
նակել տեղեկություններ¹⁵⁹: Եթե նույնիսկ ընդունենք, որ ալ-Ջազա-
րիի համար ալ-Բիրզալիի պատմությունը որպես աղբյուր է ծառայել,
այնուամենայնիվ, պետք է նշենք, որ առաջինի հաղորդումները երկ-
րորդի վկայությունների հետ համեմատած որպես կանոն ավելի հան-
գամանալից են, հաղորդած պատմական նյութի բացառիկության և
եզակիության առումով ավելի նշանակալի¹⁶⁰: Ալ-Ջազարին իր հեր-
թին ժամանակակից և հաջորդ սերնդի մամլուքյան՝ ինչպես ասորիք-
յան, այնպես էլ եգիպտական պատմագիրների (ալ-Յունիսի, ալ-Ջա-
հարի, Իբն ալ-Դավազարի, ալ-Նուվայրի և այլն) կարևոր սկզբնաղ-
բյուրներից է¹⁶¹: Ալ-Ջազարիի պատմության համառոտագրություն է
կատարել ալ-Ջահարին (*Al-Muhtār min tārih al-Gazarī* – «Ալ-Ջազարիի
պատմության ծաղկաբաղ»), որ հասել է մեզ¹⁶²:

Մամլուքյան պատմիչների ասորիքյան «ղպրոցի» մյուս խոշոր
հեղինակությունն ալ-Յունիսին է (մահ. 1326 թ.): Ինչպես ալ-Բիրզա-
լիի *Al-Muqtafi*-ն, նրա պատմագրական երկը ևս, գրվել է Այյուբյան
շրջանի պատմիչի երկը շարունակելու մտադրությամբ: Վերջինիս
Dayl mir'āt al-zamān fi tārih al-a'yān («Երևելիների պատմության ժամանակի
հայելու շարունակություն») վերնադրից պարզ է դառնում, որ խոսքը
Սիրաս իբն ալ-Ջաուզիի (մահ. 1256 թ.) մասին է: Իր երկի նախա-
բանում հեղինակը պարզաբանում է, որ ինքը նախ գրել է Սիրաս իբն

¹⁵⁹ U. Haarmann, *Quellenstudien*, S. 95.
¹⁶⁰ D. Little, *An Introduction*, p. 54; L. Northrup, *From slave to sultan*, p. 42.
¹⁶¹ U. Haarmann, «L'édition de la chronique mamelouke syrienne de Shams ad-Dīn
Muhammad al-Jazari», *BEO*, t. 27, 1974, pp. 198-200.
¹⁶² Al-Dahabī, *Al-Muhtār min tārih ibn al-Ğazarī*, bi-tahqīq Ḥaḍīr 'Abbās Muḥammad Ḥalīfat
al-Munšadāwī, Dār al-Kitāb al-'Arabī, Bayrūt, 1988.

ալ-Ջաուզիի պատմությունն Համառոտագրություն (Muḥtaṣar mir'āt al-zamān) և հետո միայն ձևափոխվել է եղել իր «Շարունակությունը» գրելուն, որն ընդգրկում է 1256-1312 թվականները¹⁶³:

Ալ-Յունինին ծնվել է Դամասկոսում կրոնաիրավագետի ընտանիքում: Ուսման նպատակով մի քանի անգամ այցելել է Եգիպտոս՝ աշակերտելով տարբեր մազհաբների հայտնի կրոնագետներին¹⁶⁴: Ծայլ mir'āt al-zamān-ի արդի հետազոտողները համակարծիք են ալ-Ջաուզիի և ալ-Յունինիի երկերի առնչակցության հարցում: Երկու երկերի համեմատությունը թույլ է տալիս ենթադրել, որ հեղինակները մասնագիտական սերտ կապեր են ունեցել, և ալ-Յունինին իր նյութի մի զգալի մասը փոխառել կամ պարզապես բառացիորեն պատճենել է ալ-Ջաուզիից¹⁶⁵:

¹⁶³ Մինչ այժմ երկը խմբագրելու ու հրատարակելու շուրջ փորձ է եղել: Այդ փորձի մեկնակերտվել է 1954 թ. Հայդաբադում, ուր մինչև 1961 թ. յույս են տեսել Ծայլ-ի առաջին շուրջ հատարները, որ ընդգրկում են 1256-1287 թթ. (Al-Yūnīnī, *Ḍayl Mir'āt al-zamān, al-tab'a al-ūlā*, ց. 1-4, Maṭba'at Dā'irat al-Ma'ārif al-'Uṭmāniyya, Haydārabād, 1954-1961): Հաջորդ հայտնարել է Անդրանիկ Մելիքյանը, ով 1975 թ. տպագրված իր առեմախոսությամբ հրատարակել է ալ-Յունինիի պատմության 1287 [1288]-1291 թթ. իրադարձությունները պարփակող հատվածը գերմաներեն թարգմանության հետ մեկտեղ (A. Melkonian, *Die Jahre 1287-1291 in der Chronik al-Yūnīnīs*, Universitätsverlag Beckmann, Freiburg, 1975): 1998 թ. Լի Գուոն հրատարակեց իր առեմախոսության լրամշակված տարբերակը, որում խմբագրել է երկի 1297-1302 թթ. ընդգրկող հատվածը՝ այն ուղեկցելով անգլերեն թարգմանությամբ (Li Guo, *Early Mamluk Syrian Historiography: Al-Yūnīnī's Ḍayl Mir'āt al-zamān*, 2 vols., E.J. Brill, Leiden, 1998): Եվ վերջապես Համազ Արքաթը հրատարակել է 1297-1312 թթ. ընդգրկող քննական խմբագրությունը երեք հատորով (Al-Yūnīnī, *Ḍayl Mir'āt al-zamān (Tārīḥ al-sanawāt 696-711 h./1297-1312 m.)*, bi-tahqīq Ḥamza 'Abbās, ց. 1-3, Abū Zabī, 2007): Երկի՝ այս հրատարակություններում չհերանված 1292-1297 թթ. պարփակող հատվածը շարունակում է չհրատարակված մնալ:

¹⁶⁴ Հեղինակի մասին կենսագրական մանրամասն տեղեկությունների համար տե՛ս J. Sublet, "Al-Yūnīnī", in *EP*, vol. 11, pp. 345-346 ու հավաստես Li Guo, *Ḍayl*, vol. 1, pp. 4-16 և 'Abbās Ḥamza, *Ḍayl*, ց. 1, 27-32:

¹⁶⁵ Այսօրինակ եզրակացությունների մասին տե՛ս D. Little, *An Introduction*, pp. 57-58 և հայտնի "Historiography", p. 429; U. Haarmann, *Quellenstudien*, S. 95, ինչպես նաև հայտնի *L'édition*, S. 197; L. Northrup, *From slave to sultan*, pp. 43-44; R. Irwin, "Mamluk history and historians", in *The Cambridge history of Arabic literature: Arabic literature in the post-classical period*, ed. by R. Allen and D.S. Richards, Cambridge University Press, 2006, p. 161; 'Abbās Ḥamza, *Ḍayl*, ց. 1, ց. 49, հ. 1: Հմմտ. Li Guo, *Ḍayl*, vol. 1, p. 59:

Մամլուքյան պատմագրության ստորիքյան «ավանդույթի» այս երեք ներկայացուցիչների ազդեցությունը ժամանակակիցների և հաջորդ սերնդի մատենագիրների վրա հսկայական է: Նրանցից առավել նշանավորները երեքն են՝ ալ-Ջաուզին (մահ. 1348 թ.), ալ-Քութուբին (մահ. 1363 թ.) և Իբն Բասիրը (մահ. 1374 թ.):

Պատմիչ, աստվածաբան, կրոնաիրավագետ ալ-Ջաուզին ծնվել է 1274 թ. Դամասկոսում, բայց ինչպես վերոհիշյալ երեք հեղինակները, կրոնական կրթություն ստանալու նպատակով երիտասարդ տարիներին շատ է ճանապարհորդել՝ լինելով մասնավորապես Կահիրեում: Մեծ հեղինակություն է վայելել ժամանակակիցների շրջանում հատկապես որպես հաղիսագետ (muḥaddiṭ al-'aṣr)՝ դասավանդելով Դամասկոսի տարբեր madrasa-ներում: Հարել է շաֆիական մազհաբին: Հայտնի է, որ ծանոթ է եղել և մասնագիտական սերտ կապեր է ունեցել դամասկոսցի մյուս հայտնի կրոնաիրավագետ-մուհադդիսների՝ այդ թվում Իբն Թալմիյայի և ալ-Բիրզալիի հետ: Կյանքի վերջին տարիներին կորցրել է տեսողությունը¹⁶⁶:

Ալ-Ջաուզիի թողած գրավոր ժառանգությունը պատկանելի է: Նրա պատմագրական երկերից կարևորագույնը *Tārīḥ al-Islām wa-wafayāt al-mašāhīr wa-l-a'lām* («Իսլամի և հայտնիների ու ահանավորների պատմություն»)՝¹⁶⁷ վերնագիրը կրող բազմահատոր համընդհանուր պատմությունն է, որում պատմական իրադարձությունների շարադրանքը հասցված է մինչև 1301 թ.: Երկը պարունակում է ինչպես ժամանակագրական (ḥawādīṭ կամ tārīḥ), այնպես էլ կենսագրական նյութ (wafayāt և tarāğim): Իսլամի պատմության «երևելիների» մասին կենսագրական հոգվածները նրանում դասակարգված են այսպես կոչված *ṭabaqāt-ի* («ղասերի») գրականության սկզբունքներով¹⁶⁸: Ալ-Ջաուզիի

¹⁶⁶ Կենսագրական մանրամասների համար տե՛ս M. Ben Cheneb [J. de Somogyi], "Al-Dhahabī", in *EP*, vol. 2, pp. 214-215; J. de Somogyi, "The Ta'rīkh al-Islām of adh-Dhahabī", *JRAS*, vol. 64.4, 1932, pp. 819-823; 'Abd al-Sitār al-Šayḥ, *Al-Ḥāfiẓ al-Dahabī, Mu'arriḥ al-Islām, nāqid al-muḥaddiṭīn, imam al-mu'addilīn, wa-l-muḡarrīḥīn (673-748 h.)*, Dār al-Qalam, Dimašq-Bayrūt, 1994, ց. 27-43:

¹⁶⁷ Al-Dahabī, *Tārīḥ al-Islām wa-wafayāt al-mašāhīr wa-l-a'lām*, 52 ց., bi-tahqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, Dār al-kitāb al-'arabī, Bayrūt, 1987-2000.

¹⁶⁸ Tārīḥ al-Islām-ի մասին մանրամասն տե՛ս J. de Somogyi, "The Ta'rīkh", pp. 824-855:

պատմագրական նյութի Համար Հավանակար աղբյուրներ են եղել ասորիքցի մյուս հեղինակների՝ ի մասնավորի ալ-Բիրզալիի և ալ-Ջազարիի երկերը¹⁶⁹: Բացի Թարի al-Islām-ից պահպանվել են նաև հեղինակի մի քանի այլ երկեր, որոնք նույնպես պատմագրական հետաքրքրություն են ներկայացնում իրենցից, չնայած որ գրեթե բոլորը «Իսլամի պատմության» Համառոտագրություններ են¹⁷⁰: Հիշատակության է արժանի Հատկապես երկհատոր Duwal al-Islām-ը, որը թեև Հիմնականում ալ-Ջազարիի մեծ պատմության կրճատված տարբերակն է, բայց իրագրածությունների թեկուզ և խիստ Համառոտ շարադրանքը նրանում առաջ է անցնում նախորդից չորս տասնամյակով՝ Հասնելով մինչև 1344 թ.¹⁷¹:

Մատենագրի երկու այլ երկերից Siyar a'lām al-nubalā'-ը («Ազնվագամ հայանիների կենսագրություններ») Հանրագիտարան է, որի պարունակած կենսագրական հոդվածների քանակը Թարի al-Islām-ի Հետ Համեմատած սահմանափակ է, մյուսը՝ Al-'Ibar fi ḥabar man ḡabara-n («Խրատներ հանգուցյալների մասին հաղորդումներից») նույնպես վերջինիս Համառոտագրությունն է¹⁷²:

Մուհամմադ իբն Շաքիր ալ-Քութուբիի մասին կենսագրական տեղեկությունները սուղ են: Ամենն, ինչ գիտենք հեղինակի մասին, այն է, որ նա ապրել է ծայրահեղ աղքատության մեջ, բայց սկսելով զբաղվել գրափաճառություններ անակնկալ կերպով Հարստացել է (այստեղից էլ նրա al-Kutubī անունը)¹⁷³: Հայտնի է առաջին Հերթին իր մեծածավալ Fawāt al-Wafayāt («Al-Wafayāt-ի բացթողումներ») կենսագրական բառարանով¹⁷⁴, որ իբն Խալիքանի Հայտնի Wafāyat al-a'yān-ի

¹⁶⁹ D. Little, *An Introduction*, pp. 63-64.

¹⁷⁰ Ben Cheneb [Somogyi J. de], "Al-Dhahabī", p. 215.

¹⁷¹ Al-Dahabī, *Duwal al-Islām*, 2 ց., bi-tahqīq Ḥasan Ismā'īl Marwa, Dār Ṣādir, Bayrūt, 1999.

¹⁷² Նոյնի՝ *Siyar a'lām al-nubalā'*, 25 ց., bi-tahqīq Baṣār 'Awwād Ma'rūf, Ṣu'ayb al-Arna'ūt (և այլոց), Mu'assasat al-Risāla, Bayrūt, 1996; Նոյնի՝ *Al-'Ibar fi ḥabar man ḡabara*, 4 ց., bi-tahqīq Abū Hāḡir Muḥammad al-Sa'īd ibn Basyūnī Zaḡlūl, Dār al-Kutub al-'Ilmiyya, Bayrūt, 1985.

¹⁷³ F. Rosenthal, "Al-Kutubī", in *IF*, vol. 5, p. 570; Al-Kutubī, 'Uyūn al-tawārīḥ wa-fihī min sanat 219 h. ilā 250 h., bi-tahqīq 'Afīf Ḥāḡūm, Dār al-Ṭaqāfa, Bayrūt, 1996, ց. 7-9.

¹⁷⁴ Al-Kutubī, *Fawāt al-Wafayāt wa-l-dayī 'alayhā*, 5 ց., bi-tahqīq Iḥsān 'Abbās, Dār Ṣādir, 1973-1974.

շարունակությունն է: Ալ-Քութուբիի գրչին է պատկանում նաև 'Uyūn al-tawārīḥ («Պատմության ակունքներ») վերնագիրը կրող Համընդհանուր պատմությունը, որ սկսվում է Մուհամմադ մարգարեի ժամանակներից և ավարտվում 1359 թվականով: Արդի հետազոտողների կարծիքով 'Uyūn al-tawārīḥ-ը մեծամասամբ Հիմնված է ալ-Ջազարիի պատմության վրա և աննշան Հավելումներ է պարունակում¹⁷⁵: Սա է Հավանաբար պատճառը, որ ցայսօր ալ-Քութուբիի պատմության առանձին հատորներ են միայն հրատարակված¹⁷⁶:

Իմադ ալ-Դին Իսմաիլ իբն Ումար իբն Քասիրը ծնվել է Բուսրայում 1302 թ.: Կրոնական Հիմնավոր կրթություն է ստացել Դամասկոսում աշակերտելով ասորիքյան 'ulamā'-ի այնպիսի խոշոր հեղինակությունների, ինչպիսին էր, օրինակ, Իբն Թայմիյյան: Իբն Քասիրը վախճանվել է 1374 թ. Դամասկոսում և թաղվել իր ուսուցչի կողքին¹⁷⁷:

Իբն Քասիրը վերջին խոշոր ներկայացուցիչն է մամլուքյան պատմագրական ավանդույթի այն ճյուղի, որին վերևում «ասորիքյան դպրոց» պայմանական բնորոշումն ենք տվել: Նրա պատմագրական ժառանգության թաղը Al-Bidāya wa-l-nihāya («Սկիզբը և վերջը») վերնագիրը կրող Համընդհանուր պատմությունն է¹⁷⁸: Այս երկի մամլուքների վաղ պատմությանը նվիրված Հատվածը, ինչպես ինքը հեղինակն է խոստովանում, Հիմնված է ալ-Բիրզալիի Al-Muqtafi-ի վրա: Արդի հետազոտողների աղբյուրագիտական ուսումնասիրություն-

¹⁷⁵ D. Little, *An Introduction*, p. 67; U. Haarmann, *Quellenstudien*, S. 103.

¹⁷⁶ Ṣū' al-Kutubī, 'Uyūn al-Tawārīḥ, wa-fī-hi min sanat 219-250 h., bi-tahqīq 'Afīf Nāyif Ḥāḡūm, Dār al-Ṭaqāfa, Bayrūt, 1996; Նոյնի՝ 'Uyūn al-Tawārīḥ, al-safar al-awwal, bi-tahqīq Ḥusām al-Dīn al-Qudṣī, Maktabat al-Nahḍa al-Miṣriyya, 1980: Ալ-Քութուբիի պատմության 12-րդ, 20-րդ և 21-րդ մասերի հրատարակություններից (Al-Kutubī, 'Uyūn al-Tawārīḥ, bi-tahqīq Fayṣal al-Sāmīr and Nabīlah 'Abd al-Mun'im Dāwūd, 3 ց., Bagdad, Dār al-Rashīd li-l-naṣr, 1977-1984) մեզ հասանելի են եղել 20-րդ (1980) և 21 (1984) մասերը: Դրանցից բացի ձեռքի տակ ունեցել եմ նաև Մոսկովի Քովկասիի պարտի հավաքածուի՝ երկի 21-րդ և 22-րդ մասերն քնդգրկող թիվ 2922/21 և 2922/22 ձեռագրերի լուսապատկերները (պարփակում են հիբրայի 671-710 քք. / 1272-1310 քք. պատմությունը):

¹⁷⁷ Հեղինակի կյանքի ու գործունեության մասին մանրամասների համար տե՛ս H. Laust, "Ibn Kathīr", in *IF*, vol. 3, pp. 817-818:

¹⁷⁸ Ibn Kaṭīr, *Al-Bidāya wa-l-nihāya*, 21 ց., bi-tahqīq 'Abd Allāh ibn 'Abd al-Muḥsin al-Turkī, Dār Haḡar, 1997-1999.

ները, սակայն, ցույց են տալիս, որ Իբն Քասիրի օգտագործած աղբյուրներից են նաև ալ-Ջազարին և ալ-Յուսուֆին¹⁷⁹: Չնայած այս պարագային՝ Al-Bidāya wa-l-nihāya-ում շատ են բացառիկ ու արժեքավոր տեղեկություններն ու հավելումներն իր ժամանակի շատ անցքերի վերաբերյալ, որ բացակայում են մյուս ժամանակակիցների մոտ: Այս հանգամանքն առանձնահատուկ տեղ է ապահովում Իբն Քասիրի համար Բազրի մամլուքյան շրջանի պատմիչների շարքում¹⁸⁰:

Ալ-Ջահաբի, ալ-Քութուբի և Իբն Քասիրի եզրպատյի ժամանակակիցներից հարկ ենք համարում անդրադառնալ ալ-Յուսուֆին (մահ. 1358 թ.): Ժամանակակից և հաջորդ սերնդի հեղինակների կենսագրական բառարաններում և պատմագրական երկերում նրա մասին պահպանված տեղեկություններից պարզ է դառնում, որ հեղինակը ծնվել է Կահիրեում: Ալ-Մալիք ալ-Նասիր Մուհամմադ սուլթանի օրոք զբաղեցրել է մամլուքյան բանակի զինված խմբավորման հրամանատարի պաշտոն (muqaddam al-halqa) և մասնակցել է մոնղոլների, Կիլիկյան Հայաստանի դեմ, ինչպես նաև Եմեն ուղղված մամլուքյան արշավանքներին: Ալ-Յուսուֆի երկը պարունակում է Այաս նավահանգստի մի եզակի նկարագրություն, որ երբեք ուշադրության չի արժանացել¹⁸¹: Ընկերական հարաբերություններ ունենալով մամլուքյան բյուրոկրատիայի շատ ներկայացուցիչների և արքունականների հետ՝ նա իր ժամանակի շատ իրազարժություններ ներկայացրել է ականատեսի աչքերով: Նրա մեզ հայտնի միակ երկը Nuzhat al-nāzīr fī sīrat al-Malik al-Nāṣir («Ականատեսի գրոսանիս ալ-Մալիք ալ-Նասիրի կյանի ընթացքով») վերնագիրը կրող ժամանակագրությունն է: Ցավալի է, սակայն, որ այս կարևոր երկից պահպանվել է 1332-1338 թթ. ընդգրկող մի հատված միայն¹⁸²: Ալ-Յուսուֆի պատմությունը լայնորեն

օգտագործվել է հաջորդ սերնդի պատմիչների՝ մասնավորապես ալ-Այնիի (մահ. 1451 թ.) կողմից, ով բազմաթիվ մեջբերումներ է կատարել նրանից¹⁸³:

Ալ-Յուսուֆի երկն առանցքային է եղել նաև նրա ժամանակակից ալ-Շուջաիի (մահ. 1356 թվականից հետո) պատմության համար: Վերջինիս կյանքի ու գործունեության մասին տվյալները նույնպես սուղ են¹⁸⁴: Փ. Հոլան իր մի հոդվածում փորձել է տեղեկություններ հայթայթել նրա անձի վերաբերյալ՝ ի վերջո փորձելով նույնականացնել նրան «Շամս ալ-Ին Ալսունկուր» անունով մի էմիրի հետ¹⁸⁵:

Ինչպես ալ-Յուսուֆի երկից, ալ-Շուջաիի ժամանակագրությունից՝ Tārīḥ al-Malik al-Nāṣir Muḥammad ibn Qalāwīn al-Ṣāliḥī wa-awlādihī («Ալ-Մալիք ալ-Նասիր Մուհամմադ իբն Կալավուն ալ-Սալիհիի և նրա որդիների պատմություն») վերնագրով, ևս ընդամենը մի հատված է հասել մեզ, որն ընդգրկում է 1337-1345 թթ.: Սփոփիչ է գոնե այն հանգամանքը, որ չնայած ալ-Շուջաիի պատմության մեզ հասած մասն ընդամենը մեկ տարվա իրադարձությունների շարագրանքով է խաչաձևվում ալ-Յուսուֆի երկի պահպանված մասի հետ, բայց և այնպես առաջ է անցնում դրանից յոթ տարով: Երկի պահպանված հատվածը դերմաներեն թարգմանությամբ հրատարակել է Բարբարա Շեֆերը¹⁸⁶:

Երկու երկերի հատվող ժամանակագրական հատվածների տեքստերի համեմատությամբ Դ. Լիթլը ցույց է տվել, որ Nuzha-ն եղել է ալ-Շուջաիի առանցքային աղբյուրներից մեկը, որը մատնանշելուց նա խուսափել է՝ որոշ լրացումներ կատարելով ալ-Յուսուֆի հաղորդումներին¹⁸⁷:

¹⁷⁹ D. Little, *An Introduction*, p. 69; U. Haarmann, *Quellenstudien*, S. 105.

¹⁸⁰ H. Laust, "Ibn Kaṭhīr", p. 818; D. Little, *An Introduction*, pp. 71-73; L. Northrup, *From slave to sultan*, p. 50.

¹⁸¹ Al-Yūsufī, *Nuzhat al-nāzīr fī sīrat al-Malik al-Nāṣir*, bi-taḥqīq Aḥmad Ḥuṭayt, 'Ālam al-Kutub, Bayrūt, 1986, §. 39-57, §. 403-409.

¹⁸² Պատմագրի մասին կենսագրական տեղեկությունների և նրա երկի մասին մանրամասն տե՛ս D. Little, "The Recovery of a Lost Source for Bahrī Mamluk History: al-Yūsufī's

Nuzhat al-Nāzīr fī sīrat al-Malik al-Nāṣir", *JAOS*, vol. 94, 1974, pp. 42-54, նույնի՝ "Historiography", pp. 426-427 և al-Yūsufī, *Nuzha*, §. 39-57:

¹⁸³ D. Little, "Historiography", p. 426.

¹⁸⁴ St' u D. Little, "Al-Shudjā'ī", in *EF*, vol. 9, pp. 493-494, ինչպես նաև նույնի՝ "Analysis of the Relationship between Four Mamluk Chronicles for 737-45", *JSS*, vol. 19, 1974, pp. 252-268:

¹⁸⁵ P.M. Holt, "Shams al-Shujā'ī: a chronicler identified?", *BSOAS*, vol. 58.3, 1995, pp. 532-534.

¹⁸⁶ Վերևում մի անգամ արդեն ծանոթագրել ենք: St' u մերթք. 121:

¹⁸⁷ D. Little, "Analysis", pp. 252-268.

Ալ-Շուջլախով սահմանափակենք Բահրի մամլուքյան շրջանի արարագիր ժամանակագիրների հետ մեր ծանոթությունը՝ անցում կատարելով Հաջորդ սերնդի մատենագիրներին, որոնց, ինչպես նախորդ խմբի պատմիչներին, Սուլթանության կառավարող այժմ արդեն գերազանցապես չերքեզական ծագման վերնախավի անունով պայմանականորեն պիտի անվանենք «Բուրջի մամլուքյան շրջանի պատմիչներ»։ Չնայած այն հանգամանքին, որ այս շրջանի առանձին հեղինակներ և երկեր արևմտյան հետազոտողների ուշադրության կենտրոնում են հայտնվել դեռ ԺԺ դարում, և մինչ այժմ ահռելի ջանքեր են գործադրվել այդ հարուստ ժառանգությունը դնահատելու և արժևորելու ուղղությամբ, ոլորտն այսօր էլ շարունակում է ընդհանուր առմամբ թիրամշակ մնալ¹⁸⁸։ Պատճառներից մեկն այն է, որ այս շրջանի շատ արժեքավոր գործեր դեռ մասամբ կամ ամբողջովին անտիպ են և հետևաբար անհասանելի դիտական լայն շրջանակներին։ Ժամանակն անշուշտ կլրացնի այս բացը՝ թարմ շունչ ու նոր թափ հաղորդելով մամլուքյան պատմության ուսումնասիրության գործին։

Մամլուքյան նոր սերնդի պատմիչներից առաջինն, ում ցանկանում ենք անդրադառնալ նախր ալ-Դին իբն ալ-Ֆուրաթ ալ-Հանաֆին (մահ. 1405 թ.) է։ Չնայած որ Իբն ալ-Ֆուրաթի ընտանիքի անդամները կարևոր դիրք ու պաշտոններ են ունեցել պետության վարչական համակարգում, նրա կյանքն անհամեմատ ավելի համեստ է անցել։ Ամենարարձր պաշտոնը, որ զբաղեցրել է Իբն ալ-Ֆուրաթը, եղել է իմամ-ի պաշտոնը Կահիրեի մադրասաններից (մուսուլման կրոնական ուսումնական հաստատություն դարձրոց) մեկում¹⁸⁹։

Նրա պատմությունը՝ *Tārīḥ al-duwal wa-l-mulūk-ը* («Հարստությունների և արքաների պատմություն»), արդի հետազոտողների կողմից ճանաչվում է մամլուքյան պատմության, մասնավորապես վաղ շրջանի,

և, որքան էլ տարօրինակ կարող է թվալ, նաև Ֆաթիմյանների¹⁹⁰ և Այյուբյանների պատմության ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուր։ Իբն ալ-Ֆուրաթի պատմության ներկայացրած այսպիսի արժեքի հիմնապատճառը նրա օգտագործած մեծաթիվ աղբյուրներն են, որոնց մի մասը մեղ չի հասել (ինչպես օրինակ՝ Իբն Աբի Տայյի երկը)¹⁹¹։ Ցավով պետք է արձանագրել, որ Իբն ալ-Ֆուրաթի պատմությունը նույնպես ամբողջական տեսքով չի պահպանվել, իսկ պահպանված մասերից բոլորը չէ, որ խմբագրվել ու հրատարակվել են¹⁹²։

¹⁸⁸ Ֆ. Բորան այս քննյալով 2010 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն, որի աղյուսակները վերջերս ամփոփել է ապագիր հրատարակությամբ։ St' u F. Bora, *Mamluk Representations of Late Fatimid Egypt: The Survival of Fatimid-Era Historiography in Ibn al-Furāt's Ta'rikh al-duwal wa'l-mulūk* (History of Dynasties and Kings), DPhil Thesis, The Oriental Institute, University of Oxford, 2010 և **ճույնի՝** *Writing History in the Medieval World: The Value of Chronicles as Archives*, I.B. Tauris, London, 2019.

¹⁸⁹ Cl. Cahen, "Ibn al-Furāt", in *EP*, vol. 3, pp. 768-769; M.F. Elshayyal, *Ibn al-Furāt, Ta'rikh al-duwal wa'l-mulūk*, unpublished PhD thesis, Edinburgh University, 1986, pp. 11-23, ինչպես նաև Ֆ. Բորայի նեֆեսում ծանոթագրված աշխատությունները։

¹⁹² Իբն ալ-Ֆուրաթի պատմության հիբրայի 522-543 թվականները (1128-1148/1149 թթ.) ընդգրկող հատորն իր թեկնածուական ատենախոսությամբ խմբագրել է Մուհամմադ ալ-Շայյալը։ St' u ճախորդ ծանոթագրությունը։

Այլ հատորների հրատարակություններ՝ *Ibn al-Furāt, Tārīḥ al-duwal wa-l-mulūk*, ց. 7-9, bi-tahqīq Quṣṭanṭīn Zurayq wa-'Izz al-Dīn Naḡla, Bayrūt, 1936-1942 և ց. 4.1-4.2, 5, bi-tahqīq Ḥasan Muḥammad Šammā, Baṣra, 1967-1969, 1970։

Մեզ հասանելի է եղել նաև Իբն ալ-Ֆուրաթի պատմության հիբրայի 660-671 թթ. (1261-1273 թթ.) ընդգրկող ինֆևզիբ հատորը, որը, ցավոք, դեռ անտիպ է և գտնվում է Ավստրիայի ազգային գրադարանում (MS A.F. 122)։ Ավստրիայի ազգային գրադարանում են գտնվում նաև երկի 8 այլ ինֆևզիբ հատորներ։ 1241-1259 թվականներն ընդգրկող մի ձեռագիր էլ գտնվում է Վատիկանի գրադարանում։ St' u M.F. Elshayyal, "Ibn al-Furāt", pp. 8-9; F. Bora, "Writing History", pp. 29-36։ Վիեննայի A.F. 122 և Վատիկանի V720 ձեռագրերից ֆաղվածական քարգամություններ կառաելու փորձ է ձեռնարկվել մաա կես դար առաջ (Ayyubids, Mamlukes and Crusaders, selections from the Tārīḥ al-Duwal wa'l-mulūk of Ibn al-Furāt, text and translations by U. and M.C. Lyons, historical intro. by J.S.C. Riley-Smith, 2 vols., W. Heffer and Sons Ltd, Cambridge, 1971, հետայսու՝ *Tārīḥ al-duwal (Selections)*)։ Նույնպիսի մի փորձ բոլորովին վերջերս կատարել է Դեյվիդ Քուրթ՝ հատվածներ քարգամելով Կալավուն և Իրա որդի՝ ալ-Աշրաֆ Խայի սուլթանների կառավարման շրջաններում մամլուք-ֆրանկյան հարաբերությունների վերաբերյալ։ St' u Baybars' Successors: Ibn al-Furāt on Qalāwūn and al-Ashraf, trans. by D. Cook, Routledge, London and New York, 2020։

¹⁸⁸ D. Little, "Historiography", p. 433; S.G. Massoud, *The chronicles and annalistic sources of the early Mamluk Circassian Period*, E.J. Brill, Leiden-Boston, 2007, p. 4.

¹⁸⁹ Muḥammad Kamāl al-Dīn 'Izz al-Dīn, *Arba'at Mu'arriḥīn wa-arba'at mu'allafāt min dawlat al-Mamālīk al-Ḡarākīya, al-Hay'a al-Miṣriyya al-'Āmma li-l-Kitāb, al-Qāhira, 1992, ց. 35-40; S.G. Massoud, The chronicles, p. 34.*

Մամլուքյան պատմությունը շարադրելիս Իբն ալ-Ֆուրաթը որպես ձևանմուշ օգտագործել է ալ-Նուվայրիի Nihāyat al-arab-ը, ում հազոր-գումները փոխառել է առանց դրանց իրական հեղինակի անունը նշելու: Այլ պատմիչներից Tārīḥ al-duwal-ում հաճախակի մեջբերում-ներ կան Աբու ալ-Ֆիդայից, Բայբարս ալ-Մանսուրիից, ալ-Յունիսիից և ալ-Ջազարիից¹⁹³, ինչպես նաև «Իբն Մուքարրամի» կորած երկից¹⁹⁴: Հաջորդ սերնդի պատմիչներից Իբն ալ-Ֆուրաթի երկն աղբյուր է ծառայել հատկապես ալ-Մակրիզիի համար: Նրա երկից քաղվածքներ (Al-Muntaqā min tāriḥ Ibn al-Furāt) է կատարել Իբն Կադի Շուհրան (մահ. 1448 թ.)¹⁹⁵:

Եզրպտացի պատմիչ Սարիմ ալ-Դին Իբրահիմ իբն Դուկմակը (մահ. 1407 թ.) նույնպես awlād al-nās խավի ներկայացուցիչ էր, ով իր կյանքի մեծ մասը նվիրել է պատմագրությանը, թեև նրա ծառանգու-թյան միայն փոքր մասն է պահպանվել: Ծիշտ է՝ ալ-Սախավիի վկա-յությունները՝ Իբն Դուկմակը վատ է տիրապետել արաբերենին, այնուու-մենայնիվ, դա չի խանգարել ժամանակակիցներին և նրանից հետո ապրած պատմիչներին՝ մասնավորապես Իբն ալ-Ֆուրաթին և ալ-Այ-նիին, լայնորեն օգտվել նրա պատմագրական երկերից¹⁹⁶: Մասամբ մեզ է հասել նրա՝ Կահիրեի (Ֆուստատի) պատմատեղագրական նկար-ագրությունը նվիրված նրա երկասիրությունը՝ Kitāb al-Intiṣār li-wāṣiṭat 'iqd al-amṣār («Գիրք ի պաշտպանության ֆաղափների մանյակի կենտրոնա-

¹⁹³ D. Little, *An Introduction*, p. 73-75, ինչպես նաև Գույնի «Historiography», p. 433.

¹⁹⁴ St' u L. Northrup, *From slave to sultan*, p. 51: Իբն Մուքարրամը ֆալանսարա Lisān al-'arab բառարանի ներդրակ հանրահայտ Իբն Մանգուսն է (մահ. 1311 թ.): St' u J.W. Füek, «Ibn Manẓūr», in *EF*², vol. 3, p. 864:

¹⁹⁵ D.C. Reisman, «A Holograph MS of Ibn Qādī Shuhbah's "Dhayl"», *MSR*, vol. II, 1998, pp. 19-49: Ձեռագիրը գտնվում է Դուրիմի Chester Beatty գրադարանում (MS 4125): St' u նաև S.G. Massoud, «Ibn Qādī Shuhbah's "Al-Dhayl Al-Muṭawwal": The Making of an all Mamluk Chronicle», *Quaderni di Studi Arabi, Nuova Serie*, vol. 4, 2009, pp. 61-79:

¹⁹⁶ Ներդրակի կյանքի և մատենագրական ժառանգության մասին ավելի հանգամանակի տե՛ս J. Pedersen, «Ibn Duqmāq», in *EF*², vol. 3, p. 756; F. Rosenthal, *A history of Muslim historiography (Second revised edition)*, E.J. Brill, Leiden, 1968, p. 356, n. 3; S.G. Massoud, *The chronicles*, pp. 31-34, ինչպես նաև 'Izz al-Dīn, *Arba'at Mu'arriḥin*, s. 107-108, ինչպես նաև Մուսա երկերի ստորև ներկայացված հրատարակությունների խմբագիրների՝ Սաիդ Աբդ ալ-Պարրան Աշուրի, Ումար Աբդ ալ-Սալամի ներածական ակնարկները:

կան գոհարի», իմա՝ «Կահիրեի»-Գ.Դ.) վերնագրով, որի երկու հատոր-ները դեռ ժԹ դարի վերջին հրատարակվել են գերմանացի արևելա-գետ Կառլ Ֆրյուրերի կողմից¹⁹⁷:

Նրա կարեորագույն ժամանակագրությունը՝ Nuzhat al-anām fi tāriḥ al-Islām («Մարդկանց զրոսանին իսլամի պատմության ընթացում») վեր-նագրով 12 հատորանոց երկը, որում իրադարձությունների շարադ-րանքը հասցվել է մինչև Հիջրայի 779 (1377) թվականը, դժբախտա-բար մասամբ է պահպանվել: Այս երկի՝ Այյուբյանների պատմության վերջին տասնամյակների ու Մամլուքյան սուլթանության առաջին տասնամյակի (628-659 հ. / 1230-1261 թթ.) պատմությունն ընդգրկող հատվածը հրատարակել է Սամիր Տաբբարան¹⁹⁸: Որոշ մասեր էլ դեռ մեռագրում են և սպասում են հրատարակության իրենց հերթին¹⁹⁹:

Պահպանված է, օրինակ, նրա Al-Ḡawhar al-ṭamīn («Թանկագին զո-հար») երկը²⁰⁰, որի մի քանի տարբերակներ են մեզ հասել:

Մամլուքյան մատենագրության վառ հեղինակություններից է Շիհաբ ալ-Դին Աբու ալ-Աբրաս ալ-Կալիլաշանդին (մահ. 1418 թ.):

¹⁹⁷ Ibn Duqmāq, *Kitāb al-Intiṣār li-wāṣiṭat 'iqd al-amṣār* / K. Vollers, *Description de l'Égypte, par Ibn Doukmak, publiée d'après le manuscrit autographe conservé à la Bibliothèque khédiviale, Le Caire, Imprimerie Nationale, 1893* (վերահրատարակությունը՝ Գույնի՝ *Kitāb al-Intiṣār li-wāṣiṭat 'iqd al-amṣār*, Bayrūt, սուանց թվականի): St' u նաև S. Denoix, *Décrire le Caire: Fustat-Misr d'après Ibn Duqmāq et Maqrizi: l'histoire d'une partie de la ville du Caire d'après deux historiens égyptiens des XIVe-XVe siècles*, Institut français d'archéologie orientale du Caire, Le Caire, 1993:

¹⁹⁸ Ibn Duqmāq, *Nuzhat al-anām fi tāriḥ al-Islām*, bi-taḥqīq Samīr Ṭabbāra, al-Maktaba al-'Aṣriyya, Ṣaydā-Bayrūt, 1999.

¹⁹⁹ Ibn Duqmāq, *Nuzhat al-anām*, s. 15; C. Brockelmann, *History of the Arabic Written Tradition*, vol. 2, tr. by J. Lameer with a Preface by J.J. Witkam Brill, Leiden, p. 52.

²⁰⁰ Ibn Duqmāq, *Al-Ḡawhar al-ṭamīn fi siyar al-hulafā' wa-l-mulūk*, bi-taḥqīq Sa'īd 'Abd al-Fattāḥ 'Āšūr, Ḡāmi'at Umm al-Qurā, Makka, 1982 և Գույնի՝ 2 թ., bi-taḥqīq Muḥammad Kamāl al-Dīn 'Izz al-Dīn 'Alī, Bayrūt, 'Ālam al-Kutub, 1985: Այս երկու հրատարակություն-ներից մեզ հասանելի է եղել առաջինը: Երկի՝ Մամլուքյան սուլթանության պատմությունն ընդ-գրկող երկրորդ մասի՝ Նախորդ երկու հրատարակություններից ութ տարով առաջ անցնող (մրեյն հիջրայի 805, այն է՝ 1402/1403 թ.) տարբերակ է՝ Al-Nafḥa al-miskiyya վերնագրով, հրատարակել է Ումար Աբդ ալ-Սալամ Քալմուրին: St' u Գույնի՝ *Al-Nafḥa al-miskiyya fi al-dawla al-turkiyya min kitāb al-Ḡawhar al-ṭamīn*, bi-taḥqīq 'Umar 'Abd al-Salām Tadmūrī, al-Maktaba al-'Aṣriyya, Ṣaydā-Bayrūt, 1999:

Մնվել և ապրել է Եգիպտոսում, որտեղ և ստացել է դասական կրոնական կրթություն՝ վաղ երիտասարդության տարիներին իրեն նվիրելով շաֆիական կրոնաիրավագիտություն (fiqh), ինչպես նաև Հադիսագիտություն ուսումնասիրելուն և դասավանդելուն: Սուլթան Բահրուկի օրոք՝ 1389 թ., նա արքունի դիվանագետի օգնական գրագրի (kātib al-dast) պաշտոն է ստացել, ինչը և կանխորոշել է նրա Հետագա գործունեության ուղղությունը՝ ընդհուպ մինչև մահը: Հատկանշական է, որ այդ ժամանակ սուլթանական դիվանատան գլխավոր քարտուղարը (kātib al-sirr) Հայտնի Իբն Փադլ Ալլահ ալ-Ումարիի գարմիկն էր²⁰¹:

Ալ-Կալիլաշանդին Հեղինակ է բազմաթիվ աշխատությունների՝ կրոնաիրավագիտության և adab-ի բնագավառներում²⁰², բայց նրա գլուխգործոցը Կաշիրի դիվանատանը նրա երկարամյա աշխատանքի արդասիքը դարձած գրագրության և քարտուղարության Հանրագիտարանային ձեռնարկն է՝ Şubh al-a'shā fī şinā'at al-inšā' («Կույրի լուսաբացը գրագրության արվեստում») վերնագրով²⁰³: Հենվելով ալ-Հալաբիի, ալ-Ումարիի, Իբն Նազիր ալ-Ջալի վերևում հիշված երկերի վրա՝ ալ-Կալիլաշանդին գրել է մամլուքյան պաշտոնական գրագրության ամենամեծ ու համապարփակ աշխատությունը: Նրանում Հեղինակը ժողովել է արքունի գրագրին անհրաժեշտ բոլոր գիտելիքներն ու օժանդակ նյութերը՝ սկսած դիվանատան գործունեությունից, գրագրության մեջ օգտագործվող թղթի, թանաքի և գեղագրության տեսակներից, տերմինաբանությունից, Մամլուքյան սուլթանության վարչական կառուցվածքի, կառավարման աստիճանակարգության և Հարա-

կից երկրների մասին աշխարհագրական տեղեկություններից մինչև պաշտոնական փաստաթղթերի տարատեսակների, դրանց առանձնահատկությունների, Հարևան երկրների տիրակալներին ուղարկվող պաշտոնական նամակների (այդ թվում Կիլիկիո Հայոց արքային ուղարկված)²⁰⁴, նրանց բանաձև-կաղապարների, միջազգային պայմանագրերի բազմաթիվ նմուշներ: Ալ-Կալիլաշանդին իր երկը Հարստացրել է Կաշիրի դիվանատան արխիվներից քաղված բազմաթիվ արժեքավոր վավերագրերով, որոնք օգնում են բացահայտելու մամլուքյան պաշտոնական դիվանագիտության և արարողակարգի բազմաթիվ թաքնված նրբերանգներ²⁰⁵:

Ալ-Կալիլաշանդիի ժամանակակիցն է մամլուքյան պատմագրության և ընդհանրապես միջնադարյան արաբախլամական պատմական մտածողության ամենակարկառուն ներկայացուցիչներից մեկը՝ Իբն Խալիլունը (մահ. 1406 թ.): Պատմիչ, պատմության փիլիսոփա-տեսաբան և կրոնաիրավագետ Իբն Խալիլունը ծնվել է 1332 թ. Մադրիբում՝ Թունիսում, որտեղ ստացել է դասական իսլամական կրթություն: Կյանքի մեծ մասն անցկացրել է ճամփորդություններում՝ վայելելով մուսուլմանական Արևմուտքի (Անդալուս, Մադրիբ) և Արևելքի (Մամլուքյան սուլթանություն) բազմաթիվ կառավարողների բարեհաճությունը՝ կարևոր դիրք ու բազմազան Հարգի պաշտոններ զբաղեցնելով նրանց արքունիքներում²⁰⁶:

Իբն Խալիլունը մամլուքյան շրջանի Հեղինակներից թերևս ամենաուսումնասիրվածն է: Նրա և նրա Հիմնարար աշխատության՝ Kitāb

²⁰¹ Ալ-Կալիլաշանդիի կյանքի և գործունեության մասին տե՛ս Քրիֆթոր Բոսվորթի հոդվածը «Իբն Կալիլաշանդիի կյանքի մասին»: Տե՛ս C.E. Bosworth, "Al-Kāshāhandī", in *EF*, vol. 4, p. 509-510, ինչպես նաև И.Ю. Крачковский, *Избранные сочинения*, т. 4, стр. 411-412 և Muḥammad Kamāl al-Dīn 'Izz al-Dīn, Abū al-'Abbās al-Qalqashandī mu'arriḥan, 'Ālam al-kutub, Bayrūt, 1990, §. 24-26:

²⁰² Մատենագրի մյուս երկերի մասին տե՛ս Անդ, §. 29-30; C.E. Bosworth, "Al-Kāshāhandī", pp. 509-511; Selections from Şubh al-A'shā by al-Qalqashandī, clerk of the Mamluk Court. Egypt. "Seats of Government" and "Regulations of the Kingdom", From Early Islam to the Mamluks, ed. by Heba El-Toudy and Tarek Galal Abdelhamid, Routledge, London and New York, 2017, pp. 10-13:

²⁰³ Al-Qalqashandī, Şubh al-a'shā fī şinā'at al-inšā', 14 ǧ., al-Maṭba'a al-amīriyya, al-Qāhira, 1913-1919.

²⁰⁴ Տե՛ս վերևում ծնրգ. 145:

²⁰⁵ Տե՛ս И.Ю. Крачковский, *Избранные сочинения*, т. 4, стр. 412; D. Little, "Historiography", p. 444; A. Broadbridge, *Diplomatic conventions*, pp. 105-107 և հասկապես 'Izz al-Dīn, Abū al-'Abbās al-Qalqashandī, §. 31-49: Գրագրության և քարտուղարության ներկայացուցիչի և նաև ալ-Կալիլաշանդիի որդին՝ Նաջմ ալ-Դին Մուհամադ իբն ալ-Կալիլաշանդին: Qalā'id al-ġumān («Մարգարտե ճանապարհ») վերնագիրը կրող այդ երկի կարևորության և ներկայացրած արժեքի վերջերս հիմնավոր անդրադարձ է կատարել Ֆրեդերիկ Բոդենը: Տե՛ս F. Bauden, "Like father, like son: The chancery manual (Qalā'id al-ġumān) of al-Qalqashandī's son and its value for the study of Mamluk diplomatics (ninth/fifteenth century) (Studia Diplomatica Islamica, I)", *Eurasian Studies*, vol XI, 2013, pp. 181-228:

²⁰⁶ M. Talbi, "Ibn Khaldūn", in *EF*, vol. 3, pp. 825-828.

al-'Ibar-ի («Խրատական օրինակների գիրք»)»²⁰⁷ նկատմամբ արդի հետազոտողների այս աստիճանի մեծ հետաքրքրությունն պատճառը, սակայն, ամենևին էլ վերջինիս պատմագրական բացառիկ արժեքը չէ: Ընդհակառակը, որպես մամլուքյան պատմության սկզբնաղբյուր al-'Ibar-ը «շարձվյալ» երկ է, և եթե իրենից պատմագրական կարևորություն է ներկայացնում, ապա միայն և միայն մուսուլմանական Մադրիբի պատմության ուսումնասիրության համար: Երկի իրական արժանիքները նրա հայտնի նախաբանում՝ Al-Muqaddima-ում հեղինակի արտահայտած իր ժամանակի համար եզակի գաղափարներն են հասարակական զարգացման, քաղաքակրթությունների պատմական առաջընթացի, ղինաստիանների շրջափուլային փոփոխության և պետական իշխանությունների օրինաչափությունների վերաբերյալ: Բուն պատմության և նրա «Առաջարանի» միջև կապն այնքան թույլ է, որ երկրորդը կարելի է ընկալել որպես առանձին գործ: Մամլուքների պատմությանը վերաբերող մասերը շարադրելիս Իբն Խալդունը գերազանցապես հենվել է ալ-Նուվայրիի պատմության վրա՝ հավելյալ տեղեկություններ քաղելով նաև ալ-Ջազարիից և ալ-Յունինիից²⁰⁸:

Իբն Խալդունի բազմաթիվ աշակերտներից ամենաականավորն ալ-Մակրիզին (մահ. 1452 թ.) էր²⁰⁹: Ալ-Մակրիզին ծնվել է 1364 թ. Կահիրեում՝ Հորական կողմից ասորիքյան ծագում ունեցող ընտանիքում: Նրա պապը հայտնի հանրայինական մազհարի կրոնագետ ու muḥaddith էր Բաալբաքում: Հայրը, ով նույնպես հանրայինականության հետևորդ էր, վճռում է տեղափոխվել Կահիրե, որտեղ և ծնվում և իր կյանքի մեծ մասն է անցկացնում ապագա պատմիչը²¹⁰:

²⁰⁷ Ibn Ḥaldūn, *Al-'Ibar wa-dīwān al-mubtada' wa-l-ḥabār fi ayyām al-'Arab wa-l-Barbar*, 8 ց., bi-tahqīq Ḥalīl Šihāda wa-Suhayl Zakkār, Dār al-Fikr, Bayrūt, 2000-2001.

²⁰⁸ D. Little, *An Introduction*, pp. 75-76, ինչպես նաև նույնի «Historiography», p. 435.

²⁰⁹ S. F. Rosenthal, «Al-Maqrīzī», in *EP*, vol. 6, pp. 193-194; Šākir Muṣṭafā, *Al-Tārīḥ al-'Arabī wa-l-mu'arriḥūn: Dirāsa fi taṭawwur 'ilm al-tārīḥ wa-ma'rifaṭ riḡāliḥi fi al-Islām*, ց. 3, Dār al-'ilm li al-malāyīn, Bayrūt, 1990, ց. 140: Հմտ. R. Irwin, «Al-Maqrīzī and Ibn Khaldun, historians of the unseen», *MSR*, vol. 7.2, pp. 217-230 և A. Broadbridge, «Royal authority, justice, and order in society: The influence of Ibn Khaldūn on the writings of al-Maqrīzī and Ibn Taghribirdī», *MSR*, vol. 7.2, pp. 231-245; N. Rabbat, «Was al-Maqrīzī's *Khiṭaṭ* a Khaldūnian history?», *Der Islam*, vol. 89.2, 2012, pp. 120-123:

²¹⁰ Մասնագրի կյանքի ու գործունեության մասին մանրամասն տե՛ս մասնավորապես Muḥammad Kamāl al-Dīn 'Izz al-Dīn 'Alī, «Arba'at Mu'arriḥīn», ց. 157-176, ինչպես նաև

Մինչ պատմագրությանը նվիրվելն ալ-Մակրիզին վարել է ակտիվ հասարակական-քաղաքական գործունեություն: Ընկերական հարաբերություններ ունենալով մամլուքյան բարձր դասի ներկայացուցիչների հետ և վայելելով նրանց հովանավորությունը՝ նա բազմաթիվ հարգի պետական պաշտոններ է զբաղեցրել սուլթան ալ-Մալիք ալ-Ջահիր Բարկուկի (կառ. 1382-1389, 1390-1399 թթ.) և նրա որդու՝ ալ-Նասիր Ճարաջի (1399-1405, 1405-1412 թթ.) կառավարման տարիներին: Մանկավարժական և հոգևոր-կրոնական գործունեությունից զատ (նաղիս է դասավանդել Կահիրեի մազրասաներում, եղել է իմամ և խաաիք քաղաքի տարբեր մզկիթներում)՝ ալ-Մակրիզին զբաղվել է նաև ղիվանատանը (diwān al-inšā'), իսկ 1399 թ. և 1400 թ. մի կարճ ժամանակ զբաղեցրել է Կահիրեի muhtasib-ի («չափուկչոփ վերատեսուչ», «շուկաների վերակացու») բարձր պաշտոնը, որը երկու անգամ էլ ղիջել է մամլուքյան պատմագրության մյուս անվանի հեղինակությունը՝ իր կրտսեր ժամանակակից ալ-Այնիին (մահ. 1453 թ.): Այս վերջինի հետ հարաբերությունները շուտով այնքան լարվեցին, որ վերաճեցին ակադեմիական մրցակցության²¹¹:

Ալ-Մակրիզին հեղինակ է բազմաթիվ և տարբեր ժանրերի երկերի՝ ինչպես կարճաոտ մենագրությունների, այնպես էլ սովորահատոր ժամանակագրությունների և կենսագրական բառարանների, թեև նրա թողած հարուստ մատենագրական ժառանգությունից ամեն ինչ չէ,

նույնի՝ Al-Maqrīzī mu'arriḥan, 'Ālam al-kutub, Bayrūt, 1990, ց. 23-47; Muḥammad Muṣṭafā Ziyāda, *Al-Mu'arriḥūn fī Miṣr fī al-qarn al-ḥāmiṣa ašara al-milādī (al-qarn al-tāsi' al-ḥiḡrī)*, al-Qāhira, 1949, ց. 6-10, ինչպես նաև նույնի՝ «Tārīḥ hayāt al-Maqrīzī», *Dirāsāt 'an al-Maqrīzī (maǧmū'at abḥāṭ)*, al-Hay'a al-Miṣriyya al-'amma li al-ta'līf wa-l-naṣr, al-Qāhira, 1971; N. Rabbat, «Who was al-Maqrīzī? A Biographical Sketch», *MSR*, vol. 7.2, 2003, pp. 1-19 և արքեպիսկոպոսի այս հասոտն ընդհանրապես, ուն ամբողջովին նվիրված է ալ-Մակրիզին: Տե՛ս նաև F. Bauden, «Al-Maqrīzī», pp. 1074-1076, ինչպես նաև նույնի՝ «Al-Maqrīzī», in *Christian Muslim Relations: A bibliographical history, vol. 5 (1350-1500)*, Brill, Leiden-Boston, 2013, pp. 380-383 և նույնի՝ «Taḡī al-Dīn Aḥmad ibn 'Alī al-Maqrīzī», in *Medieval Muslim Historians and the Franks in the Levant*, ed. by Alex Mallett, E.J. Brill, Leiden-Boston, 2014, pp. 161-167:

²¹¹ Muḥammad Kamāl al-Dīn 'Alī, *Al-Maqrīzī mu'arriḥan*, ց. 42-44; A. Broadbridge, «Academic rivalry», pp. 85-107.

որ պահպանվել է: Պահպանված է նրա Հեղինակած Ֆատիմյան պատմությունը, որը կրում է Ittī'ūz al-hunafā' bi-akhbār al-a'imma al-Fātimīyyīn al-hūlafā' վերնագիրը: Հատկանշական է, որ սա Եգիպտոսի պատմության առանձնապես այս շրջանին նվիրված միակ ժամանակագրությունն է միջնադարյան մուսուլմանական պատմագրություն մեջ²¹²:

Ալ-Մակրիզիի պատմագրական ժառանգության թագը նրա՝ Այյուբյանների և Մամլուքների պատմությունը նվիրված երկն է՝ Kitāb al-sulūk li ma'rifat duwal al-mulūk-ը, որի մասին արդեն ակնարկել ենք վերևում: Այն, ըստ այդմ, ընդգրկում է Ֆատիմյանների կործանմանը հաջորդած մոտ երեք դարյա ժամանակաշրջանի՝ 1171-1441 թթ. պատմությունը: Kitāb al-sulūk-ը մեծ ճանաչում է ունեցել անգամ Հեղինակի կենդանության օրոք՝ Նույնիսկ Եգիպտոսի սահմաններից անդին: Հայտնի է, որ 1428 թ. Լենկ Թեմուրի որդու՝ Շահրուհի կողմից Կահիրե ուղարկված դեսպանները ինդրել են իրենց տրամադրել ալ-Մակրիզիի երկի մի օրինակ²¹³: Երկար ժամանակ այս երկը բացառիկ և անփոխարինելի աղբյուր է համարվել մամլուքյան պատմության ուսումնասիրության համար: Վերջին ժամանանակներում, սակայն, այդ շրջանի պատմության նորանոր աղբյուրների հրատարակությունը երևան է հանել ալ-Մակրիզիի պատմագրական «մերոլի» կարևորագույն թերությունը՝ իր օգտագործած աղբյուրները չհիշատակելու նրա զործելածը: Օրինակ, ինչպես Լիթթլը, Ամիտայը և վերջերս էլ Մասսուդն են ցույց տվել, Բահրի մամլուքների և Բուրջի մամլուքների վաղ շրջանի պատմությունը շարագրելիս նրա համար առանցքային աղբյուր ու ուղեցույց է ծառայել Իբն ալ-Ֆուրաթի Tārīḥ al-duwal wa-l-mulūk-ը²¹⁴: Բայց նա խուսափել է իր իրական աղբյուրը բացահայտելուց: Ըստ Բողենի՝ նրա օգտագործած «տեխնիկայի» բնութագրիչ հատկանիշը «տարբեր աղբյուրներից փաղված հաղորդումները միմյանց

հետ զուգորդելն ու սեփական բառերով վերաշարադրելն է»²¹⁵: Վկայություններն ամփոփելու, համառոտելու և, ինչպես Լիթթլն է մի առիթով ձևակերպում, «իր իսկ լեզվով վերաբաղարկելու»²¹⁶ նրա այս սովորությունը երբեմն անճշտությունների և հազորդումների իրական բովանդակության աղավաղման պատճառ է դարձել²¹⁷: Նույն ուսումնասիրողը մեկ այլ տեղում եղբահանգում է, որ քանի դեռ Kitāb al-sulūk-ը համեմատվում է ժամանակակից այլ պատմիչների տարեգրությունների հետ, ալ-Մակրիզին կշարունակի «սոսկ բանափաղ և մյուսների գործերը պահպանած հեղինակ» համարվել²¹⁸: Համենայն դեպս, անկախ ժամանակակից հետազոտողների քննադատական հայացքներից՝ Նույնիսկ այս շրջանի անցքերի առնչությամբ ալ-Մակրիզիի երկում քիչ չեն «այնպիսի հաղորդումները, որ չեն հանդիպում ոչ մի այլ աղբյուրում, և որոնց ծագումը շարունակում է անդժված մնալ»²¹⁹:

Իր ապրած ժամանակի պատմությունը շարագրելիս ալ-Մակրիզին հանդես է գալիս գերազանցապես որպես ինքնուրույն ու անկախ պատմիչ՝ հիմնվելով իր իսկ ժողոված տեղեկությունների և պատմագրական նյութի վրա²²⁰:

Հեղինակի մեկ այլ երկը՝ Al-Mawā'iz wa-l-i'tibār bi-dīkr al-ḥiṭaṭ wa-l-afā'ir-ը («Հորդորներ և խրատներ քաղամասերի և հուշարձանների նկարա-

²¹² P. Walker, "Al-Maqrīzī and the Fatimids", *MSR*, vol. 7.2, p. 3.
²¹³ A. Broadbridge, "Academic rivalry", p. 103; F. Bauden, "Al-Maqrīzī" (Christian-Muslim Relations), p. 383.
²¹⁴ D. Little, *An Introduction*, pp. 77-78; R. Amitai-Preiss, "Al-Maqrīzī as a Historian of the Early Mamluk Sultanate (or: Is al-Maqrīzī an Unrecognized Historiographical Villain?)", *MSR*, vol. 7.2, pp. 99-118; S.G. Massoud, *The chronicles*, pp. 49-53.

²¹⁵ F. Bauden, "Al-Maqrīzī", p. 1074.
²¹⁶ D. Little, "Analysis of the Relationship between Four Mamluk Chronicles for 737-45", *JSS*, vol. 19, 1974, p. 260.
²¹⁷ R. Amitai-Preiss, *Mongols*, p. 5 (Introduction). Կոնկրետ օրինակների համար տե՛ս D. Ayalon, "The Great Yāsa of Chingiz Khān: A Reexamination (Part C2). Al-Maqrīzī's Passage on the Yāsa under the Mamluks", *SI*, № 38, 1973, pp. 121-123; R. Amitai-Preiss, *Mongols*, p. 30, note 32. Նույն միտքն է արտահայտել նաև Իրվինը: Տե՛ս R. Irwin, "Mamluk history and historians", in *The Cambridge history of Arabic literature: Arabic literature in the post-classical period*, ed. by R. Allen and D. S. Richards, Cambridge University Press, 2006, p. 167.
²¹⁸ Տե՛ս D. Little, "Historiography", p. 437, ինչպես նաև նույնի՝ "A Comparison of al-Maqrīzī and al-'Aynī as historians of contemporary events", *MSR*, vol. VII/2, 2003, p. 207:
²¹⁹ L.S. Northrup, *From slave to sultan*, p. 52.
²²⁰ F. Bauden, "Al-Maqrīzī", p. 1074: Kitāb al-sulūk-ի և ժամանակակից մյուս պատմագրիչների երկերի համեմատական բնութայն մի հանի փորձեր գիտական գրականության մեջ արդեն իսկ նկատարկվել են: Տե՛ս I. Perho, "Al-Maqrīzī and Ibn Taghribirdī as historians of contemporary events", in *HIE*, pp. 107-120; D. Little, "A Comparison", pp. 205-215.

գրության համար»²²¹, պահաս հռչակ չունի, քան Al-Sulūk-ը: Այն ավելի շատ հայտնի է «Ալ-Խիտաա» անվանումով և նվիրված է ընդհանրապես Եզրիպտոսի և մասնավորապես Կահիրեի պատմատեղագրական նկարագրությանը: Kitāb al-sulūk-ի պես Al-Hiṭaṭ-ը նույնպես բուռն քննարկումների առարկա է արդի հետազոտողների շրջանում: Բայց եթե առաջինի դեպքում քննադատների տված գնահատականները չեն անցնում հեղինակի «մասնագիտական անագնություն կամ անբարեխղճության» սահմանը, ապա այս երկրորդի դեպքում ալ-Մակրիզիին հասցեագրված մեղադրանքները շատ ավելի լուրջ են, քանի որ խոսքն այստեղ գրագրության մասին է²²²:

Ալ-Մակրիզին հեղինակ է նաև երկու կենսագրական բառարանների: Դրանցից առաջինը՝ Al-Tārīḥ al-muqaffā al-kabīr («Համապարփակ պատմություն») վերնագրով, պարունակում է Եզրիպտոսի մուսուլմանական նվաճումից ի վեր մինչև իր ծնունդն ապրած «եռեղիներ» կենսագրություններ: Հայտնի է, որ ինքը՝ ալ-Մակրիզին, մտադիր է եղել բառարանի հատորների թիվը հասցնել 80-ի, բայց ցավոք մինչև իր մահը գործն ավարտին հասցնել չի կարողացել: Երկր պահպանված մասերը հրատարակել է Մուհամմադ ալ-Յալափին²²³: Մատենագրի հեղինակած մյուս կենսագրական բառարանը Durar al-'uqūd al-farīda fī tarāḡim al-'a'yān al-mufīda-ն է²²⁴: Նրանում հեղինակը ներառել է իր կյանքի օրոք մահացած հայտնի ժամանակակիցների ավելի քան 500 կենսագրական հոդվածներ²²⁵:

²²¹ St'ū al-Maqrīzī, *Al-Mawā'iz wa-l-i'tibār bi-dīkr al-ḥiṭaṭ wa-l-aṭār*, 2 ց., Bulāq, al-Qāhira, 1853-1854, ինչպես նաև Այման Գալաբ Սայյիդի նոր հրատարակությունը ակ'ս Գոյնի՝ bi-tahqīq Ayman Fu'ād Sayyid, 5 ց., Mu'assasat al-Furqān li al-turāṭ al-'arabī (Al-Furqān Islamic Heritage Foundation, London, 2002-2004):

²²² F. Bauden, "Maqriziana IX: Should al-Maqrīzī be thrown out with the bath water? The question of his plagiarism of al-Awḥādī's *Khīṭaṭ* and the documentary evidence", *MSSR*, vol. XIV, 2010, pp. 159-232. Հմտ. N. Rabbat, "Was al-Maqrīzī's *Khīṭaṭ* a Khaldūnian history?", p. 132, n. 56:

²²³ Al-Maqrīzī, *Kitāb al-Muqaffā al-Kabīr*, bi-tahqīq Muḥammad al-Ya'lāwī, 8 ց., Dār al-Ḡarb al-Islāmī, Bayrūt, 1991.

²²⁴ St'ū al-Maqrīzī, *Durar al-'uqūd al-farīda fī tarāḡim al-'a'yān al-mufīda*, ց. 1-2, bi-tahqīq Adnān Darwīṣ wa-Muḥammad al-Miṣrī, Dimašq, 1995 և մեկ այլ հրատարակություն ակ'ս Գոյնի՝ ց. 1-4, bi-tahqīq Maḥmūd al-Ḡalīlī, Dār al-Ḡarb al-Islāmī, Bayrūt, 2002:

²²⁵ Muḥammad Kamāl al-Dīn 'Izz al-Dīn, *Al-Maqrīzī mu'arriḥan*, ց. 93.

Ալ-Մակրիզիի մեղ հասած երկերից քիչ հայտնի է, բայց բացառիկ կարևորության Al-Ḥabar 'an al-bašar fī ansāb al-'Arab wa-nisb sayyid al-bašar («Մարդկության պատմություն» [ի մասնավորի] արաբների և ժողովուրդներից գլխավորապես ծագումնաբանության մասին») վերնագրով համընդհանուր պատմությունը՝ սկսած աշխարհի և մարդու արարումից²²⁶: Երկի նպատակը, ինչպես հեղինակն է պարզաբանում, արաբների աշխարհի մյուս ժողովուրդներից առանձնացնելն է (ḡinsuhā min sādīr al-aḡnās), նրանց արժանիքները ցուցանելը²²⁷: Al-Ḥabar 'an al-bašar-ի առաջին հատորներն ըստ այդմ նվիրված են արաբների նախախլամական պատմությանը՝ ծագումնաբանությանը, ավանդույթներին, հավատալիքներին: Այնուհետև նա անցում է կատարում այլ ժողովուրդներին՝ սլաոնների, հրեաների, հույների, լատինների և գոթերի (al-qūṭ) համառոտ պատմությանը²²⁸: «Մարդկության պատմության» վերջին մասը հակաքրիստոնեական բանավիճական գրականության իսկական նմուշ է: Նրանում խոսվում է մարգարեների մասին ընդհանրապես և Ղուրանում ու Աստվածաշնչում հանդիպող մարգարեների մասին մասնավորապես, Քրիստոսի և քրիստոնեության ծագման, նրա տարածման, հիմնական դոգմաների մասին՝ համեմելով սուր քննադատությամբ և համեմատական աղբյուր տանելով իսլամի հետ՝ որպես միակ ճշմարիտ հավատի: Ինչպես իր մյուս վերոնկարագրյալ երկերում, Al-Ḥabar 'an al-bašar-ում նույնպես ալ-Մակրիզին շատ հաճախ զլանում է իր ազբյուրները նշել²²⁹:

²²⁶ St'ū al-Maqrīzī, *Al-Ḥabar 'an al-bašar fī ansāb al-'Arab wa-nisb sayyid al-bašar*, bi-tahqīq Ḥālid Aḥmad al-Suwaydī wa-'Arīf 'Abd al-Ḡanī, 8 ց., Dār al-'arabiyya li al-mawsū'at, Bayrūt, 2013, ինչպես նաև F. Bauden, "Al-Maqrīzī" (Christian-Muslim Relations), p. 392 և Գոյնի՝ "Taḡī al-Dīn", p. 196-199: Ֆ. Բոդեն իր գործընկերների հետ ձեռնարկել է *Bibliotheca Maqriziana* շարք, որի նպատակն ալ-Մակրիզիի երկերի քաղվածական հրատարակությունն է Եսրի մի քանի հատորները՝ այդ թվում Al-Ḥabar 'an al-bašar-ից մի քանի հատվածների քաղվածությունն ընդգրկող երկու հատորն արդեն հրատարակվել են: St'ū Al-Maqrīzī's Al-Ḥabar 'an al-bašar, vol. V, Sections 1-2. The Arab Thieves, Critical Edition, Annotated Translation and Study by P. Webb, Brill, Leiden-Boston, 2019 և Al-Maqrīzī's al-Ḥabar 'an al-bašar, vol. V, Section 6. The Greeks, Romans, Byzantines, Franks, and Goths, Critical Edition, Annotated Translation and Introduction by M. Penelas, Leiden-Boston, 2020:

²²⁷ St'ū al-Maqrīzī, *Al-Ḥabar*, ց. 1, ց. 53, ինչպես նաև Muḥammad Kamāl al-Dīn 'Izz al-Dīn, *Al-Maqrīzī mu'arriḥan*, ց. 62-63:

²²⁸ F. Bauden, "Al-Maqrīzī" (Christian-Muslim relations), pp. 392-393.

²²⁹ Ան, pp. 393-394:

Ալ-Մակրիզիի ժամանակակիցն ու նրա ակադեմիական մրցակիցն էր ալ-Այնին (մահ. 1451 թ.) և սի ակնառու դեմք մամլուքյան պատմադրությունների հեղինակամարում:

Վերջինիս պատմագրական գլխավոր երկի՝ 'Iqd al-ğumān fi tāriḥi ahl al-zamān-ի («ժամանակի մարդկանց պատմության մարգարտյա մանյակ») արժեքը ճանաչված է մամլուքյան պատմագրության արդի հետազոտողների շրջանում: Չնայած դրան՝ ալ-Այնիի պատմության շուրջ կեսը դեռ մնում է չհրատարակված (տե՛ս ներքևում): Երկի կարևորությունը գրասերություն է հենց թեկուզ նրանում, որ ի տարբերություն, օրինակ, ալ-Մակրիզիի՝ այս մատենագիրը շատ հետևողական է իր աղբյուրները հղելու հարցում²³⁰:

Բազր ալ-Դին Մահմուդ ալ-Այնին ծնվել է 1360 թ. Այնթարում Հայտնի մտավորականի (ālim) և հանաֆիական մազհաբի դատավորի գāḏī-ի ընտանիքում: Հոր հետևողությունը ստացել է հիմնավոր կրոնական կրթություն: Բացի արաբերենից գերազանց տիրապետել է նաև թուրքերենին, ինչը բարենպաստ ազդեցություն է ունեցել նրա հետագա գործունեության վրա²³¹: Կրթությունը շարունակելու նպատակով ճամփորդել է Ասորիքում և աշակերտել Հայտնի աստվածաբանների և կրոնաիրավագետների²³²: Ալ-Այնիի կյանքը կտրուկ փոխվեց, երբ նա վերջնականապես հաստատվեց Կահիրեում: Կարճ ժամանակի ընթացքում կապեր հաստատելով մի շարք ազդեցիկ էմիրների հետ՝ նա աստիճանաբար շահեց կառավարող վերնախավի բարեհաճությունը: 1399-1401 թթ. ընթացքում ալ-Այնին իր մեկննաս էմիրների միջնորդությամբ ալ-Մակրիզիի փոխարեն թեև կարճ ժամանակով, բայց երկու անգամ նշանակվեց Կահիրեի muhtasib-ի («շախուշի վերահսկող», «շուկաների վերահսկող») բարձր պաշտոնում²³³: Ալ-Այնին

քանիցս զբաղեցրել է նաև nāzir al-ahbās-ի («բարեգործական ֆոնդերի վերահսկող») ոչ պակաս հեղինակավոր պաշտոնը: Ալ-Այնիի հասարակական-քաղաքական գործունեությունը կարծես թե փակուղիում Հայտնիից ալ-Մուալլադ Շեյխի կառավարման սկզբնական շրջանում: Բայց նա կարողացավ շահել նոր սուլթանի վստահությունը, և 1420 թ., որպես արքունական ղեկավարության ղեկավար, ուղարկվեց Կոնիա՝ Կարամանների հետ բանակցելու²³⁴: Բավական է նշել, որ հենց ալ-Մուալլադի կառավարման օրոք ալ-Այնին կառուցեց իր սեփական մադրասան²³⁵: Մամլուքյան ռազմավարչական վերնախավի հետ ալ-Այնիի հարաբերություններն անխափան շարունակվեցին նաև Հաջորդած սուլթանների օրոք: Նրա կառավարչական գործունեությունն իր բարձրակետին հասավ ալ-Մալիք ալ-Ջահիր Տատարի (al-Taṭār, 1421 թ.) և հատկապես ալ-Աշրաֆ Բարսբայի կառավարման տարիներին: Ալ-Այնին թերևս առաջինն էր, ով արժանացավ muhtasib-ի, nāzir al-ahbās-ի և հանաֆի գլխավոր գāḏī-ի պաշտոնները միաժամանակ զբաղեցնելու պատվին²³⁶: Բարսբայի հետ ալ-Այնիի հարաբերություններն այնքան մտերմական էին, որ սուլթանը շատ հաճախ խորհրդակցում էր նրա հետ կրոնաիրավագետական և անգամ պետական նշանակության հարցերի առնչությամբ որոշումներ կայացնելիս, խնդրում իր համար թարգմանել նրա երկերից, քանզի արաբերենին լավ չէր տիրապետում, թույլատրում էր իր փոխարեն պատվիրակություններ ընդունել և այլն²³⁷: Միայն ալ-Ջահիր Սայֆ ալ-Դին Ջահմակ սուլթանի գահակալման տարիներին է, որ ալ-Այնին աստիճանաբար գուրս մնաց արքունական շրջանակների ուշադրությունից և ազատվեց իր զբաղեցրած պաշտոններից: Նա վախճանվեց 1451 թ. և թաղվեց իր իսկ հիմնած դպրոցի (madrasa) տարածքում²³⁸:

Ալ-Այնիի պատմագրական ժառանգության պսակը նրա վերոհիշյալ համընդհանուր պատմությունն է՝ 'Iqd al-ğumān-ը: Հեղինակն իր երկի շարադրանքն սկսել է աշխարհի արարումից՝ հասցնելով մինչև

²³⁰ D. Little, *Introduction*, pp. 79-80.

²³¹ W. Marçais, "Al-'Aynī", in *EF*, vol. 1, pp. 790-791; A. Broadbridge, *Academic rivalry*, p. 86; P.M. Holt, "Literary offerings: a genre of courtly literature", in *The Mamluks in Egyptian politics and Society*, ed. by Thomas Philipp and Ulrich Haarmann, Cambridge University Press, Cambridge, 1998, p. 8.

²³² Al-'Aynī, 'Iqd al-ğumān fi tāriḥi ahl al-zamān, ǧ. 1, bi-taḥiqq Maḥmūd Rīzq Maḥmūd (fiṭṭawjūnī 'Iqd-MRM), Dār al-kutub wa-l-waṭā'iq al-qawmiyya, al-Qāhira, 2007, ǧ. 19-20.

²³³ A. Broadbridge, *Academic rivalry*, pp. 89-90; Muḥammad Muṣṭafā Ziyāda, Al-Mu'arriḥūn fi Miṣr fi al-qarn al-ḥāmis ašar al-milādī (al-qarn al-tāsīl al-ḥigri), al-Qāhira, 1949, ǧ. 20; al-'Aynī, 'Iqd-MRM, ǧ. 1, ǧ. 21.

²³⁴ St'ū ևն, ǧ. 22:

²³⁵ L. Ibrahim & B. O'Kane, "The Madrasa of Badr al-Dīn al-'Aynī and Its Tiled Mihrāb", *Annales Islamologiques*, vol. 24, 1988, pp. 253-268.

²³⁶ A. Broadbridge, *Academic rivalry*, p. 96; al-'Aynī, 'Iqd-MRM, ǧ. 1, ǧ. 24.

²³⁷ St'ū ևն, ǧ. 22:

²³⁸ Al-'Aynī, 'Iqd-MRM, ǧ. 1, ǧ. 24; A. Broadbridge, *Academic rivalry*, p. 106.

1446 թ.: Ընդ որում այս մեծածավալ ժամանակագրությունը միանգամից չի ծնվել: Ծագոնայցի Հետազոտող Նորուտակա Նակամաչիի Հետազոտությունները ցույց են տվել, որ ալ-Այնին նախ գրել է մի շատ ավելի փոքրածավալ երկ՝ Tārīḥ al-Badr fī awṣāf ahl al-aṣr վերնագրով, որի և նոր աղբյուրների հիմքի վրա այնուհետ վերաշարադրել է իր ժամանակագրությունն արդեն 'Iqd al-ḡumān վերնագրի տակ: Դրանից Հետո Հեղինակը պատրաստել է նաև իր պատմության Համառոտագրությունը²³⁹: Ալ-Այնիի այս երկերն է ընդօրինակել և զբանց հիման վրա իր Al-Tārīḥ al-Šihābī wa-l-qamar al-munīr fī awṣāf ahl al-aṣr wa-l-zamān կարճառոտ ժամանակագրությունն է գրել նրա կրտսեր եղբայրը՝ Շիհաբ ալ-Դին Ահմադ ալ-Այնին²⁴⁰:

Բահրի մամլուքների պատմությունը շարադրելիս մատենագիրն իրենից առաջ ապրած Հեղինակներից Հենվում է մասնավորապես Բայբարս ալ-Մանսուրիի, Աբու ալ-Ֆիդայի, Իբն Քասիրի, ալ-Նուվայրիի, ալ-Յուսուֆիի պատմագրական երկերի վրա, որոնց անունները գրկթե միշտ բարեխղճորեն հիշատակում է²⁴¹: Օրինակ, ալ-Յուսուֆիից ալ-Այնիի կատարած մեծաթիվ մեջբերումները թույլ են տալիս վերականգնել Nuzhat al-nāzīr-ի առանձին Հատվածներ, որից, ինչպես վերևում ենք նշել, մեզ է Հասել ընդամենը 1332-1338 թթ. ընդգրկող մի Հատված միայն: Երկի Հրատարակության գործի մեկնարկը տրվել է 1987 թ. Մուհամմադ Ամինի կողմից, և առաջինը լույս են տեսել Հենց Բահրի մամլուքյան շրջանն ամփոփող 4 Հատորներ: Երկարամյա դազարից Հետո նույն խմբագիրը կյանքի կոչեց 1308-1312 թթ.

շարադրանքը պարփակող ևս մի Հատոր: Նրա մահով, սակայն, անափարտ մնաց Հետագա Հատորների Հրատարակման գործը²⁴²:

Տարիներ առաջ Մահմուդ Ռիզկ Մահմուդը ձեռնամուխ է եղել նաև Այյուբյանների պատմությունը պարունակող մասերի Հրատարակությանը²⁴³: Սուլթան Բարկուկի (կառ. 1382-1389, 1390-1399 թթ.) կառավարման շրջանի լուսաբանման Համար 'Iqd al-ḡumān-ի 1382-1396 թվականներն ընդգրկող Հազորումներն է օգտագործել Իման Ումար Շուքրին²⁴⁴: Եվ վերջապես Աբդ ալ-Ռազիկ ալ-Տանտավի ալ-Կարմուտը Հրատարակել է 1421-1447 թթ. ընդգրկող պարբերությունը²⁴⁵:

Ալ-Այնիի երկի ձեռագրերը՝ այդ թվում 15 ինքնագիր Հատորները²⁴⁶, ցրված են աշխարհի՝ մասնավորապես Թուրքիայի զբաղարաններում: Մուհամմադ Ամինի գործի շարունակումը, որի Համար պարտ Հող կա ստեղծված Նորուտակա Նակամաչիի Հետազոտությունների շնորհիվ, իսկական նվեր կլինի մամլուքյան դարաշրջանի առաջնասիրողների Համար: Հաշվի առնելով ալ-Այնիի օգտագործած աղբյուրների բացառիկությունը՝ 1312-1375 թվականներն ընդգրկող Հատորներում, անշուշտ, ուշադրավ տեղեկություններ կգտնվեն նաև Հայ-մամլուքյան Հարաբերությունների վերաբերյալ, ինչու՞մ Համոզվելու առիթ մի անգամ արդեն ունեցել ենք²⁴⁷: Լիթթիի կարծիքով ալ-Այնիի «Մարգարտյա մանյակի» արժանիքները ցայտուն երևում են

²³⁹ N. Nakamachi, "Al-'Aynī's chronicles as a source for the Bahārī period", *Orient (The Society for Eastern Studies in Japan)*, vol. XL, 2005, p. 141; Խոյնի՝ "Four chronicles attributed to Bedruddīn Aynī", in *Uluslararası Bedruddin El-Ayni Sempozyumu ve II. Hadis İhtisas Toplantısı*, ed. by Recep Tuzcu, 2016, pp. 587-596; N. Nakamachi, "Al-'Aynī's Working Method for His Chronicles: Analysis of His Holograph Manuscripts", in *In the Author's Hand: Holograph and Authorial Manuscripts in the Islamic Handwritten Tradition*, ed. by F. Bauden, E. Franssen, Brill, Leiden-Boston, 2020, p. 277-299.

²⁴⁰ Տե՛ս Խոյնի՝ "Life in the Margins: Shihāb al-Dīn Aḥmad al-'Aynī, a None-Elite Intellectual in the Mamlūk Period", *Orient*, vol. 48, 2013, pp. 95-111:

²⁴¹ D. Little, *An Introduction*, p. 81; L. Northrup, *From slave to sultan*, p. 52; N. Nakamachi, "Al-'Aynī's chronicles", p. 141.

²⁴² Տե՛ս al-'Aynī, 'Iqd al-ḡumān fī tāriḥ ahl al-zamān, 4 ց., bi-tahqīq Muḥammad Muḥammad Amin, al-Hay'a al-misriyya al-'āma li-l-kitāb, al-Qāhira, 1987-1992 (Տեսայլու՝ 'Iqd-MMA), ինչպես նաև ց. 5, Maṭba'at Dār al-kutub wa-l-waṭā'iq al-qawmiyya, al-Qāhira, 2009:

²⁴³ Տե՛ս Խոյնի՝ 'Iqd-MRM, 4 ց., bi-tahqīq Maḥmūd Rizq Maḥmūd, Dār al-kutub wa-l-waṭā'iq al-qawmiyya, al-Qāhira, 2007-2010:

²⁴⁴ Al-Sulṭān Barqūq, mu'assis dawlat al-mamālīk al-ḡarākisa (784-801-1382-1398) min ḥilāl maḥṭūṭ 'Iqd al-ḡumān min tāriḥ ahl al-zamān li-Badr al-'Aynī, bi-tahqīq Imān 'Umar Šukrī, Maktabat Madbulī, al-Qāhira, 2002.

²⁴⁵ Al-'Aynī, 'Iqd al-ḡumān fī tāriḥ ahl al-zamān, 2 ց. (815-824 h.), bi-tahqīq 'Abd al-Rāziq al-Taṭṭāwī al-Qarmūṭ, al-Zahrā' li-l-'ilm al-'arabī, al-Qāhira, 1989:

²⁴⁶ N. Nakamachi, "Al-'Aynī's Working Method", p. 278.

²⁴⁷ Տե՛ս Գ. Դանիկեան, «Մալաթիայի գրառումը մամլուքների կողմից 1315 թ. և Կիլիկիան Հայաստանը», ՀԱ, քի 1-12, 2017, Վիեննա-Երևան, էջ 85-146: Իր երկում Մալաթիայի գրավման մասին ալ-Յուսուֆիի հաղորդումն է մեջբերել ալ-Այնին: 'Iqd al-ḡumān-ի Քելյազիի գրադարանի համապատասխան ձեռագրի (Veliyuddin 2394) հիշյալ հաղորդումը բովանդակող էներ խնդրել և շնորհակալությամբ ստացել ենք Նորուտակա Նակամաչիից:

Հատկապես ալ-Մակրիզիի ժամանակագրության հետ համեմատության մեջ, քանզի այն իր կառուցվածքային և օգտագործված աղբյուրները Հեղիու տեխնիկական բնութագրիչներով գերազանցում է Kitāb al-sulūk-ին²⁴⁸: Բուրջի մամուլության պատմության սկզբնական շրջանի իրադարձությունները շարագրելիս ալ-Այնին, ինչպես Սամի Մասսուդին է եզրակացնում, հենվել է Իբն Դուկմակի Nuzhat al-anām-ի վրա²⁴⁹: Մասսուդի կարծիքով 1407-1446 թթ. իրադարձությունների մասին խոսելիս ալ-Այնին արդեն հանդես է գալիս առավելապես որպես ինքնուրույն ու անկախ հեղինակ՝ «Մարգարտյա մանյակի» այս մասը կառուցելով հիմնականում իր հավաքած տեղեկությունների վրա: Բացի 'Iqd al-ġumān-ից ալ-Այնին հեղինակ է սուլթանների կենսագրություն-վարքագրությունների՝ ալ-Մուայյազ Շեյխին նվիրված Al-Sayf al-muhammād-ի²⁵⁰ և ալ-Մալիք ալ-Ջահիր Տատարին նվիրված Al-Rawḍ al-zāhir-ի²⁵¹:

Ժն դարի մամուլության պատմագրության մյուս հայտնի ներկայացուցիչն ալ-Այնիի և ալ-Մակրիզիի կրտսեր ժամանակակից և նրանց ակադեմիական մրցակից, հայտնի հաբիսագետ և կրոնաիրավագետ Իբն Հաջար ալ-Ասկալանին է (մահ. 1449 թ.): Նա ծնվել է 1372 թ. Եգիպտոսում՝ Հարուստ վաճառականական ընտանիքում: Իր

կյանքի գրեթե ողջ ընթացքում վայելել է մամուլության վերնախավի հարգանքն ու հովանավորությունը: Սուլթան ալ-Աշրաֆ Բարսալայի օրոք Իբն Հաջարը նշանակվել է Եգիպտոսի շաֆիական գլխավոր qāḍī-ի (qāḍī al-quḍāt) բարձր պաշտոնում, որը գրադեցրել է ընդհուպ մինչև իր մահը՝ շուրջ 21 տարի: Ալ-Ասկալանին մահացել է 1449 թ. Կահիրեում: Ըստ Իբն Թադրի Բիրդիի՝ նրա թաղման թափորում շուրջ 50 հազար մարդ կար. ներկա էին նաև սուլթան Ջակմակն ու խալիֆան²⁵²:

Չնայած Իբն Հաջարին կյանքի օրոք փառք են բերել կրոնաիրավագիտական երկերը²⁵³, բայց նա մեծ հետաքրքրություն է ցուցաբերել նաև պատմագրության նկատմամբ: «Նա նույնքան մեծ պատմագիր էր, որքան մեծ հաղիսագետ», - նրա մասին գրում է Շաքիր Մուստաֆան²⁵⁴: Ալ-Ասկալանին հեղինակ է Inbā' al-ġumr fi abnā' al-'umr («Հազարամեկ անգիտակների համար ժամանակի մարդկանց մասին») վերնագրով ժամանակագրության²⁵⁵, որն ընդգրկում է իր ծննդյան թվականից մինչև 1446 / 1447 թ. մամուլության պատմությունը: Իբն Հաջարն իր պատմությունը հյուսելիս օգտագործել է Իբն ալ-Ֆուրաքի, Իբն Դուկմակի, ալ-Մակրիզիի, ալ-Այնիի և այլոց երկերը²⁵⁶: Պետք է նշել, որ անգամ իր ժամանակի անցքերը նկարագրելիս Իբն Հաջարը շատ հաճախ հենվում է այլ հեղինակների վկայությունների վրա: Սա հավանաբար նշանակում է, որ ճիշտ կլինի այս երկն օգտագործել

²⁴⁸ St' u D. Little, *An Introduction*, p. 80; նույնի՝ “Analysis”, pp. 259-261 և հատկապես նույնի՝ “A Comparison”, pp. 205-215, ինչպես նաև N. Nakamachi, “Al-'Aynī's Working Method”, pp. 296-298:

²⁴⁹ St' u S. Massoud, *The chronicles*, p. 40-41: Հմմտ. Իբն Հաջար ալ-Ասկալանիի այն վկայությանն էտ, թե ալ-Այնին *արատ առ բատ ամբողջ էջեր է արտագրել նրանից (Իբն Դուկմակիի)*՝ երբեմն փոխառելով նաև կասկածելի թվացող տեղեկությունները: Նա անգամ կրկնել է վերջինիս կատարած ակնհայտ քերականական սխալները, ինչպես օրինակ՝ *ahā'a 'alā fiḥān: Šaurorihnāq է, որ Բազրն անգամ իրեն է վերագրել վկայություններ այն իրադարձությունների մասին, որոնց Իբն Դուկմակն է նշել. թե ականատես է եղել, և որոնք տեղի են ունեցել Եգիպտոսում, երբ ինքը [գեո] հետո Այնիսըում էր»:*

St' u Ibn Ḥaġar al-Asqalānī, *Inbā' al-ġumr fi abnā' al-'umr*, bi-tahqīq Ḥasan Ḥabašī, ց. 1, al-Qāhira, 1969, ց. 4-5: Նույնը տե՛ս նաև F. Rosenthal, *A History*, p. 356, n. 3 (թարգմանությունը), p. 583 (արաբերեն բնագիրը):

²⁵⁰ Al-'Aynī, *Al-Sayf al-Mufannad fi sirat al-Malik al-Mu'ayyad 'Šayḥ al-Mahmūdī*, bi-tahqīq Fahīm Šaltūt, Dār al-Kitāb al-'Arabī, al-Qāhira, 1967.

²⁵¹ Նույնի՝ *Al-Rawḍ al-zāhir fi sirat al-Malik al-Zāhir 'Tatar*, bi-tahqīq Hans Arnst, Dār ihyā' al-kutub al-'arabiyya, al-Qāhira, 1962: Ինչպես ետևում է, ալ-Այնին այս *sira*-ի վերնագիրը փոխառել է Իբն Աբդ ալ-Ջաֆրիից: St' u նաև D. Little, “A Comparison”, p. 211 և հատկապես P. Holt, “Literary offerings”, pp. 8-12:

²⁵² Իբն Հաջար ալ-Ասկալանիի կյանքի և գործունեության մասին ավելի հանգամանակից տե՛ս հատկապես Muḥammad Kamāl al-Dīn 'Izz al-Dīn, *Al-Tārīḥ wa-l-manḥaġ al-tārīḥ li-ibn Ḥaġar al-'Asqalānī*, Dār al-Iqrā', Bayrūt, 1986, ց. 61-186, ինչպես նաև Ֆ. Ռոզենտայի հոդվածն Խալաֆի հանրագիտարանում “Ibn Ḥaġar al-Asqalānī”, in *EF*, vol. 3, pp. 776-778: Մասուրը նույնպես հղում է այս հոդվածը, բայց սխալ է նշում ոչ միայն հանրագիտարանի հաստիքը, այլև հոդվածի հեղինակին՝ շփոթելով հաջորդ հոդվածի հետ: St' u S. Massoud, *The Chronicles*, p. 53, note 167: Իբն Հաջարի մասին տե՛ս նաև A. Broadbridge, “Academic rivalry”, pp. 85-107:

²⁵³ Խոսքը մասնավորապես ալ-Բուխարիի *Šahīḥ*-ի մեկնության՝ *Al-Fath al-Bārī*-ի մասին է, որն Իբն Հաջարի և ալ-Այնիի փոխադարձ անհանդուրժողականության պատճառներից մեկն է գարծել: Ալ-Մակրիզիի *Kitāb al-sulūk*-ի հետ մեկտեղ այս երկն այն երկու երկերից մեկն էր, որոնք Անի Քեմուրի օրդի Շահաբուդդին 1428 թ. խմբել էր մամուլյան իշխանություններից:

²⁵⁴ Š. Muṣṭafā, *Al-Tārīḥ al-'Arabī*, ց. 3, ց. 152.

²⁵⁵ Ibn Ḥaġar, *Inbā' al-ġumr fi abnā' al-'umr*, bi-tahqīq Ḥasan Ḥabašī, 4 ց. 1, al-Qāhira, 1969-1998.

²⁵⁶ St' u Անդ, ց. 1, ց. 3-5:

միայն ժամանակակից մյուս մամլուքյան սկզբնաղբյուրներին զուգահեռ: Ինչպես Սամի Մասուդն է նկատում, *Inbā' al-ḡumr-nuḡ* շատ են տարեթվերի անճշտությունները, կրկնությունները, այն զուրկ է շարադրանքի հստակ, կանոնակարգված տրամաբանությունից²⁵⁷:

Իրն Հաջարի գրչին է պատկանում նաև *Al-Durar al-kāmina fi a'yān al-mi'a al-tāmina* («Քաֆնված մարգարիտներ ութերորդ հարյուրյակի երևելիների վերաբերյալ») վերնագրով ընդարձակ կենսագրական բառարանը²⁵⁸, որը, ինչպես վերնագիրն է հուշում, պարունակում է հիջրայի Ը դարում վախճանված ինչպես եգիպտացի, այնպես էլ ասորիքցի ազնվիքան 5200 երևելի մուսուլմանների մասին կենսագրական հոդվածներ: Քանի որ իրն Հաջարը ծնվել է 1372 թ., հասկանալի է, որ *Al-Durar*-ը մեծամասամբ կառուցված պիտի լինի նրանից առաջ դրված այլ կենսագրական բառարանների՝ առանձնապես *ալ-Սաֆադի* *Al-Wāfi*-ի վրա²⁵⁹:

Բուրջի մամլուքյան շրջանի արարակեղու պատմագրության հաջորդ ակնառու ներկայացուցիչն Աբու *ալ-Մահասին* իրն *Թաղրի Բիր-դին* (մահ. 1470 թ.) է: Նա ծնվել է մոտ 1410 թ. *Կահիրեում*՝ բարձրաստիճան մամլուք պաշտոնյայի ընտանիքում²⁶⁰: *Awlād al-nās*-ի ներկայացուցիչ լինելով՝ իրն *Թաղրի Բիր-դին* մեծ հեղինակություն ու կայեր ուներ ինչպես մամլուքյան վերնախավի, այնպես էլ մտավորականության շրջանակներում: Հիմնավոր կրթություն ստացած և արբերներից բացի ազատ տիրապետելով նաև թուրքերենին՝ նա սկսել է զբաղվել հասարակական-քաղաքական կտրիվ գործունեությամբ: Անձամբ ծանոթ լինելով *ալ-Մուայյադ Շեյխ*, *Բարսայ*, *Ջակմակ* և *Խուշկադամ սուլթաններին* և վայելելով նրանց հովանավորությունը՝

²⁵⁷ S. Massoud, *The Chronicles*, pp. 54-60.

²⁵⁸ Ibn Ḥaḡar, *Al-Durar al-kāmina fi a'yān al-mi'a al-tāmina*, bi-tahqīq Sālim al-Karnakāwī, ց. 1-4, Ḥaydarābād, 1929-1931.

²⁵⁹ D. Little, "Historiography", p. 442.

²⁶⁰ Կենսագրական տեղեկությունների համար տե՛ս W. Popper, "Abū al-Mahāsīn Taghrībīrdī", in *EF*, vol. 1, p. 138; Ibn Tagrī Birdī, *Al-Manhal al-ṣāfi wa-l-mustawfi ba'da al-Wāfi*, ց. 1, bi-tahqīq Muḥammad Muḥammad Amīn, al-Hay'a al-Miṣriyya al-Āmma li-l-Kitāb, al-Qāhira, 1984, ց. 5-7 (Taḡdīm Sa'īd 'Abd al-Fattāh 'Aṣūr); Š. Muṣṭafā, *Al-Tārīḥ al-'Arabī*, ց. 3, ց. 169; Ibn Tagrī Birdī, *Ḥawādīṭ al-duḥūr fi maḡā al-ayyām wa-l-šuhūr*, bi-tahqīq Muḥammad Kamāl al-Dīn 'Izz al-Dīn, 'Ālam al-Kutub, 1990, Bayrūt, ց. 13-26; M.M. Ziyāda, *Al-Mu'arriḥūn*, ց. 26-32; S. Massoud, *The chronicles*, p. 60-61:

նա ազատ ելումուտ ուներ արքունիք²⁶¹: Հայտնի է, որ նա սկսել է հետաքրքրվել պատմագրությունում, երբ լսել է, որ *ալ-Այնին սուլթան Բարսայի* խնդրանքով իր երկերն է ընթերցում նրա համար²⁶²: Բայց և այնպես, իրն *Թաղրի Բիր-դին* պատմիչի ձևավորման վրա ամենամեծ ազդեցությունը թողել է *ալ-Մակրիզին*, ում նա աշակերտել է: *Ալ-Մակրիզի* և *ալ-Այնի* մահից հետո իրն *Թաղրի Բիր-դին* արդեն մամլուքյան եգիպտոսի ամենանշանավոր պատմիչն էր²⁶³: Աբու *ալ-Մահասին*ը հեղինակ է երկու ժամանակագրությունների՝ *Al-Nuḡūm al-zāhira fi mulūk Miṣr wa-l-Qāhira* («Եգիպտոսի և Կահիրեի առհասարակ փայլուն աստղերը») և *Ḥawādīṭ al-duḥūr fi maḡā al-ayyām wa-l-šuhūr* («Ժամանակների անցումը ըստ օրերի և ամիսների հերթագայությամբ») վերնագրերով²⁶⁴:

Al-Nuḡūm al-zāhira-ն եգիպտոսի ամբողջական պատմությունն է՝ «գրած նրա իսլամական նվաճումից ընդհուպ մինչև 1468 թվականը: Իրն *Թաղրի Բիր-դին*, նշում է, որ ինքն իր «պատմությունը» գրել է իր ընկերոջ՝ սուլթան Ջակմակի որդի *Մուհամմադի* համար²⁶⁵: Այս երկում պատմական նյութի շարադրանքը, ինչպես *Լիթթի*ն է մատնանշում, համապատասխան չէ դասական տարեգրության սկզբունքներին: Այն, ըստ էության, դինաստիական պատմություն է, թեև իրազարժությունների ներկայացման ժամանակագրական հաջորդականությունը պահպանված է բոլոր կառավարողների իշխանության տարիների պատմությունը ներկայացնելիս²⁶⁶: Մամլուքյան պատմու-

²⁶¹ D. Little, "Historiography", p. 439; Ibn Tagrī Birdī, *Al-Manhal*, ց. 1, ց. 7.

²⁶² M.M. Ziyāda, *Al-Mu'arriḥūn*, ց. 29-30; I. Perho, "Al-Maqrīzī and Ibn Taghrī Birdī as historians of contemporary events", *HJE*, p. 108, ինչպես նաև *Նույնի* "Ibn Taghrībirdī's Voice", in *Studia Orientalia*, vol. 114 (Travelling through Time. Essays in honour of Kaj Öhrnberg), ed. by Sylvia Akar, Jaakko Hämeen-Anttila & Inka Nokso-Koivisto, Helsinki, 2013, pp. 135-145.

²⁶³ W. Popper, "Abū al-Mahāsīn", ց. 138; M.M. Ziyāda, *Al-Mu'arriḥūn*, ց. 26, 30.

²⁶⁴ Ibn Tagrī Birdī, *Al-Nuḡūm al-zāhira fi mulūk Miṣr wa-l-Qāhira*, 16 ց., bi-tahqīq Muḥammad Ḥusayn Šams al-Dīn, Dār al-kutub al-'ilmiyya, Bayrūt, 1992; *Նույնի* *Ḥawādīṭ al-duḥūr fi maḡā al-ayyām wa-l-šuhūr*, 2 ց., bi-tahqīq Muḥammad Kamāl al-Dīn 'Izz al-Dīn, 'Ālam al-kutub, 1990.

²⁶⁵ Š. Muṣṭafā, *Al-Tārīḥ al-'Arabī*, ց. 3, ց. 170-171.

²⁶⁶ D. Little, *An Introduction*, p. 87, ինչպես նաև *Նույնի* "Historiography", p. 439; Š. Muṣṭafā, *Al-Tārīḥ al-'Arabī*, ց. 3, ց. 171.

թյունը շարադրելիս նա օգտագործել է Բայբարս ալ-Մանսուրիի, ալ-Նուվայրիի, ալ-Ջահարիի, ալ-Յունիսիի, ալ-Ջազարիի, Իբն Քասիրիի, ալ-Յուսուֆիի, Իբն Դուլմահիի, ալ-Մակրիզիի և այլոց երկերը, որոնցից շատերին նա հաճախ հղում է, թեև նույնքան հաճախ անփութորեն և կամ միտումնաբար մի հեղինակի վկայությունը վերադրում է մեկ ուրիշին, երբեմն էլ անհարկի ու անհիմն հավելումներ անում նրանց հաղորդումներին: Այս հանգամանքները հաշվի առնելով է, որ Լիթթլին Al-Nuḡūm al-zāhira-ն գոնե սրպես ալ-Մալիք ալ-Նասիրի կառավարման շրջանի համար «կասկածելի արժեքով սկզբնաղբյուր» է որակում²⁶⁷: Իր մյուս երկում Իբն Թադրի Բիրզին պատմագրություն իր «նորարարական ոճից» վերստին անցում է կատարում դեպի դասական տարեգրություն: Սրա պատճառը հավանաբար այն է, որ Hawādīt al-duhūr-ը զբվել է որպես ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk-ի շարունակություն: Այն, հետևաբար սկսվում է 1441 և ավարտվում 1469 թվականի իրադարձություններով: Թեև այս նույն շրջանը զբեթե ամբողջությամբ ներառված է նաև վերը հիշատակված Al-Nuḡūm-ում, այնուհանդերձ Hawādīt al-duhūr-ում 1441-1469 թթ. իրադարձությունները շատ ավելի հանգամանալից են ներկայացված²⁶⁸:

Բացի այս երկու ժամանակագրություններից՝ Իբն Թադրի Բիրզիի զրչին է պատկանում նաև Al-Manhal al-ṣāfi wa-l-mustawfi ba'da al-Wāfi («Վճիտ աղբյուր որպես Al-Wāfi-ի լրացում») կենսագրական բառարանը²⁶⁹: Վերնագիրը հուշում է, որ այն զբվել է որպես ալ-Սաֆազիի երկի լրացում և շարունակություն: Այն ընդգրկում է Մամլուքյան սուլթանությունից հիմնադրման ժամանակներից մինչև 1458 թ. մահացած մոտ երեք հազար ականավոր քաղաքական, ռազմավարչական գործիչների, գիտնականների, մտավորականների և այլ երևելիների մասին կենսագրական հոդվածներ²⁷⁰:

²⁶⁷ D. Little, *An Introduction*, p. 89-92.

²⁶⁸ Տե՛ս նույնի «Historiography», p. 439:

²⁶⁹ Ibn Tagrī Birdī, *Al-Manhal al-ṣāfi wa-l-mustawfi ba'da al-Wāfi*, 13 ց., bi-tahqīq Muḥammad Muḥammad 'Amīn, al-Hay'a al-Miṣriyya al-'Āmma li-l-Kitāb, al-Qāhira, 1984-2009.

²⁷⁰ M.M. Ziyāda, *Al-Mu'arriḥūn*, §. 32-33.

Կենսագրական մի ավելի ընդարձակ բառարանի հեղինակ է Աբու ալ-Խայր Մուհամմադ Իբն Ռահման ալ-Սախավին (մահ. 1497 թ.): Կրոնական գործիչների ու մտավորականների (ulāmā') հայտնի ընտանիքից լինելով ալ-Սախավին ստացել է դասական կրոնական կրթություն²⁷¹: Նա շարունակել է ուսումնասիրել իսլամական գիտություններ՝ հատկապես հաղխագիտություն, երբ աշակերտել է Իբն Հաջար ալ-Ասկալանիին: Հետևաբար, բնական է, որ նրա թողած մատենագրական ժառանգության մի մասը կրոնական թեմաներով են: Իսկ նրա պատմագրական երկերից արժանահիշատակ է Al-Tibr al-masbūk fi ḡayl al-Sulūk-ը («Չուլածո ոսկի որպես Al-Sulūk-ի շարունակություն»), որն ալ-Մակրիզիի Kitāb al-sulūk-ի շարունակությունն է և ավարտվում է Հիջրայի 857 թվականի (1453 թ.) իրադարձություններով²⁷²: Մատենագիրը մի շարունակություն էլ զբվել է ալ-Ջահարիի Tārīḥ duwal al-Islām երկի համար²⁷³:

Ալ-Սախավիի հեղինակությունը կապված է երկու այլ աշխատությունների հետ՝ Al-Ḍaw' al-lāmi' li-ahl al-qarn al-tāsi' («Պայծառ լույս Թ դարի մարդկանց համար») ²⁷⁴ և Al-l'ān bi-tawbīḥ li-man ḡamma ahl al-tārīḥ («Պատմագիրներին նախատողների հրապարակային քննադատություն») ²⁷⁵ վերնագրերով: Նրանցից առաջինն ընդարձակ կենսագրական բառարան է՝ Հիջրայի Թ դարի (Ժե դար) երևելիների ավելի քան 12.000

²⁷¹ Հեղինակի մասին կենսագրական տեղեկությունների համար տե՛ս Անդ, §. 39-43; C.F. Petry, "Al-Sakhāwī", in *EP*, vol. 8, pp. 881-882, ինչպես նաև D. Little, "Historiography", p. 443; Հմմտ. S. Massoud, *The chronicles*, p. 65:

²⁷² Al-Sahāwī, *Kitāb al-Tibr al-masbūk fi ḡayl al-Sulūk, bi-murāḡa'at Sa'īd 'Abd al-Fattāḥ 'Āṣūr*, 4 ց., Dār al-kutub wa-l-waḡā'iq al-qawmiyya, al-Qāhira, 2002-2007.

²⁷³ M.M. Ziyāda, *Al-Mu'arriḥūn*, §. 43-44. Այն սկսվում է 1345 թ. և ավարտվում 1493 թ. իրադարձությունների շարադրմամբ: Տե՛ս al-Sahāwī, *Waḡīz al-kalām fi al-ḡayl 'alā Duwal al-Islām, bi-tahqīq Baṣṣar 'Awwād Ma'rūf, Mu'assasat al-Risāla, Bayrūt*, 1995.

²⁷⁴ Տարբինակ է, որ հեղինակը նաև իր կենսագրությունն է ներառել բառարանում: Հատկանշական է նաև, որ բառարանի վերջին գրված նվիրված է մուսուլման երեկի կամանց կենսագրությունների (Kitāb mu'ḡam al-nisā'):

²⁷⁵ Անգլերեն բարձրագույնը տե՛ս F. Rosenthal, *A history*, pp. 262-529: Ֆ. Ռոզենտալի այս ուսումնասիրության արարելն բարձրագույնը և երկի բնագրի հրատարակությունը տե՛ս al-Sahāwī, *Al-l'ān bi-tawbīḥ li-man ḡamma ahl al-tārīḥ, tarḡamat Ṣāliḥ Aḥmad 'Alī, Mu'assasat al-Risāla, Bayrūt*, 1986:

կենսագրական հոգվածներով: Երկրորդը պատմություն յուրատեսակ «նկարազարդում» է, որում հեղինակը քննական հայացք է դրել «պատմագիտությանը» որպես կրոնական գիտությունների օժանդակ գիտակարգի: Երկուսն ալ-Մախավիին փորձել է սահմանել *tārīḥ*-ի առարկան, մատնանշել նրա օգտակարությունը, մատնանշել պատմագիրների անհրաժեշտ որակները, նրանց նպատակները և այլն: Նա այնուհետև քննական հայացք է դրել իրենից առաջ ապրած և իր ժամանակակից պատմիչների պատմագրական երկերին, նրանց որդեգրած պատմագրական մեթոդներին՝ չխորչելով սուր քննադատություններից, որոնց հաճախակիությունը ստիպում է գգուշություն մոտենալ դրանց²⁷⁶:

Ալ-Մախավիի կրտսեր ժամանակակիցն ու նրա ակադեմիական մրցակիցը՝ մասնավորապես հաղխագիտության բնագավառում, Ջալալ ալ-Դին ալ-Սուլուտին (մահ. 1505 թ.) էր: Հարյուրավոր բազմաժանր (կրոնաիրավագիտություն, հաղխագիտություն, թափսիք (Ղուրանի մեկնություն), լեզվաբանություն, աշխարհագրություն, պատմություն և այլն) երկերի հեղինակ ալ-Սուլուտինն հաճախ համարում են ամենաբեղմնավոր ստեղծագործական ժառանգություն թողած մուսուլման հեղինակ²⁷⁷: Նրա պատմագրական բնույթի երկերից են *Tārīḥ al-ḥulafā'*-ը («Խալիֆաների պատմություն»)՝²⁷⁸ և *Ḥusn al-muḥāḍara fī tārīḥ Miṣr wa-l-Qāhira*-ն («Պատշաճ դասախոսություն Եգիպտոսի և Կահիրեի պատմության վերաբերյալ»)՝²⁷⁹: Սրանցից առաջինն Օմայյան և

²⁷⁶ C.F. Petry, "Al-Sakhāwī", p. 882:

²⁷⁷ St' u E. Geoffroy, "Al-Suyūfī", in *IEP*, vol. 9, p. 913 և M.J. Saleh, "Al-Suyūfī and his works: their place in Islamic scholarship from Mamluk times to the present", *MSR*, vol. 5, 2001, p. 73: Կենսագրական տեղեկությունների համար այս երկու հոդվածներից բացի տե՛ս նաև M.M. Ziyāda, *Al-Mu'arrifūn*, §. 56-60:

²⁷⁸ Առարկան մի հրատարակություն տե՛ս վերևում՝ ձևագր. 57: Անգլերեն թարգմանությունը տե՛ս *History of the caliphs by Jalal'ud-dīn a's-Suyūfī*, translated from the original Arabic by Major H. S. Jarrett, J. W. Thomas, Baptist Mission Press, Calcutta, 1881:

²⁷⁹ St' u **Նույնի** *Ḥusn al muḥāḍara fī tārīḥ Miṣr wa-l-Qāhira*, bi-taḥqīq Muḥammad Abū al-Faḍl Ibrāhīm, 2 ց., Dār al-ihyā' al-kutub al-'arabiyya, al-Qāhira, 1968: St' u նաև **И.Ю. Крачковский**, *Избранные сочинения*, т. 4, стр. 483-484:

Աբբասյան խալիֆաների պատմություն է, երկրորդը՝ Եգիպտոսի մահին պատմական, տեղագրական-աշխարհագրական տեղեկությունների, գանազան այլ փաստերի ժողովածու:

Մամլուքյան պատմագրության վերջին խոշոր դեմքն ալ-Սուլուտինի աշակերտ Մուհամմադ իբն Ահմադ իբն Իյասն է (մահ. 1524 թ.), ով ականատես է եղել Սուլթանություն մայրամուտին ու կործանմանը և Ասորիքում ու Եգիպտոսում օսման թուրքերի տիրապետության հաստատմանը: Ինչպես Իբն Թալրի Բիրդին, նա նույնպես մամլուք էմիրի որդի էր: *Awlād al-nās* սոցիալական խավի ներկայացուցիչ լինելով՝ Իբն Իյասնը բավական ապահովված էր, ինչը նրան հնարավորություն էր տալիս ամբողջությամբ նվիրվել պատմագրությանը: Հայտնի մամլուքի որդի լինելով՝ Իբն Իյասնը որոշակի հեղինակություն էր վայելում կառավարող վերնախավի շրջանում, ինչը նրան հնարավորություն էր տալիս ազատ մուտք ունենալ Սուլթանության արքունիք²⁸⁰: Նրա պատմությունը՝ *Badā'ī al-zuhūr fī waqā'ī al-duhūr* վերնադրով («Եզակի ծաղիկներ դարերի իրադարձությունների մասին»)՝²⁸¹, անփոփառի ներքին աղբյուր է Մամլուքյան դինաստիայի վերջին տարիների պատմության համար: Դրան հակառակ՝ Սուլթանության առաջին դարի պատմության համար Իբն Իյասնի երկը ոչ այնքան փստահելի աղբյուր է: Նորթրաֆն ուշադրություն է հրավիրել այն փաստի վրա, որ երկուսն շատ են (զուտ կալավունի կառավարման շրջանի կարևորագույն իրադարձությունների հետ կապված) ժամանակագրական շփոթներն ու անճշտությունները²⁸²: *Badā'ī al-zuhūr*-ը գերազանցապես չյուսված է նախորդ սերնդի պատմիչների երկերի՝ մասնավորապես ալ-Մակրիզիի *Kitāb al-sulūk*-ի վրա, ինչպես վերջերս եզրակացրել է Սամի Մասսուդը²⁸³:

²⁸⁰ Հեղինակի մասին կենսագրական մանրամասն տեղեկությունների համար տե՛ս M.M. Ziyāda, *Al-Mu'arrifūn*, §. 46-55 և W.M. Brinner, "Ibn Iyās", in *IEP*, vol. 3, pp. 812-813, ինչպես նաև D. Little, "Historiography", pp. 440-441:

²⁸¹ Ibn Iyās, *Badā'ī al-zuhūr fī waqā'ī al-duhūr*, ց. 1.1, bi-taḥqīq Muḥammad Muṣṭafā, Dār ihyā' al-kutub al-'arabiyya, al-Qāhira, 1975.

²⁸² L. Northrup, *From slave to sultan*, pp. 54-55. Նրանից առաջ նույնպիսի եզրակացության է հանգել նաև Լիթլը: St' u D. Little, *An Introduction*, p. 94:

²⁸³ S. Massoud, *The Chronicles*, p. 70.

Իրն Իյասով փակվում է մամլուքյան պատմագրական հարուստ գրականության դարաշրջանը և ընդհանրապես «մեծ ժամանակագրությունների» ավանդույթը միջնադարյան արաբական պատմագրության մեջ, որ պիտի վերածնվեր միայն ժԸ դարում՝ հանձին ալ-Ջարաթիթի (մահ. 1825 թ.)²⁸⁴: Հարկ է նշել, որ մամլուքյան պատմագրական գրականությունն այս ներածական ակնարկում ներկայացված հեղինակներով և երկերով բնավ չի սահմանափակվում: Դեռ մոտ մեկ տասնյակի հասնող եգիպտացի և ասորիքցի պատմիչներ էլ կան, որոնք Կիրիկյան Հայաստանի պատմության ուսումնասիրության համար ինչ-որ արժեք են ներկայացնում, բայց այստեղ առանձին անդրադարձի չեն ենթարկվել: Դա չի խանգարելու մեզ այս և հետագա հետազոտություններում օգտագործել դրանց բովանդակած տեղեկությունները:

Ըստ այդմ, հարկ է արձանագրել, որ արաբամուսուլմանական պատմագրության մամլուքյան շրջանը հարուստ է այն աստիճան, որ դուցե արդի հետազոտողների տասնամյակների աշխատանքն ու ջանքերն անբավարար լինեն այդ ժառանգության համապարփակ և բազմակողմանի ուսումնասիրության համար: Բավական է նշել, որ մամլուքյան պատմագրության շատ սկզբնաղբյուրներ ցայժմ կարող են հրատարակության և հետազոտության: Բայց և այնպես, այս համառոտ ակնարկում նկարագրված պատմագրական երկերը, որոնց ճնշող մեծամասնությունը կարող է օգտակար լինել Կիրիկյան Հայաստանի պատմության շատուշատ էջերում լրացումներ ու ճշտումներ կատարելու համար, առավել քան բավական են ավանդույթի հիմնարար սկզբունքները, զարգացման հիմնական ուղղությունները, ժանրային ու ձևաբովանդակային առանձնահատկությունները, ինչպես նաև սույն աշխատանքի հետագա շարադրանքի տրամաբանությունը հասկանալու համար: Այժմ փորձենք սահմանել Մուհհի ալ-Դին իբն Աբդ ալ-Ջահիրի և նրա ժամանակագրությունների տեղն այս ավանդույթում:

Մամլուքյան պատմագրական ավանդույթի հիմնադիրներից մեկը՝ արքունական քարտուղար-գրագիր, կենսագիր, պատմիչ, բանաստեղծ և պոետ Մուհհի ալ-Դին Աբու ալ-Ֆադլ Աբդ Ալլահ իբրն Ռաշիդ ալ-Դին Աբու Մուհամմադ Աբդ ալ-Ջահիր իբրն Նաշվան իբրն Աբդ ալ-Ջահիր իբրն Նաշրա ալ-Սաադի ալ-Ռաուհի ալ-Միսրիմ²⁸⁵, ծնվել է Կահիրեում հիջրայի 620 թ. Մուհարրամ ամսի իննին (1223 թ. փետրվարի 12): Միջնադարյան կենսագրական բառարանները նրա կյանքի մասին շատ մանրամասներ չեն հաղորդում²⁸⁶: Ծնվել է կադիի ընտանիքում, հետևաբար և ստացել է ավանդական կրոնաիրավագիտական կրթություն, մինչև որ ծառայության է անցել արքունական դիվանատանը (dīwān al-inšā'): Ալ-Քուլթուբին իր Fawāt al-Wafāyāt կենսագրական բառարանում հաղորդում է, որ նա աշակերտել է Ջաաֆար ալ-Համադանին, Աբդ Ալլահ իբրն Իսմաիլ իբրն Ռամադանին, Յուսուֆ Իբն Մուխայյալիին և այլոց: Իսկ նրա աշակերտներից են եղել ալ-Բիրզալին, Իբն Սայյիդ ալ-Նասսը, Ասիր ալ-Դինը և այլոք²⁸⁷: Սույթան Բայբարսին նվիրված

²⁸⁵ Մուհհի ալ-Դինի կյանքի ու մտանցագրական ժառանգության մասին տե՛ս նաև P. Casanova, "L'Historien Ibn 'Abd Adh-Dhāhir", *Mémoires publiés par les membres de la mission archéologique française au Caire VI*, 1893, p. 493-505; Abdul-Aziz Khawaiter, *Baibars the First: His Endeavours and Achievements*, The Green Mountain Press, London, 1978, pp. 144-166; J. Pedersen, "Ibn 'Abd al-Zāhir", in *IEP*, vol. 3, pp. 679-680; L. Northrup, *From slave to sultan*, pp. 25-28; F. Bauden, "Ibn 'Abd al-Zāhir, Mūhyī l-Dīn", in *IEP*, pp. 125-128; Ḥusayn 'Aṣī, *Mūhī al-Dīn [Ibn 'Abd al-Zāhir, 'aṣruhu wa-turāfuhu al-tārīḫī, Dār al-kutub al-ilmīyya, Bayrūt, 1993*, ինչպես նաև նրա երկու ժամանակագրությունների խմբագրությունը Աբդ ալ-Ազիզ ալ-Խուվայտիի և Մուհադ ալ-Քադիի ներածական առաջաբանները (ճիշտ առատարակությունների ծանոթագրությունները տե՛ս ստորև):

²⁸⁶ Նրա մասին առավել ծավալուն կենսագրական հոդվածները գրել են ալ-Սուլային, ալ-Ջադարին, ալ-Բիրզալին, ալ-Ջամաթին, ալ-Սաֆադին, ալ-Քաբուսին, Իբն Հաբիրը և այլոք: Տե՛ս Ibn al-Suqāṭī, *Tāliḥ kitāb wafāyāt al-a'yān (Ibn al-Suqāṭī, édition et traduction par Jacqueline Sublet, Damascus, 1974)*, §. 118-121; Al-Ġazarī, *Ḥawādīṭ al-zamān*, §. 1, §. 175-183; al-Birzālī, *Al-Muqtaṭī*, §. 2, §. 329; Al-Dahabī, *Tārīḥ al-Islām*, §. 52, §. 155-156; Al-Ṣafadī, *Al-Wāfi*, §. 17, §. 135-155; Al-Kutubī, *Fawāt al-Wafāyāt*, §. 2, §. 179-191; Ibn Ḥabīb, *Taḍkirat al-nabīh*, §. 1, §. 164; al-Maqrīzī, *Al-Muqaffā al-kabir*, §. 4, §. 579-581; al-'Aynī, *'Iqd al-ḡumān*, §. 3, §. 196-198:

²⁸⁷ Al-Kutubī, *Fawāt al-Wafāyāt*, §. 2, §. 179 և al-Ṣafadī, *Al-Wāfi*, §. 17, §. 135.

²⁸⁴ Նույն տեղում:

կենսագրական երկում իր մասին թողած կենսագրական մի տեղեկություններից պարզ է դառնում, որ նա ալ-Մալիք ալ-Մուզաֆֆար Սալֆ ալ-Դին Կուտուզի (1259-1260 թթ.) սուլթանության օրոք արգեն իսկ դիվանատան ծառայող է եղել և ուղեկցել է վերջինիս Հուլաղու խանի 1260 թ. ասորիքյան արշավանքի ժամանակ: Մուհի ալ-Դինն այնուհետ վայելել է նաև Բայբարս ալ-Բուենդուկարի (կառ. 1260-1277 թթ.) սուլթանի բարեհաճությունն ու համակրանքը, ինչն ապահովել է նրա հետագա գործունեության հաջողությունը: Արքունի գրագրի աշխատանքի ընդլայնում պայմանավորված՝ Իբն Աբդ ալ-Ջահիրի և սուլթան Բայբարսի միջև ձևավորվել են անձնական մտերմիկ հարաբերություններ, և ժամանակի ընթացքում սուլթանն սկսել է ավելի ու ավելի մեծ կարևորության փաստաթղթեր ու դործեր վստահել իր քարտուղարին: Օրինակ, 1267 թ. Հենց Իբն Աբդ ալ-Ջահիրի և մի մամուլ է միտի գլխավորությունը է դեսպանագնացություն ուղարկվել Աքրա՝ խաչակիրների և մամուլքների միջև կնքված հաշտության պայմանագրի վրա Աքրայի տիրոջ երդումն ապահովելու համար²⁸⁸: 1271 թ., երբ սուլթան Բայբարսը գրավել է Տևոնյան օրգենին պատկանող ալ-Կուրայն (Մոնտֆորտ) ամրոցը, Իբն Աբդ ալ-Ջահիրն է ուղարկվել այս առման ավետիսը Համայն տիրոջը հայտնելու²⁸⁹: Սուլթան Կալափունը մի անգամ, երբ Ասորիք է մեկնել՝ իր որդի ալ-Մալիք ալ-Սալիհին որպես փոխարքա թողնելով Եգիպտոսում, կարգադրել է Մուհի ալ-Դինին Կահիրեում մնալ, որպեսզի «փոստը կարգա նրա համար և գործերը կատարի»²⁹⁰:

Նույնօրինակ ջերմ էին Իբն Աբդ ալ-Ջահիրի հարաբերությունները նաև Բայբարսի հաջորդների՝ մասնավորապես ալ-Մանսուր Կալափունի (կառ. 1279-1290 թթ.) և ալ-Աշրաֆ Խալիլի (կառ. 1290-1293 թթ.) հետ: Կառավարող վերնախավի հետ ունեցած անձնական մտերմություններ Իբն Աբդ ալ-Ջահիրի համար ապահովել է մեծ հարգանք ու հեղինակություն ժամանակակիցների շրջանում: Ալ-Ջազարին իր կենսագրական բառարանում նրա վերաբերյալ այսպես է արտահայտվում.

²⁸⁸ Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 1.2, ց. 571.

²⁸⁹ Ibn 'Abd al-Zāhir, Al-Rawḍ al-zāhir, ց. 386.

²⁹⁰ Al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 1.1, ց. 684.

«Ժողովրդի մեծամեծերից և ամենաարժանավորներից մեկն էր, գրաստության սեր, «տոհմային համերաշխության» (բնագրում՝ min ahl al-'aṣabiyyāt²⁹¹) մարդկանցից մեկը, մարդկանց նկատմամբ շատ բարեսիրտ՝ իր տեսակով միակն իր ժամանակում»²⁹²: Ալ-Սուլուսին նրան բնութագրել է «որպես ամենախելացի մարդկանցից մեկը՝ հմուտ ինչպես արձակում, այնպես էլ բնաբերգության մեջ»²⁹³: Իսկ ալ-Սաֆադին իր կենսագրական բառարանում նրան անվանել է «նամակագրության մարդկանց շեյխ» (šayḫ ahl al-tarassul)²⁹⁴:

Ալ-Կալիֆաշանդին նրա գերդաստանի մասին գրում է, թե «ուղղախոսության և նարտասանության ուսուցիչների ընտանիք» էր, չնայած Հանուն ճշմարտության հարկ է համարում նաև նշել նրա՝ գլխավոր գիվանապետ եղած ժամանակ սուլթանական նոտարատներից դուրս եկած որոշ փաստաթղթերի ցածր մակարդակի մասին²⁹⁵: Հատկանշական է, որ Մուհի ալ-Դինի բանաստեղծական ձևերի մասին ժամանակակիցների հիացական վկայությունները հիմնականում չափազանցված են և պայմանավորված են նրա անձի նկատմամբ ժամանակակիցների տածած խորը հարգանքով: Օրինակ, Բայբարս ալ-Մանսուրի պատմիչն այս առիթով գրել է. «Նա հեղինակել է հրաշալի նամակներ և ներբանդ բանաստեղծություններ, ինչպես նաև «Ջահիրի վարք», որում տեղծել է արձակի և շափածոյի հիանալի համագրություն»²⁹⁶: Բայբարսին և ալ-Մանսուր Կալափունին նվիրված նրա կենսագրական երկերն իսկապես հարուստ են կասիդաներով, որոնք, այնուամենայնիվ, ինչպես նրա երկի հրատարակիչ Աբդ ալ-Ազիզ ալ-Խուվայտիրն է նկատել, բարձր մակարդակի չես համարի, իսկ Մուհի ալ-Դինին ոչ մի կերպ չես դասի ժամանակաշրջանի երեկելի բանաստեղծների շարքին²⁹⁷:

²⁹¹ Ta'aṣṣub ḥaṣṣ 'aṣabiyya նշանակում է անսահման սեր յուրայինի, տոհմի, զարմի նկատմամբ՝ հայրենասիրություն՝ սոցիալական միասնության և միասնականության գաղափարով:

²⁹² Al-Ġazarī, Ḥawādīḡ al-zamān, ց. 1, ց. 175.

²⁹³ Al-Suyūṭī, Ḥusn al-muḥādḡara, ց. 1, ց. 570.

²⁹⁴ Al-Šafadī, Al-Wāfi, ց. 17, ց. 135.

²⁹⁵ Al-Qalqašandī, Šuḅḅ al-a'šā, ց. 14, ց. 70.

²⁹⁶ Baybars al-Manšūrī, Zubdat al-fikra, ց. 294.

²⁹⁷ Ibn 'Abd al-Zāhir, Al-Rawḍ al-zāhir, ց. 11-12.

Շաֆի իրն Ալին վկայում է, որ իր մորեղբայրը խնդիրներ է ունեցել տեսողության հետ, և երբեմն, երբ անբավարար լուսավորություն է եղել, նրա փոխարեն ինքն է կարդացել որոշ փաստաթղթեր²⁹⁸: Դեռ Բայբարսի օրոք սուլթանական ղեկանատան ծառայող է եղել է նաև Մուհի ալ-Դինի որդին՝ Ֆաթհ ալ-Դին Իրն Աբդ ալ-Ջահիրը, ով հոր կենդանության օրոք մեծ հարգ ու ճանաչում է ձեռք բերել և հավանարար փոխարինելով հորը՝ դարձել է սուլթան ալ-Մանսուր Կալափունի արքունի դպրագետը: Հատկանշական է, որ հենց Ֆաթհ ալ-Դինից սկսած ալ-Մանսուր Կալափունի որոշմամբ ղեկանապետի՝ *ṣāhib dīwān al-inṣāʾ*-ի պաշտոնը վերանվանվել է *kātib al-sirr*-ի (բառացի՝ «գաղափարի դպիր»): Վերջինս այդուհետ համարվում էր սուլթանի անձնական քարտուղարը՝ ունենալով սուլթանին վերաբերող անձնական տեղեկատվության հետ առնչվելու պաշտոնեական ավելի մեծ լիազորություններ: Ֆաթհ ալ-Դինը մահացել է հոր մահվանից մեկ տարի առաջ՝ 1292 թ.²⁹⁹:

Սուլթանական ղեկանատան ծառայող, պատմիչ և բանաստեղծ է եղել նաև Ֆաթհ ալ-Դինի որդին և Մուհի ալ-Դին թոռը՝ Ալա ալ-Դին Իրն Աբդ ալ-Ջահիրը (մահ. 1317 թ.): Նրա անունով մեզ է հասել մամլուքների և Ղազան խանի (և նրա հետ զաշնակցած ուժերի) բանակների միջև 1303 թ. տեղի ունեցած Մարջ ալ-Մաֆֆարի կամ Շակհարի հայտնի ճակատամարտի մասին պատմող մի փոքրածավալ ժամանակագրություն՝ *Al-Rawḍ al-zāhir fī ǧazwat al-Malik al-Nāṣir* («Մաղկուն պարտեզ ալ-Մալիֆ ալ-Նասիրի արշավանքի մասին») վերնագրով: Երկը Բեռլինի պետական զբոսայգանի արաբական ֆոնդում պահպանված գրչագրից (3623 համարի ներքո) հրատարակել է Ումար Աբդ ալ-Սալամ Թաղմուրին 2005 թ.³⁰⁰:

Ալ-Մակրիզիի՝ Կահիրեի պատմատեղագրական նկարագրությանը նվիրված երկից՝ «Ալ-Խիտաա»-ից իմանում ենք, որ քաղաքի փողոցներից մեկը, որտեղ Մուհի ալ-Դինի տունն էր գտնվում, կոչվել է նրա անունով: «Իրն Աբդ ալ-Ջահիրի փողոցը: Այս փողոցը գտնվում է Ֆունդուկ ալ-Ջահիրի («Ոսկու հյուստուն») հարևանությամբ ալ-Ջարաֆիշա ալ-Աթիֆա («Ասեղնագործների փողոց») թաղամասում և նրա շարժում: Այն պատկանում էր «Գիտապյան տանը», որը վերաշինվել է Ալ-Ամիրի խալիֆայության և ալ-Մամուն Բատաիհիի վեզիրության օրոք: [Բայց] երբ պետությունն ընկավ, բնակեցվեց: Այնտեղ էր բնակվում ալ-Կադի Մունի ալ-Դին իրն Աբդ ալ-Ջահիր իրն Նաշվան ալ-Սաադի գրիչը, գրագիրը, իմամը, [Երևելի] գիտնականը, հեղինակը *Rawḍa al-bahīyya al-zāhira fī ḥiṭaṭ al-Muʾizziyya al-Qāhira* գրքի, որից այս գրքում մեջբերումներ են արվել: Նա մահացել է 691 թվականին, և փողոցը նրա անունով է կոչվել»³⁰¹:

Մուհի ալ-Դին իրն Աբդ ալ-Ջահիրը վախճանվել է Հիջրայի 692 թ. Ռաջաբ ամսի 3-ին (1293 թ. հունիսի 9) և թաղվել Կահիրեի ալ-Մուկատամ բլրին եղած ալ-Կարաֆա դերեղմանատանը՝ որդու՝ Ֆաթհ ալ-Դինի կողմից իր համար կառուցված մզկիթին հարող դամբարանում³⁰²:

Մուհի ալ-Դին իրն Աբդ ալ-Ջահիրը, ով, ինչպես ասացինք, տեական ժամանակ զբոսայգի էր մամլուքյան արքունի ղեկանատան շխափոր զրագրի կամ քարտուղարի պաշտոնը, հեղինակ է մամլուքյան երեք սուլթանների Բայբարսի, Կալափունի և ալ-Աշրաֆ Նալիի վարքագրությունների (համապատասխանաբար՝ *Al-Rawḍ al-zāhir fī sirat al-Malik al-Zāhir*-«Մաղկուն պարտեզ ալ-Մալիֆ ալ-Ջահիրի կյանքի մասին», *Taṣrif al-ayyām wa-l-ʿuṣūr fī sirat al-Malik al-Manṣūr* - «[Գիրք] ալ-Մալիֆ ալ-Մանսուրի կյանքի փառավոր օրերի և ժամանակաշրջանի մասին» և *Al-Altāf al-Ḥafīyya min al-sīra al-ṣarīfa al-sultāniyya al-Malikiyya al-Aṣrafiyya* - «[Գիրք] սուլթան ալ-Մալիֆ ալ-Աշրաֆի ազնվագարմ կյանքի թափված բարեհաճությունների մասին», որն անավարտ է մնացել): Մասնով լինելով սուլթաններին, շատ հաճախ իրադարձությունների ակնատեսն ու

²⁹⁸ Šāfiʿ ibn ʿAlī, *Ḥuṣn al-manāqib*, §. 326, ինչպես նաև A.-A. Khawaiter, *Baibars the First*, p. 145.

²⁹⁹ J. Pedersen, "Ibn ʿAbd al-Zāhir", p. 680.

³⁰⁰ ʿAlāʾ al-Dīn ʿAlī Ibn ʿAbd Allāh ibn Abd al-Zāhir, *Al-Rawḍ al-zāhir fī ǧazwat al-Malik al-Nāṣir wa-bi-ǧaylihi al-Manāqib al-Muzaffariyya*, bi-tahqīq ʿUmar ʿAbd al-Salām Tadmūrī, Al-Maktaba al-ʿAṣriyya, Ṣaydā-Bayrūt, 2005: Ըստ հրատարակչի՝ սա երկի միակ պահպանված ձեռագիրն է Միջնդեռ մեզ հայտնի է, որ այս երկի մի գրչագիր էլ կա Սանկտ Պետերբուրգի Արևելյան ձեռագրերի ինստիտուտի արարվելու ձեռագրաֆոնդում՝ В. 623 (532):9643 համարի ներքո: Նկարագրությունը տե՛ս А.И. Михайлова, *Каталог арабских рукописей Института народов Азии и Африки*, Выпуск 3, История, изд. Наука, Москва, 1965, стр. 59-60:

³⁰¹ Al-Maqrīzī, *Al-Ḥiṭaṭ*, ǧ. 3, §. 119-120.

³⁰² Šeʿu ʿUṣūl, ǧ. 4, §. 135:

անմիջական մասնակիցը լինելով, ձեռքի տակ ունենալով արքունական դիվանատան վավերագրական հարուստ արխիվները (փաստաթղթեր, պայմանագրերի տեքստեր)՝ Իբն Աբդ ալ-Ջահիրն իր այս երկերում անդնահատելի կարևորություն և մյուս պատմագիրների մոտ չհանդիպող մանրամասներ է պահպանել իր ժամանակի անցքերի՝ այդ թվում հայ-մամլուքյան հարաբերությունների մասին³⁰³:

Այս երեք երկերից առաջինը՝ *Al-Rawḍ al-zāhir*-ը, մեզ է հասել երկու ձեռագրով, որոնցից մեկը գտնվում է Ստամբուլի Սուլեյմանիյե գրադարանում (*MS Fatih 4366*), մյուսը՝ Լոնդոնի Բրիտանական թանգարանում (*MS Add. 23331*): Այս վերջին ձեռագիրը, որ խիստ թերի է և կիսատ, խմբագրել, հրատարակել և անգլերեն է թարգմանել Սայիդ Տարիմա Սադեկը: Այն հրատարակվել է 1956 թ. Պակիստանում³⁰⁴: Ցավոք, այս հրատարակությունը ձեռքի տակ չենք ունեցել: Չորս տարի անց՝ 1960 թ., Աբդ ալ-Ազիզ ալ-Խուվայթիրը Լոնդոնի «Արևելյան և աֆրիկյան հետազոտությունների դպրոց» համալսարանում (*S.O.A.S. University of London*) իր թեկնածուական ատենախոսությունը երկու ձեռագրերի հիման վրա իրականացրել է երկի քննական խմբագրությունը՝ անգլերեն թարգմանությունը և ծանոթագրություններով³⁰⁵: Չնայած սույն ատենախոսության մեջ առկա թարգմանական բազմաթիվ սխալներին՝ այն շատ դեպքերում օգնել է մեզ և ուղղորդել բարդ ու խրթին հատվածները հասկանալու առումով: Ուստի երկից հայերի և Կիլիկյան Հայաստանին վերաբերող քաղվածքներն արաբերեն բնօրինակից թարգմանելիս հիշյալ ատենախոսությունը մշտապես սեղանին ենք ունեցել, անճշտություններ նկատելիս՝ ուղղել:

³⁰³ D. Little, "Historiography", pp. 421-422; L. Northrup, *From slave to sultan*, pp. 25-28; R. Irwin, "Mamluk history and historians", in *Arabic literature in the post-classical period*, ed. by R. Allen and D.S. Richards, Cambridge University Press, Cambridge, 2006, pp. 162-163: Այս երկերի մասին տե՛ս նաև G. Van Den Bossche, *The Past, Panegyric, and the Performance*, pp. 128-133, 159-164, 172-179:

³⁰⁴ S. Fatima Sadeque, *Baybars I of Egypt*, Oxford University Press, Dacca, 1956.

³⁰⁵ Abdul Aziz al-Khowayter, *A Critical Edition of an Unknown Source for the Life of al-Malik al-Zāhir Baibars*, with introduction, translation, and notes, 3 volumes, University of London, S.O.A.S., 1960 (unpublished Ph.D. thesis).

Թեկնածուականի պաշտպանությունից հետո Աբդ ալ-Ազիզ ալ-Խուվայթիրը ձեռնամուխ է եղել երկի բնագրի հրատարակությանը, որն իրականություն է դարձել միայն 16 տարի անց՝ 1976 թ. ալ-Ռիյադում³⁰⁶: Բայբարսի վարքագրության քաղվածական թարգմանություն համար օգտադրծել ենք Հենց այս հրատարակությունը:

1992 թ. հրատարակվել է Ժակլին Սուբլեի «Սուլթան Բայբարսի երեք վարերը» գիրքը³⁰⁷: Նրանում հեղինակը Ֆրանսերեն է թարգմանել *Al-Rawḍ al-zāhir*-ի՝ ալ-Խուվայթիրի հրատարակությունից մի փոքր հատված (էջ 45-68): Գրքի երկրորդ՝ հիմնական մասում, Սուբլեն թարգմանաբար ներկայացրել է Բայբարսի կառավարման շրջանի վերաբերյալ ալ-Մակրիզիի *Kitāb al-sulūk*-ում առկա պատումը (հիմնված Մ. Կատրմերի 1837 թ. թարգմանության վրա): Երրորդ մասում հատվածներ են քաղվել սուլթանի մասին հյուսված «Բայբարսի վարերը» միջնադարյան հերոսական էպոսի՝ Ջ. Բոհասի և Ժ.-Պ. Գիյոմի կատարած Ֆրանսերեն թարգմանությունից: Սուբլեի գիրքը հարուստ է Բայբարսի կյանքի ու դործունեության ժամանակաշրջանը ներկայացնող գունագեղ մանրանկարների վերարտադրություններով, հուշարձանների և ժամանակի արվեստի նմուշների լուսանկարներով: Ճիշտ է՝ գրքի արվեստագիտական և հրատարակչական արժեքը բարձր մակարդակի վրա է, բայց այն թեմայի վերաբերյալ գիտական հետազոտություն չես համարի³⁰⁸:

³⁰⁶ Վե՛րևա՛մ այս հրատարակությունն արդեն ծանոթագրել ենք: Տե՛ս ծնթք, 49:

³⁰⁷ *Les trois vies de Sultan Baibars: choix de textes et presentation de Jacqueline Sublet*, Imprimerie Nationale, Paris, 1992.

³⁰⁸ Տե՛ս գրախոսելի կարծիքները գրի վերաբերյալ. D.E. Streusand, "The Lion of Egypt: Sultan Baybars I and the Near East in the Thirteenth Century, by Peter Thorau. Translated by P.M. Holt, 321 pages, tables, maps, bibliography, index. London & New York: Longman Group UK, 1992 & Les trois vies du sultan Baibars, by Jacqueline Sublet. Preface by André Miquel. 240 pages, illustrations, chronology, bibliography, indices. Paris: Imprimerie nationale Éditions, 1992" (review), *RoMES*, vol. 27, issue 2, 1993, pp. 260-261; C. Petry, "Jacqueline Sublet, Les trois vies du sultan Baibars, Imprimerie nationale Éditions, 1992, pp. 256, maps, chronology, bibliography, glossary-index" (review), *JESHO*, vol. 38, 1995, pp. 104-105 և հատկապես՝ R. Irwin, *Les Trois Vies du Sultan Baibars: Choix de textes et présentation* by Jacqueline Sublet, introduction by André Miquel, Paris: Imprimerie nationale Éditions, 1992 (review), *JAOS*, vol. 114 (1), 1994, pp. 104-106:

Սուլթան ալ-Մանսուր Կալավուդին նվիրված երկը՝ Tašrif al-ayyām-ը, մեզ է հասել ընդամենը մեկ թերի ձեռագրով, որը գտնվում է Փարիզում՝ Ֆրանսիայի ազգային գրադարանում (MS Arabe 1704): Ձեռագիրն ընդգրկում է երկի 2-րդ և 3-րդ մասերը, որ պարփակում են 1281-1290 թթ. իրադարձությունները: Ժամանակագրությունը հրատարակվել է Մուրադ Քամիլի խմբագրությամբ 1961 թ. Կահիրեում³⁰⁹: Մեր քաղվածական թարգմանությունը հիմնված է երկի այս միակ հրատարակության վրա, բայց և ձեռքի տակ ունեցել ենք վերահիշյալ ձեռագրի լուսապատճենը: Սա շատ դեպքերում հնարավորություն է տվել ստուգել Կիլիկյան Հայաստանին վերաբերող հատվածներում հրատարակչի որոշ ընթերցումների ստուգությունը, իսկ որոշ դեպքերում էլ՝ ճշտել տարբերումները:

Ալ-Աշրաֆ Խալիլ սուլթանի վարքագրությունը՝ Al-Altāf al-hafīyya-ն, ավելի թերի է հասել մեզ: Միակ պահպանված ձեռագիրը, որ գտնվում է Մյունխենում՝ Բավարիայի ազգային գրադարանում (Cod.Arab 405), ընդգրկում է երկի չորս մասերից միայն մեկը, որը, ինչպես մի անգամ նշել ենք, պարփակում է ընդամենը հինգ ամսվա իրադարձությունների շարադրանք (1291-1292 թթ.): Երկի պահպանված տեքստը ղեռնախորդ դարի սկզբին հրատարակել է Կաու Աքսել Մորերգը՝ չվեղերեն թարգմանությամբ³¹⁰: Հրատարակիչը, սակայն, անտեսել է ձեռագրի վերջին կարևոր մասը, որը պարփակում է ալ-Աշրաֆ սուլթանի անունից գրված մի շարք արժեքավոր փաստաթղթեր (հրովարտականեր, կալվածագրեր և այլն): Այնուամենայնիվ, մեզ հիշյալ հրատարակությունից բացի հասանելի է եղել նաև երկի միակ պահպանված ձեռագրի լուսապատճենը, ուստի և հասու են եղել հրատարակության մեջ բացակայող այդ փաստաթղթերի ընդօրինակությունները³¹¹:

³⁰⁹ Ibn 'Abd al-Zāhir, Tašrif al-ayyām wa-l-'usūr fī sirat al-Malik al-Manṣūr, bi-tahqīq Murād Kāmil, Muḥammad 'Alī al-Nağğār, al-Qāhira, 1961.

³¹⁰ Ibn 'Abd al-Zāhir, Al-Altāf al-hafīyya min al-sira al-šarīfa al-sultāniyya al-Malikiyya al-Ašrafīyya / Ur 'Abd Allah b. 'Abd ez-Zāhir's biography över Sultanen el-Melik al-Ašraf Ḥalīl, hrsg. von Axel Moberg, Gleerupska Universitetsbokhandeln, Lund, 1902.

³¹¹ Բոլորովին վերջերս որպես *Routledge* հրատարակչության *Crusade Texts in Translation* շարքի հեթանոսական հատուկ լույս է տեսել Գեյվիլ Քուլի հեղինակությամբ մի աշխատանք: Գրում ներկայացված են Կալավուդին և նրա որդի՝ ալ-Աշրաֆ Խալիլ սուլթանների կատարած մարտերում մասնակցությունը հարաբերությունների վերաբերյալ հաղվածական բարձրագույն փաստաթղթերի լուսապատճենները: Միջուկային կառուցվածքով աղբյուրներից այդ թվում Իբն Աբդ ալ-Ջահիրի Tašrif

Բացի այս երեք ժամանակագրական բնույթի վարքագրություններից Մուհի ալ-Դինը հեղինակ է նաև Կահիրեի պատմատեղագրական նկարագրությանը նվիրված Al-Rawḍa al-bahīyya al-zāhira fī ḥiṭaṭ al-Mu'izziyya al-Qāhira («Փայլուն ծաղկուն պարտեզ Մուիզյան Կահիրեի քաղաքային վերաբերյալ»), որը Բրիտանական թանգարանի թիվ MS Or. 13317 ձեռագրի հիման վրա հրատարակել է Այման Ֆուադ Սայիդը 1996 թ. Կահիրեում³¹²:

Ինչպես արդեն նշել ենք, Իբն Աբդ ալ-Ջահիրը նաև չափածո է գրել և իր պատմագրական երկերը հարստացրել է իր իսկ գրած կասիդաներով³¹³: Հատկանշական է, որ մասամբ պահպանված է նաև նրա բանաստեղծական ժողովածուն՝ դիվանը³¹⁴: Իբն Աբդ ալ-Ջահիրը հեղինակ է նաև Եգիպտոսին, Նեղոսին և ալ-Ռաուդա կղզուն նվիրված մի մականայի³¹⁵, գեղագրությանը նվիրված մի երկի:

Իբն Աբդ ալ-Ջահիրի գրչին է պատկանում նաև աղավնափոստին նվիրված մի երկ՝ Tamā'im al-hamā'im վերնադրով: Սրա բնօրինակը, ճիշտ է, մեզ չի հասել, բայց նրանից իրենց երկերի համար բազմաթիվ քաղվածքներ են կատարել ալ-Մաֆադին, ալ-Ումարին, Իբն ալ-Հիջլան (հատվածները մեջբերում է ալ-Մաֆադիի երկից), ալ-Մակրիզին, ալ-Կալիլիանդին³¹⁶:

Մուհի ալ-Դինի արձակի (հատկապես հանդավորված արձակի) և առհասարակ շարադրանքի ոճի համար տիպար են ծառայել Սալահ ալ-Դինի արքունի քարտուղար ալ-Կադի ալ-Ֆադլիի (մահ. 1200 թ.) երկերը: Ալ-Մակրիզին այս առիթով նրա մասին գրում է. «Կատարե-

al-ayyām և Al-Altāf al-hafīyya երկերից: *Stu Chronicles of Qalāwūn and his son al-Ashraf Khalīl*, tr. by D. Cook, Routledge, London and New York, 2020: Գ. Քուլի իր բարձրագույն հաղվածքներում ներառել է նաև Կիլիկյան Հայաստանի վերաբերող մի քանի հատվածներ, սակայն նկատել ենք մի շարք բարձրագույն սխալներ: Դրանց մասին կխոսենք ներքևում համապատասխան տեղում:

³¹² Ibn 'Abd al-Zāhir, Al-Rawḍa al-bahīyya al-zāhira fī ḥiṭaṭ al-Mu'izziyya al-Qāhira, bi-tahqīq Ayman Fu'ād Sayyid, Maktabat Dār al-'arabiyya li-l-kitāb, al-Qāhira, 1996.

³¹³ Կ. 'Āṣī, Muḥī al-Dīn, §. 74-79.

³¹⁴ Dīwān al-Qāḍī Muḥī al-Dīn 'Abd Allāh ibn 'Abd al-Dāhīr, al-Qāhira, 1990.

³¹⁵ F. Bauden, "Ibn 'Abd al-Zāhir", p. 127; Կ. 'Āṣī, Muḥī al-Dīn, §. 86.

³¹⁶ F. Bauden, "Ibn 'Abd al-Zāhir", p. 127; A.A. Khawaiter, *Baibars the First*, p. 147; J. Pedersen, "Ibn 'Abd al-Zāhir", p. 679; Կ. 'Āṣī, Muḥī al-Dīn, §. 87.

լության է հասել արձակում և ալ-Կադի ալ-Ֆադի Աբդ ալ-Ռահիմի պես դարձել նամակագրության մարդկանց շեյխ»³¹⁷: Հասկանչական է, որ Իբն Աբդ ալ-Ջահիրի անունով մեզ է հասել նաև ալ-Կադի ալ-Ֆադիլի նամակների մի ժողովածու՝ *Al-Durr al-nāzim qibrnawar*³¹⁸:

Սրանով ավարտենք մամլուքյան պատմագրությանն ու Մուհի ալ-Դին Իբն Աբդ ալ-Ջահիրի մատենագրական ժառանգությանը նվիրված գլուխը: Ինչպես արդեն արձանագրել ենք Մուհի ալ-Դինի պատմագրական երկերը՝ վերոհիշյալ երեք վարքագրությունները, պարփակում են 1260-1292 թթ. քաղաքական անցուղարձերի նկարագրություններ: Դրանցից մենք ստորև քաղվածական թարգմանություններ ենք ներկայացնելու ենք Կիլիկյան Հայաստանին, և մասնավորապես նրա, Մոնղոլական իլխանության և Մամլուքյան սուլթանության քաղաքական հարաբերություններին վերաբերող մասերը: Հետևաբար այդ իրադարձությունների պատմական խորքը հասկանալու համար հարկ ենք համարում հաջորդ մասում ներկայացնել Կիլիկյան Հայաստանի և նրա երկու հզորագույն հարևանների՝ մամլուքների և մոնղոլների, քաղաքական հարաբերությունների սկզբնավորման պատմությունը, որոնց՝ տարածաշրջանի քաղաքական եղանակը պայմանավորող ներկայությունից էր մեծապես կախված Հայոց թագավորության հետագա կենսունակությունն ու գոյությունը:

³¹⁷ Al-Maqrīzī, *Al-Muqqaṣṣ al-kabīr*, ց. 4, ք. 580.

³¹⁸ Ibn 'Abd al-Zāhir, *Al-Durr al-nāzim fī awṣāf al-Qādī al-Fādīl 'Abd al-Rahīm*, Dār nahḍat Miṣr, al-Qāhira, 1959.

ՄԱՍ Բ

ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԽՃԱՆԿԱՐՈՒՄ ԺԳ ԴԱՐԻ ԿԵՍԵՐԻՆ

2.1 ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՍՈՒԼթԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԳՐՈՒՄՆ ՈՒ ՀԱՅ-ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԸ

«Նա («Սաի իշխողը») արհաների սերունդների շատ հին արքա է, ով հավաստիացնում է, թե ինքը սերում է կուստանդինյան տնից (հարստությունից՝ *al-bayt al-Qustantīnī*): Նրանց արհաներին *թաֆֆուր* (*takfūr*) անունով են կոչել, որ նրանց է վերագրվել, ինչ նրանք կան և ընդհուպ մինչև օրս: Ես իմ տեսակետն ունեմ կուստանդինյան տնից լինելու նրանց պնդման առնչությամբ: Եթե այս տանը պատկանողները հռոմական ծագման (*ṣalībāt al-rūm*) լինեին, ապա նրանք մեղիտյան (*malkāniyya*) դավանանք կունենային: Մինչդեռ *թաֆֆուր*ի տունը հայկական է, իսկ նրանց դավանանքը «հակոբիկյան» (*ya'āqiba*) կամ դրան մոտ մի դավանանք է, ընդամին երկու դավանանքների միջև մեծ հեռավորություն և [ակնհայտ] տարբերություններ կան: Ամենն, ինչ գիտենք այս տան մասին, այն է, որ նրանց մեծ պապը հենում առաջին արհաների վաղեմի ժամանակներում, այս երկրների ֆրիստոնյաների (*naṣāra > naṣrānī*, այն է՝ «նազարեթցի») առաջնորդն է եղել: [Այս] ֆրիստոնյաները կապառն տների մարդիկ են (*ahl al-madara*, հավանաբար հակադրում է բեդվին փրանաբնակներին), և նրանց զանազան զբաղմունքներից են հյուանի (*naḡḡār*), «ձեռագործ վարպետի» և հողագործի (*akara*) արհեստները»:

Ալ-Ումարի, «*Քիթաբ ալ-Թարիֆ*»³¹⁹

³¹⁹ St'ya al-'Umārī, *Al-Ta'rif*, ք. 55: Հմտ. al-Qalqašandī, *Ṣubḥ al-a'šā*, ց. 8, ք. 30: Մուսայֆանական մատենագրության մեջ հայոց արհաներին վերագրված *takfūr* տիպոգրաֆի նվիրված ուսումնասիրություն ունենք: Այն նախ հրատարակվել է անգլերեն: St'ya G.G. Danielyan, "The

ԺԳ դարի կեսերին եգիպտոսում տեղի ունեցան իրադարձություններ, որ արմատապես փոխեցին քաղաքական իրադրությունը ոչ միայն եգիպտոսում, այլև ողջ Մերձավոր Արևելքում: Այյուբյան քանակի վաղուց արդեն բազմազանացրել տարր դարձած և Սալահ ալ-Դինի հիմնադրած Հարսուլթյան վերջին ազդեցիկ տիրակալի՝ ալ-Սալիհ նալ ալ-Դին Այյուբի (1240-1249 թթ.) օրոք գերակշռության հասած և մեծ արտոնություններ ստացած մամլուքները (արաբ.՝ mamlik < mamalik, այն է՝ «ստրուկ»)՝³²⁰ մեծամասամբ թյուրք-ղփչաղյան ծագման ռազմական ստրուկները, նրա մահից հետո իրենք իսկ երկրի կառավարման հայտ ներկայացրին և բարեպատեհ Հանդամանքների բերումով կարճ ժամանակում իրենց ազդեցիկ խմբավորումներից մեկի՝ «Բահրիյան» (al-Bahriyya կամ al-Bahriyya al-Salihyya) գլխավորությամբ հայտնվեցին պետության կառավարող վերնախավում³²¹: Խաչակիրների հետ պատերազմի թոհուրոհում (1249 թ.), սուլթան ալ-Սալիհի մահվան փաստը մի քանի ամիս շարունակ գաղտնի պահելով,

երկրի փաստական կառավարումը ստանձնեց նրա այրին՝ Շաջար (կամ Շաջարաթ) ալ-Դուրրը³²² սպասելով ալ-Սալիհի որդու՝ Մուազզամ Թուրան-շահի ժամանմանը կահիրե: Ավելորդ է նշել Ֆրանկների նկատմամբ ալ-Մանսուրայի (al-Manṣūra) ճակատամարտում տարած հաղթանակում և առհասարակ Խաչակրաց է արշավանքին դիմադրավելու գործում հենց Բահրիների ունեցած վճռական դերակատարության մասին³²³: Ինչևէ, 1250 թ. զահ բարձրացած Թուրան-շահը հուսահատ փորձ արեց իշխանության օղակներից դուրս մղել իր հոր մամլուքներին, բայց շուտով ինքը սպանվեց՝ դառնալով նրանց խարզավանքի զոհ: Սաիդ Աշուրի բնութագրմամբ՝ «Թուրան-շահի մահից հետո մամլուքներն առաջին և վերջին խոսքի տերը դարձան երկրի գործերում»³²⁴: Նրա փոխարեն սուլթանական դահին նստեց Շաջար ալ-Դուրրը (umm/walidat Ḥalīl) և հռչակվեց «մուսուլմանների թագուհի» (malikat al-muslimīn)³²⁵ ուսանգամ իր անունով դրամ հատեց³²⁶: Բայց կնոջ միահեծան իշխանության գաղափարը իսրթ էր մուսուլմանական քաղաքական մտքին ու կրոնական գաղափարախոսությանը և տրտուները հարուցեց իսլամական աշխարհում³²⁷: Այս պարագայում մի քանի ամիս կառավարելուց հետո Շաջար ալ-Դուրրն ամուսնացավ մամլուք էմիրներից մեկի՝ Իզզ ալ-Դին Ալբարի հետ, ով կարճ ժամանակ անց սուլթան հռչակ-

Title T'agavor / Taktür in the Medieval Muslim Historiography", *REA*, № 36, Paris, 2014-2015, pp. 61-80: Ապա մի քանի գործընկերների հետ հեղինակած կոլեկտիվ մենագրության մեջ լույս է տեսել վերջինիս փոքր-ինչ ընդլայնված հայտերն տարբերակը: Տե՛ս Գ. Դանիելյան, «Փազավոր / բաֆոր» տիտղոսը միջնադարյան մուսուլմանական մատենագրության մեջ», Ա. Բոզոյան (խմբագիր), Թ. Շուքուրով, Վ. Տեր-Ղևոնդյան, Գ. Դանիելյան, Կիլիկյան Հայաստանը սահմանակից պետական միավորների ընկալումներում (պատմաքաղաքագրական ակնարկներ) (հետալսում ԿՀ (2016)), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2016, էջ 163-198: Վերջերս էլ հիշյալ կոլեկտիվ ժողովածուն բարգմանվել է անգլերեն: Տե՛ս G. Danielyan, "The Title T'agavor / Taktür in Medieval Muslim Historiography", in *CA* (2019), pp. 151-182:

³²⁰ D. Ayalon, "Aspects of the Mamlük phenomenon (Part I-II)", *Der Islam*, 53/54, 1976 / 1977, pp. 196-225, pp. 1-32. Ընդհանուր առմամբ սուլթանության հիմնադրամբ մուսուլմանական իրականության մեջ մամլուք ռազմիկների օգտագործման երևույթի կապի հանգամանակից ուսումնասիրությունը տե՛ս Ahmad Muhtār al-'Abādī, *Qiyām dawlat al-mamālīk al-'ulā fi Miṣr wa-l-Šām, Dār al-Nahḍa al-'arabiyya*, Bayrūt, 1986, §. 11-113.

³²¹ Իբն ալ-Գալաթիի վկայությամբ՝ «[Սուլթանն] այնքան թյուրք մամլուքներ գնեց, որ նրանից առաջ ոչ մի արքա նրա շափ չէր գնել, մինչև որ զորքի մեծամասնությունն իր մամլուքները գործանո: Տե՛ս Ibn al-Dawādārī, *Kanz al-durar*, ք. 7, bi-tahqīq Sa'id 'Abd al-Fattāh 'Āšūr, al-Qāhira, 1972, §. 370: Ալ-Սալիհ Այյուբի «մամլուքյան» հաղթականության մասին տե՛ս A. Levanoni, "The Mamluks' Ascend to Power in Egypt", *SI*, № 72, 1990, pp. 121-144: Այս մամլուքները «բաճրի» կոչվեցին, քանի որ սուլթանը նրանց գործակցները տեղակայել էր նեղոսի (baḥr al-Nīl) կղզիներից մեկում (al-Rawḍa): Տե՛ս al-Maqrīzī, *Al-Sulūk*, ք. 1.2, §. 340:

³²² Վերևում արդեն նշել ենք, որ ըստ մամլուք որոշ պատմիկների՝ նա ազգությամբ հայ կամ քուրդ սուրկուհի էր, ում ալ-Սալիհն ազատություն էր շնորհել ու կնության առել: Տե՛ս, օրինակ, Abū al-Fidā', *Al-Muḥtaṣar*, ք. 2, §. 300; al-'Umārī, *Masālik al-abṣār*, ք. 27, §. 241; al-Maqrīzī, *Al-Sulūk*, ք. 1.2, §. 361-362: Շաջար ալ-Դուրրի մասին մանրամասն տե՛ս G. Schregle, *Die Sultanin von Ägypten, Sağarat ad-Durr*, Otto Harrassowitz, Wiesbaden, 1961; A. Levanoni, "Sağarat ad-Durr: A Case of female sultanate in Medieval Islam", in *Egypt and Syria in the Fatimid, Ayyubid and Mamluk eras*, vol. III, ed. by U. Vermeulen and J. Van Steenberghe, Uitgeverij Peeters, Leuven, 2001, pp. 209-218:

³²³ A.M. Al-'Abādī, *Qiyām*, §. 110.
³²⁴ S.A.F. 'Āšūr, *Al-'Aṣr al-Mamālīkī*, §. 11.
³²⁵ Al-Maqrīzī, *Al-Sulūk*, ք. 1.2, §. 361; Abū al-Fidā', *Al-Muḥtaṣar*, ք. 2, §. 288, 300.
³²⁶ Al-Maqrīzī, *Al-Sulūk*, ք. 1.2, §. 362.
³²⁷ Ըստ ալ-Մալեփոփի և մի քանի այլ պատմիկների՝ իր դժգոհությունը հայտնեց նաև Աբրահամ խալիֆա ալ-Մուաշաիֆը, ով հեղինական նամակ հղեց Կահիրե՝ ասելով: «Եթե ձեզ մոտ վերջացել են սղամարդիկ, հայտնե՛ք մեզ, և մենք ձեզ կուղարկենք մեկին»: Տե՛ս al-Maqrīzī, *Al-Sulūk*, ք. 1.2, §. 368:

վեց al-Malik al-Mu'izz (1250-1257 թթ.) դահակալական անվամբ³²⁸: Ահա այս անցքերով նշանավորվեց մի պետության ստեղծումը, որը մուսուլմանական մատենագրության մեջ Dawlat al-atrāk կամ al-Dawla al-turkiyya անվանումներով է արձանագրվել, իսկ արդի պատմագրության մեջ «Մսուլմանյան սուլթանություն» անվանումն է ստացել: Եվ չնայած մամլուքներից ևս տասը տարի պահանջվեց իրենց իշխանությունը հաստատուն կռիվների վրա դնելու համար, այնուհանդերձ այս պետության ծննդյան թվական է ընդունված համարել 1250-ը: Այս դեպքերից մոտ 130 տարի անց չերքեզական ծագման մամլուքյան մեկ այլ խմբավորման առաջնորդ Սայֆ ալ-Դին Բարկուկը (1382-1389, 1390-1399 թթ.), զավթելով իշխանությունը, հիմնադրեց մուսուլման պատմիչների կողմից Dawlat al-jarākisa կոչված, իսկ արդի պատմիչների կողմից «Բուրջի» հորջորջված դինաստիան, որն իշխեց Ասորիքում և Եգիպտոսում մինչև օսմանցիների կողմից տապալվելը³²⁹:

³²⁸ Ռ. Իովինի համոզմամբ Այբաք չի պատկանել Բանդի խմբավորմանը, ավելին՝ զան է բարձրացվել արևելքի ոչ մամլուքյան աարեթի կողմից՝ նրանց իշխանության օգակներից հետացնելու համար: Այբաքը, սակայն, անկարող է եղել դիմադրել Բանդիների ճնշմանը՝ հարկադրվելով իշխանությունը երկու ասրի (1252-1254 թթ.) կիսել նրանց դրածո Այսուրյան արհայազն, ալ-Մալիք ալ-Քամիլի բոռ ալ-Աշրաֆ Մուսայի հետ որպես վերջինիս արքայի և սուլթանական բանակի հրամանատար: Տե՛ս R. Irwin, *The Middle East in the Middle Ages: The Early Mamluk sultanate 1250-1382*, Southern Illinois University Press, Carbondale and Edwardsville, 1986, pp. 26-27:

³²⁹ Տե՛ս D. Ayalon, "The Circassians in the Mamlūk kingdom", *JAOS*, vol. 69.3, 1949, pp. 137-138: 1250-1517 թթ. եգիպտոսում իշխանության ղեկին եղած ևազմական այս երկու խմբավորումների էթնիկական և լեզվական ծագումը հաշվի առնելով՝ միջնադարի արաբագիր պատմիչներն իրենց երկերում նրանց սուլթանությունը և կառավարող դինաստիան առավել հանախ կոչում են համապատասխանաբար dawlat al-atrāk կամ al-dawla al-turkiyya, այն է՝ «Յուրքերի հարստություն» և dawlat al-ğarākisa, այն է՝ «չերքեզների հարստություն»: Հետևապես «Բանդիների սուլթանություն» և «Բուրջիների սուլթանություն» անվանումներն այստեղ լրիվ պայմանականորեն են կիրառված: Երկու եզրերի օգտագործման աննպատակահարմարության հարցին անդրադարձել է Դ. Այսուրը: Տե՛ս Նույնի՝ "Bahri Mamlūks, Burji Mamlūks: inadequate names for the two reigns of the Mamluk sultanate", *Tārīḥ*, vol. 1, 1990, pp. 3-53 և "Al-Bahriyya", in *ELI*, vol. 1, pp. 944-945: Հետևաբար ըստ Կրի Ֆանկի՝ մամլուքյան կառավարող վերնախավի բնութագրիչ հատկանիշը ոչ թե նրանց ստրկական ծագումն է՝ «մամլուք» լինելը, այլ ազգային պատկանելությունը՝ Բանդիների ղեպում «թյաուբ» կամ «գոլյար» լինելը, Բուրջիների ղեպում՝ «չերքեզ»: Տե՛ս K. Yosef, "Dawlat al-atrāk or dawlat al-mamlūk? Ethnic origin or slave origin as the defining characteristic of the ruling

ժԳ դարի կեսը բախտորոշ ժամանակաշրջան էր նաև Կիլիկիայի Հայոց թագավորության համար: Սա կապված էր Հիմնականում դեպի Առաջավոր Ասիա և Մերձավոր Արևելք մոնղոլների հաղթական շարժի և ձևավորված նոր աշխարհաքաղաքական իրադրության հետ: Հեթում արքայի (1226-1269 թթ.) դիվանագիտական հեռատեսությունը թույլ տվեց խուսափել նոր նվաճողների հետ բախումից և երկիրը զերծ պահել նրանց ավերիչ ներխուժումից: Հատկանշական է, որ մինչև մոնղոլների հայտնվելը Հայոց թագավորությունը գտնվում էր Ռուսի կամ Իկոնիայի սելջուկյան սուլթանության ենթակայության ներքո³³⁰: Սակայն երբ 1243 թ. Քյուսեղաղի (Չմանկատուկի) ճակատամարտում կրած ծանր պարտությունից հետո մոնղոլներին հնազանդվեցին նաև Ռուսի սելջուկները, վտանգը շատ մոտ և հետևաբար միջազ-

elite in the Mamlūk sultanate", *JSAI*, vol. 39, 2012, pp. 387-410, ինչպես նաև Նույնի՝ "The Term Mamlūk and Slave Status during the Mamluk Sultanate", *al-Qanṣara*, XXXIV 1, enero-junio 2013, pp. 7-34:

³³⁰ Սրա համար հիմք է առնվում սուլթանական նյութը, Բանդի հայտնի է, որ Այա ալ-Գին Քալկուբալ (կառ. 1220-1237 թթ.) և Դիյաս ալ-Դին Քալխասուր (1237-1246 թթ.) սուլթանների օրոք հատվել են հայ-սելջուկյան երկերվյան դրամներ, որոնց մի երեսին դրոշմված է «Հեթում թագաւոր հայոց», իսկ դարձերեսին՝ հիշյալ սուլթանների անունների արաբատառ մակագրություններն են: Տե՛ս P.Z. Bedoukian, *Coinage of Cilician Armenia (Revised edition)*, Danbury, Connecticut, 1979, pp. 227-235: Միջնադարյան աղբյուրներում Իկոնիայի սուլթանությանը հայոց թագավորության հարկ վճարելու մասին վկայություններ չգտնելով՝ որոշ հետազոտողներ կարծիք են հայտնել, որ այդ դրամները կտրվել են անտուրանտական նպատակներով (Պ. Սապաղեան, «Հեթում Ա-ի Հեթում-Ջապել եւ երկերուան դրամներու մասին», ՀՀԷ, հատոր Ը, Պէրսք, 1980, էջ 233-248), սակայն անհետաքրքիր անտեսական այն է, որ Հեթումը դրամի հատել է ի նշան իր հնազանդության, որը հավանաբար նկատյալ բնույթ էր կրում: Տե՛ս P.Z. Bedoukian, *Coinage*, p. 84: Հմմտ. Cl. Cahen, *La Turquie pré-ottomane (Varia Turcica VII)*, Institut Français d'Études Anatoliennes, Istanbul, 1988, p. 88-89: Տե՛ս նաև Y.T. Nercessian, *Attribution and Dating of Armenian Bilingual Trams*, Armenian Numismatic Society, Special Publication № 2, Los Angeles, 1983: Հմմտ. A. Stewart, *Kingdom*, 2001, pp. 43-44, n. 2; Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները և հայերը, հտ. Բ, Պատմա-քաղաքագիտական հետազոտություն* (Հայկական մատենաշար Փարսաւս Կիլիկիական հիմնարկութեան), Երևան, 2007, էջ 299-301: Այնուամենայնիվ, մեզ հայտնի աղբյուրներից Ռուսի սուլթանությանը հայոց թագավորության հարկատու լինելու մասին ակնհայտ է կան Իբն Բիքիի և ալ-Մամարիի մոտ: Իբն Բիքիի տեղեկությանն արդեն անդրադարձ կատարվել է (տե՛ս Հ.Պ. Տեր-Պօղոսյան, «Հայաստան Իբն Բիքիի համեմատ», ՀԱ, 1960, № 10-12 (Հոկտեմբեր-Նոյեմբեր), էջ 488-492), իսկ ալ-Մամարիի վկայությունը տե՛ս ներհում:

գային դիվանագիտական նոր հայեցակարգի որդեգրումն օրապահանջ դարձավ նաև Կիլիկյան Հայաստանի համար: Զեափորված քաղաքական պայմաններում երկրի ռազմավարչական վերնախավը՝ հանձին Հեթում թագավորի, որոշում կայացրեց մոնղոլների գերակայությունն ընդունելով հաշտության եզրեր փնտրել նրանց հետ: Արար մատենագիրը այլ-Ումարին այդ մասին այս կերպ է գրում՝ չկարողանալով թաքցնել հայերի նկատմամբ տածած անհանդուրժողական վերաբերմունքը. «Եվ վերջապես նրանց (հայերի) հպատակությունը Ռումի սելջուկյան արհաների մնացած մասի նկատմամբ էր (li-baqiyyat al-mulūk al-salāḡīqa bi-l-Rūm), և նրանց վրա [գլխա]հարկ ու [բոլոր]ին հայտնի հնազանդություն կար սահմանված, և սելջուկյան արհայի կողմից երկրի վրա գործակատար-վերակացուներ (al-'ummāl wa-l-šihānī 'alā al-bilād) կային կարգված, մինչև որ թուլացավ այդ [սելջուկյան] պետությունը... ինչին տեսչում էր այդ անիծյալը (Հայոց արհան), և նրա թռչնակն արծվի վերածվեց, ու հանախացան նրա եղբնազանցությունները... և նա գրավեց այս երկրներն ու տիրեց դրանց և [աստիճանաբար] նվազեցնելով սելջուկների ժառանգությունը՝ [վերջնականապես] յուրացրեց այն»³³¹: Իսկ Ֆրանսիացի պատմիչ Ժան դը ժուանպիլի (մահ. 1317 թ.) մոտ կարգում ենք. «Հայոց թագավորն Իկոնիայի սուլթանից ունեցած կախվածությունից ազատվելու համար ուղևորվեց թաթարների արհայի մոտ և հնազանդվեց, որպեսզի նրանց աջակցությունը ստանա»³³²:

Մոնղոլ զորավար Բաչու-նոյինի (կամ նոյան, այն է՝ «հրամանատար») հետ սկսած բանակցություններն արգասաբեր եղան: 1248 թ. Սմբատ Սպարապետի և 1254 թ. Հեթում արքայի՝ Համապատասխանաբար Գուլուկ (1246-1248 թթ.) և Մանգու (1251-1259 թթ.) խաների արքունիքներ կատարած դեսպանագնացություններով Կիլիկիո Հայոց թագավորությունը նույնպես վերջնականապես ստորակա դարձավ մոնղոլներին: Հեթումի միջնորդությամբ մոնղոլների գերակայությունն ընդունեց նաև Անտիոքի պրինց Բոհեմունդ Զ-ը (1252-1275 թթ.),

ով Հայոց գահակալի փեսան էր՝ նրա Սիրիլ դստեր ամուսինը³³³: Նույն Մանգու խանի օրոք նրա եղբայր Հուլաղուն ավարտին հասցրեց Իրանի նվաճումն ու հիմնադրեց մոնղոլական Իլխանությունը (1256-1335 թթ.):

Դառնալով Մամլուքյան եգիպտոսին՝ նշենք, որ Այբաքը սուլթանություն ղեկին մնաց յոթ տարի: Նրա կառավարման շրջանը լի էր ներքաղաքական ցնցումներով և արքունական խարդավանքներով, որոնցից մեկի զոհն էլ ինքը դարձավ: Նախ 1254 թ. նա սպանեց Բահրիների առաջնորդ Ֆարիս ալ-Դին Ակտային և գահընկեց արեց նրանց դրածո սուլթան ալ-Աշրաֆ Մուսային: Բահրիների մնացած մասը՝ Բայբարս ալ-Բունդուկդարիի գլխավորությամբ ստիպված եղավ ֆախչել Եգիպտոսից և ապաստան փնտրել Ասորիքում՝ ծառայության անցնելով նախ Դամասկոսի և Հալեպի Այյուբյան սուլթան ալ-Նասիր Յուսուֆի, այնուհետև՝ Քարաքի տեր ալ-Մուզիս Ումարի մոտ: Մասնավորապես հենց Բահրիների հորդորներով վերջինս երկու ռազմարշավ ձեռնարկեց Եգիպտոսի դեմ, բայց երկու դեպքում էլ ձախողվեց³³⁴: 1257 թ. Կահիրեում քաղաքական իրավիճակը կրկին շփկացավ: Սա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ Այբաքը վճռեց կնություն առնել Մոսուլի տեր Բադր ալ-Դին Հուլուի³³⁵ դստերը: Այս մասին

³³³ *Les gestes des Chiprois*, ed. G. Raynaud (Publications de la Société de l'Orient Latin. Série historique 5), Geneva, 1887, p. 161, ինչպես նաև P. Crawford, *The 'Templar of Tyre', Part III of the 'Deeds of the Cypriots'* (հետայսու՝ *Deeds of the Cypriots*), Ashgate, Aldershot, 2003 (reprinted by Routledge, London & New York, 2016, p. 34; Hayton, *La Flor des estoires de la Terre d'Orient*, Recueil des historiens des croisades. Documents arméniens, t. 2, p. 171.

³³⁴ S.A.F. 'Āšūr, *Al-'Asr al-Mamālīkī*, §. 24; R. Irwin, *The Middle East*, p. 30; R.S. Humphreys, *From Saladin to the Mongols: The Ayyubids of Damascus, 1193-1260*, State University of New York Press, Albany, 1977, pp. 331-333.

³³⁵ Բադր ալ-Դին Լուլուն ազգությամբ հայ էր, ում որպես մամլու գնկ էր Մուսայի Զանգի արքեպիսկոպոսի ալ-Դին Արպան Շահը (կառ. 1199-1211 թթ.): Բաժնաճանաչով ռազմավարչական աստիճանակարգերով նա 1211 թ. մահվան մահեռով գտնվող Արպան Շահի կողմից նշանակվել է նրա որդի ալ-Մալիխ ալ-Կահիր Մասուդի խնամակալ և այդ պահից սկսած դարձել Մուսայի փաստական կառավարիչը: Ալ-Կահիրի մահից հետո նա եղել է նաև վաչքինա որդու խնամակալը: Բադր ալ-Դինը Մուսայի լիբալ տեր է դարձել միայն 1233 թ., երբ պաշտոնապես «Իլխանության տվություն» (ինվեստիտուրա) է ստացել Բադրադի խալիֆայից՝ որդեգրելով *al-Malik al-Rahim* զահակապական անունը: Հայոց արհա Հեթումի պես ընդունել է մոնղոլների

³³¹ Št'u al-'Umārī, *Al-Ta'rif*, §. 55: Հմտ. al-Qalqašandī, *Šubh al-a'šā*, §. 8, §. 30:

³³² *Memoirs of the Crusades by Villehardoin & de Joinville*, tr. by Sir Frank Marzials, London & New York, 1908, p. 171.

իմանալով Շաջար ալ-Դուրրը կազմակերպեց իր ամուսնու սպանությունը, բայց չկարողանալով աջակիցներ գտնել իշխանությունն իր ձեռքում կենտրոնացնելու համար՝ ինքը նույնպես սպանվեց³³⁶: 1257 թ. սուլթանության դահլին նստեցվեց Այբաքի տասնհինգամյա որդին՝ ալ-Մանսուր Ալին (1257-1259 թթ.), թեև պետության փաստական իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրեց աթաբեկ Կուտուղը:

1259 թ., երբ իլխան Հուլաղուի մոնղոլական բանակներն արդեն գրավել էին Բաղդադը³³⁷, կործանել Աբբասյան խալիֆայությունը³³⁸ և

գերակայությունը և 1246 թ. ղեկավարություն ուղարկել Կարակորում: Աշակցել է Հուլաղուի ասորիյան արշավաններին: Թեև խլամացած էր, այնուամենայնիվ, միջնադարյան արաբական կենսագրական բառարանները նրա հայկական ծագման և դավանանքի մասին ուշագրավ տեղեկություններ են տալիս: Ալ-Ջահաբիի մոտ, օրինակ, կարդում ենք. «Ի շարս իր ժողովրդի մյուս ձեռքի՝ նա Մաղկազարդի տոնն (ید al-šā'ānīn) էր տոնում: Նա շափազանց մեծ սեղան էր գցում, երգիչներ բերել տալիս և այդ ամբողջ ընթացքում գինու տակառներ [գատարկում], զվարճանում և բերդից ոսկեգրամներ նետում, իսկ [ներքևում խնամված] մարդիկ իրար ձեռքից էին խլում դրանք: Նրան ատեցին քրիստոնեական ձեռքը նշելու համար՝ առելով. «Նա սիրով գովաբանում էր քրիստոնեական տոները՝ պնդելով, թե Աստված Մարիամի որդի Հիսուսն է...»: Տե՛ս al-Qahabī, *Siyar*, ց. 23, ց. 357: Հմմտ. al-Safadī, *Al-Wāfi*, ց. 24, ց. 308: Քաղր ալ-Դինին նվիրված երկու աշխատություն կա՝ Sawādī 'Abd Muḥammad al-Ruwayṣidī, *Imārat al-Mawṣil fi 'ahd Badr al-Dīn Lu'lu'*, 606-660 h. / 1209-1261 m., Maṭba'at al-Irṣād, Baḡdād, 1971 և D. Patton, *Badr al-Dīn Lu'lu'*, 1211-1259, Seattle and London, 1991, որոնք, ցավով, այս աշխատանքը գրելիս ձեռքի ապակե ձեռնոցով ունեցել: Տե՛ս նաև Կյոզ Կայնի հոդվածն «Իսլամի հանրագիտարան»-ում: Իմիջայրոց, վերջինս սխալվում է պնդելով, թե Քաղր ալ-Դինը հավանաբար սևամոր ստրուկ էր: Տե՛ս Cl. Cahen, "Lu'lu'", in *EF*, vol. 5, p. 821:

³³⁶ S. Jaqquāz, *Tārīḫ al-Mamālīk*, ց. 51-52.

³³⁷ Ինչպես երևում է Կիլիկիայի հայկական գործերը չեն մասնակցել Քաղդաղի գրավմանը: Փոխարենը, ինչպես հայ պատմիչներն են վկայում, մոնղոլական զորքերի կազմում Քաղդաղի և Մայլաֆարիկի յաշարմանը մասնակցել են հայկական գեղեր Բուն Հայաստանից: Հատկանշական է նաև, որ Մայլաֆարիկի յաշարումը գլխավորել է Հուլաղուի որդի ճուլմուսը (Ջիսամուր): Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, աշխատասիրությունը Կ.Ա. Մելիք-Օհանջանյանի, ՉՍՈՒ ԳԱ հրատ., Երևան, 1961, էջ 384-385; *Հասարակական պատմության վարդապետի Վարդապետի*, լուսարանեալ աշխատասիրությունը Վ. Ալիշանի (Մատենագրությունը նախնեաց: Պատմագիրի հայոց), Վենետիկ, 1862, էջ 152; *Պատմություն Նահանգի Միասական արարելի Մանգոլների Օրբելիան արքեպիսկոպոսի Միմեսոց*, ի յուս ընծայեաց հանդերձ ժամօրոպեամբ Կ.Վ. Շահնազարեանց, Ետ. Բ. Փարիզ, 1859, էջ 150: Հմմտ. Գրիգոր Ալեքեցի, *Պատմություն թաթարաց*, Երևանում, Տպարան Սերոբ Յակոբեանց, 1974, էջ 41-42, ինչպես նաև R.P. Blake, R.N. Frye, "History of the Nation of the Archers (The Mongols) by Grigor of Akanc", *HJAS*, vol. 12, № 3/4, 1969, p. 334: Տե՛ս նաև Cl. Mutafian,

պատրաստվում էին Հաջորդ քայլով ներխուժել Ասորիք, Եգիպտոսում անդի ունեցավ ևս մեկ հեղաշրջում: Գահընկեց անելով ալ-Մանսուր Ալիին՝ Մայլաֆ ալ-Դին Կուտուղն իրեն հռչակեց սուլթան՝ al-Malik al-Muzaffar դահակալական անունով (1259-1260 թթ.): Հաշտության եղբեր գտնվեցին նաև Ասորիքում ապաստանած Բահրինների հետ, և Բայբարսն իր զինակիցների հետ վերագործավ Եգիպտոս:

Հուլաղուի ասորիքյան արշավանքի մեկնարկը տրվեց Հիջրայի 658 թ. (1259/1260 թ.)³³⁹: Նա՝ մոնղոլական զորքերի, ինչպես նաև Հայկական, վրացական և Խուժի սելջուկյան օգնական ուժերի գլուխ անցած, մոտեցավ Եփրատին³⁴⁰: Հակոբիկ եկեղեցու մափրիան Բար Հերբեսի (մահ. 1286 թ.) «Ժամանակագրության» արարական խմբա-

L'Arménie, p. 145-146; D. Bayarsaikhan, *The Mongols and the Armenians (1220-1335)*, Leiden-Boston, 2011, pp. 127-135:

³³⁸ 1258 թ. մոնղոլների կողմից Բաղդադի գրավումը նշանակալից Աբբասյան խալիֆայության կործանումը: Այնուամենայնիվ, շատ շուտով (1260 թ.)՝ մամլուկյան սուլթան ալ-Ջահիր Բայբարսը (կառ. 1260-1277 թթ.) իր իշխանությանը լեգիտիմություն հաղորդելու նկատառումով Կահիրեում հանդիսավոր կերպով խալիֆա հռչակեց Աբբասյան դինաստիայի մի ներկայացուցիչ՝ ալ-Մուսաբասիր անունով, իսկ վերջինիս մահից հետո մեկ այլ թեկնածուի՝ ալ-Համի անունով: Սուլթանն իր այդ քայլով, փաստորեն, վերականգնեց կործանված խալիֆայությունը. չոր, թեկուզև ունենալով բացառապես խորհրդանշական և ծիսական-արարողակարգային բնույթ, իր գոյությունը պահպանեց մինչև օսման թուրքերի կողմից Եգիպտոսի նվաճումն ու Մամլուկյան սուլթանության կործանումը (1517 թ.): Կահիրեի Աբբասյան խալիֆայության մասին տե՛ս D. Ayalon, "Studies on the Transfer of the 'Abbāsid Caliphate from Baḡdād to Cairo", *Arabica*, vol. 7.1, 1960, pp. 41-59; P.M. Holt, "Some Observations on the 'Abbāsid Caliphate of Cairo", *BSOAS*, vol. 47.3, 1984, pp. 501-507; S. Heidemann, *Das Aleppiner Kalifat (A. D. 1261): Vom Ende des Kalifates in Baḡdad über Aleppo zu den Restaurationen in Kairo*, E.J. Brill, Leiden, 1994, ինչպես նաև վերջինիս գրախոսությունը Ռ. Ամիտայի կողմից՝ R. Amitai-Preiss, "The Fall and Rise of the 'Abbāsid Caliphate", *JAOS*, vol. 116, № 3, 1996, pp. 487-494:

³³⁹ Ըստ Հերում Կուսկուզու (Հայրոնի) Ասորիի գրավման ծագրերին իր մասնակցությունն է ունեցել Հերում արքան, և որ հենց նա է իլխանին խորհուրդ տվել առաջինը Հայեպին հարվածել: Տե՛ս H. Hayton, *La Flor*, p. 170:

³⁴⁰ R. Amitai-Preiss, *Mongols*, p. 26. Իրն Վասիլը գրում է. «Այս տարվա սկզբին Հուլաղուն թաթարների արքան, կուրեց-անցավ Եփրատն անհամբուխ զորախմբով կազմված թաթարներից, պարսիկներից, վրացիներից և այլ ժողովուրդներից»: Տե՛ս Ibn Wāṣil, *Muzarrīḡ al-kurūb*, ց. 6, ց. 10: «Այլ ժողովուրդներ» սավաժի տակ մատենագիրը, ըստ էության, նկատի ունի նաև հայերին:

գրութեան մեջ (*Al-Muḥtaṣar fi [tārīḥ] al-duwal*)³⁴¹ այդ մասին կարգում ենք. «[Հիբրայի] 658 թ. Ասորիի իլիան Հուպարուն՝ 400 հազարանոց զորքի ուղեկցությամբ պաշարեց Խառանն (*Ḥarrān*) ու գրավեց այն «անվտանգության երաշխիքով» (*amān*)³⁴²... Ապա նա առաջ ընթացավ և Եփրատի վրա՝ Մալաթիա քաղաքի մոտ, կամուրջ անցկացնել տվեց, մեկ ուրիշը՝ Հոռմկլայի մոտ, մյուսը՝ Կարկիսիայի (*Qarrqīn*), որոնց վրայով բանակներն անցան [գետն] ու մեծ սպանդ կազմակերպեցին Մանրիչուն»³⁴³: Այս հաղորդումը կա նաև հեղինակի ասորերեն «Ժամանակագրության» մեջ, միայն թե նրանում հիշյալ բնակավայրերից բացի գետանց կամրջի անցկացման վայր է նշված նաև ալ-Բիրան³⁴⁴: Մոնղոլական ներխուժման ականատես բաղդադցի քրիստոնյա պատմիչ Իբն ալ-Յուվատիրին (*մահ. 1323 թ.*) վերագրվող *Al-Ḥawādīṭ al-ḡāmi'a* երկը հաստատում է ասորի մատենագրի վկայությունը. «Հետո սուլթանը (նկատի ունի Հուպարուն-Գ.Գ.) հրաման արձակեց երեկ կամուրջ անցկացնել Եփրատի վրայով. մեկը՝ Մալաթիայի մոտ, մյուսը՝ ալ-Բիրայի, մեկ ուրիշը՝ Հոռմկլայի, և իր անհաշվելի բանակով ուղղություն բռնեց դեպի ալ-Ջազիրա և գրավեց այն անվտանգության

³⁴¹ Այս երկրորդ, սակայն, պարզապես բարգամնություն չէ, այլ լրիվ ինֆորմացիոն աշխատություն, քանի որ ներառում է լրամակված հատվածներ ու տեղեկություններ, որոնք տեղ չեն գտել ասորերեն բնագրում: Տե՛ս J.B. Segal, "Ibn al-'Ibrī", in *IEP*, vol. 3, p. 805; Հմմտ. I.C. Lawrence, On the Arabic chronicle of Bar Hebraeus. His aims and audience, *Parole de l'Orient: revue semestrielle des études syriaques et arabes chrétiennes: recherches orientales: revue d'études et de recherches sur les églises de langue syriaque*, XIX, 1994, pp. 319-378; Երկու երկերի համեմատական մեկ այլ լեզույնում է տե՛ս D. Aigle, *The Mongol Empire between Myth and Reality: Studies in Anthropological History*, E.J. Brill, Leiden-Boston, 2014, pp. 66-88:

³⁴² *Amān*-ը կյանքի, անվտանգության, հաշտության, խաղաղության, հովանավորության խոստումն է, սպահավազի կամ երաշխիքի հնազանդության դիմաց: Ինասխտապես մասին տե՛ս J. Schacht, "Amān", in *IEP*, vol. 1, pp. 429-430, ինչպես նաև J. Wansbrough, "The Safe-Conduct in Muslim Chancery Practice", *BSOAS*, vol. 34, № 1, 1971, pp. 20-35:

³⁴³ Ibn al-'Ibrī, *Tārīḥ muḥtaṣar al-duwal, al-ṭab'a al-tāniya*, bi-tahqīq Anṭūn Ṣāliḥānī al-Yasūṭī, Dār al-Rā'id al-Lubnānī, Bayrūt, 1994, p. 279.

³⁴⁴ *The Chronography of Gregory Abū'l-Faraj (Bar Hebraeus), the son of Aaron, the Hebrew Physician, the first part of his Political History of the World, vol. I*, trans. Ernest A. Wallis Budge, Oxford University Press, London, 1932, reprinted by Gorgias Press, 2003, p. 435.

երաշխիքով (*amān*)»³⁴⁵: Ավելի ուշ շրջանի արաբագիր պատմիչներից գետանց կամուրջների շինարարության մասին խոսում է նաև Իբն Բասիրը (*մահ. 1373 թ.*), թեև չի նշում, թե դրանք հատկապես որ բնակավայրերի մոտ են կառուցվել³⁴⁶: Ուշագրավ է, որ Հայկական մի քանի աղբյուրների հավաստմամբ Հայոց Կոստանդին կաթողիկոսը հանդիպել է Հուպարունի և օրհնել նրան: Վարդանը գրում է. «Յեօթն հարիւր և ութ թուին շոգաւ Հուպատն յաշխարհն Միշագետաց...: Եկն առ նա պատրիարզն Հայոց, կաթողիկոսն, օրհնեաց զնա և սիրեցաւ ի նմանէ»³⁴⁷:

Երևում է՝ Հոռմկլայի մատուցներում Եփրատն անցնող մոնղոլական բանակը մեծ տավաղություն է թողել Հոռմկլայիցիների վրա: Դրա մասին են վկայում 1260 թ. Հոռմկլայում Թորոս Թոսլիների վրձնով ծաղկված մի Ավետարանում մոզերի երկրպագության տեսարանում մի քանի մոնղոլների պատկերները և կողքին արված «բաբարն երեկ այսաւր» գրառումը³⁴⁸: Այդ ձեռագրի հիշատակարանում ասվում է. «...աւարտեցալ մատեանս... ի բռնակարպեան մեծի իշխանին Մանկու կոչեցելոյ եւ տիեզերակալին Հողայունին՝ եղբաւ նորա, ի թագաւորութեան աստուածաւեւ եւ բարեպաշտ արքային Հայոց Հեթմոյ, եւ ի ժամանակի յորում առաւ հոչակատուն Հալպ, և ամենայն քաղաք և ամուր նորա»³⁴⁹:

Մոնղոլական զորքը Հալեպը պաշարեց հիջրայի 658 թ. Սաֆար ամսի 2-ին (1260 թ. հունվարի 18): Ինչպես վերևում ենք նշել, Հալեպն ու Դամասկոսն այդ ժամանակ պատկանում էին Այյուբյան ալ-Նասիր Յուսուֆին: «Եւ եկեալ եհաս ի վերայ Հալպայ, և պատեաց զնա

³⁴⁵ Ibn al-Fuwaṭī, *Al-Ḥawādīṭ al-ḡāmi'a wa-l-taḡārib al-nāfi'a fi al-mi'a al-sābi'a*, bi-tahqīq Maḥdī al-Naḡm, Dār al-kutub al-'ilmīyya, Bayrūt, 2002, p. 243-244. Երկի հեղինակության վիճելիության մասին տե՛ս F. Rosenthal, "Ibn al-Fuwaṭī", in *IEP*, vol. 3, p. 769.

³⁴⁶ Ibn Kaṭīr, *Al-Bidāya wa-l-nihāya*, ք. 17, bi-tahqīq 'Abd Allāh ibn 'Abd al-Muḥsin al-Turkī, Dār Haḡar, 1998, p. 395.

³⁴⁷ Վարդան Վարդապետ, *Հատարան*, էջ 151: Հմմտ. Մանր ժամանակագրություններ XIII-XVIII դդ. (հետալյուս՝ ՄԺ), կազմեց Վ.Ա. Հակոբյան, հտ. Բ, ՀՍՍԹ ԳԱ հրատ., Երևան, 1956, էջ 143, 176: Տե՛ս նաև Cl. Mutafian, *L'Arménie*, p. 146; D. Bayarsaikhan, *The Mongols*, p. 137:

³⁴⁸ Տե՛ս Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարան, *ձեռագիր № 251 (Ավետարան)*, քեր 15թ, ինչպես նաև Cl. Mutafian, *L'Arménie*, p. 147:

³⁴⁹ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (հետալյուս՝ ՀԶԶ), ԺԳ գար. կազմեց Ա.Ս. Մարտոսյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1984, էջ 301:

շուրջանակի, - գրում է *Ամրատ Սպարապետը՝ շարունակելով*, - յդեաց և առ բագաւորն Հեթում գնալ առ իննն, և նա վաղվաղակի եհաս առ խանն զօրօփ իւրով, և խանն ուրախութեամբ ընկալաւ զնա»³⁵⁰: *Հուլաղուի գլխավորած բանակները, ինչպես իրն Վասիլն է վկայում, գործի ղնելով 20 քարանետ մեքենա և պաշարողական այլ տեխնիկա*³⁵¹, *Հալեպի գրավումն ավարտին հասցրին Սաֆար ամսի 9-ին (հունվարի 26, օրը կիրակի)*³⁵²: *Նույն Սաֆար ամսին մոնղոլները դրեթե առանց դիմադրութեան տիրացան նաև Դամասկոսին: Բանն այն է, որ Դամասկոսի Այյուբյան սուլթանն ալ-Նասիր Յուսուֆը, մոնղոլների հաղթական առաջընթացի և Հալեպի առման լուրն առնելով, գերադասեց փախուստի դիմել՝ քաղաքը թողնելով բախտի քմահաճույքին*³⁵³: *Արյունահեղութիւնից խուսափելու համար Դամասկոսի մեծամեծերը վճռեցին քաղաքն «անվտանգութեան երաշխիքով» (amān) հանձնել Հուլաղուին: «...Իրեանց կամաւ ետուն զհաղաքն եւ բանալի հաղաքին ՚ի ձեռս Հուլաու Ղանին», - կարգում ենք Գրիգոր Ակնեցոյուն վերադրվող երկում*³⁵⁴: *Այս իրադարձութեամբ ավարտվեց վերջին Այյուբյան տիրակալի իշխանութիւնն Ասորիքում*³⁵⁵:

Ղաթի ալ-Մաքին իրն ալ-Ամիրը պատմում է, որ մոնղոլները սրի քաշեցին Հալեպի ընակչութեան մեծ մասին, և «նույնիսկ ասում էին, որ Բաղդադում և Պարսկաստանի և ոչ մի հաղաքում այդքան մարդ չէին կոտորել,

³⁵⁰ *Ամրատայ Սպարապետի Տարեգիրք*, աշխատասիրութեամբ Ն. Սերովբէ Ազըլեանի, Վենետիկ, 1956, էջ 235:

³⁵¹ Ibn Wāsil, *Mufarriğ al-kurūb*, ց. 6, ք. 197: Հմմտ. Ibn al-ʿIbrī, *Muhtasar*, ք. 487, ինչպես նաև *Յույնի՝ Chronography*, pp. 435-436:

³⁵² Տե՛ս Ibn Wāsil, *Mufarriğ al-kurūb*, ց. 6, ք. 197: Abū al-Fidāʾ, *Al-Muhtasar*, ց. 2, ք. 309-310: Հմմտ. al-Maqrīzī, *Al-Sulūk*, ց. 1.2, ք. 422: Տե՛ս նաև ներքևում:

³⁵³ Abū Šāma, *Tarāğim*, ք. 203: Տե՛ս նաև R.S. Humphreys, *From Saladin to the Mongols*, p. 351; P. Jackson, "The Crisis in the Holy Land in 1260", *EHR*, vol. 95, № 376, 1980, p. 490:

³⁵⁴ Տե՛ս *Գրիգոր Ակնեցի*, *Պատմութիւն թաթարաց*, էջ 49, ինչպես նաև R.P. Blake, R.N. Frye, "History of the Nation", p. 348:

³⁵⁵ Ibn al-ʿAmīd, *Al-Mağmūʾ al-mubārak*, ք. 50. Հալեպին տիրելուց հետո մոնղոլները հաղաքի բերդերից ազատ արձակեցին մի խումբ Բահրի մաճլուհների և իրենց հետ Իրան տարան: Տե՛ս al-Maqrīzī, *Al-Sulūk*, ց. 1.2, ք. 427: Նրանց թվում էր Սուեկոս ալ-Աշխար անունով մեկը, ով տարիներ անց կարևոր «գեր» պիտի ունենար հայ-մաճլուհյան հաղափական նարաբերություններում, որոնց կանդրազստմանը ներհում՝ 3.1 մասում:

ինչքան որ Հալեպում: Ճանապարհներն ու շուկաները դիակներով լցվեցին, և քաթարների գորբերը ստիպված էին իրենց ձիերով նրանց վրայով անցնել, քանզի չէր գտնվում մի ազատ տեղ, որտեղ դիակ չլիներ»³⁵⁶: «Հալեպի միջնաբերդը դիմադրություն ցույց տվեց, - գրում է *ալ-Մակրիզին*, - և Հուլաղուն այն պաշարման մեջ պահեց այնքան ժամանակ, մինչև որ գրավեց Սաֆար ամսի 10-ին: Նա ավերածության մատնեց այն, քանզից բոլոր պարսապները, ինչպես նաև մզկիթներն ու այգիները, և հաղաքն ամայացավ»³⁵⁷: *Իսկ իրն Քասիրի բնորոշմամբ՝ Հուլաղուի հարձակումից հետո «Հալեպն ասես վերածվեց մի բորոտ ավանակի»*³⁵⁸:

Հալեպում մոնղոլական ներխուժմանն ակնատես եղած Բար Հեբրեսուր նույնպես ընդունում է, որ Հալեպի սպանդն ավելի սաստիկ էր, քան Բաղդադինը: Հակորթիկների մաֆրիանը պատմում է, որ չնայած ինքը զնացել է իր հնազանդութունը հայտնելու Հուլաղուին, բանտարկվել է Կալաաթ ալ-Նաջմում (*Ջիսր Մանրիջ-Գ.Դ.*): *Ըստ նրա՝ քաղաքի ասորի բնակչությունը, առանց իր հովվապետի մնալով, նույնպես կոտորածի և գերեվարութեան է ենթարկվել: Բար Հեբրեսուր շարունակում է, որ ասորիների մի մասը կոտորածից փրկվել է ի շնորհիվ Թորոս անունով մի քահանայի, ով հայոց Կոստանդին կաթողիկոսի եղբայրն էր, և Գեորգ (Kūrāk) անունով մի վանականի, ովքեր զնացել են թաթարների մոտ և ազատելով ողջ մնացածներին՝ առաջնորդել ասորական եկեղեցի*³⁵⁹:

Աղբյուրների հաղորդմամբ երկու քաղաքների գրավմանն իրենց մասնակցությունն են բերել նաև Հայոց արքա Հեթումն ու Անտիոքի իշխան Բոհեմունը: *Վարդանը գրում է, որ «...ընդ նմա էր ի յառնույն զամենայն աշխարհն Շամայ՝ և մեր պսակավորն Հեթում, ազատելով ի մահուանէ զբրիտոնեայսն յեկեղեցականս և զաշխարհականս, յամենայն տեղիս լինելով»*³⁶⁰: *Ինչ վերաբերում է արաբազիր պատմիչներին, ապա*

³⁵⁶ Ibn al-ʿAmīd, *Al-Mağmūʾ al-mubārak*, ք. 49.

³⁵⁷ Al-Maqrīzī, *Al-Sulūk*, ց. 1.2, ք. 422.

³⁵⁸ Ibn Kaṭīr, *Al-Bidāya*, ց. 17, ք. 396.

³⁵⁹ Bar Hebraeus, *Chronography*, p. 436. Հմմտ. *Յույնի՝ Muhtasar*, ք. 487.

³⁶⁰ Վարդան Վարդապետ, *Հուլաղումն*, էջ 151: Հմմտ. Ստեփաննոս Օրբելեան, *Պատմութիւն*, հտ. Բ, էջ 148-149:

նրանցից ոմանք Հայոց և Անտիոքի տիրակալներին հիշյալ քաղաքներում գործված զարհուրելի արարքներ են վերագրում: Իրն ալ-Ամիրի վկայությամբ՝ Հալեպում գերության քչվեց 100 հազարից ավելի մարդ, որոնց մեծ մասին վաճառեցին «ֆրանկների եկրում և հայերի եկրում և կամ տեղափոխեցին Միջերկրական ծովի կղզիներ»³⁶¹: Բայքարս ալ-Մանսուրին, ալ-Նուվայրին և Իրն ալ-Ֆուրաթը նույնպես գրում են, որ գերիներին վաճառեցին ֆրանկներին և հայերին³⁶²: Իսկ Իզդ ալ-Դին իրն Շահգադը վկայում է. «Երբ անիծյալ թաթարները 658 թ. Սաֆար ամսի 11-ին գրավեցին Հալեպ քաղաքը, Սաի տերը մտավ [Հալեպի] մզկիթ և մեծ թվով մարդկանց սրի փաշեց: Նա հրկիզեց նրա առջևի պատը, և կրակը տարածվեց դեպի արևմուտք ու հարավ՝ դեպի *al-Halāwīyya* դպրոցը, ապա հրկիզվեց նաև կառավարանների շուկան»³⁶³: Երբ [Հալեպի կառավարիչ] Իմադ ալ-Դին ալ-Կազվիին Հուպարուն հայանեց, թե ինչե՞ր են արել սեղանները՝ մասնավորապես մզկիթն այրելու և քրիստոնյաների եկեղեցիներին ձեռք չապալու մասին, վերջինս հրամայեց վերջ տալ դրան և մարել կրակը: Նա սպանել տվեց մի խումբ սեղանների: Եվ շնայած կրակը մարել չհաջողվեց, Ալլահը տեղատարափ անձրև ուղարկեց և հանգցրեց այն»³⁶⁴:

Մոնղոլական զորքերը Քիթրուզա գործավարի գլխավորությամբ Դամասկոս շարժվեցին 658 թ. Ռաբի առաջին ամսի (1260 թ. մարտ) կեսերին, բայց քաղաքի միջնաբերդը, հակառակ վերահիշյալ պայմանավորվածության, հրաժարվեց հնազանդվել մոնղոլներին: Բայց երբ զործի դրվեցին 20-ից ավելի բաբանները, միջնաբերդում պաշարվածները նույնպես ստիպված եղան անձնատուր լինել՝ ենթարկվելով

«նողոք կոտորածի և թալանի»³⁶⁵: Հետաքրքիր է, որ «Գործի կիպրացի»-ի վկայությամբ՝ մոնղոլական զորքերի հրամանատար Քիթրուզային Դամասկոս են ուղեկցել Հայոց արքան և Անտիոքի իշխանը: Ըստ աղբյուրի՝ քրիստոնյա միապետերն այստեղ նույնպես մզկիթներ են քանդել, դրանք արտոնների են վերածել, գինի են ցողել և խոզի միս քսել պատերին, իսկ մեկն անգամ փորձել են եկեղեցու վերածել՝ պատճառաբանելով, որ այն ժամանակին հուսկան եկեղեցի է եղել, և որ մուսուլմաններն իրենք են այն մզկիթ դարձրել³⁶⁶: Արդի հետազոտողները, ինչպես օրինակ, Ջեքսոնը և, նրան հետևելով, նաև Ամիրայը, հակված չեն հավատ ընծայելու այս հաղորդմանը: Մասնավորապես ըստ Ամիրայի՝ հաղորդումը չպետք է բառացի հասկանալ: Հնաբավոր է՝ մոնղոլ պաշտոնյաների (այդ թվում հենց Հուպարունի զորավար Քիթրուզայի, ով նեստորական էր)՝ քրիստոնեաների նկատմամբ սածած համակրանքը պատճառ եղած լինի Հեթումի և Բահեմունդի մասին հյուսված այսօրինակ պատմությունների³⁶⁷: «Գործի կիպրացի»-ի հաղորդմանը հակառակ՝ մուսուլման հեղինակների մոտ, ի տարբերություն Հալեպի դեպքերի, Հայոց արքային կամ Բահեմունդին ուղղված անմիջական մեղադրանքներ չկան: Այնուամենայնիվ, նրանք նույնպես խոսում են քաղաքի գրավումից հետո քրիստոնեաների և մուսուլմանների միջև եղած բախումների մասին: Արաբ պատմագիրների վկայությամբ՝ Դամասկոսի գրավումից հետո քրիստոնյաները քաղաքի մոնղոլ վերակացու-կառավարիչների (*šihna, nā'ib*)՝ մասնավորապես քրիստոնյա Իլ-Սիրանի (այլուր՝ Իլ-Շիրան, մեկ այլ տեղում՝ Իլրան) թողալովությամբ ճնշում էին մուսուլմաններին: Քաջալերվելով այն փաստից, որ վերջինս իրենց եկեղեցիներն է հաճախում, նրանք բարձրաձայն իրենց կրոնն էին գովաբանում և անվանարկում իսլամը, գինի էին խմում, այն ցողում մարդկանց և անգամ մզկիթների գույների վրա, հնչեցնում էին իրենց եկեղեցիները գանգերը և այլն: Երբ մուսուլմանները քրիստոնյաների զործած արարքների մասին բողոքել են Իլ-Սիրանին (այլուր՝ Քիթրուզային), նրանց ծեծով և

³⁶¹ St' u Ibn al-'Amīd, *Al-Mağmū' al-mubārak*, §. 49: Հմմտ. al-Maqrīzī, *al-Sulūk*, §. 1.2, §. 422:

³⁶² Baybars al-Manṣūrī, *Zubda*, §. 48; al-Nuwayrī, *Nihāya*, §. 27, §. 261; Ibn al-Furāt, *Tārīḥ al-duwal (Selections)*, vol. 2, p. 41.

³⁶³ Կանար ևույնպես մեջբերում է Իրն Շահգադին, բայց տարօրինակ կերպով հենց այս տեղում կանց է առնում չքարգանելով հաղորդման վերջին կարևոր մասը: St' u M. Canard, *«Le Royaume»*, p. 219-220, n. 10:

³⁶⁴ St' u 'Izz al-Dīn ibn Šaddād, *Al-'Alāq al-ḥaṭira*, §. 1.1, §. 116: Ժե դարի պատմիչ Իրն ալ-Շիհնան (մահ. 1485 թ.) նույնությամբ կրկնում է Իրն Շահգադին: Հմմտ. Ibn al-Šihna, *Al-Durr al-muntaḥab fi tāriḥ mamlakat Ḥalab*, bi-taḥqīq 'Abd Allāh Muḥammad Darwīš, *Dār al-kitāb al-'arabī*, Dimašq, 1984, §. 68-69:

³⁶⁵ Abū Šāma, *Tarāḥim*, §. 204; Ibn al-'Amīd, *Al-Mağmū' al-mubārak*, §. 52.

³⁶⁶ *Les gestes des Chiprois*, p. 161-162, ինչպես նաև *Deeds of the Cypriots*, pp. 34-35.

³⁶⁷ P. Jackson, *«Crisis»*, p. 486; R. Amitai-Preiss, *Mongols*, p. 31.

նվաստացումներով դուրս են հանել միջնաբերդից: Սակայն, երբ մոնղոլները 1260 թ. սեպտեմբերին ստիպված են եղել թողնել Դամասկոսն ու Հեռանալ, մուսուլմանները դաժան հաշվեհարդար են տեսել քաղաքի քրիստոնյաների հետ նրանց գործած արարքների համար՝ ծեծի ենթարկել, այրել նրանց տներն ու եկեղեցիները (Kanīsat Maryam, այն է՝ [Սբ.] Մարիամ եկեղեցին)³⁶⁸:

Մոնղոլները մեկը մյուսի հետևից տիրացան Ասորիքի մյուս մեծ ու փոքր բնակավայրերին³⁶⁹: Ռաշիդ ալ-Դինը վկայում է, որ երբ մոնղոլները գրավեցին Հարիմ ամրոցը, նրա բոլոր բնակիչներին՝ անգամ կանանց և ծծկեր երեխաներին սրի քաշեցին. փրկվեց միայն հայազգի մի ոսկերիչ³⁷⁰: Բար Հեբբեոսը նույնպես պատմում է Հարիմի արյունալի առման մասին, միայն թե գրում է, որ միակ փրկվածը մի հայ դարբին էր³⁷¹:

³⁶⁸ St' u Ibn al-'Amīd, *Al-Mağmū' al-mubārak*, §. 53; Abū Šāma, *Tarağim*, §. 208; al-Yūnīnī, *Dayl* (Haydārābad), §. 1, §. 362-363; al-Dahabī, *Tārīh al-Islām*, §. 48, §. 59-60; Ibn Kaṭīr, *Al-Bidāya*, §. 17, §. 397-399; Abū al-Fidā', *Al-Muhtaṣar*, §. 2, §. 314: Ուլազբալ է. որ ալ-Վասիթին Իլ-Սիրասին անվանում է Հուպադուի մուսուլմանների (ibn hālat Hūlākā): St' u Ibn al-Wāsiṭī, *Radd*, §. 73-74:

³⁶⁹ Արարական մի քանի աղբյուրներ, ինչպես օրինակ Իբն Վասիթը, հաղորդում են, որ մոնղոլական որոշ զորախմբեր մինչև Երուսաղեմ են հասել: St' u Ibn Wāsiṭī, *Mufarriğ al-kurūb*, §. 6, §. 201: Անգամ այս դեպքում նշանակությունից հեռու է Ալմեցու այն հաղորդումը, թե Հուպադուն «գնաց ի վերայ Երուսաղեմ քաղաքին և էտո գեա. և ինքն մտա ի սուրբ Ճարութիւնն, և երկիր եպագ սրբոյ Գերեզմանին. և թողեալ զգաւրքն ի տեղն, և ինքն դարձա խաղաղութամբ յաշխարհն արեւելից»: St' u Գրիգոր Ալմեցի, *Պատմութիւն թաթարաց*, էջ 50; R.P. Blake, R.N. Frye, "History of the Nation", p. 348: Հմմտ. Սմբատ Սպարապետ, *Տարեգրք*, Վենետիկ, էջ 236: Հմմտ. R. Amitai, "Mongol raids into Palestine (A.D. 1260 and 1300)", *JRAS*, № 2, 1987, pp. 237-238: Գլյոմ Տյուրացու երկի հին ֆրանսերեն թարգմանության մի անունը շարունակող է գրում է, որ թաթարները «մտել են Երուսաղեմի թագավորություն և գրավել Սիրոն քաղաքը»: St' u J. Shirley, *Crusader Syria in the Thirteenth Century: The Rothelin Continuation of the History of William of Tyre with part of the Eracles or Acre text*, Routledge, London-New York, 2016 (սուադին հրատ. Aldershot, Ashgate, 1999), p. 141:

³⁷⁰ St' u Rašīd al-Dīn, *Ġāmi' al-Tawārīh*, §. 2, be-kūšeš-e Bahmān Karīmī, Eqbāl, Tehrān, 1960, §. 719-720, ինչպես նաև Рашид-ад-Дин, *Сборник летописей*, том III, пер. с перс. А.К. Арендса, под ред. А.А. Ромаскевича, изд. АН СССР, Москва-Ленинград, 1946, стр. 50:

³⁷¹ Bar Hebraeus, *Chronography*, p. 436.

Սակայն մոնղոլ Մեծ Խան Մանգուի հանկարծահաս մահվան ու Կարակորումում նոր խանի գահակալման շուրջ ծագած վեճերի լուրն ընդմիջեց մոնղոլական զորքերի հետագա առաջխաղացումը: Հուլի-գուեն, իր հետ վերցնելով մոնղոլական զորքերի մեծ մասը, հետ քաշվեց Իրան՝ Կարակորում մեկնելու մտադրությամբ³⁷²: Իրն ալ-Դավազարիի վկայությամբ՝ իլխանը զորքերի մնացյալ մասն³⁷³ ու նորանվաճ տարածքների պահպանությունը վստահեց Քիթբուզա անունով իր զորավարին՝ նրան նշանակելով Հալեպի փոխարքա (nā'ib), իսկ Դամասկոսում փոխարքա կարգեց Բայդար[ա] անունով մեկ այլ զորավարի³⁷⁴:

Հուլիզուլի անակնկալ նահանջը վտանգավոր իրավիճակ ստեղծեց Կիրիկյան Հայաստանի համար: Մոնղոլների հետ հաստատած դաշնակցությունը հնարավորություն տվեց Հայոց արքային տարածքային ձեռքբերումներ ունենալ³⁷⁵, և տիրանալ այն հողերին, որոնք մի ժամանակ Գող Վասիլին էին պատկանել³⁷⁶: Ըստ Հեթում արքայորդու «Ճաշոց»-ի (1286 թ.) հիշատակարանի՝ «... ևս (Հեթումը-Գ.Գ.) ազնութամբն Աստուծոյ և ձեռնառութամբ Մուղալ զաւրուն Էտո գնեմն Գերմանիկէ (Մարաշը-Գ.Գ.) և զՊենեսնի»³⁷⁷:

³⁷² Ibn Duqmaq, *Nuzhat al-anām*, §. 260.

³⁷³ Աղբյուրներ տարակարծիք են Քիթբուզայի արամազորության տակ թողնված զորի թվաճանակի վերաբերյալ: St' u R. Amitai-Preiss, *Mongols*, p. 27:

³⁷⁴ Ibn al-Dawādārī, *Kanz al-durar*, §. 8, §. 49; al-Maqrīzī, *Al-Sulūk*, §. 1.2, §. 427. Հմմտ. R. Amitai-Preiss, *Mongols*, p. 27, n. 10.

³⁷⁵ Մյուս եվրոպացի առանձին հողված ունեմ: St' u Գ. Դանիելյան, Վ. Տեր-Ղևոնդյան (համանդիմակ), «Կիրիկյան Հայաստանի տարածային նեոբերումները Հուպադուի 1260 թ. ստորիցյան արշավանքից հետո», *Էջմիածին*, 2017, II, էջ 59-64:

³⁷⁶ Cl. Cahen, *La Syrie du Nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche*, Geuthner, Paris, 1940, p. 705; S. Der-Nersessian, *The Kingdom of Cilician Armenia, in A History of the Crusades, vol. II: The Later Crusades 1189-1311*, gen. ed. K.M. Setton, The University of Wisconsin Press, 1969, p. 653; M. Canard, "Le Royaume", p. 222:

³⁷⁷ St' u Մատենադարանի ձեռ. № 979 («Հեթում Բ արքայի Ճաշոց»), քեր 475ա, ինչպես նաև 222, ԺԳ գաթ, էջ 587: Հմմտ. Սամուէլի քահանայի Անեցույ Հուպադունք ի գրոց պատմադրաց, յտառք և ծածօր. Աշխատեց Տեր-Միքիլեանի, Վաղարշապատ, II. Էջմիածնի տպարան, 1892, էջ 221 (շարունակող); Hayton, *La flor*, p. 171: Հմմտ. Վահրամայ Բարունույ Ռոմանուս պատմութիւն Ռուբենեանց, ի լոյս բնծայեաց հանդերձ ծանօթութամբ Կարապետ Վարդապետ

Ըստ Իրն ալ-Շիհնայի՝ Տիջրայի 656-ին (1258 թ.) Մարաշը գտնվում էր Իմադ ալ-Դին անունով մի կառավարչի ձեռքում, ում բնտանիքը քաղաքին տիրում էր արդեն 50 տարուց ավելի: Պատմիչը շարունակում է, որ «Իմադ ալ-Դինն աղաջիրների (աղաշ-երի)³⁷⁸ և հայերի հարձակումների հաճախացման պատճառով այլևս անկարող էր պահել այն: Նա նամակ գրեց Ռումի տեր Իզզ ալ-Դին Քայկավուսին՝ բերդը նրան հանձնելու մտադրությամբ, բայց վերջինս հրաժարվեց: Գրեց նաև Ասորիի տեր ալ-Մալիխ ալ-Նասիր Սալան ալ-Դինին, բայց վերջինս նույնպես հրաժարվեց ընդունել բերդը: Եվ երբ նրա վիճակը բարդացավ, [ստիպված] բողեց այն և հետացավ, որից հետո նրան տիրեցին հայերը»³⁷⁹:

Այն մասին, որ Հուլազուի ասորիքյան արշավանքի արդյունքում Հեթումը տիրացել է Բեհեսնային կամ Բեհեսնիին, արաբագիր Հեղինակները նույնպես հաղորդում են, միայն թե զեպքն իրարից դուրսնինչ տարբերվող պատումներով են ներկայացնում: Ըստ Իզզ ալ-Դին իրն Շադզադի՝ մինչև մոնղոլների արշավանքը Բեհեսնին Հալեպի սուլթան ալ-Նասիր Յուսուֆի տիրույթներից էր: Եվ երբ գրոհել էին Ասորիքը, փորձել են զրավել այն, բայց տեսնելով, որ պաշարումը հրկարում է, թողել են այն և առաջ ընթացել Հալեպի ուղղությամբ: Հալեպի առումից Հետո մոնղոլները կրկին վերադարձել և վերսկսել են

Շահնագրեանց, Փարիզ, 1859, էջ 220: Այս մասին տե՛ս նաև R. Grousset, *The Empire of the Steppes*, tr. from French by Naomi Walford, Rutgers University Press, New Brunswick, New Jersey, 1970, p. 362; Cl. Cahen, *La Syrie*, p. 705; Г.Г. Микаелян, *История Киликийского Армянского государства*, изд. АН АССР, Ереван, 1952, стр. 333; Cl. Mutafian, *L'Arménie*, p. 149; A. Stewart, *Kingdom*, pp. 46-47, n. 10: Այս արշավանքի արդյունքում հայոց թագավորության հսկողության տակ անցած այլ բերդերի մասին տե՛ս նաև հետևյալը՝ Յ.1 մասում:

³⁷⁸ Բևագրում՝ 'agāğiriyā (բառացի՝ «անաստի մարդիկ», «ձառերի մարդիկ»): Աղաշ-երիները բյուր-օղուզական ցեղախմբեր էին, որ սովորություն ունեին անասնետում բնակվել: Տե՛ս *Рашид-ад-Дин*, Сборник летописей, том I, книга I, пер. с персидского Л.А. Хетагурова, ред. и примечания А.А. Семенова, изд. АН СССР, Москва-Ленинград, 1952, стр. 85:

³⁷⁹ Տե՛ս Ibn al-Šiḥna, *Al-Durr al-muntahab*, §. 192: Իրն Բիրին նույնպես գրում է Մարաշի վրա աղաշ-երիների հաճախակի հարձակումների մասին, որոնք ըստ նրա «ճանապարհներ և քաղաքների էին կտրում, հրսում Ռումի երկրի, Ասորիի և Տայերի վրա»: Տե՛ս Recueil de Textes Relatifs à L'Histoire Des Seldjoucides par M. Th. Houtsma, vol. III, Histoire des Seldjoucides d'Asie Mineure d'après l'abrégé du Seldjournâme d'Ibn-Bībī, E.J. Brill, Leide, 1902, §. 284 (հետաքրքիր՝ Ibn-Bībī, *Muḥtaṣar*): Հմտ. Cl. Cahen, *La Turquie*, p. 240-241:

պաշարումն առավել մեծ ուժով և ի վերջո գրավել: Բայց նրա բնակչությունը հրաժարվել է լինել «Սսի տիրոջ» հպատակության տակ, ուստի այնտեղ մուսուլման կառավարիչ է նշանակվել: Բայց որոշ ժամանակ անց բերդի բնակիչները, իրենց անվտանգ չզգալով, ի վերջո ստիպված են եղել բերդը հանձնել հայերին³⁸⁰:

Իրն Շադզադի պատումին հակառակ՝ ալ-Ջադարի պատմիչը Տիջրայի 692 (1293) թվականի իրադարձությունների շարադրանքում, երբ խոսում է Սսի երկրի Հեա կնքված հաշտության արդյունքում մասնուքներին հանձնված բերդերի (Բեհեսնի, Մարաշ, Թել Համդուն) մասին, գրում է. «[Բեհեսնան] Հալեպի տեր ալ-Մալիխ ալ-Նասիր Սալան ալ-Դին Յուսուֆի ժամանակներում որպես իր երկրի տիրույթներից մեկը գտնվում էր նրա կառավարիչների ձեռքում: Երբ թաթարները Հալեպ եկան և տիրացան նրան, այնտեղի (Բեհեսնայի) կառավարիչն էր էմիր Սայֆ ալ-Դին ալ-Ակրաբը, ով վաճառեց այն Սսի տիրոջը հարյուր հազար դիրհամի դիմաց: Վերջինս նրան տվեց վարսուն հազար դիրհամ և վերցրեց բերդը, որ ցայժմ նրանց ձեռքին էր և մեծ տառապանք էր պատճառում մուսուլմաններին»³⁸¹: Այս պատմությունը վերապատմում է նաև ալ-Ջահաբին, միայն թե գրում է, որ բերդը 100 Հզ. դիրհամով «Սսի տիրոջ» համար գնել է Հուլազուն, որից Հետո Հեթումն իր հնազանդությունն է հայտնել նրան³⁸²: Բերդին տիրելու մյուս պատմիչներից տարբերվող մեկ այլ պատմություն է տալիս ալ-Այնին: Նա մասնավորապես գրում է. «Այն [նախկինում] Հալեպի տարածքների մաս էր, պատկանում էր մուսուլմաններին, և նրա վրա իշխողը Հալեպի տեր ալ-Մալիխ ալ-Նասիրն էր: Այդպես էր, քանի դեռ Հուլավուն չէր մտել Հալեպ և գրավել բոլոր երկրները: Երբ թաֆ-ֆուրը՝ Սսի տերը, իմացավ, որ Հուլավուն այն [նույնպես] գրավել է, նրա մոտ

³⁸⁰ 'Izz al-Dīn ibn Šaddād, *Al-A'lāq al-ḥaṭīra*, §. 1.2, §. 118-119.

³⁸¹ Տե՛ս al-Šazarī, *Tārīḥ Ḥawāḍiṭ al-zamān*, §. 1, 1999, §. 149: Հմտ. al-Dahabī, *Al-Muḥtār min tāriḥ ibn al-Šazarī*, bi-taḥqīq Ḥaḍīr 'Abbās Muḥammad Ḥalīfat al-Munšadāwī, Dār al-Kitāb al-'Arabī, Bayrūt, 1988, §. 358; Muḥaddal ibn Abī al-Fadā'il, *Al-Nahḍ al-salīd* (PO, t. 14), §. 558 [p. 394]; al-Nuwayrī, *Nihāyat al-arab*, §. 31, §. 157; Ibn al-Dawādārī, *Kanz al-durar*, §. 8, §. 341; Ibn al-Furāt, *Tārīḥ al-duwal*, §. 8, §. 155-156:

³⁸² Տե՛ս al-Dahabī, *Tārīḥ al-Islām*, §. 52, §. 22, ինչպես նաև նույնի՝ *Duwal al-Islām*, §. 2, §. 218: Հմտ. Ibn Taḡrī Birdī, *Al-Manḥal al-šāfi*, §. 5, bi-taḥqīq Muḥammad Muḥammad 'Amīn, al-Hay'a al-Miṣriyya al-'Āmma li-l-Kitāb, al-Qāhira, §. 275:

գմաց և նվերներով շոգոփորեց, գումար տարավ նրան՝ խնդրելով, որ Բենեսուան իրենը լինի, և նա էլ հանձնեց նրան»³⁸³:

1262 թ. Թորոս Ռոսլինի ձեռքով գրված մի ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ Հեթումը, ձեռավորված քաղաքական պատշաճ պայմաններն օգտագործելով, մի շարք բերդեր է իլել նաև Ռուսի սուլթանությունից: «Այլև բարեպաշտութեամբն իւրով յԱստուած զորացեալ հե՛ֆե՛ր զհոյս համարածին ծննդոցն և անարինաց սևոիցն, բազում անգամ յաղթեալ սուլտանին Հոռոմոց, և առեալ զամուրս նորա՝ զաննատչելին Մունասա, և զՄանիանն, զըՍիկի և զայլս բազում զոր ոչ է այժմ ասել մի ըստ միոջ: Որ և յասմ ամի առ նա և զամուր դրեակն գինյակապ և զյազանատն Պենեսնի, որ ար Ի և Ն (25) էր ամսէանն հոգտեմբերի»³⁸⁴: Ստացվում է՝ Բենեսնին գրավվել է 1262 թ. հոկտեմբերի 25-ին:

Մարաշից և Բենեսնիից բացի Հայոց թագավորությանն են անցել նաև Ռարանը, Քեսունը, Դարպուսը, Մարզուբանը (Մարզարան), Շիհ ալ-Հադիդը³⁸⁵: Ըստ Իզդ ալ-Դին իբն Շադդադի ևս մեկ բերդ՝ Բուրջ ալ-Ռասասը, մինչև թաթարների արշավանքը դառնում էր «Նասիրյան պետության» (իմա՝ Հալեպի սուլթան ալ-Նասիր Յուսուֆի պետության) կազմում: Ասորիքի գրավման ժամանակ այն ավերվել է, և նրան հարակից մի շարք գյուղեր անցել են Հայերի ձեռքը³⁸⁶:

Այս նվաճումներով Հայոց թագավորության սահմաններն ընդարձակվեցին ընդհուպ մինչև Եփրատ գետը: Հայոց Հայրապետական աթոռը՝ Հռոմկլան, ըստ այդմ առաջին անգամ աշխարհագրորեն միացավ Կիլիկիո Հայոց թագավորությանը³⁸⁷:

Այնուամենայնիվ, Հուլադուի նահանջից հետո նույն այդ Հայ-մոնղոլական դաշնակցությունը մեկընդմիջտ սեպ դարձավ Հայ-մամլուքյան Հարաբերություններում և վերահաս սպառնալիք Հայոց թագավորության համար: Ալ-Ումարին, թեև այս դեպքերից 70-80 տարի անց է գրում, այնուամենայնիվ, Հայ-մոնղոլական դաշնակցության գաղտնառով Հայերին հայտարարում է. «Իսլամի ամենավտանգավոր քրեամիներ» (ahbab ʿudwin li-l-Islām)³⁸⁸, որոնց վրա «Հուլադույան տան (ճարտարության) արհեստը մեծ ուժ և ազդեցություն ունեին, մինչև որ նվազեց նրանց ուժը, բուլացավ դաժանությունը, նրանց (հայերի) անտար դատարկվեց նրանց առյուծներից»³⁸⁹:

Չնայած լուրջ ռազմական նախաձեռնություններ չձեռնարկելու Հուլադուի հորդորներին՝ Քիթբուղան շուտով որոշեց շարունակել արշավանքը դեպի Եդիպտոս: Սմբատ Սպարապետն այդ մասին գրում է. «Իսկ բիրապետն Քիթպուղա ոչ եկաց ի պատուէ՛ խանին ուր եղ գնա կեալ ի տեղի իւր, այլ ժողովեաց գօրս, և յեղեղն կիլիկեցոց արս են (500) յղեալ էառ ի թագաւորէն, և դէմ եղեալ գնայր մտանէլ յեգիպտոս»³⁹⁰: Սակայն մոնղոլական բանակի մեծագույն մասի ընկրկումը Կուսուզի համար հնարավորություն էր՝ մամլուքներին հանելու անակնկալության այն թմբիկից, որ մինչ այդ անպարտելի համարվող մոնղոլների հաղթարշավն էր հարուցել, և շրջադարձ մտցնել դեպքերի հետագա ընթացքում: Նախահարձակ լինելով Կուսուզը 658 թ. Ռամազան ամսի 25-ին (1260 թ. սեպտեմբերի 3) Այն Ջալուտի («Գողիարթի աղբյուր») մոտ Ջախախիչ պարտության մատնեց մոնղոլներին³⁹¹: Մոնղոլ զորապետ Քիթբուղան սպանվեց մարտում, իսկ նրա կինն ու որդիները, ինչպես Սմբատն է շարունակում, դերի տարվեցին Եգիպտոս³⁹²: Եթե հաշվի առնենք Սմբատի վկայությունը ճակատամարտին Հեթումի

³⁸³ Al-'Aynī, 'Iqd-MMA, ց. 3, ք. 151-152.

³⁸⁴ Տե՛ս 222, ԺԳ դար, էջ 317: Հմմտ. Սմբատ Սպարապետ, Տարեցրթ, Վենետիկ, էջ 234-235 (պատմում է Մունղաս բերդի գրավման հանգամանքների մասին): ՄԺ, հտ. Ա, էջ 82; Նույնի՛ հտ. Բ, Երևան, 1956, էջ 71 և Կ. Մաքսույան, Հերոս Պատմիչ Կողիկոսցին և նրա ժամանակագրությունը, «Մուլի» հրատ., 2011, էջ 53, ինչպես նաև Սամուել Անեցի եւ շարունակողներ, Ժամանակագրություն, աշխատասիրություն Կ. Մաքսույանի, «Նասիրի», Երևան, 2014, էջ 251:

³⁸⁵ Տե՛ս 'Izz al-Dīn ibn Šaddād, Al-'A'laq al-ḥaṣīra, ց. 1.2, ք. 115, 421, 434 և հմմտ. Ibn al-Šihna, Al-Durr al-muntaḥab, ք. 171, 223, 226.

³⁸⁶ 'Izz al-Dīn ibn Šaddād, Al-'A'laq al-ḥaṣīra, ց. 1.2, ք. 103.

³⁸⁷ K. Raphael, Muslim Fortresses in the Levant: Between Crusaders and Mongols, Routledge, London & New York, 2011, p. 186.

³⁸⁸ Al-'Umārī, Al-Ta'riḥ, ք. 55.

³⁸⁹ Նույն տեղում:

³⁹⁰ Սմբատ Սպարապետ, Տարեցրթ, Վենետիկ, էջ 236:

³⁹¹ Հակատամարտի մասին մանրամասն տե՛ս F.H.M. 'Āšūr, Al-Ğihād, ք. 111-127 և S.A. F.'Āšūr, Al-'Aṣr al-Mamālīkī, ք. 32-36; J.M. Smith, "Ayn Jalūt: Mamlūk Success or Mongol Failure?", HJAS, vol. 44, № 2, 1984, pp. 307-345; R. Amitai-Preiss, Mongols, pp. 39-48; Š.R. Huğğa, Al-'Ālāqāt, ք. 104-117:

³⁹² Սմբատ, Տարեցրթ, Վենետիկ, էջ 236: Հմմտ. Ibn al-'Amīd, Al-Mağmū' al-mubārak, ք. 53:

ուղարկած 500 ռազմիկների մասնակցության մասին³⁹³, ապա կարող ենք ընդունել, որ այն նաև Հայ-մամլուքյան առաջին անմիջական բախումն էր³⁹⁴, որն առաջիկա տարիներին պիտի վերածեր լուրջ դիմակայության ու հակամարտության:

Չնայած տարած տպավորիչ հաղթանակին՝ Կուսուզը նույնպես չհասցրեց վայելել իր տարած հաղթանակի պտուղները, քանզի Բայբարսի և նրա համախոհների դավադրության զոհ դարձավ: Վերջինս Սուլթանության գահին բազմեց ալ-Մալիք ալ-Ջահիբ (1260-1277 թթ.) անունով³⁹⁵: Հենց նրան էր վիճակված մամլուքյան դրոշի տակ համախմբելու եգիպտոսն ու Ասորիքը, հաջողությամբ դիմադրապիլուել իլխանությանն և նրա ճամբարում դռնվող այլ ուժերից՝ մասնավորապես Կիլիկյան Հայաստանից եկող սպառնալիքին և սկսելու Ասորիքն ու Պաղեստինը խաչակրաց կազմավորումներից վերջնականապես մաքրելու գործը, որ նրանից հետո ալ-Մանսուր Կալավուն (1279-1290 թթ.) և ալ-Աշրաֆ Խալիլ (1290-1293 թթ.) սուլթանները պիտի եզրափակեին: Այլ կերպ սասած՝ Մամլուքյան սուլթանության հռչակումից մեկ տասնամյակ անց միայն՝ հենց Բայբարսի կառավարման օրոք, մշակվեց այս պետության աշխահաքաղաքական հայեցակարգը, և դրվեցին նրա կայացման պետական-գաղափարաբանական հիմքերը: Բայբարսի գահակալման հենց սկզբից ընդհուպ մինչև Հայոց թագավորության մայրամուտն ու կործանումը, մուսուլմանական այս պետության հետ հարաբերությունների հարցը մեկընդմիջտ ամբողջից իր տեղը Կիլիկյան Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգում:

³⁹³ Կիրակոս Գանձակեցին նույնպես գրում է, թե «[Քիթրուզա] ել պատերազմու ընդդէմ Սուլտանին, և քաջապէս մարտոցեալ՝ կոտորեցաւ ամենայն զօրօքն, որ ընդ իւր. զի յոյժ բազումք էին եգիպտացիքն, և կուռեցան ի դաշտն Քարթրական լեռինն: Կային ընդ Քիթրուզային ի պատերազմի անդ յուրք ի Հայոց և ի Վրաց, որք ընդ նմա կոտորեցան»: Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 389: Ըստ Վարդանի՝ Այն Ջալուտում բարդված մոնղոլական զորևրի մնացուկներն ապաստան են գտել Կիլիկիայում, որոնց Հերոսն օրևան, նտայցներ և ոռնիկ է սվել պատվով նանապահելով «սա տերն իւրեանց»: Տե՛ս Վարդան Վարդապետ, Հասարակ, էջ 152:

³⁹⁴ Ինչ վերաբերում է մամլուքյան պատմիչներին, ապա նրանք ոչինչ են հաղորդում Այն Ջալուտի նահատակարանին հայերի մասնակցության մասին: Նրանցից Իբն Թալիբի Բիրդին միայն գրում է, թե «Քիթրուզա-նոյինը նավաբեց բոլոր նրանց, սվէր Ասորիքում էին թաթարներին և այլոց»: Տե՛ս Ibn Taḡrī Birdī, Al-Nuḡmā al-zāhira, ց. 7, ՝. 73:

³⁹⁵ Ibn al-ʿAmid, Al-Maḡmūʿ al-mubārak, ՝. 54-55.

2.2 ՄՈՆԳՈՒՆԵՐԸ, ԻԼԽԱՆՆԵՐԸ ԵՎ ԿԻԼԻԿՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ

«Այս երկրի բնակիչների՝ Բիստունյա լիներու պատնառով եգիպտոսի և Ասորիքի մուսուլմանական զորերը [մշտապես] ասպատակում են Հայոց երկիրը (welāyat-e Arman): Թաֆնուրը (կիրառված է որպես հատուկ անուն), որ Փոքր Հայաստանի (Armīnya Sūgrā) արևան է, թողնում է երկիրը և նավով գնում ծովը: Ռեյ-դը-Ֆրանսը (Raydāfrāns, այն է՝ «Ֆրանսիայի արևան»), որ ֆրանկների երկրի մեծագույն արևան է, սուրհանդակ ուղարկեց Թաֆնուրի մոտ՝ ասելով. «Դու մեծ երկիր ունես. ամեն մի գյուղից [ընդամենը] երեք հեծյալ հանի՛ր և մուսուլմանների դեմ կո՛ր՛վ տուր, մինչև որ նրանք փախչեն»: Թաֆնուրը պատասխանեց. «100 հազար հեծյալ կազմուպատրատտ պահելու համար մեծ գումար է հարկավոր, մինչդեռ, երբ եգիպտացիներն են ասպատակում, երկրին 10 հազար դիմարից ավելի վնաս չեն պատնառում, և շնորհիվ ամուր բերդերի՝ նրանց ձեռքը ոչինչ չի ընկնում»:

Ռաշիդ ալ-Դին, «Թարիխ-ե աֆրան»³⁹⁶

ԺԳ դարի կեսին մերձավորարևելյան տարածաշրջանի քաղաքական թատերարևն ելավ ևս մեկ ազդեցիկ ուժ: Խոսքն Իրանի մոնղոլական իլխանության մասին է:

Մոնղոլների հաղթական շարժը Մերձավոր և Միջին Արևելք սկսվել էր դեռ ԺԳ դարի քսանական թվականներից Թեմուչինի ղեկավարությամբ: Իր շուրջը համախմբելով արևելաեվրասիական տափաստանների թյուրք-մոնղոլական քոչվոր ցեղերին՝ նա իրեն Մեծ խան էր հռչակել դեռ 1206 թ. գուժարված կուրուլտայում («Մեծ ժողովում»)՝ որդեկրելով Չինգիս խան անունը³⁹⁷: Այդ իրադարձությամբ ծնունդ

³⁹⁶ Jahn K., Die Frankengeschichte des Rašīd ad-Dīn. Verlag der Österreichischen Akademie der Wissenschaften, Wien, 1977, S. 44, 45; Tafel 42, ինչպես նաև Rašīd al-Dīn Faḡl Allāh Hamadānī, Ġāmiʿ al-tawārīḡ (Tārīḡ-e Afranḡ, Pāpān wa-Qayāsera), tašhīḡ-e Moḥammad Rowšān, Mīrāʿ Maktūb, Tehrān, 2005, ց. 1, ՝. 42. Տե՛ս նաև Զ.Գ. Փափաղյան, «Ռաշիդ-ե-Դինը Կիլիկյան Հայաստանի մասին», ՊՔՀ, 1978, № 2, էջ 129-139:

³⁹⁷ Կուրուլտայի ինստիտուտի և նրա իսլամական ասպեկտների լուսարձանը տե՛ս F. Hodous, "The Quriltai as a Legal Institution in the Mongol Empire", CAJ, vol. 56, 2012/2013, pp. 87-102:

³⁹⁸ Տիտղոսը սովորաբար բարգմանվում է որպես «օվիկանյան» կամ «աշխարհահոր» խան, թեև գիտական շրջանառության մեջ է նաև նրա բացատրության մեկ այլ՝ «ամուր» կամ «գորեղ»

առաջ Մոնղոլական Մեծ տերությունը (*Yeke Monggol Ulus*), որ մի քանի տասնամյակում պիտի վերածեր մարդկություն պատմության ողջ ընթացքում երբևէ գոյություն ունեցած ամենամեծ ջամաքային պետության³⁹⁹: Մինչև իր մահը նա հասցրեց վերջ դնել Կարա-խիտայի խանության (1218 թ.) գոյությունը, սկսեց նաև Թանգուտների (կամ Սի Սյա՝ *Xī Xià*) պետության նվաճման գործը, որը, սակայն, մոնղոլական բանակների հարվածների տակ վերջնականապես ընկավ միայն 1227 թ.՝ Չինգիս խանի հանկարծազաս մահվանից մոտ մեկ ամիս անց: 1215 թ. նա ծանր պարտության մատնեց Չին կայսրությանը և զրավեց նրա մայրաքաղաքը, թեև նրան վիճակված չէր տեսնելու նաև այս հարստության վերջնական հպատակեցումը, որ իրականություն պիտի դառնար միայն 1234 թ.: Ուգեդեյ խանի օրոք (1229-1241 թթ.): Չինգիս խանի մեծագույն նվաճումներից մեկն Իրանի Խորեզմ-շահերի պետության կործանումն էր 1219-1223 թթ. ընթացքում, որից հետո իր տիրույթներին կցեց Իրանի և Միջին Ասիայի ընդարձակ տարածքները: Աշխարհակալի մահից հետո նրա որդիներն

ա թոռները, թեև շարունակեցին մոնղոլահպատակ հողերի ընդարձակումը, բայց ԺԳ դարի կեսերից սկսած կայսրությունը տրոհեցին չորս ինքնավար պետությունների (ուլուսների)՝ Չոչիի ուլուսի (հետագայում՝ Ոսկե Հորդա, 1260-1480 թթ.), Չաղաթայի ուլուսի կամ խանության (1224-1678 թթ.), Մեծ խան Ղուբլայի և նրա հաջորդների ստեղծած Յուան հարստության (1271-1368 թթ.) և վերջապես Իլխանության (1256-1335 թթ.)⁴⁰⁰: 1236-1245 թթ. ընթացքում Չորմաղան և Բաչու նոյինների նվաճումներով մոնղոլների տիրապետությունը հաստատվեց նաև Վրաստանի, Մեծ Հայքի (բուն Հայաստան) և Ատրպատականի մեծ մասի վրա⁴⁰¹: 1243 թ. հունիսի 26/27-ին Քյոսեդաղի (Չմանկատուկի) ճակատամարտում կրած ծանր պարտությունից հետո, ինչպես նախորդ ենթադրվում ենք նշել, մոնղոլներին հնազանդվեցին նաև Ռումի սելջուկները: Սա ազդարարեց Փոքր Ասիայում Իկոնիայի սուլթանության գերիշխանության ավարտը: Մոնղոլական վերահաս ներխուժման վտանգն ընդհուպ մոտեցավ Հայոց թագավորության սահմաններին: Այս պարագայում Հայոց ռազմավարական վերնախավը՝ ի դեմս Հեթում արքայի, Սմբատ Գունդուտարի և թագավորահայր Կոստանդին պայլի, շտապեց իր հնազանդությունը հայտնել մոնղոլներին: Ըստ Ռումի սելջուկների պաշտոնական պատմիչ Նասիր ալ-Դին Հուսայն իրն Բիբիի՝ ճակատամարտից առաջ Ղիլիս ալ-Դին Քայխուսրով Բ-ը (1237-1246 թթ.), ստանալով Բաչու-նոյինի կողմից Կարինի (Էրզրումի) առման մասին լուրը, փորձել է իր զաշնակից կամ իր ազդեցության տակ գտնվող երկրներից գործեր

խան տոնգարանությունը: Տե՛ս P. Pelliot, "Les Mongols et la papauté", *ROC*, tome III (XXIII), 1922-1923, p. 22-23; Հմտ. I. de Rachewiltz, *The title Činggis Qan / Qayan re-examined*, in Heissig W., Segaster K., *Gedanke und Wirkung, Festschrift zum 90. Geburtstag von Nikolaus Poppe*, Wiesbaden, 1989, pp. 281-298:

³⁹⁹ Չինգիս խանի նվաճումների, Մոնղոլական տերության և առանձին ուլուսների մասին հսկայական գրականություն կա: Առավել կարևորներից տե՛ս В. Бартольд, *Сочинения, том I, Туркестан в эпоху монгольского нашествия*, изд. Восточной литературы, Москва, 1963 (եղիւ մասով առաջին անգամ հրատարակվել է դեռ 1898-1900 թթ.); R. Grousset, *Empire of the Steppes: A History of Central Asia*, tr. by N. Wallford, Rutgers University Press, New Brunswick, 1970; J.J. Saunders, *The History of the Mongol Conquests*, University of Pennsylvania Press, Philadelphia, 1977; D. Morgan, *The Mongols*, Basil Blackwell, Oxford, 1986 (2-րդ լրամշակված հրատարակությունը՝ Blackwell Publ., 2007); *The Mongol Empire and its Legacy*, ed. by Amitai-Preiss R. and Morgan D., E.J. Brill, Leiden, 1999 (հետագայ՝ *The Mongol Empire* (1999), հոլիվանդերի ժողովածու); Th. Allsen, *Mongol Imperialism*, University of California Press, Berkeley, 1987, ինչպես նաև *Տույնի՝ Culture and Conquest in Mongol Eurasia*, Cambridge University Press, Cambridge, 2001; G. Lane, *Genghis Khan and Mongol Rule*, Greenwood Press, 2004, ինչպես նաև *Տույնի՝ Daily life in the Mongol empire*, Greenwood Press, 2006, ինչպես նաև P. Jackson, *The Mongols and the West: 1221-1410*, Routledge, 2014; D. Aigle, *The Mongol Empire* (ախրոջական վերնագիրը տե՛ս վերևում՝ ծնրգր. 341) և այլն:

⁴⁰⁰ Մոնղոլական ուլուսների ձևավորման գործընթացին նվիրված հոդված ունի Պ. Ջեֆսոնը: Տե՛ս P. Jackson, *From ulus to khanate: the making of Mongol states c. 1220 - c. 1290*, in *The Mongol Empire* (1999), pp. 12-38:

⁴⁰¹ Տե՛ս Ա.Գ. Գալստյան, «Հայ-մոնղոլական առաջին բանակցությունները», ՊՔԸ, № 1, 1964, էջ 91-106; R.G. Bedrosian, *The Turco-Mongol invasions and the lords of Armenia in the 13-14th centuries*, Ph.D diss., Columbia University, 1979, pp. 94-116; Ա.Բ. Շանճազարյան, «Հայ-վրացական և մոնղոլական հարաբերություններ (1236-1240-ական թթ.)», ԼԳ, № 1, 2004, էջ 3-22, ինչպես նաև *Տույնի՝ «Ջախարյան Հայաստանի նվաճումը մոնղոլների կողմից»*, ՊՔԸ, № 2, 2004, էջ 142-160, *Տույնի՝ «Հայաստանի արևմտյան և հարավային շրջանների գրավումը մոնղոլների կողմից»*, ՊՔԸ, № 3, 2004, էջ 171-179; D. Bayarsaikhan, *The Mongols*, pp. 43-69:

Հավաքել մոնղոլներին դիմակայելու համար: Նա դեսպանութուններ է ուղարկել նաև «Սսեցուն» (նկատի ունի Կիլիկիո շայոց արքա Հեթումին) և մեծ դրամական շնորհի (100 հզ. դինար և մի քանի միլիոն դիրհամ) դիմաց ֆրանկ վարձկանների օժանդակ զորքերով իրեն օգնություն հասնելու պահանջով դիմել⁴⁰²: Իսկ ըստ Բար Հեբրեոսի՝ Կոստանդին պալլեն անձամբ Կեսարիա է գնացել, որտեղ սուլթանն ընդունել է նրան մեծ պատվով և շնորհներով և մոնղոլների դեմ պատերազմում իրեն օգնելու խոստում ստացել⁴⁰³: Այն, որ ի շարս Փոքր Ասիայի և Ասորիքի մի խումբ Այյուբյան տիրակալների՝ Իկոնիայի սուլթանին զինական օգնություն տրամադրելու պարտավորություն է ունեցել նաև շայոց արքան, հաստատում է նաև Միմոն դը Սենթ-Քվենտինը, ում պնդմամբ շայոց արքան պետք է 4 ամսով 1400 «նիզակ» (այսինքն՝ «նիզակալիքների գորաշոկաաներ») տրամադրեր սելջուկյան բանակին⁴⁰⁴:

Ըստ Իբն Բիբիի երկի Համառոտ տարբերակի՝ երբ սելջուկյան զորքը պատրաստվում էր մոնղոլների ժամանմանը, «...լուր ստացվեց, որ հասնում է նաև takwar-ը («քաղախոր») երեք հազար ֆրանկներով»⁴⁰⁵: Թ. Շուքուրովն ու նրան հետևելով նաև Դ. Կորոբեյնիկովը Թուրքի սուլթանին օգնության գնացող այս takwar-ին նույնացրել են Տրապիզոնի կայսր Մանուել Ա Մեծի հետ⁴⁰⁶: Մինչդեռ, Իբն Բիբիի երկի ամբողջական տարբերակում takwar-ի փոխարեն bāyī Sīs («Սսի պալլ») է,

⁴⁰² St' u Ibn-i Bībī, *El-Evāmīrū'l-'Alā'īyye fī'l-umūri'l-'Alā'īyye*, onsöz ve fihristi hazırlıyan A.S. Erzi, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 1956 (երկի ամբողջական տարբերակ, հետալստ՝ Ibn-i Bībī, *El-Evāmīrū'l-'Alā'īyye*), ք. 518-519; Ibn Bībī, *Muhtasar*, ք. 236 (երկի համառոտ տարբերակ): Հմմտ. Ibn Wāṣil, *Mufarriğ al-kurūb*, ց. 5, ք. 326-327:

⁴⁰³ Bar Hebraeus, *Chronography*, p. 407.

⁴⁰⁴ St' u J. Richard, *Simon de Saint-Quentin: Histoire des Tartares*, Paris, 1965, p. 70-71: St' u նաև Cl. Cahen, *La Turquie*, p. 93-94:

⁴⁰⁵ Ibn-i Bībī, *El-Evāmīrū'l-'Alā'īyye*, ք. 522; Ibn Bībī, *Muhtasar*, ք. 238.

⁴⁰⁶ P. Шукуров, *Великие комиты и Восток (1204-1461)*, под ред. С. П. Карпова, Алетея, Санкт-Петербург, 2001, стр. 160-161; D. Korobeinikov, *Byzantium*, pp. 178-179. Թ. Շուքուրովը հետազոտում փոխել է իր կարծիքը ճիշտ takwar-ի անձի վերաբերյալ: St' u P.M. Шукуров, "Образ Киликийской Армении в анатолийских мусульманских источниках (XIII-XIV в.)", 42 (2016), էջ 104, ինչպես նաև նույնի՝ "The Image of Cilician Armenia in Anatolian Muslim Sources (XIII-Early XIV Centuries)", in *CA* (2019), p. 96.

ինչը խոսում է հիշյալ տեսակետի սխալ լինելու մասին: Ուստի, մեր կարծիքով, Իբն Բիբիին հաստատապես շայոց արքային է նկատի ունեցել: Հեթումը Հավանաբար ձևացրել է, որ ինքը նույնպես օգնության է գնում սուլթանին՝ այնքան ժամանակ հապաղելով, ինչպես Բար Հեբրեոսն է գրում, «Մինչև տեսնի՝ ինչով են ավարտվում դեպքերը»⁴⁰⁷:

Ինչևէ, շայոց արքան և Կոստանդին պալլը ոչ միայն չկատարեցին Հայ-Ֆրանկյան օժանդակ զորք տրամադրելու իրենց տված խոստումը, այլև Կիլիկիո երկիրն ու ժողովրդին մոնղոլների ավերիչ ներխուժումից զերծ պահելու նպատակով Հարկադրաբար, թեկուզև Հյուսիսայինսելջուկյան բարոյական նորմի կոպիտ խախտմամբ Թուրքի սելջուկ սուլթանի՝ Կիլիկիայում ապաստան գտած ընտանիքին (մորը⁴⁰⁸, կնոջը և դստերը) հանձնեցին մոնղոլներին⁴⁰⁹: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Հեթումը մեծ դժգոհությամբ և մեղքի զգացումով է գնացել այդ քայլին՝ ասելով. «...Լավ էր ինձ, եթե զորդի իմ՝ զԼուսն, խնդրեալ էին յինձն,

⁴⁰⁷ Bar Hebraeus, *Chronography*, p. 407. Հմմտ. Cl. Cahen, *La Turquie*, p. 96; M.S. Taqqūš, *Tārīḥ Salāḡīqa al-Rūm, Dār al-Nafā'is, Bayrūt*, 2008, ք. 285: Եման մի տեղեկություն էլ հազորդում է Միմոն դը Սենթ-Քվենտինը: Ըստ նրա, երբ մոնղոլները գրավել են Կեսարիան (գրավվել է Քյուսեղաղի հակասամարտից հետո-Գ.Գ.), լուր է տարածվել, թե շայոց արքան զալխ է այն ազատագրելու, շնայած որ հազիվ թե մեծ զարով գար: Այնուամենայնիվ, մոնղոլներն այս լուրից տագնապել են և քողնելով իրենց ավարը՝ փախել: Բայց հետո, երբ արևայի ժամանան լուրը չի հաստատվել, վերադարձել են: St' u Simon de Saint-Quentin, *Histoire des Tartares*, p. 76:

⁴⁰⁸ Մուրաֆյանը վերջերս եզրակացրել է, որ սուլթանի մայրը՝ Մահ-Պերի Խաթունը, կարող էր հայկական ծագում ունենալ: Նա հավանաբար Կիո Վարդ (Ֆար[ի]դ) անունով հայազգի հունադավան իշխանի դուստրն էր: St' u Cl. Mutasian, *L'Arménie*, p. 134-135: Եույն եզրակացության համար տե՛ս նաև A. Eastmond, "Gender and patronage between Christianity and Islam in the thirteenth century", in *First International Byzantine Studies Symposium Proceedings, Istanbul 25-28 June, 2007*, Istanbul, 2010, pp. 78-79: Կիո Վարդի և նրա դստեր հունական ծագում ենթադրության մասին տե՛ս Cl. Cahen, *La Turquie*, p. 74-75 և հատկապես՝ R. Shukurov, "Harem Christianity: The byzantine identity of Seljuk princes", in *The Seljuks of Anatolia: Court and society in the medieval Middle East*, ed. by A.C.S. Peacock and Sara Nur Yildiz, I.B. Tauris, 2013, p. 117, 136-137:

⁴⁰⁹ Ibn-i Bībī, *El-Evāmīrū'l-'Alā'īyye*, ք. 536; Ibn Bībī, *Muhtasar*, ք. 245; Սմբատ, *Տարեցիքը*, Վեներտիկ, էջ 226-227; Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն շայոց*, էջ 285; Bar Hebraeus, *Chronography*, pp. 407-408.

քան թէ զնոսա»⁴¹⁰: Հիրավի, Հեթումի արարքը միակողմանի դնահատել չի կարելի, քանզի Ղիյաս ալ-Դինի ընտանիքին մոնղոլներին հանձնելով նա հազարավոր հայրենակիցների անվտանգություն կենաց-մահու հարց էր լուծում: Ջուր չէ, որ ժամանակակից Հիշատակագիրներից մեկն ուրախություն արձանագրում է. «Արդ, ի սոյն այս բազմավրդով ժամանակի, ի ձեռն վերոյ նշանակեալ թագաւորին Հերմոյ խորագետ խմաստորեան և նախահոգակ հաննարեղութեան, մե՛կ մնամք ի խաղաղութեան՝ որպէս կղզի ինչ ի յալեաց մնացեալ յանդոր»⁴¹¹:

Արարագիր Հեղինակներից այս դեպքերի մասին վկայություն է տալիս նաև Իզզ ալ-Դին իրն Շաղղազը: Նա մասնավորապես գրում է. «Նրանք (հայերը) նրա ծառայության և հնազանդության տակ էին, բանի դեռ [վեց հարյուր] բառասունեկու քվականի Մուհարամ ամսին (1244 թ. հունիս, որը սխալ է պետք է լինի 641 թ.) թաթարները չէին բախվել Ղիյաս ալ-Դինի հետ, և վերջինս էլ նրանցից (հայերից) աշակցություն և օգնություն չէր պահանջել նրանց դեմ [կովելու համար]: Սակայն նրանք հրաժարվել էին [օգնություն արամադրել] և ամմասն էին մնացել նրա հետ պատահածին: Այնուհետ տեղի ունեցավ մարտը (այն է՝ «Քյոսեղաղի նակատումարը»-Գ.Գ.), որի մասին մենք հետագա շարադրանքում կխոսենք: Երբ նա հարձակման ենթարկվեց [մոնղոլների կողմից], Հերումը (ընագրում սխալով՝ «Հերումի որդի կանը»-Գ.Գ.) Հայոց արքան, և նրա սպասավորները կողոպտեցին նրա գանձարանը և նրա մոր հետ միասին ուղարկեցին Բայջու-նոյիին»⁴¹²: Այնուամենայնիվ, մոնղոլներին հպատակվելուց և նրանց հետ խաղա-

⁴¹⁰ Կիւրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 285: Կոստանդին և Հերումի արարի մասին պարսկամեծով և արտահայկում նաև Սիմոն դը Սենթ-Փվենտինը: «Առեի մահից հետո, գրում է նա, - այս Հայաստանի (իմն) «Փոքր Հայաստանի» Կիլիկիայի) պարոններից մեկը՝ Կոստանդին անունով, բռնի ուժով առևանգեց նրա դստերը և ամուսնացրեց իր որդու հետ: ... Սույն Կոստանդինը տարբեր հնարներով և միջոցներով սպանել է Հայաստանի վաթսուներկու մեծ պարոնների: Եվ երբ Քոստանդինի սուլթանը նրա մոտ է ուղարկել իր մօրը և ջրօղձ՝ որպես իրեն հավատարիմ այրի և բարեպաշտ քրիստոնյայի, որ ապաստան գտնեն նրա մոտ և խուսա տան թաթարներից (իմա՝ մոնղոլներից), նա իրեն գրգռեցրել է որպես անհավատ և ուխտադրուժ: Նա հանձնել է նրանց թաթարներին՝ նրանց բարեհաճութանը շահելու համար»: Տե՛ս Simon de Saint-Quentin, *Histoire des Tartares*, p. 89:

⁴¹¹ 222, 29 դար, էջ 233:

⁴¹² 'Izz al-Dīn ibn Šaddād, *Al-A'lāq al-haṭira*, ց. 1.2, ց. 240.

ղություն հաստատելուց հետո դեռ բավական ազդեցիկ Ղիյաս ալ-Դինը վճռեց վրեժխնդիր լինել հայերից, քանզի նրանք, ինչպես իրն Բիրբին է գրում, «Քյոսեղաղում [սելջուկյան] զորքի պարտություն ժամանակ բոլոր հնարավոր վատ արարքներն էին գործել՝ տեղ չթողնելով ներման համար»⁴¹³: Իկոնիայի սուլթանությունը ստորակա հայազգի Կոստանդին Լամբրոնացի իշխանի հետ դաշնակցած՝ սելջուկյան բանակը ՍաՀիր Շամս ալ-Դինի հրամանատարությունը երկու անգամ՝ 1245 թ. և 1246 թ., ներխուժեց Կիլիկիա, ավերածություն ու թալանի մատնեց երկրի շատ բնակավայրեր: Մասնավորապես 1246 թ. սելջուկներն ահարկու պաշարման ենթարկեցին Տարսոնը՝ քարանետ մեքենաներով քանդելով նրա պարիսպները: Եվ թեև Սմբատ Սպարապետն ու Կոստանդին Պալլեն անձամբ զլխավորեցին Տարսոնի պաշտպանությունը, քաղաքն անկարող եղավ դիմադրել թշնամուն: Նույն Սմբատն իր տարեգրության մեջ գրում է, որ կովի թեժ պահին վրա են հասել մոնղոլների դեսպանները և օգնություն առաջարկել պաշարվածներին, բայց «նա չեւք ի յսկ. վասն զի զբաղվան առած ունեին»⁴¹⁴: Քաղաքի վերջնական առմանը խանդարեցին միայն սկսված տեղափոխման անձրևներն ու Իկոնիայի սուլթանի հանկարծազաս մահը: «Այդ քվականին սուլթան Ղիյաս ալ-Դինը մեծաթիվ բանակ ուղարկեց Տարսոն հաղախ վրա, - գրում է Բար Հերբեոսն իր արարքներն ժամանակագրության մեջ՝ շարունակելով, - և այն որոշ ժամանակով պաշարման օղակի մեջ առան, սկսեցին ենջել և մոտ էին այն ուժով գրավելուն, եթե պաշարումը չհամընկներ այդ օրերին սուլթան Ղիյաս ալ-Դինի մահվան հետ»⁴¹⁵: Այնուամենայնիվ, ՍաՀիր Շամս ալ-Դինը, սուլթանի մահվան փաստը հայերին չբացահայտելով, նահանջելուց առաջ խորամանկություն արձանագրեց իր ժամանակակից Պապանա և մի քանի այլ ամրոցներ հանձնելու դիմաց: «Երբ Թագավորը (Takwar) լսեց այս ուղերձը, - գրում է իրն Բիրբին, - հանգստությունը պարտեց նրան, և նա համաձայնեց: Հետո նա դեսպան ուղարկեց [սելջուկյան] էմիրների մոտ և amān

⁴¹³ Ibn-i Bībī, *El-Evāmīrū'l-'Alā'yye*, ց. 546-547; Ibn Bībī, *Muhtaşar*, ց. 250.

⁴¹⁴ Սմբատ Սպարապետ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 123-124:

⁴¹⁵ Տե՛ս Ibn al-'Ibrī, *Muhtaşar*, ց. 446: Գեղեթ նույն հաղագրումը կա նաև հեղինակի ասորերեն ժամանակագրության մեջ: Տե՛ս նույնի՝ *Chronography*, p. 410:

խնդրելով՝ Պուականա (բնագրում՝ Brākānā) բերող մի քանի այլ ամրոցների նետ զիջեց սուլթանի ենթականերին, ինչպես նաև ուղարկեց նախկինում չվճարած և վճարելիք հարկերը (ḥarāğ-e mādi wa-mostaqbal)՝ նվերների նետ միասին»⁴¹⁶: Նույնի մասին Սմբատն իր Հերթին գրում է, որ իրենք՝ անտեղյակ սուլթան Ղիյաս ալ-Դինի մահվան փաստին, Համաձայնեցին Պուականա ամրոցը զիջելու դիմաց պատերազմական գործողությունները դադարեցնելու սելջուկների առաջարկին: «Եւ շեւի իմացեալ զսուլթանին մահն, - գրում է նա, - զի կարեւաք նեղել. յետ երկու տարուոյ (այսինքն՝ 1248 թ.) գողացաւ զՊուականա»⁴¹⁷:

Հայ-սելջուկյան պատերազմի մասին հաղորդում է նաև Իբն Շադ-դադը, միայն թե իրադարձությունները փոքր-ինչ այլ կերպ է ներկայացնում. «Երբ զինադադար հաստատվեց Ղիյաս ալ-Դինի և թաթարների միջև, նրանք քուլլավոսթուն խնդրեցին [նրանցից] պատերազմելու Հեթումի դեմ և ստացան այդ քուլլավոսթունը (ընդգծումը մերն է-Գ.Գ.): [Սուլթանը] զորս պատրաստեց նրանց դեմ, արշավեց նրանց վրա, գերեվարեց և պաշարման մեջ գցեց Տարսանում և գրեթե պիտի գրավեր այն: Սակայն Հեթումը [սելջուկ] զորահրամանատարի մոտ դեսպան ուղարկեց, ով նրա մոտ գնաց գումարով, իսկ նա էլ վերցրեց այն և հետացավ: Դա տեղի ունեցավ [հիջրայի] 643 րվականին (1245 / 1246 թ.)»⁴¹⁸: Նախ, նկատենք, որ բոլոր արարք մատենագրի՝ Հայ-սելջուկյան զինադադարը հաստատվել է Հեթումի վճարած գրամի դիմաց, այլ ոչ թե՛ Պուականա բերդի հանձնման: Հակառակ Սմբատ Գուլնգաստարի վերոբերյալ վկայությունը՝ ավելի կարևոր է Իբն Շադդադի այն պնդումը, թե Բաչու-նոյինը թույլ է տվել սելջուկներին արշավել Կիլիկիա: Սա նշանակում է, որ, չնայած մոնղոլներին հայտնած հպատակությունը, Հայ-մոնղոլական գործակցային հարաբերություններ դեռ ձևավորված չէին, և Բաչուն սկզբում ավելորդ է համարել միջամտել Ղիյաս ալ-Դինի և Հեթումի կոնֆլիկտին⁴¹⁹: Հետևապես սելջուկների այս արշավանքները մեկ անգամ ևս Հեթումին կանգնեցրել էին այն պարզ գիտակցման առաջ, որ Իկո-

նիայի սուլթանությունից եկող վտանգը հիմնովին չեզոքացնելու և թիկունքի լիարժեք անվտանգություն ստանալու համար անհրաժեշտ է ավելի խորացնել կապերը մոնղոլների հետ և պաշտոնականացնել նրանց հետ հարաբերությունները: Այդ նպատակին էր ուղղված 1246-1248 թթ. Սմբատ Գուլնգաստարի ուղևորությունը Մոնղոլական տերության մայրաքաղաք Կարակորում Հայոց թագավորի անունից Մեծ Խան Գույուկին հնազանդություն հայտնելու և Հայոց թագավորության հետ կապված մոնղոլների ծրագրերը ճշտելու նպատակով⁴²⁰:

Հայկական և ասորական մի շարք հաղթուրներից բացի՝ Սմբատի գեսապանագնացությունը վերաբերող ուշագրավ վկայություն կա նաև Իլխանության պարսիկ պատմագիր Զուլայինի Tārīḥ-e Ğahān-Guṣā (այն՝ «Աշխարհակալի պատմությունը») երկում: Վերջինս, խոսելով Կարակորումում գումարված մեծ կուրուլտայի, Գույուկ խանի (1246-1248 թթ.) թագադրության արարողության և հաջորդած անցքերի մասին, մոնղոլական արքունիք ժամանած հյուրերի շարքում հիշատակում է ոմն sulṭān-e Tākavor-ի (բառացի՝ «Թագավորի սուլթան»)՝ Այսինքն մատենագիրը ոչ միայն Հայոց գահակալին սուլթան է անվանում, այլև թագավոր բառը կիրառում է տեղանվանական նշանակությամբ (տե՛ս ներքևում): Սակայն Հայոց թագավոր Հեթումը չէր կարող ներկա լինել Գույուկի թագադրությանը, քանզի աներկդիմի է, որ նա Կարակորում է մեկնել միայն 1254 թ.: Մի՞թե «Աշխարհակալի պատմության» հեղինակը sulṭān-e Tākavor ստելով Սմբատին է նկատի ունեցել:

Վերջերս Կ. Մուսթաֆյանը, իր «Անանտյան Հայաստանը» գրքում անդրադառնալով այս արտահայտությանը, դժվարացել է հստակ բացատրություն տալ: «Թագավոր» բառը, - գրում է գիտնականը, - հայերեն «արեա» նշանակությամբ տրամաբանորեն կարելի է նույնացնել

⁴¹⁶ St' u Ibn Bībī, Muḥtaṣar, §. 250 և հմմտ. Ibn-i Bībī, El-Evāmīrū'l-'Alā'iyye, §. 546-547:

⁴¹⁷ St' u Սմբատ Սպարապետ, Տարեգրք, Փարիզ, էջ 124: Հմմտ. նույնի՝ Վնենտիկ, էջ 228:

⁴¹⁸ 'Izz al-Dīn ibn Ṣaddād, Al-'A'lāq al-ḥaṭīra, §. 1.2, §. 240.

⁴¹⁹ Հմմտ. Cl. Cahen, La Turquie, p. 230, ինչպես նաև նույնի՝ Pre-Ottoman Turkey, p. 271:

⁴²⁰ St' u Գրիգոր Անկեցի, Պատմության թաթարաց, էջ 27; R.P. Blake, R.N. Frye, "History of the Nation", p. 312:

⁴²¹ St' u 'Alā' al-Dīn 'Aṭā' Malik ibn Muḥammad Ḡuwaynī, Kitāb Tārīḥ-e Ğahān-Guṣā, taḥṣīḥ Muḥammad Qazwīnī, §. 1, Barīl, Laydan, 1919, §. 205, 212: Մեկ այլ տեղում երկի խմբագիրը, բնագրում եղած Dīyār Bakr-ը մյուս երկու կիրառությունների հիման վրա համարելով գրական սխալ, ուղղում-դարձնում է Tākavor: St' u Անի, §. 205:

Հեթոմի հետ, ինչպես որ Բար Հերրեոսն է գրում⁴²²: Ի վերջո, Կլ. Մութաֆյանը ենթադրում է, որ Ջուվայնին «Թաֆալորի սուլթան» ասելով նկատի է ունեցել Ջաբարյան իշխան Ավագին՝ այդ ենթադրության համար կռվան ծառայեցնելով Վրաց անանուն տարեգրի վկայությունները: «Տարեթվերը համապատասխանում են. - շարունակում է Մութաֆյանը, - Ավագը, քեպետև թագավոր չե, այլ այսպես ասած «իշխանաց իշխան» էր Մեծ Հայքում (Թուն Հայաստան), բայց պետք է ենթադրել, որ [Ջուվայնին] հենց նրան է նկատի ունեցել, և որ հենց նա էր ներկայացնում հայկական իշխանությունները [թագադրության] արարողության ժամանակ»⁴²³: Այն, որ Ավագն իսկապես եղել է մոնղոլ խանի արքունիքում, անվիճելի է, ու այդ մասին վկայում է ոչ միայն «Վրաց ժամանակագրությունն», այլև Կիրակոս Գանձակեցին⁴²⁴: Բայց խոսքն այստեղ աթաբեկ Ավագի այն այցելության մասին է, որ վերջինս կատարել է ենթադրաբար 1240-1241 թթ. Մեծ խան Ուզեդեյի մոտ: Մութաֆյանի ականարկած երկրորդ այցելության մասին հայկական աղբյուրները լուռն են, իսկ Վրաց տարեգրի վկայությունների տարտամությունը թույլ չի տալիս աներկմտորեն պնդել այդ մասին: Այսպես, Ջուվայնիի, Ռաշիդ ալ-Դիևի և Հուսեյն պապ Ինոկենտիոս Դ-ի բանագնաց Պլանո Կարպինիի վկայությամբ՝ երկու Դավիթների գահակալական վեճը հարթել է Գույուկ խանը, մինչդեռ Վրաց տարեգրը պնդում է, թե Բաթու խանը Դավիթներին ուղարկել է Մանգու խանի մոտ, այլ ոչ թե Գույուկի, ավելին, գահակալական այդ թնջուկը «բազում տարիներ անց» է լուծվել մեծ խան Ղուբրիլայի միջնորդությամբ⁴²⁵: Վրաց հեղինակի այս վկայությունները փաստում են, որ վերջինս չափազանց ազոտ պատկերացում է ունեցել այս ժամանակաշրջանի անցքերի մասին: Ինչևէ, այս ամբողջ խառնաշփոթում Վրաց ժամանակագրի՝ Ավագ աթաբեկի երկրորդ այցելության մասին արած ականարկ-

ները հավաստիության նվաղ հույսեր են ներշնչում⁴²⁶: Այնուամենայնիվ, եթե հավատալու լինենք այդ ականարկներին, միևնույն է չենք կարծում, թե աթաբեկն արժանացած լիներ *sultān* բարձր կոչմանը, որին մուսուլմանական մատենագրության մեջ քրիստոնյա գահակալներն էին անգամ եզակի զեպքերում արժանանում:

*Sultān-e Tākavor-ի՝ Մութաֆյանի առաջադրած վարկածը միակը չէ գիտական գրականության մեջ: Այս արտահայտությունը ներհակ տեսակետների պատճառ է դարձել նախորդ դարի 30-ական թվականներից սկսած: Նախ «Թաֆալորի սուլթանին» հանգամանորեն անդրադարձել է Մուհամմադ Կազվինին՝ Ջուվայնիի երկի առաջին՝ Բրիլյան հրատարակության ղլխավոր խմբագիրը⁴²⁷ խնդրին տալով մեր կարծիքով բավականին հիմնավոր լուծում: Ապա Զ. Բոլլեն Ջուվայնիի երկի իր անգլերեն թարգմանության մեջ անդրադառնալով «Թաֆալորի սուլթանին» լրովին համաձայնել է Կազվինիի ենթադրության հետ⁴²⁸: Նախորդ դարի 80-ական թվականներից սկսած մի շարք բյուզանդագետների կողմից շրջանառության մեջ է դրվել *sultān-e Tākavor-ի* մեկնության մեկ այլ տեսակետ: Այն, ըստ էության, առաջին անգամ*

⁴²² Նկատի ունի հեղինակի ասորերեն ժամանակագրությունը: Տե՛ս *Bar Hebraeus, Chronography*, p. 411:

⁴²³ *Cl. Mutafian, L'Arménie*, p. 137.

⁴²⁴ *Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց*, էջ 262-267:

⁴²⁵ *Վրաց ժամանակագրություն (1207-1318)*, քաղգ. հին վրացերենից, առաջարկը և ծանոթագր. Պարոյր Մառաղյանի, Երևան, 1971, էջ 96-97: Հմմտ. Ստեփանոս Օրբելյանի վկայության հետ: Տե՛ս *Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն*, հտ. Բ, էջ 167:

⁴²⁶ Ավագ արաբեկի երկրորդ այցելության եզրակացությանը Մութաֆյանից առաջ նաև գել է նաև Ա. Շահնազարյանը («Հայ-վրացական և մոնղոլական հարաբերությունները (1236-1240-ական թթ.)», *ԼՂԳ*, 2004, № 1, էջ 3-22): նա իր ենթադրության համար Վրաց ժամանակագրի վկայություններից բացի նպաստավոր է համարում նաև Բաչու-նայինի գորակայանում 1247 թ. գտնված Իննոկենտիոս Գ պապի նվիրակ Ասցիլիի բանագնացության զեկուցում անկա հաղորդումները ոմն Ավգուտի (այլուր՝ Անգուտ) մասին (զխանականը ենթադրում է, թե խոսքն Ավագի մասին է), որի Կարակորումից ժամանմանն անհամբերությամբ սպասում էին Թաշուի գորակայանում: Շահնազարյանն օգտագործել է Ասցիլիի բանագնացության զեկույցի՝ Գ. Յազիկովի ռուսերեն քերականաբար թարգմանությունը (*Д.И. Языков, Собрание писем шестому к татарам и другим восточным народам*, Санкт-Петербург, 1825): Զեկույցի բնական տեխստն ամբողջությամբ հրատարակել է Ժ. Ռիշարը (ամբողջական հղումը տվել են վերևում ծնթգր. 404, ապա երկից օգտագործել): Անգուտի անձի մասին այլ կարծիքների համար տե՛ս *P. Pelliot, "Les Mongols et la papauté"*, *ROC*, Tome VIII (XXVIII), 1931-1932, p. 17 [155]; *Simon de Saint-Quentin, Histoire des Tartares*, p. 110; *P. Jackson, "Eljigidei"*, *Ehr*, vol. VIII, Fasc. 4, ed. Ehsan Yarshater, Mazda Publishers, Costa Mesa, 1998, pp. 366-367:

⁴²⁷ *Շուայնի, Դարի-ե Շահան-Գուձ*, թ. 3, էջ 484-490.

⁴²⁸ *J.A. Boyle, The History of the World-Conqueror by 'Ala-ad-Din 'Ata-Malik Juvaini (Ph.D.)*, tr. from the text of Mirza Muhammad Qazvini, vol. 1, Harvard University Press, 1958, p. 250, note 6.

արտահայտված ենք գտնում Բ. Լիպպարդի ատենախոսության մեջ: Վերջինիս կարծիքով Գույուկ խանի թագազրույթյանը ներկա գտնված *sultān-e Tākavor-ը* ոչ այլ ոք է, եթե ոչ Տրապիզոնի կայսր Մանուել Ա Մեծ Կոմնենոսը (1238-1263 թթ)⁴²⁹: Այնուհետև Լիպպարդի կարծիքին հարևան տեսակետ է արտահայտել և այս խնդրին մի առանձին հոդվածով անդրադարձել է է. Բրայերը⁴³⁰: Հետո նաև Ջ. Լանդզոսը, հաստատված համարելով այդ ենթադրությունը, եզրակացրել է, որ «Թափարի սուլթանը» պարզապես Տրապիզոնի կայսրության յուրատեսակ անվանումն է՝ արված նրա տիրակալի տիտղոսի միջոցով⁴³¹: Ռուսական բյուզանդագիտության ներկայացուցիչներից էլ այս կարծիքին են հակված Ռ. Շուբուրովն⁴³² ու Գ. Կորոբեյնիկովը⁴³³:

Սակայն այս հարցում պարզություն մտցնել է թույլ տալիս Բար Հերբեոսի ժամանակագրության արարքերին խմբադրությունը⁴³⁴, որի մոնոլոնների պատմությունը վերաբերող բաժնի առանցքային աղբյուրն անկասկած եղել է նրա ժամանակակից Ջուվայնիի «Ալխարհակալի պատմությունը»: Այս և Ջուվայնիի երկի համապատասխան հատվածների համադրությունից, ինչը որ արել է Մուհամմադ Կազվինին, պարզ է դառնում, որ խոսքն այստեղ իրականում Սմբատ Սպարապետի մասին է, ում Ջուվայնին շփոթել է Հայոց արքայի հետ:

⁴²⁹ B.G. Lippard, *The Mongols and Byzantium*, PhD dissertation, Indiana University, 1983, pp. 179-180.

⁴³⁰ St'ya A. Bryers, *The Grand Komnenos and The Great Khan at Karakorum in 1246*, RO, 1994, vol. 4, pp. 257-261: նույնատեսակ ենթադրությունների է հանգել նաև ֆրանսիացի մասնագետ Լ. Կուրսանկիսը: St'ya M. Kursanskis, "L'empire de Trébizonde et les Turcs au 13e siècle", *REB*, v. 46, 1988, p. 121, note 42: Ըստ նրա Մանուել Ա Կոմնենոսը ձեռնամուխ է եղել սեփական արձարեղաձևերի հատմանը հենց մոնղոլ խանին նախ վճարելու նպատակով: St'ya ևույնի՝ "The Coinage of the Grand Komnenos Manuel I", *AP*, t. 35, 1979, pp. 23-37:

⁴³¹ J.S. Langdon, "Byzantium's initial encounter with the Chingissids: An introduction to Byzantino-Mongolica", *Viator*, vol. 29, 1998, p. 120, n. 140.

⁴³² Բ. Шукуров, *Великие Комнины*, стр. 162, ինչպես նաև ևույնի՝ "Трапезундская империя и Восток", *Карнов С.П., История Трапезундской империи*, Алетейя, Санкт-Петербург, 2007, стр. 370.

⁴³³ Д.А. Коробейников, "Михаил VIII Палеолог в Румском Султанате", *ВВ*, 64 (89), отв. ред. И.С. Чичуров, Москва, Наука, 2005, стр. 87.

⁴³⁴ երկի մասին տե՛ս վե՛րևում:

Ջուվայնի	Բար Հերբեոս
ա. «Ռուսից եկավ սուլթան Ռուֆն ալ-Դինը, և [եկավ] Թափարի սուլթանը, Վրաստանից՝ երկու Դավիթները, Հալեպից՝ Հալեպի տիրոջ եղբայրը...» ⁴³⁵ ,	բ. «Իսկ Ռուսից [եկավ] սուլթան Ռուֆն ալ-Դինը, իսկ հայերից [եկավ] Գունդստարը՝ քաֆուր Հեթումի եղբայրը, Վրաստանից՝ Մեծ և Փոքր Դավիթները, իսկ Ասորիից՝ Հալեպի տեր ալ-Մալիֆ ալ-Նասիրի եղբայրը...» ⁴³⁶ ,
ա. «Եվ յալիկներ տրվեցին Թափարի և Հալեպի սուլթաններին և ղեսպաններին...» ⁴³⁷ ,	բ. «Եվ յալիկներ ու հավաստագրեր եղեց Թափարի և Հալեպի տեր ալ-Մալիֆ ալ-Նասիրի համար» ⁴³⁸ (ընդգծումները մերն են- Գ. Գ.):

Այնպես, ասորի պատմագիրը գործածում է «գունդստարը» (ընդգրված *al-kandstabl*) բառը՝ ցրելով բոլոր հնարավոր կասկածները: Դատելով Հայոց թագավորության մասին ասորի մատենագրի հայտնած տեղեկությունների հավաստիությունից՝ Բար Հերբեոսին վստահելու համար մենք ծանրակշիռ պատճառներ ունենք, մանավանդ, որ, ինչպես ինքն է վկայում նույն «Հարստությունների պատմություն» երկում, անձամբ ծանոթ էր Հայոց Հեթում արքային և բազմիցս առիթ էր ունեցել զրուցելու նրա հետ⁴³⁹:

Սմբատը, որքան էլ որ տարօրինակ է, իր «Ժամանակագրության» մեջ չափազանց հակիրճ է խոսում իր այցելության մասին⁴⁴⁰: Կարա-

⁴³⁵ Ğuwaynī, *Tārīḫ-e Ğahān-Guṣā*, ց. 1, ք. 205.

⁴³⁶ Ibn al-İbrī, *Muḥtaṣar*, ք. 448.

⁴³⁷ Ğuwaynī, *Tārīḫ-e Ğahān-Guṣā*, ց. 1, ք. 212.

⁴³⁸ Ibn al-İbrī, *Muḥtaṣar*, ք. 540: St'ya նաև Մուհամմադ Կազվինիի համեմատական քննությունը՝ Ğuwaynī, *Tārīḫ-e Ğahān-Guṣā*, ց. 3, ք. 484-485:

⁴³⁹ St'ya Ibn al-İbrī, *Muḥtaṣar*, ք. 460: Թեև Ա. Գալստյանն ամտեղյակ է եղել «Ալխարհակալի պատմության» հեղինակի այս վիճահարույց արտահայտությանը, նրան հայտնի է եղել Սմբատ Գունդստարի բանագնացության վերաբերյալ Բար Հերբեոսի ճիշտ հաղորդումն աշխատության լատիներեն արգմանությունից: St'ya Ա. Գալստյան, «Հայ-մոնղոլական առաջին բանակցություններ», *ՊԲՀ*, 1964, № 1, էջ 103: Հոդվածը հրատարակվել է նաև Ռ. Քեղոսյանի անվերևն արգմանությամբ: St'ya A.G. Galstyan, "The First Armeno-Mongol Negotiations", *AR*, v. 29, 1976, p. 33:

⁴⁴⁰ St'ya Սմբատ Սպարապետ, *Տարեգրք*, Վենետիկ, էջ 228: Հմմտ. ևույնի՝ Փարիզ, էջ 124:

կորում զնալու ճանապարհին՝ Սամարգանդից Կիպրոսի արքա Հենրի Ա Լուսինյանին հղած և [1247 թ.] փետրվարի 7-ով թվագրված նրա նամակն ավելի օգտակար տեղեկություններ է պարունակում նրա այդ առաքելություն մասին⁴⁴¹: Նշանակում է, ինչպես Մուսթաֆյանն է հաշվարկում, Սմբատը Կարակորում պիտի հասած լինի ենթադրաբար 1247 թ. վերջերին (կամ 1248 թ. սկզբներին)⁴⁴², և հետևաբար նա Գույուկի թագադրության բուն արարողությունը չէր կարող մասնակցել: Բայց այստեղ հարկ է նշել, որ Սմբատը, ինչպես որ մոնղոլ ուսումնասիրող Դ. Բայարսայխանն է կարծում⁴⁴³, խանի արքունիք է հասել այն ժամանակ, երբ հավանաբար Գույուկի թագադրության արարողություններից հետո դեռ Կարակորումում էին Հոռմի պապի բանազնաց Պլանո Կարպինիի, վրացական, Ռուսի սուլթանության, Ալամուտի, Շիրվանի, Լուրի և այլ դեսպանությունները և դեռ շարունակում էին բանակցել մոնղոլական իշխանությունների հետ: Միջուցե, ա՛յս հանգամանքն է մատենադիրների շփոթության մեջ դրել⁴⁴⁴:

Այսպիսով, «Թափալորի սուլթան» արտահայտությունը, ըստ էության, պարսիկ մատենագրի սխալն է, որը հետագայում ուղղվել է Բար Հեբրեոսի կողմից նրա «Հարստությունների համառոտ պատմու-

թյուն» արաբերեն երկում: Այն, որ սա իսկապես սխալմունքի կամ սխմանալու արդյունք է, վկայում է նաև այն հանգամանքը, որ Ջուֆային, ի թիվս Կարակորում ժամանած հյուրերի, հիշատակում է նաև «Էդգրումի սուլթանին» (Sultān-e Arz-e Rūm)⁴⁴⁵, մինչդեռ էդգրումը մի քանի տասնամյակ էր, ինչ գրավված էր (1201 թ.) ու վաղուց արդեն գտնվում էր Սելջուկյան սուլթանության կազմում (1230 թ.)⁴⁴⁶: Ինչ վերաբերում է մյուս՝ Մանուել Ա-ի վարկածին, ապա այն նույնպես անհամոզիչ է և հիմնովին կառուցված է ենթադրությունների վրա: Պիյոմ (Վիլլիամ) Ռուբրուքի այն վկայությունը, որ Մանուել խանի որոշ Տրապիզոնի կայսրը ենթակա ու ըստ այդմ հարկատու էր մոնղոլական պետությանը⁴⁴⁷, հարկավ, բավարար չէ Մանուել կայսրին Ջուֆայիի հիշատակած sultān-e Tākawor-ի հետ նույնացնելու համար⁴⁴⁸:

Ինչևէ, Սմբատի դեսպանազնացությունը հաջողությամբ պսակվեց: Հայոց սպարապետը Գույուկ խանի արքունիքից Հայրենիք վերադարձավ 1250 թ.: Իր հետ բերելով «մեծ իառլախ (կամ «յառլիկ», այն է «հրովարտակ», «ղաշնաբուրք») և փայլզայս ոսկիս և Տարար խարուն (այն է՝ «կին»-Գ.Գ.) պալստախատո»⁴⁴⁹: Կիրակոս Գանձակեցին մի շատ կարևոր հավելում է անում՝ գրելով, թե Հայոց թագավորությունը նաև բազում բերդեր և դավառներ ստացավ, «զոր յառաջ լեալ էր Ասոնի արհայի և զկնի մահուանն առ ի նոցունց Ալադին Սուլտանն Հոռումոց»⁴⁵⁰: Այնուամենայնիվ, Սմբատի այցելությունը մոնղոլական իշխանությունների բավարարել չէր կարող, ուստի Հայոց սպարապետին կար-

⁴⁴¹ J. Richard, "La lettre du Connétable Smbat et les rapports entre chrétiens et Mongols au Milieu du XIII^{ème} siècle", in *Armenian studies in memoriam Haig Berberian*, ed. by D. Kouymjian, Lisbon, 1986, p. 683-696.

⁴⁴² Cf. Mutafian, *L'Arménie*, p. 138.

⁴⁴³ St' u D. Bayarsaikhan, *The Mongols*, p. 83, ինչպես նաև ճույնի՝ "Submissions to the Mongol Empire by the Armenians", *Mongolian & Tibetan Quarterly*, v. 18.3, 2009, p. 88: Հմմտ. Կիրակոս Գանձակեցու մի վկայության հետ, ըստ որի Սմբատը Կարակորումից վերադարձել է Իկոնիայի սուլթան Քայխուսրով Բ-ի որդու՝ Ռուսն աղ-Գինի հետ միասին: Տե՛ս Կրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, էջ 317-318:

⁴⁴⁴ Ջուվայնիի այս արաբալատությունը, հավանաբար, շփոթեցրել է նաև մոնղոլական Իլխանության մյուս պաշտոնական պատմիչ Ռաշիդ ալ-Դինին (մահ. 1318 թ.): Նա, ում ճամի՛ al-tawārīh-ի առանցիային աղբյուրներից մեկն «Աշխարհակալի պատմությունն» է, Գույուկի քաղաքային արաղոսության հյուսիսի շարից իրավացիորեն բաց է թողնում «Թագավորի սուլթանին»: Տե՛ս Rashid al-Dīn, *Ġāmi' al-Tawārīh*, ց. 1, ց. 568, 570; *The Successors of Genghis Khan*, trans. from the Persian of Rashid al-Dīn by J.A. Boyle, Columbia University Press, New York and London, 1971, p. 181, 183-184, ինչպես նաև Рашид-ад-Дин, *Сборник летописей*, том II, пер. Ю.П. Верховского, изд. АН СССР, Москва-Ленинград, 1960, стр. 118, 120:

⁴⁴⁵ Ğuwaynī, *Tārīh-e Ğahān-Guṣā*, ց. 1, ց. 305, 312.

⁴⁴⁶ J.A. Boyle, *The History*, p. 250, n. 10.

⁴⁴⁷ *The Journey of William Rubruck to Eastern Parts of the World, 1253-55*, as Narrated by Himself, with Two Accounts of the Earlier Journey of John of Pian de Carpine, Trans. From the Latin, and Ed., with an Introductory Notice by W.W. Rockhill, The Hakluyt Society, London, 1900, p. 46, ինչպես նաև Путешествия в восточные страны Плато Карпини и Рубрука, Государственное изд. географической литературы, Москва, 1957, стр. 89, 223, прим. 21, 22.

⁴⁴⁸ A. Bryers, "The Grand Komnenos", p. 260.

⁴⁴⁹ Գրգոր Ակնեցի, *Պատմություն թաթարաց*, էջ 28; R.P. Blake, R.N. Frye, "History of the Nation", p. 314: Այս կնիքից Սմբատ որդի ունեցավ՝ Ասոնի Թարար անունով, ում մասին խոսելու առիթ դեռ կունենանք:

⁴⁵⁰ Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, էջ 317:

գաղղվեց իր եղբայր Հեթում արքային հայտնել անձամբ Կարակորում ներկայանալու Մեծ Խանի պահանջը: Հեթումի այցելությունը, սակայն, զանազան հանգամանքների բերումով մի քանի տարի ձգձգվեց. նախ (1248 թ.) մահացավ Գուլուկը, որից հետո Կարակորումում գահակալական վեճեր ծավալվեցին, մինչև որ 1251 թ. տեղի ունեցած կուրուլայում նոր Մեծ Խան ընտրվեց Մանգուն կամ Մոնգուկեն (1251-1259 թթ.): 1252 թ. հունվարին մահացավ հայոց Ջարեթ թաղուհին⁴⁵¹, ինչը հավանաբար նույնպես իր հերթին խոչընդոտ հանդիսացավ Հեթումի երկար սպասված այցելությունը Կարակորում: Բայց մեկ-երկու ամիս անց, երբ Ոսկե Հորդայի խան Բաթուն ևս մեկ անգամ իրեն և Մանգու խանին ներկայանալու պահանջ ներկայացրեց, Հայոց արքան արդեն չհամարձակվեց հապաղել:

Հայագիր պատմիչներից Հեթումի ուղևորություն մասին ամենամանրամասն նկարագրությունը տալիս է Կիրակոս Գանձակեցին՝ Հիշատակելով անգամ այն բնակավայրերի անունները, որտեղով Հայոց արքան անցել է կամ կանգ է առել Կարակորում գնալու և տունդարձի ճանապարհին⁴⁵²: Նա ճանապարհին՝ Կարսում, հանդիպել է Բաչունոյինին, ապա որոշ ժամանակ իջևանել է Արագածի ստորոտում գտնվող Վարդենիս գյուղում՝ Քուրդ Վաչուտյան անունով մի հայ իշխանի տանը⁴⁵³, այնուհետև եթիլ (Վուլգա) գետի մոտ հանդիպել է

Բաթու խանին և նրա որդի Սարթախին: Բար Հեբրեոսն իր ժամանակագրության թե՛ ասորական և թե՛ արաբական խմբագրություններում նույնպես պատմում է հայոց արքայի դեսպանագնացության մասին: Մասնավորապես ըստ Բար Հեբրեոսի արաբերեն ժամանակագրության՝ Հեթումը (Hātim) Սսից դուրս է եկել 1252 թ. մարտին՝ նախկին անի ուրբաթ օրը: Վախենալով «Ռումի տեր սուլթանի» խարդավանքներից՝ նա ընդհուպ մինչև Վրաց երկիր հասնելը ծպտված՝ ծառայի կերպարանքով (ըստ Սմբատի՝ «ի կերպս սպասատրի գրաստու»⁴⁵⁴) է ճանապարհորդել: Չնայած դրան՝ նրան Երզնկայի (Arzankān) շուկայում մի վաճառական ճանաչել է որպես «Սսի արխ» (malik Sīs), ու քիչ է մնացել, որ բռնվի, և միայն նրան ուղեկցող հնարամիտ սպասավորի կողմից հասցված ապտակն է ցրել ներկաների կասկածը Հեթումի անձի վերաբերյալ⁴⁵⁵:

Կիրակոս Գանձակեցու վկայությունը՝ Հեթումը Մանգուին տեսակցել է 1254 թ. սեպտեմբեր ամսի 13-ին: Մատուցելով իր հետ տարած նվերները՝ նա Մեծ Խանի կողմից լավ ընդունելություն է արժանացել ու նրանից ստացել «հրովարտակ (յաղիկ) նշանավոր՝ զի մի ոմ իշխեսցես նեղկ գնա և զաշխարհս նորա, ետ և զիր ազատութեան եկեղեցեաց ընդ ամենայն տեղիս»⁴⁵⁶:

William Rubruck, p. 105; Путешествия в восточные страны, стр. 113, ինչպես նաև՝ Bar Hebraeus, Chronography, p. 447: Հմմտ. D. Bayarsaikhan, The Mongols, p. 94:

⁴⁵⁴ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 229:

⁴⁵⁵ Տե՛ս Ibn al-Ibrī, Muḥtaṣar, §. 460: Հմմտ. Ըույնի՝ Chronography, p. 419: Հակոբիկների պատրիարք գրում է, որ այս պատմությունն իրեն անձամբ հայոց արևան է պատմել Տարսնում կայացած իրենց մի հանդիպման ժամանակ Մանգու խանին այցելելուց մի քանի տարի անց: Տե՛ս Ըույնի՝ Muḥtaṣar, §. 460:

⁴⁵⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմության Հայոց, էջ 367: Հմմտ. Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 230: Հերոմ արևայի և Մանգու խանի միջև կայացած բանակցությունների ամենամանրամասն նկարագրությունը տալիս է Հերոմ Պատմիչ Կոստանցին՝ բվարկելով այն յոթ խնդրամբներ կամ առաջարկություններ (օրհնակ, ընդունել քրիստոնեություն, գրավել Բաղդադը և այլ), որոնք Մանգուն իր խառնակ է կատարել: Տե՛ս Hayton, La flor, p. 164-165: Հաշվի առնելով «Արևելքի պատմության ծաղկաբաղի» ակնհայտ հարգական բնութագիրը, այն է՝ Հռոմի պատկերասրահը և էվրոպացի տիրակալներին նախապես զարգացնելու, «Սուրբ երկիրը» մատուցվածների ձեռքից ազատելու գործում նրա ներդրած ջանքերը շնորհիվ նպատակաբարձրությունը՝ Կոստանցու շատ վկայություններ անարժանանալու են բովանակողի

⁴⁵¹ Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 229: Հմմտ. Bar Hebraeus, Chronography, p. 418:

⁴⁵² Կիրակոս Գանձակեցի, Պատմության Հայոց, էջ 364-372: Հերոմի ուղեգրի՝ Կիրակոսի նշած տեղանունները փարձել է նույնականացնել Զ. Քոլլեն: Տե՛ս J.A. Boyle, "The journey of Het'um I, king of Little Armenia, to the court of the Great Khan Mongke", CAJ, vol. 9, 1964, pp. 175-189:

⁴⁵³ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմության Հայոց, էջ 364-365: Հմմտ. Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 230: Հերոմի ուղեգրի և նրա ուղևորության կազմակերպիչների բվում Գանձակեցին և Սմբատն առանձնացնում են հատկապես հայագրի Բարսեղ անունով մի քանանայի, որ «չեսպանն էր Բարսիմ» (Կիրակոս Գանձակեցի, Պատմության Հայոց, էջ 366) և «բազում անգամ ճանապարհ արաբեալ էր ընդ նույն պողոտայ» (Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 230): Այս Բարսեղ վանականը գուցե մեկն էր այն հայ հոգևորականներից, որոնք ըստ Ֆրանսիայի արխ Լոփ Թ-ի բանագնաց Գիյոմ (Վիլլիամ) Ռոբրտի՝ քարզմանիցներ էին ծառայում Բարսի ուղի Սարթախի արևմտի: Տե՛ս The Journey of

Հիսուն օր մոնղոլական արքունիքում մնալուց հետո Հեթումը 1254 թ. նոյեմբեր ամսի 1-ին թողնում է Կարակորումն ու բռնում սունգարձի ուղին, որ շուրջ ութ ամիս է տևում: Ճանապարհին նա հանդիպում է Մանգու խանի եղբայր Հուլաղուին, ով ուղևորվում էր Իրան՝ ստանձնելու Մոնղոլական տերությունից արևմուտք ընկած երկրների (Իրան, Ասորիք, Եգիպտոս, Իտալ, Հայաստան) կառավարման և ընդարձակման գործը: Վերստին Վարդենիս հասնելով և առժամանակ այնտեղ կանգ առնելով՝ Հայոց արքան իր ուղեկիցներից Բարսեղ վանականին ուղարկում է Բաթու խանի մոտ՝ նրան Մանգու խանից բերած գրություններն ու հրովարտակը ցույց տալու, «զի և նա ընդ նմին օրինակի գրեաց է հրամանս»⁴⁵⁷: Ըստ Բար Հեբրեոսի՝ Հեթումը Կիլիկիա է հասել 1255 թ. սեպտեմբերի 1-ին՝ Բաղու-նոյնի ուղեկցությամբ⁴⁵⁸, ով այդ ժամանակ Իրան էր շարժվում Հուլաղուին դիմավորելու:

Բացի Բար Հեբրեոսի արաբական ժամանակագրությունից՝ Հեթումի կարակորումյան ուղևորության մասին վկայություն ենք գտնում նաև Իզդ ալ-Դին իրն Շադդադի Al-A'lāq al-hafīra երկում: Վերջինս խոսում է Մանգուին իր հնազանդությունը Հայտնելու զնայած մեկ այլ տիրակալի՝ Մայյաֆարիկինի տեր ալ-Մալիք ալ-Քամիլի մասին: Ըստ նրա՝ ալ-Քամիլը Կարակորում է ուղևորվել Հիջրայի 650 թ. վերջերին (1252 թ. փետրվարին) և տեղ հասնելով՝ Խաների արքունիքում դտել է նաև Մարգինի տիրոջ որդուն, Մոսուլի տեր Բադր ալ-Դին Լուլուի որդուն, ինչպես նաև Ասի տեր Հեթումի որդի Լևոնին (Liḥūn

ibn Haytūm ṣāhib Sīs, ընդգծված մերն է-Գ.Դ.)⁴⁵⁹: Առաջին Հայացքից արաբ մատենագիր այս վկայությունից կարելի է ենթադրել, որ Հայոց արքայի հետ Կարակորում է մեկնել նաև Հայոց թագաժառանգ Լևոնը: Սակայն այս ենթադրությունը հերքվում է Կիրակոս Գանձակեցու այն վկայությամբ, որ Հեթումն իր Լևոն և Թորոս որդիներին «եթող փոխանորդ իւր»⁴⁶⁰: Ուստի սա Իրն Շադդադի սրալն է, և «Հեթումի օրդի Լևոնի» փոխարեն պարզապես Haytūm կամ Haytūm ibn Quṣṭanṭīn (Կոստանդինի օրդի Հեթում) պիտի լիներ, ինչպես որ մամուլային պատմիչները նրան հաճախ կոչում են:

Ահա այսպես, Սմբատ Սպարապետի և Հեթում արքայի ղեսպանագնացություններով Հայ-մոնղոլական հարաբերությունները պաշտոնական երանգներ ստացան: Հայ-մոնղոլական դաշինքի ամրագրումից հետո Կիլիկիան մոնղոլներից ռազմաքաղաքական անվտանգություն հրաշխիքներ ձեռք բերեց, փոխարենը՝ հուսալի հենարան դարձավ դեպի արևմուտք ընդարձակվելու նրանց նկրտումների կենսագործման համար: Հայոց պետությունը որոշ Հարկային պարտավորություններ⁴⁶¹, իր արտաքին քաղաքական շահերը Մոնղոլական տերության և հետո նաև Իլխանության քաղաքական շահերին հարմարեցնելու, նրանց ռազմական ձեռնարկումներին մասնակցելու պարտավորություն ստանձնեց, բայց պահպանեց ներքին կյանքի անկախությունը և պետական իշխանության ինքնուրույնությունը: Ըստ ժան

հետազոտողներին: Տե՛ս Գ.Գ. Микаелян, *История*, стр. 309-315; Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները*, էջ 288: Հմմտ. Պ. Զորանեան, «Հեթում Ա. քազաուի ուղեւորւթիւնը Կարակորում», *Բազմավայր*, № 3-4, Վենետիկ, Ս. Ղազար, 2010, էջ 452-453:

⁴⁵⁷ Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, էջ 365:

⁴⁵⁸ Bar Hebraeus, *Chronography*, p. 424, ինչպես նաև նույնի՝ Muḥtaṣar, ֆ. 462. Հմմտ. Սմբատ Սպարապետ, *Տարեցրք*, Վենետիկ, էջ 230 և Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, էջ 375-376: Վ. Ռաբրուֆը, ով այդ ժամանակ նույնպես վերադառնում էր Մանգու խանի արևմտից և 1255 թ. մայիսին Կիլիկիա էր հասել, հայոց Կոստանդին պալլից Ստում տեղեկացել է, որ Հեթումը բաղնաջող կերպով հետ է վերադառնում իրանի մոտից, և որ վերջինս զգալի չափով թերևացրել է նաև հարկն ու հրամայել, որ այդուհետ էլ ոչ մի մանդալ պաշտոնյա չունի նա Երկիր: Տե՛ս *The Journey of William Rubruck*, p. 278; *Путешествия в восточные страны*, стр. 192-193:

⁴⁵⁹ 'Izz al-Dīn ibn Ṣaddād, *Al-A'lāq al-hafīra*, ց. 3.2, ֆ. 479: Հմմտ. R.S. Humphreys, *From Saladin to the Mongols*, p. 335, 466, n. 42.

⁴⁶⁰ Կիրակոս Գանձակեցի, *Պատմություն Հայոց*, էջ 365:

⁴⁶¹ Համդալլան Կազվինին, ով թեև վերոհիշյալ դեպքից 60-70 տարի անց է գրում, այնուամենայնիվ, արձանագրում է, որ «Փոքր Հայաստանը, որ *Երանի մաս չի կազմում*» (ընդգծված մերն է-Գ.Դ.), որպես տարեկան հարկ ընդունել 30 հզ. դինար էր վճարում իլխանական Իրանի գանձարան: Համեմատության համար նշենք, որ նույն հեղինակի վկայությամբ՝ Իլդնիայի սուլթանությունից գանձվում էր 3 մլն. 300 հզ. դինար, իսկ Մրաց թագավորությունից 1 մլն. 202 հզ. դինար հարկ: Տե՛ս Hamd Allāh Mustawfi Qazwīnī, *Kitāb Nuzhat al-qulūb*, Barīl, Laydan, 1913, ֆ. 100, ինչպես նաև *The geographical part of the Nuzhat-al-Qulūb* composed by Hamd-Allah Mustawfi of Qazwīn in 740 (1340), tr. by G. Le Strange, E.J. Brill, Leiden-London, 1919, p. 100: Հմմտ. Գ.Գ. Микаелян, *История*, стр. 316; Լ. Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները*, հտ. Բ, էջ 311-313:

զը ժուանվիլի՝ «նա [իսն՝ Հերումը] այնքան ուզմիկներ բերեց իր հետ, որ կարող եր կովել արդեն Իկոնիայի սուլթանի դեմ»⁴⁶²:

Ինչպես վերևում նշեցինք, 1253 թ. Մանգու-խանի հրամանով նրա եղբայր Հուլաղուն, մեծաթիվ զորքի գլուխ անցած, ճանապարհ էր ընկել արևմուտք՝ Իրանի և շրջակա երկրամասերի հպատակեցումն ավարտին հասցնելու⁴⁶³: Համգալլահ Կազվինին իր չափածո պատմության մեջ՝ Zafarnāma-ում⁴⁶⁴, գրում է, որ Հուլաղուն նախքան իր ժամանումը սուրհանդակներ է հղում Իրանի և շրջակա երկրամասերի կառավարիչներին՝ նրանց հայտնելով իր մոտայուտ գալստյան մասին և հնազանդության, անհավատների (առաջին հերթին՝ իսմաիլականների և Բաղդադի Աբբասյանների) դեմ պատերազմում իրեն օգնության կանչելով: «նա [սուրհանդակ] ուղարկեց նաև մեծ ու փոքր քաղաքապետություններ՝ Քավրիզ, Առան, Ռումի հայերին (ընդգծումը մերն է-Գ.Դ.), «Ջուրխտան» և այլ շրջաններ ու քաղաքապետություններ», - կարդում ենք Zafarnāma-ի Ուորդի կատարած անգլերեն թարգմանության մեջ⁴⁶⁵: Հատվածում թարգմանչի կողմից «Ռումի հայեր» թարգմանվածը բնագրի Arman be-Rūm-ն է: Կարելի է ենթադրել, թե պարսիկ մատենագիրն այս արտահայտությունը Կիլիկիայի Հայերին նկատի ունի: Սակայն պարսկերեն բնագրի հետ համեմատությունից պարզվում է, որ «Ռումի հայերը» թարգմանչի սխալն է, և հատվածը ճիշտ է այսպես թարգմանել. «նա [սուրհանդակ] ուղարկեց ... Քավրիզ, Առան, հայերին (այն է՝ Հայաստան), Ռում և Գուրջխտան և այլ...» (...be-Tabrīz, wa-Arrān wa-Arman, be-Rūm, be-Gurğistān...)⁴⁶⁶: Բացի այդ, Ուորդի տարընթեքյաձ «Ջուրխտանը»

բնագրում հստակ ընթեռնելի Gurğistān-ն է, որը նույնն է, թե «Վրաստանը»: Այսպիսով, Համգալլահ Կազվինին, ըստ էության, նկատի է ունեցել Մեծ Հայքի (բուն Հայաստանի) Հայերին: Չէ՞ որ Հայկական աղբյուրներից էլ քաջ հայտնի է, որ Ալամուտի և Բաղդադի (և հետո նաև Մայյաֆարիկինի) գրավմանը վրացիների հետ մեկտեղ նաև Մեծ Հայքի Հայ իշխաններ են մասնակցել, ինչպես օրինակ, Ավագ Զաքարյանը, Պոռչ Խաղբակյանը և այլոք⁴⁶⁷: Այս ենթադրությունը վերջնականապես հաստատվում է Ռաշիդ ալ-Դինի Ğāmi' al-tawārīh-ի հետ համեմատությունով: Վերջինս գրում է, որ երբ Հուլաղուն իսանն անցավ Զայհուն (Ամուղարյա) գետը, նրա մոտայուտ ժամանման լուրը ստացվեց տարածաշրջան, և նրա մոտ ծառայության անցնելու շտապեցին Իրանի «բոլոր սուլթաններն ու արհաները», ինչպես նաև Ռումի սուլթաններ Իզզ ալ-Դինը և Ռուքն ալ-Դինը, Ֆարսից՝ աթաբեկ Սաադը, Իրաքի, Խորասանի, Ազարբայջանի (Ատրպատականի), Առանի, Շիրվանի և Վրաստանի արքաներն ու ազնվականները՝ «բոլորն էլ պատշան նվերներով»⁴⁶⁸: Զուր չէ, որ մոնղոլ ուսումնասիրող Դ. Բայարսայխանը, անդրադառնալով Ռաշիդ ալ-Դինի այս վկայությունը, գրում է, որ թեև պարսկագիր պատմիչը վերոբերյալ երկրների շարքում չի նշում Հայաստանը, այնուամենայնիվ, հասկանալի է, որ նա Վրաստանի անունը հիշատակելով՝ նաև [Մեծ Հայքի] Հայ իշխաններին է նկատի ունեցել⁴⁶⁹:

Մինչև 1256 թ. ավարտին հասցնելով Իրանի նվաճումը՝ Հուլաղուն փաստորեն հիմքը դրեց մի նոր մոնղոլական պետական կազմավորման, որին մենք այսօր Իլխանություն ենք կոչում⁴⁷⁰: Չեղբայրեն-

⁴⁶² *Memoirs of the Crusades by Villehardoin & de Joinville*, p. 171.

⁴⁶³ *Si' u Ğuwaynī, Tārīh-e Ğāhān-Guṣā*, ց. 3, ց. 89-90 և J.A. Boyle, *The History*, vol. 2, p. 607.

⁴⁶⁴ Համգալլահ Կազվինի այս իչ հայտնի երկը մեզ է հասել երեխ ձևագրերով, որոնցից միայն մեկն է ուսումնասիրվել ու հրատարակվել նամանակաւորյամբ՝ երկու հատորով (*Ḥamd Allāh Mustawfī, Zafarnāma*, ց. 1-2, Österreichische Akademie der Wissenschaften, Vienna, 1999): Այդ մասին տե՛ս Ch. Melville, "Ḥamd Allāh Mustawfī", in *EJr*, vol. XI, Fasc. 6, p. 633): Բնագրի վերջին՝ մոնղոլների պատմությանը նվիրված գլուխը, որ ցայսօր մնում է չհրատարակված, իր ասեղաստության մեջ անգլերեն է քաղգմանել՝ Լ. Ուորդը: *Si' u L.J. Ward, The Zafar-nāmah of Ḥamd Allāh Mustawfī and the Il-Khān dynasty of Iran*, Ph.D. diss, 3 vols., University of Manchester, 1983:

⁴⁶⁵ *Si' u Mān*, vol. 2, p. 19:

⁴⁶⁶ *Si' u Mān*, vol. 1, fol. 586b:

⁴⁶⁷ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Գ. Բայարսայխանի գրքում՝ D. Bayarsaikhan, *The Mongols*, pp. 122-135:

⁴⁶⁸ *Rašīd al-Dīn, Ğāmi' al-Tawārīh*, ց. 2, ց. 688-689; *Рашид-ад-Дин, Сборник летописей*, том III, стр. 25. Հմմտ. Banākātī, *Rawdat uli al-albāb fi ma'rifat al-tawārīh wa-l-ansāb*, be-kušēš-e Ğa'far Ši'ār, Tehrān, 1348/1969, ց. 414-415.

⁴⁶⁹ D. Bayarsaikhan, *The Mongols*, p. 125.

⁴⁷⁰ Գիտական գրականության մեջ Հուլաղունի և նրա հաջորդների տրված *ilkhān* տիտղոսի մի քանի ստուգաբանություններ կան, քեև նրանցից ամենատարածվածը «ենթակա խան» բացատրությունն է, որ շեշտով է նրանց ստորադասությունը Կարակորումում նստող Մեծ խանին: *Si' u Th. Allsen, Mongol Imperialism*, p. 48: Հմմտ.՝ R. Amitai-Preiss, *Mongols*, pp. 13-14:

յով Ալամուտի իսմայիլականներին և գրավելով Բաղդադը՝ նա արդեն կազմ-պատրաստ էր ներխուժելու Ասորիք, որտեղ դեռ շարունակում էին գոյատևել կործանված Այյուբյան դինաստիայի մնացուկները: Հուլիսի 1260 թ. ասորիքյան արշավանքի և զբանուժ Հայոց արքա Հեթումի ունեցած դերակատարության մասին նախորդ ենթադրությունում արդեն խոսել ենք: Ծիշտ է՝ Այն Ջալուտում կրած պարտությունը Հուլիսի 1260 թ. ասորիքում հաստատվելու մոնղոլների առաջին հնարավորությունը, բայց նրան հաջողությամբ տիրակալները բնավ չհրաժարվեցին այդ նպատակից: Հետագայում ևս՝ 1281, 1299, 1300, 1303, 1312-1313 թթ. մոնղոլ իլխանները կրկին մեծ արշավանքներ ձեռնարկեցին դեպի Ասորիք, թեև բոլոր այս դեպքերում, չնայած դաշնակիցներից և հպատակ երկրներից՝ Մերձավոր Արևելքի խաչակրաց պետություններից, Վրաստանից, Ռուսի սուլթանությունից և հատկապես Կիլիկյան Հայաստանից ստացած օգնությանը և արձանագրած ժամանակավոր հաշտություններին՝ վերջին հաշվով պարտված դուրս եկան Մամլուքյան սուլթանության դեմ պայքարում: Ամիտայը սրա ամենահավանական պատճառ է նշում այն, որ այս երկու տարածաշրջանային ուժերի վախճանամյա դիմակայության ընթացքում Իլխանության հետ հարաբերությունները գրեթե մշտապես առաջին տեղն էին զբաղեցնում Մամլուքյան սուլթանության արտաքին քաղաքականության օրակարգում, մինչդեռ Իլխանության դեպքում Սուլթանության հետ հարաբերություններից էլ ավելի կարևոր առաջնահերթություն կար՝ Ջոզիի մոնղոլական ուլուսի կամ Ռսկե Հորդայի հետ պատերազմը⁴⁷¹ կովկասյան ճակատում միանձնյա դերիշխանության հասնելու համար: Այս պայքարում առավել հաջողակ էր Ռսկե Հորդան, որի զորքերն արդեն 1263 թ. հունվարի 14-ին Թերեք գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում առաջին վճռական հաղթանակն են տանում Հուլիսի 1260 թ. որդի Աբաղայի առաջնորդած բանակների նկատմամբ: Իլխանության համար այս հարցն ավելի էր բարդանում եգիպտոսի սուլթան ալ-Ջահիրի Բայբարսի և Ռսկե Հորդայի իսլամ ընդուն-

⁴⁷¹ R. Amitai, *Holy war and rapprochement: Studies in the Relations between the Mamluk Sultanate and the Mongol Ilkhanate (1260-1335)*, Brepols, Turnhout, 2013, pp. 15-16.

նած Բերքե խանի (1257-1267 թթ.) օրոք այդ երկու պետությունների միջև հաստատված բարիդրացիական հարաբերությունների և զվաճանագրական ակտիվ շփումների պատճառով⁴⁷²:

Մամլուք-մոնղոլական պատերազմը ոչ պակաս զբամառիկ ընթացք ունեցավ նաև երկու տերությունների բախման առաջնագծում հայտնված Հայոց թագավորության համար, որը, մոնղոլների մշտական դաշնակիցը լինելով, վերջիններիս ամեն մի անհաջողությունից և նահանջից հետո հարկադրված էր կանգնել մամլուքների «դամոկլյան սրի» առաջ և իր վրա ընդունել նրանց ամենածանր հարվածները: «Մոնղոլներից էական օգնություն ստանալու հետ նրա (տվյալ դեպքում նկատի ունի Հեթում Ա-ին) առաջին բոլոր հույսերն այդպես էլ չիարատվեցին, և նա միայնակ մնաց իր արկածախնդրությունների հետևանքները հաղթահարելիս», - մի առիթով գրում է Ռ. Ամիտայը⁴⁷³: «[Մոնղոլների նկատմամբ] ունեցած հավատարմության դիմաց հայերը երբևէ չստացան ավելին, քան մամլուքների պատճառած տառապանքը դեպի հյուսիս՝ Ռուս, ուղղված նրանց արշավանքների ժամանակ»⁴⁷⁴, - երկրորդում է մեկ այլ արդի ուսումնասիրող՝ մոնղոլագետ Ջորջ Լեյնը: Արաբ հետազոտող Աբդ Ալլահ Ալ Սանին գրում է, որ մամլուք սուլթանների՝ Հայերի դեմ արամադրվելու առաջնապատճառը մոնղոլների հետ նրանց հաստատած դաշնակցությունն էր: Մամլուքների հարվածները հաջողեցին մեկը մյուսին՝ վերջնական հաշվում հանգեցնելով Հայոց թագավորության տապալմանը 1375 թ.⁴⁷⁵: Իսկ Շառլաթ Ռամադան Հուջջան էլ եղբրահանգում է, որ հայ-մոնղոլական դաշնակցությունը ոչ միայն չունեցավ ցանկալի վերջնարդյունքը՝ խարխիլելու Բահրի մամլուքների պետությունը, այլ ընդհանրապես՝ նրան կանգնեցրեց «մամլուքյան

⁴⁷² Մամլուքյան սուլթանության և Ռսկե Հորդայի հարաբերությունների մասին տե՛ս **Նոյնի՝** *Mongols*, pp. 78-86; A.F. Broadbridge, *Kingship and Ideology in the Islamic and Mongol Worlds*, Cambridge of University Press, Cambridge, 2008, pp. 50-63 և հատկապես՝ C. Закиров, *Дипломатические отношения Золотой Орды с Египтом (XIII-XIV)*, Наука, Москва, 1966:

⁴⁷³ R. Amitai, "In the aftermath", p. 10.

⁴⁷⁴ G. Lane, *Early Mongol rule in thirteenth century Iran: A Persian renaissance*, Routledge Curzon, 2003, p. 38.

⁴⁷⁵ A.A.Š.A. Āl Tānī, *Al-Ālāqāt*, §. 195. Հմտ. M. Canard, "Le Royaume", p. 221.

անգութ հարվածներին» տակ՝ պատճառ դառնալով երկրի մշտական պե-
րածություններին, նրա բնակչության սպանդին ու դերեվարությունը:
Չնայած այս ամենին՝ Հայոց թագավորությունը շարունակեց իլխան-
ների ազդեցության տակ մնալ անգամ վերջիններին իսլամացումից
հետո՝ վերածվելով այդ պատերազմի «Վավուրյան նոխազի»⁴⁷⁶: Այս
հետազոտողների կարծիքները հաստատում է մամլուք մատենագիր ալ-
Ումարին, ով իր Masālik al-absār երկում գրում է. «Նրա («Սսի երկրի»)
աբան հավատարիմ է «Իրաֆի և Պարսկաստանի տիրոջը» (իմա՝ իլխանին)
և ծառայության մեջ է նրա մոտ (muntazam fi silkīhi): Ամեն անգամ, երբ վեր-
ջինին գորհերն Ասորիֆ էին ելնում եգիպտոսի տիրոջ դեմ կովելու, նա էլ
նրանց հետ էր դուրս գալիս: Նրա գորհերի բազմությունն աստիճանաբար շա-
տացավ, անագնացավ նրանց շարությունը (nikāya) իսլամի և նրա «ժողովրդի»
(մուսուլմանների) նկատմամբ: Իրա հետ մեկտեղ նա շոգոտորում էր եգիպ-
տոսի տիրոջը և Բնուս՝ ամենամյա սահմանված չափով հարկ վճարելով:
Յուրաքանչյուր անգամ, երբ եգիպտոսի և Ասորիֆի գորհերն ալ-Բիրայով
(բնագրում փոքր-ինչ անհասկանալի՝ fi 'uqr al-Bīra) այնտեղ են առչավում,
գրավում են երկիրը, գերեվարում կանանց և երեխաների»⁴⁷⁷: Ալ-Ումարիի
այս վկայությամբ եզրափակենք 1250-1260 թթ. Մերձավոր Արևելքի
քաղաքական քարտեզի վրա տեղի ունեցած փոփոխություններին, ի
մասնավորի՝ հրապարակ եկած երկու հակոտնյա ուժերի՝ Մամլուքյան
սուլթանության և Իրանի մոնղոլական իլխանության հարարերակ-
ցությունը և ձևավորված նոր միջազգային իրադրություն մեջ Կիլի-
կիայի Հայոց թագավորության ստանձնած դերին նվիրված այս մասը:
Սա օգտակար կլինի աշխատանքի հաջորդ մասում ծաղկաքաղ թարգ-
մանությամբ ներկայացված հատվածներում նկարագրված իրադար-
ձությունների քաղաքական հետնախորքն ու տրամաբանությունը
հասկանալու առումով:

⁴⁷⁶ Š.R. Huḡḡa, Al-'Ālāqāt, §. 511-512.

⁴⁷⁷ Al-'Umārī, Masālik al-absār, §. 3, §. 316.

ՄԱՍ Գ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՆԱԳՐԵՐԻՑ ԵՎ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 AL-RAWḌ AL-ZĀHIR FĪ SĪRAT AL-MALIK AL-ZĀHIR

«ԾԱՂԿՈՒՆ ՊԱՐՏԵԶ ԱԼ-ՄԱԼԻԲ ԱԼ-ՋԱՀԻՐԻ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ»

էջ 191

Հայոց իշխողի, Ալլահն անիծի նրան, արշավանքը Հալեպի դեմ և պարտված վերադարձը

Այս տարում (իմա՝ հիջրայի 662՝ 1263 թ. նոյ. 4 - 1264 թ. հոկտ. 23)
Կոստանդինի որդի Հեթումը¹ Հայոց իշխողը, Բարձրյալ Ալլահն անիծի
նրան, վերադարձավ Հուլաղուի² մոտից, Ալլահն անիծի նրան, և երբ
ժամանեց, իր երկիր չմտավ, այլ ուղղվեց Ռումի տեր սուլթան Ռուքն
ալ-Դինի մոտ³: Երբ նրա մոտ հասավ, վերջինս մտադրվեց անակնկալ
կերպով բռնել նրան և մեղքը թուրքմեններին վերագրել: Բունակալը
[սակայն] հասկացել էր սա և իրեն ուղեկից էր վերցրել Հուլաղուի
երկրի դատավորին (qādī), որպեսզի վերջինս հաշտություն հաստատի
իր և սուլթան Ռուքն ալ-Դինի միջև: Հայոց իշխողը նրան շատ ընծա-
ներ էր շնորհել՝ իր կողմը դրավելու նպատակով՝ ասելով. «Ես չեմ կա-
րող Ռումի երկիր մտնել առանց թաքառական գորախմբի ուղեկցության, որ
կապահովի իմ անվտանգությունը»: [Այդժամ] Կաղին գրեց Ռումում
գտնվող թաթարներին, և նրանցից մի զորախումբ եկավ մոտ չորս
հարյուր հեծյալից բաղկացած: Այդ բանից հետո [միայն] նա ճանա-
պարհ ընկավ: Ռումի տերը դիմավորեց նրան և իջավ ձիուց՝ Հուլա-
ղուի կաղիին տեսնելով, իսկ Հայը չիջավ: Նրանք երկուսն էլ թան-
կարժեք նվերներ տվեցին իրար: Ռումի տիրոջ նվիրը ներառում էր 14
նժույզ և 40 հզ. զիրհամ, արքունիքի (բնագրում՝ al-mağlis) ամբողջ

ոսկյա և արծաթյա սպասքը, եղներ և այլն, իսկ հայը նրան տվեց 4 բերդ: [Այնուհետև] բոլորով ուղևորվեցին դեպի Հիրկալա⁴, որտեղ դաշինք կռեցին և համաձայնության եկան⁵:

Հայն այնուհետև զբաղվեց իր բոլոր նգովյալ զորքերը հավաքագրելով՝ իսլամական երկրներն ասպատակելու նպատակով: Նա շարժվեց և երբ Սարվանդեքարի բերդ հասավ, իր բանակին հայտարարեց, որ երեք օրվա օրապահիկ վերցնեն: Նրա զորքում Բանու Քիլար ցեղից⁶ կային 1000 բեդվին հեծյալներ: Այդպես շարժվեցին Այն Թաբի⁷ վրա⁸:

Սուլթանն իր հետախուզական միջոցներով տեղեկացել էր այս համաձայնության մասին, ուստի սուլթանական ուղարկեց՝ Համայի և Հոմսի զորքերին հրամայելու, որ նրանք ճամփա ընկնեն [նրանց ընդառաջ]: Այդպես հաղթական զորքերից մի զորաբանակ դուրս եկավ և հարձակվեց հայոց զորքի վրա, դերի վերցրեց նրանց իշխաններից մեկին, իսկ 100 երկսպաստավոր ուղտ: Նրանք պարտված հետ դարձան: Նրանցից սպանվեցին 30 հոգի, Համմուսի⁹ տերը՝ Բարուն Բահրամը (իմա՝ պարոն Վահրամը)¹⁰, ով արքայի ազգականներից էր, շատ ծանր վիրավորվեց¹¹:

Այս բանից հետո [Հեթումը] գրեց Ռումում գտնվող թաթարներին, որոնք թվով յոթ հարյուր հեծյալ էին, և նրանց բերել տվեց՝ նպատակ ունենալով թիրախել Ասորիքը: [Այս անգամ էլ], երբ Հարիմ¹² հասան, առատ ձյուն տեղաց: Հիշյալ բռնակալը գրել էր նաև Անտիոք¹³ և աջակցություն հայցել: Այնտեղից օգնության էին եկել 150 հեծյալ, որոնք բոլորը սարակուղ էին հագել՝ թաթարների նմանվելու նպատակով: Բոլորով հավաքվեցին Հարիմի մոտ, բայց Ալլահն [այնպիսի առատ] ձյուն և անձրև ուղարկեց, որ քիչ էր մնում, որ [բոլորն էլ] կոտորվեն:

Ինչ վերաբերում է հաղթական բանակին, ապա այն դուրս էր եկել նրանց ընդառաջ: Նրանց նորություններ հասան, որ նրանց սնունդը վերջացել է, վախեցած են և շտապում են նահանջել: Նա (իմա՝ Հեթումը) իր զինակիցներից կորցրել էր 120 հեծյալ, 30 թաթար [զորական] և վեց անտիոքացի ասպետ, ինչպես նաև մի խումբ իր հետևակայիներից: Իսլամի հաղթանակն [սկսվեց] շնորհիվ այս

սուլթանի մտադրության, ում աջակից են արքաներն ու հրեշտակները, օգնում է [անգամ] երկինքը՝ մերթ իր բոցկլտացող ասուլաներով, մերթ անձրևի և ձյան տարափոփոխ տեղումներով: Թշնամիների բոլոր զորախմբերը պարտվում են նրա օրհնյալ համոզմունքներից, թող Ալլահն ավելացնի նրա զորությունը և իր հավատով պարտության մատնի հեթանոսությունը¹⁴:

էջ 195

[Հիջրայի 662 թ.] Ջումաղա երկրորդ ամսի կեսերին (1264 թ. ապրիլի կեսեր) ձերբակալվեցին երկու թաթար լրտեսներ, քանի որ սուլթանը շատ մեծ կարևորություն էր տալիս հետախույզների տեղեկությունների օգտագործմանը, նրանց ռոճիկների և վարձավճարների նշանակմանը¹⁵: Նա նույնպես հետախույզներ էր ուղարկել Հուլաղուի մոտ, ովքեր [ծպտված] հաստատվել էին նրա արքունիքում (բնագրում՝ al-urdū), և հենց նրանք էին հայտնել, որ Հուլավուն պարաստվում է երկու հետախույզ ուղարկել՝ հաղորդելով նրանց անունները: Եվ երբ վերջիններս Միս էին հասել, [այլ] հետախույզներ էլ տվել էին նրանց նկարագրությունները՝ հրահանգվելով հետևել նրանց [հետագա] տեղաշարժը: Երբ նրանք Աքբա են եկել, [այլ] հետախույզներ էր իրագեկել են, որ նրանք [արդեն] Աքբայում¹⁶ են: [Ապա] նրանք նավ էին նստել՝ Դամիստա¹⁷ դնալու նպատակով [անտեղյակ], որ իրենց բոլոր ճանապարհները հսկողության տակ են: Երբ վերջապես ժամանել են, նրանց հապշտապ սուլթանի մոտ են բերել: Նա հարցաքննեց նրանց, տվեց նրանց ծածկադրերը (բնագրում՝ amāyir), որ նրանք կարդացին: Նրանց մոտ հայտնաբերվեց Հուլաղուից Աթաբեկին ուղղված Ֆիրման, որում սիրաշահում էր նրան և [փորձում] իր կողմը գրավել: Նա համոզված էր, որ այդ կերպ վարչակարգի մեջ պառակտում կզգի, քանզի երբ այդ [Ֆիրմանը] սուլթանի ձեռքն ընկնի, վերջինս անհապաղ կմեղադրի իր իշխանավորներից ամենաբարձրին (այսինքն՝ աթաբեկին), իսկ աթաբեկը [չի կարողանա] պատասխանել, թե ինչ անհույսություն ունի ինքն այդ անհեթանոսությանը: Սուլթանը հասկացավ այս խաբուսիկ հնարքը և պահանջեց,

որ աթարեկն անմիջապես իրեն ներկայանա և նրան հասկացրեց, որ դա հնարք է՝ ցույց տալով գրությունը: Նա ասաց նրան. «ես սրանում եմ մասին նշված և ոչ մի բանի չեմ հավատացել»: Ասաց և հրամայեց պատուել և ծփեն-ծփեն անել այն: Սրանով սուլթանն ի ցույց դրեց Հուլաղուի թուլությունը, և որ ինքը հետևողական է ամեն ինչի նկատմամբ (բառացի՝ ամուր բռնած է ամեն ինչից)¹⁵: Այս հարցում նրա վարմունքը շատ վեհ էր, և չլսված է, որ նախկինում որևէ տիրակալ նույն հարցում այդ կերպ վարված և իր լավ նպատակներին այդօրինակ բարեբարությամբ հասած լինի:

էջ 196

[Մուսուլմանական] երկրների վրա Հայոց իշխողի ևս մի արշավանքի և նրա ձգտման հուսախարության մասին

Այս տարում (իմա՝ Հիջրայի 662 թ.) Հայոց իշխող Հեթումը կրկին գրադվեց բոլոր կողմերից նզովյալ զորքերի հավաքագրմամբ: Նա հազար թաթարական վերնազգեստ և նույնքան սառակուղ պատրաստելով, որ հազրեց իր գինակիցներին՝ վախեցնելու համար, թե իբր թաթարական օժանդակ զորքեր են: Սուլթանը Դամասկոս սուրհանդակ հղեց՝ [հրամայելով], որ այնտեղից Հոմա զորքեր ուղարկվեն, ինչպես նաև մի զորախումբ էլ Համայից դուրս գա: Հրամայվեց նաև, որ Ասորիքի բեդվիներն այդ տարի անապատ դուրս չգան: [Այս ընթացքում] ճամփա ընկալվեց էմիր Հուսամ ալ-Դին ալ-Այնթաբին և հարձակվեց Մարգարանի¹⁹ վրա՝ սպանելով և գերելով, ապա ողջ-առողջ հետ դարձավ: [Այնուհետև] հարձակումներ ձեռնարկվեցին բոլոր կողմերից: Երբ թշնամին զգաց այդ ձեռնարկումների վճռականությունը, իր նժույգները պարտված հետ քաշեց, նրանց օժանդակ զորամիավորումները ցրիվ-ցրիվ եղան, նրանց ածուխները մարեցին (իմա՝ հանդգնությունը նվաղեց), մնացին վախեցած և ապշահար: Ապա [մուսուլմանական] զորքերը հարձակվեցին Անտիոքի վրա՝ ավարանեցին՝ սպանելի ու գերության մատնելով [չատերին]²⁰:

էջ 201

Այս թվականին (Հիջրայի 662 թ.) գրություն ստացվեց ալ-Բիրայի կառավարիչներից առ այն, որ Սարիմ ալ-Դին Բաքթաշ ալ-Ջահիզին իր գորախմբով արշավել ու գրոհել է Հոմալայի դարպասները՝ մի քանի անգամ հարձակում գործելով նրա վրա²¹:

էջ 228

[Սուլթանը] վերաշինման աշխատանքների²² համար ուղարկեց էմիրներ Ալամ ալ-Դինին, Սայֆ ալ-Դին Բալաբան ալ-Ջայշին և Ռուքն ալ-Դին ալ-Սարվին: Յուրաքանչյուր էմիր իր հետ երեք հոգի բերեց՝ վերանորոգման աշխատանքներին աջակցելու: Ավարտելուն պես, նրանց [հանձնարարված էր] ուղղություն վերցնել դեպի Թեյ Բաշիր²³ Հայոց երկրի վրա արշավելու նպատակով:

էջ 253

[Մուսուլմանական] զորի հարձակումը Սուրի (Տյուրոսի) վրա

Երբ սուլթանն Աքրայի կողմերը հասավ, նա էմիր Ալա ալ-Դին ալ-Բուհուլիզարին²⁴ և էմիր Իզզ ալ-Դին Ուզան ալ-Ռուքնին մի զորախմբով ուղարկեց Տյուրոսի կողմերը: Նրանք լեռները մտան գիշերը և դժվարանցանելի տեղերը հաղթահարելիս մեծ նեղություն կրեցին: Ապա գրոհեցին Տյուրոսը և մեծաքանակ ուղտեր, կովեր և այծեր ավար առան: Նրանք գերեզարեցին Սսի տիրոջ Քամանդուրին²⁵, և նրա հետ ևս երկու հոգու: Նրանք ապաստան էին գտել մի աշտարակում, որը [մուսուլմանները] վերցրին ապահովության երաշխիքով: Գերի ընկան Տյուրոսի վեզիրը և մի խումբ ֆրանկներ: Էմիր Սայֆ ալ-Դին Աթամիչն ուղղություն վերցրեց դեպի Սայդա (Սիդոն), բայց սուլթանը նրան հրամայեց շարժվել դեպի Սաֆազ:

Սուլթանը ճանապարհվեց դեպի Աքրա (Աքրա) և ճամբարեց ջրերով հարուստ մի իջևանում, որը հայտնի էր ալ-Ֆարաջ անունով և գտնվում էր Մասսարաթ ալ-Արման (բառացի՝ «Հայոց միթնանքի») մոտ: Սուլթանն էմիրներ Բազր ալ-Դին Այզամուրիին և Բազր ալ-Դին

Բայտարիին²⁷ ուղարկեց ալ-Կաթն (ալ-Կուրայն), իսկ էմիր Ֆախր ալ-Դին ալ-Հոմսիին՝ Ամիրյա լեռան կողմը: Այդպես զորքերը բոլոր կողմերից հարձակման անցան: Էմիրները պաշարման մեջ առան ալ-Կարնը, զբավվեց Աբրային մոտ գտնվող մի բերդ: Այնքան շատ ավար վերցրին, որ այլևս չէր գտնվում մեկը, որ գններ մի կով կամ մի գոմշացու: Հարձակումները ֆրանկների հողերի վրա ընդլայնվեցին նաև Տրիպոլիի սահմաններից Աբսուֆի մերձակայքի վրա: Տրիպոլի ճանապարհաված զորքը շարժվեց այդ ուղղությամբ, Տյուրոսի գետ շարժված զորքը մեկ այլ ուղղությամբ, սուլթանը շարժվեց Աբրայի ուղղությամբ, իսկ էմիր Նասիր ալ-Դին ալ-Կայմարին ուղղվեց դեպի Ասիս:

Այս միջոցին նամակ ստացվեց Աբրայի Հիվանդախնամ (ասպետների) առջնորդից՝ հասցեադրված Աթաբեկին, առ այն, որ ինքը ձգտում է հաշտության՝ ականարկելով այն բարեքնների մասին, որ իրենք ստացել են Տրիպոլիի և Հայոց երկրի բարեբեր հողերից: Աթաբեկը նրանց սպառնալիքներով և ահաբեկությամբ լի պատասխան գրեց:

Սուլթանն այնուհետև զբաղվեց Սաֆադի հարցով, որովհետև այն պատառ էր Ասորիքի կոկորդուս և ոսկոր իսլամի [երկրների] կրճթում:

էջ 269

Սսի արշավանք²⁸ և նրա արհայի գերեվարումը, նրա եղբոր և հորեղբոր սպանությունը, հորեղբորոգու գերեվարումը

Մենք արդեն հիշատակել ենք Թաբֆուրի՝ Սսի տիրոջ նենգամուռության մասին²⁹ և այն մասին, թե ինչպես Սաֆադի գործը վերջացնելուց հետո սուլթանն օթևան էր առել ալ-Ջասուրայում և հրամայել էր, որ զորքից ոչ մեկը Դամասկոս չմտնի: [Սակայն նրանցից ոմանք] համաձայնության եկան և մեկ առ մեկ ծածկաբար Դամասկոս մտան: Սուլթանը կարգազրեց, որ նրանց պարաններով կապած դուրս հանեն [քաղաքից]:

Սուլթանն [այնուհետև] զորակոչեց ալ-Մալիք ալ-Մանսուրին և նրա ծառայության տակ գտնվող էմիրներին՝ Իզզ ալ-Դին Ուղանին³⁰, Սայֆ ալ-Դին Կալավուսն ալ-Ալֆիին³¹ և հրամայեց նրանց ենթարկվել (բառացի հարգել) Համայի տիրոջը: Հրահանագիր տրվեց, որ պարունակում էր նրանց բոլոր անելիքների վերաբերյալ [հանձնարարա-

կաններ]: Նրանք ճանապարհ ընկան [հիջրայի 664 թ.] Ջու ալ-Կադաամսի 5-ին (1266 թ. օգոստոսի 8), հասան Դարպասի, որից հետո գորակարգերով (muftibin) Կապաններ³² մտան: Սակայն Վասակի որդի Կոստանդինի որդի Հեթումը՝ al-Malik al-muğir-ը (al-Malik al-Muğir Haytūm ibn Kustantīn ibn Bāsāk³³), թագավորեցրել էր իր որդի Լևոնին, իսկ ինքը վանք էր մտել³⁴: Երբ մուսուլմանները մարտաշարքերի բաժանվեցին, Լևոնը՝ Սսի իշխողը, [նույնպես] կանգ առավ՝ իր զորքերին մարտական դասավորություն տալու: Նրանք կարծում էին, որ մուսուլմանները չեն կարողանալու լեռները բարձրանալ, որովհետև Թաբֆուրը լեռների գագաթներին աշտարակներ էր կառուցել: Այս առիթով բանաստեղծը գրում է.

«Եթե նա պատեր է կառուցում իր շուրջը,

Դրանք կտպանվեն նա իր համար, ոչ բերդ»:

Չորքերը մազլեցեցին լեռների կատարները, և երբ մարտը մեկնարկեց, արքա պարոն Լևոնը դերի ընկավ, նրա եղբայրը սպանվեց, սպանվեց և հորեղբայրը: Գունդստաբլը՝ նրա մյուս հորեղբայրը, պարտված նահանջեց: Գերի ընկավ նաև նրա որդին³⁵, իսկ Համմուսի տերը փախուստի դիմեց: Նրանց տասներկու իշխանները (բնազրում՝ malik, իմա՝ «արխ») ցաքուցրիվ եղան³⁶, իսկ նրանց լավադուլն զորականները և զինվորները սպանվեցին³⁷: Չորքերն այդ օրն անցան Մաուրիի [կիրճը]³⁸ և օթևանեցին Սարվանդիքարի մերձակայքի Քարանջիլ (Karançıl) [բնակավայրում]³⁹: Հաջորդ օրը նրանք կանգ առան թիլ Համդունի մերձակայքում՝ սպանելով, գերելով և հրկիզելով: Նրանք կրակի տվեցին Համմուսը և հաջորդ օրը շարժվեցին դեպի Ջահան գետ, որը հայերը Եփրատ են կոչում, քանի որ այն մեծ գետ է: [Չորքերը] էմիրներ Սայֆ ալ-Դին Ուղանի և Սայֆ ալ-Դին Կալավուսն ալ-Ալֆիի հրամանատարությամբ անցան գետը: Եվ երբ զորքերը մոտեցան al-'Amūdāy-n-ին⁴⁰, որը տաճարական (sic) [ասպետներին պատկանող] ամուր երկնաբերձ (šāhiq fi al-hawā') բերդ էր, և օղակեցին այն, նրա կայազորը համաձայնեց հանձնել այն: Բերդում թաթար մարտիկներ կային, բացի նրանցից ևս 2200 հոգի: Տղամարդկանց սպանեցին, իսկ գերիներին բաշխեցին զինվորների մեջ: Այնտեղ մի խումբ տաճարականներ կային, որոնց սպանեցին, իսկ ամբողջ և նրա ամբարներն ու պահեստները հրո ճարակ դարձրին⁴¹:

وَجَمَعَ مِنْ مَعَهُ وَوَصَلَ النَّبَأَ فِي قَدَمِ الزَّمَانِ أَنْ الدُّوْمُكَ فِي جَمْعٍ
 فَمَلْنَا هُوَ وَأَصْحَابُهُ وَصَاحِبُ الْعَرَبِ اقْرَبُ النَّبَأِ تَكْم
 وَلَوْ اطَّعْنَا أَحَدًا كَانَ لِحَقِّ بَطَانَتِنَا وَلَيْسَ لِكُمْ إِلَّا التَّيْمُونُ
 بِجَمَالِ الدِّينِ الْمَذْكُورِ وَرَبِّ الدِّينِ سَرْدُ بْنُ عَزَّازٍ مِنَ السُّلْطَانِ
 وَقَالُوا لَهُمْ أَنْ كُمْ كَرَّمْتُمْ الْأَقَامَةَ فِي هَذِهِ الْأَرْضِ فَأَفْعَلُوا
 مَا شِئْتُمْ فَإِنَّ الْعَاكِرَ تَقْصِدُكُمْ إِلَى أَقْصَى الْعَرَبِ وَإِنْ أَرَادْتُمْ
 صَوْنَ أَمْوَالِكُمْ فَادُوا الزَّكَاةَ الَّتِي فَرَضَهَا اللَّهُ فَدَخَلَ الْمَذْكُورُونَ
 فِي الطَّاعَةِ وَاسْتَخْرَجَتْ مِنْهُمُ الزَّكَاةَ وَغَيْرَهَا مِنَ الْخَفَوِ وَذَلِكَ
 فِي جُمَادَى الْآخِرَةِ سَنَةِ أَرْبَعٍ وَسِتِّينَ وَسِتِّمِائَةٍ هـ
ذِكْرُ عَزَّةٍ وَسَيِّدِي وَأَبْنِ مَالِكِهَا
 وَقَتْلُ لُجَيْهِ وَعَمَّةٍ وَأَشْرُ وَلِدَعَمَةٍ قَدْ ذَكَرْنَا مَرَّةً وَأَوْعَاهُ
 النَّكْفُورُ صَاحِبُ سَيْسٍ وَإِنَّهُ مَا انْفَصَلَ حَدِيثُ مُحَمَّدٍ زَلَّ
 السُّلْطَانُ عَلَى الْجَسُورِ رَسَمَ أَنَّ الْعَاكِرَ لَا يَدْخُلُ دِمَشْقَ فَاتَّقُوا
 أَنْ تَمَّ تَسَلُّوْا وَاجِدًا وَاجِدًا وَدَخَلُوا دِمَشْقَ فَأَمَرَ السُّلْطَانُ بِهَضْمِ
 فَأَخْرَجُوا مَكْتَفِينَ بِجَمَالِ جَعْفَرِ السُّلْطَانِ الْمَلِكِ الْمَنْصُورِ وَمِنْ جَرْدِ
 فِي خِدْمَتِهِ مِنَ الْأَمْرَاءِ وَهُوَ الْأَمِيرُ عَزَّ الدِّينِ أَوْغَانُ وَالْأَمِيرُ

Al-Rawḍ al-zāhir-ի Սուլեյմանիյե գրադարանի MS Fatih 4366 ձևագրի այն էջը (89բ), որտեղ սկսվում է «Սաի առշավանի» մասին պատումը:

Ապա շարժվեցին⁴² դեպի Սիս⁴³ և ավերի ենթարկեցին այն տակ-
 նուվրա անելով: Զորքերը մի քանի օր մնացին [քաղաքում] [ան-
 վերջ] հրկիզելով, սպանելով և գերեզարհելով⁴⁴: Էմիր Իզզ ալ-Դին
 Ուղանն ուղղվեց դեպի Ռուս, իսկ էմիր Սալֆ ալ-Դին Կալավուն ալ-
 Ալֆին դեպի Մսիս, Ազանա, Այաս և Տարսոն՝ [շատերին] սպանելով և
 հրկիզելով [ամեն ինչ]⁴⁵: Քանզվեց նաև ալ-Սանիյյաթ (al-Tanīyyāt)⁴⁶
 անունով հայտնի տաճարական⁴⁷ բերդը, նրանց շատուշատ բնակա-
 վայրեր՝ բերդեր ու քաղաքներ, հրո ճարակ գարձան, ավերվեցին⁴⁸:

Այս ամբողջ ընթացքում Համայի տերը մնում էր Սուսում, և երբ
 զորքերը վերադարձան, հավաքվեցին և ստացան ավարի իրենց մասը:
 Արքա Լևոնը և նրա հորեղբորդին շղթայվեցին⁴⁹: Զինվորներն
 իրենց հետ անչափելի քանակությամբ ավար վերցրին, այնքան շատ,
 որ երբ երկու դիրհամով մի գլուխ կով էին վաճառում, գնորդ էջր
 գտնվում⁵⁰: Զորքի համար ամեն օր մեծածխիվ կովեր, գոմշացուլեր և
 այծեր էին մորթվում: Զորքը ստիպված էր [ավար վերցված անասուն-
 ների] մի մասը քչել⁵¹:

Երբ այս լուրերը սուլթանին հասան, նա որսով էր զբաղված Զա-
 րուզում: Նա հազար դինար տվեց ավետիսը բերողին: Ապա սուլթանը
 մտավ Դամասկոս, պատրաստություն տեսավ և կրկին դուրս եկավ՝
 ուղղվելով դեպի Համա՝ այնտեղ ստնը նշելու⁵²: Իսկ այնտեղից Աֆա-
 միյյա շարժվեց՝ իսկ այնտեղից Զու ալ-Հիջլա ամսի 13-ին (1266 թ.
 սեպտեմբերի 15) դուրս եկավ՝ զորքերին ղեկավարելու: Ավարից սուլ-
 թանին հասանելիք բաժինն առանձնացվել էր, սակայն երբ նա ղեկա-
 վորեց զորքերին, իր [բաժինն] էլ իր զինվորներին բաշխեց: Նա լավ
 վերարբմունք ցուցաբերեց Սաի տիրոջ և նրա հետ եղած մյուս գերի-
 ների նկատմամբ⁵³:

Սուլթանը Դամասկոս վերադարձավ Զու ալ-Հիջլա ամսի 24-ին
 (1266 թ. սեպտեմբերի 26) և զորակարգով [քաղաք] մտավ՝ իր հետ
 բերելով Սաի տիրոջը, նրա հորեղբորդուն և զինակիցներին: Նա
 պատվո հանդերձների արժանացրեց ասորիքյան էմիրներին և հրամա-
 նատարներին: Նա Համայի տիրոջը նժույզներ, գանձեր ուղարկեց,
 ինչպես նաև պատվո հանդերձներ նրա և նրա բոլոր ղինակիցների
 համար: Ապա հրաժեշտ տվեց նրան և գնաց իր թագավորությունը

(բնագրում mamlaaka է, նկատի է առնված Եգիպտոսը): Դամասկոսը լցվեց անչափելի քանակությամբ բարիքներով և ապրանքներով՝ թանկարժեք քարերով և գարգերով, ստրուկներով և մետաքսով: Սուլթանը գրանից և ոչ մի բան իրեն չվերցրեց:

էջ 272

Այս օրերին ժամանեց Սսի տիրոջ դեսպանը՝ արքա Լևոնի վերաբերյալ բանակցելու⁵⁴: [Հիջրայի 665 թ.] Ռաբի առաջին ամսի 22-ին (1266 թ. դեկտեմբերի 21)՝ ուրբաթ օրվա⁵⁵ գիշերը, արձակվեցին նրա կապանքները: Նրա համար նրա երկրի հետ հաշտության պայմանագիր (բնագրում՝ muwāda'a, այն է՝ «թշնամական գործողությունների դադարեցում»- Գ. Դ.) գրվեց մեկ տարի ժամկետով: Ապա սուլթանը ճանապարհ ընկավ դեպի Բիրքաթ ալ-Ջուբբ⁵⁶՝ պարսանետից կրակելու՝ իրեն ուղեկից վերցնելով Սսի տիրոջը, ում նա զվարճացնում էր և շատ լավ վերաբերվում⁵⁷:

էջ 281

Ժամանեցին Սսի դեսպանները՝ նվերներով⁵⁸: Նրանք տեսան Փրանկ դեսպաններին, ինչպես նաև կտրված գլուխներ նիզակների վրա: Բերեցին մի խումբ [Փրանկների], որ գերի էին ընկել այս արշավանքի ընթացում և սպանեցին Սաֆաղում: Սուլթանը կանչել տվեց Փրանկների դեսպաններին և ասաց. «Այս արշավանքն ալ-Շակիֆի վրա ձեռ հարձակման պատասխանն էր: Եվ քանի որ հաշտության հարցը չուծվեց, ֆրանկների դեսպանները վերադարձան առանց որևէ պատասխանի»:

էջ 282

Այս օրերին (1267 թ. մայիս-Գ. Դ.) ժամանեցին Սսի, ինչպես նաև Բեյրութի դեսպանները՝ մի խումբ մուսուլման գերիների բերելով և վերադարձնելով վաճառականների ունեցվածքը: Նրանց համար պատասխաններ գրվեցին, և նրանք [վերադարձի] ճամփա բռնեցին:

էջ 307

[Ջուբբերի] շարժը դեպի Անտիոխ և նրա առումը

Երբ սուլթանը թողեց Տրիպոլին, ոչ ոքի չասաց, թե որ ուղղությամբ է մտադիր շարժվել: Նա ուղղվեց դեպի Հոմս և կանգ առավ այնտեղ [Հիջրայի 666 թ.] Շաբան ամսի 27-ին (1268 թ. մայիսի 12): Նա կարգադրեց խուսափել գինի խմելուց և այլ անթույլատրելի զբաղմունքներից՝ հրամայելով մզկիթ կառուցել Հոմսում: Երբ Համա հասավ, զորքը երեք մասի բաժանեց. մեկը՝ էմիր Բադր ալ-Դին ալ-Խազինդարի⁵⁹, մյուսը՝ էմիր Իզզ ալ-Դին Իզանի (Ուղան)⁶⁰, երրորդը՝ իր գլխավորությամբ: Էմիր Բադր ալ-Դին ալ-Խազինդարն ուղղությամբ վերցրեց դեպի ալ-Սուվեյդիյա, էմիր Իզզ ալ-Դին Ուղանը՝ Դարպսակ՝ սպանելով և գերեվարելով: Հետո նրանք միասին շարժվեցին Անտիոքի վրա: Իսկ սուլթանը գնաց Աֆամիյա⁶¹, այնտեղից՝ ալ-Շուլլի և Բաքքասի⁶² տակ գտնվող կամուրջի ուղղությամբ:

էջ 313

Երբ սուլթանը գրավեց [Անտիոքի] միջնաբերդը⁶³, այն հանձնեց էմիր Բադր ալ-Դին Խազինդարի և էմիր Բադր ալ-Դին Բայսարի ալ-Շամսիի հսկողությանը: Ինչ վերաբերում է գույնգտաբլին⁶⁴, ապա սուլթանն ազատ արձակեց նրան և նրա մերձավորներին: Վերջինս որոշեց Սիս գնալ, և նրան այդ հարցում չմերժեցին:

էջ 318

Այդպես մնաց մինչև 366 թվականը (976 / 977 թ.), երբ Ջաֆար իբն Ֆալլահն⁶⁵ իր հնթականներից մեկին ուղարկեց Անտիոքը գրավելու⁶⁶: Նա 5 շաբաթ պաշարման մեջ պահեց այն, բայց գրավել չկարողացավ: Այդ տարում հզոր երկրաշարժ տեղի ունեցավ, որը քանդեց նրա պարսպի մի մասը: Հոռոմների արքան կառավարիչ նշանակեց այնտեղ և նրա հետ 12 հազար շինարարներ ուղարկեց՝ նրա կառույցները վերանորոգելու: [Քաղաքը] լավագույնս վերաշինվեց: Նրա միջնաբերդը կառուցել է Փոկասի որդի Լևոնը⁶⁷, ում ծառայության տակ

մի խումբ հայեր և այլոք կային, և ամրացրել այն: Նրա մահից հետո [միջնաբերդի] շինարարությունը լրման է հասցրել Բասիլ (Վասիլ) արքան⁶⁵: Այս Բասիլը հենց նա էր, ում մահից հետո վեց հազար ոսկյա qintār էին գտել նրա մոտ, մինչդեռ նրա զահակալության օրոք դանձարանի պաշարն ընդամենը 4 qintār էր և ոչ ավել: Նաև նա էր, որ Հայաստան երկրից [Հիջրայի] 415 թվականին (1024 / 1025 թ.) գրավել էր Արջիշը⁶⁶: Նա իր համար գերեզման և հսկայական դամբարան էր կառուցել՝ վրան մի վանք, ինչպես նաև մարմարյա շիրիմ: Երբ նա մահամերձ էր, ասել է. «Ամորայի կլիմի, որ ես արժայի հանդերձով հանդիպեմ Աստուծու, - և ավելացրել, - կթաղեմ ինձ օտարականների մեջ՝ աղխանների ցնցոտիներ հագցնելով»: Նա թագավորել էր 49 տարի և 11 շաբաթ և ավերել 68 տարի: [Անտիոքը] նրանց ձեռքում է մնացել մինչև ***** (բաց է թողնված - Գ. Դ.) [թվականը]:

էջ 320

Ֆրանկները [կրկին] այն (իմա՝ Անտիոքը) գրավել են⁷⁰ մի մարդու դավաճանական միջնորդությամբ, ում անունն Աբջարգ Հայ⁷¹ էր: Վերջինս և [քաղաքը] պաշարած արքաներից մեկը, որի անունը Մայմուն էր (Բոհեմունդ), համաձայնության էին եկել, որ հայը լինի այն կողմում, որտեղ որ հիշյալ Մայմունն էր: Նա մի գրություն գրեց և նետով նրան փոխանցեց: Նրանում ասվում էր. «Նս Բաղաբ Բեգ կհանձնեմ»: Նրանց միջև պայմանավորվածություն կայացավ: [Բանն այն է, որ քաղաքը պաշարած] արքաների մեջ ավագագույնը Քունդաֆի⁷² անունով մեկն էր: Երբ Մայմունը վստահացավ, որ հնարքը կաշխատի, նա դնաց այս արքայի մոտ և ասաց. «Ու՛մն է լինելու Բաղաբ, եթե այն նվաճվի»: Ի վերջո, վճռեցին, որ [քաղաքն] օղակած արքաներից յուրաքանչյուրը տասն օր պաշարի այն, և ում [հաջողվի] գրավել այն իր հերթում, նրանը կլինի: Մայմունի հնարքն անցավ, և երբ նրա հերթը հասավ, դործի զրկեցին աստիճանները: Ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ նա ստացավ [քաղաքն] ու տեղ դարձավ նրան: Միջնաբերդը շարունակեց պաշտպանվել, որտեղ գտնվում էր Ահմադ իբն Մրվանը⁷³: Ֆրանկները նրա հետ նամակագրություն

հաստատեցին և ապահովության երաշխիք տվեցին: Նա [քաղաքը] նրանց հանձնեց, իսկ վերջիններս էլ հատուցեցին նրան՝ [պաասություն շնորհելով] և ուղարկելով իսլամի երկրները:

էջ 325

Բաղրաս ամրոցի գրավումը Տաճարականների ձեռքից (1268 թ.)

Երբ Ալլահը սուլթանի համար գրավեց Անտիոքը, Դայր Քուշը, վերոհիշյալ մյուս [բերդերը], ինչպես նաև (ալ-Կուսայրի մի մասը), այդ կողմերում այլևս [ոչ մի չգրավված բերդ] չմնաց, բացի Բաղրասից: Բաղրասում եղած Տաճարականները վախի մեջ էին, հատկապես այն բանից հետո, երբ հաշտություն կայացավ Սուի տիրոջ հետ, ուստի նահանջել էին և լքել այն: [Սուլթանն] էմիր Շամս ալ-Դին Ակսուհ-կուրին⁷⁴ բանակի գերագույն ուսրագլարին, ուղարկեց [այնտեղ]: Վերջինս գրավեց այն [Հիջրայի 666 թ.] Ռամադան ամսի 13-ին՝ շաբաթ օրը (1268 թ. մայիսի 27)՝ այնտեղ ոչ ոքի չգտնելով՝ բացի մի զուռամյալ կնոջից: Այնուամենայնիվ, [բերդի] ամբարներն ու պահեստները լի էին այն ամեն ինչով, որ սովորաբար բերդերում լինում են: [Այդպես] այն իսլամի տիրապետության տակ անցավ առանց որևէ ջանքի:

«Թե երանկությունն իր աչևեով Բեգ կլիմի պաշտպան,
ննջի՛ր. կդառնան վախերը բոլոր [իսկույն] անխուով:
Նրանով ամուր բռնի՛ր փյունիկին որպես որոգայթ,
Պահի՛ր նրանով Երկվորյակներին՝ ինչպես պախուրցով»:

[Այս] վարքագրության հեղինակն ասում է (նկատի ունի ինքն իրեն - Գ. Դ.). «Սալահ ալ-Դինի որդի ալ-Մալիք ալ-Չահիրի որդի ալ-Համայի տեղ ալ-Մալիք ալ-Ազիզ իբն ալ-Մալիք ալ-Չահիր իբն Սալահ ալ-Դինի օրոք, Ալլահն օրհնի նրան, հալեպյան զորքը պաշարել է այն յոթ շաբաթ և չի կարողացել գրավել»: Ալ-Բալագուրին ասել է. «Բաղրասի տարածքը պատկանում էր Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքին⁷⁵, ով այն որպես waqf էր տվել բարեգործության նպատակով (fi sabīl al-barr): Երբ մուսուլմաններն արշավանքի էին ելել Ամուրիյայի դեմ՝ Մասլամա իբն Աբդ ալ-Մալիքի հետ, նրանք իրենց կանանց իրենց հետ էին վերցրել՝ մարտական զգոնությունն արթուն պահելու

Համար: Եվ երբ նրանք Բաղրասի կիրճն էին մտել մի նեղ կածանով, որ նայում էր հովտին, ուղաերից մեկը վայր է ընկնում՝ վրան նստած կնոջ հետ միասին: Մասլաման հրամայում է կանանց շարունակել քայլել: [Այդ օրվանից] կիրճը կոչվում է «Կանանց կիրճ»: Ալ-Մու-թասիմ [խալիֆան] ճանապարհի եզրով կարճ պատ էր կառուցել տվել: [Ալ-Բալազուրին] ասում է, որ այդ ճանապարհին առյուծներ կային, և ոչ ոք [չէր համարձակվում] քայլել այդ [ճանապարհով]: Այս մասին բողոքեցին ալ-Վալիդ [ի]բն Աբդ ալ-Մալիքին, ով չորս հազար կատաղի գոմշացու ուղարկեց [այնտեղ], և առյուծները վերացան⁷⁶:

Դրանից հետո նա կառուցեց այն (իմա՝ Բաղրասի բերդը - Գ. Դ.) և ամրացրեց: Ամրակայման աշխատանքները լրման հասցրեց ալ-Մալիք Քակիֆուրը (sic, այսպես սխալով է բնագրում, պետք է լինի՝ Նիկիֆուր, որ Նիկեֆորն է)՝ Ռումի արքան, ով [հիջրայի] 358 թ. վերջերին (969 թ.) դուրս էր եկել իսլամի երկրների դեմ: Սպանեց և գերեզմանեց, մինչև որ հասավ Ասորիք: Նա գրավեց Մասրբաթ Նասրինը (sic, պետք է լինի՝ Մասրին) և Մասրբաթ ալ-Նումանը, Համան և Հոմսը: Հոմսից նա վերջրեց սուրբ Մար Յուհաննա ալ-Անդուրմիսի գլուխը և սրով նվաճեց Արախան: Նա էր, որ գրավեց Անտարսուսը, Մարակիյան և Ջաբալան: Երբ նա կառուցեց այս բերդը՝ Բաղրասը, նրա կառավարիչ նշանակեց մեկին՝ ալ-Բուրջի անուհուով՝ նրա մոտ թողնելով հազար մարտիկներին: Նա Բաղրասն այնպես ամրացրեց, որ այն գրեթե անմատչելի դարձավ:

Հետագայում նրան տիրեցին ֆրանկները՝ ժամանակի ընթացքում անընդհատ ամրացնելով այն և ամրակառուցելով: Բայց հետո Ալլահը թուլացրեց նրանց և իսկ նրանցից առանց որևէ հնարքի և կամ ջանքի: [Իրավ], փառք Ամենակարողին: [Բանն այն է, որ] նահատակ սուլթան Սալահ ալ-Դինը, Ալլահն օրհնի նրան, պաշարեց այն և գրավեց ապահովության եռաշխիբով [հիջրայի] 584 թվականի Շաբան ամսի 2-ին (1188 թ. սեպտեմբերի 26) և Դարպասիկի հետ միասին հանձնեց Ալամ ալ-Դին Սանջար իբն Ջանդարին:

Սսի տեր Թաֆթուր Հեթումի հետ հաշտության, նրա որդու ազատության և Էմիր Շամս ալ-Դին Սուեկուր ալ-Աշկարի վերադարձի մասին

[Արդեն] հիշատակել ենք, թե ինչպես էին [մուսուլմանական] զորքերը Սիս արշավել, նրա (նկատի ունի Հեթումին) որդի Լեոնի գերեզման մասին, և թե ինչպես էին նրա հոր դեսպանները պարբերաբար գալիս և գնում՝ սուլթանին առաջարկելով, ինչ կարող էր՝ զրամ և բերդեր: Բարեպաշտությունը նրանից պահանջել էր, որ [փոխարենը] պահանջի էմիր Շամս ալ-Դին Սուեկուր ալ-Աշկարին, ում թաթարները գերի էին վերցրել Հալեպից, երբ գրավել էին այն ալ-Մալիք ալ-Նասիրից⁷⁷: Նրան տեղափոխել էին երկրի խորքերը և դրել թաթարների հրամանատարներից Սուլթան Ջուկի ծառայության տակ: Սուլթանն առաջարկեց Սսի տիրոջն իր որդու փոխարեն հետ բերել նրան և վերադարձնել այն [բոլոր] բերդերը, որ իսկ էր Հալեպի շրջանից: [Հեթումը] մեկ տարի ժամանակ խնդրեց՝ [մոնղոլական] արքունիք (al-Urdū) գնալու և նրա հարցով հետաքրքրվելու համար⁷⁸: Նա [նամակ] ուղարկեց՝ հաղորդելու, որ ինքն ընդունել է նրան ազատ արձակելու սուլթանի առաջարկը: [Այդժամ] սուլթանը հավաքեց էմիրներին և ասաց. «Օ՛, էմիրներ: Եթե ես գերի ընկնեմ, դու՞ ինչպե՞ս կվարվե: Ասացին. «Մե՞նք մեռ փողեր կաանք և հոգիները սուլթանին ատելությունից պաշտպանելու համար»: Ձեզանից մեկը [վաղուց] գերի է ընկել, և նրա խոշորաշներն (hušdāštyya) արդեն մոռացել են նրան: Բայց ես չեմ մոռացել. նա Շամս ալ-Դին Սուեկուրն ալ-Աշկարն է: Սսի տերն ինձ փողեր և բերդեր է առաջարկել իր որդու դիմաց, բայց ես նրանից ոչինչ չեմ ուզել՝ բացի նրանից: [Արդեն] Սսի տիրոջ նամակն է եկել առ այն, որ գտել է նրան»⁷⁹: էմիրներն օրհնեցին նրան, և իրավիճակն այդպես լուծվեց:

Սուլթանը Սսի տիրոջն ի պատասխան գրեց, որ հաստատում է, որ ուզում է վերադարձնել նրան: Հետո եկան Սսի դեսպանները՝ բերելով Սուեկուր ալ-Աշկարի նամակը՝ վերջինիս գաղտնագրերով և «նույնականացման նշաններով» (բնագրում՝ alā'im wa-amā'ir): Նրանք [փորձեցին] փոխել հանձնվելիք բերդերից մի քանիսի վերաբերյալ պայմա-

նավորվածությունը: Սուլթանը նրանց պատասխանեց. «Եթե դու այս կերպ դաժան ես վարվում եմ որդու և գահինդ ժառանգորդի նկատմամբ, ես նույնքան դաժան կարող եմ գտնվել ընկերոջ նկատմամբ, որի հետ ոչ մի ազգակցական կապ էլ չունեմ: Ուստի դու ես եմ աված խոսքից հետ կանգնել, ոչ ես: Մինչդեռ մեկն հավատարիմ եմ մնացել մեր գրածին: Այնպես որ, վարվի՛ր Սունկուր ալ-Աշկարի հետ, ինչպես ուզում ես»⁸⁰: Երբ նրա ղեկավարներն այս նամակը տարան, սուլթանն արգեն Անտիոքում էր, ուստի նա (Հեթումը) վախեցավ և Համաձայնեց սուլթանի բոլոր պահանջներին⁸¹: Հաշտություն կայացավ Բեհեսնա, Դարպասկ, Մարզուբան, Ռաբան, ալ-Ջարբ և Շիհ ալ-Հագիդ բերդերի հանձնման գիմաց, որոնք պետք է վերադարձվեին իրենց ամբարներով, ինչպես որ [մի ժամանակ] վերցվել էին: Համաձայնեցվեց, որ ազատ արձակվի Սունկուր ալ-Աշկարը, իսկ սուլթանն ազատ արձակի նրա որդուն, եղբոր-որդուն և [մյուս] ենթականերին: Նախքան բերդերի հանձնումը, պատանդ պիտի մնային Վասակը՝ արքայի եղբայրը, ինչպես նաև Ռայմունը (Ռայմոնդը)՝ Լեոնի կնոջ եղբայրը, իսկ գերիներից Վասիլը՝ Գունգասաբլի որդին, նույնպես պիտի նրանց հետ պատանդ մնար⁸²: Հաշտության պայմանագիրը ստորագրվեց Ռամադան ամսին Անտիոքում: Սուլթանն էմիր Սայֆ ալ-Դին Բալաբան ալ-Ռուսթի ալ-Դավադարին, ալ-Սադր Ֆաթհ ալ-Դին իրն ալ-Կայսարանիին՝ արքունական գրագրին, Հրամայեց գնալ և ներկա գտնվել արքայի երզմնակալությանը, և հենց այդ օրվա առավոտյան էլ նրանք ճանապարհ ընկան: Իսկ էմիր Բադր ալ-Դին Բաջբա ալ-Ռուսթիին Ռամադան ամսի 13-ին՝ կիրակի օրը, ուղարկվեց Եգիպտոսից արքա Լեոնին փոստածիերով բերելու: Լեոնն էմիր Բադր ալ-Դին Բաջբա ալ-Ռուսթի ուղեկցությունը Դամասկոս հասավ Ռամադան ամսի 26-ին (1268 թ. Հունիսի 9)՝ երկուշաբթի օրվա⁸³ գիշերը, և լույսը բացվելուն պես, դուրս եկավ սուլթանին հանդիպելու: Բադր ալ-Դին Բաջբային՝ Անտիոքից ճանապարհ ընկնելու և Դամասկոս հասնելու համար 13 օր պահանջվեց: Թաքֆուրը՝ Սաի տերը, [պայմանագրի վրա] երդվեց Ռամադան ամսի 17-ին (1268 թ. մայիսի 31), և հաշտությունը կայացավ:

Սաի ժողովուրդը, էմիր Սայֆ ալ-Դին ալ-Դավադարին տեսնելով, կարծեց, թե նա [մուսուլմանական] գորքի առաջապահ գնդերի հրա-

նատարն է, և նրանցից մի խումբ փախչելիս խեղդվեց զետում: Երբ սուլթանը Դամասկոս եկավ, նա լավ վերաբերվեց Սաի տիրոջ որդուն և նրան ամեն ինչով ապահովեց: Շավվալ ամսի 3-ին (Հունիսի 16) վերջինս՝ Հոտնկայս և զլխաբաց, երդվեց պայմանագրի այն օրինակի վրա, որի վրա նաև իր հայրն էր երդվել⁸⁴: Շավվալ ամսի 11-ին (Հունիսի 24) նա՝ Բադր ալ-Դին Բաջբայի ուղեկցությամբ փոստածիերով ճամփա ընկավ և իր հոր թագավորությունը մտավ: Այնուհետև, էմիր Սայֆ ալ-Դին ալ-Դավադարն ուղղվեց Սիս՝ իրեն տրված Հրամանները կատարելու: Երբ հասան Հիշյալ պատանդները, նրանց համար պատրաստություն տեսան և պատվիլի վերաբերմունքի արժանացրին: Այնուհետև, սուլթանի կառավարիչներն ընդունեցին բերդերը, և պատանդները վերադարձան՝ գոհ սուլթանի բարեհուգությունից:

Էմիր Շամս ալ-Դին Սունկուր ալ-Աշկարի վերադարձի մասին

Երբ Սաի տիրոջ որդին ճանապարհ ընկավ⁸⁵ նրա մոտ, ազատ արձակվեց նաև Շամս ալ-Դին Սունկուր ալ-Աշկարը: Սուլթանն այդ ժամանակ որսով էր դբաղված Ջարուգում մերձ Հոմսին: Երբ սուլթանը տեղեկացավ, որ նա մոտենում է, ծպտված ձի հեծնեց և գիմավորեց նրան, ապա նրա հետ արքունական վրան (al-dihliz) մտավ և գիշերը նրա մոտ անցկացրեց: Երբ լույսը բացվեց, ենթակա մամլուքները հավաքվեցին, և սուլթանը դուրս եկավ իր հետ բերելով Շամս ալ-Դին Սունկուր ալ-Աշկարին: Նրան տեսնելով՝ մամլուքներն ապշեցին: Սուլթանը նրա համար փող, պատվո հանդերձներ, գոտիներ, նժույգներ, եղներ, ուղտեր և մամլուքներ նվիրաբերեց և ամեն ինչ, ինչի կարիքն ուներ: Էմիրները նույնպես ընծաներ մատուցեցին: Սուլթանը շատ բարեհոգի էր նրա նկատմամբ, առավել քան որևէ մեկն իր զավակի հանդեպ: Նա շարունակեց ծառայել նրան: Նրա համար [նույնիսկ] տուն կառուցվեց Կահիրեի միջնաբերդում: Երբ Եգիպտոս հասավ, նա նրան էմիրության աստիճան շնորհեց, և նա շարունակեց մնալ նրա մերձավորագույն [մամլուքներից] մեկը⁸⁶:

Երբ գրավվեց ալ-Շակիֆը⁸⁷, Աքրայի ժողովուրդը կամեցավ, որ իրեն մի արքա իշխի, որը կբարեկամեր իր զրուծյունը: [Այդ ժամանակ] Կիպրոսում մանկահասակ թագավոր էր⁸⁸, ով խնամակալ ուներ և զորքերի հրամանատար՝ Աուք իբն Հինրի (Հենրիի որդի Հյու)⁸⁹ անունով, ով դեռ 30 տարեկան էլ չկար: Նա Տրիպոլիի տիրոջ հորեղբորորդին էր, ով իր հերթին քեռորդին էր Կիպրոսի տիրոջ՝ [այսինքն] մեր հիշած պատանու հոր: Այնպես պատահեց, որ պատանի [արքան] մահացավ: Այս պայլը խնամիական կապեր ուներ Արսուֆի տերերի հետ: Թագավորությունը ժառանգելու իրավունքն այս երիտասարդին էր պատկանում, ինչպես նաև նրա մորեղբորորդուն: Ընդ որում մորեղբորորդին գահաժառանգության ավելի մեծ իրավունք ուներ, քանի որ նրա մայրն ավագն էր: Ֆրանկների օրենքով գահը տրվում էր ավագույն դստեր որդուն: Բայց քանի որ նա բացակա էր և գտնվում էր Սսի երկրում, Աքրայի Կիպրոսի գահին նստեց այս երիտասարդը, և ֆրանկները նրան հրավիրեցին նաև Աքրա: Աքրայի թագավորությունը կցվեց Կիպրոսյան թագավորությանը: Նա ժամանեց այնտեղ, և Աքրայի ժողովուրդն իր հավատարմությունը հայտնեց նրան⁹⁰:

Սուպանի մեկնումն Անախիֆց

Երբ [սուլթանն] ավարտին հասցրեց զրավումը և բաշխեց ավարը, նա մեկնեց Անտիոքից դեպի Շայգար⁹¹, որտեղից էլ անսպասով առանց Համայի տիրոջը տեղեկացնելու դեպի Հոմս՝ [այնտեղ] որսով զբաղվելու: Իսկ զորքերը հանգրվան առան Համայում, իսկ սուլթանը՝ [ընդամենը] երեք հոգու՝ էմիրներ Բադր ալ-Դին Բայասբիի, Բադր ալ-Դին ալ-Խադինգարի և Հուսամ ալ-Դին ալ-Դավադարի ուղեկցությամբ, զնաց Հոմսի փոխարքայի տուն: Նա Դամասկոս մտավ [հիջրայի 666 թ.] Ռամադան ամսի 26-ին (1268 թ. հունիսի 9)՝ իր հետ տանելով գերիներին և իր ծառայության տակ ունենալով նաև Սսի տիրոջը: Նա Դամասկոսից դուրս եկավ սուլթանի տարվա Զու ալ-Կադա ամսի 18-ին (1268 թ. հուլիսի 30), նշեց Դձ-ն Ումմ ալ-Բարիդայում,

որտեղ ալ-Մալիք ալ-Սաիդն էր նրան ընդառաջ դուրս եկել՝ դիմավորելու: Նրանք տոնը միասին նշեցին, որից հետո նա [Կահիրեի] միջնաբերդ մտավ Զու ալ-Հիջլա ամսի 11-ին (1268 թ. օգոստոսի 22) և փոխհասուցեց [իր գալստյան առթիվ] բերդի զարդարման համար [կատարված] ծախսերի արժեքը:

Աքրայի որդի Հուպադուի դեսպանի ժամանման մասին

Սսի տերը գրել էր սուլթանին՝ միջնորդ հանդես գալու սուլթանի և Հուպադույան տան միջև հաշտության կայացման գործում⁹²: Նա նկատի ուներ Սուլեյուր ալ-Աշկարի երեխաների [վերադարձի] հարցը, և սուլթանին համոզում էր անձամբ նամակ գրել նրան (Աքրային)՝ նրանց [վերադարձի] հարցով նրա հետ բանակցելու համար: Սուլթանն այս առնչությամբ էր գրել Թաքֆուրին, և ոչ թե այլ հարցով: [Այդ ժամ] Աքադան իր կողմից դեսպան ուղարկեց, նրա հետ՝ յաուխս և ոսկի փայլա: Դեսպանը Թաքֆուրի հետ Սիս եկավ, և Թաքֆուրը [սուլթանից] խնդրեց մեկին, ով կդիմավորեր դեսպանին: [Այդ նպատակով] ուղարկվեց էմիր Նասիր ալ-Դին իբն Սայրամը՝ Հալեպի վերատեսուչը (mušidd Halab), ով դիմավորեց նրան և հսկեց, որ նա [ճանապարհին] ոչ մեկի հետ չխոսի: Երբ սուլթանն իմացավ դեսպանի գալստյան մասին, ձի հեծնեց և էմիրների ուղեկցությամբ շարժվեց դեպի Դամասկոս՝ բռններն Արսուֆում թողնելով: Դեսպանն արդեն ժամանել էր, բայց նրա համար [հանդիսավոր] ընդունելություն չկազմակերպվեց: Երբ դեսպանը սուլթանին հանդիպեց, ներողություն խնդրեց, որ [արդեն] իջել է ձիուց, հետո առանց կնիքի մի նամակ տվեց, որի բովանդակությունն այս էր. «Բարձրյալ Աստուղ զորությունամբ, Խանի նախախնամությամբ՝ Աքրայի ֆերմանը: Քանի որ Թաքֆուրի միջոցով ուղարկված նամակները մեզ են ներկայացվել, սուլթան Ռուքն ալ-Դինը թող զիտենա, որ միայն Կուտուզն է, որ սպանել է իլխանի կողմից ուղարկված դեսպաններին, ինչպես նաև այն, որ արքաներ (իլխաններ) կան, որ միջնորդություն են խնդրում [Թաքֆուրից] մեր ենթակայության տակ անցնելու համար⁹³, և այժմ,

եթե իլխանն ինձ պատիվ շնորհի, ես նրա ստորական կլինեմ: Լսել ենք [նաև], որ խնդրել ես մեզ մոտ գտնվող զփշաղեներին: Նրանք են Սայֆ ալ-Դին Բալաբանը, Բաղը ալ-Դին Բաքմաչը և Սայֆ ալ-Դին Սաքիզի որդիները: Կասկած չկա, թե ինչեր են եղել մեր միջև տարիներ շարունակ: Ճշմարիտ է, որ մեր մեծ և փոքր եղբայրների միջև գտնություն է եղել: Բայց դրա պատճառով, մենք չենք կարող ձիավարել քո դեմ: Այժմ մենք մեր բոլոր եղբայրներով ավազ և կրտսեր, կուրուտայ ենք դումարել, և Համաձայնություն եկել, որ չենք փոխի խանի ֆիրմանն ու յասան: Դուք նույնպես ներկայացել եք և առաջարկել՝ կհպատակվենք ձեզ և կտանք մեր ուժը: Մեզ Համար Հաճելի է Ձեր այդ [արարքը]: Ամբողջ աշխարհում՝ Արևելքից մինչև Արևմուտք, ով ընդունեց, Հպատակվեց և մեր ծառայության տակ մտավ, այդուհետ Չինդիզ խանի ֆիրմանի և յասայի ենթակայություն տակ է լինում: Նա այժմ նույնպես խանի ֆիրմանի և յասայի ենթակայության տակ է: Եթե Հայրը մեզ է գործում, դրա Համար մեղավոր չէ որդին, իսկ եթե մեղանշում է եղբայրը, ապա նրան նրա կրտսեր եղբոր գործած մեղքի Համար չեն բռնում: Եվ եթե մեղքը գործել է սուլթան Կուտուզը, ապա Հենց ինքն է իր մեղքի պատասխանատուն: Դու պարտականություն ես վերցրել քեզ վրա, և եթե Հավատարիմ ես մնացել քո տված խոսքին, այստեղ՝ մեզ մոտ, ուղարկի՛ր քո եղբայրներից կամ որդիներից կամ քո ամենաընտիր էմիրներից, որ լսել տանք նրանց և Հասկացնենք խանի յադիղն ու յասան: Նրանք քեզ մոտ կվերադառնան, և եթե Համաձայնության գանք, մենք թույլ կտանք այն մարդկանց, որոնց դու մեզանից խնդրել ես, գալ: Բայց եթե չհետևես քո [տված] խոսքին, անհնազանդ լինես և սխալ մտածես, մենք էլ չգիտենք՝ ինչ կլինի: Միայն Ալլահը գիտի և խանի նախախնամությունը:

Արդ, այսպես ենք Հրամայել և ձեզ մոտ փոստաձիերով ուղարկել այս երկու դեսպաններին՝ Բեք-Տութին և Աբու ալ-Ղարիբին»:

Նամակը գրված էր 667 թվականի Ռարի երկրորդ ամսի քսանին (27 դեկտեմբերի 1268 թ.)՝ Բաղզազում, և այն չորս կարմիր կնիք ունի թերթակարերին:

Սրան պատասխան գրվեց սուլթանից, որի բովանդակությունն այս էր.

«Հանուն ողորմած և բարեգութ Աստծո,

Բարձրյալ Աստծո օգնությունով և զորությունով, մեծագույն սուլթան Բայբարս ալ-Սալիհի նախախնամությամբ: Թող արքա Աբաղան Հասկանա, որ մենք Թաքֆուրին սոսկ կարգադրել ենք արքայի պատասխանն իմանալ Շամս ալ-Դին Սունկուր ալ-Աշկարի Հարցի առնչությամբ: Ինչ վերաբերում է ալ-Մալիք ալ-Մուգաֆֆարի (Ալլահը ողորմի նրան) կողմից դեսպանի սպանությունը, ապա քո դեսպաններին քեզ ենք վերադարձնում այնպես ողջ-առողջ, ինչպես որ եկել են: Այն բանի Հիման վրա, ինչը որ էմիր Շամս ալ-Դին Սունկուր ալ-Աշկարը Հասկացրել է մեզ, մենք կարգադրել ենք Թաքֆուրին, որ միջնորդ Հանդես գա մեր և նրանց միջև, ում Համար, որ մենք խնդրում ենք: Բայց մենք [այդ մասին] ոչինչ չտեսանք: Իսկ ինչպե՞ս Համաձայնություն լինի, եթե այն յասան, որ մենք այսօր ունենք, ավելի զորավոր է Չինդիս խանի յասայից: Ալլահը մեզ իշխանություն է տվել 40 արքաների վրա: Իսկ ինչ վերաբերում է նրա (իմա՝ Աբաղայի) այն պնդմանը, թե Արևելքից մինչև Արևմուտք Հնազանդվում են նրան, ապա ի՞նչ պատահեց Քիթրուզա նոյինին, և ինչպես ոչնչացվեց նա: Իսկ դու, եթե Հաստատ լինես քո խոսքում, որ տվել ես Սունկուր ալ-Աշկարին, և եթե քո եղբայրներից կամ որդիներից կամ քո ավազագույն էմիրներից մեկին մեզ մոտ ուղարկես, մենք էլ նույնը կանենք, ինչպես որ ասել ես»: Նամակի վրա կնիքներ արվեցին՝ սուլթանի ինքնագրով, և դեսպաններին Հետ ուղարկեցին:

էջ 350

Սաի երկրում տեղի ունեցած երկրաշարժի մասին

[Հիջրայի] 667 թ. Շաաբան ամսի 21-ին (1269 թ. ապրիլի 25) լուրեր Հասան Սաի երկրում տեղի ունեցած երկրաշարժի և նրա բերդերի ավերման մասին, ինչպես օրինակ՝ Սարվանդեքարի և Հաջար Շաալանի: Այնքան շատ մարդ էր զոհվել, որ գետն արյունով էր Հոսում, և քարուքանդ էին եղել մի շարք շրջաններ: [Այնուհետև] եկան Սաի դեսպանները և նույն կերպով Հաղորդեցին [եղածի մասին]⁹⁴:

Արաբի վրա արշավանքի մասին

Այս տարում (Հիջրայի 668 թ.) արեմուտքի ֆրանկների մի խումբ Աբրա եկավ, որից ֆրանկները հրճվեցին: [Ապա] նավեր ժամանեցին՝ հայանելով, որ Ռադարբունն է (իմա՝ Արադոնի արքան, Roi d'Aragon, - Գ. Դ.)՝ Արեմուտքի արքաներից մեկն է գալիս իրենց մոտ իր գործարարով: Այդ նավերով ժամանել էին նրա ուղեկիցներն ու մերձավորները: Նրա ղեկավարները ճանապարհվեցին Հուլավուի որդի Աբադայի մոտ՝ [հայանելու], որ գալիս է նրա հետ դաշինք կնքելու: Նրանց ճանապարհներն անցնում էին Սսի [երկրի] կողմով: Սակայն Ալլահը փոթորկոտ քամիներ ուղարկեց և կործանեց նրա նավերի մի մասը, որից հետո նրա մասին այլևս նորություն չլսվեց⁹⁵:

էջ 374

Սսի տիրոջ մահվան մասին

Նրա անունը al-Malik al-muǧīr.⁹⁸ Հայթում իբն Կոստանդին էր: Նրա մահը⁹⁷ [Հիջրայի 669 թ.] Ռարի առաջին ամսի 21-ին էր (1270 թ. նոյեմբերի 7)⁹⁸:

էջ 395

[Հիջրայի 670 թ. Ռարի երկրորդ ամսին] (1271 թ. նոյեմբեր) սուլթանն իր զորքերով Հալեպ ուղղվեց: Նա Շամս ալ-Դին Ռաթագ-Դարին⁹⁹ և մի խումբ բեզվիներին ուղարկեց Մարաշի դեմ, իսկ ալ-Հաջջ Տայբարս ալ-Վազիրին¹⁰⁰ և Իսա իբն Մուհաննային¹⁰¹՝ Հարրան (Խառան) և ալ-Ռուհա (իմա՝ Ռուհա, Եդեսիա): Նա ողջ գեղերը ձիով վրա մնաց՝ մինչև որ պատրաստեց նրանց՝ Հրահանգելով կրակակիրներին¹⁰² և հետախույզներին: Ալ-Հաջջ Տայբարսը Հարրան հասավ և սպանեց այնտեղ եղած թաթարներին¹⁰³:

Քայնուֆի¹⁰⁴ գրավման մասին

Շատացել էին Քայնուք բերդի բնակչության չարագործություններն ու թշնամանքը վաճառականների և հետախույզների նկատմամբ: Այդ մասին գրեցին Սսի տիրոջը, բայց նամակագրությունն օգուտ չբերեց: Հայերը սարակույնեւ էին հաղնում և քարավաններ կտրում: [Սուլթանն] էմիր Հուսամ ալ-Դին ալ-Այնթաբին՝ Հալեպի զորապետին, ուղարկեց Քայնուքի վրա: Վերջինս [այնտեղ] հասավ [Հիջրայի 672 թ.] Մուհարրամ ամսի 3-ին (1273 թ. հուլիսի 20) և գրավեց բերդի մերձակայքը: Հայերը մտան միջնաբերդը, և մուսուլմանները նրանց դեմ կռիվ ավեցին: Նրանք գրավեցին միջնաբերդը, սպանեցին տղամարդկանց, կանանց գերի վերցրեցին: Զորքը հարձակումներ գործեց Տարսուսի (sic)¹⁰⁵ կողմերի վրա՝ կողոպտելով և գերեվարելով¹⁰⁶:

Վարքագրության հեղինակն ասում է (Իբն Աբդ ալ-Չահիրը նկատի ունի ինքն իրեն). «Այս Քայնուքը նույն al-Hadaṭ al-hamrā'-ն է, որ կառուցել է Սայֆ ալ-Դաուլա իբն Համդանը¹⁰⁷: Նրա Քայնուք անվանումը «հրկիզված» է նշանակում: Ստում իշխող պայլը՝ Կոստանդին¹⁰⁸ անունով, ով Սսի այժման տիրոջ պապն էր, գրավել էր այն սելջուկյան Ռումից և կրակի տվել: Հենց նրա կառուցման մասին է, որ ալ-Մութանարբին ասել է իր մի կասիդայում՝ գովերգելով Սայֆ ալ-Դաուլա իբն Համդանին: Այն [այսպես] է սկսվում.

«Լուրջ վեճուները կարևոր մարդկանց ունակությունն են:

Արդյո՞ք al-Hadaṭ al-hamrā'-ն գիտի, թե ինչ գույն ունի,

Կամ միթե՞՞ գիտի, թե ինչ [հեղուկ] են ցողում ամպերը.

Մինչ նրա գալը ճեփ ամպերն էին [անձրև] տեղացել,

Իսկ երբ մոտ եկավ, ծածկվեց [անթիվ] զանգերի [արյամբ]:

Նա շինեց այն վեճ, այնինչ նիզակն էր նիզակի բախվում,

Իսկ շուրջը մահվան կոհակներն էին զարնվում իրար:

Այնտեղ առկա էր մի ինչ-որ [զգացում] խելագարության,

Շուրջը հմայիլներ՝ [անհարկու] սպանողից ընկած դիերից:

Քշված էր այն ինչպես վտարանդին դարի, բայց քն նիզակով

Հետ բերեցիր այն հանուն կրոնի՝ հակառակ դարի»¹⁰⁹:

Նրա մասին հայտնի է, որ Սայֆ ալ-Դաուլա իբն Համդանն է սկսել կառուցել այն: [Հիջրայի] 337 թվականին (948 / 949 թ.) բերդի բնակիչներն անվտանգության երաշխիքով այն հանձնել էին ալ-Դոմեստիկին՝ հոռոմ քրիստոնյաների արքային: Սակայն [Հիջրայի] 343 թվականի Ջուժաղա ալ-ախիրա [ամսի] 12-ին՝ չորեքշաբթի օրը (954 թ. հոկտեմբերի 3), Սայֆ ալ-Դաուլան պաշարել է այն և նրա հիմքը դրել մեկ օրվա ընթացքում՝ առաջինը հենց իր ձեռքով փորելով հիմքը: Նա այնտեղ մնաց այնքան ժամանակ, մինչև նրա շինարարությունն ավարտին չհասցրեց՝ Ռաջար ամսի 13-ին՝ երեքշաբթի օրը (954 թ. նոյեմբերի 12)¹¹⁰:

էջ 418

Քե ինչ գործերով զբաղվեց սուլթանն այս ընթացքում

Իրանցից էր Ջալալ ալ-Դին իտրեզմաշահի¹¹¹ amīr-tast (բառացի՝ «սափոր բանող») ալ-Մալիք ալ-Ֆարրիհի որդի ալ-Մալիք Շամս ալ-Դին Բահադուրի հարցը:

Հիշյալ Շամս ալ-Դին Բահադուրը Շուժայաստի (իմա՝ Սամոսատ) արքան էր: Նրա հայրը Ջալալ ալ-Դին իտրեզմաշահի amīr-tast ալ-Մալիք ալ-Ֆարրիհն էր, ով Ջալալ ալ-Դինից հետո տիրում էր Քիրանին և ևս վեց բերդերի՝ Նակշավանի (Նախճավանի) կողմերում: Նրա հայրը Ռում էր եկել և որպես ռազմավատ (iqṭāʿ) ստացել Ակսարան: [Մի օր] այնպես պատահեց, որ այս Շամս ալ-Դին Բահադուրը, երբ Շուժայաստում էր, գրեց սուլթանին և նամակազրույթյուն հաստատեց նրա հետ: Նա մտերմացավ նրա հետ՝ ասելի թշնամու¹¹² մասին ստույգ հաղորդումներ տալով: Սա տեղի ունեցավ [Հիջրայի] 671 թ. (1272/1273 թ.): Նա իր կողմից սուլթանի մոտ մի մամուլի ուղարկեց՝ նրանից հավաստիացումներ ստանալու համար: Սուլթանը համաձայնեց նրա հետ մի յուրահատուկ հնարք բանեցնել Բիստոնյա կաթողիկոսի նկատմամբ, ով նեղացրել էր Բաղդադի մուսուլմաններին, բնակություն հաստատել խալիֆաների կացարաններում (իմա՝ դղյակներում), փչացրել մուսուլմանների գործերը: Նրա վատահամբավ արարքներն այնքան շատ են հիշատակելու համար:

Ուստի սուլթանն այս կաթողիկոսին մի նամակ գրեց, որի բովանդակությունը սա էր. «Մենք ընդունում ենք քո հոգածությունն ու առաքարկություններն այն Բիստոնյաների վերաբերյալ, որ մեր երկրում են: Եվ հանուն քեզ է, որ հարգանքով ենք վերաբերվում նրանց: Մենք ընդունում ենք [նաև] մոնղոլների վերաբերյալ այն գաղտնի տեղեկությունները, որ տրամադրել ես մեզ»: Նամակում հիշվում էին որոշ հորինածին և իրականություն հետ կապ չունեցող պարագաներ, ինչպես օրինակ. «Մենք համաձայն ենք այն մեկի [թեկնածուությանը], ում համար դու միջնորդել էիր՝ [նրա անունը] մատնանշելով, երգվում ենք հանձնել քո նշած վայրերի շինություններն այն մեկին, ում ինքդ ես առաջարկել: [Ստացել ենք նաև] այն գեղամիջոցը, որի օգտագործման նպատակի շուրջ և թե ում համար այն պետք է ջանանք օգտագործել, [արդեն] պայմանավորվել ենք: Թող Ալլահը հնարավոր դարձնի այդ: Ուղարկում ենք նաև քո խնդրած բալասանի յուղը և [ջուր] քրիստոնեական ջրհորներից, ինչպես նաև մի կտոր խաչելություն խաչից: Այս ամբողջը մենք ուղարկել ենք ալ-Ռահբա և այնտեղի կառավարչին տվել նաև այն զաղտնաբառը, որը սրտել ենք: Ուստի քեզ համար վստահելի մեկին ուղարկիր գաղտնաբառով այն ստանալու»: [Այնուհետև] սուլթանն այս «գաղտնի նամակը» (mulatṭaf) ուղարկեց ալ-Բիրայի կառավարչին՝ ասելով. «Մի հայի ուղարկիր՝ սա կաթողիկոսին հասցնելու: Հենց որ ուղարկես, այդ մասին տեղեկացրու Բահադուր արֆային»: Երբ գործը զուլխ եկավ, Բահադուրն ուղարկեց մեկին, որ կանգնի [հայ] բանագնացի (բնագրում qāsid է, իմա՝ հետախույզ)¹¹³ ճանապարհին: Նա բռնեց նրան և գաղտնի նամակի հետ տարավ Հուլաղուի որդի Աբադայի մոտ՝ ասելով. «Այս կաթողիկոսը, ում [այդքան] վստահում կի, այս կերպ է պատասխանում քո վստահությանը»: Երբ դաղտնի նամակը [Աբադային] հասավ, այն պատճառ դարձավ կաթողիկոսի մահվան¹¹⁴:

Շուժայաստի տերը մտերմացավ սուլթանի հետ՝ բազմաթիվ այսպիսի գործեր կատարելով: Սակայն թշնամին հասկացավ, բայց միայն այն բանից հետո, երբ արդեն իրականացրել էր իր անելիքը և իր նպատակին հասցրել: Նրան բռնեցին և Ուրդու տարան: Նա ենթակաների և մամուլների հետ փախուստի դիմեց և ապաստան գտավ սուլթանի մոտ: Նրա մամուլների և ռազմիկների թիվն անցնում էր

երկու Հազարից, որոնց սուլթանը Հարդանքի արժանացրեց և կոչու-
նքը շնորհեց: Ինչ վերաբերում է Շամս ալ-Դին Բահադուրին, ապա
վերջինս նույնպես [Հաջողացրեց] ճողոպրել թշնամուց և փրկվել: Նա
ալ-Բիրա Հասափ, որի կայազորը դիմափորեց նրան և ուղարկեց սուլ-
թանի մոտ: Ասում էին, որ նա յոթ օր առանց մի բան ուտելու էր
մնացել: Երբ ժամանեց, սուլթանը դիմափորեց նրան և Եգիպտոսում
ազգամավատներ շնորհեց՝ լավ վերաբերմունքի արժանացնելով¹¹⁵:

էջ 431

[Մուսուլմանական զորքերի] հարձակումը Մարաշի վրա

Այս տարում Հալեպի զորքը՝ էմիր Հուսամ ալ-Դին ալ-Այնթարիի
գլխավորությամբ, շարժվեց Մարաշի կողմը և Հարձակվեց Սսի երկրի
վրա: Նրանք մեծ քանակությամբ ավար վերցրին, քանդելով հանեցին
Մարաշի արվարձանի դարպասները: Ռարբա իբն ալ-ՏաՀիր իբն Ղան-
նամը խեղդվեց այնտեղ գետանցման ժամանակ¹¹⁶:

էջ 432

Սսի արշավանքը (1275 թ.)¹¹⁷

Սսի տերը դադարել էր ուղարկել իր վրա դրված նվերները, ինչ-
պես նաև խախտել էր զինադադարի այն պահանջը, ըստ որի նա չէր
կարող վերակառուցել ոչ մի շինություն և ոչ էլ բերդ ամրացնել¹¹⁸:
Նա դադարել էր նաև հաժաոտի տեղեկություններ հաղորդել, որի
պարտավորությունը ստանձնել էր համաձայն իր երզման: Բանն այն
է, որ Հայերը ստրակուզ էին հագնում և զրանցով վախեցնում քարա-
վաններին՝ Հայտարարելով, թե իրենք [մոռոտ] խանի զորքերն են:
Վաճառականները հատկապես մեծ շարժարանքներ էին կրել Քայնու-
քի կողմից, ուստի սուլթանն ուղարկել էր Քայնուքն ավերելու, ինչ-
պես որ արգեն հիշատակել ենք: Սրանից Սսի տերը [չատ] նեղարտեց,
ուստի նրան ասվեց. «Դա քո ձեռքի գործի հետևանքն էր, ակն ընդ
ական (բնագրում՝ wāhida bi-wāhidat ġaza', իմա՝ «մեկը մեկի է բաժան-
վում»)»: Սուլթանը [զեսպան] ուղարկեց՝ Հայտնելու նրան, որ շարժ-

վում է Սսի դեմ: Սսի տերը [նաև] մտերմացնում էր Ֆրանկներին թա-
թարների հետ¹¹⁹ և նվաստացնում մուսուլմաններին նրանց աչքերում:
[Օրինակ, մի օր] այնպես պատահեց, որ Ռուժից թուրքմեն առևտրա-
կաններ էին գալիս՝ ձիերով և դոմեշներով, և Քայնուքի բնակիչները
նրանց վրա Հարձակվեցին: [Թուրքմեններն] ասել էին, որ այդ ձիերը
սուլթանի համար են տանում, բայց [Հայերը] նրանց սպանել էին¹²⁰:

Երբ շատացան երկրին և նրա Հպատակներին [Սսի տիրոջ] Հակա-
դորձունեությունը դեպքերն ու Հասցրած վնասները, սովորական դար-
ձան [սուլթանության] տարածքներում նրա արատավոր արարքները,
⊙ իսկ Ալլահը չի սիրում արատավորությունը¹²¹ ⊙, սուլթանին տիրեց իր
ժողովորդին պաշտպանելու արժանապատվության [զգացումը], նրա
նկատմամբ սուլթանի սրտում եղած խղճահարությունը վրեժխնդու-
թյան վերածվեց, հաշտությունը պայքար դարձավ, խաղաղությունը՝
հակամարտություն, զինադադարը՝ պատերազմ¹²²: Սսիայն նա ծածուկ
պահեց իր նպատակը և ոչ ոքի չհայտնեց¹²³: Միայն ցույց տվեց, թե
չարժը գեպի Ասորիք էր ուղղված: Նա որոշեց ստուգատեսի ենթարկել
իր ամբողջ այրուձին իր միջնաբերդի մատուցներում մեկ օրվա ըն-
թացքում: Սուլթանը, ինչպես և նրա մամուլները հազան [իրենց աս-
պագները]՝ զրահներն ու ոսկյա սաղավարտները, և սուլթանն անճա-
նաչելի դարձավ նրանց շարքերում: Նա սկսեց դուռնդ առ դուռնդ անց-
նել նրանց միջով և ստուգել: Նրանք ճամփա բռնեցին և ճամբար
խփեցին Bāb al-naṣr-ի¹²⁴ մոտ: Սուլթանը պահանջեց [պարգել], թե
արդյոք նրանց թվում կան [ազգամեկներ], որոնց սպառազինությունը
թերի էր, այն է՝ օղազրահները չունեին կոնքակալներ և բազկակալ-
ներ, և տվեց նրանց այն ամենն, ինչ անհրաժեշտ էր զրահն ամբող-
ջացնելու համար:

Նա դուրս եկավ սուլթան տարվա (իմա՝ Հիջրայի 673 թ.) Շաբանի
ամսի 3-ին (1275 թ. փետրվարի 1) և Դամասկոս հասավ Շաբանի
վերջերին (փետրվարի վերջեր)՝ մի օր, երբ գետինը ձյան զգեստ էր
հագել¹²⁵: «Բացվեց երկինքը և դարպասներ դարձավ», և Ասորիքի
զորքը [նույնպես] դուրս եկավ՝ [իր գեներալզրահը] հագած-կապած:
Սուլթանն [այնտեղից] դուրս եկավ Ռամադանի 7-ին (մարտի 6), և
երբ Համա հասավ, դուրս եկավ ալ-Մալիք ալ-Մանսուրը՝ Համայի տերը,

իր դորքերով նրան միանալու¹²⁶: Սուլթանը ծպտված էր, և Համայի տերը չնկատեց, որ նա ձիավարում էր իրեն ենթակա շքազնդում, որպես իր տարածքում նրա կողմից ցուցաբերված հարգանքի նշան: [Ալա] սուլթանն առաջ ընթացավ իր տրամադրության տակ ունենալով ամբողջ գործը և բոլոր բեդվիներին: Նա [կրկին] ստուգեց նրան, և նրանցից Իբն Իսային (իմա՝ Իսա Իբն Մուհամմադին) և Հուսամ ալ-Դին ալ-Այնթաբիին ուղարկեց ալ-Իբրայի կողմը՝ որպես հաղթական զորքի առաջապահ գնդեր: Նրանք այնտեղ հասան: Իսկ սուլթանը, երբ Նայրաբ Սարմին հասավ, բեռներն ու գորքի մի մասն այնտեղ թողեց՝ էմիր Շամս ալ-Դին Սուլեյուր-Ջահ ալ-Ջահիրի¹²⁷ ուղեկցությամբ, իսկ ինքը շրջվեց Դարպսակի կողմը: Էմիր Իզդ ալ-Դին ալ-Աֆրամ ամիրջանդարին¹²⁸ և Մուբարիզ ալ-Դին ալ-Տուրիին ուղարկեց al-Nahr al-aswad-ի («Սև գետ», այժմ՝ Կարա-սու) ափերը հարթեցնելու: Ջորբը մեծ դժվարությամբ կտրեց-անցավ այն: Սուլթանն այնքան ժամանակ կանգնած մնաց, մինչև գորքի մեծամասնությունն անցավ գետը: Նա ճամբար խփեց Դարպսակի և Բադրասի միջև՝ հրամայելով մի խումբ հազարապետ [էմիրներին], որ յուրաքանչյուրը մի ուղղությամբ առաջ ընթանա: Նրանք մաղչեցին լեռները: Սուլթանը հրամայեց ժոմեր վառել, և մարդիկ մղվեցին դեպի լեռները: Ոչ ոք անգամ ճանապարհը չհարցրեց՝ ուշադրություն չդարձնելով նրա նեղությունը: Այլ առաջ ընթացան՝ իրենց վրա տանելով երկաթյա պսպղուն ապառաժներ, լեռների վրա նժույգների սմբակների օձազալար [հետագծով]:

☉ Եր կգա ժամն Իրադարձության,
 Նրա գալուստը հերձող չի լինի,
 Կիչեցնի [ոմանց], վեր կհանի [այոց]:
 Եվ կսասանվի հողը ցնցումով,
 Ու կտապալվեն ապառաժները
 Փլատակների, փոշի կղառնան¹²⁹: ☉

Իսկ հաղթական զորագնդերը նման էին ալ-Բուհրուրիի նկարագրածին (բնագրում՝ «Ինչպես ալ-Բուհրուրին է ասել»).

«Մեք [ունեին], որ բոլոր օտխների կյանքի վախճանն են,
 Եվ ձիեր, որոնք կողոպտան էին տների նրանց:
 Երբ մագլցեցին Բադրասի վրա, լցվեցին նրանց

Մտերը թափուն [մի զգացումով], եր կիրեր մտան.

Իսկ ժողովուրդը, որ լուցանել էր կրակն ընդլվման, չէր էլ կասկածում,
 Որ դու կզնաս և կհանգցնես կրակն իր [վառած]»¹³⁰:

Սուլթանն իր հետ 30 նավակ էր վերցրել գետանցման նպատակով: Սուլթանը ճամբար խփեց Իսֆանդարունի կապանում՝ այն պարսպի տակ, որ պայլ Հեթումը՝ Սաի տեր Լեոնի հայրն էր կառուցել: Այնուհետև հեռացավ դեպի ալ-Մուսակկար, և գորքը դրավեց Մսիսի կամուրջը¹³¹ և հենց Մսիսը՝ տիրանալով ամեն ինչին, ինչ գտավ, և սպանելով բոլոր նրանց, ում գտավ այնտեղ: Մամուլներն անչափելի քանակության դռնացուներ, կովեր ու ոչխարներ ավար վերցրին: Նրան իրենց հնազանդությունը հայտնելու եկան մեծ թվով թուրքմեններ, բեդվիներ՝ իրենց անասունների հոտերով և ձիերով, որոնք բոլորը պատրաստել տվեց, որ երկիր (իմա՝ Սուլթանություն) ուղարկվեն¹³²:

Նա գորակարգով առաջ ընթացավ Թամադանի 29-ին (մարտի 28) և Սիս հասավ¹³³, բայց շրջանցեց այն, թուլացրեց [նժույգների] սանձերը՝ հետազոտելու, թե բարձրադիր վայրերում, ովքեր կան [թաքնված]: Նա հասավ մինչև Darband Rūm (իմա՝ «Իրանի Կիլիկիա»), որտեղ գտան և գերեվարեցին թաթարների երեխաների և նրանց կանանց մի մասին: Սուլթանը վերադարձավ և դիշերեց այդ բարձր լեռներում՝ ձայն տալով նրանց իր ձիերի սմբակներով, որ լսում էին՝ չնայած խուլ լինելուն: Նա Իմ-ն անցկացրեց Սիս քաղաքում, որ Հայոց թագավորության աթոռն էր՝ անախորժ գործերի ակունքը: Այնտեղ էին գտնվում նրա իշխողի այգեստանն ու [ապարանքների] դիտանոցները, որ ապրեցնում էին նայողին և [մուսուլման] հավատացյալին վստահեցնում, թե անհավատի եղեմն են: Սուլթանն իջևանեց նրա կացարանում, որն առավոտյան խաթարվեց, որտեղ որ այգի էր, ամայի հող դարձավ, իսկ թռչունները, որ [սովոր էին] ճովողել այնտեղ, սկսեցին սգալ, նրա առվակները (բառացի՝ «հոսող ջրեր») ասես նրա թափած արցունքը դարձան, եկեղեցիները սրբվեցին [պետի երեսից], տեսարժան շինությունները շրջվեցին: Սիս քաղաքը կողոպտվեց, ավերվեց և հրկիզվեց: Նրա բնակչությունն ամբացավ միջնաբերդում¹³⁴: Այս ամբողջ ընթացքում անընդհատ փոստային նամակներ էին գալիս [հայտնելու], թե ինչ վայրերում է եղել սուլթանը:

Երբ սուլթանն ազատվեց Սիս քաղաքի հրկիզումից, Թաքֆուրի դղյակները քանդելուց, նրա դիտանոցների համայնապատկերը խաթարելուց և նրան հեղինակազրկելուց (բառացի՝ «ներս վարագույրները պատռելուց»), վերադարձան առաջապահ գնդերն իրենց վերցրած ավարով՝ մոնղոլ կանանց և երեխաների հետ մեկտեղ՝ մթին դիշերվա քողով պարտակված (բառացի՝ «ինչպես մթին գիշերվա մասնիկներ»)։

Երբ գինվորներն սկսեցին արածեցնել [իրենց ձիերին] հանդերուձ, Տարսոն (ընագրում՝ սխալմամբ Տարտուս է) հասան էմիրներ Զամալ ալ-Դին ալ-Մուհամմադին և Իզդ ալ-Դին ալ-Դամյատին և այնտեղ մոտ 300 գլուխ ձիեր և գոմեշներ դտան և իրենց հետ քշելով տարան¹³⁵։ Իսկ Մուբարիզ ալ-Դին ալ-Տուրին և Իզդ ալ-Դին Քուրջին ուղղվեցին դեպի ծովափնյա շրջանները՝ ճանապարհին սպանելով մի խումբ թշնամիների։ Նրանք նավեր գտան ծովում, տախտակամած ելան և գրավեցին՝ սրախողխող անելով նրանցում եղած մարդկանց։ Իսկ էմիր Սայֆ ալ-Դին ալ-Զինին հասավ մինչև ալ-Քարզին բերդ (Քարձարե՛րդ), էմիր Բադր ալ-Դին ալ-Այդամուրին՝ Ադանա՝ գերեզմարելով կանանց և մանուկներին։ Զորքերն ասպատակ սփռեցին նաև այդ լեռներում՝ բազմաթիվ հետևակայինների սրի քաշելով¹³⁶։ Ասորիքյան զորքերը մի խումբ ֆրանկների և հայերի գտան և մեռցրին բոլորին։ Էմիրներ Բադր ալ-Դին Բայսարին և Սայֆ ալ-Դին Այթամուշ ալ-Սաադին հասան Այաս, բայց նրանք ֆրանկների միջոցով արդեն ստացել էին [մուսուլմանական] զորքերի դալստյան լուրը և իրենց հարստութունները նավերի վրա էին տեղափոխել։ Զորքերը հրդեհեցին և սրածեցին շատերին ինչպես ցամաքում, այնպես էլ ծովում։ Այս բանից հետո ստացվեց Իսքանդարունայի կառավարչի նամակն այն բովանդակությամբ, որ [մուսուլմանական] զորքերի՝ Այասի վրա արշավելուց հետո մի խումբ ֆրանկներ և հայեր՝ թվով մոտ 2000 հոգի, նավ են նստել՝ փախուստի դիմելու նպատակով, բայց բուլոն էլ խեղդվել են [ծովում]¹³⁷։ Ուստի նայի՛ր այս սուլթանի երջանկությանը, թե ինչպես [նույնիսկ] ծովերը չեն փրկում նրա թշնամուն, և ոչ էլ անապատներն են սքողում նրանց երթևեկը։

«Նա, ով չի ընկել սրի [նարվածից], կմեռնի այլ կերպ»։

Էմիր Բադր ալ-Դին ամիր-սիլահը բռնագրավեց անիծյալների արածոզ ձիերը։ Սա է, ինչ վերաբերում է Ասի արշավանքին։ Ինչ վերաբերում էր ալ-Բիրա ուղևորված զորքերին և բեդվիններին, ապա նրան Ռաս ալ-Այն հասան և հարուստ ավար վերցրին։ Սարսափը թաթարների մեջ մտավ, ովքեր պարտված նահանջեցին։ Սուլթանը սրանով նպատակ ունի [տպավորութուն] ստեղծել, թե այդ ուղղությամբ է պատրաստվում գործել։ Զորքը վերադարձավ ողջ-առողջ և հաղթանակած։

Սուլթանը Մսիս հասավ և այն երկու կողմից կրակի տվեց։ Եվ երբ դարձան էմիրները [իրենց վերցրած] ավարով և [սուլթանին] իրենց հավատարմութունը հայտնած թուրքմեններն ու բեդվինները դուրս եկան կապաններից, սուլթանը ճանապարհ ընկավ։ Նա անցավ մի լճի կողքով, որում աճող ծառեր կային՝ այն անտառի նմանեցնելով։ Այն կղզյակներ ունի, որոնց վրա ամրացել էին մի խումբ տեղացիներ՝ իրենց հետ վերցնելով իրենց կանանց և կարողութունը։ Զինվորներն իրենց նետեցին [լիճը]՝ լողալով ձիերի վրա և նրանցից շատերին սպանեցին և գերեզմարեցին։ Այնուհետև անցան Թել Համդուն և ալ-Նուկեյրա (իմա՝ Նդիր) բերդ, որտեղ զորքերը համատարած ավեր սփռեցին։ [Ապա] դուրս եկավ կապաններից և տեսավ, որ մարգագետինները ծայրերից լցվել են ավարով։ Նա անձամբ կանգ առավ՝ ավարը բաշխելու, որ հազարներով չէիր հաշվի։ Զմոռացավ նրանցից և ոչ մեկին [անգամ] ոչ մի դրոշակակրի և ոչ մի զրազրի, իսկ իր համար այդ [ամբողջ] ավարից ոչ մի բան չվերցրեց։ Բաշխելուց հետո օթեան առավ Հարիմի մոտ խալված [սուլթանական] վրանում (բնագրում՝ dihliz)։ Վարքագրության հեղինակն այդ մասին [այս սողերն] է հյուսել։

«Օ՛, տեր [այս] երկրի, եռ որոշումը պատճառը դարձավ

Անհավատների քանի՞ շինության ավերածության.

Գլխավայր շրջեց Սիսը, տակնուվրա եղավ,

Թեկուզև մարդիկ ասում էին՝ անշրջելի է»։

Ասել է նաև.

«Ի՛նչ օր էր, որ մեզ նվիրեց իր հաղթանակը,

Այլան այդ [պարգևով] մեր աչքը գոնացրեց։

Այն օրը, երբ անցանք Սսի երկիր, ասացինք՝

Ինչ հաղթանակ է մեզ Տերը շնորհել:

Հայտնվեց սուլթանն ասադարույի մեջ

Քյուրբերի գարմի, որ մահն են սիրում:

Ջիավարում են հաղթության վարձով

Ազնվատոհմիկ այդ վագորդներին¹³⁸,

Որն աշխետ՝ նման պատվական գինու,

Որը դեղնագույն՝ ոսկու պես [իրեն] նայողին թովող:

Երիվարներ՝ սև և [կամ] մոխրագույն՝

Հանց գիշեր [մթառ] կամ պարզ վաղորդայն:

Աշխետներ, որոնց վագֆից [սրբնթաց]

Մեռած են թվում ձիավորները:

Իրենց [քամբերին] տանում են ուզմի որդիներին [ֆաջ],

Որ գոհունակ են եղել մշտապես իրենց Տիրոջը:

Քանի՛ հերոսի ստորացրին նրանք ալան-թալանով, գերեվարությանը

Եվ հաղթանակով, նրանց հավասար ֆանի՛-ֆանիսի՛ն հզորացրին:

Առան ֆաղաֆներն ու բերդամրոցները, վանեցին տեղի

Անհավատներին՝ հանձնելով [դրամ] մուսուլմաններին՝

Ուժով վեհապետներից վսեմագույնի, ով բերդ է

Դարձել մուսուլմանների համար ամրակուռ:

Բայրաւը՝ Աստծո կրոնի պունը, ալ-Ջանիբը, որ

Լավագույն է աշխարհի և [թե] կրոնի արժաների մեջ:

Իրական առյուծն Ալլահի, ում պարգևել է

Այն զորությունը, որից անպաշտպան են բռնապետները:

Առնը հոգնած փախավ նրանից՝

Վնատ, ահաբեկ, անիծված, նվաստ:

Նույնպես և թաքարները վախից-սարսափից

Նրա զորության փախուստ տվեցին:

Ա՛խ, թե մնային և հարցնեին,

Թե այդ որ օրվա [դժխետ] չարիքին մենք արժանացանք:

Ջորերի մասին զգուշացրեցին Աբադային, ով

Փախուստ տվեց՝ լրաբերների լուրը շատուգած:

Երկրներն իրար վրա նետվեցին՝ ասելով.

Եթե լինեինք մենք Սսի նման, կասպատակվեինք,

Թե մեզ [էլ] հասներ զորքը սուլթանի,

Ես էլ ոտնատակ պիտի լինեի ձիերից նրա:

Թե ես լինեի նրա իշխանության տակ և փրկագինը

Ողջ կարողությունն [իմ] ժողովրդի մեզ հետ կկորեր:

Եթե սուլթանը գար մեզ մոտ՝ տեսնելու,

Թե հնազանդ ենք մենք եղել նրան:

Երենկ թե [հենց] մենք կարողանայինք գնալ նրա մոտ,

Սակայն մենք մեկն ենք ժամանողներից:

Թող որ Ալլահը երկարացնի նրա կյանքը

Եվ բոլոր արարածներին փրկագին դարձնի»:

Ասել է նաև.

«Օ՛ր, դժբախտություն Սսի, որ կողոպտվեցիր,

Այդ ֆանի՛ անգամ խաթարվեց հոսքը [ֆո] առվակների,

Այնքան նեղացան նամապարհներդ, որ խանգարում է

Անասնահոտին [նույնիսկ] հետիոտները»:

Իսկ նախկինում՝ Թաքֆուրի Հես դինադադար կնքելիս, սա էր Հորինել.

«Մեր սուլթանը սոսկ զինադադար է ավել հայերին՝

Նվաստացնելու նկատառումով.

Մինչև շատանա հարստությունը նրանց իր համար,

Մրաշեղբերի համար բազմանան գավակները նրանց»¹³⁹:

Թե ինչ է հայանի պատմությունից Սսի երկրի մասին Ալ-Մախսա (Մախս).

Ըստ Իբն Ասաքիրի իր «Մեծ պատմության» մեջ եղած վկայությունների՝ կառուցել է Արդ ալ-Մալիք իբն Մրվանն իր Հոր կառավարման օրոք՝ մարզարեական Հիջրայի 84 թվականին (703 / 704 թ.): Նա Հոստաների երկիր է արշավել 83 և 84 թվականներին, իսկ կառուցմանը ձեռնամուխ է եղել [8]4 թվականին:

Ինչ վերաբերում է Տարսուսին (Տարսունին).

Հնագույն քաղաքներից մեկն է, որի դարպասին, ինչպես ինձ են սասել, այժմ [գեո] գրված է այն կառուցողի անունը: Այդ մասին ալ-Տարարին է հիշատակել: Այնտեղ է գտնվում ալ-Մամուն Աբդալլահ իբն Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի գերեզմանը, որովհետև նա բազմիցս՝ մեկը մյուսի հետևից արչավանքներ է ձեռնարկել նրա վրա և մահացել Տարսոսին մերձ մի վայրում ալ-Քադանդուն (Պոտանդոն) անունով, [Հիջրայի] 218 թվականին (833/834 թ.): Նա թաղվել է Տարսոսում Խաքան Ապասափորի տանը: Նրա գերեզմանն այժմ Հայտնի է այնտեղ: Մսիսը Հայտնի է նաև Այն Ջարբա անունով (sic), Տարսոսն ու Ազանան՝ իրենց հարակից շրջաններով, Կիլիկիա են անվանվում: Մսիսը [Ա]բկարատ (իմա՝ Հիպոկրատ) [անունով] բժշկի ծննդավայրն էր (ակնհայտ սխալ է-Գ.Դ.), իսկ ոմանք ասում են, թե Հոմսն էր:

Ինչ վերաբերում է Ջահան գետին, որը նույնն է, թե Ջայհանը, քանի որ Հայերը ինչ հնչյունը ինչ են արտասանում: Սա մեկն է երեք խոշոր գետերից, որոնք են Սայհանը (Մարոս), Ջայհանն (Պիրամոս) ու Բարդանը (Կյուղնոս), որոնք [Համապատասխանաբար] գետեր են Տարսուսի, Մսիսի և Ազանայի մոտ: Այն սկիզբ է առնում Թուրի երկրից և թափվում ազի ծովը: Ինչ վերաբերում է Ջայհունին (իմա՝ Ամուր Դարյա), ապա այն գետ է, որ իջնում է՝ խորանայով դեպի Խորեզմ: Ջայհան գետը, որի ակունքը 60 ցւ՝ հեռավորության վրա էր, իջնում է դեպի Հարավ, մինչև որ անցնում է Թուրի երկրի Սիամա քաղաքի մոտով, ապա երկրաբերձ լեռների միջով դալարվում դեպի արևմուտք, մինչև որ Հասնում է երկու քաղաքի, որ [մի ժամանակ] Հոռոմներին էին պատկանում Բարսա (Թարսա) և Ջարատրա (իմա՝ Ջապետրա կամ Սոգոպետրա), և Հոսում նրանց մեջտեղով: Հետո [կրկին] լեռների միջով է անցնում և վերադառնում իր նախկին ուղղութիւնը՝ դեպի Հարավ, մինչև Հասնում է Մսիսի սահմանային ամրութիւնը և Հոսում նրա և Լուքբամի լեռների (իմա՝ Սև լեռներ) միջով և թափվում Ասորիքյան (իմա՝ Միջերկրական) ծովը: Այս գետի երկարութիւնն իր սկզբնակունքից մինչև գետաբերան յոթ Հարյուր երեսուն և ավելի մղոն էր: Սիսն ու [Սսի] երկիրը շրջապատող լեռնաշղթան ալ-Լուֆֆամի լեռներ են անվանվում: Նրանց երկարութիւնը 100 մղոն է: [Ընդ որում] մղոնն աչքով տեսանելի հեռավորութիւն չափն է, իսկ [մեկ] փարսախը Հավասար է երեք մղոնի:

Առնի տան կողմից Սսի երկրի նվաճման մասին¹⁴⁰

Այս տունը Լեոնի (իմա՝ դինաստիան, Հարստութիւնը) տունն է այս թաքֆուրի: Այս երկիրը [մի ժամանակ] գտնվում էր Հոռոմների իշխողի պահպանութիւն տակ, ով իր բանակով պաշտպանում էր այն: [Սակայն հետո] այն դրավեց Մալիկ իբն Լափունի (Լեոնի որդի Մլիհի) կողմից: Այդպես [պատահեց], որովհետև նահատակ սուլթան Նուր ալ-Դին Մահմուդ իբն Ջանգին, Ալլահն օրհնի նրան, հենվում էր նրա վրա և [ինքն էլ իր հերթին] աջակցում նրան: Նա դրանով նկատառում ուներ՝ անհավատների իշխանութիւն տալով [պայքարել այլ] անօրինաց դեմ: Մալիկը Հոռոսցի երկրում, ինչը զայրացրեց Հոռոմների իշխողին, ով Հոռոմների դորքով [նրա դեմ] ուղարկեց իր ազգական Անդրոնիկոսին¹⁴¹: Մալիկը ջարդեց նրան և դերի վերցրեց նրա զորապետերից 30 հոգու: Այս բախումը տեղի է ունեցել [Հիջրայի] 568 թվականի Ռարի ալ-սխար ամսի վերջին՝ կիրակի օրը (1172 թ. դեկտեմբերի 17): Երբ այս նորութիւնը նահատակ Նուր ալ-Դինին հասավ, նա լավ վերաբերմունքի արժանացրեց նրան և պատվո հանդերձներ ընծայեց: Ապա նամակ գրեց Բաղդադ՝ նրան [խալիֆայի մոտ] դովասանքի արժանացնելով և շնչտելով, որ այդ Մլիհ Հայր, որ իր վասալներից (քնադրում՝ min ġumlat ġilmānīhi) է, ջարդել է Հոռոմներին՝ այդ կերպ ցանկանալով Հաճոյանալ Բաղդադի ժողովրդին¹⁴²: Այդ ժամանակ[ներ]ից ի վեր Թաֆուրի տան ոտքն ամրապնդվեց այս երկրում՝ միայն թե որպես [Նուր ալ-Դին] ալ-Շահիդի կառավարիչներ, բայց [հետագայում էլ] շարունակեցին [իշխել]:

Վարքազութիւն հեղինակն ասաց.

«Այս Սսի երկիրը [վաղուց ի վեր] Դուրուբ («Կապաններ») և ալ-Ավասիմ («Սահմանային քերականներ») են կոչում: Այստեղով են անցել արշավանքները, այնտեղ՝ սահմանային գոտում է, որ արյունալի մարտեր և պատերազմներ են եղել: Տեղի բնակիչները սահմանակալներ, արշավանքի, սրբազան կռիվի մարտիկներ ու սահմանապահներ էին: [Մի ժամանակ] այն պատկանում էր եգիպտական թագավորութիւնը: Ահմադ իբն Տուլունը՝ եգիպտոսի էմիրը¹⁴³, [Հիջրայի] 265 թվականի Մուհարրամ ամսում (878 թ. սեպտեմբերի 3 - հոկտեմբերի 2) եկել ու գրավել էր Անտիոքը Սիմա ալ-Տափլից: Ահմադը Տարսոս էր

անցել և այնտեղ մտել Հիշյալ տարվա Ռաբի առաջին ամսում (878 թ. նոյեմբերի 1-30): Վերջինս այդ ժամանակ իսլամի երկրների մաս էր կազմում: Նա օթեկան առավ այնտեղ և [քաղաքն] այնքան լցվեց նրա զորքերով, որ դները բարձրացան և բարդութուններ ստեղծեցին բնակչության համար: [Նրանք] ասացին. «Մենք սահմանային գոտում ենք, իսկ դու մեզ տանջեցիր և օգտվեցիր մեզ մոտ եղած պարենի [պաշարից]: Եթե ոսոխը մեզ շրջափակման մեջ առնած լինեք, մեզ ավելի շատ նեղություն չէր տա, ինչքան որ դու պատճառեցիր մեռ աներին ու պարենին»: Ժողովուրդը զենք բարձրացրեց և կռվեց [նրա դեմ]: Նա իր գինակիցներին հրամայեց հանձնվել նրանց, և հանձնվեցին: Սահմանային բնակչությունը խլեց նրանց փողերն ու մետաքսը: Ահմադ իբն Տուլունի նպատակն էր թշնամուն հասկացնել Տարսուսի ժողովրդի գորությունը, թե [ի՛նչ] ամբողջուն և ուժ ունեն. եթե էմիր Ահմադ Իբն Տուլունի պես մեկն է տեղի տվել նրանց առաջ, ուժ զորքերը երկիր են լցնում, թշնամին կհրաժարվի նրա նկատմամբ ունեցած իր նկրտումներից: Ապա [Ահմադը] մարդ ուղարկեց նրա ժողովրդի մոտ՝ նրանց բացատրելու իրավիճակը: Նա իր կողմից կառավարիչ նշանակեց [այնտեղ] Տաբշի իբն Բալիթը (°) անունով:

[Իբն Տուլունը] մտադիր էր մնալ սահմանային դոտում, բայց նա լուր ստացավ, որ իր որդին Եգիպտոսում դուրս է եկել իր հնազանդությունից: Նա [հարկադրված էր] վերադառնալ Եգիպտոս: Բայց հետո Ահմադը [կրկին] վերադարձավ Տարսոս: Երբ Մսիս հասավ, Բազման (sic, պետք է լինի Յազման-Գ.Դ.) ալ-Խադիմը (բառացի՝ «ներքին»)՝¹⁴⁴ ապստամբեց նրա դեմ: Ահմադն իր հզորագույն գինակիցներին զորքով ուղարկեց՝ նրան հպատակության կոչելու՝ խոստանալով ապահովել նրա անվտանգությունը և չպատժել գործած արարքի համար: [Սակայն վերջինս] չհամաձայնեց և պարզվեց, որ ամբացել է իր բերդում և նրա պարիսպների վրա քարանետ մեքենաներ տեղադրել: Ահմադը եկավ իր զորքով և պաշարեց այն: Սառնամանիք էր, և անդադար անձրևում էր, առատ ձյուն տեղում: Բազման ալ-Խադիմը հնարամտություն քաննեցրեց և սկսեց ջուր լցնել [բերդի պատերի տակ] բանակած զորքի վրա: Կարծեցին, թե անձրև է գալիս և չհասկանալով այդ՝ խեղդվեցին, և նրանց պատկանող ամեն ինչ կորավ:

Ահմադը պարտված Աղանա վերադարձավ, [առժամանակ] այնտեղ մնաց, հետո մեկնեց Մսիս, որտեղ Հիվանդացավ և հետ դարձավ Եգիպտոս ու [այնտեղ] մահացավ:

Իսկ Քաֆուր ալ-Իսխիդի¹⁴⁵ օրոք, ով Եգիպտոսի սուլթանն էր, անուշադրություն ցուցաբերվեց սահմանային ամբողջությունների հարցում, և Հոռոմների արքա ալ-Նիկիֆուրը հարձակվեց զրանց վրա: Պաշտպանություն կազմակերպեցին, ուստի նա կրակի տվեց մերձակա գյուղերը, կտրեց ծառերը և ավերի ենթարկեց շրջակա բնակավայրերը: Քաֆուրն իմացավ այդ մասին, բայց [անուշադրության] տվեց: Նա մի օր երազում տեսավ, թե իբր երկինք է բարձրացել՝ ձեռքին մուրճ, որով փորձում էր քանդել երկինքը: Երբ լուսացավ, երազամեկնիչ կանչեց և պատմեց նրան երազում տեսածը: [Վերջինս] ասաց. «Դու մարդ ես, որ կրոնն է փանդում և ոչինչ չի անում [հանուն] սրբազան պատերազմի»: Սրանից Քաֆուրը սթափվեց և իբն Ջաաֆարանի անունով մի հրամանատարի ղլխավորությամբ զորք պատրաստեց՝ ասելով. «Յո՛ւյց տվե՛ք մի մեծ բնակավայր, որ այն եկամուտն ունի, ինչ Տարսոսը, որ ավերվեց, և որ այդ բնակավայրը շուկա և բաղնիքներ ունենա: Ասացին՝ Բուսիր ալ-Մադարին (°)»:

էջ 468

Սուլթանը շարժվեց և էմիր Ալա ալ-Դին Տայբարս ալ-Վազիրին ուղարկեց Ռուսմանա գյուղի¹⁴⁶ մոտ՝ հրո ճարակ դարձնելով այն: Այնտեղ եղած հայերը սպանվեցին, նրանց կանայք դերեվարվեցին, որովհետև նրանք թաքցրել էին մի խումբ մոնղոլների և սրածել մի խումբ մուսուլմանների¹⁴⁷:

3.2 TAŚRĪF AL-AYYĀM
WA-L-'UŞŪR FĪ SĪRAT AL-MALIK AL-MANŞŪR
«[ԳԻՐՔ] ԱԼ-ՄԱԼԻԳ ԱԼ-ՄԱՆՍՈՒՐԻ ԿՅԱՆՔԻ
ՓԱՌԱՎՈՐ ՕՐԵՐԻ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՄԱՍԻՆ»

էջ 1

Այս տարում (Հիջրայի 680 / 1281/1282 թ.) նորություններ հասան Հալեպից, որ [մի խումբ] ասպատակիչներ՝ թվով մոտ 600-700 հեծյալներ, ուղղվել են դեպի Ռուժ: [Ճանապարհին] նրանք պատահաբար հանդիպել են և կողոպտել մի քարավանի՝ բաղկացած 200 ուղտից, որ Սսի երկրից Ռուժի երկիր էր դուրս գալիս: Այն բեռնավորված էր շաքարով, օճառով, պիստակով, արճճով, բամբակով¹⁴⁶: Նրանց առաջ է շարժվել Ռուժի մեծագույն էմիրներից մեկը՝ Իբն ալ-Կուտնա անունով (գուցե՞ Quṭnī, այն է՝ «բամբակագործի որդի»)՝ երեք հարյուր ձիավորների հետ մեկտեղ: Նրանք (իմա՝ «ասպատակիչներ») սպանել են նրան և նրա գինակիցներից մոտ երկու հարյուր հեծյալների, շատերին վիրավորել և հասել Արաքիինա (գրչական սխալ է. պետք է լինի Արաքիյյա, որ Հերակլեան է-Գ.Դ.), որի կառավարիչը փախուստի է դիմել: Նրանց են միացել նաև Շուջջա ալ-Դին Հուխդին և Մուբարիզ ալ-Դին Սարվան, որ Իբն Կարամանի գինակիցներից էին: Համախմբվեցին և ձիավարեցին [ընդհուպ մինչև] դեպի Բուլղար լեռ՝ Մուսնդասի վերևում, [ապա] ողջ-առողջ հետ դարձան Սսի ճանապարհի և Ռուժի երկրի միջև ընկած լեռների արանքով:

էջ 24

Այս թվականին (իմա՝ Հիջրայի՝ 681 / 1282/1283 թ.) ժամանեցին [Իսմաիլյան] կարգի կառավարիչների կողմից Սսի տիրոջ մոտ ուղարկված [Իսմաիլյան] կարգի գեապանները (բնագրում rusul al-da'wa)՝ իրենց

հետ բերելով երկու տարվա համար նրա վրա դրված [հարկազուժարը]: Նրանք նրա կողմից բերեցին 11600 դիրհամ, որ նրա վրա դրել էր [Իսմաիլյան] կարգը, և հանձնվեց սուլթանական դանձարան¹⁴⁹:

էջ 27

Կատինա (Կատիրա) բերդի գրավումը նգովյալ թշնամու ձեռքից

Այս բերդը մի հզոր սահմանային ամրություն էր (tagr 'azīm) և անառիկ ամրոց: Նախկինում այն համարվում էր Ամիգի բերդերից մեկը, հետո ընկել է Ռուժի արքաների ձեռքը, այնուհետև անցել նգովյալ թշնամուն (իմա՝ մոնղոլներին), որն այնտեղ կառավարիչներ ուներ, և նրա պայքարի ամրակետերից էր: Այն երբեք պաշարմամբ չէր վերցվել, բայց Քարքար բերդի համար նրանից ավելի վնասակար և վտանգավոր բերդ չկար: Մեր տեր սուլթանը, իշխանություն անցնելուց ի վեր, շարունակ մտածում էր այս սահմանային ամրությունների, դրանք թուլացնելու կամ ճնշելու կամ էլ նրանց բնակչությանն իր կողմը զբաղելու մասին: Կառավարիչներն սկսեցին մերթ սիրաշահել նրանց, մերթ լավ վերաբերմունքի արժանացնել, մերթ կոպիտ վերաբերվել, մերթ ահաբեկել, մինչև որ մի օր նրա պարենն ավարտվեց: [Հարմար առիթից օգտվելով՝ սուլթանը] Քարքարի կայազորից մոտ հարյուր հոգու [փութով] այնտեղ ուղարկեց: Պաշարեցին այն, բայց [նաև] զգուշացան նրանից, քանի որ այն [չատ] մոտ էր իրենց: Այն գտնվում էր Եփրատի կողմում՝ արևելյան ափին: [Բերդի] բնակիչներն ափանատես եղան [մամուլյան զորքերի] ճնշմանը, ինչպես նաև [հասկացան.] որ թշնամին (իմա՝ «մոնղոլները»- Գ.Դ.) իրենց թողել է [բախտի քմահաճույքին] և չի մնացել մեկը, որ օգնության կհասնի իրենց: Ամրոցում պարենի բացակայության պատճառով սկսեցին որոշ ժամանակ կաշի ուտել: Բայց հետո այլ հնար չգտան՝ բացի սուլթանական ողորմածությունը հայցելուց, և դրական պատասխան ստացան: Մեր տեր սուլթանի կառավարիչները սահմանային ամրությունը նրանցից վերցրեցին 683 թվականի Ռաբի երկրորդ ամսի 19-ին՝ Հինգշաբթի օրը (1284 թ. Հուլիսի 5): Ապա Քարքարից մի խումբ ռազմիկների ուղարկեցին այնտեղ: Այնտեղ մարտիկներ ուղար-

կելու պահանջ ներկայացվեց շրջակայքի մյուս սահմանային բերդերին [նույնպես]՝ օրինակ ալ-Բիրային, Այնթաբին, ալ-Ռավանդանին, որպեսզի հաստատվեն այնտեղ: Այս սահմանային բերդին մատակարարվեցին ամենն, ինչի կարիքը որ ուներ՝ սարքավորումներ, հացահատիկ, ձեթ, աղեղներ, tawānūt¹⁵⁰, նետեր և այլ ուղղամթերք և սարքավորումներ: Այս սահմանային բերդի պահապան նշանակելով իրեն հավատարիմ, վստահելի և հնարամիտ ռազմիկներին՝ նա սկսեց այն օգտագործել Ամիդ, Սուվեյդա և այլուր ուղղված արշավների համար: Նրանցից գլխավորներին [սուլթանական բարձր] պատիվներ և շատ դրամ ուղարկեցին՝ գոհացնելու նպատակով, և այդ ամենը վավերացվեց (i'tamada gamī ḡalika): Այս բերդում շատ հացահատիկ հավաքվեց, կայազորն ուղարկվեց և որպես կանխավճար երկու ամսվա ռոճիկ (ḡamakiyya) և օրապահիկ (բնագրում՝ ḡirāya, այն է՝ բնամթերքով վճարում-Գ.Դ.) ստացավ: Նրանց Դամասկոսից ռազմամթերք ուղարկեցին Դամասկոսից և զինատեսակներ (բնագրում՝ al-zardhāt, պետք է լինի՝ al-zardhānāt-Գ.Դ.)՝ Զենովայից (, բնագրում՝ ḡanawīyyāt), աղեղներ, սրեր, նետեր, պարաններ, քարանետ մեքենաների սարքավորումներ, բաբաններ, sirbāqāt¹⁵¹ և այլն՝ ամեն տեսակից: Այն դարձավ իսլամի ահաբեկ բերդերից մեկը, որոնց պաշարներն օգտակար էին, իսկ պայքարի մարտադաշտերը՝ համընդհանուր¹⁵²:

էջ 30

Այն (նկատի է առնված ալ-Քախթա բերդը-Գ.Դ.) շարունակեց պատռա լինել անհավատների կրճքում և ոսկոր նրանց կոկորդոս: Այս բերդերը՝ այսինքն Քարքարը, Կատինան և ալ-Քախթան, [գործով] միաբան և [խոսքով] համերաշխ դարձան մեկը մյուսին՝ իրար փոխադարձաբար օգնելով արշավանքներում: Այս բերդերի ճնշումը եռապատկվեց Բահասնայի (Բեհեսնայի), Սսի տիրոջ, Ռուժի, ինչպես նաև այլ կողմերի վրա:

* * *

Հալեպի փոխարքայության հարձակումը Սսի երկրի վրա, և թե ինչ տեղի ունեցավ դրա ընթացումը¹⁵³

Մեր տեր սուլթանը հրամայել էր Հալեպի փոխարքային, որ արշավներ կազմակերպի Սսի երկրի վրա՝ պատժելու նրա տեր Լեոնին այն բանի համար, որ Հայեպում էր գործել, ինչի մասին արդեն հիշատակել ենք. այն է՝ մզկիթի վրա հարձակվելով այն կրակի տալու և այլնի մասին¹⁵⁴: Հաղթական զորքերը նրա դեմ ուղղվեցին Հալեպից¹⁵⁵: Այս տարվա (իմա՝ Հիջրայի 682 թ.) Սաֆարի 23-ին (1283 թ. մայիսի 23) հասավ Հալեպի փոխարքայի նամակը, որում ասվում էր, թե որ մեծագույն էմիրներն են Սիս ուղարկվել: Եվ որ նրանք ճամփա են ընկել Սսի երկիր, ներխուժել այնտեղ սրով՝ թիրախելով Այաս քաղաքը: [Տեղ հասնելով տեսել են], որ նրա բնակչությունն ամբողջ է այնտեղ: Սա տեղի է ունեցել Սաֆարի 10-ի (1283 թ. մայիսի 10)՝ կիրակի օրվա զիչերը: Նրանց հետևակայինները և ռազմիկները քաղաքի շրջակայքում էին մնացել՝ թույլ չտալու մուտքն այնտեղ և պաշտպանելու: Բայց Հաղթական զորքերը հարձակվեցին նրանց վրա, ջարդեցին և հավաքեցին նավահանգստի մոտ: Ապա մի մեծ խմբի սրի քաշեցին դարպասի մատույցներում՝ նրանց շրջափակման մեջ առնելով այնտեղ: Զորքն ուղղակի փոթորկեց քաղաքում այն համատարած ավարառության և ավերածության ենթարկելով: Գիչերեցին այնտեղ մերձակայքում՝ արթնանալով դուրս գալու մասին մտադրությամբ: Երկուշաբթի օրն արդեն նրանք մոտեցան լեռնային ճանապարհին: Մինչ այդ նրանք հետախույզներ էին ուղարկել, և երբ վերջիններս հետ եկան, ասացին, որ իրենք մեծ բազմություն են տեսել թեև Համդունի կողմից: Այդժամ զորքերը հասել էին Քաբ ալ-Խաֆանդառունայի (Ալեքսանդրետի) մոտ: Նրանց առաջնորդում էին էմիր Զամալ ալ-Դին ալ-Սարվան, էմիր Շիհաբ ալ-Դին Մարվանը, էմիր Սայֆ ալ-Դին Բալաբան ալ-Սարուրին և այլք: Մի պահ կանգ առան՝ իրավիճակը քննելու նպատակով: Երբ Սսի զորքն սկսեց հետապնդել [մուսուլմանական] զորքին, նրանք անպատանդությունից ելնելով կանգ առան Իրուև Ասուվոցի մոտ՝ մարտի բռնկելով: Մուսուլմանները ջար-

գեցին նրանց Բարձրյալ Ալլահի ուժով, ոմանց զցեցին իրենց ձիերից և իրենց առջևից քշեցին al-Bi'āt-ից¹⁵⁶ դեպի Թիլ Համզուն: Երեկոյան զորքը կանգ առավ, բայց մի զորագունդ սկսեց հետապնդել հայկական մի զորախմբի: Նրանք պատահեցին մոտ 500 ռազմիկից բաղկացած մի հայկական զնդի: Երբ վերջիններս տեսան իրենց պարտված զինակիցներին, իրենք ևս նահանջեցին: Սա տեղի ունեցավ գիշերային աղոթքից հետո: Ձորքը գիշերեց Բաբ ալ-Իսթանդարունայում, իսկ կիրակի օրն առավոտյան սկսեցին փնտրել նրանց, ովքեր հետ էին մնացել: Հայերը տասն օր էր, ինչ գիտեին հաղթական զորքերի շարժի մասին: Լեոնը՝ Սսի տերը, [զորք էր] հավաքել, մեծ բազմություն [խմբել], օգնական ուժեր կանչել և իր ծառայության տակ առել: Այդ բարձր ժամանակ բռնվածների թվում էր Սսի տիրոջ մարդկանցից մի մեծ հրամանատար, ով ասաց, որ իրենց թիվը տասը հազար ռազմիկ էր եղել: Այս գերու վիզը կտրեցին: Մեկ ուրիշ անձի վիզն էլ կտրեցին, ով ասաց. «Նս մեծ իշխան եմ, խնայե՛ք ինձ»: Բայց նրա խոսքին չանսացին:

Ասպատակիչները հասան Ջահան գետին և երբ դուրս եկան՝ պատահեցին հայկական զորքի մի մասին և մարտ տվեցին՝ առգրավելով նրանց նժույզները: Մոտ կես օրվա ճանապարհ հետապնդեցին նրանց: Հաղթական զորքերը վերադարձան հարստություններով և ավարով, և նրանցից ոչ մեկը չվնասվեց¹⁵⁷:

էջ 43

Հետո մեր տեր սուլթանը, թող Ալլահը հավերժացնի նրա սուլթանությունը, իր էմիրներին և զորքերին հրամայեց [պատրաստվել] աստվածապան Ասորիք (al-šām al-mahrūsa) շարժվելու՝ ի շահ երկրի և ենթակաների: Բանն այն է, որ նա օրհնություն էր բերում ամենուր, ուր գնում էր: Եվ [որովհետև] դա հավանաբար լսեցնելու էր մահաբեր թշնամուն և [փոխարենը] հանդարտություն էր բերելու: [Հիշ-բայի 682 թ.] Ջուժաղա I ամսի կեսին (1283 թ. օգոստոսի 11) մեր տեր սուլթանը, թող Ալլահը հավերժացնի նրա հաղթանակը, ձի հեծնեց իր միջնաբերդից և ճամբարեց Հաղթության գարպախից դուրս: Նա մեկ-

նեց [Ջուժաղա I] ամսի 18-ին (օգոստոսի 14): Շարժվեց և Ղազալում իջևանեց Ջուժաղա II ամսի 7-ին (1283 թ. սեպտեմբերի 2): Այնտեղից մեկնեց նույն ամսի 28-ին (սեպտեմբերի 23)՝ երեքշաբթի օրը¹⁵⁸, և Դամասկոս մտավ Թաջար ամսի 8-ին (հոկտեմբերի 2)՝ ուրբաթ օրը¹⁵⁹, և կանգ առավ այնտեղ՝ իր զորքի վիճակը բարեկարգելու և բոլոր կողմերի հեռու և մոտիկ թշնամական երկրներին տաղնապ ներշնչելու համար: Նրա աչքը մերթ ուղղված էր Պարսկաստանի, մերթ Իրաքի և Արևելքի, մերթ Թուրքի և Սսի [երկրի], երբեմն էլ Արևմուտքի՝ Եմենի և Հնդկաստանի ուղղությամբ¹⁶⁰:

էջ 67

Հալեայան գորհերի շարժը դեպի ալ-Թինի, և թե ինչ հաղթանակի արժանացրեց նրանց Ալլահը (1284 թ.)

Այս ամբողջ ընթացքում մեր տեր սուլթանին լուրեր էին հասնում բանագնացներից (al-quṣṣād), տեղեկատուներից (al-munāṣiḥīn)¹⁶¹ և անցորդներից, որ ալ-Թինի բերդի բնակիչ մի խումբ հայեր ճանապարհներ են կտրում, ահի մատնում ճամփորդներին, հարձակվում բանագնացների վրա: Դժգոհությունները նրանցից հաճախացան, և մեր տեր սուլթանը մարդ ուղարկեց աստվածապահ Հալեայի փոխարքայի մոտ՝ հրամայելով այս վայրը գրավելու հնարավորություն որոնել: Հալեայի փոխարքան զբաղվեց այս գործով. նա [զորքերի] բազմությունից մի զորախումբ ուղարկեց էմիր Սայֆ ալ-Դին Բալաբան ալ-Շամսիի հրամանատարությամբ: Չորախումբն ուղղություն վերցրեց դեպի այն, պաշարեց և փորձեց գրավել: Բաբաններով հարվածեցին նրան և քանդեցին նրա աշտարակներից մեկը, ինչպես նաև պարսպապատը: Նրա բնակիչները բղավեցին amān (այսինքն՝ ապահովության երաշխիք խնդրեցին-Գ. Դ.): Նրանք փրկություն խնդրեցին նրանցից, որ իրենց մոտ էին եկել: Նրանց մոտ էին ուղարկվել Հալեայի զորախմբի (halqa)¹⁶² երկու ռազմիկներ: Վերջիններս խոսեցին նրանց հետ՝ առաջարկելով կամ իջնել բերդից կամ նրանց վրա հարկ պիտի դրվեր [մամլուքյան] հաղթական բանակի նժույզների համար պայտերի¹⁶³ տեսքով: Նրանք համաձայնեցին իրենց փրկության հա-

մար վճարել 17 հազար դիրհամ, որից երկու հազարն անմիջապես վճարեցին, իսկ մնացած գումարի համար [որպես երաշխիք] մի քրիստոնյայի պատանդ տվեցին: Այս ընթացքում, երբ բանակցություններ էին վարվում բերդի բնակչության հետ՝ նրանց մուրեհները նպատակով, մինչև որ կկարողանային [ընկճել նրանց], ժամանեց Իբն ալ-Բարան¹⁶⁴ և կանգ առավ նրանցից ոչ հեռու գտնվող Կսուն (կամ Լայսուն)¹⁶⁵ շեռան վրա՝ նպատակ ունենալով օգտվել իրավիճակից: Նա մի խումբ կառաղալ (սահմանապահ) մոնղոլների ուղարկեց, որոնց դեմ հանդիման դուրս եկան հաղթական առաջապահ գնդերը (բնագրում՝ al-yazak al-mansūr), մարտ տվեցին և կոտորեցին թաթարներից շատերին, վեց հոգու գերի վերցրին, կարաղուլներից շատերի նժույզները խլեցին: Հաղթանակը մուսուլմանների կողմն էր: Նախքան այդ [մարտում] նետից մարտիրոսվեց էմիր Շիհար ալ-Դին Հայդարը: [Այնուհետև] գործը խաղաղության ձգտումով հետ գարձավ և այդ տարվա (հիջրայի 683 թ.) Ռարի ալ-ախար ամսի 8-ին (1284 թ. հունիսի 24)՝ շաբաթ օրվա վաղ առավոտյան, հասավ ալ-Բիրա: Ալ-Թիխի բերդը քանդվեց, և այդուհետ այլևս ոչ մեկը չմնաց, որ կարող էր այնտեղ ապրել¹⁶⁶:

էջ 92

Հաշտությունը Սսի տեղ Թաֆֆուրի հետ (1285 թ.)

Երբ մեր տեր սուլթանը պաշարել էր Հիսն ալ-Մարկաբը, ժամանեց Հայոց երկրի տաճարականների քամանդուրը՝ Սսի տիրոջ գրավոր դիմումով: Նա Թաֆֆուրի կողմից ընծա և գրություն էր բերել, ինչպես նաև մեկ այլ գրություն տաճարականների հրամանատարից (իմա՝ մագիստրից)¹⁶⁷: Այն բովանդակում էր Սսի տիրոջ վերաբերյալ խնդրանք ու նրա հանդեպ ներողամտության և նրա ներողությունն ընդունելու հայցում: Տաճարականների մագիստրի խնդրանքի պատճառն այն էր, որ նրա (իմա՝ Լևոնի) դեսպանները պիտի ներկայանային սուլթանական արքունիք, բայց ամեն անգամ երբ Սսի տիրոջ դեսպանները ներկայանում էին, նրանց բռնում և կալանավորում էին՝ առանց նրան որևէ պատասխան հետ ուղարկելու: Ուստի նա հնարա-

մտություն դրսևորեց՝ տաճարականների մագիստրի օգնությամբ դիմելով, որպեսզի Քամանդուրն այս միջնորդությամբ հանդես գա և շտկի իրավիճակը: Տաճարականների մագիստրը ծառայություն ուներ մատուցած մեր տեր սուլթանին, ինչը պահանջում էր, որ նա դրական պատասխան տա նրա խնդրանքին՝ պահի նրա հարգանքը և ընդունի նրա միջնորդությունը: Քամանդուրը ներկայացավ մեր տեր սուլթանին և մատուցեց նվերը՝ մի փառահեղ ընծա՝ արծաթեղեղ, կտորեղեն և այլն: Նա (իմա՝ Լևոնը) խնդրում էր, որ իր վրա տարեկան հարկ սահմանվի: Բահասնան (Բեհեսնի) հանձնելու մշտական պահանջ կար նրանից, բայց նա սակարկում էր և շարունակ ներողություն խնդրում: [Ի վերջո] որոշվեց, որ նա յուրաքանչյուր տարի մեկ միլիոն դիրհամ հարկ վճարի՝ գրամով և ապրանքատեսակներով՝ մասնավորապես 500 հզ. արծաթե դիրհամ (ըստ կշռի), որ հաշվով հավասար էր 700 հզ. դիրհամի, աղնվական ձիեր և ընտիր ջորիներ՝ 50 գլուխ, երկաթե պայտեր՝ 10 հազար հատ՝ իրենց մեխերով¹⁶⁸, որ պետք է բերվեին այն տեղը, որտեղ նրան կհրամայվեր: Ի լրումն այս ամբողջի՝ նվերներ, գործվածքեղեն և այլն: Որոշվեց, որ նա պետք է ազատ արձակի իր մոտ կալանքի տակ գտնվող բոլոր առևտրականներին՝ իրենց ինչքով և ապրանքներով, իսկ ով, որ մահացել էր նրանցից, փոխարենը նման մի դերու արձակի՝ ուղարկելով հանդուցյալի ունեցվածքը, ազատ արձակի իր երկրում բանտարկված բոլոր մուսուլմաններին: Սրանով հաշտության պայմանագիրը կազմվեց և համապատասխանեցվեց: Մեր տեր սուլթանը երգվեց նրա վրա [հիջրայի 684 թ.] Ռարի ալ-ախար ամսի 2-ին (1285 թ. հունիսի 7)՝ հինգաբլթի օրը: Իսկ էմիր Փախր ալ-Դին ալ-Մուկրին¹⁶⁹ ճամփա ընկավ Սսի տիրոջ երդման համար և նախօրոք մեկ տարվա հարկը, ինչպես նաև գերություն մեջ գտնվող վաճառականներին և այլոց բերելու: Սսի հաշտությունն այս կերպ հաստատվեց, և գործը բարով ավարտվեց: Գանձաբաններին մեծ օգուտ եղավ այս հսկայական գումարից, որ պետք է ամեն տարի վճարվեր: Եվ եթե Սիսը գրավվեր և վերաբնակեցվեր, դա չէր արդարացնի կատարվելիք ծախսերը:

Հաշտության պայմանագրի տեխստը և երգումը

Հանուն բարեգութ և սղորմած Աստծո.

Ասում եմ՝

ես Կոստանդինի որդի Հայթուճի որդի Լիֆուճն եմ,

Աստծով եմ երզվում, Աստծով եմ երզվում, Աստծով եմ երզվում,

Աստծով եմ երզվում, Աստծով եմ երզվում, Աստծով եմ երզվում,

Աստծով եմ երզվում, Աստծով եմ երզվում, Աստծով եմ երզվում,

Երզվում եմ Քրիստոսի ճշմարտությամբ,

Երզվում եմ Քրիստոսի ճշմարտությամբ,

Երզվում եմ Քրիստոսի ճշմարտությամբ,

[Երզվում եմ] խաչի ճշմարտությամբ, խաչի ճշմարտությամբ,

խաչի ճշմարտությամբ,

[Երզվում եմ] Ավետարանի ճշմարտությամբ, Ավետարանի ճշմար-

տությամբ, Ավետարանի ճշմարտությամբ,

[Երզվում եմ] Հոր, Որդու և Սուրբ Հոգու ճշմարտությամբ,

Ամենագորեզ խաչի ճշմարտությամբ, որ [իր վրա] տարել է վսեմա-

փառ Մարգեղությունը,

Մեկ էության երեք Անձերի ճշմարտությամբ,

Չորս ավետարանների ճշմարտությամբ՝ գրված Մատթեոսի, Ղու-

կասի, Մարկոսի և Հովհաննեսի կողմից,

եվ նրանց աղսթքների և օրհնության ճշմարտությամբ,

Տասներկու աշակերտների և եկեղեցու շուրջը ժողովված 318 [եպիս-

կոպոսների] ճշմարտությամբ¹⁷⁰,

Այն ձայնի ճշմարտությամբ, որ Հորդանանի վրա իջավ և իր ճիշով

հետ քշեց նրան¹⁷¹,

Աստծո ճշմարտությամբ, ով Ավետարանն իջեցրեց Հիսուսի՝ Մա-

րիամի և Սուրբ Հոգու ու նրա Խոսքի որդու վրա,

Լույսի օրհնյալ մայր Սուրբ Մարիամի, Հովհաննես Մկրտչի,

Սուրբ Թովմասի և Սուրբ Մատթեոսի ճշմարտությամբ,


Մեծ Պաճքի ճշմարտությամբ,

Իմ քրիստոնեական կրոնի և Հա՛վատի ճշմարտությամբ,

եվ այն մկրտության, որ ստացել եմ քրիստոնյա քահանաներից և

Հայրերից.

[Սուրբ] Հազարդություն սփող բոլոր Հայրերի ճշմարտությամբ:



Tasrif al-ayyām-i dānawqāh-i wāj-i kēlēr, nr 616-Կայսրյանն Են հայ-մամլոյսյան պայմանագրի սկիզբը: © Bibliothèque Nationale de France, MS Arabe 1704, 185a-185r րերբեր:

Արդ, ես այս պահից և այս ժամից ազնիվ մտադրութեամբ և մաքուր խղճով Հնապանդութուն և Հավատարմութուն եմ Հայտնում մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին՝ աշխարհի և կրոնի սուր, իսլամի և մուսուլմանների սուլթան, սուլթանների և արքաների դերակա, եգիպտական, ասորիքյան, Հալեպյան, եփրատյան տարածքների, Ռուսի բերդերի և երկրի, արևելքի երկրների սուլթան, Հողագնդի արքա Աբու ալ-Ֆաթհ Կալավուն ալ-Սալիհին՝ Հավատացյալների վեհապետի (իմա՝ խալիֆայի-Գ.Դ.) գործակից, և նրա որդուն՝ տեր սուլթան ալ-Մալիք ալ-Սալիհ Ալա ալ-Դունյա վալ-Դին Աբու ալ-Հասան Ալիին՝ Հավատացյալների վեհապետի ընկեր, և նրա որդուն՝ ալ-Մալիք ալ-Աշրաֆ Սալահ ալ-Դունյա վալ-Դին իսալիին՝ Հավատացյալների վեհապետի ջատագով:

[Հավատարմութուն եմ Հայտնում] այս զինադազարի [պայմանագրին] ամբողջությամբ՝ շարադրված Հիշյալ երգման ներքո, որի ժամկետը 10 ամբողջ, Հաջորդական և շարունակական տարի է և 10 ժամ: Նրա սկիզբը մարդարեի [Ալլահի աղոթքներն ու խաղաղութունը նրան] Հիջրայի 684 թվականի Ռաբի ալ-ախար ամսի 1-ն է՝ օրհնյալ Հինգշաբթի օրը (1285 թ. հունիսի 6), որը Համապատասխանում է հուլյան Ֆրիլպի որդի Ալեքսանդրի 1596 թվականի Հազիրան ամսի 7-ին:

Ես կհետևեմ նրան մինչև նրա ժամկետի ավարտը, կկատարեմ նրա պայմանները մեկ առ մեկ՝ պարտավորվելով Հավատարիմ լինել նրան և նրա բովանդակությունը, չհակառակվել ո՛չ խոսքով, ո՛չ արարքով, ո՛չ ակնարկով և ո՛չ էլ նշանով: Ձեռն փորձի [այլ կերպ] մեկնաբանել իմ այս երգումն ու ոչ էլ այս պայմանագիրը: Խորամանկություն չեմ ցուցարների՝ խախտելու այն կամ որևէ բան նրանից, նրա կամ նրա որևէ գրույթի կամ Հիշյալ պայմանագրի պայմաններից որևէ մեկի հետ կապված որոշում չեմ հայցի:

Եվ եթե խախտեմ այն կամ նրանից որևէ բան, կամ եթե նոր որոշում պահանջեմ կամ բացառություն զնեմ նրա կամ նրա որևէ գրույթի համար, ապա ինչ որ ունեմ՝ կենդանի թե անշունչ, պիտի նվիրաբերեմ քրիստոնյա աղքատներին և ընչազուրկներին, պարտավոր կլինեմ երեսուն անգամ ոտքով բոկոտն և մերկազուխ, քայլել մինչև Սուրբ Երուսաղեմ, անժամկետ ծոմ պահել, և եթե հակառակվեմ սուլյն

պայմանագրի պայմաններին կամ նրանից որևէ բանի, կամ այնպես վարվեմ, որ դրեմ Հավատարմութունը նրան կամ նրանից որևէ բանի՝ սուլյն երդման մեջ սահմանված ժամկետի սկզբից մինչև ավարտը: Այն է՝

✦ Այս օրհնյալ պայմանագիրը կնքվեց [մի կողմից] մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի՝ ամենապատվելի տեր, իմաստուն, արդարամիտ, Հաղթական, աշխարհի և կրոնի սուր, իսլամի և մուսուլմանների սուլթան, Աբու ալ-Ֆաթհ Կալավուն ալ-Սալիհին՝ Հավատացյալների վեհապետի գործակից, նրա դահաժառանգ որդու՝ տեր ալ-Մալիք ալ-Աշրաֆի՝ աշխարհի և կրոնի բարօրութուն, Հավատացյալների վեհապետի օգնական ընկեր, Ալլահը թո՛ղ Հավերժացնի նրանց սուլթանութունը, և [մյուս կողմից] Կոստանդինի որդի արքա Հայթումի որդի պատվելի արքա (al-malik al-ğātil) Լայֆունի՝ Հայոց արքայի միջև՝ 10 ամբողջական, Հաջորդական և շարունակական տարի, տասն ամիս, 10 օր, տասը ժամ ժամկետով, որի սկիզբը [Հիջրայի] 684 թ. Ռաբի երկրորդ ամսի 1-ն է՝ Հինգշաբթի օրը, որը Համապատասխանում է հուլյան Ֆրիլպի որդի Ալեքսանդրի 1596 թվականի Հազիրան ամսի 7-ին և տարածվում է մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի տիրույթների վրա՝ նրա բերդերի և ամրոցների, թագավորություն, քաղաքների, շրջանների և նրա երկրի Հպատակների՝ գորականների, գորքերի, բանակների, աշխարհադորի (hušūd), թուրքմենների, քրդերի, արաբների, մուսուլմանների, քրիստոնյաների, մնացած բոլոր Համայնքների մարդկանց՝ անկախ նրանց կրոնից և ով լինելուց, նրանց ունեցվածքից՝ լինի ինչք թե անասունների հոտ, կենդանի թե անշունչ, գիշերով ճամփորդող լինի թե արածեցնող լինի, [տեղից տեղ] շարժվող լինի թե նստակյաց լինի, նրա ցամաքի և ծովի, նրա նավահանգիստ[ների] և թե առափնյա շրջան[ների], դաշտավայր[երի] և թե լեռ[ների], բնակելի թե ամայի [տարածքների] վրա: Այն է՝ Եգիպտոսի փոխարքայությունը՝ նրա սահմանային ամրությունները և շրջանները, նավահանգիստները և առափնյա շրջանները, ցամաքային տարածքը, Մովսինյա փոխարքայությունը, վերջինիս առափնյա շրջանները, նավահանգիստները և ցամաքային տարածքները, ալ-Բարաքի շրջանը, ալ-Շաուբաքի շրջանը, ալ-Սալթի և ալ-Բալկաի

չրջանը, Աջուռնի չրջանը, Սարխադի չրջանը, ալ-Սարիբի չրջանը, ալ-Սաֆադի և ալ-Շակիֆի չրջանը, Դամասկոսի չրջանը, ալ-Բաալբաքի չրջանը և Ասորիքի մյուս բոլոր չրջանները և իսլամական բերդերը, ալ-Հոմսի չրջանը, ալ-Ռահբայի չրջանը և գրավյալ ամրոցները՝ Հիսն ալ-Աքքարը և նրա դրավյալ տարածքները, Հիսն ալ-Աքքարը և նրա գրավյալ տարածքները, Հիսն ալ-Մարկարը և նրա դրավյալ տարածքներն ու նավահանգիստները, ԲուլուՆյասը և ինչը, որ նրա հետ է գրավվել, Բաղան, Ջաբալան, Լաթաքիան, Բալագ ալ-Միթթը (բառացի՝ «Տիկնոց երկիր»)՝ Բալատունիսի չրջանը և նրա տարածքը, Սահյունի չրջանը և տարածքը, Շայգարի չրջանը և տարածքը, Համայի չրջանը, Հալեպի չրջանը, Բաղրասի չրջանը, Դարպսակի չրջանը, Այնթաբի, Բուրջ ալ-Ռասասի, ալ-Ռավանդանի, Թեյ Բաշիբի, Մանրիջի և Կալ'աթ Ջա'բարի չրջանը, ալ-Բիրայի չրջանը, ալ-Քարքարի չրջանը, ալ-Քախթայի, Կատինայի և Բարիլուի չրջանը՝ ընդհուպ մինչև սուլթանական տիրույթների սահմանագիծն Արևելքի թագավորությունների և Ռումի (երկրի) հետ: Այն ամենի վրա, որ մինչև սուլթանականագրի [ստորագրման] օրը գտնվում է մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի կառավարիչների ձեռքին՝ լինեն գրավյալ երկրներ, սահմաններ, հողեր, բերդեր և այն ամենը, ինչ կգրավի Բարձրյալ Աստված մեր տեր սուլթանի և նրա զորքերի, բանակների և ռազմարշավային զնդերի ձեռքով՝ տարածքներ, երկրամասեր, սահմանային ամրություններ, գյուղեր, ավաններ, ամառանոցներ, ձմեռանոցներ՝ արևելքում թե արևմուտքում, հեռու թե մոտիկ, [պայմանագրում] հիշատակված սուլթանական տիրույթները և չհիշատակվածները, նրանում եղած ամեն ոքի և ամեն ինչի վրա:

♦ Մինչև սուլթանականագրի կնքումը Հեթում արքայի որդի Լևոն արքայի ձեռքին գտնվող տարածքները ճանաչվում են որպես նրա տարածքներ¹⁷²:

♦ Մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի տարածքը՝ մասնավորեցված կամ ոչ մասնավորեցված, ինչպես նաև արքա Լևոնի ձեռքին գտնվող տարածքը, պիտի անվտանգ և ապահով լինեն հաշտության և զինադադարի հիմքերով: Այն է՝ դրանք և նրանցում եղած բնակչությունը, հրամանատարները, զորքերը և բոլոր նրանք, ովքեր

ինչ-որ առնչություն կամ կապ ունեն իրենց հետ, իրենց տարածքներում եղած ինչքը, անասունների հոտերը, գյուղերը, ցանքերը և ավանները գիշերուզօր, գնալիս և հետ դառնալիս, առավոտյան թե երեկոյան պահպանվում են երկու կողմից, ճանապարհները, բոլոր սահմանեղրերը և կողմերը պահպանվում են և պաշտպանվում են՝ ինչպես ցամաքից, այնպես էլ ծովից, վնասակար ներխուժողներից, թշնամության ձեռքերով խաղացողներից, զոհացողներից՝ ավազակներից և ելուզակներից, խառնակիչներից: Կողմերից ոչ մեկը որևէ իրավիճակում չի միջամտում մյուսի զործին, եթե դա կարող է հակասել զինադադարի պայմաններին, և դրանով չի խախտում հաշտության սահմանված իրադրությունը և բոլորին քաջ հայտնի իրողությունը:

♦ Երկու կողմերի վաճառականները՝ թե՛ զնացողները և թե՛ եկողները, ազատ ելումուտ են անում իրենց ինչքով, ապրանքներով և վաճառանյութով: Թող որ նրանք ուղեկցվեն մինչև [իրենց] երկրի սահմանը, նրանց ելումուտը չարգելվի, և որևէ պատճառով չվնասվեն:

♦ Պայման է, որ արքա Հեթումի որդի արքա Լևոնը պարտավորվում է մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին և նրա գահաժառանգ որդուն՝ սուլթան ալ-Մալիք ալ-Մալիհին՝ աշխարհի և կրոնի սուր, և [մյուս] որդուն՝ սուլթան ալ-Մալիք ալ-Աշրաֆին, այս պայմանագրի կնքման օրվանից սկսած և մինչև դրա ժամկետի ավարտը՝ յուրաքանչյուր տարի վճարել իր, իր հպատակների, իր տարածքների համար, որ կհիշատակվեն, սահմանված հարկը՝ տարվա կանխիկ դուժարի նախօրոք վճարումով, որը կազմում է՝ 500.000 դիրհամ՝ [մուծելի] արծաթաձույլ բաֆթուրիյա (իմա՝ «քաղավորական», «քաղվորին») դահեկաններով (al-ṭalaḡam al-takfūriyya)՝ հաշվված ըստ կշռի, որի կեսը 250.000 դիրհամ է, ինչպես նաև ընտիր նժույզներ ու ընտիր ջորիներ՝ 50 գլուխ՝ ի մասնավորի 25 գլուխ ընտիր աֆադիլ¹⁷³, 25 գլուխ ընտիր ջորիներ¹⁷⁴, 10 հազար երկաթյա պայտ՝ իրենց մեխերով, որոնք պետք է սուլթանական երկրից ստացված հրամանով տեղափոխվեն այնտեղ, որտեղ որ կպահանջվի¹⁷⁵: Թող որ այդ ամենը յուրաքանչյուր տարի տեղափոխվի նրա թագավորությունից և թող որ առաջին տարում նախօրոք տեղափոխվի և այս սահմանված գումարի մուծումը յուրաքանչյուր տարի շարունակվի, մինչև այս օրհնված պայմանագրի [ժամկետի] ավարտը:

♦ Պայման է, որ արքա Լեոնը պարտավորվում է ազատել կալանքի տակ գտնվող մուսուլման վաճառականներին՝ անկախ նրանց Համայնքային և ազգային պատկանելությունից, ունեցվածքից, ապրանքներից, [ունեցած] ստրուկներից, Հարճերից, ձիերից և ջորիներից, ազատել գերեզմարված և իր բերդերում ու իր տարածքում բանտարկությունից մեջ գտնվող բոլոր մուսուլմաններին՝ անկախ նրանց ազգությունից, ով լինելուց, և պատրաստվեն ուղարկվելու Բարձր Դուռ, նրանցից ոչ մեկին չուշացնել, ուղարկի բոլորին Բարձր Դուռ: Ինչ վերաբերում է բոլոր այն մուսուլման վաճառականներին, որ մահացել են Լեոն արքայի մոտ բանտարկության մեջ, Լեոն արքան պարտավորվում է մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին փոխանցել իր մոտ բանտարկության մեջ մահացած վաճառականների ունեցվածքը, նրանց ստրուկներին, Հարճերին, ապրանքները՝ ոչինչ չթափարկելով դրանցից և [յուրաքանչյուր] մահացած առևտրականի փոխարեն նույն կարգի մեկ այլ բանտարկյալի ազատ արձակելով: Իսկ ինչքան վատնել է նրա ապրանքներից, ինչքից և ստրուկներից, պիտի դրանց գինը Հատուցի մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին, Ալլահը Հավերժացի նրա իշխանությունը, և այդ [ամբողջն] ուղարկի մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին՝ առանց ներողություն Հայցման:

♦ Պայման է, որ մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրն ազատ արձակի և Լեոն արքային ուղարկի Եգիպտոսում և Ասորիքում կալանքի մեջ գտնվող նրա զեսպաններին, նրանց սպասավորներին և ուղեկիցներին, իսկ եթե կալանքի մեջ լինի մեկը Հայ վաճառականներից, ապա նույնպես ազատ կարձակվի իր ունեցած ինչքով:

♦ Պայման է, որ երկու կողմերից ելումուտ անող վաճառականների Հետ միջադեպեր Հպատակեն, նրանց վրա նոր ճնշող [պարտավորություններ] չդրվեն, և ոչ էլ որևէ կողմում պահանջարկան ուղեկցման վճարներն ավելացվեն՝ արգարություն և անաչառության վերաբերմունք ցուցաբերելով նրանց նկատմամբ:

♦ Պայման է, որ եթե մեկը Թուրքի երկրից, Արևելքի և Արևմուտքի երկրներից, Իրաքից, Բաղդադից, Պարսկաստանից և մյուս բոլոր երկրներից որևէ մեկը մտնի Հայոց երկիր՝ սուլթանական տարածք ուղեւորվելու նպատակով լինի առևտրական, Հպատակ, զեսպան կամ այլոք,

պիտի թույլ տրվի նրանց ժամանումը սուլթանական տարածք՝ առանց խոչընդոտելու և արգելելու: Նա Հպետք է պնդի, թե իբր նրանք թաթարների (իմա՝ մոնղոլների) Հպատակներ են, նրանց զարմից են կամ նրանց Հետ առնչություն ունեցողներ են:

♦ Պայման է, որ եթե մուսուլման վաճառականներից որևէ մեկը մահանա արքա Լեոնի տարածքում, պահպանվի նրա ունեցվածքը և Հանձնվի մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի ներկայացուցիչներին, որպեսզի վարվեն դրա Հետ սրբազան օրենսդրությունը (քնադրում al-sar' al-sarif) Համապատասխան: Նույնը վերաբերում է նաև արքա Լեոնին, երբ Հայոց երկրի վաճառականներից մեկը մահանա սուլթանական տարածքում:

♦ Պայման է, որ եթե կողմերից մեկի նավը վթարվի մյուս կողմում, ապա դրանում եղած ամեն ինչ պետք է պահպանվի և Հանձնվի այն կողմի ներկայացուցիչներին (կառավարիչներին), որտեղից որ մահացած վաճառականը գալիս էր: Իսկ եթե այդ վաճառականը մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի Հպատակներից լինի կամ նրա սպասավորներից, ապա պետք է Հանձնվի մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի ներկայացուցիչներին: Իսկ եթե արքա Լեոնի Հպատակներից լինի, պետք է նրան Հանձնվի՝ արգարությունը և անաչառությունը Համապատասխան տնօրինելու դրանք¹⁷⁰:

♦ Պայման է, որ եթե մեկը փախչի մեր տեր սուլթանի տարածքից՝ ով էլ որ լինի, Հրամանատար թե Հրաման կատարող, ստրուկ լինի թե ազատ՝ անկախ Համայնքային, ազգային և կրոնական պատկանելությունից, և մտնի Հայոց երկիր, Լեոնն ու նրա ներկայացուցիչները պարտավոր են բռնել նրան և նրա Հետ փախուստի դիմաձնների՝ նրա Հետ եղած ուղեկիցների, սպասավորների, ձիերի, ջորիների, կտորեղենի, գումարի և այլնի Հետ մեկտեղ թիկնազորով ուղարկել Սուլթանական Դուռ: Իսկ եթե փախչողը քրիստոնեություն է բնդուում և ուրանում իր կրոնը, ապա արքա Լեոնը պարտավորվում է նրան վերադարձնել մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին՝ առանց նրա Համար ներում Հայցելու և կամ նրա Հարցով որևէ բան փաստարկելու: Իսկ եթե արքա Լեոնի Հպատակներից, սպասավորներից, զորականներից որևէ մեկը փախչի և իր Հավատին մնա, ապա սուլթանի ներ-

կայացուցիչները պարտավորվում են նրան վերադարձնել: Իսկ եթե խալամական կրոնն ընդունի, վերադարձվում է միայն նրա մոտ եղած ունեցվածքը¹⁷⁷:

♦ Պայման է, որ այն ամենն, ինչ արգելված է սուլթանական տարածքից՝ լինի գեներ թե ուղղափառ սպառազինություն, սովորականի պես կշարունակի արգելված լինել:

♦ Պայման է, որ արքա Լևոնը չի արգելի որևէ վաճառականի կամ ոչ վաճառականի ձեռք բերել ստրուկներ, հարճեր, ձիեր, ջորիներ և մյուս բոլոր ապրանքատեսակները և իրենց հետ ներմուծել սուլթանական տարածք, չի կալանավորի նրանց և ոչ էլ որևէ մեկին թույլ կտա կալանավորել նրանց: [Ընդհակառակը], նա նրանց համար ճանապարհ կբացի, որ ներմուծեն ստրուկներ, հարճեր, ապրանքներ, ձիեր, ջորիներ և մյուս բոլոր [ապրանքատեսակները, այլևայլ ազգություն ստրուկներ և հարճեր՝ չնայած նրանց տարբերությունը, և չի կալանավորի նրանցից և ոչ մեկին¹⁷⁸:

♦ Պայման է, որ երբ ավար վերցվի (հափշտակություն կատարվի) կամ երկու կողմերից մեկը սպանվի, ապա սպանողը պետք է հանձնվի հատուցման նպատակով և վերադարձնի հենց ավարը, եթե այն գտնված լինի, կամ էլ նրա արժեքը, եթե կորսված է: Սպանվածի համար նրա ունեցվածքի վերադարձից հետո նրա պես մեկը պետք է գերի մնա՝ հեծյալի դեպքում հեծյալ, աղեղնավոր հեծյալի դեպքում աղեղնավոր հեծյալ, վաճառականի դեպքում վաճառական, հետևակայինի դեպքում հետևակային, գյուղացու դեպքում գյուղացի: Իսկ եթե սպանվողի կամ հափշտակության գործը չբացահայտվի, ապա 40-օրյա ժամանակամիջոց պիտի տրվի հետաքննության համար: Իսկ եթե դեպքը չբացահայտվի, ապա սովյալ կողմի կառավարիչը և մյուս կողմից ընտրված երեք անձ պետք է երգվեն: Եվ եթե ավարի կամ սպանվածի գործը պարզվի երդումից հետո, ապա այդ հարցով ճշմարտության բացահայտման գործընթացը պետք է վերսկսվի:

♦ Արդ, Հոռոմկլան՝ իր և այնտեղ նստող հայոց խալիֆան՝ Բաթաղիֆուն (իմա՝ կաթողիկոսը), նրա կղերականները և այս կողմում նրանց առնչակից անձինք, նրա ունեցվածքը, թե՛ քաղաքացիները և թե՛

գյուղացիները, նույնպես մտնում են այս զինադադարի գործողության տակ, ինչպես որ սահմանվել է նրանց համար [ալ-Մալիք] ալ-Ջահիրի կնքած զինադադարի [սլայմանագրում]¹⁷⁹:

♦ Պայման է, որ արքա Լևոնը չպետք է զբաղվի որևէ բերդի վերաշինությունը և ոչ էլ ամրացմամբ¹⁸⁰:

♦ Պայման է, որ Ռուժի երկրից¹⁸¹ և սուլթանական տարածքներից Լևոնի երկրում գտնվող գյուղացիները վերադարձվեն սուլթանական տարածք: Նույնպես և [սուլթանը] պետք է ազատի նրանց եկեղեցականներից նրանց, ովքեր որ բանտարկության մեջ կլինեն: Եվ եթե սուլթանական տարածքում Հայոց երկրի որևէ գյուղացի լինի, պետք է վերադարձնի:

♦ Սուլյն զինադադարը՝ իր պայմաններով և իր սահմանված դրույթներով, գործում է մինչև իր ժամկետի ավարտը: Այն չի չեղարկվում երկու կողմերից մեկի տիրակալի մահով, և ոչ էլ փոխարքայի կամ կառավարչի պաշտոնանկությունը կամ փոխարինմամբ, ոչ օտար ոտքի ներխուժմամբ և կամ մոնղոլների կամ այլոց բռնի ձեռքով: Այս զինադադարի դրույթները պետք է շարունակեն գործել: Եվ ես պարտավորվում եմ հավատարիմ մնալ նրա բոլոր պայմաններին և նրա դրույթներից և ոչ մեկից հետ չկանգնել, լրտեսական տեղեկություններ չտալ մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի տարածքների և ոչ էլ նրա գործերի մասին, ոչ էլ նրա հպատակների մասին նրանց, ովքեր մտադրություն ունեն արշավանք ձեռնարկել նրանց դեմ՝ վնաս պատճառելու կամ վնասելու նպատակով, չմտնել այնպիսի խորհրդակցության մեջ, որը չարիք կամ բռնություն կհարուցի, չեմ հաճոյանա մեր տեր ալ-Մալիք ալ-Մանսուրի թշնամիներից որևէ մեկին, չեմ աջակցի և չեմ օգնի նրանց, նշանացի ոչինչ չեմ հայտնի և ոչ էլ գրելով, նամակագրությունը, գրագրությունը և ոչ էլ բանավոր: Այլ ապավեն կլինեմ իմ անձին և իմ երկրին, ամեն ջանք կգործադրեմ մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի տարածքները պաշտպանելու համար, կարգելեմ նրան վնասելու կամ թշնամության նկրտում ունեցողների անցումն իմ երկրով:

Իսկ եթե կողմերից մեկը չեղարկի [սլայմանագիրը], թող Ալլահը թույլ չտա դա, վաճառականները, դեսպանները, ճամփորդները պետք

է ապահով և անվտանգ լինեն՝ իրենց անձով, ինչքով, ապրանքներով, ստրուկներով, հարճերով, ձիերով, շորիներով: Այդժամ 40-օրյա ժամկետ պիտի տրվի, մինչև որ յուրաքանչյուր ոք անխոչընդոտ վերադառնա իր անվտանգ վայրը, հայրենիքը՝ իր ապրանքներով և ունեցվածքով, այս օրհնյալ պայմանագրի ժամկետներում, որի սկիզբը Մուհամմադ մարգարեի, Ալլահի աղօթքներն ու խաղաղությունը նրա վրա, հիշրայի 684 թվականի օրհնյալ Ռաբի ալ-ախար ամսի 1-ն է, որը համապատասխանում է հուլյն Փիլիպի որդի Ալեքսանդրի 1595 թվականի Հազիրան ամսի 7-ին: Երդվում եմ Աստծով, իմ կրոնի, դավանության և հավատքի ճշմարտությամբ: Պարտավորված եմ այս ամբողջ պայմանագրով, այս երդումն իմ երդումն է, և ես Հեթումի որդի Լևոնն եմ: Մտադրությունն իմ տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուր Սայֆ ալ-Դուռյա վա-լ-Դին Կալավուն ալ-Սալիհի մտադրությունն է և նրա որդիների՝ տեր սուլթան ալ-Մալիք ալ-Սալիհ Ալա՝ ալ-Դուռյա վա-լ-Դինի և տեր սուլթան Աշրաֆ Սալահ ալ-Դուռյա վա-լ-Դինի մտադրությունը, ինչպես նաև իմ երդումը նրանց անուկից վերցնողի մտադրությունը: Ես, բացի նրանց մտադրությունից, այլ մտադրություն չունեմ և բացի նրանց նպատակից այլ նպատակ չունեմ: Թո՛ղ Աստված վկա լինի ինձ դրա համար, Աստված է երաշխավորն այն բանի, ինչ ասում եմ, թող Քրիստոսը վկա լինի ինձ դրա համար: Պայմանը կայացավ, և համաձայնություն եղավ վերոհիշյալ ամսաթվի շուրջ¹⁵²:

Էմիր Ֆախր ալ-Դին ալ-Մուկրի ներքինին ղեսպանների հետ ճանապարհ ընկավ Սսի տիրոջ մոտ՝ ձեռքին պայմանագիրը, և վերադարձավ վերոհիշյալ սահմանված գումարով: Նա [իր հետ] գերությունից վաճառականներ, մուսուլմաններ բերեց՝ իրենց ունեցվածքով և ապրանքներով: Եկավ նրա ղեսպանը՝ պարոն Վահրամը¹⁵³, որ նրա պետության մեծամեծներից մեկն էր: Ներկա էր նաև Քամանդուրը, ով միջնորդել էր այս հաշտության համար:

Երբ սուլթանի մոտ ժամանեցին, վերջինս ազատ արձակեց Դամասկոսում գտնվող բոլոր կալանավորված ղեսպաններին և նրանց սպասավորներին: Հրամայեց նաև ազատել Եգիպտոսում գտնվող նրա բոլոր ղեսպաններին: Սակայն ղերիների և գումարի մի չնչին մասն ուշացավ, և նա մարդ ուղարկեց, որ պահանջի այն: Պայմանագրով

նախատեսվում էր բոլոր գերիների ազատագրում, բայց Իբն Կարամանի որոշ առաջնորդներ և մի խումբ այլ գերիներ ուշացան: Կարամանյանների և ուսմեցիների հարցով փաստարկում էր, որ նրանք իր մոտ գերի են և իր թշնամիները, իրենց միջև պատերազմներ կան: Եվ եթե ինքը պիտի նրանց գերիներին ազատի, ապա թող նրանք էլ ազատեն իր գերիներին: Ռուսեցիների համար փաստարկում էր նաև, որ նրանք անհավատների հպատակության տակ են: Մեր տեր սուլթանն [այս առիթով] ասաց. «Բոլոր մուսուլմանների գործն իմ պարտականությունն է: Նրանք ինձանից բացի [այլ] սուլթան չունեն, որ արձակի իրենց շրթները և կովի իրենց թշնամիների դեմ: Անհրաժեշտ է, որ կարամանցի գերիներն արձակվեն, որովհետև նրանք իմ հպատակության տակ են և կարող են օգնություն խնդրել՝ միայն իմ դրոշը բարձրացնելով»: Դեսպանները պարտավորվեցին վերադարձնել նրանց: Բանը սրանով ավարտվեց, և ճանապարհեցին նրանց, ովքեր իրենց հետ պետք է բերեին [գերիներին]¹⁵⁴:

3.3 AL-ALṬĀF AL-ḤAFIYYA MIN AL-SĪRA
AL-ŠARĪFA AL-SULTĀNIYYA AL-MALIKIYYA AL-AŠRAFIYYA

«[ԳԻՐՔ] ՍՈՒԼՔԱՆ ԱԼ-ՄԱԼԻՔ ԱԼ-ԱՇՐԱՖԻ ԱԶՆՎԱԶԱՐԻ ԿՅԱՆՔԻ
ԹԱՔՆՎԱԾ ԲԱՐԵՀԱՃՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ»

էջ 48 [Գիշորայի 691 թ. Սաֆար ամիս – 1292 թ. հունվար/փետրվար]

Սաի տիրոջ հետ կապված պարագաներ

Դրանցից է այն, որ նա մոնղոլների մոտ էր դնացել, և այդ ժամանակ ժամանեց իր երկիրը՝ իր հետ բերելով մուսուլման գերիներին: Նա նրանց մի մասին ազատ արձակեց, մյուսներին բաշխեց իր բերդերում: Նա իր երկու գեսպաններին՝ Լիֆունին և Մինջալին¹⁸⁵, ուղարկեց սուլթանական արքունիք՝ Սաի կողմից ուղարկելով [սահմանված] հարկաչափից հարյուր հազար դիրհամ, իսկ ձիերից և ջորիներից՝ 58 դուռնի՝ այդ թվում 10-ը սրպես նվեր:

فُتُوْحُ بُوَايِ الْاِخْرَاءِ بَعْدَ اَوَّلِ مَا نَقَمْتُ دَرَّ الْبُخُوْرُ الْكُوَاغِبِ

اِذَا اَنْفَصَلَ الْبَحِيْشُ الَّذِي هُوَ سَائِرٌ لِنَفَاةٍ جَلِشَ بِالْغَنِيْمَةِ اَيِّبِ

● فِي اُمُوْرٍ تَتَعَلَّقُ بِصَاحِبِ سَيْبِ

مِنْ ذَلِكَ اِنَّهُ كَانَ يُوَجِّهُ اِلَى جِهَةِ النَّارِ فَلَمَّا كَانَ

اِي هَذَا الْوَقْتِ جَعَلَ اِلَى بِلَادِهِ وَمَعَهُ اَسَدِيٌّ مِنَ الْمُسْلِمِيْنَ

اَطْلَقَ بَعْضَهُمْ وَفَرَّقَ جَمَاعَةً مِنْهُمْ فِي بِلَادِهِ وَسَيَّرَ

رَسُوْلَهُ لِيَقُوْنَ وَمِنْ جَمَالِ اِلَى الْاَبْوَابِ الشَّرِيْفَةِ وَحَصَّدَ

Կանիբե ժամանած հայկական ղեկավարացիներից մասին
հաղորդումը Al-Altāf al-ḥafīyya-ի ձեռագրում
© Bayerische Staatsbibliothek, Cod.arab. 405, 68բ քերթ

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- 1 Կիլիկիո Հայոց Հեթում Ա արքան (կառ. 1226-1269 թթ.)՝ Կոստանդին Գունդստարչի որդին:
- 2 Իրանի մոնղոլական Իլխանության հիմնադիրն ու առաջին իլխանը 1256-1265 թթ.:
- 3 Ռուբն ալ-Դին Կիլիզ Արսլանն Դ-ն է՝ Ռուսի կամ Իգոնիայի սելջուկյան սուլթանության սուլթան 1248-1264/1265 թթ., ով հոր՝ Ղեյսա ալ-Դին Քալխասրով Բ-ի (կառ. 1237-1246 թթ.) մահից հետո դահլը կիսում էր եղբոր Իզլ ալ-Դին Քալխավուս Բ-ի (կառ. 1246-1259 թթ.) հետ:
- 4 Հին հունական Հերակլես Կրիստրան է (այժմ՝ Էրեզլի): Քաղաք է Փոքր Ասիայի Հարավ-արևմտյան հատվածում: Պատկանում էր Կարամանների թուրքմենական պետությանը, որի մայրաքաղաքն է եղել 1250-1256 թթ.: Տե՛ս J.H. Mordtmann-[Fr. Taeschner], "Ereğli", in *EF*, vol. 2, p. 705:
- 5 Հմմտ. Baybars al-Manṣūrī, Zubda, §. 88, ինչպես նաև ճույճի՝ Muhtār al-ahbār, §. 27; al-Nuwayrī, Nihāyat al-arab, §. 30, §. 165; al-'Aynī, 'Iqd-MMA, §. 1, §. 384: Այս դեպքը Հայ հեղինակներից արձանագրել են նաև Սմբատ Սպարապետն ու Հեթում Պատմիչ Կոռիկոսցին: «Ես խանն Հալայուն,- գրում է Սմբատը,- վասնզի յոյժ սրե՛ր զբազառն, առա՛նաց զկնի իւր իրաւադատ Մուղայի Արդույի, որ էկեալ զկնի թագաւորին մինչեւ յԱռակլի, եւ եկն անդ սուլտանն Հոռոմոց Ըռուզնատինն, եւ եղեմ անդ առաւ ինչ եւ եղին դաշինս սիրոյ երդմամբ, եւ առաքին խաղաղութիւն, եւ եղեմ նայր եւ որդի՝ թագաւորն եւ սուլտանն, եւ դարձան իւրաքանչիւր ի անդի իւր»: Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 241: Հմմտ. Հերոմ Պատմիչ, Ժամանակագրություն, էջ 53 և ՄԺ, հտ. 1, էջ 82:
- 6 Հնագույն արարական ցեղերից է, որ նախախլամական ժամանակաշրջանում բնակվում էր Կենտրոնական Արաբիայում: Արաբական նվաճումների ժամանակ աստիճանաբար զաղթել է Հյուսիսային Ասորիք: Բանու Քիլարը Մամլուքյան կենտրոնական իլխանությունը ճանաչել է միայն 1277 թ.:
- 7 Բերդաքաղաք Կիլիկիայի Հարավ-արևելյան մասում՝ եփրատի վտակ Սաջուրի ափին: Մի կարճ ժամանակ՝ 1155-1157 և 1204-1206 թվականներին, եղել է Կիլիկյան Հայաստանի կազմում:
- 8 Այս միջադեպը վկայում է, որ ալ-Ջահիբ Բայբարսի իլխանությունը նրա սուլթանության չորրորդ տարում անդամ միանշանակորեն չէր ընդունվում Ասորիքում: Տե՛ս նաև R. Amitai-Preiss, *Mongols*, p. 66:

- 9 Բերդ Դաշտային Կիլիկիայում՝ Թիլ Համդունի արևելյան կողմում՝ Անարգաբայից ոչ հեռու:
- 10 Վահրամ Համուցի իլխանն է, որի մասին հիշատակություն կա նաև Հայկական ազրյուրներում: Սմբատ Սպարապետի «Տարեգրքում» նա անվանվում է վերջինիս փեսա: Պարզվում է՝ Վահրամը 1259 թ. Մուսղաս բերդի Համար տեղի ունեցած կռվում քիչ է մնացել, թե՛ զոհվի, բայց շնորհիվ իր աները՝ փրկվել է մահից: Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 276: Հայտնի է նաև, որ 1273 թ. սույն Վահրամը Մուլեոնի տեր Լեոն և Ազլղարի իլխանների հետ մեկտեղ ապստամբել է Լեոն Բ արքայի դեմ: Տե՛ս ՀԶՀ, ԺԳ դար, էջ 434, ինչպես նաև նույն տեղում, էջ 81:
- 11 Տե՛ս նաև Baybars al-Manṣūrī, Zubda, §. 88, ինչպես նաև ճույճի՝ Muhtār al-ahbār, §. 27-28; al-Nuwayrī, Nihāyat al-arab, §. 30, §. 165; al-'Aynī, 'Iqd-MMA, §. 1, §. 384: Հմմտ. Ibn Haldūn, Al-'Ibar, §. 5, §. 480: Տե՛ս նաև M. Canard, "Le Royaume", p. 226:
- 12 Բերդ Հյուսիսային Ասորիքում՝ Անտիոքից 39 կմ հեռավորության վրա՝ Հալեպից Անտիոք տանող ճանապարհի վրա:
- 13 Նկատի է առնված Կիլիկյան Հայաստանին Հարավից Հարող Անտիոքի իլխանապետությունը և Տրիպոլիի կոմսությունը, որի իլխանն այդ ժամանակ Բահեմունդ Զ-ն (Անտիոքի իլխան՝ 1251-1268, Տրիպոլիի կոմս՝ 1251-1275 թթ.) էր:
- 14 Այսպես ձախողվեցին Հեթումի նաև Այնթաբ ուղղված ռազմարշավները, որոնց մասին Հայկական ազրյուրներից Համառոտ կերպով խոսում է միայն Սմբատ Սպարապետը՝ Հայկական զորքերի պարտությունից հիմնական պատճառը համարելով ձմեռային անբարենպաստ պայմանները («զի ժամանակն ձմեռնային է»): Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 242-243: Մամլուքյան պատմիչներից Շաֆի իրն Ալին, խոսելով Այնթաբի արշավների մասին, հարկ է համարում ընդգծել, որ «Հայքում իբն Կուստանանիը՝ Սսի անը, հայկայան հողերի վրա հարձակվեց Հուլաղուի հրամանով» (ընդգծումը մերն է-Գ.Դ.): Տե՛ս Šāfi' ibn 'Alī, Husn al-manāqib, §. 154:
- 15 Մամլուքյան հետախուզության և մամլուք-մոնղոլական հակամարտության մեջ հետախուզական (լրտեսական) և հակահետախուզական միջոցների կիրառման մասին հետաքրքիր վերլուծություն է կատարել Ռ. Ամիտայը: Տե՛ս R. Amitai-Preiss, *Mongols*, pp. 139-156:
- 16 Քաղաք Արևելյան Գալիլեայում՝ Միջերկրական ծովի ափին: 1191-1229 և 1244-1291 թվականներին եղել է Երուսաղեմի խաչակրաց թագավորության մայրաքաղաքը: Գրավել է մամլուքյան սուլթան ալ-Մալիք ալ-Ալբարգի կողմից 1291 թ.:
- 17 Նավահանգստային քաղաք Եգիպտոսում՝ Միջերկրական ծովի ավազանում՝ Նեղոսի Դելտայում:
- 18 R. Amitai-Preiss, *Mongols*, p. 153.
- 19 Բերդի Հստակ տեղագրությունն անհայտ է: Ենթադրելի է միայն, որ գտնվում էր Մերզիսան (Հայկական և ասորական ազրյուրներում՝ Փարզման) կամ Մարգաբան գետի վրա, որը Հռոմկլայի մոտ թափվում է Եփրատը: Իրն ալ-Աղիմ պատմիչն այս

բերդի մասին գրում է: «Այ-Մարգարանի նիշատակությունը, որի ճիշտ անունն այ-Բարանն է, որը փոխվել է, և այս անունն է գերիշխող դարձել: Այն միջնաբերդ ունի, որ փրվել է և ավերվել: Այն [նաև] մեծ շեն ունի, որի բնակչությունը հայեր են՝ զինվորներ: Այն Կիլիջ Արալան իբն Մասուդ իբն Կիլիջ Արալան սելջուկի ձեռնում էր, և [սպա] նուր այ-Գին Մահմուդ իբն Ջանգին գրավեց այն և խլեց նրա ձեռքից: Մրա պատնառն այն էր, որ Կիլիջ Արալանը ճնշել էր և գերիշխել Ջու այ-Նուսն Դանիշմենի անունով արեային, որի ձեռնում էին Մալաթիան, Սիվասը և այլն, և նրա ախուրյանը խլել նրանից: Նուր այ-Գին Մահմուդ իբն Ջանգին նրա մտա աղղվեց և նրան միացավ: Նա (իմա՝ Ջու այ-Նուսնը) վերջինս պատվի արժանացրեց, նա նրա (իմա՝ Ջու այ-Նուսնի) համար միջնաբերդ Կիլիջ Արալանի առաջ, բայց վերջինս չընդունեց նրա միջնաբերդը: Նա (իմա՝ նուր այ-Գինը) նրա երկիր մտավ և գրավեց ասորիյան տիրույթներ՝ ինչպես այ-Մարգարանը, Քեսունը, Մարաշը, Բենեսան: Կիլիջ Արալանը քույլ էր նրան դիմադրելու համար: [Բայց երբ] ֆրանկները շարժվեցին Համսի կողմերը, նուր այ-Գինը նրանց պատնառով վերադարձավ»: *Տե՛ս Ibn al-ʿAdīm, Buḡyat al-talab*, §. 325: *Իզզ ալ-Գին Իբն Շադդադն իբն Ալ-ʿĀḏāq al-ḥaṭira երկուստեք համառոտված ձևով փոխառել է Իբն ալ-Ազիմի հազորդուսը, միայն թե այ-Բարանանի փոխարեն բերդանունն այ-Մարաբան ձևով է տվել: Իբն Շադդադից բերդի մասին հազորդուսը նույնությունը փոխառել է Իբն ալ-Շիհնան: Հմմտ. ʿIzz al-Dīn ibn Ṣaddād, Al-ʿĀḏāq al-ḥaṭira*, §. 1.2, §. 114; *Ibn al-Šiḥna, Al-Durr al-muntahab*, §. 171: *Կարելի է ենթադրել, որ արար պատմիչների երկերում զրջագրական սխալների հետևանքով է Փարզման (al-Barsmān) բերդանունն ասորիականացրել փոխարեն այ-Մարգարանի: Ամրոցի գրավման մասին տեղեկությունները հազորդուս նաև Գրիգոր Երեցն ու Սմբատ Սպարապետը: Տե՛ս Մատթեոս Ունտյեցի, Ժամանակագրություն, զբոսբար բնագիրը Մ. Միլիթ-Աղամյանի, Ե. Տեր-Միքայելյանի, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Հրաչ Բարթիկյանի, Երևան, 1991, էջ 460-461; Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 183: Փարզման բերդի գրավման հանգամանքները ներկայացված են Միքայել Ասորու «Ժամանակագրություն» հայերեն տարբերակներում: Տե՛ս Միխայել Ասորի, Ժամանակագրություն, 1870, էջ 435-436 և նույնի՝ 1871, էջ 430-431: Երկի ասորիերեն բնագրի համապատասխան հատվածը պարփակող մասը չի պահպանվել, բայց Բար Հեբրեոսն իր ժամանակագրության մեջ պահպանել է իր սկզբնաղբյուրի հազորդուսը: Տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 281: 20 Հմմտ. al-Nuwayrī, Nihāyat al-arab, §. 30, §. 166; Šāfiʿ ibn ʿAlī, Ḥusn al-manāqib, §. 157: Հեթում արքայի՝ 1264 թ. մարտ-ապրիլ ամիսներին տեղի ունեցած այս արշավանքը վերջինն էր Ասորիքի բնակավայրերի դեմ ուղղված նրա ռազմական ձեռնարկումներից: Ինչպես նախորդ արշավանքների ժամանակ, այս դեպքում նույնպես Մամլուքյան իշխանությունները հապշտապ գործեր կենտրոնացրին՝ կասեցնելու հայկական ուժերի առաջընթացը: Ահա այսպիսի անհաջող վարժան ունեցան 1262-1264 թթ. Հայկաի շրջակայքի վրա հայոց արքայի ձեռնարկած արշավանքները: Պարզ է, որ Հեթումը, մոնղոլների և Անտիոքի ֆրանկների սոսկ փոքրաքանակ ուժեր տրամադրության տակ ունենալով, չէր կարողանալու որևէ կերպ առավելության հասնել մամլուքների նկատմամբ: Ի. Ամիրտյանը գրում է, որ Հեթումի ռազմարշավներն, այնուամենայնիվ, որոշ ազդեցություն ունեցան, դուրս ոչ այնպիսին, ինչպիսին որ «Հեթումը կակնկալեր»: Նախ զբանք մոնղոլներին համոզեցին, որ «Եթե իրենց ուզում են Հյուսիսային Ասորիք ներխուժել, ապա իրենք անձամբ պիտի անեն: Միևնույն ժամանակ հայկական արշավներն անկասկած սելջուկ Կիլիկյան Հայաստան ներխուժելու Բայբարսի ցանկությունը՝ վերջինից լինելու նրա հակամտությունական գործողությունների համար»: Տե՛ս R. Amitai, "In the Aftermath", p. 12: Մա նույնն է, ինչ որ մամլուք պատմիչ Իբն Քասիրն է գրում Հայ-մամլուքյան հակամարտության ակունքների մասին. «Եվ սովորաբար նրանք անվանատակարն էին մուսուլմանների համար մոնղոլների ժամանակներում: Եթե նրանք գրավել էին Հայկուն ու այլ քաղաքներ, մեծաթիվ ու մեծամասնակ մուսուլման կանանց և երեխաների էին գերեզմանել, իսկ դրանից հետո էլ Հուլադուի օրով [պարբերաբար] սալթանական էին մուսուլմանների երկրները (նաղերը)»: Տե՛ս Ibn Kaṭīr, Al-Bidāya, §. 17, §. 466: Նման մի ձևակերպման էլ հանդիպում ենք Իբն Խալդունի «Պատմություն» մեջ. «Եթե Հուլադուն գրավել էր Իսաբը և Ասորիքը, Հեթումը նրա հպատակության տակ էր մտել և [դրանով] իր իշխանության հաստատումը ստանալով՝ քաղաքների հետ մասնակցել նրանց ասորիյան արշավանքներին»: Տե՛ս Ibn Ḥaldūn, Al-ʿIbar, §. 5, §. 480: Եզրագրության սուլթանի պատասխան գործողությունները երկար սպասեցնել չտվեցին: Սմբատ Սպարապետը գրում է, որ Բայբարը ցանկացել է Կիլիկիա ներխուժել դեռ 1264 թ., սակայն սուլթանի լրտեսները, իմանալով, որ Հեթումը մեծաքանակ ուժեր է կենտրոնացրել իր երկրի սահմանազրկին, խորհուրդ են տվել մամլուք ինքնակալին առժամանակ հրաժարվել իր մտքից: Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 244-245:*

Կանխազգայով իր երկրի սպառնացող վտանգը՝ Հեթումը փորձեց ինչ-որ կերպ շտկել հարաբերությունները Բայբարսի հետ՝ նրան տեղեկություններ հայտնելով Իլխանության գործերի մասին, բայց դա նրան չհաջողվեց: Արդեն 663 թվականի Ռամադան ամսի (1265 հունիս / հուլիս) ներքո Շաֆի իբն Ալին գրում է Հեթումից Բայբարսի մոտ ուղարկված մի ձախողված դիվանագիտական առաջարկության մասին. «Այդ ամսում, երբ սուլթանը գտնվում էր Բահը այ-Աշմուում, Գիլյատի կողմից ժամանեցին Հայթումի՝ Հայոց իշխողի դեսպանները հաշտության նպատակով՝ իրենց հետ բերելով քանկարձեղ կնիքներ: Նրանց խաղաղության առաջարկին համաձայնություն չտրվեց՝ չներկայվեց այն, ինչ գործել էին: Այնպես պառանդեց, որ պատվիրակության առաջնորդները երկուսը վիճեցին, և նրանցից մեկը դաժակով հարվածեց մյուսին և սպանեց, իսկ սուլթանն էլ նրանց կախարան քառաբանեց նրան: Կասպաններ նրա համար [ներում] խնդրեցին, բայց [սուլթանն] ընդառաջ չզմաց: Նրանք դիմեցին որոշ կնիքների միջնորդությանը՝ պարտավորվելով նրան արժանի պատմի արժանացնել իրենց երկրում, և համաձայնեց սրան»: Տե՛ս Šāfiʿ ibn ʿAlī, Ḥusn al-manāqib, §. 208-209:

Սրանով Հեթումի փորձերը չեն ավարտվել: Ըստ այ-Յուեինիի՝ 663 թ. Շավվալ ամսին (1265 թ. հուլիս-օգոստոս) Կահիրե է կեկել Հեթումի դեսպանն ու հայտնել Հուլադուի մահվան մասին: Տե՛ս al-Yūnīnī, Dayl (Ḥaydarābad), §. 2, §. 322, ինչպես նաև al-Dahabī, Tārīḥ al-Islām, §. 49, §. 19: Տե՛ս նաև R. Amitai-Preiss, Mongols, pp. 115-116: Ալ-Ջահաբիի «Իսլամի պատմությունը» երկում խիստ ուշադրավ հազորդուս է պահպան-

վել, որ չի Հանդիպում ոչ մի այլ Հեղինակի մոտ: Ըստ պատմիչի՝ Կահիրեի ղեկավար ռազմական պատժ չէր հանձնարում զաղտոնի նամակագրական կապի մեջ է եղել ռազմավարական ալ-Բիրա (Գիր) բերդամրոցի կառուցիչ Հետ, ով փորձել է վաճառել բերդը Հայոց արքային: Այս մասին, սակայն, Հայտնի է դարձել, և կարին կախաղան է բարձրացվել: *Sb'u al-Dahabi, Tārīḥ al-Islām, ǧ. 49, ʃ. 19:*

21 Հմմտ. *al-Maqrīzī, Al-Sulūk, ǧ. 1.2, ʃ. 513:* Այս միջադեպն իլլամնուլթյանը ենթակա տարածք ներխուժելու մամլուքների առաջին փորձն էր, և ուշագրավ է, որ նրա թիրախը Հենց երկու տերուլթյունների սահմանագլխին գտնվող Հայոց Հայրապետական նստոցն էր: Մյուս կողմից սա ընդամենը նախերգանքն էր այն պատժիչ դործողությունների ու փորձության, որ նախապատրաստել էր սուլթան Բայբարը Հայոց արքայի համար՝ Հարմար ժամանակի սպասելով:

22 Խոսքն այստեղ ալ-Բիրա ռազմավարական բերդի վերաշինման մասին է:

23 Թե՛ Բաշիրը (Հայկական աղբյուրներում՝ Թ[ը]լպաշար, Թի՛ր Ավետեաց, արաբ.՝ Tall Bāšir, լատ.՝ Turbessel) բերդաքաղաք էր Հյուսիսային Ասորիքում՝ Սաջուր գետի վրա՝ Այնթաբից 25 կմ հարավ-արևելք: Տեղանունն առաջին անգամ Հիշատակվում է դեռ ասորեստանյան արձանագրություններում: Բերդը ռազմավարական մեծ նշանակություն է ձեռք բերել Սալադինի արշավանքների ժամանակաշրջանում՝ կոպտինսոն դառնալով տարածաշրջանում գերակա քաղաքական ուժերի համար:

24 Այս ալ-Գին Ալդաբին ալ-Բուենդուկդար ալ-Սալիհին է՝ Բայբարի ավագն էր՝ Խաթաբ, ում անունով էլ նա ալ-Բուենդուկդարի էր կոչվում: Բայբարի կառավարման առաջին տարիներին նրան են վստահվել մի շարք ղեկավարողական և մարտական առաքելություններ: *Sb'u al-Şafadī, Wāfi, ǧ. 9, ʃ. 275; Ibn al-Şuqāṭī, Tāli, ʃ. 17-18:*

25 Ճիշտ է՝ այլ մտերմաստիք այս «Բամանգուրի» մասին չեն Հաղորդվում, բայց խոսքն այստեղ ամենայն հավանականությամբ Տանարական ասպետական օրդենի՝ Կիլիկյան Հայաստանի հրամանատարի մասին է: Հատկանշական է, որ ըստ մամլուքյան աղբյուրների 1285 թ. Հայ-մամլուքյան Հաշտության պայմանագիրը կնքվել է «Ասի Բամանգուրի» միջնորդությամբ: Այդ մասին Մուհի ալ-Գինի տեղեկությունները նրա *Taṣīf al-ayyām* երկից կներկայացնենք ստորև:

26 Մեզ Հայտնի այլ սկզբնաղբյուրներում այս վայրի մասին տեղեկություններ չեն գտնվում:

27 Էմիր Բադր ալ-Գին Բայբարի ալ-Շամսի ալ-Սալիհին է: Բայբարի մտերիմ էմիրներից էր ու գինակիցը: Ալ-Մանուր Կալափունի կողմից ձեռքակալվել է և ինը տարի անցկացրել բանտում: Ազատ է արձակվել ալ-Մալիք ալ-Աշրաֆի կողմից: Կրկին բանտարկվել է ալ-Մանուր Լալիհի կողմից և մահացել բանտում Հիջրայի 698 թ. (1296/1297 թթ.): *Sb'u al-Şafadī, Wāfi, ǧ. 10, ʃ. 225-226:*

28 Ակնհայտ է, որ Սին արշավելով ալ-Մալիք ալ-Չահիրը նպատակ ուներ պատժել Հայոց թագավորությանը մոնղոլների հետ գործակցության, նրանց օգնությամբ 1260 թ. ձեռք բերած տարածքային նվաճումների և զրանից հետո էլ մուսուլմանական Հոգերի

վրա գործած սարբերական հարձակումների համար: Հետևապես, Եգիպտոսի սուլթանի արշավանքի հիմնական շարժառիթը նրա ներկայացրած տարածքային պահանջներն էին, ավելի կոնկրետ՝ «զբերով՝ զոր Տարաթին ուժովն առեալ եր Հայոց քաղաքն Լեթում», ինչպես որ Վարդան Արևելացին է գրում: *Sb'u Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 162:* Իրադարձությունների պահանջն և անմիջական մասնակից Հայոց սպարապետ Սմբատը հաստատում է սա («ամրոցս և այլ տեղիս որ եր սահմանակից աշխարհի իւրոյ»)՝ սուլթանի պահանջած բերդերից առանձնապես նշելով Շեհր (Շիր կամ Շիհ ալ-Հադիդը), որ պիտի դառնար առևտրական հանդույց («վաճառանոց») երկու երկրների միջև: *Sb'u Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 245-246:* Բար Հեբրեոսի մտա ավելի կոնկրետ պնդումներ ենք գտնում սուլթանի՝ Հայոց թագավորության դեմ պատերազմ սանձազերծելու առևտրատեսեսական շարժառիթների մասին: Ըստ ասորի մատենագրի երկր արարական խմբագրության՝ սուլթանն առաջինն է դիմել Հայոց արքային (Hātim malik al-arman) և հնազանդություն ու [գլխա]հարկ պարտագրելուց բացի պահանջել է թույլ տալ մուսուլմաններին Հայերից ձեռք, ջորիներ, ցորեն, դարի և երկաթ գնել, ինչի փոխարեն ինքն էլ կթույլատրեր, որ Հայերն ազատ առևտուր անեն Ասորիքում: *Sb'u Ibn al-İbrī, Muhtaşar, ʃ. 498, ինչպես նաև Ենյեթի՝ Chronography, p. 445 (Հաղորդումները նույնական չեն): Հմմտ. Ibn al-Fuwaṭī, Al-Hawādīq al-ǧāmi'a, ʃ. 254: Ինչևէ, Բայբարի առաջադրած բոլոր այս պայմանները Հայոց արքան անպատասխան էր թողնել՝ վախենալով մոնղոլների արձագանքից: Բայբարն արդեն առավել քան վճռական էր՝ ձեռնարկելու մամլուքների առաջին ներխուժումը Կիլիկիա, որ պիտի դժոխակ հետևանքներ ունենար Հայոց թագավորության համար: Այդ հարվածին դիմակայելու համար Կիլիկյան Հայաստանը բավարար ուժեր չուներ, իսկ մոնղոլներից էական օգնություն ստանալու հույսերը նույնպես անհետանկարային էին թվում: Այնուամենայնիվ, ըստ Բար Հեբրեոսի (Իբն ալ-Իբրի)՝ Հեթումն իբր աջակցություն է խնդրել Ռումի սուլթանության մոնղոլական զորքերի հրամանատար ոմն Նաջմի-ից. սակայն վերջինս մերժել է՝ պատճառարանելով, որ ինքն Արաղայի համապատասխան հրամանը պետք է ստանա զրա համար: Այդ օգնությունն, ի վերջո, ժամանել է, բայց մամլուքներն արդեն հեռացել էին երկրից: *Sb'u Ibn al-İbrī, Muhtaşar, ʃ. 498-499 և Հմմտ. Ենյեթի՝ Chronography, p. 445-446: Սմբատը և Գրիգոր Ակնեցցին հաստատում են Բար Հեբրեոսին՝ գրելով, որ Հեթումը զորքի մի մասն իր հետ վերցնելով «զմացեալ եր ի խնդր առ ազգն նետողաց՝ գալ յօգնականութիւն զօրաց իւրոց»: *Sb'u Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 246 և Գրիգոր Ակնեցցի, Պատմութիւն թաթարաց, էջ 54 («ի մէջ Արլստին և Կոկսոնոյ»), ինչպես նաև R.P. Blake, R.N. Frye, "History of the Nation", p. 356: Վանուսայ Բարունայ Ռոսանուր պատմութիւն Ռուբենեանց, ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ Վարդապետ Շահնազարեանց, Փարիզ, 1859, էջ 223, ով սխալմամբ այս արշավանքի մասին հիշում է Անտիոքի գրավումից (1268 թ.) հետո եղած գեղքերի նկարագրության մեջ:***

29 Ակնարկում է Հեթումի «աստիխյան արշավաններ», որոնց համար եղիպտոսի սուլթանը շատ դժան պատիժ էր պատրաստել Հայոց թագավորության համար: Մամուլը սուլթանի համբերությունը հավանաբար հատեց այն ժամանակ, երբ նույն 1264 թ. դեկտեմբեր - 1265 թ. փետրվար ամիսներին մոնղոլները (1 թուժան, այն է՝ 1000 հոգի) Դուրբայ (Durbāy) զորավարի գլխավորությամբ փորձեցին գրավել ռազմավարական խոշոր նշանակություն ունեցող ալ-Բիրա բերդամրոցը: Տե՛ս Ibn 'Abd al-Zāhir, Al-Rawḍ al-zāhir, ֆ. 221-225; Baybars al-Manṣūrī, Zubdat al-fikra, ֆ. 95; al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 1.2, ֆ. 523-525: Տե՛ս նաև R. Amitai-Preiss, Mongols, pp. 112-113: Սմբատ Սպարապետի հաղորդմամբ՝ մոնղոլ հրամանատարը բերդի պաշարմանը մասնակցելու կոչ արեց նաև Հայոց արքային, ով այդ ժամանակ Հայտնություն տոնն (Հունվարի 6) էր տոնում թե՛լ Համբուս բերդում: Վերջինս ընդառաջ զնաց նրա կոչին և իր գորարանակի գլուխ անցած՝ շարժվեց մոնղոլներին աջակցելու: Արաբ պատմիչները չեն խոսում ալ-Բիրան պաշարած մոնղոլներին օգնության շտապող Հայկական ուժերի մասին: Դեպքերի հետագա ընթացքի մասին միակ հաղորդողը մնում է Սմբատը. «Եւ յայնժամ եմա առ թագաւորն համբաւ դառնալոյն Տուրպային ի Պոլն, վասն պատճառի գալաւեան սուլտանին եղիպասի ի վերայ նորա, եւ թագաւորն լուսաւ զայն դարձաւ ի տուն իւր»: Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 244: Բացի սուլթանական զորքերի առաջնապետների՝ մոնղոլների անակնկալ նահանջի պատճառներից մեկն էլ հավանաբար եղել է Հուլիանի մահվան (1265 թ. փետրվարի 8) մասին վրա հասած լուրը: Իլխանության գահին բազմեց վերջինիս որդին՝ Արաղան (1265-1282 թթ.), ով Ոսկե Հորդայի հետ պատերազմով գրաված լինելով՝ ստիպված եղավ առժամանակ սառնեցնել մոնղոլ-մամուլքյան հակամարտությունը: Բայրաբուց սա պատեհ միջոց համարեց Հայոց թագավորի հետ հարաբերությունները պարզելու համար: Տե՛ս Տ.Ր. Խյճճա, Al-'Ālāqāt, ֆ. 198: Սմբատի համաստմամբ՝ ալ-Չահրե Բայրաբուի զորքերն առաջին անգամ մտադրվել են Կիլիկիա ներխուժել արդեն 1265 թ., երբ գտնվում էին Անտիոքի մերձակայքում, սակայն տեսնելով Հայոց բանակի բազմաքանակությունը՝ ընկրկել էին և նահանջել: Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 244: Դեպքերի հետագա ընթացքի ֆոնին մամուլքյան բանակի նահանջին Սմբատի տված բացատրությունը («հայոց բանակի բազմամակուրթունս»), քիչ հավանական է թվում: Հմմտ. M. Canard, "Le Royaume", p. 225; R. Amitai-Preiss, Mongols, p. 114:

Մամուլքյան սուլթանության հետ ընդհարման անխուսափելիությունը և իր երկրի գլխին կախված վտանգի անկանխատեսելի հետևանքները քաջ զիտակցում էր նաև Հեթումը, ով ելիպտոսի սուլթանի հետ խաղաղ միջոցներով համաձայնության դալու մի քանի հուսահատ փորձ արեց: Ճիշտ է՝ Իրն Աբդ ալ-Չահրեն այդ մասին հիշատակություն չունի, բայց ալ-Յունիսի պատմիչից տեղեկանում ենք, որ 1265 թ. ամռանը (663 թ. Շավվալ ամսին) Սաի տերը (sāhib Sīs) դեսպանություններ է Հղել՝ տեղեկացնելու սուլթանին «ձուլաղալի մահվան, ինչպես նաև այն մասին, որ նրա զորեղը համախառնվել են նրա որդու՝ Աբաղայի շուրջ, և որ Բեբեկն հարձակվել է նրա վրա և պարտության մատնել»: Տե՛ս al-Yūnīnī, Dayl (Haydārābad), ց. 2, ֆ. 322: 1266 թ. մայիս-հունիս ամիսներին, երբ

Բայրաբուն արդեն պաշարման օղակի մեջ էր առել Սաֆազը, կրկին նրան են ներկայանում «Սաի տիրոջ» դեսպանները նվերներով, որոնք նա մերժում է և հրաժարվում անդամ նրանց բերած նամակն ընդունել: Տե՛ս Անդ, ֆ. 343, ինչպես նաև Ibn Tagrī Birdī, Al-Nuǧūm al-zāhira, ց. 7, ֆ. 125: «Եւ բազում անգամ թագաւորն առաքեաց առ սուլտանն առս պատուաւորս գերազոյն պարզելով զի արասցն սեր, և սուլտանն ոչ աւնոյր յաննն», - կարծես թե հաստատում է Սմբատը մամուլք պատմիչների վկայությունները: Ակնհայտ էր, որ խաչակիրների ծովափնյա տիրույթները (Կեսարիա, Հայֆա, Արսուֆ, Սաֆազ և այլն) գրավելու ծրագրերում՝ ելիպտոսի տիրակալն անխուսափելիորեն ներառել էր նաև Հայոց թագավորությանը հարվածելու օրահարցը: Հմմտ. Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 245:

30 Հմիր Իզդ ալ-Դին Ուղան Սամ ալ-Մաուք ալ-Ռուքնին է, ով 1241 թ. Հարբեյայի ճակատամարտում պարտության է մատնել Ֆրանկյան զորքին: 1271 թ. մեղադրվել է Հակաիշխանական դավադրության մեջ, կալանավորվել է սուլթան Բայրաբուի կողմից և մի քանի տարի անց մահացել բանտարկության մեջ: Տե՛ս al-Safadī, Wāfī, ց. 10, ֆ. 16: Մամուլքյան որոշ աղբյուրներում, ինչպես որ ալ-Մալիքի մոտ՝ Ուղան, ոմանց մոտ՝ Իզան (Īḡān), այլուր՝ Յուղան (Yūǧān): Ավելի շատ Հայտնի էր իր Samm al-mawt («Մահվան քայլ») մականվամբ: Ըստ Հայկական աղբյուրների (անվանված է «Ռզան», այլուր՝ «Սվիթթ»)՝ Հնեց նա էր ղեկավարում մամուլքյան զորքերը, այլ ոչ թե Համայի տեր ալ-Մալիք ալ-Մանսուրը: Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 246: Վարզան Վարդապետ, Հաւաքումն, էջ 162: Սամուկ Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիւն, էջ 253: Ուշ շրջանի մամուլք Հեղինակ Իբն Իյասը նույնպես գրում է, թե զորքի «ղլխավորը» (bāš al-'askar) Սամ ալ-Մաուքն է եղել: Տե՛ս Ibn Iyās, Badā'ī al-zuhūr, ց. 1.1, ֆ. 325: Նույնը տե՛ս նաև Ibn Duqmaq, Al-Nafḥa al-miskiyya, ֆ. 59: Իբն ալ-Յուլաֆտին էլ սխալմամբ գրում է, թե արշավանքն անձամբ սուլթանն է ղեկավարել: Տե՛ս Ibn al-Fuwaṭī, Al-Hawādīf al-ǧāmi'a, ֆ. 254:

31 Ապադա սուլթան ալ-Մանսուր Կալավունն է (Գ. Դ.):

32 Հմմտ. Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 246 («...և եկեալ հապին միջև ի տեղին, որ կոչէր Նիկուպոլիս առ ստորոտով լիւինն, որ կոչի Սեա»):

33 Հեթումին արված այս անունը հավելյալ մեկնաբանման կարիք ունի: Նույնն է նաև ալ-Նուվայրիի մոտ, ում սիզբեսաղբյուրն անկախված կրկին Բայրաբուի կենսագրի երկն է: Տե՛ս al-Nuwayrī, Nihāyat al-arab, ց. 30, ֆ. 185: Ալ-Այնիի 'Iqd al-ǧumān երկի հրատարակության մեջ al-malik և Hayūm բառերի միջև բառ է բաց թողնված, որը կրկի հրատարակիչ Մուհամմադ Ամինին անընթեռնելի է եղել ձեռագրից: Ակնհայտ է, որ այդ բառը al-muǧīr-ն է եղել: Տե՛ս al-'Aynī, 'Iqd-MMA, ց. 1, ֆ. 422: Այս al-Malik al-Muǧīr-ը, որ առաջին իսկ Հայացքից տիտղոսի տպավորություն է թողնում, արարերենից բառացի թարգմանած նշանակում է «հովանավոր արևա»: Բայց ինչու՞ պետք է մուսուլման մատենագիրը, որ մեկ այլ տեղում իսլամական Հողերի նկատմամբ Հայոց արքայի կատարած ոտնձգությունների պատճառով նրա արարքները արձագանք (ընագրում՝

murāwagāt al-takfūr, այն է՝ «քաղաքի խուսմանկությունը» կամ «նենգամտությունը») է անվանում, այսպիսի պատմանուն վերագրեր Հեթումին: Սա թույլ է տալիս մեզ պատմական հիմքում Հայկական հետք որոնել: Շատ հավանական է, որ Հեթումի կողմից Բայբարսին ուղարկված դեսպաններն արքային այդպես ներկայացրած լինեն, իսկ սուլթանական դիվանատան զխավոր քարտուղարը հարկ համարած լինի սա արձանագրել որպես նրա անվան բաղադրիչ կամ մականուն: Չէ՞ որ, ինչպես Լևոն Տեր-Պետրոսյանն է ցույց տվել, միջնադարի Հայկական աղբյուրները բազմաթիվ պատմանուններ են վերագրում իր սրբակենցաղությունը հայտնի Հեթումին, և նրանց մեջ ամենատարածվածը «բարեպաշտն է»: Ջուր չէ, որ նրան «բարեպաշտ» կամ «հավատացյալ արքա» է անվանում նաև Բար Հերբերտը: Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, *Թաշակիրները*, Հտ. Բ, էջ 290 և Bar Hebraeus, *Chronography*, p. 446 (երկի արաբական խմբագրության մեջ հատվածը բացակայում է): Այն, որ Հեթումին վերագրված ուջիր-ն իսկապես որպես մականուն է դիտվել մուսուլմանների կողմից, օգնում են հասկանալ հենց մուսուլման մատենագիրները: Մասնավորապես ալ-Ջահաբին իր «Իվալմի պատմություն» երկում «Կոստանյիսի որդի Հեթումին» ներկայացնում է որպես al-kalb, al-Malik al-Muğīr, Šāhib Sīs («ունի՝ հովանավար արքան՝ Սիս տերը»): Ակնհայտ է, որ վերափոխական բառի կողքին al-Malik al-Muğīr-ն ընկալվում է բացառապես որպես մականուն, այլ ոչ թե պատմանուն: Տե՛ս al-Dahabī, *Tārīḥ al-Islām*, ց. 49, ք. 297-298:

34 Առաջինը, որ աչքի է զարնում Իբն Աբդ ալ-Ջահիրի այս վկայության մեջ, անսխառնեղմ է, քանզի Հայտնի է, որ Հեթումը վանք է քաշվել միայն 1270 թ.: Նա, թվում է, իրադարձությունների կենտրոնում լինելով, նման վրիպում չպետք է թույլ տար: Նույն այս սխալը հայտնաբերում ենք Մուհի ալ-Դինից անմիջականորեն և միջնորդաբար օգտված հեղինակներին՝ Բայբարս ալ-Մանսուրիին, ալ-Նուվայրիին, ալ-Այնիին մոտ: Տե՛ս Baybars al-Manṣūrī, *Zubdat al-fikra*, ք. 105, ինչպես նաև ճայնի՝ Al-Tuhfa al-mulūkiyya, ք. 58 և Muhtār al-aḥbār, ք. 32; al-Nuwayrī, *Nihāyat arab*, ց. 30, ք. 185; Ibn Haldūn, *Al-'Ibar*, ց. 5, ք. 480; Al-Maqrīzī, *Al-Sulūk*, ց. 1.2, ք. 551-552; al-'Aynī, *Iqd-MMA*, ց. 1, ք. 422: Այսպիսով, հետագա մատենագիրներին վրիպման ակունքն Իբն Աբդ ալ-Ջահիրն է: Սխալը, սակայն, համատարած չէ, քանի որ աղբյուրների մի խմբի (օրինակ, Աբու ալ-Շիրազի, Իբն ալ-Մուղայզիլի և դպտի Մուֆադալի) մոտ Հեթումի վանք քաշվելու մասին հաղորդումը չենք գտնում: Նրանցից համացի պատմիչ Իբն ալ-Մուղայզիլը (Իբն Վասիլի չարունակող) գրում է. «[Այդ ժամանակ] Սիս տերը Հայրումն էր, ով ամրացրել էր կիճը (darband, այլուր կոչում է darband Marī, այն է՝ «Մառիի կապան» - Գ. Դ.) և դրանց վրա Բարանտ մեմնաներ տեղակայել՝ իր զորեղ ու որդի կանին կանգնեցնելով կիճի վրա ձվաղ լեռան վրա»: Տե՛ս Ibn al-Muğayzil, *Ḍayl*, ք. 61: Հմտ. Mufaḍḍal ibn Abī al-Fadā'il, *Al-Nahj al-sadīd* (PO, t. 12), ք. 152 [p. 494], ինչպես նաև Abū al-Fidā', *Al-Muḥtaṣar*, ց. 2, ք. 333, ով Վասակի փոխարեն Կոստանդին պայլի հոր անունը Վասիլ (Bāsīl) է տալիս: Տե՛ս նաև Ibn al-Wardī, *Tatimmat al-Muḥtaṣar*, ց. 2, ք. 218, ինչպես նաև Լ.Թ. Նալբանդյան,

Արաբական աղբյուրները, էջ 272: Իզզ ալ-Դին իբն Շադդադի վկայությամբ՝ Հեթումը «կապանի (darb) վրա երկու աշտարակ էր կառուցել և այն խիստ ամրացրել. որպեսզի թույլ չտա ոչ մի կապան մտնել»: Տե՛ս 'Izz al-Dīn ibn Šaddād, *Al-'A'lāq al-ḥaṭīra*, ց. 1.2, ք. 342:

35 Հայկական աղբյուրներից և Բար Հերբերտի երկի ասորական և արաբական խմբագրություններից տեղեկանում ենք, որ Լևոնի՝ արաբադիր մատենագիրների կողմից հիշատակված այս «եղբայրը» Հեթում արքայի մյուս որդի Թորոսն էր, kandāsābl-ը հենց ինքը՝ Սմբատ Սպարապետն է, իսկ նրա գերեզմարված որդին Վասիլ Թաթարն է: Տե՛ս Գրիգոր Ալենցի, *Պատմութիւն թաթարաց*, էջ 54, ինչպես նաև R.P. Blake, R.N. Frye, "History of the Nation", p. 356: Վարդան Վաղապետ, *Հաւաքումն*, էջ 163; Bar Hebraeus, *Chronography*, p. 446, ինչպես նաև ճայնի՝ Muḥtaṣar, ք. 498 և հատկապես՝ Սմբատ Սպարապետ, *Տարեգրք*, Վենետիկ, էջ 247, ըստ որի՝ գերեզմարվածների թվում էին նաև ծիրարտ անունով ենթադրաբար Փրանկ իշխան, ինչպես նաև Ատոմ անունով մի Հայ իշխան: Վասիլ Թաթարը Սմբատի այն որդին էր, ով ծնվել էր այն մոնղոլ կնոջից, ում նրան Գուլուկ խանն էր նվիրել Կարակորումում եղած ժամանակ: Տե՛ս վերևում: Վասիլ Թաթարը որոշ մամուլային աղբյուրներում, ինչպես օրինակ՝ Իզզ ալ-Դին իբն Շադդադի, ալ-Ջահաբիի և Իբն Թաղրի Բիրդիի մոտ, թյուրիմացաբար կամ գուցե զրջադրական սխալով անվանված է «Սիս տիրոջ Բարդի» (usira ibn sāhib Sīs wa-ibn uḥtīh), այլուր՝ «եղբոր որդի» (ibn aḥīh), ինչպես որ ալ-Յուսեֆինի, Մուֆադալի և Իբն ալ-Դավադարիի մոտ, որը ճիշտ է: Տե՛ս 'Izz al-Dīn ibn Šaddād, *Al-'A'lāq al-ḥaṭīra*, ց. 1.2, ք. 343, al-Dahabī, *Tārīḥ al-Islām*, ց. 49, ք. 25; Ibn Taḡrī Birdī, *Ibn Taḡrī Birdī*, *Al-Nuḡm al-zāhira*, ց. 7, ք. 126: Հմտ. al-Yūnīnī, *Ḍayl* (Ḥaydarābad), ց. 2, ք. 344; Ibn al-Dawādārī, *Kanz al-durar*, ց. 8, ք. 118; Mufaḍḍal ibn Abī al-Fadā'il, *Al-Nahj al-sadīd* (PO, t. 12), ք. 152 [494] :

36 Հետաքրքիր է մամուլը պատմիչների վկայությունը մարտի դաշտից փախուստի դիմած իշխանների մասին: Պատահական չէ, որ Հայկական աղբյուրները նույնպես ակնարկում են «առանց կովի և պատերազմի» մարտի դաշտը լքած իշխանների մասին: Տե՛ս Սմբատ Սպարապետ, *Տարեգրք*, Վենետիկ, էջ 247: Գրիգոր Ալենցի, *Պատմութիւն թաթարաց*, էջ 54: Վանքում Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 223: Ջորջի մի մասի դասալքության մասին ակնարկներից բացի՝ որոշ Հայ հեղինակներ Հայկական կողմի պարտության պատճառ են նշում թշնամու թվային գերազանցությունը, որը, դատելով մոնղոլական զորքեր բերելու Հեթումի գործադրած համառ ջանքերից, անտարակույս այդպես էր: Մասնավորապես Հովհաննես Դարդեղը «Քաբլոնի սուլթանի» (նկատի ունի սուլթան Բայբարսին - Գ. Դ.) զորքերի թիվ է նշում 45 հզ., իսկ Հայկական բանակինը՝ 15 հզ.: Տե՛ս Ch. Köhler, "Chronique d'Arménie par Jean Dardel", *Recueil des historiens des croisades. Documents arméniens*, t. 2, Paris, 1906, p. 12, ինչպես նաև Յովհաննես Դարդեղի ժամանակագրությունը Հայոց, տպարան Ի.Ն. Սփորթոզովի, Ս. Պետերբուրգ, 1891, էջ 18: Ակնհայտ է, որ թվերն ուղեղացված են և վստահության ոչ արժանի, չնայած որ ուժերի այս հարաբերակցությունը (1/3) մոտ է իրականությանը: Հմտ. Ա. Հովհաննիսյան, *Կիլիկիա*, էջ 61-62: Վերջինս սխալմամբ Լ. Նալ-

բանդյանի ծանոթագրության մեջ նշված 15 Հզ. թիվն ընդունում է որպես Աբու ալ-Ֆիդայի վկայություն, ով նման տեղեկությունն էի հաղորդում: Նախանդյանի ենթադրության հիմքն ամենայն հավանականությամբ կրկին Դարդելի տեղեկությունն է: *Տե՛ս Ա.Ք. Նալբանդյան*, Արարական աղբյուրները, էջ 272: Մամուլուք հեղինակներից լուկ Կիրտայ ալ-Նազիրնազրին, ով թեև հայկական զորքերի թիվը չի նշում, բայց տալիս է մամուլուքյան հեծելազորի թվաքանակը՝ «երեմ հազար հեծյալ»: *Տե՛ս Qirṭāy al-Ḥazīndārī, Maḡmūʿ al-naḡādir*, ֆ. 140: Վերևում արդեն նշել ենք, որ Կիրտայն այնքան էլ ստուգապատում հեղինակ է, և նրա հաղորդումներին պետք է զգուշյ ձուռնել, մանավանդ որ մեզ հայտնի ոչ մի այլ արարադիր հեղինակ նման տեղեկությունն էի պահպանել: Հետևաբար պիտի արձանագրենք, որ կողմերի թվաքանակի մասին ճշտագրիտ տվյալների չենք տիրապետում:

37 Հուտ Սմբատի և Բար Հերբեոսի թշնամական զորքերի վճռական բախումը տեղի ունեցավ 1266 թ. օգոստոսի 23-24-ին Մաոխի կապանում՝ Սարվանդիքարից (Haḡar Sarwand) ոչ հեռու: *Տե՛ս Սմբատ Սպարապետ*, Տարեգրք, Վենետիկ, էջ 246; *Bar Hebraeus, Chronography*, p. 446: Հմմտ. Գույնի՝ *Al-Muḥtasar*, ֆ. 498: *Տե՛ս նաև M. Canard, "Le Royaume"*, p. 230, n. 62: Արարապիր պատմիչներից մամուլուքյան զորքերի՝ Կիրճ (Darb) հասնելու հստակ օր տալիս է Իզզ ալ-Դին իբն Շադդադը՝ «Զու ալ-կադա ամսի 20-ին՝ երեխաքի օրը», որն իսկապես համապատասխանում է 1266 թ. օգոստոսի 23-ին: *Տե՛ս ʿIzz al-Dīn ibn Ṣaddād, Al-Aḡā al-ḡaṡira*, ց. 1.2, ֆ. 342, ինչպես նաև *Ibn Kaṡīr, Al-Bidāya*, ց. 17, ֆ. 466: Ալ-Այնի պատմիչը մեջբերում է կատարում Աբու Շամայի երկից, որի մեջ հասած տարբերակում այդ հաղորդումը չի պահպանվել: «Սա տեղի ունեցավ 664 թ. Զու ալ-կադա ամսի 20-ին՝ երեխաքի օրը: Եվ որովհետև այս անիծյալը (նկատի ունի Հերբուսին-Գ.Գ.) ապանում էր մուսուլմաններին և թշնամի բարարներն էլ օգնում էին նրանց: Նա Հալեպում նույնպիսի արարներ էր գործել և կանանց ու երեխաների մեծ մասին գեղի տարել»: *Տե՛ս al-ʿAynī, ʿIqd-MMA*, ց. 1, ֆ. 424: Հմմտ. *Abū Ṣāma, Tarāḡim*, ֆ. 237-238: Իր *Al-Tuḡfa al-mulūkiyya* երկում արշավանքի մի յուրատեսակ նկարագրություն էլ տալիս է Բայբարս ալ-Մանսուրին, քանզի մեջբերում է արշավանքին մասնակցած մի ինֆորմանտի (al-rāwī՝ «տեղեկատու») խոսքերը. «Երբ մենք նրանց մտեցանք այդ լեռների վրա, զորքը շարվեց՝ պատրաստվելով կռվի: Մենք նրանց վրա [ընդամենը] մեկ գրոն ձեռնարկեցինք, և նրանց հեծյալները շարվեցին»: *Տե՛ս Baybars al-Manṣūrī, Al-Tuḡfa al-mulūkiyya*, ֆ. 58:

38 Ծակատամարտից հետո մամուլուքները քանդեցին լեռների կատարներին կառուցված աշտարակները (*տե՛ս Ibn al-Dawādārī, Kanz al-durar*, ց. 8, ֆ. 118; *Mufaḡḡal ibn Abī al-Fadāʿil, Al-Nahḡ al-sadiḡ* (PO, t. 12), ֆ. 152 [494]) և իրենց առջևից փախչող հայկական զնդերին հետապնդելով՝ առանց խոչնդոսի շարժվեցին զեպի Կիլիկիայի լուրջերը՝ «սպանելով, գերվարելով ու հանապաօհին հրկիզելով ամեն ինչ»: *Տե՛ս al-Maqrīzī, Al-Sulūk*, ց. 1.2, ֆ. 552:

39 Դժվարանում ենք նույնականացնել:

40 *Qalʿat al-ʿAmudayn* կամ *al-ʿAmūdāyn*, բառացի՝ «երկու սյուների բերդ», որ նույն Ամուդան է կամ Ամուտարբերդը: Այս բերդն իրականում ԺԳ դարի սկզբներից պատ-

կանում էր Տեոտոնյան ասպետական կարգին, այլ ոչ թե Տանարականներին: *Տե՛ս Cl. Cahen, La Syrie*, p. 160; *Г.Г. Микаелян, История*, стр. 160; *M. Canard, "Le Royaume"*, p. 231, n. 64; *J.S.C. Riley-Smith, "The Templars and the Teutonic knights in Cilician Armenia"*, in *The Cilician Kingdom of Armenia*, ed. by Boase T. S. R., Scottish Academic Press, Edinburgh & London, 1978, p. 113; *Մ.-Ա. Շեպիև, Կիլիկիայի Հայաստան*, էջ 28-29, ինչպես նաև *Գույնի՝ Les ordres religieux-militaires en Arménie cilicienne (Templiers, hospitaliers, teutoniques & Arméniens à l'époque des croisades)*, Paris, Geuthner, 2009, p. 472:

41 Հմմտ. *Baybars al-Manṣūrī, Zubdat al-fikra*, ֆ. 105, ինչպես նաև *Գույնի՝ Muḡtār al-ahbār*, ֆ. 32-33; *al-Nuwayrī, Niḡāyat al-arab*, ց. 30, ֆ. 185; *al-Maqrīzī, Al-Sulūk*, ց. 1.2, ֆ. 552; *al-ʿAynī, ʿIqd-MMA*, ց. 1, ֆ. 423: Ամրոցի գրավման ամենահանգամանակից նկարագրությունը տալիս է Իբն Վասիլի շարունակողը: Տագվորություն է տեղեկվում, թե նա անձամբ է պահանտես կղզի Ամուդայի առձանը, որի նկարագրությունը նա ամենամեծ տեղն է հատկապես Սահ արշավանքի իր նկարագրության մեջ: «Բերդի ժողովարդն [արդեն] ենթադրում էր, - գրում է նա, - որ [ամրոցը] երկիրը գրավված է իրենց զորքեր շարժված են, իսկ իրենց արքան՝ զահաժառանգը, գերվարված է Ուտի նրանք նամակ ուղարկեցին և բերդից իջնելու դիմաց «անվտանգություն երաշխիք» (*amān*) խնդրեցին, որը [Իզզ ալ-Դին] Ուդանը նրանց տվեց (*ammanahum*): Սակայն, երբ նրանք իրան, կոտորածի ենթարկեց, իսկ նրանց փողերն ու երեխաներին, ապա քանդեց բերդը»: *Տե՛ս Ibn al-Muḡayzil, Dayl*, ֆ. 61: 42 Շաֆի իբն Ալին գրում է, որ երբ մամուլուք հրամանատարները «Սահ երկրի» կենտրոնական մասերն էին հասել (*tawassatahā*), նրանց ևս մի հայկական դեսպանություն էր ընդատալ քննել, որի անդամներին, սակայն, չղթալի են ու բանտ նետել՝ հրամարմիկով լսել Սահ արքայի հնազանդության խոստումները: «Ալ-Մալիխ ալ-Մանսուրը, - գրում է նա, - սկսեց ավելի խորանալ և ավերել Սահ [երկիր] հողեր (*al-bilād al-Sīsīyya*)՝ շրջան առ շրջան, բերդ առ բերդ, ամրոց առ ամրոց, կողոպտեց հարստություններ (*al-amwāl*), գերության էջեց երեխաներին (*al-ʿiyāl*), մինչև որ հասավ Սիս»: *Տե՛ս Ṣāfi ibn ʿAlī, Ḥusn al-manāqib*, ֆ. 237:

43 Ալ-Յունինի պատմիչի վկայությամբ՝ մամուլուքյան զորքը քաղաք մտավ Զու ալ-կադա ամսի 22-ին (օգոստոսի 25): *Տե՛ս Al-Yūnīnī, Dayl (Ḥaydarābad)*, ց. 2, ֆ. 344: Հմմտ. *ʿIzz al-Dīn ibn Ṣaddād, Al-Aḡā al-ḡaṡira*, ց. 1.2, ֆ. 343 և *Ibn Taḡrī Birdī, Al-Nuḡūm al-zāhira*, ց. 7, ֆ. 126:

44 Հմմտ. *Al-Maqrīzī, Al-Sulūk*, ց. 1.2, ֆ. 552: Հայկական աղբյուրները սարսափով են խոսում Սուլեյման մամուլուքների գործած արարքների մասին: Հրկիզվեցին մայրաքաղաքի եկեղեցիները, թալանվեցին արքունի գանձարանները, պղծվեցին արքայական դամբարանները:

45 Լեռնային Կիլիկիա արշաված մամուլուքյան զնդերը հասան ընդհուպ մինչև Բարձրբերդ: *Տե՛ս ՄԺ, Հտ. Ա.*, էջ 83, *Գույնի՝ Հտ. Բ.*, էջ 73: Հմմտ. *ՀԶԷ, ԺԳ դար*, էջ 242-243: Բար Հերբեոսն իր ասորերին ժամանակագրության մեջ գրում է Սուլեյման, Մաոխում, Այասում, Ազանայում և այլուր հրկիզված հայկական և ասորական եկեղեցիների և

գերեզմարությունների մասին, բայց պնդում է, թե նվաճողները չեն մտել Տարսուս: Ըստ նրա երկրի ասպատակությունը 20 օր է տևել: Տե՛ս Bar Hebraeus, *Chronography*, p. 446: Արաբական խմբագրություն մեջ էլ նշում է միայն Միսն ու Այսուր: Տե՛ս Ռոյլեր՝ *Muhtasar*, §. 498: Հմմտ. Ա. Հովհաննիսյան, *Կիլիկիա*, էջ 68:

46 Արաբական աղբյուրներում նաև ալ-Ռինի (al-Tinī) կամ Հիսն ալ-Ռինաբ (Hiṣn al-Tināt/Tināt) անուններով հայտնի այս բերդը լատին աղբյուրներում հիշատակված է Կանամելլա (Canamella) կամ Կարամելլա (Caramella, Caramela) անվանումներով: Արաբներն ունեցել են թաղ «թուզ» է նշանակում, ուստի բերդանունը պայմանականորեն կարելի է թարգմանել որպես «քզի բերդ» կամ «թգեմիմեի բերդ»: Իսկ բերդի լատիներեն անվանումը հավանաբար առաջացել է լատիներեն *canna* («նղկ») և *melle* («մեղ») բաղադրիչներից, ինչը զուցն վկայում է, որ բերդամրոցին հարակից վայրերում տարածված է եղել նաև շաքարեղեգի մշակությունը: Հմմտ. Ղ. Ալիշան, *Միսուս*, էջ 396: Տե՛ս նաև Զ. Վուրջյան, *Կիլիկիայի հայկական պետությունը միջերկրածովյան առևտրի համակարգում XIII-XIV դդ.*, Պատմություն ինստիտուտ, Երևան, 2015, էջ 73 (հղում է Ղ. Ալիշանին):

Կանամելլան փոքր նավահանգստային բերդ էր Կիլիկիո ձկեր գավառում՝ Հայկական կամ Ալեքսանդրեոսի (այժմ՝ Իսքենդերուն) ծոցի առափին՝ Ալեքսանդրեոսից և Բայասից հյուսիս: Նրա և արաբական աղբյուրների Հիսն ալ-Ռինաբի նույնացման տեսակետը, որն առաջին անգամ արտահայտել է Կլոդ Կահենը, միակն է գիտական գրականության մեջ: Կլոդ Կահենը Հիսն ալ-Ռինաբը միասնականակ նույնացրել է այժմ Քինեթ Հայուկ (Kinet Höyük) կոչվող հնավայրի հետ, ինչը կարծես թե չի հաստատվում այնտեղ կատարված վերջին պեղումների արդյունքներով: Տե՛ս Cl. Cahen, *La Syrie*, p. 149-150: Kinet Höyük-ում պեղումներ իրականացրած Ս. Ռեդֆորդը, հետևելով Կ. Կահենին, այդ վայրը նույնպես համարել է Հիսն ալ-Ռինաբի տեղադրության ամենահարմար թեկնածուն: Տե՛ս S. Redford, "Excavations at Medieval Kinet, Turkey: A Preliminary report", *Ancient Near Eastern Studies*, ed. by A. Sagona, vol. 38, Peeters Press, Louvain, 2001, pp. 58-138: Մինչդեռ Kinet Höyük-ն ավելի հաճախ նույնացվում է Հնագույն Խոս քաղաքի հետ, որի մատուցներում Ք.Ա. 333 թ. Ալեքսանդր Մակեդոնացին ջախջախել է պարսկական և մատնել Աքեմենյան Պարսկաստանի արքա Դարեհ Գ-ին: Այս վայրերում կատարված վերջին պեղումների արդյունքներով Հիսն ալ-Ռինաբը անդադրվել է Քինեթից մոտ 1 կմ դեպի հյուսիս՝ Թուպրաշի դաշտում, որտեղ գտնվել են միջնադարյան բերդամրոցի մնացորդներ: Տե՛ս A. Eger, "Hiṣn al-Tināt on the Islamic-Byzantine Frontier: Synthesis and the 2005-2008 Survey and Excavation on the Cilician Plain (Turkey)", *BASOR*, № 357 (February 2010), pp. 49-76, ինչպես նաև J. Ramsay, A. Eger, "Analysis of Archaeobotanical Material from the Tüpras Field Project of the Kinet Höyük Excavations, Turkey", *JLA*, vol. 2, № 1, 2015, pp. 35-50: Իսկ Հ. Հեյլենկեմպերը, ի տարբերություն Կ. Կահենի, Կանամելլան փոխանցում էր նույնացրել է Բայասի հետ, որը նույնպես ծովեզրյա բերդ էր՝ Ալեքսանդրեոսից հյուսիս: Հատկանշական է, որ Բայասն ու ալ-Ռինին արաբական աղբյուրներում հիշատակվում են որպես

առանձին բերդեր, և դրանց նույնացման տեսակետը բոլորովին դուրս է փաստական հիմքից: Ռ. Էդվարդսին Հեյլենկեմպերի այդ կարծիքն անհաստատել է թվացել, թեև նա անձամբ դժգոհացել է բերդի տեղադրման հարցում: Տե՛ս R. Edwards, "Settlements and Toponymy in Armenian Cilicia", *REA*, t. 24, 1993, pp. 224-225 (n. 204): Ամեն դեպքում նա այլուր հակված է եղել ենթադրելու, որ Կանամելլան Հնագույն Կաստարայան էր՝ հելլենիստական Հիերապոլիսը (հուն.՝ Իերάπολις), ինչը նույնպես սխալ նույնացում է: Տե՛ս Ռոյլեր՝ *The Fortifications*, p. 44:

Բյուզանդա-արաբական հակամարտության ողջ ընթացքում ալ-Ռինին եղել է Ասորիքյան բերդաշարքի (al-tugūr al-šāmīyya) բաղկացուցիչ կարևորագույն սահմանային ամրություններից (awāsim) մեկը, որ մի կողմից հսկում էին Ամառոսյան կամ Սև լեռների (արաբ.՝ Ḡabal al-Lukkām) կապաններ տանող ճանապարհները, իսկ մյուս կողմից հարմար հենակետ էին Կիլիկիայի դաշտային շրջաններ խորանալու համար: Մշտական կռիվներ լինելով բյուզանդացիների և արաբների համար՝ ալ-Ռինին, ինչպես և Ասորիքյան բերդաշարքի մյուս բերդերը բազմիցս երկու կողմերից մեկի վերահսկողության տակ են անցել: Ալ-Ռինիի պատմության մանրամասներին մենք առանձին հոդված ունենք նվիրված, որում ներկայացրել ենք բերդի մասին միջնադարյան սկզբնաղբյուրներում պահպանված աղբյուրությունները՝ սկսած Թ. դարից մինչև Կիլիկիայի Հայաստանի կազմում գտնվելու ժամանակաշրջանը:

Մովսեսյա Կանամելլայի մամուլային հրատարակչի հասցրած վնասը, ինչպես երևում է, հետագա տարիներին հնարավոր է եղել ինչ-որ չափով վերականգնել, քանի որ նավահանգստի վերաբերյալ հաջորդ հիշատակությունը գտնում ենք մոտ ութ տարի անց Այսուսում գրված ջեմովական նոտարական մի փաստաթղթում: Ֆեդերիկո դի Պիացցալունդա անունով ջեմովացի մի նոտարի կողմից ձեռնկերված և 1274 թ. սպրիլի 4-ով թվագրված այդ պայմանագրով վարձակալվում էր Այսուսում խարխուս դքսը Sancta Fide («Սուրբ Հավատ») անունով նախը՝ Դամիհոտոս կամ Ալեքսանդրեոս փայտանյութ անգալիտիկո նպատակով, որով նախը պետք է բեռնավորվեր Կանամելլայի ծոցում: Տե՛ս L. Balletto, *Notai Genovesi in Oltremare: Atti Rogati a Laiazzo Da Federico di Piazzalunga (1274) e Pietro di Bargone (1277, 1279)*, Genova, 1989, p. 87-88: Հմմտ. D. Jacoby, "The Economy of the Armenian Kingdom of Cilicia: Some Neglected and Overlooked Aspects", in *La Méditerranée des Arméniens: XIIe-XVe siècle*, ed. Cl. Mutafian, Paul Geuthner, 2014, p. 269: Բերդը երկրորդ անգամ մամուլների կողմից գրավվել է 1284 թ.: Բայց այդ անգամ արդեն բերդին հասցված վնասն այնքան մեծ է եղել, որ այն կորցրել է իր անստորական նշանակությունը և աստիճանաբար վերածվել «ուրվական քաղաքի»: Իրն Աբդ ալ-Ջահիրը նաև այդ ասան մասին է վկայություններ պահպանել, որոնց ներքևում կանգրտառնանք:

47 Ինչպես տեսնում ենք, ըստ Իրն Աբդ ալ-Ջահիրի՝ ալ-Ռինաբը մամուլների 1266 թ. գրավման ժամանակ պատկանում էր Տաճարական Հոգևոր-աստիճանական միաբանությանը: Մինչդեռ դիտենք, որ Լեոն թագավորի 1214 թ. շնորհագրով բերդը հանձնվել էր Հիվանդախնամ եղբայրությանը: Տե՛ս V. Langlois, *Le Trésor des Chartes d'Arménie*

ou cartulaire de la Chancellerie royale des Roupéniens, Typographie Armenienne de Saint-Lazare, Venise, 1863, p. 124-125; **Cl. Cahen**, *La Syrie*, p. 620; **K. Molin**, *Unknown Crusader Castles*, Hambledon and London Pub., London, 2001, p. 180: *Ճիշտ է, Հնարավոր է, որ Հետագա 50 տարիների ընթացքում՝ Հեթոմի օրոք, բերդի նոր տերեր դարձած լինեն Տաճարական օրդների ներկայացուցիչները, բայց ավելի հավանական ենք համարում հաղորդման մեկ արար հեղինակների թույլ տված սխալը: Սրա օգտին է խոսում այն հանգամանքը, որ մամլուքյան մատենագիրներն արշավանքի ընթացքում գրավված կիրիկյան մեկ այլ բերդի՝ Ամուղայի կամ Ամուտաբերդի (արաբ.՝ Qal'at al-'Amūdayn, բառացի՝ «երկու սյուների բերդ») մասին խոսելով՝ այն կրկին ներկայացնում են որպես Տաճարականների պատկանող բերդ: *Տե՛ս* Ibn 'Abd al-Zāhir, *Al-Rawḍ al-zāhir*, §. 270: *Հմմտ.* Baybars al-Manṣūrī, *Zubdat al-fikra*, §. 105; al-Nuwayrī, *Nihāyat al-arab*, §. 30, §. 185; al-'Aynī, *ʿIqd-MMA*, §. 1, §. 423: *Մինչդեռ անտարակույս է, որ ԺԳ դարի սկզբներից այն պատկանում էր Տևտոնյան օրդներին: Տե՛ս* **Cl. Cahen**, *La Syrie*, p. 160; **Г.Г. Микаелян**, *История*, стр. 160; **М. Canard**, "Le Royaume", p. 231, n. 64; **J.S.C. Riley-Smith**, "The Templars", p. 113; **Մ.Ա. Ենայիկ**, *Կիրիկյան Հայաստան*, էջ 28-29, *ինչպես նաև Ենայիկ՝ Les ordres*, p. 472:*

48 Իրն Արզ ալ-Ջազիրից գրեթե բառացիորեն փոխառելով՝ հաղորդումը մամլուքյան հեղինակներից պահպանել են նաև ալ-Նուվայրին և Իրն ալ-Ֆուրաթը, միայն թե վերջինս բերդի մասին մի փոքրիկ հավելում է կատարում. «...ամրվեց նաև ալ-Թինա (al-Tīna) անունով հայանի տաճարական բերդը, որ նաև ալ-Մանիյաս (al-Manīyyāt) է կոչվում»: Իրն ալ-Ֆուրաթի երկի՝ մեզ հետաքրքրող հատվածը պարփակող հատորը տակավին անտիպ է, բայց մեզ հասանելի է Ավստրիական ազգային գրադարանի *AF122* ձեռագրի լուսատպանքներ: *Տե՛ս* al-Nuwayrī, *Nihāyat al-arab*, §. 30, §. 186 և *Հմմտ.* Ibn al-Furāt, *Tārīḥ al-duwal*, MS A.F. 122, fol. 110a-110b, *ինչպես նաև* al-Maqrīzī, *Al-Sulūk*, §. 1.2, §. 552 (*համառոտում է հաղորդումը՝ բաց թողնելով ալ-Թինայի մասին հիշատակությունը*):

49 Սմբատը զրուց է, որ Լևոնին ու մյուս գերիներին փակի տակ առան Սսի տաճարներում, մինչև որ իրենք ավարտություն կենթարկեն Սիսը: *Տե՛ս* Սմբատ Սպարապետ, *Տարեգրք*, *Վեներտիկ*, էջ 247:

50 *Հմմտ.* al-Nuwayrī, *Nihāyat al-arab*, §. 30, §. 186; al-Maqrīzī, *Al-Sulūk*, §. 1.2, §. 552:

51 Ալ-Ջազիր Բայբարսի առաջին արշավանքը ծանր հետևանքներ ունեցավ Հայոց պետության համար: Այն պատճառ դարձավ երկրի հիմնահատակ ավերածության, թալանի և մարդկային կորուստների: Սմբատը զրուց է. «...կոտորեցին զայնման բազմաթիվ, որ և ակին թե բ ըխս (20.000) սպանա անդ յայնմ տուր: Եւ մնացելսն ի սոյն գերի տարան զկնի իւրեանց և ոչ էլին ընդ որ մտին, այլ դուռն Անտիոքու գնացել էլին ամենայն ասարան»: *Տե՛ս* Սմբատ Սպարապետ, *Տարեգրք*, *Վեներտիկ*, էջ 247: Հայ պատմիչների պնդմամբ մամլուքները շուրջ 30-40 հզ. զորի տարան: Թվերը զուցե և չափազանցեցված են, այնուամենայնիվ, արտահայտում են երկրին պատուհասած աղետի դժին հետևանքները: *Տե՛ս* նաև **Ա. Հովհաննիսյան**, *Կիրիկիա*, էջ 69:

52 Սուլթան Բայբարսի 1266 թ. «կիրիկյան» արշավանքով հաջողությամբ պսակվեց Մերձմիջերկրածովյան արևելքի խաչակրաց կազմավորումներից մաքրելու նրա ծրագրի առաջին փուլը: Ջուր չէ, որ է նշանավորումն 1265-1266 թթ. խաչակիրների և Կիրիկյան Հայաստանի դեմ տոնած հաղթությունների՝ սուլթանը Հոմսից ոչ հեռու գտնվող Մուհամմադ մարդարեի գինակից և զորավար Խալիդ իբն ալ-Վալիդի (մահ. 642 թ.) դամբարանի պատին փորագրել տվեց «Քրանկների, հայերի և մոնղոլների ոչնչացնող» (mubād al-franğ wa-l-arman wa-l-tatar) մակագրությունը՝ շեշտելու համար անհավատները դեմ «սրբազան պատերազմում» (jihād) իր ունեցած ներդրումը: Հաջորդ խորտակիչ հարվածով ալ-Ջազիր Բայբարսը պատրաստվում էր հարվածել Անտիոքի իշխանապետությանը: *Տե՛ս* **D. Aigle**, "Les inscriptions de Baybars dans le Bilād al-Šām. Une expression de la légitimité du pouvoir", *SI*, № 97, 2003, pp. 71-72; **C. Hillenbrand**, *The Crusades: Islamic Perspectives*, 2000, Routledge, New York, p. 230; **Cl. Mutafian**, *L'Arménie*, p. 158, *ինչպես նաև* **R. Amital**, "Mamluks, Franks and Mongols: a necessary but impossible triangle", in *Ferdowsi, The Mongols and the history of Iran (Art. literature and culture)*, ed. by Hillenbrand R., Peacock A.C.S., Abdullaeva F., I. B. Tauris, 2013, p. 140, 145 (n. 10): *Հմմտ.* al-Qalqašandī, *Šubḥ al-a-šā*, §. 10, §. 59 և *Ենայիկ՝* §. 12, §. 276:

53 Արու ալ-Ֆիրդան հավելում է, որ Համայի տեր ալ-Մալիք ալ-Մանսուրը Լևոնին վստահել էր իր եղբայր ալ-Մալիք ալ-Աֆղայի հսկողությունն ու խնամքին, մինչև որ նրան սուլթանի ձեռքը կհանձնեին: *Տե՛ս* Abū al-Fidā', *Al-Muḥtaṣar*, §. 2, §. 333, *ինչպես նաև* **Հ.Թ. Նարանդյան**, *Արաբական աղբյուրները*, էջ 236-237: Իրն Արզ ալ-Ջազիրի պես մի շարք աղբյուրներ ևս ընդգծում են այն հանգամանքը, որ սուլթանը շատ բարեհաճ գտնվեց Լևոնի և մյուս գերիների նկատմամբ (ahsana ilā mutamallik Sīs wa-man ma'ahu): Ամենադիպուկը Շաֆի իբն Ալին է. «Նա (սուլթանը) Սսի տիրոջ որդուն քանկազին շնորհների արձանագրեց և նրան հարգանքով վերաբերվեց, ինչպես որ հարկն էր» (bi-mā yağību lahu min al-iğlāl): *Տե՛ս* Šāfi' ibn 'Alī, *Huṣn al-manāqib*, §. 238: *Սա հաստատում է նաև Սմբատը, երբ զրուց է. «Սուլթանն... լա համաբեցաւ զնսա քան զբիւս քիւտոց ոսկւայ և արծառոյ, և անեալ զնսա զնայ յեզիպառս... և յարձաւ պատուէր և մեծաւէր զնսա»:* *Տե՛ս* Սմբատ Սպարապետ, *Տարեգրք*, *Վեներտիկ*, էջ 248: *Տե՛ս* նաև **A.A.Ճ.Ա. Ալ Թանի**, *Al-Ālāqāt*, §. 250-251:

54 Եզիպտացիների նահանջից հետո, հասկանալի է, որ «Լեթոսի ուլբնումիսը զամված պիտի լինէր իր որդուն գերտրյունից ազատելու վրա»: *Տե՛ս* և **Տեր.Պետրոսյան**, *Խաչակիրները*, *Հտ Բ*, էջ 293: Հռոմի պապ Կլեմենտ Դ-ի (1265-1268 թթ.) և արևմտյան տերուկությունների (օրինակ, Բյուզանդական կայսրության) օգնությամբ այդ նպատակին հասնելու Հեթոմի մտահոգումն իրականություն դառնալու ոչ մի հնարավորություն չուներ: *Տե՛ս* **Г.Г. Микаелян**, *История*, стр. 344; **A.A.Ճ.Ա. Ալ Թանի**, *Al-Ālāqāt*, §. 251: Նրան մնում էր միայն սեփական նախաձեռնությամբ քանակություններ սկսել ալ-Ջազիրի Բայբարսի հետ՝ ճշտելու որդու ազատազրման դիմաց սուլթանի

Հնարավոր պահանջներն ու պայմանները: Սմբատն այդ մասին գրում է. «...և առա-
հեաց ի սպասատաց խոց առ սպուսանն զի ծանիցեն զկամս նուս թլ զո՞յ հնար արձակման
պարունին Հայոց Լիոնի»: Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգրք, Վենետիկ, էջ 248:

55 Իրականում օրը երեքշաբթի է եղել:

56 Բառացի՝ «Փոսի լեակ»: Ճաթիժյան խալիֆաների, Այյուբյան, Հետո նաև Մամլուք-
յան սուլթանների և Կազիրեում նստող խալիֆաների Հանգստի, զվարճության՝ մաս-
նավորապես մարտական խաղերի կազմակերպման ամենատիպերի վայրերից մեկն էր
ու որսատեղին: Գանվում էր Կազիրեի Հյուսիսում, և ըստ ալ-Մակրիզիի կոչվում էր
նաև birkat al-hāḡḡ, որովհետև այնտեղ էին հավաքվում Հիջազ ուխտազնացության
մեկնող ուխտավորները նախքան ճանապարհ ընկնելը և վերադարձին՝ Կազիրե մտնե-
լուց առաջ: Տե՛ս al-Maqrīzī, Al-Hīṭat, ց. 4, ք. 588-590:

57 Տե՛ս Šāfi' ibn 'Alī, Ḥusn al-manāqib, ք. 238, ՀժժՄ. al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 1.2, ք. 552:
Տե՛ս նաև R. Amitai-Preiss, Mongols, p. 118:

58 Այս դեպքում գանացությանը տեղի է ունեցել Հիջրայի 665 թ. Ռաջար / Շաարան
ամիսներին (1267 թ. ապրիլ / մայիս):

59 Բազր ալ-Դին Քիլիբ իբն Արզ Ալլահ ալ-Խազինդար ալ-Չազիրի էմիրն է՝ Բայբարսի
մամլուքներից մեկը: Վերջինիս սուլթանության օրոք գրառեցրել է խազինդարի՝ այլ
կերպ ասած՝ «գլխավոր գանձապետի» բարձր պաշտոնը, ով պատասխանատու էր սուլ-
թանի ունեցվածքի՝ գանձերի, կահ-կարասիի, թանկարժեք զգեստների համար: Որոշ
ժամանակ զբաղեցրել է նաև փոխարքայի (na'ib al-saltāna) պաշտոնը: Տե՛ս Ibn al-Šuqā'ī,
Tāli, ց. 52-53; al-Šafādī, Al-Wāfi, ց. 10, ք. 226-227:

60 Տե՛ս վերևում՝ ձեթագր. 30:

61 Ալ-Շուլքին ու Բաքթասը Որոնտեսի ավամերձ գոտում գանվող երկու բերդամրոցներ
էին՝ Անտիոքից Ալպանա տանող ճանապարհի միջնամասում:

62 Որոնտես զետի արձանյակին դանվող Հին Հունական Ալպանան է:

63 Ալ-Մալիբ ալ-Չազիր Բայբարսը քաղաքը գրավել է 1268 թ. մայիսի 18-ին, որից
երկու օր անց ընկել է նաև միջնաբերդը:

64 Անտիոքի զուեղստար Արմոն Մանսելն է, ով քաղաքի պաշարումը թույլ չտալու
նպատակով իր զինակիցներին հետ նախահարձակ է եղել քաղաքի պարիսպների շուրջը
խանվող մամլուքյան զորքերի վրա: Նրա այս գործողությունը, սակայն, հաջողու-
թյան չի ունեցել, և ինքը՝ Արմոն Մանսելը, զերեվորվել է մի մամլուք զինվորի
կողմից և տարվել սուլթանի մոտ: Նա սուլթանին առաջարկել է համոզել քաղաքի
պաշտպաններին անձնատուր լինել՝ բնակչությանն անվտանգության երաշխիք տա-
լու դիմաց: Անտիոքի պաշտպանները հրաժարվել են ընդունել Բայբարսի առաջարկը:
Սուլթանը հրահանգել է զբաղվել քաղաքը՝ դաժան հաշվահարդար տեսնելով բնակչու-
թյան հետ: Նա, այնուամենայնիվ, ազատություն է շնորհել Արմոնին և նրա մերձա-
վորներին՝ թույլատրելով Կիլիկյան Հայաստան գնալ: Սա պատահական չէ, քանի որ
աղբյուրներից հայտնի է, որ Արմոն Մանսելի կինը հայ էր՝ ըստ Ռուզդ-Քուլլենբերգի՝
զուեղ Կոստանդին Գուեղստարի մեզ անհայտ դստերից՝ ուստի և՛ Հեթում Ա ար-

քայի և Սմբատ Սպարապետի խորթ քույրերից մեկը: Տե՛ս R.W.H. Collenberg, *The
Rupenides, Hethumides and Lusignans. The Structure of the Armeno-Cilician Dynasties*,
Librairie C. Klincksieck, Paris, 1963, p. 59, 65; Cl. Cahen, *La Syrie*, p. 703; Cl. Mutafian,
L'Arménie, p. 350: Սմբատ Սպարապետն իր «Անտիոքի ասիզներ» հայերեն թարգ-
մանության մեջ վկայում է, որ բնագիրը ձեռք է բերել «ի մեծագուր իշխանաց իշխանն
և յարևան մեծաուրևն մեռյ ի Սիւ Սիւնն յԱնտաֆոյ Գունդուսապլէն»: Տե՛ս Assises
d'Antioche, par. L. Alischan, Venise, 1876, p. 3:

65 Ճաթիժյան խալիֆայության ազգությամբ բերբեր զորահրամանատար Ջաֆար
իբն Ֆալլահն է, ով 970 թվականի վերջին իր ստորակա Ֆուսուխի (Futūḥ) զլխավորած
ուժերով փորձ է կատարել բյուզանդացիներից գրավել Անտիոքը, բայց ձախողել է:
Բյուզանդական և Ճաթիժյան ուժերի այս առաջին բախումը տեղի է ունեցել Ալեք-
սանդրեստայի մոտ, և Ֆուսուխի առաջնորդած զորքը պարտություն է կրել: Ինքը՝
իբն Ֆալլահը, սպանվել է 971 թ. կարմատների դեմ կռիվներում՝ Հյուսիսային Ասոր-
իքում իրենց ազգեցությունը տարածելու Ճաթիժյանների նպատակն իր հետ գերեզ-
ման տանելով: Այս մասին մանրամասն տե՛ս P. E. Walker, "A Byzantine victory over
the Fatimids at Alexandretta (971)", *Byzantion*, vol. 42, Brussels, 1972, pp. 431-440:

66 Անտիոքը մուսուլմանների ձեռքից 969 թ. զբաղվել է Նիկեոսից Բ Փոկաս կայսրը
(963-969 թթ.), և մինչև 1084 թ. քաղաքը պատկանել է կայսրությանը: Տե՛ս Kl.-P.
Todt, "Antioch in the Middle Byzantine period (969-1084): the reconstruction of the city
as an administrative, economic, military and ecclesiastical center", in *Topoi. Orient-
Occident*, Suppl. 5 (*Antioche de Syrie: histoire, images et traces de la ville antique*, ed. B.
Cabouret, P.-L. Gatier, C. Saliou, 2004), pp. 171-190:

67 Պատմիչը սխալվում է:

68 Խոսքը Բյուզանդիայի Բարսեղ Բ Բուլղարասպան (կառ. 976-1025 թթ.) կայսր
մասին է:

69 Մեծ Հայքի Տուրուքերան նահանգի Արձեչ քաղաքն է՝ Վանս լճի Հյուսիս-արևել-
յան կողմում: ԺԱ դարի սկզբին քաղաքին տիրում էին Մրվանյան ամիրաները,
որոնք կախում ունեին Արժրուհյայ թագավորներից: Պատմիչը սխալ է նշում բյու-
զանդացիների՝ քաղաքին տիրելու թվականը. պետք է լինի՝ 1021 թ., որը նաև Արժ-
րուհիների թագավորության վախճանի թվականն է:

70 Խոսքն այստեղ Անտիոքի 1097 թ. վերջերից սկսված պաշարման և 1098 թ. զբաղ-
ման մասին է Առաջին խաչակրության առաջնորդներ Բոհեմունդ Տարանտացու և
Ռայմոնդ Թուրուզցու զլխավորած զորքերի կողմից: 1088 թ. ի վեր քաղաքը գտնվում
էր էմիր Յազի-Արսլանի ձեռքում: Սա, իմանալով ֆրանկների մոտալուստ հարձակման
մասին, իրեն հպատակ քրիստոնյա բնակչության մի մասին վտարում է քաղաքից,
ինչպես նաև օգնության խնդրանքով դիմում Ասորիքի մուսուլմանական պետական
միավորների առաջնորդներին՝ մասնավորապես Մոսուլի աթաբեկ Բերբուղային
(1096-1102 թթ.), Դամասկոսի սելջուկյան կառավարիչ Դուկակ իբն Թուխուչին, վեր-
ջինին եղբայր՝ Հալեպի կառավարիչ Յախր ալ-Մուլք Ռազվանին, արթուկյան էմիր

Սուկմանին և այլոց: Քաղաքը նվաճվեց ուժ ամիս տևած պաշարումից հետո՝ 1098 թ. հունիսի 3-ին, քաղաքի աշտարակներից մեկը հսկող և Բոհեմուլուդի հետ գաղտնի կապի մեջ մտած մի հայ հրամանատարի մատուցությամբ: Յադի Սիլյանին օգնության եկած էմիրները՝ Հանձին Քերրուզայի, ի վիճակի չեղան քաղաքն ազատել ֆրանկներից: Ինքը՝ Յադի Սիլյանը, դարձավ քաղաքի քրիստոնյա բնակչության ղաթան հաշվահարգարի զոհը: Ըստ Մատթեոս Ուռհայեցու՝ գյուղացիները մանդաղով կտրում են նրա գլուխը: Տե՛ս Մատթեոս, Ժամանակագրություն, էջ 282-283: Անտիոքի գրավման մասին տե՛ս S. Runciman, *A History of the Crusades*, vol. 1, Cambridge University Press, Cambridge, 1951, pp. 213-235:

71 Իրն Աբգ ալ-Ջահիրի կողմից Առջաղ անունով ներկայացված այս հայի մասին արբաբազու ալլ աղբյուրներում էլ են տեղեկություններ գտնվում: Քաղաքի աման մասին խոսում է նաև Մատթեոս Ուռհայեցին, թեև քաղաքը ֆրանկների ձեռքը մատնած այրի անունը չի հիշատակում՝ կոչելով պարզապես «մի ոմն իշխանալոր»։ «Առդ մինչդեռ ի բացեայ կին գոր՝ այլազգեացն, մի ոմն իշխանաց քաղաքին հանեալ ի գիշերի մարդ առ Պեմունդն և առ այլ իշխանն Փառնգացն՝ և խնդրեաց իւր հայրենիք. և առեալ ի նոցանկ երդումն՝ և գաղտաբար ի գիշերի տայր գԱնտիոք քաղաքն ի ձեռս Պեմնդին. և բացեայ ի պարիսպն վկայլած դուռն, և ամենայն բանակն Փառնգաց մտին ի քաղաքն Անտիոք»: Տե՛ս Մատթեոս, Ժամանակագրություն, էջ 282-283: Ուռհայեցին լուռ է (հավանաբար միտումնավոր) նաև իշխանի հայ լինելու հանգամանքի մասին, և սա տարբերակ է, քանի որ, ինչպես ժամանակի մյուս աղբյուրներից է պարզվում, սա իսլամ ընդունած և Յադի-Սիլյանի վարչակարգում բարձր դիրքի հասած իշխանավոր էր Ֆեյրուզ (այլուր՝ Նայրուզ) անունով: Աղբյուրների վկայությամբ Բոհեմուլուդի հպատակությունն ընդունելուց հետո, կրկին վերադարձել է քրիստոնեական հավատին: Տե՛ս S. Runciman, *History*, vol. 1, pp. 231-232: Լատին մի անանուն աղբյուր հիշյալ անձին թուրք է անվանում՝ դուցե նկատի ունենալով նրա մուսուլման լինելը: Տե՛ս *The Deeds of the Franks and Other Jerusalem-Bound Pilgrims*, ed. and tr. by Nirmal Dass, Rowman & Littlefield Publishers, Lanham, 2011, pp. 66-69:

72 Գողֆրուա Բուլոյնացին է, ով մեկ տարի անց պիտի դառնար Երուսաղեմի խաչակրաց թագավորության առաջին տիրակալը (1099-1100 թթ.): Նա հրամարվել է «աբու» կոչվել՝ նախընտրելով «Աստու գերեզմանի պահապան» տիտղոսը: Գողֆրուայի կյանքին և գործունեությանը նվիրված առանձին ուսումնասիրություն կա: Տե՛ս J. Simon, *Godfrey of Bouillon Duke of Lower Lotharingia, Ruler of Latin Jerusalem, c. 1060-1100*, Routledge, London-New York, 2018:

73 Ահմադ իրն Մրվանը Մոսուլի աթաբեկ Քերրուզայի հրամանատարներից էր, ով ղեկավարում էր Անտիոքի միջնաբերդի պաշտպանությունը: Տեսնելով, որ քաղաքը գրավված է, նա դադարի հաղորդակցել է Բոհեմուլուդին՝ առաջարկելով կայսզորի «անվտանգության երաշխիք»՝ դիմաց հանձնել միջնաբերդը: Աղբյուրները վկայությամբ են, ինչպես որ Ֆեյրուզը, անգամ կրոնափոխ է եղել և խաչակիրների շարքերն անցել:

74 Էմիր Շամս ալ-Դին Ախսունկուր ալ-Ֆարախանին է՝ Բայբարսի ամենամտերիմ մամուլքներից մեկը: Զբաղեցրել է սուլթանի անձնական անվտանգության համար պատասխանատու ուսթաղզարի, իսկ հետո նաև եգիպտոսի փոխարքայի պաշտոնը: Տե՛ս Ibn al-Ֆուգա՛T, *Tālī*, §. 12-13:

75 Է դարի արաբ զորահրամանատար, ով հռչակվել է իսաղարներին և Բյուզանդիայի դեմ կռիվներում: Որոշ ժամանակ զբաղեցրել է նաև Արմինիայի ոստիկանի պաշտոնը: Տե՛ս G. Rotter, "Maslama b. 'Abd al-Malik b. Marwan", in *EP*, vol. 6, p. 740:

76 Հմտ. Ա. Տեր-Ղևնդյան, Աբար մատենագիրներ: Թ-Ժ դարեր, էջ 238-239:

77 Ահա այսպես, տևական զինանագիտական խուսանավումներից հետո Բայբարը վերջապես ընկրկեց: Մական բացի տարածքային գիշումներից՝ մասնավորապես Հուլաղույի ստորիքյան արջավանքի արդյունքում հայերի դրաված բերդերից (Բեհեանա, Դարպասի, Մարգարան, Բարան, Շիհ ալ-Հադիդ)՝ նա ևս մի պայման դրեց հայերի առջև՝ գտնել և իրեն վերադարձնել Շամս ալ-Դին Սուևկուր ալ-Աշկար (հայկական աղբյուրներում՝ «Սնդուրաշխարհ», «Սդուր») անունով իրեն շատ մտերիմ մի մամուլքի (Խսձմձ, հայկական աղբյուրներում՝ «խոշաաղ» կամ «խուշաաղ»): Այսպես էին անվանվում միևնույն տիրոջը (ustād) պատկանող մամուլք ստրուկները: Այդ մասին տես D. Ayalon, "Mamlūk", in *EP*, vol. 6, p. 318: Սուևկուր ալ-Աշկարին 1260 թ. Հաշուի գրավումից հետո մոնղոլները գերի էին տարել Իրան, իսկ Բայբարսին հաջողվել էր փրկվել: Տե՛ս al-Maqrīzī, *Al-Sulūk*, §. 1.2, §. 568: Հմտ. Ibn 'Abd al-Zāhir, *Al-Rawḍ al-zāhir*, §. 281; al-Nuwayrī, *Nihāyat al-arab*, §. 30, §. 188; Ibn Haldūn, *Al-'Ibar*, §. 5, §. 445: Հմտ. Hayton, *La flor*, p. 177: Գրիգոր Ակնեցցին սխալվում է գրելով, թե Սուևկուրը մոնղոլների կողմից գերիվել է Բաղդադի դրավման ժամանակ: Տե՛ս Դեհգար Ակնեցցի, Պատմութիւն թաթարաց, էջ 52, ինչպես նաև R.P. Blake, R.N. Frye, "History of the Nation", p. 354:

78 Հմտ. al-Maqrīzī, *Al-Sulūk*, §. 1.2, §. 569:

79 1267 թ. Հեթումը մեծ ընձանեբով ներկայացավ Աբաղա իլխանին և «խնդրեաց զխոշաաշն Պեկպարս սուլտանին...և ոչ գտանին զնա: Եւ դարձաւ քազաուրն տրամուրեանք և եկն յաշխարհն իւր, և առաքեաց առ սուլտանն երկ, ոչ գտի. և սուլտանն մոմտեալ սաեյ, երկ զնա ոչ քերցլ՝ գորդի նարս ոչ ազատեցից»: Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 249: Դեպքերի առնչությամբ մյուս մամուլքյան պատմիչների մոտ չհանդիպող պատմություն է տալիս ալ-Յուևինի պատմագիրը: Ըստ նրա՝ Հայոց արքան Աբաղայի մոտ գնալիս իրեն ուղեկից է վերցրել ալ-Ջահիր Բայբարսի ուղարկած զեսպաններից մեկին՝ Բահրի Էմիր Ալամ ալ-Դինին, ում անձը չբացահայտելու համար հայկական հագուստներ (zayy al-arman) են հագցրել: Վերջինս իր Աբաղայի արքունիքում հանդիպել է Սուևկուր ալ-Աշկարին և համոզել, որ ինքն իսկապես ուղարկվել է Բայբարսի կողմից: Սուևկուրը համաձայնել է, հայկական հագուստներ հագնելով, փախչել Աբաղայի արքունիքից: Երբ Կիլիկիա են հասել, Ալամ ալ-Դինը վերադարձել է Կահիրե՝ սուլթանին հայտնելու նրա «խուշաաշին» գտնելու մասին լուրը, որպեսզի պատրաստվի Լեոնի հետ նրա փոխանակությանը: Տե՛ս al-Yūnīnī, *Dayl* (Haydarābad), §. 2, §. 385: Ըստ Բար Հեբրեոսի՝ Սուևկուր ալ-Աշկարին դուռն են Կիլիկիա Աբաղայի խորքերում՝ Սամարղանդում: Տե՛ս Bar Hebraeus, *Chronography*, p. 447, ինչպես նաև Մուլթաշ, §. 500:

80 Հմմտ. al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 1.2, ք. 569:

81 *Sb'u S. Runciman, A History*, vol. 3, pp. 324-326: Հայոց արքայի փեսա Բոհեմունդ Զ-ն շարունակեց կառավարել միայն որպես Տրիպոլիի կոմս և այդուհետ միայն խորհրդանշորեն էր կրում Անախորի իշխանի տիտղոսը:

82 *Սմբատը կարծես հաստատում է սա*. «Եւ առաւելցին պանդանտ զՉինի ևնորդի արխանս ևնքոյ, և գորդի ելորս նորա ևնքոյ զԸնտնունդ, և գորդի Կաստանդեայ թագաւորահօրն զՎասակ տէր ճաննոյն»: *Sb'u Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վեներիկ, էջ 250: Հմմտ. Cl. Mutafian, L'Armenie*, p. 158-159:

83 *Օրն իրականում շարաթ է եղել*:

84 *Յափոթ, մուսուլման պատմիչները չեն պահպանել Հայ-մամլուքյան առաջին պայմանագրի տեքստը, և նրանում ներառված մյուս դրույթների մասին կարելի է միայն ենթադրություններ անել*: Ինչպէս, նույն ամսի 11-ին (Հունիսի 24) Լևոնն ուղարկվեց Կիլիկիա, իսկ մամլուք պաշտոնյաները ստացան խոստացված բերդերը: Հատկանշական է, որ դրանցից Բեհեսնան, այնուամենայնիվ, մնաց Հայերի ձեռքում: Այ-Յունիսի պատմիչի եզակի վկայությամբ՝ դա Հաջողվեց շնորհիվ Սուլեյուր ալ-Աշկարի, ում Հայոց թագավորն ազատ արձակելուց առաջ խնդրել էր Կահիրեի հասնելուն պես Համոզել Բայբարսին չվերցնել բերդը, և նա էլ Համոզայնի էր: *Sb'u al-Yūnūnī, Dayl (Haydarabad)*, ց. 2, ք. 386:

85 Լևոնի և մյուս գերիների վերադարձի լուրը մեծ ցնծությամբ ընդունվեց Կիլիկիայում: *Sb'u Սամուկ Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիւն, էջ 254*: «Որդուն ազատագրելու նպատակով ևնքոյն թափած անելի ջանքերն ու գոնողությունները բացատրվում էին ոչ միայն նրա հայրական զգացումներով, - բացատրում է Լևոն Տեր-Պետրոսյանը, - այլև ունեին մի այլ, թերևս, ոչ պակաս կարևոր դրդապատճառ: Իսկ Լևոնի գահաժառանգ լինելու հանգամանքն էր»: *Sb'u Լ Տեր-Պետրոսյան, Խաչակիրները, Հտ. Բ, էջ 294*: Սա քաջ հասկանում էին նաև մամլուքյան իշխանությունները, ովքեր սա Հաջողությամբ օգտագործեցին Հայերին տարածքային զիջումներ պարտադրելու համար: Պատահական չէ, որ արաբագիր պատմիչների մեծ մասը շեշտում է Լևոնի wāḥ al-ahd («գահաժառանգ») լինելու հանգամանքը: 1266 թ. արշավանքին և գերիների փոխանակմանը Հաջողած բանակցություններին Իբն Վասիլի երկի համար իր գրած շարունակության մեջ՝ 1275 թ. մամլուքյան արշավանքի նկարագրության մեջ, համառոտ ակնարկ է կատարում Իբն ալ-Մուղայզիլը. «Հեթումը՝ հայոց արխան, Նուպուդից՝ թաթարների արխայից էր խնդրել [նորը], և վերջինս նրան ավել էր դրամ, որ հայկայան թագավորության մաս էին: Եվ երբ գերեզմարվել էր Լևոնն առաջին անգամ (նկատի ունի)՝ նախորդ՝ 1266 թվականի արշավանքը-Գ.Գ., ալ-Մալիք ալ-Ջանիլը նրանից խնդրել էր թաթարներից բերել Շամս ալ-Գիս Սունկուր ալ-Աշկարին և [տալ] Դարպասկ բերդը՝ չնաշված գոմարը, միերը և ջորիները: Այսպես շարունակեց, մինչև որ բերվեց Սունկուր ալ-Աշկարը, և ավել նրան այն, ինչ ուզում էր: Նրա որդին իր երկիրը վերագործավ և թագավորեց: Նրա հայրը մահացավ, և նա շարունակեց իշխել, մինչև որ հայրը մահացավ: Ստույ իշխանությունը մինչ օրս էլ նրա որդիների ձեռքում է»: *Sb'u Ibn al-Mugayzil, Dayl*, ք. 81:

86 Իր ընկերոջ ազատության համար Բայբարսի դործագրած ջանքերը Ռիկոլդո դա Մոնտեկրուչեն (մահ. 1320 թ.) իր «Գիւր՝ Եանապարհադարյունների» (*Liber Peregrinationis*) երկում ներկայացնում է որպես մուսուլմանների՝ իրար նկատմամբ տաճած «փոխներգաշնակության» զգացումի (*de concordia Sarracenorum*) արտահայտություն: «Մի սարակինոս կար Մանկոր (բնագրում՝ *Monchor, sic*) անունով, - գրում է նա, - ով սարակինոսների և քրիստոնյաների միջև երկարատև պատերազմի բովում տեսել է, որ մեկ այլ սարակինոս՝ ավելի ետանդուն, քան իմը, վայր է քնկել ձիուց և սպանվելու կամ քրիստոնյաների կողմից գերեզմարվելու վտանգի տակ է նա իջել է իր ձիուց և ասել. «Վերցրո՛ւ նձույզս և փախի՛ր, որովհետև ավելի մեծ վնաս կլինի, եթե դու սպանվես կամ գերի ընկնես, քան թե ես»: Այդ պյուն այդպես էլ արեց և նողաքեց, իսկ Մանկորը նրա փոխառեն ռազմագերի դարձավ: Այն մեկը, որը փախել էր ձիով, սուրբան դարձավ և ազատեց Մանկորին բանտից՝ նրա փոխարեն քրիստոնյաներին վերագործնելով Հայաստանի արխային, ում սարակինոսները բանտում էին պահում»: *Sb'u Ricoldus de Monte Crucis, "Liber peregrinationis", Peregrinatores medii aevi quattuor: Burchardus de Monte Sion, Ricoldus de Monte Crucis, Odoricus de Foro Julii, Wilbrandus de Oldenborg*, ed. by J. Chr. M. Laurent, J.C. Hinrichs, Leipzig, 1864, p. 135, ինչպես նաև *R. George-Tvrtković, A Christian Pilgrim in Medieval Iraq Riccoldo da Montecroce's Encounter with Islam*, Brepols, Turnhout, 2012, p. 216:

87 Այ-Եակիֆը (լատին աղբյուրներում՝ *Beaufort* կամ *Belfort*) խաչակիրներին պատկանող բերդ էր Լիբանանում, որ մամլուքները գրավել են 1268 թ.: *Sb'u K. Molin, Unknown Crusader Castles*, p. 18, p. 315, n. 27 (*Ք. Մուլինի Հղած գրականություններից տե՛ս Հատկապես "Deschamps, La defense..."*):

88 *Կիպրոսի արքա Հուզո Բ (կառ. 1253-1267 թթ.)*:

89 *Հուզո Անտիոքացի՝ Կիպրոսի Հուզո Գ արքա (կառ. 1267-1294 թթ.)*:

90 Այս դեպքերի մասին մանրամասն տե՛ս *P.W. Edbury, The Kingdom of Cyprus and the Crusades 1191-1374*, Cambridge University Press, Cambridge, 1991, pp. 85-90:

91 Բերդաբաղաբ Հյուսիսային Ասորիքում Որոնտես գետի աջ ափին՝ Համայից Հյուսիս-արևմուտքում: Բերդը նախկինում 1081-1157 թթ., պատկանել էր Իբն Մուսկիկ Հայտնի տոհմին, այդուհետ՝ Հայեպի Ջանգիներին: Բերդը մի քանի անգամ ավերվել է երկրաշարժերից: Մամլուքյան սուլթան Բայբարսը բերդը գրավել է 1260 թ. և վերականգնել: *Sb'u J.M. Mouton, "Shayzar"*, in *EP*, pp. 410-411:

92 1268-1269 թթ. Հեթումը կատարեց իր վերջին լուրջ դիվանագիտական առաքելությունը: 1268-1269 թթ. իրագործությունները, իսկական փորձություն լինելով Կիլիկիո Հայոց թագավորության համար, Հեթումին կանգնեցրել էին այն դիտակցման առաջ, որ նման մի երկրորդ Հարվածի իր երկիրը կարող է և չզիջանալ: Մինչդեռ Մամլուքյան սուլթանության և մոնղոլական Իլխանության Հարաբերությունների հետագա լարումը կարող էր նման մի վտանգ ստեղծել Կիլիկիայի համար: Ուստի նա նամակ գրեց Բայբարսին՝ խնդրելով միջնորդել նրա և Աբաղա իլխանի միջև Սուլեյուր ալ-Աշկարի Իրանում մնացած ընտանիքին (կնոջը և երեխաներին) վերադարձնելու, ինչպես նաև մամլուք-մոնղոլական խաղաղության բանակցություններ

սկսելու հարցում: Բայբարը պատասխան նամակում դրեց, որ հայոց արքան իրավունք ունի միջնորդել միայն Սուլթանի ընտանիքի հարցով: Չնայած որ Իբն Աբդ ալ-Ջահիրը և մի շարք այլ պատմիչներ հաղորդում են «Սաի իխտոյի» (*mutamallik Sīs*) միջոցով ալ-Ջահիր Բայբարի մոտ ուղարկված պաշտոնական դեսպանությունների և փոխանակված նամակների մասին, այնուամենայնիվ, երկու հզորագույն տեղագրություններին հաշտեցնելու Հեթումի փորձը բարեհաջող հանդուցալուծում չուներացավ, և կողմերն այդպես էլ ընդհանուր հայտարարի չեկան: Ինչևիցե, հարկ չենք համարում լուսարանել այս դեպքերի մանրամասնությունները, քանի որ դրանք արդեն իսկ հանգամանալից անդրադարձ են գտել Աբդ ալ-Ազիզ ալ-Խուվայտիրի և Ռ. Ամիտայի ուսումնասիրություններում: *Sb'u A.-A. Khowaiter, Baibars the First*, pp. 57-60; *R. Amital-Preiss, Mongols*, pp. 120-122 և հատկապես **նույնի՝** "An exchange of letters in Arabic between Abaya Ilkhān and sultan Baybars (A.H. 667 / A.D. 1268-1269)", *CAJ*, vol. 38.1, 1994, pp. 11-33:

93 Բնագրում՝ *yaṣīrū ʾil*, այսինքն «ի դառնան»: Մոնղոլական աշխարհակալական գաղափարաբանության համաձայն՝ ի էին անվանվում մոնղոլների գերիշխանությունն անվերապահ ընդունած և նրանց հետ խաղաղություն մեջ գտնվողները:

94 Այս երկրաշարժի մասին արարալիզու մատենագրության մեջ այլ հիշատակություններ էլ կան, որոնց մեծ մասի աղբյուրն անմիջականորեն կամ միջնորդավորված Իբն Աբդ ալ-Ջահիրի երկն է: *Sb'u Baybars al-Manṣūrī, Zubdat al-fikra*, s. 120, *ինչպես նաև նույնի՝ Muhtār al-aḥbār*, s. 40; *al-Nuwayrī, Nihāyat al-arab*, ց. 30, s. 106; *Ibn al-Furāt, Tārīḥ al-duwal*, MS AF122, fol. 157b; *al-Maqrīzī, Al-Sulūk*, ց. 1.2, s. 578; *al-'Aynī, 'Iqd-MMA*, ց. 2, s. 49: Ինչ վերաբերում է Իբն Աբդ ալ-Ջահիրի հիշատակած «Հաջար Շալան»-ին (*Haḡar Ṣa'lan*), ապա այս բերդանունը վերահիշյալ պատմիչներից մի քանիսի մոտ արձանագրված է *Haḡar Ṣaḡlān* ձևով, որն ավելի տարածված տարբերակ է մամլուքյան աղբյուրներում:

Ինչպես երևում է արաբադիր պատմիչների ներկայացրածից, երկրաշարժն իսկապես մեծ հզորություն է եղել և սոսկալի մարդկային և նյութական վնասների պատճառ է դարձել: Սմբատ Սպարապետն այսպիսի սուր կսկիծով է գրել երկրին պատուհասած բնության տարբերի մասին. «Ի քոյն ՁԺԸ եղել շարժ սաստիկ և յաշխարհին Կիլիկիա ի տեղիս տեղիս բազում շին յաւեր դարձոյց, ես առաւել առ լեռամբն որ Սեաւ կոչի. և զանառիկ դղեակն Սարվանդաւ յաւեր դարձոյց, և զբնակիչսն առ հասարակ մահացոյց և ի սուրբ ուխտն Արեւակաղնին քահանայս և կրօնատուս վախճանեցան ի տանցն ընկղմելոց, և ընդ լեռնակողմն ընդ այն բազում շինս և զբերոյն Դեղնեաւն, և այլ բազում տեղիս խաբխալեալ ներձեաց»: *Sb'u Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վեհերոկ, էջ 251*: Հեթում պատմիչի զբնի պատկանող երկու այլ աղբյուրներ վկայում են նաև Համուս բերդի ավերածության մասին: Նրանցից «Խոթնիկոն»-ը վկայում է. իսկ «Փյան ի շարժ Սարվանդեաւն և Համուս և Դեղնեաւն և այլ վանորայի և ամրոցի և գեղորայի Ի Սե լեռն»: *Sb'u ՄԺ, հտ. Բ, էջ 74* և Հմմտ. Հեթում Պատմիչ, ժամանակագրություն, էջ 54 և ՄԺ, հտ. Ա, էջ 83 և Հմմտ. Լ Տեղ-Պետրոսյան, *Խնչակիրները, էջ 542* (Հեթում Նղիցու պատմությունը):

Ավերիչ երկրաշարժի ամենաընդարձակ նկարագրությունը տվել է 1269 թ. դադափարված մի Ավեստարանի հիշատակագիրը. «Բայց գրեցաւ սա ի նշանալու ժամանակի, վասն զի անուպա գործամ մեր ի բարկութիւն շարժեցամ մեզ զանբարկանալիմ բնութիւն, քանզի շարժեալ սասանեցաւ երկիրս մեր առ հասարակ, նաև բազում գաւառք այլազեաց. և որ ոչ ի մի ժամանակս, մինչ զի անապառացան բազում շինանիստ, քանզի զղեակն կոչեցեալ Սարաւակիսար՝ ընդ մեզ հերձեալ յերկիր կործանեցաւ՝ զամենայն բնակիչսն ծածկելով, բաց ի սակասոց. նաև Համուսն անուանեալ զմայր սիրելի որդով և որ մերձ կիմ՝ կորոյս տուրածամ վախճանաւ: Տաց (՞) բանիս և որ կարի վշտալիմ է, քանզի գերանդակն ուխտ Արեւակաղնին անուանեալ և որ ընդ վիճակս նորա, բազում աղաքանոցի և մեծատանի առ հասարակ ի վայր խաղաղացին: Եւ անի էր՝ տեսանել արժանի որոց պատահում, և յսել ականջաց դատութիւն, վասն զի ոմանք հեծին, և այլ հառաչ, կիս ի ճիչ, այլիլ յողբ, և ով ոք կարսացէ պատմել զանպատմելի վիշտն որ եմաս նահանգիս Կիլիկիայ, աւերումն եկեղեցեաց, քանանայիցն կորուստ, ժողովորոց սպառումն, և ամենայն հասակի սուգ անխիթար: Եւ զայսոսիմ մեկ իսկ տեսամ աչամ մերով, իսկ առաքակայն Տեառն գթութեան և որդմութեան յանձին, վասն զի յոյժ զարհուրեալ եմք»: *Sb'u ՀԶԶ, ԺԳ դար, էջ 379-380*: Ոչ պակաս բովանդակալից է նաև *ստորի Բար Հեբրեոսը՝ նոր մանրամասներ հաղորդելով. «Հունաց 580 ք. (1269 թ.)* նիսսան (ապրիլի) 17-ին՝ շարաքվա չորրորդ օրվա ժամը մեկին, անեղ երկրաշարժ տեղի ունեցավ Կիլիկիայում: Այն ավերեց Սարվանդի բերդը, Համուսը, Հաուրայի ժայռը (Դեղնեաւն է-Գ.Գ.), ինչպես նաև հայերի մեծ վանքը, այն է՝ Բալուտ աբայի վանքը: Մտա 8 հազար հողի մահացավ այս աղետի պատճառով»: *Sb'u Bar Hebraeus, Chronography*, p. 448: Ուշագրավ է, որ *ստորի մատենագրի երկի բնագրից թարգմանիչ Ի.Վ. Բաղըի կողմից* «Բալուտ աբայի վանք» թարգմանությունը սխալմունք է: «Բալուտ» արաբերեն և ասորերեն նաև «կաղնի» է նշանակում, ինչից հետևում է, որ այստեղ պարզապես նկատի է առնված Արքակաղնի վանքը: Բար Հեբրեոսը երկրաշարժի մասին հիշատակել է նաև իր արաբերեն ժամանակագրության մեջ՝ զոհերի զուցե և չափազանցված թիվ ներկայացնելով. «670 ք. նիսսան ամսին հողը ցնցվեց Հայոց երկրում: Բազմաթիվ ամրոցներ քանդվեցին և 100 հզ. մարդ զոհվեց նահանգում՝ էլ չհաշված բնտանի կենդանիներին»: *Sb'u Ibn al-'Ibrī, Muhtasar*, s. 500: «Գործք կիլիկացից» հին Ֆրանսերեն երկի երրորդ մասի անանուն տաճարական հեղինակը գրում է, որ հզոր երկրաշարժը «հինգ ամրոց, եւեթ վանք և 12 զյուղ է գետնին հավասարեցնել»: *Sb'u Les gestes des Chiprois*, p. 191, *ինչպես նաև Deeds of the Cypriots*, p. 60:

95 1266 թվականի վերջերից և 1267 թվականի սկզբներից սկսած իլխան Աբազան ակտիվ բանակցությունների մեջ էր եվրոպական քաղաքական ուժերի հետ՝ հակամամլուքյան դաշինք ստեղծելու և Սուրբ երկիրը նրանցից ազատագրելու նպատակով: Բարեկամության շուրջ ակտիվ նամակագրություն էր հաստատված հատկապես Հռոմի պապ Կղեմենտ Դ-ի և Արագոնի արքա Ջեյմս Ա-ի միջև: Բանակցություններին չուտով միանում է նաև Բյուզանդիայի կայսր Միքայել Պալեոլոգոսը: Համատեղ ուժերը պետք է ժամանեին Այաս կամ մի ուրիշ նավահանգիստ, որտեղից պետք է շարժվեին Աբբաս: Ինքը՝ Ջեյմսը, 1269 թվականի սեպտեմբերին իր տորմիղով ճանա-

պարհավում է Աբրա: Արաղոնյան նավատորմը, սակայն, ճանապարհին ենթարկվում է սաստիկ փոթորիկ և մեծ վնաս կրելով ստիպված լինում վերադառնալ: Աբրա են հասնում միայն արքայի երկու սրբիները՝ փոքրաքանակ ուժերով, բայց անկարող լինելով որևէ բան ձեռնարկել, նույնպես կարճ ժամանակ անց հարկադրված են լինում վերադառնալ: Հենց այս դեպքերի մասին է, որ խոսում են Իբն Աբդ ալ-Ջահիբը և մամլուքյան մյուս պատմիչները: Ջեյմս Արաղոնցու այս անփառունակ արշավանքի մասին տե՛ս **R. Amitai-Preiss, Mongols**, pp. 96-98 և **նույնի՝** “Mamluk perceptions of the Mongol-Frankish rapprochement”, *Mediterranean Historical Review*, vol. 7.1, pp. 53-54: 1271 թ. իր տորմիզով Աբրա է ժամանում նաև Անգլիայի արքայազն Էդվարդը, բայց չնայած զործադրված որոշ ջանքերին՝ մոնղոլների հետ համատեղ և մարդունակվեստ արշավանք կազմակերպել այդպես էլ չի հաջողվում: Նա, մի հաշիշի մարդասպանի կողմից մահափորձի ենթարկվելով, որոշում է վերադառնալ Անգլիա, որտեղ կարճ ժամանակ անց զբաղեցնում է արքայական գահը:

96 Իբն Աբդ ալ-Ջահիբի, ալ-Նուվայրիի, ալ-Մակրիզիի և մյուս արաբ պատմիչների կողմից Հեթոմանի տրված այս մականվանը՝ *al-Malik al-muğīb*-ին, որ արաբերենից թարգմանած «հովանավոր արեա» է նշանակում, մենք վերևում արդեն անդրադարձել ենք: Տե՛ս նաև **Գ. Գանիկյան**, «Թագավոր / Թագօր» տիտղոսը միջնադարյան մուսուլմանական մատենագրության մեջ», 42 (2016), էջ 175-177, ինչպես նաև **նույնի՝** “The Title T’agavor / Takfur in Medieval Muslim Historiography”, in *CA* (2019), pp. 163-164:

97 Հեթոման արքայի մահով և Լեոն Բ-ի դահակալության ավարտից հայ-մամլուքյան հարաբերությունների առաջին կարևոր փուլը: Մոնղոլների շնորհիվ 1260-1262 թթ. ձեռք բերված տարածքային նվաճումների մեծ մասը ժամանակավոր դուրս եկան, և 1268 թ. կրկին վերադարձվեցին մամլուքներին: Հատկանշական է, որ այս զինումներով հայոց կաթողիկոսների նստավայր Լուսինյան կրկին հայտնվեց Կիլիկյան Հայաստանից մեկուսացված վիճակում: Ամենացավալին, իհարկե, Կիլիկիայի կրած մարդկային կորուստներն էին, իսկ առևտրատնտեսական «վեճերը» բուժելու և ավերված քաղաքները վերականգնելու համար երկիրը դեռ ուժ կգտներ: Առաջին անգամ Կիլիկյան Հայաստանն իրապես զգաց իր գոյության համար Մամլուքյան սուլթանության ներկայացրած լուրջ վտանգը, բայց և այնպես մոնղոլների և արևմտյան երկրների հետ շարունակվող գործակցությունը դեռ նոր դժբախտությունների պատճառ պիտի դառնար:

98 Հայագիտության մեջ Հեթոմանի մահվան ընդունված թվականը 1270 թ. հոկտեմբերի 28-ն է: Այս թվականի վերաբերյալ հայկական աղբյուրների հազորդած տեղեկությունների քննարկումը տե՛ս **ՄԺ**, հտ. Բ, էջ 167 (ալ-Մակրիզիից կատարված մեջբերման մեջ հիջրայի տարեթվի փոխակերպման սխալ կա, տե՛ս ներքևում); **ԶԶ**, ԺԳ դար, էջ 409; Հմմտ. **Սմբատ Սպարապետ**, *Տարեգիրք*, Վեներտիկ, էջ 252; **Ստոնոլ Անեցի** և **չարունակողներ**, *Ժամանակագրություն*, էջ 254; **Bar Hebraeus, Chronography**, p. 449; Տե՛ս հատկապես **Cl. Mutafian, L’Armenie**, p. 160, n. 7: Ըստ ալ-Մակրիզիի՝ Հեթոմանը մահացել է 669 թ. Ռաբի առաջին ամսի 21-ին, որ համապատասխանում է 1270 թ.

նոյեմբերի 7-ին: Տե՛ս **al-Maqrīzī, Al-Sulūk**, ց. 1.2, ք. 590: Ալ-Նուվայրին մի կարևոր լրացում է կատարում մահվան այլ ամսաթիվ տալով. «Այս թվականին մահացավ Կուսանդիսի ողի շերտը՝ Սի տերը, և Ռաբի առաջին ամսի 27-ին (նոյեմբերի 13) ստացվեց այդ մասին նրա ողի Լեոնի տեղեկացումը, որ Թիշրին ալ-ավվալ ամսի 25-ին (հոկտեմբերի 25) իր հայրը կոնավոր էր դարձել և վանքի քաղնեղով աշխարհիկ գործեր: Նա մահացել էր Ռաբի առաջին ամսի 21-ին՝ մայրամուտին: [Նամակի] թովանդակության մեջ նա սուրանական ցավակցությունն էր հայցում նրա համար: Նա (սուրանը) գրեց նրան՝ ցավակցելով հոր [մահվան] համար, ինչպես նաև շնորհավորելով արևա դառնալու կապակցությամբ՝ քաղաքը շուրջում մաղթեց (itābat qalbīhi)»: Տե՛ս **al-Nuwayrī, Nihāyat al-arab**, ց. 30, ք. 111:

Սուլթանի՝ ցավակցություններ հայտնելու հանգամանքից կարելի է ենթադրել, թե հայ-մամլուքյան հարաբերություններում որոշ ջերմություն էր մտել: Սակայն սա ընդամենը հարաբերական դառար էր նոր «փոթորիկից» առաջ: Կիլիկյան Հայաստանին պատկանող որոշ սահմանային բերդերի շուրջ վեճերն ու բախումները շարունակվում էին: Խոսքը մասնավորապես Մարաշից ոչ հեռու գտնվող Քայնուք (*Kaynük* կամ *al-Hadaṭ al-hamrā*) անունով մի բերդի մասին է (տե՛ս ներքևում): Ձևին դադարում նաև հայոց թագավորության ակտիվ շփումները մոնղոլների և ֆրանկների հետ: Արաղոնյան նավարկված տորմիզի վերաբերյալ Մուհի ալ-Դինի հաղորդումը սրա վրա ապացույցն է:

Սուլթանի հայանած ցավակցության մասին իր չափածո երկում հիշում է նաև արքունի դիվանագետը՝ Վահրամ Բարունին: Ըստ նրա Լեոնը երեք ամիս սուգ է պահել հոր մահվան համար և ի վերջո արտոմությունից հիվանդացել է.

«Բայց պարոնն՝ այնքան սուգ առեալ,

Մինչ մամու չափ՝ հիանդացեալ,

Որ յամենից՝ աղաչեցեալ,

Փութով լինել՝ թագաւորեալ:

Սա սո ժամայն՝ ոչ նաւանեալ,

Եւ յումե՛ք՝ ոչ սիրիւեալ,

Ջեփս ամիս՝ սուգ տառեալ,

Տկար անձամբ՝ և վշտացեալ:

Ապա նո՛ւս՝ որ բռնացեալ,

Եւ աշխարհի՛ կին տիրեալ,

Որ յեզիպտոս՝ սուլտան կացեալ,

Եւ այն որ եանն՝ էր անուանեալ:

Եւ այլ դրացի՛ որ մեռն եղեալ,

Եւ ի յազգաց՝ գրտիս նստեալ,

Սիրոյ պատգամ առ նա յղեալ,

Ձի եղիցի՛ թագաւորեալ»:

Տե՛ս Վահրամ Բարունի, *Ռաւանաւոր պատմութիւն*, էջ 228:

99 *Տե՛ս վերևում:*

100 *Մամլուք էմիր ալ-Հաջջ Ալա ալ-Դին Տայբարս ալ-Վազիրի ալ-Մալիհին է, ով, ինչպես ալ-Մաֆադին է գրում, Բայբարսի աներձագն էր: Վերջինիս կողմից 1260-ականներին սկզբներին նշանակվել է Դամասկոսի կառավարիչ: Այնուհետև նույն Բայբարսի հրամանով ձերբակալվել է և որոշ ժամանակ անցկացրել բանտում իր հրահանգներին չենթարկվելու համար: Մահացել է 1290 թ.: Տե՛ս Ibn al-Ṣuqāṭī, Tāli, s. 93 և al-Ṣafadī, Al-Wāfi, ք. 16, ք. 291-292:*

101 *Շարաֆ ալ-Դին Իսա Իբն Մուհաննա ալ-Տաին է՝ սուրիքյան տափաստաններում բնակվող Բանու Մուհաննա ցեղի առաջնորդը: Ալ-Ջահիր Բայբարս սուլթանն Իսա Իբն Մուհաննային 1260 թ. նշանակել էր բոլոր սուրիքյան բեգվիների էմիրը՝ amir al-ʿarab-ը: 1284 թ. նրա մահից հետո նրան այդ պաշտոնում փոխարինել է որդին: Ասորիքի արաբական ցեղերի կիսանկախ կազմավորումների մասին տե՛ս D. Ayalon, "The Auxiliary Forces of the Mamluk Sultanate", *Der Islam*, vol. 65 (1), 1988, pp. 23, 27-31; M.A. Hiyari, "The origins and development of the emirate of the arabs during the seventh/thirteenth and eighth/fourteenth centuries" *BSOAS*, vol. 38 (3), 1975, pp. 509-524, ինչպես նաև R. Amitai-Preiss, *Mongols*, pp. 64-69:*

102 *Բնագրում՝ minawwīrūn: Մրանք թշնամական տարածքները (մասնավորապես Հագահասկի դաշտերը) կրակի տվող գիեմորներ էին: Տե՛ս նաև R. Amitai-Preiss, *Mongols*, pp. 125-116:*

103 *Այս դեպքերի հետ քիչ թե շատ զուգահեռվում է Ամբասի այն Հաղորդումը, որը Բայբարսը 1271 թ. որոշել է արշավել Կիլիկիա: Լևոնը, սակայն, իրը պատգամավոր է ուղարկել սուլթանին ընդառաջ և համոզել վերջինիս վերադառնալ: Տե՛ս Մմբառ Սպարապետ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 253: Նույնպես և վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոն գրում է, որ 1271 թ. Այաս նորություններ են հասել, որ «Քաբլյանի սուլթան Բունդուկաղը մեծաթիվ մուսուլմաններով ներխուժել է Հերմենիա (իմա՝ Կիլիկյան Հայաստան)՝ սապատակելով Եկիբր»: Տե՛ս *The Book of Ser Marco Polo the Venetian Concerning the Kingdoms and Marvels of the East*, vol. 1, trans. and ed. with notes, maps and other illustrations by H. Yule, London, 1875, p. 22:*

104 *«Փայլում» բերդի մասին Հայալեզու սկզբնաղբյուրներում հիշատակություններ չկան՝ մասնավորապես այն ժամանակաշրջանի համար, երբ բերդը Կիլիկյան Հայաստանի տարածքի մաս է կազմել: Տվյալ պարագայում ինֆորմացիայի միակ աղբյուրն օտարալեզու՝ մասնավորապես արաբական պատմագրության հուշարձաններն են: «Փայլում»-ը բերդի ավելի ուշ շրջանի անվանումն է, այդ թվում երբ գտնվել է Կիլիկիո Հայոց թագավորության վերահսկողության ներքո: Մինչդեռ արաբա-բյուզանդական հակամարտության շրջանում է-ժԱ-րդ դարերում, այն արաբներին Հայտնի էր Հիսն ալ-Հադատ (Hiṣn al-Ḥadāt), կամ ավելի ծիշա՝ ալ-Հադատ ալ-Համրա (al-Ḥadāt al-ḥamrā), իսկ հույներին՝ Adata ("Αδατα) անվանումներով: Այն մոտ չորս դար շարունակ եղել է արաբա-բյուզանդական սահմանային գոտու՝ Τυγμῖτ-ի կարևորագույն ամրություններից (awāṣim) մեկը՝ մշտապես կռվանալով լինելով երկու կողմերի համար:*

*Բերդը պատկանում էր ալ-Ջաղիրայի (Հյուսիսային Միջագետքի) բերդաշարքին: Բերդի աշխարհագրական դիրքը ուղղամարական մեծ կարևորություն էր ապահովում նրա համար: Այն գտնվում էր Լեոնային Կիլիկիայի սահմանագլխին՝ Տավրոսյան լեռների ստորոտին՝ Մալաթիայի և Մարաշի միջև, և հսկում էր Ալքիստան տանող լեռնանցքը (Darb al-Ḥadāt): Այս առումով այն կարևորագույն հենակետ էր արաբների համար Բյուզանդական կայսրության փոքրասիական տարածքներ ներխուժելու և ընդհակառակը՝ իսլամական հողերը բյուզանդական արշավանքներից պաշտպանելու համար: Ալ-Հադասի պատմության վերաբերյալ համառոտ հոդվածներ կան Իսլամի հանրագիտարանի առաջին և երկրորդ հրատարակություններում: Տե՛ս EI⁷, vol. III, p. 187 և S. Ory, "Al-Ḥadath", in *EF²*, vol. III, pp. 19-20: Բերդի պատմության հատկապես փառաշրջանի աղբյուրներն իր հայտնի աշխատության մեջ լավագույնս մատնանշել է Գ. Լը Սթրենշը: Տե՛ս G. Le Strange, *Palestine under the Muslims. A Description of Syria and the Holy Land from A.D. 650 to 1500*, Alexander P. Watt, London, 1890, pp. 443-444 և նույնի՝ *The Lands of the Eastern Caliphate (Mesopotamia, Persia, and Central Asia from the Moslem conquest to the time of Timur)*, Cambridge University Press, Cambridge, 1905, pp. 121-122: Տե՛ս նաև F. Hild, *Das byzantinische Strassensystem in Kappadokien (Tabula Imperii Byzantini, Band 2)*, Österreichische Akademie der Wissenschaften, Wien, 1977, p. 138-140; W.M. Ramsay, *The Historical Geography of Asia Minor*, London, 1890, p. 301; Ն. Ալիջան, *Միսուան*, էջ 428; Բ. Կիլիկեան, *Մովզ-Տլուք և Լոոմ-Կլայ (պատմական և տեղագրական ուսումնասիրություն)*, Վիեննա, Միխիթարեան տպարան, 1904, էջ 111-115 (սխալմամբ ալ-Հադասը նույնացնում է Այնքաբի հետ); Գ.Ա. Սարաֆյան, *Պատմություն Անթիպի Հայոց*, հտ. Բ. Լոս Անճելլոս, Գալիֆորնիա, 1953, էջ 216; Հ.Ք. Նալբանդյան, *Արաբական աղբյուրները*, էջ 155; Թ.Խ. Հակոբյան, Սո.Տ. Մեղի-Բախյան, Հ.Խ. Բարսեղյան, *Հայաստանի և Հարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 3 (Կ-Ն), Երևանի համալս. հրատ., Երևան, 1991, էջ 300; T.A. Sinclair, *Eastern Turkey: an Architectural and Archaeological Survey*, vol. IV, The Pindar Press, London, 1990, p. 77-79: Ամրոցի պատմությանը մենք առանձին հոդված ենք նվիրել: Տե՛ս Գագիկ Գանդիլյան, «Կիլիկյան Հայաստանի բերդերն ու քաղաքներն ըստ մուսուլմանական աղբյուրների: Բ. Քայնուք», ՀՀՀ, Բեյրութ, 2021 (հանձնվել է հրատարակության):*

105 *Ուշադրության է արժանի մամլուքյան զորքի՝ «Տարուսի կողմերի» վրա արշավելու վերաբերյալ իբն Աբդ ալ-Ջահիրի հաղորդումը, որը ժամանակակից և հետագա սերնդի պատմիչները նույնությամբ փոխառել են: Սակայն, մուսուլմանական զորքի Տարուս հասնելը զույղն-ինչ անհավանական է աշխարհագրական տեսանկյունից: Մաբրուս Կանարը հետևապես ենթադրել է, որ արաբ պատմիչը հավանաբար նկատի է ունեցել Եփրատի և Ալ սուի միախառնման տեղում գտնվող «Փոսուր», այլ ոչ թե «Տարուս»: Բ. Ամրուսյը համաձայնել է Կանարի կարծիքին: Տե՛ս M. Canard, "Le Royaume", p. 238; R. Amitai-Preiss, *Mongols*, p. 132:*

106 *Քայնուքի առանձին հեղինակը ևս մի անդրադարձ է կատարում 1274/1275 թվականի անցքերի շարադրանքում, երբ բացատրում է Բայբարսի՝ Կիլիկիա ուղղված*

արշավանքի շարժառիթները: *Sh'u* ներքևում: Իսկ Իզզ ալ-Դին Իբն Շահադան այս արշավանքի մասին գրում է. «[Հիրայի վեց ճարտու] յորանասուններ թվականին մեր տեղ սուլթանը մտադրվեց արշավել Սոս երկիր: Դրա պատճառն այն էր, որ Հեթումը մահացել էր և նրանից հետո գահին նստել էր որդին՝ Անուր: Սա սկսեց փչացնել ամեն, ինչ եղել էր իր հոր և սուլթանի միջև, քանզի նամակագրում էր բարարների հետ և կարում Ռուսից եկող և արավանները յուսացնելով նրանց ապրանքները և տեղերին կոտորելով»: *Sh'u 'Izz al-Dīn ibn Šaddād, Al-A'ldāq al-ḥaṭīra*, ց. 1.2, ց. 344: Մամուլուքյան շրջանի մյուս պատմագիրները, ի տարբերություն Իբն Աբդ ալ-Ջահիթի, չատ անցողակի են անդրադառնում Քայնուքի ասմանը: Բայբարս ալ-Մանսուրին, Շաֆի Իբն Ալին, Բադր ալ-Դին Բաբթաշ ալ-Ֆախրին, Կիրտայ ալ-Իզզի ալ-Նազհիդարին ամրոցի գրավմանը մեկ-երկու նախադասություն են հասկացրել: *Sh'u Baybars al-Manṣūrī, Zubdat al-Fikra*, ց. 139-140; *Bektāš al-Fāḥirī, Tārīḥ al-Fāḥirī*, ց. 106; *Qirṭāy al-Ḥazindārī, Mağmū' al-nawādir*, ց. 158: Նրանցից Շաֆի Իբն Ալին, ով Մուհի ալ-Դինի զարմիկն էր և նույնպես սուլթանական գլխանատան աշխատակից, իր *Al-Manāqib al-sirriyya* երկում, որը *Al-Rawḍ al-zāhir* երկի համառոտագրությունն է, գրում է. «Այս տարի սուլթանը հայեցյալն զորքերից մի զորախումբ ուղարկեց Քայնուք, որ ալ-Հադաս ալ-Համրան է և որն ալ-Մուլթանաբարին հիշատակել է իր ընկիթերում: [Պատճառն այն էր, որ] մեծացել էր նրա [իմա՝ Հայոց արքայի] և Հայերի ամբարտապանությունը, երբ թաթարների հագուստներ էին հագնում և կողոպտում վաճառականներին: Ասպատակեցին այն, կովեցին այնտեղ եղածներին հետ, գերեզմանեցին, կոտորած ու թալան կաղձակերպեցին Հայոց երկրում»: *Sh'u Šāfi' ibn 'Alī, Ḥusn al-manāqib*, ց. 312: Ալ-Նուվայրին և Իբն ալ-Ֆուարսն անմիջական աղբյուր են ունեցել Իբն Աբդ ալ-Ջահիթին և աննշան տարբերություններով ներկայացնում են նրա պատումը: *Sh'u al-Nuwayrī, Nihāyat al-arab*, ց. 30, ց. 215; *Ibn al-Furāt, Tārīḥ al-duwal*, ց. 7, ց. 1: *Sh'u* նաև *al-'Aynī, 'Iqd-MMA*, ց. 2, ց. 118-119: Վերոնկարագրյալ իրադարձությունների հետ կարելի է գուցահեռել ասորի հակորդիների մափրիան Բար Հեբրեոսի այն հաղորդումը, ըստ որի 1273 թ. ամռանն Այնթաբից և ալ-Բիրայից՝ յեռների կողմից, ավազակախմբեր են եկել Կրավիա՝ մեծաքանակ զորքեր տանելով: Կլավդիան Սամոսատի և Մալաթիայի միջև գտնվող Հին ընթզ էր, որտեղ հավանաբար մուսուլման ասպատակիչները որոշել են արշավել Քայնուքի գրավումից հետո՝ էլ ավելի շատ ավար և գերիներ ձևաք ընրելու նպատակով: Ըստ պատմիչի՝ մուսուլմանները խուսափել են գիշերել այնտեղ և հատչտապ հեռացել են, քանի որ վախենում էին մոնղոլական զորքերի կողմից բռնվելուց: *Sh'u Bar Hebraeus, Chronography*, p. 450: Բայբարսը չի սահմանափակվում Քայնուքով. հաջորդ տարում արդեն Հայեպի զորքը՝ էմիր Հուսամ ալ-Դին ալ-Այնթաբիի հրամանատարությամբ արշավում է Մարաշ: *Sh'u* ներքևում:

107 Հայեպի Համգանյան էմիր Սայֆ ալ-Դաուլան (կառ. 945-967 թթ.) է:

108 Հեթում Ա արքայի (կառ. 1226-1269 թթ.) և Ամրատ Ապարապետի հայրն է՝ Կասանդին Գունդուտարը (մահ. 1263 թ.):

109 Կասիդայի արարքերն բնագիրը տե՛ս *al-Mutanabbī, Al-Dīwān, Dār Bayrūt, Bayrūt*, 1983, ց. 378-392, իսկ մանրամասն վերլուծության և ուսումնասիրության համար տե՛ս *J. Derek Latham, "Towards a Better Understanding of al-Mutanabbī's Poem on the Battle of al-Hadath", JAL*, vol. 10 (1979), pp. 1-22; *A. Hamori, The Composition of Mutanabbī's Panegyrics to Sayf Al-Dawla*, E.J. Brill, Leiden, 1992, pp. 10-11:

110 Պատմիչը վրիպում է. հիշյալ օրը կերակել է եղել:

111 Խորեզմշահերի պետության վերջին տիրակալը (կառ. 1220-1231 թթ.):

112 Խոսքը մոնղոլական Իլխանության մասին է:

113 Քրիստոնյա Հայ հետախույզի կամ սուբհանդակի օգտադրծումը հնարք էր՝ թե՛ Աբադայի և թե՛ Քաղղաղի կաթողիկոսի՝ մոտ կասկածներ չհարուցելու համար:

114 Այս միջադեպն իր գրքում քննարկել է նաև Թ. Ամիրտայը: Ըստ նրա ժամանակագրական առումով հիշյալ պատմության մեջ վկայաբերված պատրիարքը պետք է որ նետորականների կաթողիկոս Մար ԴենՀան լինի: Վերջինս, սակայն, աթուակալել է մինչև 1281 թ.: Հետևաբար ընտրությունը կանգնում է նրա նախորդի՝ Մար Մաքրեայի (մահ. 1265 թ.) վրա: Ժամանակի քրիստոնյա հեղինակները՝ Բար Հեբրեոսն ու Իբն ալ-Ֆուլատին, վերջինիս դեմ հյուսված խաղաղականքի մասին լուսն են, ինչը կասկածի տակ է դնում հնարքի հաղթությունը: *Sh'u R. Amitai-Preiss, Mongols*, p. 149: *Al-Nuwayrī, Nihāyat al-arab*, ց. 30, ց. 132-133; *Ibn al-Furāt, Tārīḥ al-duwal*, ց. 7, ց. 4-5; *al-Šafadī, Wāfi*, ց. 10, ց. 185:

116 Հմմտ. *al-Nuwayrī, Nihāyat al-arab*, ց. 30, ց. 216; *Baybars al-Manṣūrī, Zubdat al-fikra*, ց. 144; *Ibn al-Furāt, Tārīḥ al-duwal*, ց. 7, ց. 25; *al-Maqrizī, Al-Sulūk*, ց. 1.2, ց. 616: Բար Հեբրեոսի վկայությունը 500 Հեծյալներից բաղկացած մի զորախումբ մարտի է բռնվել Հայկական զորքի հետ և ջարդվել, որից հետո մոտ 8000-անոց մուսուլմանական զորք է հանել երկրի սահմանները (խոսքը հաջորդած արշավանքի մասին է, որի վերաբերյալ տե՛ս ստորև): *Sh'u Bar Hebraeus, Chronography*, pp. 452-453: Հնարավոր է, որ խոսքն այստեղ Հուսամ ալ-Դին ալ-Այնթաբիի գլխավորած այս զորախմբերի մասին է:

117 Արշավանքի վերաբերյալ Իբն Աբդ ալ-Ջահիթի հաղորդումն անմիջականորեն թե միջնորդաբար սկզբնաղբյուր է եղել ալ-Նուվայրիի, Իբն ալ-Ֆուլատի և ալ-Մակրիզիի համար. և հետևաբար նրանց ներկայացրած պատումները չնչին հավելյալ տվյալներ են պարունակում արշավանքի վերաբերյալ: Ուստի Բայբարսի կենսագրի պատումը քննելիս ստորև նրանց երկերին հղենք միայն նշանակալի տարբերություն ունենալու դեպքում: *Sh'u al-Nuwayrī, Nihāyat al-arab*, ց. 30, ց. 216-219; *Ibn al-Furāt, Tārīḥ al-duwal*, ց. 7, ց. 25-33; *al-Maqrizī, Al-Sulūk*, ց. 1.2, ց. 616-618: Իբն ալ-Դավադարին իր շտրագրանքը կառուցել է Իբն Աբդ ալ-Ջահիթի «Մաղկուն պատեղ» և Իբն Շադդադի «Ալ-Մալիմ ալ-Ջալիլի պատմություն» երկերի պատումների միաձուլմամբ, իսկ ղպտի Մուֆադդալ Իբն Ֆուլատը հավանաբար ձեռքի տակ գերագանցապես ունեցել է հենց Իբն ալ-Դավադարիի երկը: *Sh'u Ibn al-Dawādārī, Kanz al-durar*, ց. 8, ց. 177-182 և

Հմտ. Mufaḍḍal ibn Abī al-Faḍā'il, Al-Nahj al-sadiḍ (PO, t. 14), ֆ. 225-233 [p. 389-397]: Բայբարս ալ-Մանսուրին անձամբ մասնակցել է արշավանքին և Իրն Աբդ ալ-Ջահիրի պատուով ձեռքի տակ ունենալուց զաս' որոշ դեպքերում շարադրանքը համեմել է նաև իր սեփական հիշողություններով: Նա արշավանքի նկարագրությանն անդրադարձել է իր երկու երկերում: Տե՛ս Baybars al-Manṣūrī, Zubdat al-fikra, ֆ. 144-145 և Հմտ. Տայնի՝ Al-Tuhfa al-mulūkiyya, ֆ. 80-81: Ալ-Այնի պատմիչն իր հերթին հիմնական սկզբնաղբյուր է ունեցել Բայբարս ալ-Մանսուրին: Տե՛ս al-'Aynī, 'Iqd-MMA, ք. 2, ֆ. 132-134: 118 Այս առնչությամբ հարկ է ուշադրություն դարձնել Սմրատի մի հաղորդման վրա՝ մի բերդի շինարարության մասին. «Ի սոյն ամի (1272 թ.) թագաւոն Աեւոն հրամայեաց շինել ամրոց առ յերամբն Տաւրոսի, հանդէպ Բաշալաղ գօտալաղի Անդրէի պանարանիցն, կիսօրեայ ճանապարհաւ հեռի, ի պանայանութիւն այնմ գաւառին և հոշակատր ճանապարհին Խոզ ձորոյ: Որ և ի նոյն ամի յոր սկսաւ, կատարեաց զնա, և անուանեաց զնա Կատարեաց»: Տե՛ս Սմրատ Սպարապետ, Տարեգրք, Վենետիկ, էջ 254:

119 1274 թ. Լիոնում տեղի ունեցավ եկեղեցական ժողով, որի կազմակերպիչը Գրիգորիոս Ժ պապն էր:

120 Իզգ ալ-Դին Իրն Շահադան իր Al-A'laq al-ha'ira երկում գրում է. «Երբ եկավ [հիբրայի] 673 թվականը մեր ան սուլթանը մտադրեց թրախել Սիւր: Իրա պատճառն այն էր, որ շերտը մանացել էր և նրանից հետո զանին նստել էր նրա որդին՝ Առնը, ով սկսել էր փչացնել այն ամենն, ինչ եղել էր իր հոր և սուլթանի միջև՝ քարաքանդի հետ նամակագրությամբ, Ռումի երկրից դուրս եկող Բաբականները կտրելով, նրանց ապրանքները վերցնելով և տերեղին ձերբակալելով»: Տե՛ս 'Izz al-Dīn ibn Ṣaddād, Al-A'laq al-ha'ira, ք. 1.2, ֆ. 344: Արշավանքի ձեռնարկման հիշյալ պատրվակները հենց այնպես էլ, որ հիշատակվում են: Ճիշտ է՝ 1268 թ. Անտիոքում կնքված Հայ-մամլուքյան պայմանագրի տեքստը մեզ չի հասել, բայց պարզ է, որ այստեղ ակնարկվում են հենց այդ պայմանագրի որոշ կետեր՝ այն է՝ բերդեր չկառուցելը և եղածները չամրացնելը, Կիլիկիայի տարածքով անցնող վաճառականների անվտանգությունն ապահովելը, հետախուզական տեղեկություններ հաղորդելը: Պատահական է, որ հիշյալ պարտավորությունների մեծ մասն ամրագրված է նաև 1285 թ. պայմանագրում, որի տեքստն Իրն Աբդ ալ-Ջահիրը պահպանել է իր Taṣṣīf al-ayyām երկում: Այն թարգմանաբար կներկայացնենք ստորև: 121 Al-Qurān, 2/205.

122 Բայբարսին նվիրված իր կենսագրական երկում Իրն Շահադան արշավանքի կազմակերպման մեկ ուրիշ պատճառ է բերում: Ըստ նրա՝ Բայբարսին Կիլիկիա արշավելու միտքը հուշել է Ռումի դեռատի սուլթան Ղիյաս ալ-Դին Քալխուսթով Գ-ի վեզիր-խնամակալը՝ Մուհին ալ-Դին ալ-Բարվանան (Փերվանն): 1270-ական թվականների սկզբներին Փերվանն մի խումբ սելջուկյան էմիրների հետ միասին երկակի և խճճված դրվանապիտակյան խաղի մեջ մտավ սուլթան Բայբարսի և իլխան Աբաղայի հետ: Գաղտնի նամակագրություն հաստատելով Բայբարսի հետ՝ նա նրան խնդրեց զորք ուղարկել Ռումը մոնղոլներից զբաղելու համար, միայն թե վերջինս Ղիյաս ալ-Դինին չհեռացնի սուլթանության զահրից, իսկ իրեն թողնի վերջինիս աթարեկի պաշտոնում:

Բայբարսը ճիշտ է մեծ զգուշավորությունը, բայց այնուամենայնիվ ընդունում է Փերվաննի առաջարկը, քանզի նրան չէր կարող չհետաքրքրել Ռումը մոնղոլների տիրապետությունից իլիլու և այնտեղ մամլուքյան ազդեցություն հաստատելու այս ախորժիկի առաջարկը: Մակայն հետո իր գործողությունների անկանխատեսելիությունը անհիշելի էր ընկնող Փերվաննի հապաղում է: Ըստ Իրն Շահադանի՝ երբ սուլթան Բայբարսը 1275 թվականին Ասորիք է գալիս, Մուհին ալ-Դինը նրան յարում է Կիլիկիան Հայաստանի դեմ՝ հետևյալ ուղղությամբ հղելով. «Այս տարի թրախի՛ր Սիւր, և մյուս տարի ես երկ կրագավորեցնեմ [Ռումի] երկում, եթե Ալլահը կամենա»: Տե՛ս 'Izz al-Dīn ibn Ṣaddād, Tārīḥ, ֆ. 106: Բայբարսը տարբերվող տարբերակ է ներկայացնում Բար Հեբրեոսը: Նա գրում է. «Այս ժամանակ որոշ առաք եղևալորներ (կամ դեպիլներ, բնագրում՝ fāqir)՝ մոտ 30 հոգի, Կիլիկիա են եկել Ասորիքից՝ Տարսուսում թաղված խալիֆա Մամունի դամբարանից օրհնություն ամելու նպատակադրությամբ: Կապածներ կային, որ Բուեղուկաբը՝ եգիպտոսի տերը, կառոլ է ծպտված նրանց մեջ լինել՝ նպատակ ունենալով հետախուզել մյուս թագավորությունները: Կիլիկիայի տերը ձերբակալեց նրանց և վերցնելով՝ մի մեծ բերդում փակել տակ առավ: Երբ այս ասելոսեն եգիպտոս հասավ, սկսեցին ղեկավարներ հաճախել՝ բանախկվածներին հանձնելու հարցով»: Ըստ մափրիանի՝ երբ Լեոնը հրամարվել է բավարարել ղեկավարների պահանջը, եղիպտացիների գորքը Կիլիկիա է ներխուժել Մեծ Պահքի օրերին: Տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 452:

123 Բայբարսի արշավանքը, երևում է, իսկապես անակնկալ է եղել Հայկական իշխանությունների համար: Իր չափածո պատմության մեջ Վահրամ Բարսունին է գրում այդ մասին՝ սուլթանին մեղադրելով Հեթումին հետ կռած պայմանագիրն ու իր աված խաղաղության երզումը խախտելու մեջ.

«Ցեգիպոսս՝ սուլտանն ելեալ,
Որ յարխային՝ շերմոյ սկեսալ,
Յաւուրցն սե՛ և ուխտ եղեալ:
Այժմ իւր եղմանն՝ սաունգանեալ,
Եւ վերստին՝ այսէն ելեալ,
Եւ ոչ նախկին՝ ազղ աւարեալ,
Այլ բախարա՝ սապատակեալ:»

Տե՛ս Վահրամ Բարսունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 231:

124 Հին Կահիրեի երեք հիմնական դարպասներից (Bāb al-naṣr՝ «Հաղթանակի դարպաս», Bāb al-futūḥ, Bab al-Zuwayla) մեկն էր: Bab al-naṣr անունը կրող առաջին դարպասը կառուցվել է զեռ Կահիրեի հիմնադրման (968 թ.) ժամանակ՝ Փաթիմյան խալիֆա ալ-Մուհիզի գորապետ ալ-Ջաուհար ալ-Միկիլլիի ձեռքով: 1168 թվականին Կահիրեի տարածքն ընդարձակվել է, և ալ-Մուսթանսիր խալիֆայի հայազգի վեզիր Բադր ալ-Ջամալին հիշյալ դարպասի փոխարեն կառուցել է նոր ավելի հզոր մեկը՝ կոչելով այն Bāb al-'izz («Հզորության դարպաս»): Այնուամենայնիվ, ավելի գործածական է եղել դարպասի հին անունը, որով էլ պահպանվել է մինչև մեր օրերը: Ըստ ալ-Մակրրիզի՝

Կահիրեի վերահիշյալ երեք դարպասները կառուցել են Բադր ալ-Ջամալիի կողմից Ուռ-Հայից (Նըհսիա) ժամանած երեք (ենթադրաբար Հայ) ճարտարապետներ՝ յուրաքանչյուրը մեկ դարպաս: *Sb'u al-Maqāṭiṣi, Al-Ḥiṭaṭ*, ց. 2, ք. 269:

125 Հայալեզու աղբյուրներից մամալուքյան արչականի մեկնարկի մասին Հստակ թվական է տալիս 1275 թ. զաղափարված մի ավետարանի գրիչը. «Յամսնանն մաւտի, որ աւ Ի և Ե (իմա՝ 25) երկուարքի, գոռոզն փարաւն, արքանեակն սատանայի, առեալ զառաջնորդն իւր զԲելխար ամենայն զուրաֆն իւրով ի յազնուրիւն իւր և ամենայն հնազանդելոց նորա, զաւաժողով աւառեալ զամենայն երկիրն եզիպտացոց՝ ի մեծ յիշն յիտօրուս, մինչ գրեթէ Թ (10) բիւր եւ զասֆ նորա, և եկեալ երկիւս Կիլիկեցոց...»: *Sb'u ԶԶԷ, ԺԳ դար, էջ 454: Sb'u նաև Ա. Հովհաննիսյան, Կիլիկիա, էջ 81:*

126 Ըստ Իբն Շադդազի՝ սուլթանը Կահիրեից դուրս է եկել Շաաբան ամսի 2-ին (1275 թ. Հունվարի 31)՝ իրեն եղիպտոսում փոխարքա Հոչակիով էմիր Շամս ալ-Դին Ակսունկուր ալ-Ֆարիկանիին: Նա Դամասկոս է ժամանել նույն ամսի 29-ին՝ Հինգշաբթի օրը (փետրվարի 27), որտեղից դուրս է եկել Ռամադան ամսի 7-ին (1275 թ. մարտի 6): *Sb'u 'Izz al-Dīn ibn Šaddād, Al-A'lāq al-Ḥaṣīra*, ց. 1.2, ք. 344: Զարմանալի է, որ իր մյուս երկում նույն Հեղինակը որպես Կահիրեից սուլթանի մեկնման օր արձանագրել է ամսի 4-ը: *Sb'u 'Izz al-Dīn ibn Šaddād, Tārīḥ*, ք. 106:

127 Կենսագրական բառարաններում այս էմիրի մասին Հավելյալ տեղեկություններ չեն գտնվում: Նրա անունը Հիշատակված է սուլթանի՝ Կեսարիայի և Արսուֆի շրջաններում շուրջ 8 տասնակ մամլուք էմիրների տիրույթներ (ոմանց ամբողջական գյուղեր) շնորհելու վերաբերյալ սուլթանի հրապարակած կալվածադրում: Փաստաթղթի ընդօրինակությունը Համանարար կցված է եղել «Մաղղուն պարտեզ» երկին որպես Հավելված, բայց մեզ չի Հասել: Փոխարենը նրա երկից անմիջապես կամ միջնորդավորված օգտված մի խումբ պամիրներ, ինչպես Շաֆի իբն Ալին, Իբն ալ-Ֆուրաթը, ալ-Մակրիզին և այլք պահպանել են վավերագրի տեքստն իրենց երկերում:

128 Իզզ ալ-Դին Այբակ ալ-Աֆրամը Բայբարս սուլթանի օրոք զբաղեցրել է «ամիր-ջանդարի», այլ կերպ ասած՝ սուլթանական զինանոցի (zardhāna) վերակազմի և սուլթանի վրանի անվանադրության պատասխանատուի բարձր պաշտոնը: Մի քանի անգամ նշանակվել է նաև եզիպտոսի փոխարքայի պաշտոնում: Ընդհուպ մինչև իր մահը՝ 1295 թ., Իզզ ալ-Դինի մովելի Հաճախ վստահվել են նաև շինարարական և Հասարակական կարևորագույն աշխատանքներ: *Sb'u al-Šafadī, Wāfi*, ց. 9, ք. 268, ինչպես նաև N.O. Rabbat, *The Citadel of Cairo. A New Interpretation of Royal Mamluk Architecture*, E.J. Brill, Leiden-New York-Köln, 1995, p. 149; R. Irwin, *The Middle East*, p. 149; K. Raphael, *Muslim Fortresses*, p. 133:

129 *Al-Qurān*, 56/1-6.

130 *Al-Buhtūrī, Al-Dīwān, bi-tahqīq Hasan Kāmīl al-Širāfi, Dār al-ma'ārif, al-Qāhira*, 1964, ք. 124.

131 Երևում է «Միսի կամուրջ»-ի մոտ բավական դրամատիկ իրադարձություններ են տեղի ունեցել, որոնց մասին Իբն Աբդ ալ-Ջահիրը չի մանրամասնում: Փոխարենը Իբն Շադդազը գրում է, որ առաջինը, ով Հստակ «Սաի երկրի» սահմանները Բադր ալ-

Դին Բիլիք իբն Աբդ Ալլահ ալ-Խազինդարն էր՝ մի խումբ այլ էմիրների Հետ մեկտեղ: Սրանց զլխավորած ուժերը Ռամադան ամսի 21-ին (մարտի 20) ալ-Խաբանդարուն Հասնելով մուսուլմանական զորքն սկսել է սրի և կողոպուտի ենթարկել Հայ բնակչուկցանը: Սրանից Հետո ուղղվել են դեպի Մախ և տեսել, որ Հայերը ցանկանում են այրել և արդեն կրակի են տվել Ջահան գետի վրա գտնվող կամուրջը: Նրանց, սակայն, Հաջողվել է մարել Հրդեհը և գետանցում կատարել, որից Հետո վերծինդեր են եղել Հայերից՝ սրի քաշելով բուրբին՝ բացի կանանցից և երեխաներից: Հետո այս առաջապահ անդերին է Հասել սուլթանական զորքը և անցնելով կամուրջը երեք օր դադար առել այնտեղ: *Sb'u 'Izz al-Dīn ibn Šaddād, Al-A'lāq al-Ḥaṣīra*, ց. 1.2, ք. 344: Այս մանրամասները Հեղինակը Հավանաբար իմացել է սուլթանի Հետ արչականքին մասնակցող վեզիր Թալ ալ-Դին Մուհամմադ իբն Մուհամմադ իբն Ալի Իբն Հաննայի իրեն ուղղված նամակից՝ թվագրված Շավվալ ամսի 3-ով (ապրիլի 1): Այս նամակի մասին նա Հիշատակում է իր մյուս երկում: *Sb'u 'Izz al-Dīn ibn Šaddād, Tārīḥ*, ք. 106: Ալ-Բիրզալին երկրորդում է, որ մամլուքյան զորքերը Սաի երկիր են մտել Ռամադան ամսի 21-ին և դուրս եկել Շավվալի 20-ին: *Sb'u al-Birzālī, Al-Muqatafī*, ց. 1, ք. 325:

132 Իբն Շադդազն ավելի պարզ է արտահայտվում այս թուրքմենների մասին: «Սուլթանի՝ Սաի երկրի խոբերն ընթանալու ժամանակ մոտ 20 հզ. տուն բոմբեններ և մեծաթիվ բեղվիմներ են եկել են եկել՝ խնդրելու, որ խեց կյանք խնայի: Մասն շեքումի կողմն էին անցել, երբ քաքարները գրավել էին հախայսան շրջանները: Նրանցից ոմանց (սուլթանը) էմիրության աստիճան շնորհեց, ոմանց տիրույթներ՝ նրանցից սուր վերցնելով (բնագում)՝ Իձձ, այն է՝ թիվ վերցնելով»: *Sb'u 'Izz al-Dīn ibn Šaddād, Al-A'lāq al-Ḥaṣīra*, ց. 1.2, ք. 346: Ամենայն Հավանականությամբ նույն այս թուրքմենների մասին է խոսում Բար Հեբրեուսը, երբ գրում է. «Երկրում կային մոտ 10 հզ. բուրմեններ, որոնք նույնպես մեծ վնաս հասցրեցին Բիստոնյաների ունեցվածքին: Բայց երբ եզիպտացիները հեռացան, աբան (իմա՝ Ասոր) նրանց բոլորին սպանեց, գեթեց նրանց ընտանիքներին, հափշտակեց նրանց ողբ ունեցվածքը»: *Sb'u Bar Hebraeus, Chronography*, p. 453: Վահրամ Բարունու չափածու պատմությունից էլ պարզ է դառնում, որ Հիշյալ թուրքմենները խաշնարածների ցեղեր էին, որոնց Հայոց արքան իր երկրում բնակվելու և իրենց Հոտերն արածեցնելու վայրեր էր Հատկացրել:

«Անձամբ գնետ՝ զօրացն եղևալ,

Որ Բան զաւագ՝ առաւելեալ.

Այլ և աստի՝ զԱւարն առեալ,

Եւ գԹաւման՝ ըն ժողովեալ:

Որք ի վաղուց՝ հովիւք եկեալ,

Խաշնադարման՝ և ասա բնակեալ.

Սոխ տեղեակ՝ երկրս եղեալ,

Եւ զամենայն՝ գոռ իմացեալ:

Որք իբր ի նա՝ եղեն յարեալ.

Ջրոյր երկիրս ապականեալ.

Քիրապատիկ՝ չար գործեցեալս:

Տե՛ս Վանուս Բարուճի, Ոսանաւոր պատմութիւն, էջ 231-232:

Եվս մի վկայութիւն այս դեպքերի մասին. 1286 թվականին դրված Հեթում արքայրդու Ճաշոցի Հիշատակարանում կարգում ենք. «... սուլթանն Մըսա, որ յաւուր Հայոց քաղաւորիս եմաւս ի Կիլիկիա, դարձեալ յաւուրս Ատոնի եկն գորոք բազմամ յաշիարեսն Հայոց, և եկեալ Արապ և Քուրման ամբոխիմ. որ ընդ նմա միարամեալ կին, և անտեցին դարձեալ գաշխարեսն Կիլիկիայ: ... Բայց իբրև թշնամիքն գնացին... նախ կոտորեաց զբազում գորս սուլթանին Մարայ ի Հարունին, և ապա զբազումս ի Քուրմ սեռէն՝ և յոյլով առ և ասար շահեցաւ, այլ և եզիտ շնորհս առաջի գլխաւորին Մուղայ գորուն, մինչ զի պարզևս և պատիւս յոյլով շնորհեաց նմայ, ամեն»: Տե՛ս ՀԶԷ, ԺԳ դար, էջ 589:

133 Իբն Շադդազը գրում է, որ երբ սուլթանը Միս է Հասել, տեսել է, որ Լեոնը փախուստ է տվել այնտեղից, ուստի նրա հետևից է շարժվել, բայց չհասնելով հետ է վերադարձել և պաշարել քաղաքի միջնաբերդը, որը դիմադրություն է կազմակերպել: Տե՛ս 'Izz al-Dīn ibn Šaddād, Al-A'lāq al-ḥaṭīra, ց. 1.2, ց. 346: Բար Հեբրեոսն էլ գրում է, որ Միս Հասնելով, Բայբարսն այնտեղ ոչ ոքի չի գտել, քանի որ ամբողջ բնակչությունն ապաստան էր գտել միջնաբերդում: Տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 453: Հակոբիկների մաքրիանը պատմում է նաև ասորական, Հայկական և հուևական մի շարք վանքերի և եկեղեցիների կործանման և բազմաթիվ հողեկորականների սպանություն մասին: Մար Իզնատիոսը՝ Հակոբիկների պատրիարքը, ստիպված է եղել թողնել Սոփ մերձակայքում գտնվող իր նստոցը և փախչել Վահկա բերդ, մինչև թշնամու հետանալը: Տե՛ս նույն տեղում: 1275 թ. ավետարան ընդօրինակած Ստեփանոս Վահկայցիի անունով ժամանակակիցն այս առնչությամբ գրում է. «Եւ գայս ոչ միտ անեալ թագաւորիս մեռոյ և ամենայն զաւրաց նորա, այլ որպէս արեալք և յիմաբեալք կացին և ոչ կարէին զղկմ ունել, և նեշտակութիւն անալէին ի խաղաղութիւն և կամ ապի հարկս, զի մի եկեալ գերեցել զամենեստան»: Տե՛ս ՀԶԷ, ԺԳ դար, էջ 454: Իբն Վասիլի շարահարող Իբն ալ-Մուղայիլը. Հիշյալ անցքերի մասին խոսելիս, մեջբերում է արչաժանքի մասնակից և սկանառես Ֆախր ալ-Դին Իյազ ալ-Մուկրիի՝ Բայբարսի ներքինու Հաղորդած անձնական տեղեկատվությունը. «Երբ մտանք Սիւ, Սիւ տիրոջ ներակայեցի շարեւում գտնվող լուսններից յարե հասան, որ նա իր գործերով՝ մտա 2 հազար հեծյալ, որից 500-ը՝ ֆրանկ, 1500-ը՝ հայեր, ուղևորվել է Իբն Կարամանի [երկրին] հաղող լեռներ»: Տե՛ս Ibn al-Mugayzil, Dayl, ց. 80: Հեղինակի Հաղորդած այս տեղեկությունը Հայկական ուժերի թվաքանակի և կազմի մասին բացառիկ է: Լեոնի՝ Իբն Կարամանի երկրի կողմը գնալու պատճառը Հազմանարար գոնն թուրքմենական Հարձակման վտանգը չեղբացնելու նրա մտադրությունն էր, ովքեր առաջին անգամ չէ, որ օգտվելով մամլուքների ներխուժումից, պիտի իրենց Հեթոնի ավերի ու ավարի ենթարկելին երկիրը: Հայոց արքայի անմիջական շրջապատում մամլուքյան լրտեսների առկայության մասին վկայությունն էլ խոսում է մամլուքյան հետախուզական Հղոր տեխնիկայի մասին:

134 Քաղաքի միջնաբերդը, ինչպես երևում է, մամլուքներն այդպես էլ չեն գրավել: Սուլթանը վճռել է ժամանակ չծախսել նրա ստան վրա, մանավանդ որ այնտեղ չէր գտնելու Հայոց արքային, ով հետացել էր նախքան մամլուքյան զորքերի ժամանումը: Բայբարսը, դուրս խուսափելով մոնղոլների հակազդեցությունից, գերադասել է սրբնթաց ասպատակ փոշի երկրով մեկ և ահռելի ավարով հետ դառնալ:

135 Ըստ Բար Հեբրեոսի՝ մուսուլմանները Տարսուսում եղած մի աշտարակից ազանի կոչ են արել և շարժվել դեպի ծովափնյա շրջանները՝ ընդհուպ մինչև Կոռիկոս: Տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 453: Ըստ արքունի դիվանագետ Վահրամի՝ թշնամական գիտնվողները կրակի են տվել Տարսուսի Սր. Սոֆիա տաճարը և ավարսուլթյան ենթարկել քաղաքը.

«Ջերկիրս գայս՝ չոչապատեալ.

եւ բովանդակ՝ հոյ տուեալ,

եւ զՏարսուս՝ մեծն անեալ:

Ջերկելին՝ և զհոյակեալ,

Ջաւր Սոփեայ՝ տանան վառեալ,

եւ զհաղախն՝ աւարն անեալ,

եւ այսպիսի՝ շարիս գործեալս:

Տե՛ս Վանուս Բարուճի, Ոսանաւոր պատմութիւն, էջ 232:

136 «... Քան գառաջին՝ ըն գար տեսեալ,

Ձի ի լեռանցն ի վայր բերեալ.

Ջիւաչն և զմարդիկ՝ որ բառացեալ,

եւ բովանդակ՝ ի սուր մաշեալս:

Տե՛ս Անդ, էջ 232:

137 Իսկ ըստ Բար Հեբրեոսի՝ թշնամին Այաս է Հասել մարտ ամսի 25-ին՝ սպանելով ըլլոր նրանց, ում գտել են այնտեղ: Բնակչության մի մասը, որ Հասցրել էր փախչել, ապաստան էլ գտել քաղաքից ոչ հեռու գտնվող մի փոքրիկ կղզու վրա: Բայց փրկված լինելով եղիպտոսի արաբներից, այսացիներն այժմ էլ ենթարկվել են Ֆրանկ ծովահենների հարձակմանը, ովքեր Հափշտակել են նրանց ողջ ունեցվածքը՝ մինչև իսկ վերաբերուն, որ իրենց հետ կղզի էին տեղափոխել, թեև չեն սպանել: Տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 453:

138 «Վազարդնե» տեսելով նկատի ունի նժուգներին:

139 1275 թ. մամլուքյան արշավանքն աղետ էր Կիլիկիայի համար, նույնպիսի կամ գուցե ավելի սարսափելի աղետ, քան 1266 թ. պատահածն էր: Ըստ Բար Հեբրեոսի՝ սպանվածների թիվը հասնում էր 60 հազարի, իսկ գերություն քրված կանանց ու երեխաների թիվն անհաշվելի էր: Տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 453: Հայ ժամանակակիցներից մեկը դառը կսկիծով և ափսոսանքով է գրում երկրին պատուհասած դժբախտության մասին: Նա գրում է. «Եւ նա յանկարծակի, որպէս զհուր ցրացեալ ի վերայ ամենեցուն, ցիր և ցան արաւ զնասս, և զամենայն հաղախ և զգնաւա՛ գաղտայինս և

զեռնային, հրկեղ արաւ և գարս և զկանայս ի Բանամեծից ի վե՛ր՝ ի սուր սուտերի մաշեաց, և զտղայսն առ ոսոս երիվարացն արկեալ զի առուեացին, որպէս զմարախ անթի բազմութեամբ, և զաղբուսն և զմանկութն զերի տարեալ յաշխարհն իւր, և կացեալ յերկիրս Կիլիկեցոց զաւուրս երեսուն անասան և անհոգ, և ոչ ոք էլ ընդդէմ նո[րայ] և ոչ մի, և ոչ մնաց ի սանմանացն դաշտ[այն]ոց, ոչ մեծ և ոչ փոք որ ոչ ըմբռնեցաւ ի ձեռս նորա ամենայն ստացուածով իւրեանց: Եւ մնաց երկիրս այս սուրակ յամենայնի, զատ ի Բարանձաաց և յամրոցաց աշտարակաց, և զաղէս սարին և կսկիծ որպիսի կարացից ընդ գրով արկանել, զի հակառակն նշմարտութեան և մարդասպանն ի սկզբանէ նախանձեցաւ ընդ նշմարիա գառնն զնեումն, որ յամենայն ասուր զամենեւեան վերստին նորոգե՛ր և յուսաւորէ, և զաւրացուցանէր զհաստացեալս իւր»: *Տե՛ս ՀԶԶ, ԺԳ դար, էջ 454*: «Եւ ի թուիս Հայ[ոց] ՁԻԿ (1275)... յորում քառ մեղաց մեռոց զաւրացեալ անարէն իշխանն հարաւոյ՝ աւերն Մարայ, կեալ աշխարհս Կիլիկեցոց բազում զաւաւմ, և ի սուր սուտերի մաշեալ զընակիշչ գաւառիս, և զԳաղա և զԳեաւուս հոյնաւակ արարեալ, և անթիս բազմութիւն մարդկան ի գերտփոն վարեալ, բազում աւարա՝ ողջանդամ յաշխարհ իւր դարձաւ: Եւ մնացեալսն ի յերին և ի ձեռպս վիմաց յահէ անարիկն այսր-անոր դեզերեալ՝ ակն անկելով ռոզմուրեան և ինամոցն Աստուծոյ»: *Տե՛ս Անդ, էջ 456*: 140 Պատահական չէ, որ Կիլիկիայում Հայկական պետութեան կայացումը կապվում է Մլինհի իշխանի անվան հետ: Ձէ՞ որ նրա օրոք ձեռք բերված մեծագույն նվաճումը բյուզանդացիների նկատմամբ տարած վճռական Հաղթանակն էր ու ցածրագիր Կիլիկիայի կրեք խոշոր քաղաքներին՝ Աղանայի, Տարսուսի և Մամեստիայի (Մոսիս) գրավումը: Հաղորդումը, սակայն, Մուհի ալ-Դինի Հեղինակային շարադրանքը չէ: Նրա սկզբնաղբյուրը Հալեպի էմիր Նուր ալ-Դին Ջանգիի ասենաղպիր և քարտուղար Իմադ ալ-Քաթիբի ալ-Իսֆահանի (մահ. 1201 թ.) *Al-Barq al-šāmī* («Ասորիյան կայծակ») աշխատությունն է: Մատենադրի վկայությունները, սակայն, միջնորդավորված են մեզ հասել, քանզի երկի ընտրված ամբողջական տեքստով չի պահպանվել: Աշխատության մի մասը պահպանվել է ԺԳ դարի Հեղինակ ալ-Բուեդարիի Համառոտագրությունում (*Sanā al-Barq al-šāmī*՝ «Ասորիյան կայծակի փայլատակում» վերնագրով), որում Մլինհի վերաբերող Հաղորդումը ցավոք տեղ չի դուրս: Փոխարենը մեզ հետաքրքրող Հատվածը մասնակի «սրբագրություններով» (ոմանք նախորդներից փոխառելով) պահպանել են ավելի ուշ շրջանի արաբագիր մատենագիրները՝ Աբու Շաման, Իբն Աբդ ալ-Ջահիրը, Իբն ալ-Դավադարին, ալ-Նուվայրին, ալ-Ջազարին, ալ-Ջահաբին, զպտի մատենագիր Մուֆադդալ իբն ալ-Ֆադալը (Իբն ալ-Ասալ), Իբն ալ-Ֆուրատը, ինչպես նաև ԺԵ դարի արաբ մատենագիր Իբն ալ-Շիհնան: Այս իրադարձությունների առնչությամբ իր «Վիակատար պատմության» մեջ վկայություններ է ավանդել նաև Իբն ալ-Ասիրը, ով չնայած սովորության Համաձայն չի Հիշատակում իր աղբյուրը, բայց շատ հավանական է, որ նրա պատումը նույնպես Իմադ ալ-Քաթիբի Հաղորդման մոտավոր վերաշարադրանքն է:

141 Միսլամունք է: Մլինհի Հաղթանակը Կիլիկիայի բյուզանդացի դուքս Կալոմանի նկատմամբ էր: Այս մասին ավելի ստույգ տեղեկություն Արաբալեզու աղբյուրներից կա ԺԳ դարի մի տարեգրության մեջ՝ «Այդ քվականին Կալոմանը բախվեց Մալին իբն

Լալունի հետ, ու շախախվեց Կոլոմանը, և նրա զորի մեծ մասը սպանվեց»: *Տե՛ս Cl. Cahen, "Une chronique syrienne du VIe/XIIe siècle, le "Bustān al-Jāmi", BÉO, L'Institut français de Damas, tomes VII-VIII, Années 1937-1938, p. 140* և *Imād ad-Dīn al-Isfahānī, Al-Bustān al-ġāmī li-ġamī' tawārīḥi ahl al-zamān, bi-taḥqīq Muḥammad 'Alī al-Ṭa'ānī, Mu'assasat Ḥamāda, Irbid, 2003, p. 405*: Ուշադրով է, որ այս երկը նույնպես վերագրվում է Իմադ ալ-Դինին: Հարցի առնչությամբ տե՛ս Անդ, էջ 13-23, ինչպես նաև *Nu'mān Muḥammad Ḥubrān wa-Muḥammad 'Alī al-Ṭa'ānī, "Idāfat ḥawla Kitāb al-Bustān al-ġāmī li-ġamī' tawārīḥi ahl al-zamān wa-nisbatuhu li-l-Imād al-Isfahānī (519-597 h./ 1123-1200 m.)", MMM, al-'adad 17, al-Qāhira, 1996, p. 233-263*:

142 *Մնազրում* yu'azzimu amr al-Rūm է, ինչը թարգմանվում է, որպես «զովարանելով հռոմեացիներին», ինչը լրիվ Հակասում է կոնտեքստին: *Մրան Հակասակ՝ Իբն ալ-Դավադարիի մաս* yu'azzimu amrahu է, այսինքն՝ «զովարանելով նրան (իմա՝ Մլինհին) [խալիֆայի մաս]», ինչն արդեն լրիվ Համապատասխանում շարադրանքի տրամաբանությանը:

143 Արբասյան իսլամաբանությանից փաստական անկասկած չունի ստացած և եզրագրողի և Ասորիքի ընդարձակ տիրույթներ ընդգրկած Տուլունյան պետության (868-905 թթ.) հիմնադիր էմիրը, որը կառավարել է 868-884 թվականներին:

144 Արբասյանների կուսակալն էր Տարսուսում:

145 Աբու ալ-Միսք Քաֆուրն է, որն Իսլամիայի եզրագրողի փաստացի տիրակալն էր 946-968 թվականներին:

146 Արաբալեզու աղբյուրներում այս Հայաբնակ գյուղի և նրա տեղադրության մասին ոչ մի հավելյալ տեղեկություն չենք դառնում:

147 1277 թ. կազմակերպի Հանդամանքներում Բայբարս ալ-Բուեդուկարին կնքեց իր մահկանացուն, և նրա փոխարեն սուլթանության զահին նստեց սակավին երիտասարդ որդին՝ ալ-Մահդ Բարաքան Նանը (1277-1279 թթ.): 1279 թ. սուլթանը եզրագրողի կան զորքերը շարժեց դեպի Դամասկոս: Պալատական երկու ազդեցիկ էմիրներից՝ Մայք ալ-Դին Կալափուն ալ-Ալֆիի (ապաղտ սուլթանը) և Բազր ալ-Դին ալ-Բայսաբիի Հնարավոր խարդախներից զգուշանալով՝ նա նույն թվականի դարձանքը նրանց ուղարկեց Կիլիկիայի դեմ արշավանքի, որպեսզի գոնե առժամանակ Հեռու պահի քաղաքական Հարթակից և այդ ընթացքում իր անձնական մատուցների (al-ḥassakiyya) օգնությամբ ամրացնի իր դիրքերն ու վերադառնալուն պես զրկի նրանց լգձ-ներից և ձեռքազրկի: Նրանցից յուրաքանչյուրին սուլթանը եզրագրողի և ասորիքյան զորքերից տրամադրեց 10 հազարական զինվոր: Կալափունի Հանձնարարից ասպատակել Միսք, իսկ մյուսին՝ ալ-Բայսաբիին, գրավել Հռոմիլայի Հայոց կաթողիկոսարանը: *Տե՛ս 'Izz al-Dīn ibn Šaddād, Al-A'lāq al-ḥaṭīra, ց. 1.2, p. 348-349; Baybars al-Manšūrī, Zubdat al-fikra, p. 166-167, ինչպես նաև Գույնի՝ Al-Tuḥfa al-mulūkiyya, p. 88 և Muḥtār al-aḥbār, p. 66: Տե՛ս նաև al-Yūnīnī, Dayl (Ḥaydarābād), ց. 3, p. 297; Ibn al-Furāt, Tārīḥ al-duwal, ց. 7, p. 140-141; R. Amitai-Preiss, Mongols, p. 180*: «Նրանք շարժվեցին Սիս ուղղությամբ՝ դժկամությամբ լցված» (wa-fi nafūsihim min zalika ihn), - այս առիթով գրում է ալ-Մակրիզին: *Տե՛ս al-Maqrīzī, Al-Sulūk, ց. 1.2, p. 650*:

Այսպիսով, պայմանավորված լինելով Սուլթանուլթյան վերնախավում տիրող քաղաքական մթնոլորտով՝ այս արշավանքն իրականում նվաճողական նպատակներ չէր հետապնդում: Սուլթանը, էմիրներին երկու տարբեր ուղղություններով ուղարկելով, մտադիր էր միայն ժամանակ չափել իր մտադրությունները կենսագործելու համար: Մամուլուքյան պատմիչներից միայն Շաֆի իբն Ալին է, որ հաղորդում է, թե իբր հայկական տարածքների վրա հարձակվելու գաղափարն ալ-Բարաքա Խանին առաջարկել է Կալվուներ: *Sb'u Šāfi' ibn 'Alī, Al-Fadl al-ma'ūd, ք. 40:*

Ըստ Իբն Շաղաղիի՝ նախ ալ-Բայսարին օղակեց Հոռոմկան: Մի քանի օր անց մամուլուք էմիրը նամակ հղեց սուլթանին՝ հաղորդելով, որ «Սաի տերը» դեսպաններ է ուղարկել իր մոտ և իր երկիրը չստպատակելու դիմաց 200 հզ. դիրհամ է առաջարկել: Այս բանից հետո սուլթանի կարգադրությամբ ալ-Բայսարին թողնեց Հոռոմկան և միացավ Կալվուների տրամադրության տակ եղած զորքերին: Էմիրներն ավարտության ենթարկեցին հայոց թագավորությունը: Նրանք Կիրիկիայում մնացին մոտ 13 օր՝ նույն թվականի Մուհարրամ ամսի 28-ին Հասնելով մինչև Տարսոս, ապա Հակայական ավարով վերադարձան Դամասկոս: *Sb'u 'Izz al-Dīn ibn Šaddād, Al-A'lāq al-hatīra, ք. 1.2, ք. 348-349:*

Հոռոմկայի պաշարման մասին ամենամանրամասն տեղեկությունները հաղորդում է Բար Հեբրեոսը: Ասորի մափրիանի վկայությամբ՝ եգիպտացիները՝ ընդհանուր հաշվով 9 հազար հեծյալ և 4 հազար հետևակ, Հոռոմկան գրոհեցին 1279 թ. մայիսի 19-ին: Մամուլուք գորապետը 2 դեսպան (մեկը՝ արքա, մյուսը՝ հայ) ուղարկեց Կաթողիկոսի մոտ՝ ասելով, որ սուլթանը պահանջում է խաղաղության հանձնել թերզը: Բայսարին խոստացավ, որ Կաթողիկոսին և նրա բոլոր հոգևորականներին զրա դիմաց թույլ կտրվի Երուսաղեմ դնալ, որտեղ նրանց համապատասխան կալվածք (դյուղ) կհատկացվի: Ալ-Բայսարին որպես երկրնորանք առաջարկում էր նաև Կիրիկիա գնալ, և այդ դեպքում նույնպես նրան մեծ պատվով կճանապարհեն: Հայոց եպիսկոպոսպետի պատասխանը շատ հակիրճ էր. «Ես կպայքարեմ մինչև մահ, քանզի չեմ կարող միաժամանակ հավատարիմ լինել թե՛ Ասածուն, և թե՛ արևային»: *Sb'u Bar Hebraeus, Chronography, p. 461:* Երկխոսության եզրեր չզատելով՝ էմիր ալ-Բայսարին Տրամայեց զրոհել Հոռոմկան և այն ուժով վերցնել: Համառ պայքարից հետո ալ-Բայսարին ի վերջո հաջողից գրավել քաղաքը, բայց նա անկարող եղավ վերցնել Հոռոմկայի միջնաբերդը, որտեղ որ ամրացել էր ամբողջ բնակչությունը: Մամուլուք հրոսակները հինգ օր շարունակ ավարտության ենթարկեցին քաղաքն ու նրա արվարձանները և հրո ճարակ դարձրին, ոչնչացրին այգիները և անգամ քաղաքի բաղնիքները քանդեցին և տեղափոխեցին Հալեպ: *Sb'u* նույն տեղում: Այստեղ «Հալեպ» թարգմանվածը բնագրի *Bīrōd* է (Բերթա), որ Սուլուարսը նույնացնում է ալ-Բիրայի հետ (A. Stewart, *The Armenian Kingdom, p. 53*), որ այս ժամանակաշրջանում մեջ թերևս միջոտ *al-Bīrāh* ձևով է տրված: Բար Հեբրեոսի երկի իր արարեքեն թարգմանության մեջ Իսհակ Արժալան *Bīrōd*-ն նույնպես Հալեպ է թարգմանել: *Sb'u* *Ibn al-Ibrī, Tarīḥ al-zamān, tarḡamat Ishāq Armala, Dār al-Maḡriq, Bayrūt, 1991, 339:* Ասորի մատենագրի վկայու-

թյամբ՝ այն ժամանակ, երբ էմիր ալ-Բայսարին պաշարել էր Հոռոմկան, սուլթան ալ-Մալիք ալ-Մաիդը նամակ ստացավ Թուսի սուլթանուլթյան թուրքմեն կարամաններից (*bar Karaman*) այն մասին, թե իրենք ուզում են զորք ուղարկել մամուլուք սուլթանին, բայց չեն համարձակվում անցնել հայոց թագավորության տարածքով, որովհետև վախենում են մոնղոլներից և հայոց թագավորից: Սուլթանի կարգադրությամբ ալ-Բայսարին դիմեց Հոռոմին և վերջինիս համաձայնությամբ կարամաններին ուղեկցեց մինչև Ասորիք՝ ճանապարհին 15 օր շարունակ թալանի ենթարկելով այժմ արդեն Կիրիկիայի հայկական բնակավայրերը՝ մասնավորապես Անարզարան: *Sb'u Bar Hebraeus, Chronography, pp. 461-462:* *Sb'u* նաև A. Stewart, *The Armenian Kingdom, p. 53:*

Հատկանշական է, որ Կալվուների և ալ-Բայսարիի արշավանքի նկարագրություններում չկան վկայություններ հայ-մամուլուքյան ռազմական բախման վերաբերյալ: Ակնհայտ է, որ Հայոց արքան, ինչպես 1275 թ. արշավանքի ժամանակ, այնպես էլ այս դեպքում, չունենալով թշնամուս դիմագրավելու բավարար ուժեր և ոչ էլ թիկունքում ունենալով մոնղոլների աջակցությունը՝ պարզապես նախընտրել էր ամբանայ իր բերդերից մեկում սպասելով մամուլուքների հեռանալուն:

Իրենց «առախերթյունը» ավարտին հասցրած՝ մամուլուք էմիրները հետզարձի ճանապարհ վերցրին ղեղի Դամասկոս՝ առժամանակ իջևանելով Մարջում: *Sb'u al-Maqrīzī, Al-Sulūk, ք. 1.2, ք. 652:* Այստեղ նրանք տեղեկացան ալ-Բարաքա Խանի իրական մտադրությունների և նրա *hasakiyya*-ների կողմից իրենց ղեմ կազմակերպվելիք դավի մասին: Միավորելով իրենց ուժերը՝ էմիրները գահընկեց արեցին ալ-Բարաքային՝ նրա փոխարեն Կալվուների խնամակալությանը գահ բարձրացրին Բայբարսի մյուս որդուն՝ մանկահասակ ալ-Ադիլ Սուլամիչին: Մոտ երեք ամիս անց վերջինս նույնպես հեռացվեց իշխանությունից և սուլթանության միահեծան տիրակալ Հոռոմկեց Կալվուներ՝ ալ-Մալիք ալ-Մանսուր մականվամբ (1279-1290 թթ.):

148 Կիրիկիայի տարածքով Թուսի սուլթանուլթյան անցնող առևտրական ուղիների վերաբերյալ ուշադրավ հաղորդում է: Թվարկված ապրանքների մեծ մասն ավանդաբար նաև Կիրիկիայի Հայաստան ներկրվող ապրանքների թվին են պատկանել, հետևաբար խոսքն այստեղ տարանցիկ առևտրի մասին է, ոչ թե Կիրիկիայի Հայաստանում ծագում ունեցող ապրանքների արտահանման: Վերևում ձեռքով և գոմեջներով եգիպտոս շտապող և ճանապարհին Քայնուքի հայ բնակիչների կողմից ավարտության ենթարկված թուրքմենների մասին վերը ներկայացված հաղորդումը նույնպես Կիրիկիայի տարածքով կատարվող տարանցիկ առևտրի ևս մի օրինակ է:

149 Այս հատվածն իր վերջերս հրատարակած զրքում թարգմանել է նաև Գ. Բուքը: Աչքի են զարնում որոշ տարբերվումներ և վերիպումներ: Օրինակ՝ նա բնագրի «ahada 'ašara alf dirham wa-sittmi'a dirham» արտահայտությունը թարգմանում է «12,000 dirhams and 600 dirhams»: Բնագրի «wa-ṣuḥbatuhum al-qarār 'alayhi li-muddat sanatayn»-ը նա թարգմանել է՝ «and it was decided to dwell with him for a period of two years»: Արարեքեն *rasm* բառի նշանակություններից մեկը «հալեպ»-ը կամ «տարս»-ն է, որը Բուքը թարգմանում է «officially»: Հմմտ. D. Cook, *Chronicles, p. 64:*

Ինչևէ, շատ հետաքրքիր Հաղորդում է, որ, անկասկած, պարզաբանման կարիք ունի: Նախ և առաջ Հարկավոր է ճշտել, թե ովքեր են այս իսմաիլականները, որոնց նկատմամբ Հայոց արքան Հարկային պարտավորություն ունի: Շիախան իսլամի ճյուղերից Համարվող իսմաիլիզմի հետևորդները (իրենց մի քանի ենթաճյուղերով և աղանդներով), որ ոչ վաղ անցյալում անգամ պետական կազմավորումներ էին ունեցել՝ ի դեմս եղիպտոսի Յաթիմյանների (կործանված 1171 թ. Ալյուբյանների կողմից) և Ալամուտի Նիզարիների (ստեղծված Հասան ալ-Սաբահի կողմից 1090 թ., կործանված 1256 թ. մոնղոլների կողմից), մամլուքյան դինաստիայի Հաստատումից հետո դեռ շուրջ երկու տասնամյակ պահպանում էին իրենց վերահսկողությունն Ասորիքի մի շարք ամրոցների նկատմամբ: Նրանց կենտրոնատեղին Համարվող Մասյաֆ բերդը և մի քանի այլ բերդեր (այ-Քանֆ, ալ-Կադմա, ալ-Խավաբի, ալ-Խուսաֆա և այլն) սուլթան Բայբարը զբաղվել է միայն 1270-1273 թվականների միջակայքում՝ դրանք ենթարկելով մամլուքյան կենտրոնական իշխանությանը: Իրն Աբդ ալ-Չահիրի Հաղորդումը փոխառել է նաև Բայբարս ալ-Մանսուրին՝ դուրդն-ինչ փոփոխված ներկայացնելով. «Այդ թվականին եկան ալ-ժա՛ա-ի դեսպանները՝ ուղարկված Սաի տիրոջ մաս, և բերեցին նրա համար սանձանված և ալ-ժա՛ա-ի կողմից սուլթանական գանձարան հանձնվելիք գումարը, որն ամեն տարի կազմում է 11600 դիրհամ»: Տե՛ս Baybars al-Manṣūrī, Zubdat al-fikra, ֆ. 230: Ինչպես կարելի է տեսնել, Բայբարի կենսագիրը 11600 դիրհամը կոչում է երկու տարվա Հարկ, իսկ Բայբարս ալ-Մանսուրին գրում է, թե դա մեկ տարվա Համար վճարելիք գումարն էր: Իսկ այն Հարցի բանալին, թե ինչու էր Հայոց արքան Հարկագումար վճարում իսմաիլականներին, դառնում ենք նրա «Մաղկուն պատեզը» երկում: Վերջինս հիշարարի 665 թ. (1267 թ.) թվականի տակ գրում է. «Ջումադա ալ-ախիբա ամսին եկան ալ-ժա՛ա-ի դեսպաններ՝ բերելով մեծ հանակոթյամբ ոսկի և ասացին. «Մա այն գումարն է, որ որպես հարկ վճարում էինք ֆրանկներին և որ այժմ բերել ենք մուսուլմանների գանձատուն՝ իսլամի համար կոփողների համար ծայսելու: Մա ուրախությամբ պատեհեց սուլթանին, որովհետև իսմայիլականների տունը (բնագրում՝ bayt al-Da՛wa) սովորություն չունեին շղոճորել արհանտին և անգամ իրենց՝ հարկատու էին դարձել իսլամիկների և արհանտի: Նրանք տարեկան հարկ ունեին դրած նաև եգիպտական քաղաքության (իմա՛ սուլթանության) նկատմամբ, բայց [այժմ] սուլթանի կառավարման օրոք, դարձել էին նրա ստորակառույց և հարկ էին բերում, ինչպես որ նշեցին»: Տե՛ս Ibn ʿAbd al-Zāhir, Al-Rawḍ al-zāhir, ֆ. 274: Ibn al-Furāt, Tārīḥ al-dūwal, MS A.F. 122, fol. 117b; al-Maqrīzī, Al-Sulūk, ֆ. 1.2, s. 557: Ընդ որում իրենց Հարեաններից (և ոչ միայն) Հարկ պահանջելն իսմաիլականների Համար սովորական երևույթ էր: Ֆրանսիացի պատմիչը, Լուի Լ (կառ. 1226-1270 թթ.) արքայի կենսագիր ժան դը Շուլանվիլը (մահ. 1317 թ.) մի ուշադրով պատմություն է պատմում: Ըստ նրա՝ երբ Ֆրանսիայի արքան, որ առաջնորդում էր Սուբբ Երկիր ուղղված 7-րդ խաչակրությունը, ափ է իջել Պաղեստինում, նրան են ներկայացել «Առնետի ձեռուն» (այսպես է կոչում իսմաիլականների առաջնորդին՝ ժա՛ի-ին) դեսպանները և Հարկ պահանջել: Տե՛ս Memoirs of the Crusades by Villehardouin and De Joinville, trans. F. Marzials, London, 1908, pp. 248-251: Իրենց այս և առհասարակ բոլոր նպատակներին Հասնելու ամենաարդյունավետ ճանապարհը նրանք Համարում

էին բռնություն սպառնալիքը՝ ավելի կոնկրետ անակնկալ, դարանակալ սպանությունների տեխնիկան, որին նրանք շատ լավ տիրապետում էին: Նրանք մարդում էին Հասուկ պատրաստություն անցած անձնազուհ, մահապարտ ռազմիկների՝ fidāʿī-ների և նրանց ուղարկում զանազան առաքելություններ կատարելու: Քրիստոնյա շատ միապետեր նախընտրում էին տարեկան որոշակի գումար վճարել կամ նվերներ ընծայել նրանց առաջնորդին, քան թե գլխներին մշտապես կախված ունենալ նրանց կողմից սպանվելու վտանգը: Շատերն էլ իսմաիլականներին կաշառք տալով՝ պատվիրում էին իրենց թշնամիների սպանությունը: Արաբալիզու աղբյուրներում իսմաիլականների ծայրահեղական այս ուղղությունը հետևորդներն ավելի շատ Հայտնի էին hašīšī (հոգն.՝ hašīšīyyān) անունով (որը երբեմն սխալմամբ մեկնաբանվում է որպես նրանց կողմից հաշիթ թմրանյութ օգտագործելու վերաբերյալ վկայություն): Բայց լայն տարածում է դրել միջնադարյան լատինացի գրականության մեջ assassin ձևով և կորցնելով իր նախնական իմաստը՝ այժմ էլ եվրոպական մի շարք լեզուներում օգտագործվում է նախնական «մարդասպան» իմաստով: Արաբ Հեղինակ Աբու Շաման (մահ. 1267 թ.) և նրան հղելով նաև ալ-Չահաբին Հաղորդում են, թե 1260 թ. Հոսիս ճակատամարտից օրեր անց՝ Մուհամմադ ամսի կեսերին, «լուր ստացվեց որ քաքարներ վերադարձել են, սակայն Մահյունի (Maḥyūn) անը նրանց մի մասին հանապարհին գերել է, ապա հաշիթները (al-hašīšīyya, ալ-Չահաբիի մոտ՝ al-fidāwīyya al-hašīšīyya, այն է՝ «մահապարտ հաշիթներ») սպանել են Սաի տիրոջը, Ալլահին անիթ նրան, և սրա պատճառով կոփվ էրևել քաքարների և Սաի տիրոջ որդու միջև: Թող Ալլահը հաստատի դա և ավարտուն դարձնի մուսուլմանների հաղթանակը»: Տե՛ս Abū Šāma, Kitāb al-Rawḍatayn, ֆ. 5, ֆ. 324, Ինչպես նաև Նույնի՝ Tārāḡim, ֆ. 211-212: Հմմտ. al-Dahabī, Tārīḥ al-Islām, ֆ. 48, ֆ. 73-74: Հաղորդման վերջնամասից էլ («որը Ալլահը հաստատի») երևում է և պատմության ընթացքից էլ Հայտնի է, որ Հեթումի սպանության մասին այս վկայությունը պարզապես Գամակոսում տարածված սեպտոս է եղել, որ պատմիչը Հարկ է Համարել արձանագրել: Թեև բացառված չէ, որ Հայոց արքայի դեմ մահապարտ իսկապես տեղի ունեցած լինի՝ իհարկե, անհաջող ելքով: Իսմաիլականների (Հայկական աղբյուրներում «հաշիթ») կամ «մուլհեզ»՝ արաբերեն muḥīd բառից՝ «հեթումադ») կողմից Հայ իշխանավորների դեմ ուղղված այսօրինակ գործողությունների մասին ժամանակի Հայկական աղբյուրներում մեզ այլ վկայություններ էլ են Հայտնի: Կիրակոս Գանձակեցին նրանց ներկայացնում է որպես ռազմիկներ՝ «որք սովոր են նենգութամբ սպանանել զմարդիկ»: Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, էջ 227: Օրինակ, Հաշիթների ձեռքով է սպանվել (և Համանաբար Հենց Հայ իշխանների պատվիրով) Լևոն արքայի կողմից իր դուստր Ջարելի ինամակալ նշանակված Սիր Ատանը (Ատոմ, Ադամ), ով Հանդգնել էր նկրտում ունենալ թաղավորական իշխանության նկատմամբ: Տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները, Հատոր Բ, էջ 243-244:

Մնացած Սպարապետի վկայությունը 1272 թ. Հեթումի Մարիա անունով իսմաիլական Հարձը (քննարկում յիսմայիլացուցն սեռէ) իր մի քանի այլ ցեղակիցների հետ փորձել է թունավորելու միջոցով սպանել Հայոց արքա Լևոն Բ-ին: Սակայն 11-ամյա մի երեխայի շնորհիվ դավադրությունը բացահայտվել է և արքան փրկվել է: «Եւ ոչ

արաբ արեայ լոցա շար ըստ արժանեաց խրեանց, այլ խնամով»: *Տե՛ս Ամրատ Սպարապետ, Տարեգրք, Վեներիկ, էջ 253-254*: Լեոնը հավանաբար խուսափել է դավադրյունների պատճելուց՝ խուսափելով նրանց վրեժխնդրությունից և կամ գուցե ինքն անձամբ նրանց «ծառայություններից» օգտվելու կարիք է ունեցել:

Խոսքը 1273 թ. Համուսի տեր պարոն Վահրամի սպանության մասին է: Վերջինս, ինչպես վերևում ենք ծանոթագրել, 1272 / 1273 թ. Մոլդոնի տեր Լեոն և Ալլդարիք իշխանների հետ մեկտեղ խոսովել էր Լեոն Բ արքայի դեմ: Սույն թվականին գրված Ավետարանի գրիչը հեշտագրել է: «Ցավաբժ ի նրափողոցս Բաղափին Սիսյ իշխանն Համուսին հարեալ ինեք յամեմն զկարեկեր խոցումն մահու»: *Տե՛ս ՀՁԶ, ԺԳ դար, էջ 43Զ*, ինչպես նաև նույն տեղում, էջ 81: Հեթում Կոտիկոսցին թեև Վահրամի սպանությունը գրել է 1272 թվականի տակ, այնուամենայնիվ, հստակորեն արձանագրել է «Ի սոյն ամի զարկին հայրիմն պարտն Վահրամայ»: *Տե՛ս Անրամ Պատմիչ, Ժամանակագրություն, էջ 5Է*: Այսպիսով, ինչպես Սիր Ատանի գեպքը, այս երկու դեպքերը նույնպես «պատվերով մահավորմի» սպափորություն են թողնում: Այս մասին խոսում է նաև Բար Հեբրեոսը՝ գեպքերի այլ մանրամասներ ներկայացնելով: *Տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 449*:

Այսպիսով, իսմաիլականները Հայոց արքայից նրա իսկ անվտանգության համար իրենց կորզած զուժարն է, որ վճարելու էին տարել սուլթանական դանձարան: Իսմաիլականների և Կիլիկիո Հայոց արքունիքի առնչությունների մասին տեղեկություններն ի մի ենք բերել նաև մի առանձին հոդվածում: *Տե՛ս Գ. Դանիկյան, «Հաշիշիները» և Կիլիկիո Հայոց արքաները*, ԲՄ, հտ. 30, 2020, էջ 212-229:

150 Մեզ անհայտ զինատեսակ:

151 Ըստ Գ. Բուքի՝ ծագում է ասորերեն šarbdōqiyā բառից, որը «բակարդ», «ակամատ» է նշանակում: *Տե՛ս D. Cook, Chronicles, p. 68, n. 64*:

152 Տե՛ս նաև Գ. Բուքի թարգմանությունը: *Տե՛ս Անդ, pp. 67-68*:

153 Այս արշավանքը Մամուլուքյան սուլթանության ուղիղ և անհետաձգելի պատասխանն էր մոնղոլների 1281 թ. ասորիքյան արշավանքին Հայկական զորքերի մասնակցությունը (տե՛ս Հաջորդ ծանոթագրությունը): Եվ ամենևին էլ պատահական չէ, որ նրա հիմնական թիրախը Կիլիկյան Հայաստանի տնտեսության ողնաշարը Հանդիսացող Այաս նավահանգիստն էր: Եվրոպացիներին տրված առևտրային արտոնությունների, Անտիոքի նվաճումը մամուլուքների կողմից Այասը դարձրել էին տարածաշրջանի տարանջիկ առևտրի ամենարագավան կենտրոններից մեկը: Իլխանահայատակ տարածքների առևտրային ուղիները կապելով Եվրոպայի հետ՝ այն իր տնտեսական ակտիվությունը այն արժանի մրցակից էր դարձել եգիպտական Ալեքսանդրիա և Դամիետտա նավահանգիստների համար: Այս հանգամանքը, անուշտ, մամուլուքյան իշխանությունները հանդուրժել չէին կարող, և ժամանակ առ ժամանակ քաղաքն ավերածություն և ավարառության ենթարկելով՝ մտադիր էին կտրել Կիլիկյան Հայաստանի ողնաշարը: Կիլիկյան Հայաստանի տնտեսության և Այաս նավահանգիստի կարևորությունը մասին տե՛ս D. Jacoby, “The Economy of the Armenian Kingdom of Cilicia: Some

Neglected and Overlooked Aspects”, in *La Méditerranée des Arméniens: XIIIe-XVe siècle*, ed. G. Dédéyan, Cl. Mutafian, Paris, 2014, pp. 261-291; Զ. Վարդյան, *Կիլիկիայի Հայկական պետությունը միջնադարյան առևտրի Համակարգում XIII-XIV դդ.*, Երևան, 2015:

154 Tašrif al-ayyām երկի այս անցքերի մասին պատմող Հատվածները չեն պահպանվել: Խոսքն իլխան Արաղայի 1281 թ. ձեռնարկած ասորիքյան մեծածավալ արշավանքի մասին է, որին, ինչպես սուսցինք, իր գործուն մասնակցությունն է բերել նաև Հայոց արքա Լեոն Բ-ը: Մոնղոլները և նրանց հետ դաշնակցած Հայկական, վրացական (վրաց արքա Դեմետրի Բ-ի ղեկավարությամբ), Թուրքի սելջուկյան ուժերը՝ Արաղայի եղբայր Մանգու-թիմուրի ընդհանուր հրամանատարությամբ, օգտվելով Ասորիքում մամուլուքյան սուլթան ալ-Մանսուր Կալավունի կենտրոնական իշխանության դեմ ծագած խռովություններից (հանձինս մեզ քաջահայտ Սուևկուր ալ-Աշկարի և Իսա իբն Մուհաննայի, ովքեր անգամ նամակագրություն էին հաստատել Արաղայի հետ՝ նրան հրավիրելով Ասորիքը գրավելու), Մամուլուքյան սուլթանության տարածք են ներխուժում 1281 թվականի ամռան վերջերին և գրեթե առանց դիմադրության մեկը մյուսի հետևից տիրանում Ասորիքի մեծ ու փոքր բազմաթիվ բնակավայրերի: Հոկտեմբերի 27-29-ին մոնղոլները մտնում են արդեն Հալեպ և սրի ու ավարի մատնում քաղաքը: Արաբական աղբյուրներն ատելությունը են խոսում քաղաքում Հայոց արքա Լեոնի կատարած դործողությունների՝ մասնավորապես Հալեպի ղլխավոր Օմայյան մզկիթը հրկիզելու մասին, որը մեկ անգամ էլ նրա Հայր Հեթումն էր կրակի տվել 1260 թվականի մոնղոլական արշավանքի ժամանակ (տե՛ս վերևում): Սակայն շուտով սուլթան Կալավունին հաջողվում է հարթել հարաբերությունները խռովարար էմիրների հետ և կոնսոլիդացնելով ուժերը՝ կանգնեցնել հակամարտության դաշինքի ուժերի առաջնորդացումը: Ի վերջո, չնայած սկզբնական հաջողություններին՝ մոնղոլական զորքը Հոմսի մոտ հիջրայի 680 թ. Ռաջար ամր 14-ին / 1281 թ. հոկտեմբերի 29-ին (Հայանի որպես «Հոմսի երկրող հակաառաջնորդ») վճռական բախում է ունենում Կալավունի ղլխավորած բանակի հետ և ջախջախվում: Կուղենայինք մատնանշել Հայ, արաբական և օտար այլ աղբյուրներում տեղ գտած տեղեկություններն արշավանքին Հայկական զորքերի բերած մասնակցության մասին: Իսկ առհասարակ արշավանքի և Հոմսի ճակատամարտի ընթացքի մանրամասնությունները վրա հարկ չենք համարում կանգ առնել, քանի որ նախ այս գեպքերի նկարագրությունները Tašrif al-ayyām երկից կորած են և մեզ են հասել միայն նրանից օգտված հեղինակների միջնորդությամբ, և երկրորդ՝ թեմայի վերաբերյալ արդեն բավականին գրվել է: *Տե՛ս R. Amitai-Preiss, Mongols, pp. 179-201*:

Այսպես, Բայբարս ալ-Մանսուրին իր Zubdat al-fikra երկում, խոսելով արշավանքի ընթացքի մասին, գրում է Հալեպում թաթարների կողմից տները և մզկիթների հրկիզման մասին՝ առանց հայերի մասին հիշելու: Այլուր նա գրում է, որ մոնղոլական զորքը 80 հազար է եղել, որից 50 հազարն էին մոնղոլները. «... իսկ մնացած մասը կրոնուրացներ կին, վրացիներ, ռամսցիներ, հայեր և ֆրանկներ»: *Տե՛ս Baybars al-Manṣūrī, Zubdat al-fikra, p. 196: Հմմտ. Bar Hebraeus, Chronography, p. 464: Այնուամենայնիվ,*

նա, 1283 թ. Այասի դեմ ուղղված մամլուքյան արշավների մասին խոսելիս, ինչպես որ Իրն Աբդ Ջահիրը, Հայկոյի մղվածի հրկիզման մեղավոր է համարում «Սսի տիրոջը»: Տե՛ս Baybars al-Manşūrī, Zubdat al-fikra, s. 231: Իր մյուս երկում Al-Tuhfa al-mulākiyya-ում, նույն Հեղինակը գրում է, որ «Սսի տերը» դաշնակիցների բանակին է միացել Դարպասակի ճանապարհով: Տե՛ս նույնի՝ Al-Tuhfa al-mulākiyya, s. 94-95:

Հայկական աղբյուրները վկայում են, որ Հոմսի մոտ կրած պարտությունն և փախուստի հետևանքով կիլիկիա Հայոց կրած մարդկային կորուստներն անցել են 2000-ը. «ԽՄԶԲ (1282) Մանկա Տամուր եղբայր Այաղայ խանին ԼՌ (30000) Մուղղով և ԳՌ (3000) Վրացով և Հաուսաց Բ (1000) հեծելով և Հայոց ԲՌ (2000) հեծելով մտին յերկիրն Շամբուն և աներեցին զայխարհն մինչև ի դուռն Համասյ և անդ պատերազմեցան ընդ Ալֆի սուլթանն Մարայ: Եւ խանգրեցին զսուլթանին զաւրին և յտոտեցին ի նոցանէ անթիւ և շահեցան զսուլթանին յագէնայն և զայխուրին: Այլ Մանկա Տամուրն վասն վատաւարութեան իւրոյ առանց իրիբ պատճառի ի փախուստ դարձաւ. և յարժամ տեսին Մուղղայ զաւրին զդառնալ զգլխատո՛ւնին իւրեանց, բողին զպատերազմն և գնացին զհետ նորա: Եւ գնացեալ անցին ընդ գեան Եփրատա և մտին յայխարհն իւրեանց: Եւ Մամաղարն ԲՌ (2000) հեծելով և Հայոց բազման իւր հեծելովն բաժնեցան ի Մանկա Տամուրին և եկին դէպ ի Հաուսամ և ի Հայոց աշխարհն. և ի հանապարհին հասեալ նոցա շահանդակ, և կտրեան ի Հայոց զաւրացն բազում մեծամեծ իշխանն և ի հեծելն առաւել քանց Ե (5) բաժինն: Եւ թագաւորն գերծեալ ետնա յայխարհն իւր և Մամաղարն անցեալ ընդ երկիրն Հայոց գնաց ի Հաուսամն»: Տե՛ս ՄԺ, Հտ. 2, էջ 77 (Հեթում Պատմիչ, Խրոնիկոն) և Հմմտ. նույնի՝ Ժամանակագրութիւն, էջ 55, ինչպես նաև ՄԺ, Հտ. 1, էջ 84-85: «Իրի կիպրացիոց» երկի Անանուն տաճարական Հեղինակի գրած մատուցած կարգում ենք, որ Լևոնը Հայոց թագավորության սահմանն անցնելուց առաջ ենթարկվել է թուրքմենների անակնկալ հարձակմանը և այնքան մեծ թվով զոհեր տվել, որ Կիլիկիա մուտք գործելիս իր ուղեկցութիւնը ունեցել է ընդամենը 30 հեծյալ: Տե՛ս Les gestes des Chipriots, p. 210, ինչպես նաև Deeds of the Cypriots, p. 78, ինչպես նաև W.B. Sanders, "A Crusader's Letter from the Holy Land: Letter from Sir Joseph de Cancy, Knight of the Hospital of St. John of Jerusalem, to King Edward I. (1281), and Letter from King Edward I. to Sir Joseph (1282)", Palestine Pilgrims' Text Society, № 5.5, London, 1888, p. 12 (խոսվում է Այասի վրա թուրքմենների ձեռնարկած հարձակման մասին): Հմմտ. [Յովսէփեան], Գարեգին Ա Կարողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, Հատոր Ա (Ե դարից մինչև 1250 թ.), սուլթան Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիո, Անթիլիաս, 1951, էջ 527-528; Սամուէ Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիւն, էջ 256-257 (տե՛ս ՉԻԸ (1279) թվականի տակ): Թուրքմենական Հրոսակախմբերի ավարտուական գործները կիլիկյան բնակավայրերի վրա շարունակվում են նաև առաջիկա տարիներին: Տե՛ս Հաջորդ ծանոթագրութիւնը:

Հոմսի ճակատամարտի և Հայկական զորքերի նահանջի մասին Հեթում Պատմիչը գրում է նաև իր հին ֆրանսերեն «Մաղիկ պատմութեանց» երկում: Տե՛ս Hayton, La Flor, p. 183: Դեպքերը 1282 թվականի տակ էլ զրել նաև Սամուէ Անեցու շարունակողներից մեկը. «...սկիզբն յաղթեաց, թայց յետոյ յաղթեցաւ՝ քուս բանիւ, և երկուցեալ յետս

դարձուցին, և թագաւորն դարձաւ ի տեղի իւր»: Տե՛ս Սամուէ Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիւն, էջ 257: Դեպքերը 1281 թվականի տակ է ներկայացնում Անանուն Սերասացի ժամանակագիրը. «Ի նոյն ամի եղբայր Այաղային Մանկա Տամուրն և Հուրաշուն, Ալիմախ պահատուրն և Գեմետը թագաւոր Վրաց և մեծամեծ իշխանն Հայոց, որ յարեալ և թագաւոր Հայոց Անն, անհուն զաւրաւ գնան ի պատերազմ ի վերայ Մարայ»: Տե՛ս ՄԺ, Հտ. Բ, էջ 147: Իսկ Ներսես Պալիեցի վկայութիւնը մոնղոլական զորքերի մարդկային կորուստները հասել են 30 հազարի: Տե՛ս նույն տեղում, էջ 180: Ըստ Ստեփանոս Օրբելյանի՝ Լևոն արքայի գլխավորած Հայկական զորքից բացի, մոնղոլական զորքերի կազմում իր հոր՝ Տարսային Օրբելյան իշխանի հրամանատարութիւնը մամլուքների դեմ կռվել են նաև Հայեր Բուն Հայտատանից: Տե՛ս Պատմութիւն նահանգին Սրական արարեալ Ստեփաննոսի Օրբելյան արք եպիսկոպոսի Սիւնեաց, ի յոյս ընծայեաց Հանդերձ ծանոթութեամբք Կ. վարդապետ Շահնագարեանց, Հտ. Բ, ի գործատան Կ.Վ. Շահնագարեանց, Փարիզ, 1859, էջ 170: Վրացական «Քարթլիս Յիսովերսա»-ն արշավանքին Հայկական զորքերի և Լևոն արքայի մասնակցութիւն մասին լուում է: Տե՛ս Карлис Цховреба (История Грузии), глав. ред. Роиш Метревели, НАН Грузии, изд. Артаунджи, Тбилиси, 2008, стр. 386:

156 Ինչպես երևում է, մամլուքյան Հրոսակախմբերն սկսել են Այասի վրա հարձակումներ գործել արդեն 1282 թ. վերջերից: Այս մասին է վկայում 1282 թ. Կեսարիայում զրված Ավետարանի գրիչ Կոստանդինը. «Եւ յետոյ, ի թիին Հայոց ՁԼԱ ելեալ ինն պատուելի քանակայ Յովսէփի ի Կեսարայ Կապաղովկացոց, հանապ[արհ]որդել ի գտաուն Կիլիկիայ: Եւ հասեալ ի քաղաքն Եփոզ, որ է Այաս, և եղև յանգարձակի շրջաբնակաց ոմանց Իսմակացոց, որ յայսմ ժամանակի զգուլին գերկիրն, արշաւեցին ի քաղաքն Այաս և որ շուշ գնուլալ գեաղբ և աւանք. զրագոսն գերեցին, և զայս սրախտոյտ արարին, ընդ որս և պատահեաց քանակայ Յովսէփի, և կատարեցաւ սրով, յամսեանն ղեկաւորելի ԻԲ (22)»: Տե՛ս ՀԶԶ, ԺԳ դար, էջ 528-529: Ինչպես մամլուքյան մյուս արշավանքների ժամանակ, այս անգամ ևս թուրքմենն ասպատակիչները, հավանաբար համաձայնեցնելով գործողութիւնները մամլուքների հետ, իրենք նույնպես ներթուծել են Կիլիկիայի տարածք և հարձակումներ գործել առանձին բերդերի ու բնակավայրերի վրա: 1283 թվականի տակ մի շարք Հայկական աղբյուրներ արձանագրել են թուրքմենների կողմից Մանդոն բերդի գրավման մասին տեղեկութիւնը՝ «յես Ե (5) ամի պաշարման նորա»: 1284 թ. թուրքմեն կարամանների դեմ մարտեր են մղվել նաև Անամուռ (Անեմոս) բերդի համար՝ ի վերջո աղտապրելով այն: Տե՛ս Հեթում Պատմիչ, Ժամանակագրութիւն, էջ 55; ՄԺ, Հտ. 1, էջ 85 (Հեթում Բ-ի «Տարեգրութիւն»): ՁԼԳ (1285) թվականի տակ մի անանուն ժամանակագիր գրում է. «Խառամանն գերեաց գերկիրս Տարսուն ի Կիլիկիայ»: Տե՛ս Գարեգին Ա Կարողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, էջ 528, ինչպես նաև Սամուէ Անեցի և շարունակողներ, Ժամանակագրութիւն, էջ 261:

156 Ձեռագրից այսպես է կարդացել երկի խմբագիր Մուրադ Բամիրը: Ակնհայտ է, որ գրչագրական սխալ է: Նա, սակայն, իրար է փորձել տեղանունը նույնականացնել Բեհնանիի հետ, քանի որ աշխարհաբարձ ձեռագրաց, էջ 528, ինչպես նաև Սամուէ Անեցի և շարունակողներ հայկական գորք: Համեմատում ենք երկի ձեռագրի հետ, և

պարզվում է, որ տեղանունն այս տեսքն ունի տեքստում **العنات**՝ առանց ձայնափոխ-
ների և առանց Հնչյունատարբերիչ նշանների: *St'u BnF, MS Arabe 1704, 64ր թերթ: Սա*
թույլ է տալիս նաև այլ կերպ ընթերցել բառը: Մեր կարծիքով խոսքն այստեղ ձկեր
նահանգում գտնվող ալ-Քինի (ալ-Քինաթ, արաբ. العینات կամ العینی) կամ Կանամելյա նա-
վահանգառային բերդի մասին է: Այնքանագրերից քիչ է չլուսիս: St'u վերևում ծնթգր. 46,
ինչպես նաև ներքևում: Այս տարբերակն արդեն Հարմարում է Հիշյալ զորաշարժերի
նկարագրությանը: Հատկանունը վերծանելու և նույնականացնելու խնդրի առաջ է
հավանաբար կանգնել նաև Բայբարս ալ-Մանսուրին, ով իր Zubdat al-fikra երկում
Իրն Արզ ալ-Ջահիրից փոխառած հաղորդումը վերաշարադրելիս պարզապես անտե-
սել է այն՝ «... և իրենց աղբից ֆշեցին դեպի Քել Համդուն»: St'u Baybars al-Mansūrī,
Zubdat al-fikra, ք. 231:

157 Հմմտ. **D. Cook, Chronicles**, p. 70: Արշավանքի մասին տե՛ս նաև Baybars al-Mansūrī,
Zubdat al-fikra, ք. 231, **Ինչպես նաև Գույնի՝** Al-Tuhfa al-mulūkiyya, ք. 108; al-Nuwayrī,
Nihāyat al-arab, ց. 31, ք. 27; Ibn al-Furāt, Tārīh al-dūwal, ց. 7, ք. 276-277, al-Maqrīzī, Al-
Sulūk, ց. 1.3, ք. 716, **Ինչպես նաև L. Northrup, From slave to sultan**, p. 111, n. 353:
Արաբազիր Հեղինակներից բացի Քել Համդունի և Հետո նաև Իսթանբուլումի մոտ
տեղի ունեցած մարտերի մասին ակնարկում է նաև Բար Հեբրեսոսը՝ ընդ որում վկայե-
լով, որ մուսուլմանները հեղափոխի ճանապարհին նույնպես լուրջ կորուստներ են
ունեցել, ինչի մասին արաբ հեղինակները լռություն են պահպանում: Նա գրում է.
«Նրանք հասան ընդհուպ մինչև Քել Համդուն՝ իրենց հետ ամենուրևույն ու զարպա-
ները նրանց առաջ էին ընթանում, հայերն [ամենուր] փակում էին ամրություններն ու զարպա-
ները նրանց առաջ: Նրանք կորսեցին մասնակցի նրանց բոլորին իրենց սրայեղբերով, խլեցին
նրանց զենքերը, մաշկագործեցին նրանց գլուխները: Նրանք ստպագեցան՝ նիզակներով, սերով,
և մազածածկ գանգամաշկերով բազմաթիվ անասուններ բեռնավորեցին և ամբողջ ուղարկե-
ցին «աբխայից աբխային» (խմա՛ իլխանին)»: *St'u Bar Hebraeus, Chronography*, p. 465:

158 Պատմիչը սխալվում է. 682 թվականի Զուլմադա II ամսի 28-ը չորեքշաբթի է եղել:

159 Իրականում շաբաթ է եղել:

160 Հմմտ. **D. Cook, Chronicles**, p. 78:

161 Բառացի՝ «խորհրդատուներ», «բարի խորհուրդ տվողներ»: Մրանք թշնամական տա-
րածքում գործող և հետախուզական տեղեկություններ հավաքող և հաղորդող ան-
ձինք էին՝ լրտեսներ: *St'u R. Amitai-Preiss, Mongols*, p. 144:

162 Halaqa-ն ոչ մամուլուքներից, այսինքն՝ ստրկական անցյալ չունեցող, ազատ ուղ-
միկներից բաղկացած կազմավորում էր:

163 Ռնազրում՝ taḥbiqa է, որը եղակի թվում՝ taḥbiqa է: Ինչպես երևում է, հայկական
«արտադրություն» երկաթյա պայտերը չափազանց բարձր են գնահատվել մամուլուքյան
բանակում: Բավական է նշել, որ այս դեպքերից ընդամենը մոտ մեկ տարի անց
կնքված հայ-մամուլուքյան պայմանագրում առաձին կետ է ընդգրկվել զրանց վերա-
բերյալ: Ըստ այդմ հայոց թագավորությունը պարտավորվում էր յուրաքանչյուր տարի

«10 հազար եկաթյա պայտ՝ իրենց մխտեղով հանդերձ» մատակարարել Մամուլուքյան սուլ-
թանությունը: *St'u Ibn 'Abd al-Zāhir, Taṣrif al-ayyām*, ք. 93: Ըստ Իրն Արզ ալ-Ջահիրի
սուլթան երկի հրատարակիչ Մուրադ ալ-Քամիլի՝ այդ ժամանակներում մեկ taḥbiqa-ի
գինը տասանվում էր 60-70 դիրհամի միջակայքում:

164 Հատվածի թարգմանությունը տեղ է գտել նաև Դ. Քուլբի գրքում: Նորից մի քանի
ակնհայտ վրիպումներ կան: Օրինակ, «Իրն ալ-Քարա»-ի (Ibn al-Bābā) անունը, որը
հետագայում մամուլուքների կողմն անցած մոնղոլ դասալիք էմիր էր (տե՛ս ներքևում),
նրա կողմից թյուրիմացաբար թարգմանվել է "Catholicos' son", al-yazak al-mansūr-ը՝
"The Mansuri vanguard", իսկ բնագրի "wa-ma baqiya aḥad yaqduru 'alā al-iqāma
bi-hā"-ն "no one would be able to reconstruct what was left of it": *St'u D. Cook,*
Chronicles, pp. 94-95:

165 Դժվարանում ենք նույնականացնել այս լեռը:

166 Իրենց երկերում Հիշյալ դեպքերի քիչ թե շատ ընդարձակ պատումներ են պահ-
պանել Բայբարս ալ-Մանսուրին և Բադր ալ-Դին ալ-Այնին: Նրանցից Բայբարս ալ-
Մանսուրիի Zubdat al-fikra երկում եղած պատումի հիմքում, ինչպես երևում է, Իրն
Արզ ալ-Ջահիրի հաղորդածն է: Սակայն նրա մյուս երկից՝ Al-Tuhfa al-mulūkiyya-ից,
կարող ենք որոշ հավելումներ կատարել: Պարզվում է, որ Բայբարս ալ-Մանսուրին
անձամբ ծանոթ էր Իրն Արզ ալ-Ջահիրի հիշատակած Իրն ալ-Քարա անունով մոնղոլ
զորահրամանատարին, ով տարիներ անց՝ սուլթան ալ-Նասիրի կառավարման շրջա-
նում, դասալիքորեն հեռացել էր Իլխանությունից և մամուլուքների կողմն անցել: Բայ-
բարսը տալիս է նրա ամբողջական անունը՝ Սայֆ ալ-Դին Ջանջալի Իրն ալ-Քարա, և
ավելացնում, որ Հնչյ վերջինս է պատմել իրեն մամուլուքների հետ նրա բախման ման-
րամասների մասին: *St'u Baybars al-Mansūrī, Zubdat al-fikra*, ք. 240 և Հմմտ. **Գույնի՝** Al-
Tuhfa, ք. 109-110: Ինչ վերաբերում է ալ-Այնին, սուղա վերջինիս 'Iqd al-ḡumān-ում
առկա պատումի հիմքում անկասկած Բայբարս ալ-Մանսուրիի Zubdat al-fikra երկն է, և
հատուկ անգրադարձի արժանի տարբերություններ և հավելումներ չի պարունակում:
St'u al-'Aynī, 'Iqd-MMA, ց. 2, ք. 309:

Դեպքերը փոքր-ինչ այլ կերպ՝ արաբ պատմիչների մոտ չհանդիպող մանրամաս-
ներով է ներկայացնում ստորի պատմիչ Բար Հեբրեսոսը. «Մինչ քարտեզների բանակներ
ներառված էին միմյանց դեմ կռվի մեջ, - գրում է նա, - Ալֆին՝ եգիպտոսի տերը, Հայգար գո-
րապետին և նրա հետ 3000 հեծյալի ուղարկեց Շարախտան (Մարդինի կողմերում-Գ.Գ.)
եղրի կողմը: Նրանք պետք է բռնեին Բար Շելխան («Եշխանի որդի»-Գ.Գ.) գորապետին՝ մի
հայ կարիքի, և ողջ-սողջ վանդակի մեջ եգիպտոս տանեին, որովհետև նա Ասորի գնացող
արաբներին տանջանեցրել էր ենթարկում: Անցնելով Եփրատը՝ նրանք եկան և համբարեցին
Քինայի դեմ, որ հայերին պատկանող բերդ էր: Առաջին օրը, երբ սկսեցին կռվել, Հայգար
վիրավորվեց նետից և մահացավ, և նրա գործերին տիրեց սարսափը. նրանք բողեցին բերդն ու
փախան Ասորի: Այսպես արգարությունը վրեժ լուծեց Հայտարից, ով կողոպտում էր Բիստուն-
յաներին, [շարունակ] ավերի ու ավարի էր ենթարկում Մեխտանեյի և Ջայրի կողմերը: Այս
անցմբը անելի ունեցան հունաց 1595 թվականի ամռան օրերին»: *St'u Bar Hebraeus,*

Chronography, p. 471: Բար Հերրիոսի և արար Հեղինակների պատմության զուգահեռությամբ կարելի է մակարերել, որ ալ-Թինաթի վրա երկու գրուհ է եղել: Նախ Շիհար ալ-Դին Հայդարն է առաջապահ գնդերով փորձել զբաղել բերդը, բայց չի հաջողել և Հայ-մանդուական գնդերի հետ տված մարտում զոհվել է: Սրան հետևել է երկրորդը, որով արդեն բերդը զբաղվել է քանդվել է:

Այսպիսով, 1284 թ. հուլիսյան զորքի կողմից ալ-Թինաթի երկրորդ զբաղումը շրջադարձային եղավ նրա հետագա ճակատագրի համար: Ալ-Թինաթ բերդի այս հիշատակությունը ժամանակագրական առումով մեզ հայտնի վերջին վկայությունն է միջնադարյան արաբական պատմաաշխարհագրական գրականության մեջ, բայց ոչ օտարալեզու մատենագրության մեջ առհասարակ: Ժ. Դ. դարի վենետիկցի հայտնի ճանապարհորդ և պետական գործիչ Մարինո Սանուզո Տորսելլոն (մահ. 1343 թ.) իր *Liber secretorum fidelium crucis* (ճեսալին հավաաաիմների գաղտնիքների գիրք) երկում, որ գրել է Ժ. Դ. դարի 20-ական թվականներին, տեղագրական տեղեկություն է հաղորդում Կարամելայի մասին, ինչպես որ ինքն է կոչում ծովափնյա այդ գլխավորը: «Ասում են Կարամելայից մինչև Ալեքսանդրես 15 մղոն է դեպի հարավ-հարավ-արևելք մալայիերու դեպքում: Այժմ Կարամելան Հայաստանի արևայի տարածում է նրա և [եգիպտոսի] սուլթանի [եղիբի] սանմանագրին»: Տե՛ս **Marino Sanuto Torsello**, *The Book of the Secrets of the Faithful of the Cross (Liber Secretorum Fidelium Crucis)*, tr. by P. Lock, Ashgate, Aldershot, 2011, p. 142: Տե՛ս նաև **F.C. Rey**, "Les périples des côtes de Syrie et de la Petit Arménie", *Archives de l'Orient Latin*, t. II, Ernest Leroux, Paris, 1884, pp. 332-333: Նույն երկում Կարամելայի մասին երկրորդ հիշատակությունը մեզ պատկերացում է տալիս այլ ծովագրյա գլխավորից այս բերդի ունեցած հեռավորության մասին: Ըստ նրա՝ Կարամելայից դեպի Հյուսիս արևմուտք՝ մինչև Կայրո լու, 20 մղոն էր, իսկ վերջինից դեպի Հյուսիս-արևմուտք՝ մինչև Այաս (ընագրում՝ *Laiacium*) ևս 15 մղոն: Տե՛ս **Marino Sanuto Torsello**, *The Book of the Secrets*, p. 147: Սանուզոն բերդի տվյալ ժամանակի կացության և նրա առևտրական դործունեության մասին ոչինչ չի հաղորդում: Կարամելան շարունակել է նշվել նաև Ժ. Դ. դարի իտալական պորտուգալական ծովագնացային քարտեզներում: Նավահանգստային այս բերդը, որինակ, նշված է 1375-ով թվագրված և Աբրահամ Կրեսկեսին վերագրվող Հայտնի «Կատալոնյան ատլասում», և «Հայոց ծոցը» կրկին անվանված է Կարամելայի ծոց (*Golf de Caramela*): Ճիշտ է՝ սուլթանի ստեղծման ժամանակ Կարամելան արդեն աննշան և դուրս արգեն «տարվական» բերդ էր, այնուհանդերձ, այդ հիշատակությունը խոսում է այն նշանակալի դերի մասին, որ մի ժամանակ ունեցել է բերդը տարածաշրջանի առևտրատնտեսական հարաբերություններում:

167 1273-1291 թթ. Տաճարական սպանական կարգի մագիստրի պաշտոնը զբաղեցրել է Գիլյոմ դը Բոսեն (*Guillaume de Beaujeu*): Նա զոհվել է ալ-Ալբրաֆ իսպիլ սուլթանի կողմից Աբրայի զբաղման ժամանակ՝ 1291 թ.:

168 Տե՛ս պայմանագրի համապատասխան հոդվածի ծանոթագրությունը:

169 Սուլթան Բայբարսի սենեկապետն էր՝ Ֆախր ալ-Դին Այագ ալ-Հալիբը, և նրա ամենահավատարիմ էմիրներից մեկը, որին մեկ անգամ չէ, որ պատասխանատու դիվանագիտական առաքելություններ էր հանձնարարել (էմիր Մուբարիզ ալ-Դին ալ-Տուրքի հետ միասին): Օրինակ, 1272 թ. Ֆախր ալ-Դինը ղլխավորել է Աբադայի մոտ սուլթանի ուղարկած պատվիրակությունը: Տե՛ս **R. Amitai-Preiss**, *Mongols*, p. 136: Ֆախր ալ-Դինի մասին կենսագրական տվյալներ տե՛ս **al-Şuqqāṭī**, *Tāli*, ք. 15; **al-Şafadī**, *Al-Wāfi*, ք. 9, ք. 258:

170 Ակնարկ է Նիկիայի առաջին տիեզերական ժողովին, որին մասնակցել են 318 եպիսկոպոսներ: Հայաստանից ժողովին մասնակցել է Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակեսը:

171 Հմմտ. **Նար Կաակարան**, *Աւետարան ըստ Մատթէոսի*, 3/17:

172 Ինչպես կարելի է նկատել, Մամլուքյան սուլթանության տարածքները թվարկվում են մանրամասնորեն, իսկ Հայոց արքային ենթակա տարածքները չեն թվարկվում: Ավելին, նշվում է, որ «սուլթանի բանակները» կողմից զբաղվելիք Հողերը նույնպես կհամարվեն Սուլթանության տարածքներ: Պայմանագրի կետերը թելադրող մամլուքյան իշխանություններն այս հանգամանքը հետադադում հեռուստամբ կարող էին օգտագործել Հայոց թագավորությանը տարածքային զիջումների պահանջներ ներկայացնելու նպատակով:

173 Խառնուրդային ցեղատեսակի ջորիանման փոքրասիական նժույզներ, որոնք հայտնի էին իրենց դիմացկունությունը և արագաձուլությունը: Տե՛ս **M. Quatremere**, *Histoire*, t. 2.1, p. 46, n. 37 և **Dozy R.**, *Supplément aux dictionnaires arabes*, t. II, Leide, 1881 (2nd edition, Leide-Paris, 1927), p. 449:

174 Հայկական ծագման էջ ջորիները նույնպես օժտված էին դիմացկունությամբ և մեծ արժեք ունեին: Դրանք հատկապես հարմար էին ծանր բեռներ տեղափոխելու համար: Տե՛ս **H. Alkhateeb-Shehada**, "Donkeys and Mules in Arabic Veterinary Sources from the Mamlūk Period (7th-10th/13th-16th Century)", *Al-Masāq*, vol. 20, Issue 2, 2008, p. 210, ինչպես նաև **Տոյնի՝ Mamluks and animals: veterinary medicine in medieval Islam**, Leiden, Brill, 2003, p. 272:

175 Տե՛ս վերևում:

176 Խոսքը «սեմափնյա իրավունից» հրամարվելու սկզբունքի մասին է, որը ենթադրում էր նավաբեկության ենթարկվածների կյանքի, գույքի և ունեցվածքի նկատմամբ ոսոճադու և դրան տիրանալու սովորույթի սահմանափակումը կամ վերացումը: Այս մասին տե՛ս **Ю.Г. Барсегов**, "Отказ армян от «берегового права»", *ՊՐՀ*, № 1, 1971, էջ 95-110, որտեղ անդրադարձ կա նաև Հայ-մամլուքյան պայմանագրի այս կետին: Տե՛ս նաև **Ջ. Վառլյան**, *Կրիկյան Հայաստանը*, էջ 40:

177 Խորական տարբերությունն ակնհայտ է՝ փաստորեն մուսուլման կրոնուրացիներ ենթակա էին վերադարձի մամլուքյան իշխանություններին՝ պատժելու նպատակով, իսկ քրիստոնյա հավատուրացիներն անցնում էին սուլթանի հովանու տակ, և ոչ մի կերպ չէին վերադարձվելու Հայկական իշխանություններին:

178 Միջագազյին տարանցիկ առևտրի, վաճառականների գույքի և ունեցվածքի անվտանգության ապահովումը պայմանագրի առանցքային կետերից է: Պատահական չէ, որ, ինչպես վերևում ենք տեսել, մամլուքյան իշխանությունները Հայոց թագավորության վրա Հարձակումները փաստարկում էին քարավաններ կորչելու և վաճառականների նկատմամբ ոտնձգություններ կատարելու միջադեպերով: Երկրի առևտրատնտեսական ակտիվությունը պետության հզորության գրավականներից մեկն է: Այս Հանգամանքին շատ մեծ կարևորություն էին տալիս Մամլուքյան սուլթանությունները, և ամեն կերպ ջանում պահպանել առևտրատնտեսական կապերն անդամ այն երկրների հետ, որոնց հետ քաղաքական խնդիրներ ունեին կամ զոնվում էին թշնամական Հարաբերությունների մեջ: Վերևում արդեն նշել ենք, որ Բայբարսի 1266 թվականի արշավանքի սանձազերծման պատճառներից մեկն այն էր, որ, ինչպես Սմբատն է գրում, սուլթանը Հայոց արքայից պահանջել էր երկու պետությունների սահմանագլխին զոնվող Եհնը (Եհնը կամ Եհն ալ-Հալիզը) նպատակ ունենալով այն զարմեղ Համատեղ առևտրական Հանգույց («վանաուսնց»): Իսկ ըստ Հակոբիկ ասորիների մափրիան Բար Հեբրեոսի երկի արաբական խմբագրության՝ սուլթանն առաջինն է դիմել Հայոց արքային (Hātim malik al-arman) և Հնազանդություն ու [դիվան]Հարկ պարտադրելուց բացի պահանջել է թույլ տալ մուսուլմաններին Հայերից ձիեր, ջորիներ, ցորեն, դարի և երկաթ գնել, ինչի փոխարեն ինքն էլ կթույլատրեր, որ Հայերն ազատ առևտուր անեն Ասորիքում: Տե՛ս Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Վեհեթեիկ, էջ 245-246 և Ibn al-ʿIbrī, Muḥtaṣar, §. 498, ինչպես նաև Հմմտ. **Նույնի՝** Chronography, p. 445:

Մամլուքյան իշխանությունները Համար կարևոր նշանակություն էին տալիս ստրկավաճառությանը: Այս առնչությամբ ալ-Յունևին պատմիչը Բայբարսի կառավարման օրոք տեղի ունեցած մի դեպք է պատմում (թեև առանց թվագրելու). «Մի իսումբ առևտրականներ, որ համապարհիվել էին Պարսկաստանից (բնագրում՝ bilād al-ʿaḡam) ալ-Մալիք ալ-Ջանիթի աբունիթ գնալու նպատակով: Բայց երբ Սումվ են անցել, նրա տեղն արգելել է նրանց անցումը՝ նրանց մասին գրելով Աբաղային: Իսկ էլ նրան է պատասխանել է՝ հրամայելով բանտարկել և իր մոտ սպառել: Բայց այնպես է պատահել, որ մի մամլուք Հալեպ է փախել, հանդիպել էմիր Կուր ալ-Ին Ալի իբն Մաշլիի հետ և հայտնել նրան իրենց հետ [պատահածի] մասին: Այս առիթով վերջինս ալ-Մալիք ալ-Ջանիթին փոստային ձեռքով նամակ է ուղարկել: Հետ է եկել պատասխանը՝ հրամայելով գրել Սաի տիրոջը՝ ասելով, որ եթե նրանցից մեկ դիրհամ արծեցող բան անգամ պակասի, իեզ դրա փոխարեն կվերցնեն: Նրան այս կերպ գրեց. նա ազատեց նրանց, իսկ Աբաղային շողոթոթեց մեծ գումարներով»: Տե՛ս al-Yūnīnī, Dayl (Ḥaydarābad), §. 3, §. 254: Տե՛ս նաև **R. Amitai-Preiss, Mongols**, p. 208, **Նույնի՝** "Between the Slave Trade and Diplomacy: Some Aspects of Early Mamluk Policy in the Eastern Mediterranean and the Black Sea", in *Slavery and the Slave Trade in the Eastern Mediterranean (c. 1000-1500 CE.)*, ed. by R. Amitai and Chr. Cluse, Brepols, 2017, p. 414, **ինչպես նաև E. Ashtor, A Social and Economic History of the Near East in the Middle Ages**, University of California Press, Berkeley, Los Angeles, London, 1976, p. 263; **Barker H., That Most Precious Merchandise: The Mediterranean Trade in Black Sea Slaves, 1260-1500**, University of Pennsylvania Press, Philadelphia, 2019, p. 163; **L. Northrup, From slave to Sultan**, p. 285:

179 Պայմանագրի այս կետը Հիմք է տալիս երկու փաստ արձանագրել: Նախ, որ մամլուքյան իշխանությունների Համար Հռոմիկան, Հայոց թագավորությունից անջատ լինելով, այնուամենայնիվ, նրա անբաժանելի մասն էր գիտակցվում: Եվ երկրորդ, այն որ Հռոմիկայի մասին առանձին կետ է ներառված է եղել նաև 1268 թ. Հայ-մամլուքյան առաջին պայմանագրում, որը, ինչպես վերևում ենք առիթ ունեցել նշելու, արաբական մատենագրությունը, ցավոք, չի պահպանել:

180 Այս կետն, ինչպես վերևում մի անգամ արդեն նշել ենք, նույնպես ակնհայտորեն ներառված է եղել 1268 թ. Հայ-մամլուքյան առաջին պայմանագրում: 1275 թ. մամլուքյան արշավանքի ձեռնարկման պատրվակներից մեկը Հենց բերդերի կառուցումն ու եղածների սմբարցումն էր:

181 Բնագրում balad Rumօ է, որը Բուսի երկրի՝ արաբ Հեղինակների Համար սովորական անվանումը է: Գուցե՞ փորձ է արված տառադարձել տեղանվան Հայերեն տարբերակը՝ «երկիր Հռոմոց»:

182 Դաշնագրի տեքստի ավարտ:

183 Ամենայն Հավանականությամբ Վահրամ Բարունին է՝ Հայոց թագավորի արքունի քարտուղարն ու խորհրդակալը:

184 Պայմանագրի տեքստը՝ Փրանսերեն թարգմանությամբ, առաջին անգամ հրատարակել է Մ. Քատրմերը (M. Quatremere, Histoire, tome 2.1, p. 166-171, 201-212), ապա՝ Վ. Լանգլուան (V. Langlois, Le trésor, pp. 217-231) և Մ. Կանարը (M. Canard, "Le royaume", pp. 217-259): Դաշնագրի տեքստը Քատրմերի Փրանսերեն թարգմանությունից առաջին անգամ Հայերեն թարգմանել ու «Բանասեր» էլիբրում հրատարակել է Բակուրյանը («Դաշնագիր խաղաղութեան ընդմէջ Լեւոն Գ. թագաւորի եւ Եգիպտոսի Մէմլուքեան սուլթանի Պայտունի, կնքուած 1285 մայիս Դին», «Բանասեր» ամսաթերթ զբոսական եւ գիտական, Պարիս, 1902 (մարտ), № 3, էջ 69-79): Իսկ անգլիերեն թարգմանել են Բ. Սքոթը, Պ. Հայտը և բոլորովին վերջերս էլ Դ. Քուքը: Տե՛ս և Հմմտ. **R. Scott, Mamluk-Armenian Relations**, pp. 184-196; **P.M. Holt, Early Mamluk Diplomacy (1260-1290). Treaties of Baibars & Qalāwūn with Christian Rulers**, E.J. Brill, 1995, pp. 92-105; **D. Cook, Chronicles**, pp. 113-123:

Հատկանշական է, որ պայմանագիրը կնքելուց հետո Լևոնը շտապել է իշխանության արքունիք՝ Հավանաբար Հանդամանքները ներկայացնելու: Մամվել Անեցու շարունակողներից մեկը 1284 թվականի ներքո արձանագրել է. «Փազաւորն Լեւոն գնաց առ Արղունն, որ էր զլուխ Տարախին»: Տե՛ս Սամուկ Անեցի եւ շարունակողներ, ժամանակագրություն, էջ 258: Սիզդանաղյուրային տվյալների Համագրումից պարզ է դառնում, որ Լևոնը մոտիկ իլխան Արղունի մոտ է եղել 1285 թ. օգոստոսին: Այս եզրակացությունը Հանգում ենք այն պատճառով, որ ժամանակակցի կողմից դադարաված մի ձեռագրի Հիշատակարանում, որ նվիրված է Լևոն արքային, նշվում է, որ Կեան թագուհին «այսամ ամի փոխեցաւ առ Քրիստոս, որ յոճամ արխայ նորին տէրս մեր նանապարհորդայ եւ յԱրեւիլի ի դուռն խանին Արղունի»: Տե՛ս ՀԶԶ, ԺԳ դար, էջ 571-572: Այլ պարբերներից էլ Հայտնի է, որ Կեան թագուհին մահացել է 1285 թ. օգոստոսի 9-ին: Այս մասին տե՛ս Հնրում Պատմիչ, ժամանակագրություն, էջ 77:

